

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված
միջազգային գիտաժողովի նյութեր
(Երևան, 2015 թ., հունիսի 4-5)

Երևան 2015

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA AFTER H.ACHARYAN

JAHUKYAN READINGS

Proceedings of International symposium, dedicated to
95 anniversary of academician Gevorg Jahukyan
(Yerevan, June 4-5, 2015)

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

Материалы международного симпозиума,
посвященного 95-летию академика Геворга Джаукяна
(Ереван, 4-5 июня 2015 г.)

Yerevan 2015

Ереван 2015

Գիտաժողովի նյութերը տպագրվում են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

**Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշ-
մամբ**

<p>ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 95- ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր (Երևան, 2015 թ., հունիսի 4-5).- Ե.: 2015, -- էջ:</p>
--

Խմբագրական խորհուրդ՝ Բ.Գ.Թ. Վ.Լ. Կատվայան (նախագահ)
Բ.Գ.Պ., պրոֆ. Գ.Կ. Խաչատրյան
Բ.Գ.Պ., պրոֆ. Վ.Գ. Համբարձումյան
Բ.Գ.Պ., պրոֆ. Լ. Շ. Հովհաննիսյան
Բ.Գ.Պ., պրոֆ. Լ.Ս. Հովսեփյան
Բ.Գ.Պ., պրոֆ. Ա.Ե. Սարգսյան
Բ.Գ.Պ. Ռ.Ս. Թոխմախյան
Բ.Գ.Թ. Ա.Ս. Գալստյան
Բ.Գ.Թ. Ն. Գ. Հովհաննիսյան
Բ.Գ.Թ. Ժ. Ա. Միքայելյան
Բ.Գ.Թ. Ն. Ժ. Սարգսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամիրխանյան Անժելա - Նոր սնկատեսակների անվանումների ձևավորումը Լոռիում-----	6
Գալստյան Անահիտ - Միօրինակացման միտումները հայերենի լեզվա- բանական տերմինահամակարգում -----	14
Գևորգյան Հայկազ - Ցեղանունների կրոնադավանաբանական նշանա- կությունները հայ մատենագրության մեջ -----	19
Գրիգորյան Սուսաննա, Պարոնյան Նաիրա - Եվրոպական փոխառու- թյունները ըստ միջինհայերենյան տարբեր աղբյուրների -----	27
Գրիգորյան Սուսաննա - Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի կրոնական և ծիսակարգային հասկացությունների բառակազմական կաղապարները--	34
Դիլբարյան Նարինե - Հայոց լեռնանունների ստուգաբանության վիճահա- րույց մի քանի խնդիր -----	38
Դոխոյան Ռուզաննա - Խոսքային գործունեության իմաստային ենթա- դաշտի բայերի գործածությունը բարեկիրթ խոսքի կառույցներում -----	45
Զաքարյան Հովհաննես - «Ոտնաման» և «կաշի» նշանակող մի քանի բառերի ստուգաբանություն -----	53
Թադևոսյան Հասմիկ - <i>Հիվանդություն</i> հասկացության բառային դրսևորումները միջնադարյան բժշկարաններում -----	61
Թոխմախյան Ռոբերտ - Երկբարբառները արևմտահայերենում -----	65
Խաչատրյան Հասմիկ - <i>Բնակարան, տուն, կահ-կարասի</i> իմաստային-թեմա- տիկ խմբի բառանունները Գեղարքունիքի մարզի խոսվածքներում -----	69
Խաչատրյան Հասմիկ - <i>Տուն</i> և <i>հյուղ</i> հասկացությունների բառանունների բարբառային բնութագիրը -----	74
Կատվայան Վիկտոր - Ռուսերեն փոխառություններ Բայազետի բարբառում-----	81
Համբարձումյան Վազգեն - Ստուգաբանություն. հ.ե. *reg' > հայ. (ա)ռա(կ/ծ) -----	89
Հովհաննիսյան Լավրենտի - «Փարաուն» բառի շուրջ -----	95
Հովհաննիսյան Նազիկ - Բառիմաստային փոփոխություններ նույնա- նիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարաններում -----	99
Հովսեփյան Լիանա - Աձականների բաղդատականության կարգը դասական գրաբարում -----	107
Մանուկյան Տաթևիկ - Լեզվաբանական տերմինները ժէ դարի ձեռագիր քերականական աշխատություններում -----	114
Մեսրոպյան Հայկանուշ - <i>Երեցկին</i> հասկացության բարբառային արտահայտությունները -----	121
Միքայելյան Ժաննա - Բայի երկրորդական վերլուծական ժամանակները Կիլիկիայի և Անտիոքի բարբառային միավորներում -----	128
Միսիթարյան Գայանե - <i>Կցուրդ, կացուրդ</i> և <i>կոնդակ</i> անվանումները	

միջնադարյան հայ հոգևոր երգարվեստում -----	135
Պողոսյան Նորայր - Օտարաբառ հարադրավոր բայերը հայերենում (XVI- XVIII դարեր)-----	140
Սարգսյան Արմեն - Լեզվական իրողություններն իբրև զավեշտի հենք հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսություններում --	146
Սարգսյան Մերի - Ընդհանուրլեզվաբանական նորաստեղծ ռուսերեն տերմիններ Գ. Ջահուկյանի «Լեզվի համընդհանուր տեսություն» աշխատության մեջ -----	154
Միմոնյան Նեկտար - Գրաբարի «Զգայական ընկալումներ» իմաստային խմբի բայերը -----	160
Վարդանյան Սերգեյ - Որոշ դիտարկումներ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքի մասին-----	167

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Բառնաայան Ջեմմա -Վանի բարբառում գործառող դերանունները (իմաստագործառական քննություն) -----	175
Գյուլգաստյան Դավիթ -Ուրվագիծ գրական արևելահայերենի հնչերանգային ուղղախոսության -----	181
Խաչատրյան Ալվարդ -Ածանցների ու ածանցակերպների գործառական արժեքը բնիկ և փոխառյալ հայկական անձնանուններում -----	189
Խաչատրյան Ամայա -Բառային շեշտի դրսևորումը շվեդերենում և հայերենում -----	197
Միքայելեան Արմեն –Հին ֆրանսերեն փոխառութիւնները Կիլիկեան հայերենում -----	201
Պետրոսյան Հասմիկ - Մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության համալրման ներքին աղբյուրները -----	209
Ցանկ «Ջահուկյանական ընթերցումներ» ժողովածուում 2006-2015թթ. տպագրված հոդվածների և հաղորդումների-----	215

ՆՈՐ ՄՆԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԼՈՌԻՈՒՄ

Հայկական խոհանոցում սունկն ավանդաբար սահմանափակ գործածություն է ունեցել, որը հիմնականում պայմանավորված է թունավորումներից խուսափելու հանգամանքով: Մակայն Լոռու մարզում 2010-13 թթ. հավաքած ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ վերջին 25-30 տարիներին հավաքչության մեջ նկատելի տեղ են գրավում այնպիսի սնկատեսակներ, որոնք տեղի բնակչությունն ավանդաբար չի ճանաչել¹: Բնականաբար սննդի մեջ այդ սնկերի կիրառությունը նոր անվանումների անհրաժեշտություն է առաջացնում, որն ինքնին ազգաբանական հետազոտության ուշագրավ երևույթ է: Այդ անվանումների ձևավորումն առայժմ կրում է տարերային բնույթ, չնայած նկատվում են որոշակի օրինաչափություններ:

Ըստ Հր. Աճառյանի՝ սունկը (սունգն) բնիկ հայերեն բառ է և ծագում է հնդեվրոպական spongos ձևից²: Բարբառային տարբերակներն են՝ սունգն (Ջուղա), սունգը (Երևան), սունգ (Ալաշկերտ, Զեյթուն, Խարբերդ, Մուշ, Թիֆլիս), սոնգըն (Ագուլիս, Գորիս), սոնգնը, սոյնը (Ղարաբաղ)³, սոնգուն (Գողթն)⁴, սունկ (Մասուն)⁵, սունկ կամ սոկ (Մեքաստիա)⁶, սոկոն (Լոռի, Տավուշ)⁷, ցունկ կամ ցոգո (Տաշիր, Ապարան)⁸ և այլն: Ուտելի սնկերի համար հիմնականում գործածվում են ընդհանրական սունկ⁹, երբեմն՝ գառան դմակ¹⁰, գառի ցունկ¹¹

¹ Լոռու մարզում այս սնկերի սննդի համակարգ մտնելու պատճառների մասին մանրամասն տե՛ս Ա. Ամիրխանյան, Սունկը լոռեցիների հավաքչական մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ, XVI, Ավանդականն ու արդիականը հայոց մշակույթում, Ե., 2014, էջ 93-102:

² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Ե., 1979, էջ 251:

³ Նշվ. աշխ., էջ 252:

⁴ Հ. Հովակիմյան, Գողթն գավառի Բիստ գյուղի ազգագրություն, ՀԱԻ, ԱԲԱ, Գործ 71, թերթ 71:

⁵ Վ. Պետոյան, Մասնա ազգագրությունը, Ե., 1965, էջ 97, 218:

⁶ Կ. Գաբրիելյան, Հայ բուսաշխարհ, Երուսաղեմ, 1968, էջ 220:

⁷ Ի. Չանգյան, Շամշադինի շրջանի ազգագրական նյութեր, ՀԱԻ, ԱԲԱ, Գործ 111, № 1/28, թերթ 174: Ա.Ամիրխանյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ *աս*) Լոռու մարզ, 2009-13: Տավուշի մարզ, 2014:

⁸ ԴԱՆ, Մեծավան, Նորաշեն, 2010:

⁹ Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 97: Ս. Մովսիսյան (Բենսե), Հարք (Մշո Բուլանըի), ՀԱԲ, հ. 3, Ե., 1972, էջ 71: Գ. Հալաջյան, Դերսիսի հայերի ազգագրությունը, ՀԱԲ, հ. 5, Ե., 1973, էջ 240: Ա. Հարությունյան, Տարոնի ազգագրական նյութեր, ՀԱԻ, ԱԲԱ, Գործ 69, թերթ 7: Ան. Հովակիմյան, Կարբիի ազգագրական նյութեր, ՀԱԻ, ԱԲԱ, Գործ 70, մաս 1, թերթ 82: Ս. Ղարախանյան, Իրանի Չահրմահալ գավառի հայերի ազգագրական նյութեր, ՀԱԻ, ԱԲԱ, Գործ 93, մաս 2-րդ, թերթ 187: Ռ. Գարունյան, Շատախ գավառի ազգագրական նյութեր, ՀԱԻ, ԱԲԱ, Գործ 14, թերթ 286: Հ. Հայրապետյան, Միսիանի Շաղաթ գյուղի պատմությունը և ապրելակերպը (1828-1928 թթ.), ՀԱԻ, ԱԲԱ, 3/114, Գործ 67, թերթ 83:

¹⁰ Ս. Нанагюлян, Шляпочные грибы Армении (агарикоидные базидиомицеты), Ер., 2008, с. 12.

¹¹ ԴԱՆ, Մեծավան, Նորաշեն, 2010:

բառերը: Շատ վայրերում, հիմնականում արևմտահայերի միջավայրում, գործածվել է նաև թուրքերեն «մանթար» բառը, որը սունկ է նշանակում¹:

Հայոց լեզվում, հավանաբար սննդի և ժողովրդական բժշկության մեջ սահմանափակ գործածությամբ պայմանավորված, սնկերի քիչ անուններ կան: Աղբյուրների ու գրականության ուսումնասիրությունը, ինչպես նաև դաշտային տվյալները ցույց են տալիս, որ անվանումների խառնաշփոթ գոյություն ունի: Հիմնականում հիշատակվում են թնջուկը, թնոպին և տոմբալան, որոնք ուտելի սնկեր են, և արեթասունկը: Միջնադարում շատ գործածական է եղել դարիկոնը² (խարիկոն, ադարիկոն³, դարիդոն⁴), որն ընդհանրապես սունկ իմաստն ուներ⁵ (հունարեն «ագարիկոն» բառից)⁶, չնայած երբեմն ներկայացված է որպես ծառի սունկ⁷:

Թնջուկը, որը համարվել է ազնիվ, ընտիր սունկ⁸, ըստ տարբեր աղբյուրների կոչվել է նաև սպիտակ սունկ⁹, կաղնետունկ, կեչասունկ¹⁰: Թնջուկ անունը թերևս կապվում է թնջուկ՝ խճճված բառի հետ և ծագում է հնդեվրոպական tenkio արմատից, որից նաև բուսանուններ են ծագում¹¹:

Թնոպին կոչվել է նաև ոչխարասոկոն (ոչխարասունկ), դաշտի ագարիկոն¹², շամպինիոն, արոտասունկ, կանչի սունկ, տարագ, դարիկոն¹³: Տամբալան հողի տակ է աճում, հազվադեպ է հանդիպում և ըստ էության տրոֆել կոչվող սնկի տարատեսակ է: Հր. Աճառյանը ենթադրում է, որ Մովսես Խորենացու հիշատակած գերերին¹⁴ հենց այս սունկն է, որ կոչվում է նաև գետնասունկ կամ հողածածուկ սունկ¹⁵: Լոռիում այս սունկը կոչվում է տոմբալա,

¹ Հր. Աճառեան, *Թուրքերենի փոխառեալ բառեր հայերենի մէջ, Էմինեան ազգագրական ժողովածու*, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 227: Ե. Լալայան, *Երկեր*, հ. 1, Ե., 1983, էջ 54: Գ. Գաբրիկեան, նշվ. աշխ., էջ 220: Գ. Սրվանձոյան, *Երկեր*, հ. 1, Ե., 1978, էջ 359:

² Ա. Ամասիացի, *Օգոստ բժշկութեան*, Յե., 1940, էջ 559:

³ Ղ. Ալիշան, *Հայրուսակ կամ հայկական բուսաբանութիւն*, Վենետիկ, 1895, էջ 20, 191: Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1926, էջ 122:

⁴ Ա. Մեբաստացի, *Գիրք բժշկական արհեստի (XVI-XVII դդ.)*, Ե., 1993, էջ 359: Ա. Ամասիացի, նշվ. աշխ., էջ 559:

⁵ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., 392, 191: Ս. Գաբամաճեան, *Նոր բառգիրք հայերէն լեզուի*, Պոլիս, 1910, էջ 863:

⁶ Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 166:

⁷ Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Միսրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հ. 2, 1837, Վենետիկ, էջ 163: Գաբրիկեան, նշվ. աշխ., էջ 11, 137:

⁸ Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, Ե., 1926, էջ 191: Ս. Գաբամաճեան, նշվ. աշխ., էջ 526:

⁹ Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1944, էջ 114: Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 2009, էջ 346:

¹⁰ Նույն տեղում: Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1, Ե., 1976, էջ 450:

¹¹ Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 269:

¹² Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 2, Ե., 1944, էջ 114:

¹³ Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Ե., 1967, էջ 417:

¹⁴ Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 543:

¹⁵ Յ. Թ. Գայայեան, *Բառարան գանձարան հայերէն լեզուի*, Գահիրէ, 1938, էջ 82:

տամբալա, Արցախում՝ տոմբալան¹, Գետաշենում՝ տոմբալա²: Կ. Գաբիկյանը նր հիշատակում է տոմալան ձևը³:

Արեթաստկոնը (արեթասունկ, արեթ, արեթենի⁴, դավ⁵, հարեթաստկոն, ալըջի⁶) աճում է հիմնականում հաճարենու, թեղու, բոխու և այլ ծառերի վրա: Այս սունկն ավանդաբար օգտագործվել է դյուրավառ նյութ (արեթ) ստանալու համար⁷: Միջնադարում լավագույն արեթը պատրաստվել է դրանից, որը կոչվել է դարիկոն ու մեծ քանակությամբ վաճառվել⁸:

Խորհրդային տարիներին արեթասունկը երբեմն սկսեցին անվանել նաև «արջի պապիրոզ», ինչպես նաև «չագա»⁹, որը ռուսերենից է անցել:

Հայաստանի անտառային շրջաններում՝ Լոռի, Տավուշ և այլն, սնկերը տարբերակվում են ըստ աճելու տեղի՝ գետնի սունկ և ծառի սունկ (գետնի սոկոն և ծառի սոկոն¹⁰, տրփըսոկոն և ծրոըսոկոն)¹¹: Գ. Սրվանձտյանցը ևս հիշատակում է երկու տեսակ՝ սունկ ծառո և սունկ դաշտի¹²:

Լոռիում ավանդաբար կերել են միայն ոչխարասոկոն և ծառասոկոն (ծառի սոկոն): Ոչխարասոկոն (շամպինիոն դաշտային, ագարիկոն, ադարիկոն, թնոպի, լատ. *Agaricus arvensis*, ռուս. шампиньон полевой)¹³ անվանումը կապվում է այն բանի հետ, որ աճում է ընտանի կենդանիների՝ ոչխարի և խոշոր եղջերավոր անասունների մակադատեղերում, գոմաղբի կուտակումների վրա, ինչի վկայությունն է նաև արխաջի սոկոն անվանումը: Երբեմն էլ գույնի հատկանիշով կոչվում է սպիտակ սունկ, որոշ վայրերում՝ մերասոկոն¹⁴ և մարդասոկոն (մարդու սոկոն)¹⁵: Մերի (մայրի, մարի) բառը նշանա-

¹ Մ. Գրիգորյան-Սպանդարյան, *Ղարաբաղի ազգագրական նյութեր*, ՀԱԻ, ԱԲԱ, Գործ 19, տ. 2, թ. 40ա:

² ԴԱՆ, Երևան, 2012:

³ Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., 1968, էջ 235:

⁴ Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 1, Ե., 1944, էջ 1:

⁵ Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 3, 1944, էջ 185: Կ. Գաբիկեան, *Բաղդիրք սեբաստահայ գաւառալեզուի*, Երուսաղեմ, 1952, էջ 364: ԴԱՆ, Ստեփանավան, 2010: Մարց, 2013: Տավուշի մարզ, Գոշ, 2014:

⁶ ԴԱՆ, Մարգահովիտ, 2012: Տավուշ, 2014:

⁷ *Նոր բաղդիրք Հայկազեան լեզուի*, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1: Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 71: Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 4, Ե., 1945, էջ 248: Բ. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.*, հ. 1, Ե., 1958, էջ 58: Վ. Անանյան, *Հովազաձորի գերիները*, Երկեր, հ. 6, Ե., 1971, էջ 52: ԴԱՆ, Մարց, 2013: Շնող, 2014:

⁸ Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 325: Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, Ե., 1977, էջ 116:

⁹ ԴԱՆ, Գուգարք, 2012: Վանաձոր, 2013:

¹⁰ ԴԱՆ, Լոռի, 2009-2013:

¹¹ ԴԱՆ, Տավուշ, 2014:

¹² Գ. Սրվանձտյան, նշվ. աշխ., էջ 359:

¹³ С. Нанагюлян, նշվ. աշխ., էջ 61: *Հայաստանի բնաշխարհ*, Ե., 2006, էջ 302:

¹⁴ ԴԱՆ, Գուգարք, 2012: Մեծ Պարնի, Փամբակ, 2013:

¹⁵ ԴԱՆ, Նոր Խաչակապ, 2009: Լոռու մարզի Նոր Խաչակապ գյուղի բնակիչները 1989թ. գաղթել են Ադրբեջանի Դաշքեսանի շրջանի Խաչակապ գյուղից:

կում է անտառ, ծառ¹, և քանի որ ոչխարասուկոնը հավաքել են նաև անտառների բացատներից, կոչվել է նաև մերասուկոն: Մակայն պետք է նշել, որ այստեղ որոշակի խառնաշփոթ կա, քանի որ մերասուկոն է կոչվում նաև անտառի ծառի սունկը²:

Մարդասուկոն անվանումն ըստ բանասացների առաջացել է այն հանգամանքից, որ միայն այդ սունկն են կերել³:

Վերջին տարիներին ոչխարասուկոնը, նմանեցնելով ջերմոցներում աճեցված և մեծ քանակությամբ վաճառվող շամպինիոնին, շատ բնակավայրերում հենց այդպես էլ անվանում են⁴:

Ծառի սունկը (ականջասունկ սովորական, կոճղասունկ ականջանման, ոստրետունկ, լատ.՝ *Oyster mushroom*, ռուս.՝ *вешенка обыкновенная, уховидная*)⁵ աճում է խոնավ և խիտ անտառներում՝ չորացող, ընկած ծառերի ու կոճղերի վրա: Լոռու և Տավուշի անտառաշատ բնակավայրերում, որտեղ այս սունկը սննդի մեջ ավանդաբար մեծ տեղ է գրավում, անունները տարբերակում են ըստ ծառերի: Եթե Ստեփանավանում և Վանաձորում ասում են ծառի սուկոն⁶, ապա այդ բնակավայրերում դրանք կոչվում են բոխբու (բոխու վրա աճող), թեղբու (թեղու), ըճարքբու (հաճարենու), կոզնենու սուկոն⁷ և այլն:

Հետխորհրդային շրջանում Լոռիում, բացի ոչխարասուկոնից ու ծառի սուկոնից, սկսել են հավաքել նաև այնպիսի սնկեր, որոնց մասին տեղացիներն ավանդական գիտելիքներ չունեն: Օրինակ՝ «ապյատա» (կոճղասունկ (չրփտուկ) մարգագետնային, լատ.՝ *Marasmius oreades*, ռուս.՝ *опенок (негниючник луговой)*)⁸, «ոյաղովկա» (շարքասունկ, լատ.՝ *Tricholoma*, ռուս.՝ *рядовка*)⁹, «լիսիչկա» (աղվեսասունկ, լատ.՝ *Cantharellus*, ռուս.՝ *лисичка*)¹⁰, «ոիժիկ» (շեկլիկ, լատ.՝ *Lactarius deliciosus*, ռուս.՝ *рыжик*)¹¹, «մապյատա» (յուղասունկ, լատ.՝ *Suillus*, ռուս.՝ *маслята*)¹², «սիրայեշկա» (դառնամատիտեղ, լատ.՝ *Russula*, ռուս.՝ *сыроежка*)¹³, «գրուդ» (կաթնասունկ, լատ. *Lactarius*, ռուս.՝ *груздь*)¹⁴, սպիտակ

¹ Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն*, Ե., 1987, էջ 33: Հր. Աճառեան, *Հայերեն գալատական բառարան*, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 772: Մտ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 3, Ե., 1944, էջ 317: Հ. Մ. Հաճեան, *Աւանդական հէքեայթներ Խոտորջրոյ*, Վիեննա, 1907, էջ 30, 53, 76: Հ. Մ. Գալառացի, *Երգեր, առակներ, հանելուկներ, Թերահաւատութիւններ... Խոտորջրոյ*, Տիֆլիս, 1903, էջ 63:

² ԴԱՆ, Շնող, 2014:

³ ԴԱՆ, Լոր Խաչակապ, 2009:

⁴ ԴԱՆ, Լեռնապատ, 2009: Արորի, 2013:

⁵ Ս. **Нанагюлян**, նշվ. աշխ., էջ 30:

⁶ ԴԱՆ, Ստեփանավան, 2010: Վանաձոր, 2013:

⁷ ԴԱՆ, Վահագնի, Աթան, Մարց, Դեբեդ, Եղեգնուտ, 2013:

⁸ Ս. **Нанагюлян**, նշվ. աշխ., էջ 43:

⁹ *Հայաստանի բնաշխարհ*, էջ 303:

¹⁰ Նշվ. աշխ., էջ 204:

¹¹ Նշվ. աշխ., էջ 265, 303:

¹² Նշվ. աշխ., էջ 299:

¹³ Ս. **Нанагюлян**, նշվ. աշխ., էջ 99:

¹⁴ Նշվ. աշխ., էջ 95:

սունկ (սպիտակ սունկ, թնջուկ, լատ.՝ *Boletus edulis*, ռուս.՝ *белый гриб, боро-вик*)¹ և այլն:

Մշակութային այս նոր տարրը փոխազդեցություն է հարևանությամբ ապրող ռուսներից, հետևաբար հայերեն անվանումների բացակայության պայմաններում գործածվում են ռուսերեն անվանումներ, որոնք այնքան են յուրացվել, որ դարձել են հայերենին համարժեք²: Երբեմն այդ սնկերին տալիս են ընդհանրական՝ «ռուսական սոկոն» կամ «ռսի սոկոն» անվանումը, քանի որ դրանց վերաբերյալ պատկերացումները հիմնականում կապվում են ռուսների հետ³: Այն սնկերը («ռիժիկ», «ոյադովկա»), որոնք նաև թթու են դնում, երբեմն կոչվում են «թթվի սոկոն»⁴:

Վերոհիշյալ սնկերի հայերեն գիտական անվանումները, որոնք հիմնականում ստեղծվել են XX դարում, լատիներենից կամ ռուսերենից բառացի թարգմանություններ են, իսկ ժողովրդական անվանումներն սկսել են ձևավորվել վերջին մի քանի տասնամյակում: Եթե տեղացիները, «մասյատան» բառացի թարգմանելով, երբեմն անվանում են յուղասունկ կամ յուղասոկոն⁵ (եղասոկոն⁶, եղալի սունկ⁷), «ռիժիկը»՝ շեկլիկ⁸, «բելի գրիբը»՝ սպիտակ սունկ⁹, սունկ⁹, որոնք նաև համապատասխանում են հայերեն գիտական անվանումներին, ապա «ոյադովկայի» շարքասունկ, «գրուգդի» կաթնասունկ, «սիրայեշկայի» դառնամատիտեղ, «ապյատայի» կոճղասունկ կամ չփտուկ, ծառի սնկի ականջասունկ, կոճղասունկ, ոստրեսունկ անվանումները նրանց անհասկանալի են:

Հարկ է նշել, որ դրացի ռուսների հետ սերտ շփումների հետևանքով այս նոր սնկատեսակները ճանաչում և ամենից շատ հավաքում են Ստեփանավանի ու Տաշիրի տարածաշրջաններում՝ գործածելով հիմնականում ռուսերեն ճիշտ անվանումներ: Մարզի մյուս բնակավայրերում այդ սնկերը քիչ են հավաքում, երբեմն էլ ընդհանրապես չեն ճանաչում, այդ իսկ պատճառով ռուսերեն ճիշտ կամ աղավաղված անվանումներին զուգահեռ ձևավորվում են նաև հայերեն տարբերակներ: Այսպես, Վանաձորում, Մարգահովիտ գյուղում՝ հայերեն և ռուսերեն, Դեբեդ, Վահագնի, Եղեգնուտ, Մարց, Աքորի, Լեռնապատ և այլ գյուղերում, որտեղ այդ սնկերի մասին աղոտ պատկերացում ունեն, նույն սնկի համար տարբեր անուններ են տալիս, երբեմն յուրաքանչյուր հավաքող ինքն է անուն դնում: Օրինակ, «ոյադովկայի» տե-

¹ Նշվ. աշխ., էջ 19:

² ԴԱՆ, Ստեփանավան, Գառգառ, Գյուլագարակ, 2010:

³ ԴԱՆ, Մարց, 2013: Տավուշի որոշ բնակավայրերում նույնպես այս սնկերը կոչվում են «ռսի սոկոն», ԴԱՆ, Տավուշ, 2014:

⁴ ԴԱՆ, Գառգառ, 2010:

⁵ Նույն տեղում: ԴԱՆ, Լեռնանցք, 2009:

⁶ ԴԱՆ, Մարգահովիտ, 2012:

⁷ ԴԱՆ, Մարամեջ, 2009:

⁸ ԴԱՆ, Մեծավան, 2010: Մարգահովիտ, 2012:

⁹ ԴԱՆ, Ստեփանավան, Մեծավան, Նորաշեն, Վարդաբլուր, 2010:

սակների անունները ձևավորվում են ըստ գույնի. գորշուկ՝ գլխարկը գորշ է¹, կապույտ գլխարկ ունեցողը կոչվում է կապույտ², մամռասունկ, կապույտ ցունկ³, կապտագլուխ⁴, կարմիր գլխարկ ունեցողը՝ «կրասնայա շապրչկա», «կրասնագալովինկա», «կրասնագալովկա», «կրասնագալովի» կամ կարմրագլուխ⁵: Երբեմն տարբեր տեսակի, սակայն կարմիր գույն ունեցող բոլոր սնկերը կոչվում են կարմիր սոկոն⁶: Նույն կերպ սպիտակ գույն ունեցողները հաճախ կոչվում են «բելագալովինկա»⁷, սպիտակ սոկոն, սպիտակագլուխ⁸: «Մապյատան» Մարգահովիտում անվանում են նաև փսլնքասոկոն, քանի որ գլխարկի տակ լորձանման նյութ կա⁹: Ուշագրավ է, որ Գյուլագարակ գյուղում, դում, որտեղ այդ սնկերը շատ լավ են ճանաչում և ռուսերեն անուններ են գործածում, «ոյադովկայի» տեսակները հաճախ տարբերում են ըստ գույնի՝ «կարմիր ոյադովկա», «սպիտակ ոյադովկա», «սեռի ոյադովկա», «կապույտ ոյադովկա»¹⁰ և այլն:

«Ապյատան» կոչվում է նաև «ապյոնոկ»¹¹, «պյատկա»¹², «ապյատ»¹³, «ապյատկա»¹⁴, երբեմն՝ «ոսի սոկոն», «ոսասոկոն»¹⁵, քանի որ տեղացի ռուսները միշտ մեծ քանակությամբ հավաքում էին, իսկ հայերը՝ ոչ: Ըստ տեղացիների ստուգաբանության, քանի որ «ապյատան» կողք կողքի է աճում, մի հատ գտնելով նորից՝ «опять» են գտնում, դրա համար էլ «ապյատ» է կոչվում¹⁶:

«Ապյատան» կոչվում է նաև կայծակասոկոն, քանի որ կարծում են, թե կայծակի խփած տեղում է դուրս գալիս¹⁷: Այս անունն, ամենայն հավանականությամբ, շատ հին է, քանի որ զուգահեռներ ունի այլ լեզուներում: Շատ ժողովուրդներ սունկը կապում են երկնային երևույթների՝ ամպրոպի, կայծակի, անձրևի հետ, ինչն արտահայտվում է անուններում (օր.՝ ռուս. громовик, дождевик): Ըստ հին հույների ու հռոմեացիների, սունկը ծնվում է ամպրոպից¹⁸: Հավանաբար ամպրոպի ու անձրևի հետ կապի հեռավոր արձագանքն

¹ ԴԱՆ, Մարգահովիտ, 2012:

² ԴԱՆ, Վանաձոր, 2013:

³ ԴԱՆ, Մեծավան, Նորաշեն, 2010:

⁴ ԴԱՆ, Մարգահովիտ, 2012:

⁵ ԴԱՆ, Դեբեդ, Աքորի, Վահագնի, 2013:

⁶ ԴԱՆ, Մարգահովիտ, 2012: Վանաձոր, 2013:

⁷ ԴԱՆ, Աքորի, 2013:

⁸ ԴԱՆ, Քարաձոր, 2009:

⁹ ԴԱՆ, Մարգահովիտ, 2012:

¹⁰ ԴԱՆ, Գյուլագարակ, 2015:

¹¹ ԴԱՆ, Գառգառ, 2010:

¹² ԴԱՆ, Աքորի, Չկալով, 2013:

¹³ ԴԱՆ, Գուգարք, 2012: Դեբեդ, Չկալով, 2013:

¹⁴ ԴԱՆ, Լեռնապատ, 2009: Նորաշեն, 2010: Ծաթեր, 2011: Չկալով, 2013:

¹⁵ ԴԱՆ, Մեծավան, Գառգառ, Նորաշեն, 2010: Մարց, 2013:

¹⁶ ԴԱՆ, Ծաթեր, 2011: Գուգարք, 2012:

¹⁷ ԴԱՆ, Լեռնապատ, Քարաձոր, 2009:

¹⁸ В. Топоров, նշվ. աշխ., էջ 253-258:

եր նաև նորբայագետացիների մեջ տարածված այն ընկալումը, որ ամպերը սնկի նման բաներ են¹:

Լոռիում գրանցել ենք նաև այլ սնկերի անուններ, որոնք հիմնականում ձևավորվել են ըստ գույնի, չափի, ձևի, ինչ-որ առարկայի նմանեցման և այլն: Դրանք սննդի մեջ հազվադեպ գործածվող սնկեր են և տարբեր բնակավայրերում տարբեր՝ հիմնականում հայերեն անվանումներ են ստանում: Օրինակ՝ թերխաշի սոկոն (աճում է թերխաշ բույսի մոտ)², «գուպկա» սոկոն (գլխարկը մսալի է և նման է սպունգի)³, դոչա սոկոն (բավականին մեծ գլխարկ գլխարկ ունի)⁴, «գոնտիկ (գոնտ)» սոկոն (նման է հովանոցի)⁵, փափախ սոկոն (գլխարկը նման է փափախի)⁶, արջասոկոն⁷ և այլն:

Արջասոկոնը հազվադեպ են ուտում, այն նաև ընդհանրական անուն է, որ տեղացիները տալիս են ոչ ուտելի սնկերին: Ընդհանուր առմամբ կենդանիների անուններով սնկերը, բացառությամբ ոչխարասոկոնի, ոչ ուտելի են համարվում: Դրանցից են աղվեսասոկոնը և գիլասոկոնը: Սակայն այժմ Ստեփանավանում և Տաշիրում սննդի մեջ գործածվող աղվեսասոկոնը չպետք է շփոթել վերոհիշյալ աղվեսասոկոնի հետ: Ուտելի աղվեսասոկոնը (լատ.՝ *Cantharellus*, ռուս.՝ *лисичка*) հիմնականում «լիսիչկա» է կոչվում և ոչ մի կապ չունի մյուս՝ ոչ ուտելի սնկերին տրվող ընդհանրական անունով աղվեսասոկոնի հետ:

Գիլասոկոնը⁸ (տրորելիս միջից փոշի է դուրս գալիս) հավանաբար գրականության մեջ հիշատակվող սատանի պարկաձև սունկն է (գիլիփըստուկ), որի «միջի հյութը է բռնոթու նման և սակավ ինչ դեղնավուն»⁹, կամ խիստ թունավոր դիվասունկը¹⁰, որը կոչվում է նաև գայլասունկ, գայլի թիս¹¹ կամ սատանի սունկ¹²: Լոռու տարբեր գյուղերում այս սնկին տարբեր անուններ են տալիս՝ գիլասոկոն և գիլի թիս, չնայած իրականում դրանք տարբեր սնկեր են:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ուսումնասիրված բնակավայրերում սննդի համակարգ մտած նոր սնկատեսակների անվանումների ձևավորումը տեղի է ունենում տարերայնորեն: Այդ իսկ պատճառով նույն սնկատեսակի համար գոյություն ունի անվանումների բազմազանություն և խառնաշփոթ: Հիմնականում դրանք ձևավորվում են ռուսերենի նշանային դաշտում, ինչը

¹ Ե. Լալայան, *Նոր Բայագետի գավառ*, ԱՀ, գիրք XVII, N 1, 1908, էջ 95:

² ԴԱՆ, Աքորի, 2013:

³ ԴԱՆ, Ուռուտ, 2012:

⁴ ԴԱՆ, Վարդաբլուր, 2010:

⁵ ԴԱՆ, Գուգարք, 2012: Աքորի, Փամբակ, Չկալով, Վահագնի, Փամբակ, 2013:

⁶ ԴԱՆ, Դսեղ, 2011:

⁷ ԴԱՆ, Վանաձոր, 2013:

⁸ ԴԱՆ, Ստեփանավան, 2010: Աքորի, Մարց, Դեբեդ, Վահագնի, Փամբակ, 2013:

⁹ **Սահակ վարդապետ Ամատունի**, *Հայոց բան ու բան*, 1912, Վաղարշապատ, էջ 133:

¹⁰ **Ստ. Մալխասեանց**, նշվ. աշխ., հ. 1, Ե., 1944, էջ 525:

¹¹ Նշվ. աշխ., էջ 411:

¹² Նշվ. աշխ., հ. 2, Ե., 1944, էջ 189:

բացատրվում է սնկի մշակույթի ձևավորման վրա դրացի ռուսների ազդեցությամբ և վերջին տասնամյակներում դեպի Ռուսաստան միգրացիոն գործընթացներով: Այն բնակավայրերում, որտեղ ռուսների հետ սերտ շփումներ չկան, հիմնականում հայերեն անուններ են ձևավորվում, կամ էլ՝ ռուսերեն աղավաղված տարբերակներ:

Ինտենսիվ միջմշակութային հաղորդակցության, կենցաղային նորամուծությունների հետևանքով նոր անուններ են ձևավորվում նույնիսկ այն սնկերը, որոնք ավանդաբար գործածվել են:

Anzhela Amirkhanyan - Naming Patterns for New Types of Mushrooms in Lori. - It is observable the place of new types of mushrooms along with the lack of knowledge among local inhabitants in Lori plant gathering traditions over the past 25-30 years. Due to this fact the new names for these mushrooms are being developed spontaneously; and there is variety of names for each type of mushroom. These new types are often named in Russian (опенок, рядовка, лисичка, рыжик, маслята, сыроежка, груздь, белый-гриб, боровик) due to lack of their equivalent names in Armenian in those settlements with intensive neighborhood contacts with Russian inhabitants as main informants on mushrooms. In those settlements with no contact with Russians the new names are mostly developed in Armenian (by color, size, form or similarity to something) or as distorted Russian versions.

Due to intensive intercultural communication and innovations new names are also given to the mushrooms which are traditionally in use among locals.

Анжела Амирханян - Формирование названий новых видов грибов в Лори. - За последние 25-30 лет в собирательстве лорийцев значимое место занимают новые виды грибов, о которых местное население практически не имеет знаний. Их названия формируются стихийно, и по этой причине для каждого вида грибов есть много названий и возникает путаница. В условиях отсутствия армянских названий в тех поселениях, где были тесные контакты с соседствующими русскими, эти грибы в основном получали русские названия (опенок, рядовка, лисичка, рыжик, маслята, сыроежка, груздь, белый гриб, боровик), поскольку местные получили сведения о грибах от русских. Там, где не было тесных контактов с русскими, сформировались в основном армянские названия (исходя из цвета, размера, формы, схожести с каким-либо предметом) или же искаженные русские варианты.

Вследствие интенсивных межкультурных взаимосвязей, бытовых инноваций, новые имена получают также те грибы, которые традиционно используются местным населением.

ՄԻՕՐԻՆԱԿԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՏԵՐՄԻՆԱՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Լեզվաբանության մեջ կիրառվող տերմինները խմբավորվում են մի շարք հիմունքներով՝ ըստ ծագման, ըստ կազմության, ըստ բաղադրիչների քանակի, ըստ գործածության ոլորտների, ըստ իմաստագործառական բնութագրերի և այլն: Առանձնացնում են ընդհանուրլեզվաբանական և հայերենագիտական տերմիններ, գրաբարագիտության տերմինաբանություն, ըստ լեզվաբանության բաժինների՝ հնչյունաբանության ոլորտի, բառագիտական, քերականական (ձևաբանության և շարահյուսություն ոլորտի), ոճագիտության, որևէ խոշոր լեզվաբանի (օրինակ՝ Գ. Ջահուկյանի) տերմինաբանական համակարգ, ըստ գիտակարգերի և միջգիտակարգերի՝ բարբառագիտության, հոգելեզվաբանության, հանրալեզվաբանության, էթնոլեզվաբանության, համակարգչային լեզվաբանության, պրագմալեզվաբանության տերմինաբանություն և այլն:

Որևէ ոլորտի իրողությունների ուսումնասիրության ընթացքում հրատակվում են նաև տերմինային գործածության շատ հարցեր, որոշակիանում են տերմինի կիրառության սահմանները, ճշգրտվում է տերմինի բովանդակությունը:

Այս մասին նշվել է դեռևս 1982թ. միջազգային հայերենագիտական գիտաժողովում: Գիտաժողովի մասնակիցներից մեկը՝ Դ.Մ. Հոբբ¹, նշում է, որ իմաստաբանական և իմաստափոխական երևույթների ուսումնասիրության ժամանակ լեզվաբանները հաճախ են գործածում ճարտասանական տերմիններ, իմաստաբանության տերմինաբանության բավարար զարգացման շնորհիվ հնարավոր կլինի իմաստաբանական ուսումնասիրություն իրականացնել առանց ճարտասանական-ոճագիտական տերմինների օգնությանը դիմելու²:

Տարբերում ենք նեղ գործածություն ունեցող և գործածության լայն ոլորտ ընդգրկող լեզվաբանական տերմիններ և անվանակարգային միավորներ: Նեղ գործածության տերմիններ են լեզվաբանության որևէ բաժնի, լեզվի որևէ նեղ բնագավառի մանրատերմինահամակարգերը: Այսպես՝ հնչյունաբանության բնագավառում բազմաթիվ տերմիններ են կիրառվում, որոնք շարահյուսագետները իրենց աշխատանքում չեն կիրառում: Նույն ձևով ոճագի-

¹ Դ.Մ.Հոբբ, Իմաստափոխությունը հայերենում.-Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Ե., 1982:

² Այդպիսի մի փորձ էր մեր «Փոխաբերացման հոգելեզվաբանական վերլուծություն» աշխատանքը, որում բառերի փոխաբերացման երևույթը դիտարկել ենք առանց փոխաբերություն, փոխանունություն, համըմբռնում ոճագիտական տերմինամասնատման՝ քննելով փոխաբերացման երևույթն առհասարակ, իր ամբողջության մեջ:

տության բնագավառի տերմիններն ու դասակարգումները սահմանափակ կիրառություն ունեն:

Լեզվաբանության տերմինապաշարում առկա է տերմինների բազմա-նունություն, որի հետևանքով ժամանակի միևնույն հատվածում միևնույն լեզվական իրողության համար գործածվում են տարբեր անվանումներ: Համաժամանակյա բազմանունության դրսևորումներից է *բազմաբարդ նախադասություն, հարաբարդ նախադասություն, բազմաբարդ նախադասություն* եզրույթների գործածությունը: Համանուն և նույնանուն եզրույթները ևս բազմանուններ են: *Էկզոտիզմ, օտարամոծություն, տարաշխարհիկ բառ, հատկական փոխառություն* եզրույթները վերաբերում են լեզվական նույն երևույթին: *Հոլովառության, ինդրառության, կառավարում* եզրույթները ևս բազմանուններ են:

Այսօր աշխատանքներում գործածվում են ածանցի *արտադրողականություն, արդյունավետություն, արգասավորություն, նախաձանցավերջածանցավոր* բառ և համաձանցավոր բառ, *եղանակավորող բառ// եղանակավորիչ// վերաբերական, հարցահարաբերական դերանուն// հարաբերահարցական դերանուն, պոտենցիալ բառեր// ներունակ բառեր, բառերի ձևափոխության խմբեր// իմաստաձևային խմբեր* և այլն: Տարբեր ժամանակներում *համակատար դերբայը* կոչվել է *անկատար երկրորդ, ժամանակային, զուգընթացական, հարակցական* և այլ անուններով տարբեր մասնագետների կողմից:

Ժամանակի ընթացքում հաղթում է բազմանուններից մեկը, մյուսները գործածությունից դուրս են մղվում և հետաքրքրություն են ներկայացնում միայն լեզվաբանության պատմության, տվյալ բնագավառում տերմինաստեղծման օրինաչափությունների ուսումնասիրության տեսանկյունից:

Է.Աղայանը նշում է, որ «տերմինային բազմանունությանը նորմավորված խոսքի և գիտական ճշգրտություն պահանջող խոսքի ոլորտներում հանձնարարելի չէ: *Տվյալ տերմինահամակարգի մեկ հասկացությանը մեկ բառային ձև* սկզբունքը տերմինագիտության համար անխախտելի է, և բազմիմաստության, համանունության ու համանիշության հարցերը պետք է լուծել այդ սկզբունքի համաձայն»³:

Ի՞նչ հանգամանքներում են երևան գալիս բազմանունները, որո՞նք են դրանց առաջացման պատճառները. չե՞ որ լեզվաբանները, ինչպես գիտենք, խուսափում են այդ երևույթից, աշխատում են ճշգրիտ սահմանել, հստակ սահմանազատել միմյանցից տերմինների նրբիմաստները: Որպես ընդհանուր միտում դիտարկում ենք լեզվաբանական տերմինների հայերենացումը և միօրինակացումը: Մինչև հայերեն տերմինի գործածումը, տարածումը և ամրակայումը օտար տերմինի շրջանառությունը դառնում է տարածմանակյա բազմանունության պատճառ (գործածվել է *պերիոդիզացիա*, այժմ գործածվում է *շրջանաբաժանում, լեքսիկական*, այժմ՝ *բառագիտական, հոլովման սիստեմ*, այժմ՝ *հոլովման համակարգ, քերականական կատեգորիա*, այժմ՝

³ Էդ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 356:

քերականական կարգ, սինխրոնիա, դիսխրոնիա, սինխրոնիկ, դիսխրոնիկ, այժմ՝ համաժամանակություն, տարաժամանակություն, համաժամանակյա, տարաժամանակյա, լեքսիկոն, այժմ՝ բառապաշար, ինտոնացիա, այժմ՝ հնչե-րանգ, պսիխոլինգվիստիկա, այժմ՝ հոգելեզվաբանություն, սոցիոլինգվիս-տիկա, այժմ՝ հանրալեզվաբանություն, իզոգլոս, այժմ՝ զուգաբանություն, տեր-մինոլոգիա, այժմ՝ տերմինաբանություն, ֆիլոլոգիա, այժմ՝ բանասիրություն և այլն): Միաբառ և բառակապակցական լեզվաբանական տերմինների մասնա-կի հայերենացման երևույթը դիտարկված է մեր նախորդ հոդվածներից մե-կում⁴:

Նոր տերմինատարբերակներ ստեղծվում են բաղադրական ամփոփ-ման միջոցով, կան հնչյունափոխական, ուղղագրական, փոխատեղական և այլ տարբերակներ: Այլ կերպ ասած՝ լեզվական որևէ հարցի քննությանը համ-ընթաց իրականանում է նաև դրա ներկայացմանը, դիտարկմանը ուղղված տերմինաստեղծման աշխատանք (տերմինի թարգմանություն, պատճենում, կիսապատճենում, հարմարեցում և այլն): Որքան մշակված, ուսումնասիրված է որևէ լեզվաշերտ, քերականական որևէ երևույթ, խոսքի որևէ բնագավառ, այնքան մշակված է նաև այդ ոլորտի տերմինապաշարը:

Չնայած վերջերս հաճախ են անդրադառնում խոսակցական լեզվի քնն-նությանը, սակայն բավարար չափով չեն սահմանազատվում *խոսակցական լեզու, ժողովրդախոսակցական լեզու, գրական լեզվի խոսակցական տարբե-րակ, բանավոր խոսք* և հարակից մի շարք հասկացությունները, իսկ խոսակ-ցական լեզվի դիտարկումները հաճախ վերաբերում են բառապաշարին, գործածվող անհարկի փոխառություններին, ժարգոնային արտահայտություն-ներին՝ չտարբերակելով դրանց առանձնահատկությունները ըստ հասարա-կության տարբեր խավերի լեզվագործածության, մասնագիտական լեզվառճե-րում հանդես եկող բառամիավորները վերագրելով առհասարակ բոլոր լեզ-վակիրներին և այլն: Այս ոլորտի տերմինագործածության, տերմինների տար-բերակման մեջ նկատել ենք որոշակի նահանջ: *Շարգոն, արգո, սլենգ⁵, հասար-րակաբանություն, ժարգոնային արտահայտություն* տերմինների հստակ սահմանազատում առայժմ առկա չէ: Հասկացության հստակեցման ընդհա-նուր չափանիշների ընդունումն ու կիրառումը ուղեկցվում են նաև տերմին-ների միօրինակության հաստատմամբ:

Բարբառ, ենթաբարբառ, խոսվածք հասկացությունները ևս հստակ սահմանազատում չէին դրսևորում, և միննույն իրողությունը անվանվում էր մի քանի տերմիններով: Ա. Մարգարյանը գործածում է Գորիսի բարբառ տեր-մինը, իսկ «որոշ հայերենագետներ այն դիտում են իբրև Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ (կամ խոսվածք⁶)»:

⁴ Ջահուկյանական ընթերցումներ, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, Ե., Չանգակ-97, 2012, էջ 34-46:

⁵ Տե՛ս՝ **Т.Г. Никитина**, *Молодежный слэнг: толковый словарь*, М., 2009.

⁶ Տե՛ս **Հ. Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, էջ 159:

Ըստ «Հայերենագիտական բառարանի» տվյալների՝ Հաղրութի բարբառը ոմանք դիտում են իբրև Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ⁷: Քաբուսիեի բարբառը ոմանք համարում են Անտիոքի (Քեսաբ-Սվեդիայի) բարբառի խոսվածք⁸: Ռոդոսթոյի բարբառը համարում են Պոլսի բարբառի խոսվածք⁹:

Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգումից հետո առավել որոշակիացան *բարբառ, ենթաբարբառ, խոսվածք, ենթախոսվածք* եզրույթների տարբերակման սահմանները, որի հետևանքով նշված տերմինների գործածությունը բարբառագիտական ուսումնասիրություններում դարձավ առավել ստույգ ու միօրինակ: Է. Աղայանը գրում է. «Եթե չնորմավորված խոսքում նույնիմաստ բառերի կամ բազմանունների գործածությունը թույլատրելի է, իսկ երբեմն էլ անհրաժեշտ է, ապա տերմինաբանության մեջ գիտական ճշգրտության ու տերմինային համակարգայնության առաջատար պահանջները բացառում են տերմինահամակարգի ծանրաբեռնումն ու խճողումը բազմանուններով, որոնք ոչ միայն ավելորդ զուգահեռություններ են ստեղծում տերմինագործածության ու տերմինահամակարգի մեջ, այլև հաճախ շփոթությունների ու սխալների տեղիք են տալիս¹⁰»:

Տերմինաստեղծման ընթացում որոշ բառակազմական կաղապարներ առավել գործուն են դառնում. այսօր գործունացել և լեզվաբանական տերմինների կազմությանը մասնակցում են –ում, –ույթ վերջածանցները, բազմաթիվ են –գիտություն, բանություն վերջնաբաղադրիչներով տերմինները:

Նշենք հայերենագիտական աշխատություններում առկա որոշ ածանցների և բառակազմական կաղապարների գործունացման մի քանի նմուշ. *բառակազմագիտություն, շարահյուսագիտություն, գրաբարագիտություն, շարույթաբանություն, ձևահնչույթաբանություն, հատկանունաբանություն, հատկանվանագիտություն, տեղանունաբանություն, տեղանվանագիտություն, անձնանունաբանություն, անձնանվանագիտություն, դիցանունաբանություն, թարգմանաբանություն*: Այս վերջնաբաղադրիչներով բառեր կազմվում են նաև այլ գիտակարգերում (*տարածաշրջանագիտություն, եվրոպագիտություն, մաթեմատիկաբանություն, կոմիտասագիտություն* և այլն):

Սկատելի է սեռական հոլովի իմաստով –ական, –յան ածանցների կիրառության գործունացում, *աբեղյանական* (ստորոգյալի աբեղյանական մեկնաբանությունը), *աթայանական* (աթայանական ընթերցումներ), *ջահուկյանական* (ջահուկյանական ընթերցումներ), *աճառյանական* (դերանվան աճառյանական ըմբռնումը), *չարենցյան(չարենցյան ընթերցումներ)* և այլն:

Հաճախացել է –*անուն, -անվանում, -նիշ* վերջնաբաղադրիչներով կազմությունների գործածությունը, *մետաղանուն, ծառանուն, ձկնանուն, տոնանուն, մանրատեղանուն, բառանվանում, գունանվանում, քարանվանում, ժամանականիշ, հուզանիշ ածական, գործիքանիշ գոյական* և այլն:

⁷ **Զ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 313:

⁸ **Զ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 618:

⁹ **Զ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 532:

¹⁰ **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 355:

Մշակման, միօրինակ, միաձև ներկայացման կարիք կա լեզվաբանական աշխատանքներում կիրառվող տարբեր բանաձևերի, փակագծերի, սլաքների, + և - նշանների, պայմանական նշանների գործածության ոլորտում. տառադարձման, տեղանունների և անձնանունների գուգաձև գրության, բառերի կրճատումների, համառոտումների ընդհանուր սկզբունքների մշակումը հրատապ է և կարևոր:

Մի քանի խոսք արևմտահայերենի քերականության դասագրքերում գործածվող լեզվաբանական տերմինների մասին:

Սփյուռքի տարբեր գաղթօջախներում գործածվող դասագրքերում նկատելի են լեզվաբանական տերմինների գործածության տարբերություններ, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով: Դրանցից կարելի է նշել դասագրքերի կազմման միասնական ծրագրերի բացակայությունը, ուսուցանվող թեմաների ընտրության, անհրաժեշտ խորությամբ և մանրամասնությամբ ներկայացնելու հարցերը և բազմաթիվ այլ խնդիրներ: Գրաբարյան տերմինների գործածության հարցերում այդ դասագրքերում առկա է պահպանողականություն (տեք բայի, ընդունելության, լերկ, միջակ և թավ բաղաձայններ և այլն¹¹):

Միօրինակացման, միասնական մշակման և ներկայացման կարիք ունեն հայերենի երկու գոյաձևերի՝ արևելահայերենի և արևմտահայերենի քերականությունների և լեզվաբանական տերմինների համակարգերը (հմտ. *հնչափոխություն* և *հնչունափոխություն*, *ստորոգիչ* և *ստորոգյալ*, *լրացուցիչ* և *լրացում*, *շրջված* ենթակա և *հետադաս* ենթակա, *ասույթ բայեր* և *հարադրավոր բայեր*, *հարցման նշան*, *պարույկ*, *հարցանիշ* և *հարցական նշան* և այլն): Կարծում ենք, որ հայերենի բարձրագույն խորհուրդը, վերակսելով իր աշխատանքները, առաջնահերթ ուշադրության կարժանացնի ՀՀ-ի և սփյուռքի դպրոցների հայերենի ծրագրերի և դասագրքերի տերմինահամակարգերի լրամշակման, կանոնարկման, միօրինակացման հարցերը:

Anahit Galstyan - Unification Tendencies in the Armenian Linguistic Terminological System.-The article addresses the essential characteristics of the linguistic terminology in Contemporary Armenian and examines the main tendencies in its development. The nature of unification tendencies toward finding adequate Armenian linguistic terms (Armenification) is revealed and some terminological active models are brought to light.

Галстян Анаит- Тенденции унификации в лингвистической терминосистеме армянского языка.- В статье исследуются особенности лингвистической терминологии современного армянского языка. Выявляются тенденции развития лингвистической терминосистемы. Анализируются арменизация и унификация терминов, активизация некоторых терминологических моделей.

¹¹ Այս մասին տես **Ա. Գալստյան**, Արևմտահայերենի և արևելահայերենի լեզվաբանական տերմինների գուգադրական քննություն.- *Արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերի գուգադրական քննություն* (Գազմ.՝ Ն.Հովհաննիսյան, Ս.Տիոյան, Ա. Գալստյան), Ե., 2014, էջ 83-106:

ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ցեղանունաբանության (էթնոնիմիկա) մեջ առանձնացվում է ցեղանունների (էթնոնիմ) նշանակության իմաստաբանական երեք շերտ՝ նախնական իմաստ (ստուգաբանական), անվանական նշանակություն (էթնիկական, երբ ցեղանվան տակ հասկացվում է տվյալ անունով բնորոշվող ազգը, ցեղը կամ ժողովուրդը) և մակաձական, հավելական (отэтнонимическое) իմաստ¹²:

Հաճախ որևէ ազգի կամ ժողովրդի ազգային առանձնահատկությունները կամ նրանց նկատմամբ ձևավորված հասարակական կարծրատիպային վերաբերմունքը պատճառ են դառնում, որ այդ ազգի կամ ցեղի անունը որևէ լեզվում ստանա ուրույն մեկնաբանություն և ձեռք բերի աճականական իմաստ: Ժամանակակից խոսակցական հայերենում այսպիսի ցեղանունների վառ օրինակներ են *ցիգան* բառը, որ կիրառվում է ժլատ մարդու համար, *բոշա*, որ նշանակում է «անիմաստ թրև եկող», այստեղից էլ *բոշայություն անել*՝ «այստեղ-այնտեղ թրև գալ», *բոշի նման*՝ «առանց մի տեղ մնալու՝ տիտիկ անելու», *բոշի երես ունենալ*՝ «աներես, ամոթի զգացումը կորցրած՝ պընդերես լինել»¹³ կամ *եզդի*, որ, հեզնական վերաբերմունքով, գործածվում է ինչ-որ մեկին անճաշակ անվանելու համար: Հայերենում իմաստափոխված բառ է նաև *խուժան* հասարակ բառը, որ ծագում է *խուժ* (խուժիստանցիներ) ցեղի անունից: Սրանց հայերը համարել են ավազակաբարո ցեղ՝ հավանաբար իրենց ասպատակությունների պատճառով: Այնուհետև այդ բառը գործածվել է ընդհանրապես «վայրենաբարո» մարդկանց վերաբերյալ, մինչև որ ձեռք է բերել ներկայիս իմաստը¹⁴:

Ցեղանունների իմաստափոխության մյուս կարևոր գործոնը տվյալ ազգի կամ ժողովրդի կրոնադավանաբանական հատկանիշն է, այսինքն՝ կրոնական ինչ ուղղության է պատկանում այս կամ այն ազգը, ժողովուրդը: Հայտնի է, որ կրոնը, մասնավորապես հայերի կյանքում, կատարել է էթնոտարբերիչ գործառույթ¹⁵: XIV դ. վերջին ապրած Գ. Տաթևացին գրում է. «Ազգ առ ազգ բաժանեալ լինի գաւառաւ և լեզուաւ և կանոնական սահմանաւ, որ են աւանդութիւնք և հաւատք եկեղեցւոյ: Եւ բաժանումն յաւէտ զքան գաւառաւ և լեզուաւ՝ կանոնական սահմանաւն ասացեալ լինին: Այսպէս և առ միաբանութիւնս է իմանալ. առաւել միաբանութիւն ասել, զորս կանոնական սահմանադրու-

¹² В. Никонов, *Этнонимия. - Этнонимы*, М., 1970, էջ 12.

¹³ Պ. Բեդիրյան, *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, Ե., 2011, էջ 263, 444:

¹⁴ Է. Աղայան, *Լեզվաբանության ներածություն*, Ե., 1967, էջ 271:

¹⁵ Ա. Նալչաջյան, *Էթնիկական հոգեբանություն*, Ե., 2001, էջ 76-77:

*թեամբ է, քան որ գաւառաւ և լեզուաւ»*¹⁶: Այստեղ Գ. Տաթևացին ազգերին հատկանշում է ըստ տարածքի, լեզվի և կրոնի, որտեղ, ինչպես տեսնում ենք, առաջնային և կարևոր դերակատարությունը վերապահում է կրոնին ու դավանանքին¹⁷:

Հայ մատենագրության մեջ, օրինակ, հաճախ են այն դեպքերը, երբ կրոնական անվանումը գործածվում է ազգ, ժողովուրդ նշելու համար, հմմտ. *հեթանոսական ազգ, քրիստոնեական ազգ, մահմեդական ազգ* և այլն: Տարածված է նաև հակառակ երևույթը, երբ տվյալ ցեղանունը բարդվում է կրոն, դավանանք, հավատք և նմանատիպ հասկացություն արտահայտող այլ բառերի հետ, փաստորեն, հոմանշային հարաբերության մեջ գտնվելով կրոնական անվանումների հետ, հմմտ. *հայադավան, տաճկահավատ, պարսկադէն*, որ գործածում է V դ. պատմիչ Եղիշեն¹⁸ ու կազմված է *պարսիկ* ցեղանունից և *դէն* բառից, ուր *դէն* = միջ. պ. *dēn* և նշանակում է «կրոն, հավատք»¹⁹, այսինքն՝ *պարսկակրոն*, որ Եղիշեի ապրած ժամանակաշրջանում զրադաշտականությունն էր: Այս բառերը կարող են գտնվել նաև որոշային կամ հատկացուցչային հարադրավոր կապակցություններում: Որոշային կապակցության դեպքում ցեղանունը կարող է դրվել ինչպես ինքնուրույն՝ առանց ածանցման, հմմտ. *հայ կրոն, պարսիկ կրոն, տաճիկ կրոն*, այնպես էլ՝ ածականական - *ական* վերջածանցի կցմամբ, հմմտ. *հայկական, պարսկական* կամ *տաճկական ազգ* կամ *կրոն, դավանանք, հավատք*: Հատկացուցչային կապակցության մեջ ցեղանունը դրվում է հոգնակի թիվ - սեռական հոլովով, հմմտ. *հայոց կրոն, պարսից կրոն, տաճկաց կրոն* և այլն: Այստեղ ներբերենք XV դ. անհայտ հեղինակի կողմից գրված «Ժամանակագրությունից» մի հատված, որում առկա է ցեղանվան և կրոնական անվան համատեղ գործածություն: Խոսելով 1475 թ. Ահմադ փաշայի կողմից Կաֆայի գրավման մասին՝ ժամանակագիրը վկայում է. «Թվին ՋԻԴ (1475) Ահմատ փաշան ... գԿաֆայն էառ ... Եւ այսպէս ... աշխարհս յամէն տիրեցին, արևանման մլքեցան ազգն տաճկաց... և քրիստոնա[j] ազգն եղև հարկատու...»²⁰: Ինչպես տեսնում ենք, հեղինակն ազգերին բնորոշում է կրոնով: Եվ *տաճիկների ազգը* հակադրելով *քրիստոնյաների ազգին*՝ շեշտում է *տաճիկ* ցեղանվան կրոնական նշանակությունը՝ «մուսուլման» իմաստով:

Տաճիկ բազմիմաստ բառը հայ մատենագրության մեջ «արաբ» նշանակող հիմնական անվանումներից է²¹: VII դ., երբ արաբները սկսեցին տարածել

¹⁶ Գ. Տաթևացի, *Գիրք հարցմանց*, Կ. Պոլիս, 1729, արտատպ. Երուսաղեմ, 1993, էջ 552:

¹⁷ Հմմտ. Ա. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին*, Ե., 1957, էջ 115:

¹⁸ Եղիշե, *Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին*, Մատենագիրք Հայոց (այսուհետ՝ ՄՀ), հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 688:

¹⁹ Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա, Ե., 1971, էջ 653:

²⁰ Անանուն Ժամանակագրություն (XIII դ.), *Ե տարբերակի շարունակությունը*, Մանր Ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Ե., 1951, էջ 27:

²¹ Հայ մատենագրության մեջ արաբները հայտնի են նաև *սառակինոս*, *Հագարի որդի* կամ *հագարացի*, *Իսմայելի որդի* կամ *Իսմայելացի* անվանումներով:

իսլամը, այս համատեքստում *տաճիկ* անունը հայկական գրավոր աղբյուրներում սկսեց գործածվել «մուսուլման», «իսլամի հետևորդ» իմաստով, հմմտ. «*Եւ ի գալստեանն այսոքիկ հրէայք եւ հեթանոսք, քրիստոնէայք եւ տաճիկք*»²², այստեղից էլ՝ *տաճկացնէլ*՝ «մուսուլման դարձնել» դարձվածքը, հմմտ. «*Եւ սարկաւագ մի տաճկացուցին, եւ զհոռոնոց տանուտէրն ... կախեցին*»²³: Ավելի ուշ *տաճիկ* անունը սկսում է կիրառվել նաև «թուրք-մուսուլման» իմաստով: Այսպես՝ Գ. Տաթևացին «Հարցմանց Գիրք» (1397 թ.) երկի «Ընդդէմ տաճկաց» մասում, որը, ի թիվս «Ընդդէմ հրէից» և «Ընդդէմ քրիստոնէական եկեղեցույ դաւանաբանական ներքին տարբերութեանց» հատվածների, գրել է քրիստոնէական կրոնը ջատագովելու նպատակով, քննադատում է մուսուլմանական կրոնը²⁴: *Տաճիկ*՝ «մուսուլման» իմաստով կիրառվում է նաև *պարսիկ* անվան հետ կապակցված, հմմտ. «*քանզի Պարսիկ Տաճկահաւատք սպասաւորօք շրջէին*»²⁵: Ընդհանուր առմամբ, *տաճկահավատ*, այսինքն՝ մուսուլման են կոչվում իսլամադավան ազգերը, հմմտ. «*ամենայն Տաճկահաւատ Սուլտանքն, որ յազգէն Թուրքաց և Քուրթաց և Պարսից և Իլամացոց, և յայոց ազգաց*»²⁶, որտեղ «ազգ» բառի կիրառումը նշված ցեղանունների կողքին տվյալ պարագայում ի ցույց է դնում նրանց էթնիկական նշանակությունը: Նշյալ իմաստով՝ *տաճիկ* բառը գործածվում է նաև նմանատիպ այլ կազմություններում, հմմտ՝ *տաճկակրօնք, տաճկասէր*²⁷:

Հետաքրքիր է ստուգաբանվում հայերեն *հրէա* բառը, որ, ըստ Հ. Հյուբշմանի, առաջացած է **hureay* = **hudeay* ձևից, որ ասորերեն *ihūdāyā* ձևին է համապատասխանում, որտեղ *-էայ* վերջավորությունը ցույց է տալիս պատկանելություն (ինչպես օրինակ, *քրիստոնէայ* կամ *քաղղէայ* բառերում) և բառացի նշանակում է «Հուդայական, Հուդայի հետևորդ», հմմտ. հյ. *հրէայ*, ասոր. *ihūdāyā, yūdāyā*, արաբ. *yahūd*, ն. պ. *juhūd*²⁸: Այս անունն այդպես է բացատրվում նաև «Նոր Հայկազեան» բառարանում, հմմտ. «*Հրէայ... այսինքն՝ Յուդայեան... ազգն յուդայի երբեմն ի սահմանս Երուսաղէմի. այլ հետո ամենայն եբրայեցիք կոչեցան հրէայ՝ որպէս յուդայեան*»²⁹: Հայերենում գործածական է նաև բարբառային *ջհուդ* ձևը³⁰: Հուդա (Յուդա, Ուդա) արական անձնանունը

²² Գ. Մագիստրոս, *Թուղթք եւ Չափաբերականք*, ՄՀ, հ. ԺԶ, Երևան, 2012, էջ 238:

²³ Գ. Դարանաղցի, *Ժամանակագրություն*, Երուսաղէմ, 1915, էջ 193:

²⁴ Տե՛ս Բ. Եպս. Կիլիկեցեան, *Իսլամը հայ մատենագրութեան մէջ*, Վիեննա, 1930:

²⁵ Կ. Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, Թիֆլիս, 1909, էջ 349:

²⁶ Նույն տեղում, էջ 361:

²⁷ Ն. Բիւզանդացի, *Բառգիրք ստորին հայերենի*, Ժնև, 2000, էջ 705: Տաճիկ անվան նշանակությունների մասին մանրամասն տե՛ս Հ. Գևորգյան, Տաճիկ անվան նշանակությունները հայ մատենագրության մէջ. - «*Հայաստանը և արաբական աշխարհը. Պատմություն և արդի խնդիրներ (երիտասարդական միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու)*», Ե., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2014, էջ 24-33:

²⁸ Հ. Հյուբշման, *Հայերենի քերականություն*, Ե., 2003, էջ 309:

²⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Վենետիկ, 1837, էջ 142 (այսուհետ՝ ՆՀԲ):

³⁰ Պետք է նշել, որ հայերենի բարբառներում *ջհուդ* բառն՝ իր հնչյունափոխված տարբերակներով, ունի նաև այլ նշանակություններ: Այսպես, *յահուտ, ջրհէժտ, ջրհուդ* համապատասխանաբար Ամասիայի, Քեսաբի և Լոռու բարբառներում ունեն «նվաստ», «ազահ» և «դաժան» նշա-

թարգմանաբար նշանակում է «գովություն» կամ «խոստովանություն»: Այս անվան իմաստը գալիս է աստվածաշնչյան բնագրից. «*Եւ յղացաւ դարձեալ, ծնաւ որդի, եւ ասէ. զայս միւս անգամ գոհացայց զՏեառնէ, եւ կոչեաց զանուն նորա Յուդա*»³¹: Փաստորեն, այս բառի ստուգաբանական և անվանական նշանակությունները համապատասխանում են միմյանց, հմմտ. «*Եւ յուղայտութիւն ի Յուդայէ, որ է հրէութիւն, ի չորրորդէ որդւոյն Յակոբայ. յորմէ թագաւորութիւն էր, և կալաւ անունն զամենայն ազգն յուղայական*»³²: Հրեա անվան էթնիկ-դավանաբանական նշանակությունն արտահայտված է հուդայականության գաղափարախոսության մեջ: Հրեական ռաբբիների բնորոշմամբ հուդայական է համարվում նա, ով ծնվել է հրեա մորից կամ ընդունել հուդայականությունն իբրև կրոն՝ չխախտելով համապատասխան պայմանները³³: Հրեա ցեղանունից ածանցված՝ հայերենում ունենք նաև բառային այլ կազմություններ, որ արձանագրված են բառարաններում և որոնցում, անշուշտ, երևում են նրանց ունեցած կրոնադավանաբանական նշանակությունները, հմմտ. *հրէաբար*, որ նշանակում է «հրեական օրենքով, կրոնով», հմմտ. «*Ասորիք հրէաբար մինչեւ ցերեկոյ պահեն եւ լուծանեն*»³⁴, *հրեական*՝ «սեպհական հրէի կամ ազգին և կրօնից հրէից», *հրեամիտ*՝ «որ ունի զմիտս և զվարդապետութիւն հրէից», *հրեանալ*՝ «հրեա լինել, դառնալ ի հրէություն», *հրէություն*՝ «հրեական սովորություն, օրենք, կրոն»³⁵ և այլն:

«Ազգ» հասկացության միջնադարյան ընկալումներում ակնհայտորեն որոշիչ դերակատարություն ունի դավանաբանական գործոնը: Այս առումով շատ ուշագրավ նկատառումներ է անում պատմաբան Ա. Հովհաննիսյանն իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատության մեջ: Վերջինս մասնավորապես գրում է. «Ազգ հասկացությունն իսկ միջնադարյան Հայաստանում ուներ այլ իմաստ...: Հայ էթնիկական միությունը «ազգ» էր նկատվում գերազանցորեն եկեղեցու սահմաններում: Հայ եկեղեցու պատմական հիմքը հայերի եկեղեցական էքստերիտորիալ մի կազմակերպություն էր, որը միավորում և գլխավորում էր նրանց դարեր շարունակ հայ ֆեոդալական իշխանությունների անկումից հետո: Եկեղեցու սահմաններում հայերի էթնիկական հանրությունը վեր էր բարձրանում տոհմի ու գավառայության նեղ շրջանակներից...: Պատահական չէ, երբ հետագայում հայ մտքի միջնա-

նակությունները: Տե՛ս Հ. Մեսրոպյան, *Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում*, Ե. 2010, էջ 107:

³¹ Փ. Մեթրիխանյան, *Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան (ըստ V-XX դարերի հայ բանաստեղծության)*, Ե., 2001, էջ 300:

³² Ե. Կողբացի, *Եղծ աղանդոց*, ՄՀ, հ. Ա, էջ 487-488:

³³ Словарь религий, Иудаизм, христианство, ислам, под редакцией В. Зюбера, Ж. Потэна, СПб.: Питер 2012, стр. 83.

³⁴ Մ. Գոշ, *Թուղթ առ Վրացիսն Յաղագս Ուղղափառութեան Հաւատոյ*, ՄՀ, հ. Ի, Ե., 2014, էջ 470:

³⁵ ՆՀԲ, հ. II, էջ 141-142: Տե՛ս նաև՝ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 441:

դարյան ուղղության ներկայացուցիչներն ասում էին թե՛ «արտաքոյ Հայաստանեայց եկեղեցոյ չիք ազգութիւն»³⁶:

Այս միտքը լավագոյն ձևով իր ապացույցն է գտնում XI-XII դդ. հեղինակ Դավիթ Ալավկա Որդու գրվածքներում: Վերջինս իր «Կանոնական օրենսդրության» մեջ մի քանի հոդվածներով անդրադառնում է քրիստոնյա հայ կնոջ վարքին և պատիժ սահմանում այն դեպքերի համար, երբ նա հարաբերություն է ունենում ոչ քրիստոնյա, այլազգի, անհավատ տղամարդու հետ: Հեղինակը մի կողմից հոմանշային հարաբերության մեջ է դնում *հայ* ցեղանունը «քրիստոնյա» կրոնական անվանման հետ, մյուս կողմից «անհավատ», «այլազգի», «ոչ քրիստոնյա» հասկացությունները բնորոշում է *քուրդ* ցեղանվամբ՝ դրանք նույնպես դարձնելով հոմանիշ, հմմտ. «*Հայ կին թէ լինիցի առ քուրդի, գոյով քրիստոնեայ եւ ո՛չ մեկնեսցի ի նմանէ ի պատճառս քրիստոնեութեան, մի՛ որ հաղորդեսցի նմա ի քահանայից կամ յաշխարհականաց*»³⁷: Հաջորդ իսկ հոդվածներից մեկում Ալավկա Որդին *հայ* բառի փոխարեն գործածում է *քրիստոնյա*, իսկ *քուրդ* ցեղանվան փոխարեն՝ *այլազգի*³⁸ տերմինը, հմմտ. «*Այլ են ի քրիստոնէից, որք կամաւ գոստերս իւրեանց կին տան այլազգեաց, ...: Այնպիսիքն նգովեայ եղիցին...*»³⁹: Նմանատիպ մի օրինակի ենք հանդիպում XII-XIII դդ. հեղինակ Մխիթար Գոշի կանոններից մեկում, հմմտ. «*Չէ մարթ, որք յեկեղեցոյ մերոյ են, ի պէսպէս եւ ի ցոյի հարսանիս այլազգեաց մերձեցուցանել զուտերս եւ գոստերս իւրեանց*»⁴⁰:

Հետագայում *քուրդ* ցեղանունից անանցմամբ կազմվում է *քրդանալ* բայը՝ «հրաժարվել քրիստոնեական կրոնից, կրոնափոխ լինել, մուսուլման դառնալ, դառնալ անհավատ» նշանակությամբ: XVII դ. հայ վաճառական Ջաքարիա Ագուլեցու «Օրագրության» մեջ *քրդանալ* գործածվում է «մահմեդականանալ» բառի նշանակությամբ, հմմտ. «*...մին Ոհան անուն չի վարդապետ ջուղեցի, սայ քուրդացաւ, շատ զարար տվեց Ջուղու, ևս առավել հավատի պակասութիւն: Անունն եղին Շիւ-Մումին*»⁴¹, «*...Շահնուաստ խանն, որ էր ազգաւ վրացի, առաջ Շահաբաս սայ տարաւ Լսպահան, քուրդացրուց, Թիվլիսու խանութիւն կուտայ սորայ*»⁴²: Նույն անալոգիայով՝ *քուրդանալ* բային հոմանիշ է *թուրքանալ* բայը, որ նախորդի հետ միասին Ջաքարիա Ագուլեցու մոտ զուգահեռաբար գործածվում է «մուսուլման դառնալ» նշանակությամբ, հմմտ. «*Շահն մարդ դրկեց, այս Գորգին Միրզեն տարաւ Լսպահան, թուրքացնի, ա-*

³⁶ Ա. Հովհաննիսյան, *նշվ. աշխ.*, էջ 112-113:

³⁷ Դ. Ալավկայ Որդի, *Կանոնական Աւրենսդրութիւն...*, ՄՀ, հ. ԺԶ, էջ 685-686:

³⁸ *Այլազգի* բառը հայ մատենագրության մեջ ունի հստակ արտահայտված կրոնական նշանակություն, որ արձանագրված է ՆՀԲ-ում, հմմտ. «Երբեմն՝ որ էր յայլմէ ազգէ և ի կրօնից արտաքոյ երբայեցուց. և այժմ՝ որ չիցէ քրիստոնեայ.»: Տե՛ս ՆՀԲ, հ. I, Վենետիկ, 1836, էջ 85: Տե՛ս նաև՝ **A. Sanjian**, *Colophons of Armenian manuscripts*, Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1969, էջ 431.

³⁹ Դ. Ալավկայ Որդի, *նշվ. աշխ.*, էջ 686:

⁴⁰ Մ. Գոշ, *Գիրք Դատաստանի*, աշխատասիրությամբ՝ Խ. Թորոսյանի, Ե., 1975, էջ 99:

⁴¹ Զ. Ագուլեցի, *Օրագրություն*, Ե., 1938, էջ 103:

⁴² Նույն տեղում, էջ 140:

նունն փոխի, դնի Շահբանդայ խան...»⁴³, «...փառակեցի հայ ոմն, Ջիմշիտ անուն, թուրքանայ: ... Ախպեր ուներ, անունն Առաքելս այլվի թուրքացաւ...: Առաքելն մեռաւ, սորայ մնաց բ տղայ: Սորայ էլ թուրքացան...»⁴⁴:

Հայ մատենագրության մեջ «ոչ քրիստոնյա», «մուսուլման» նշանակությամբ կիրառություն ունի նաև *պարսիկ* ցեղանունը: XIII դ. Անանուն ժամանակագրության մեջ, ուր վկայվում է 1231 թ. մոնղոլների կողմից Գանձակը գրավելու մասին, նշվում է, որ այդ ժամանակ կոտորվեցին ու «գերեցան քրիստոնեայք և պարսիկք առհասարակ»⁴⁵:

Կրոնական և դավանաբանական նշանակություններն արտահայտվում են նաև միևնույն կրոնին պատկանող, բայց դավանաբանական տարբերություններ ունեցող ազգերի անվանումների պարագայում: Ներքրիստոնեական դավանաբանական տարբերություններն ու դրանց հետևանքով առաջացած վեճերն ուղեկցվում են նաև տարբեր վիրավորական արտահայտություններով: Այսպես, XVI-XVII դդ. պատմիչ Գրիգոր Դարանաղցին գրում է. «Արդ՝ ի յայս տատանեալ ժամանակիս եղև լրումն ամաց իննսուն եւ հինգն ծագատկին հոռոմոց հաւատակցաց ազգայնոցն ամենեցուն»⁴⁶: Ինչպես տեսնում ենք, պատմիչը հոռոմների (հույների) զատիկը կոչում է «ծագատիկ»: Սա այլ դավանանքի եկեղեցու այն զատիկն է, որ տոնացույցների տարբերության պատճառով երբեմն ուրիշ օր էր գալիս, քան մյուս եկեղեցու զատիկը, հմմտ. *ծաւտոն*, որ հույների ս. Գևորգի տոնն է, որ հայերի համար տոն չէ⁴⁷:

1551 թ. Վալախիայում (Ռումինիա), Սուչավա քաղաքում և մի քանի այլ վայրերում հայերի դեմ կազմակերպված հալածանքների մասին պատմող Մինաս Թոխաթեցու «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն» բանաստեղծության մեջ նշվում է, որ հայերին նաև դավանափոխության էին ենթարկում և ստիպում էին ընդունել քաղկեդոնականություն: Այստեղ բանաստեղծը *հոռոմ* և *օլախ/ալախ* (վալախ) ցեղանունները հաճախ գործածում է «հույն-քաղկեդոնական» նշանակությամբ, հմմտ. «Պեղծ վոյվոտան Օլախ ազգի»⁴⁸ *պատասխանեաց Հայոց դասի, եկեք մտեք հաւատ Հոռոմի, շատ մեծութիւն տամ ես ձեզի»*⁴⁹: Այստեղ *հոռոմ* բառին հոմանիշ է գործածվում *վալախ* ցեղանունը, և երկուսն էլ նշանակում են «քաղկեդոնական», հմմտ. «Եւ ակամայ մըկըրտեցաւ և յՕլախի հաւատ մըտա»⁵⁰:

Ներքին դավանաբանական այս հակասությունների համատեքստում, բնականաբար, բուռն քննադատության էր արժանանում դավանափոխութ-

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում, էջ 145:

⁴⁵ **Անանուն ժամանակագրություն** (XIII դ.), *Յոհաննու քահանայի*, Մանր ժամանակագրություններ, հ. I, էջ 26:

⁴⁶ **Գ. Դարանաղցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 236:

⁴⁷ Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 351:

⁴⁸ Խոսքը վերաբերում է Վալախիայի իշխան Ստեփան Ռաբեշ 7-րդին (1551-1552թթ.):

⁴⁹ **Մ. Թոխաթեցի**, *Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն*, Կամենից, կազմեց՝ Ղ. Ալիշան, Վեներտիկ-Ս. Ղազար, 1896, էջ 22:

⁵⁰ Նույն տեղում, էջ 26:

յունը: XIII դ. Հովհաննես Գառնեցու տեսիլն ամբողջովին ուղղված էր դավանափոխության գաղափարի դեմ: Այստեղ արծարծվում էր այն միտքը, թե դժոխքի բաժին պիտի դառնան բոլոր նրանք, «որ կամեցան ազգէ յազգս փոխել և արհամարհեցին զմի մկրտութիւն և եղեն Հոռոմ կամ Ֆրանգ⁵¹ կամ Ասորի»⁵²:

Ներքրիստոնէական դավանաբանական հակասություններն անդրադառնում են նաև *վրացի* ցեղանվան նշանակության վրա: 608 թվին Կյուրիոն կաթողիկոսի օրոք Վրաց եկեղեցին խզում է ավանդական մշակութային, դավանաբանական ու նվիրապետական կապերը Հայ եկեղեցու հետ և ընդունում քաղկեդոնականություն⁵³: Պատմագիտության մեջ ապացուցվում է, որ XI դ. բյուզանդական ազնվականության միջավայրում բարձր դիրքերի հասած այնպիսի նշանավոր գորավարներ, ինչպիսիք էին Լիպարիտը, որին պատմիչ Մատթեոս Ուռհայեցին կոչում է «*վրացի ազգաւ*»⁵⁴, Կամենը (Կատակալոն Կեկավմենոս), 1083 թ. Պետրիժոնի վանքի (ներկայիս Բուլղարիայի Պլովդիվի շրջանի Բաչկովո գյուղ) հիմնադիր Գրիգոր Բակուրյանը և այլք, հայկական ծագում ունեին և սերում էին Տայքից: Եվ քանի որ պատկանում էին քաղկեդոնական դավանաբանությանը, ապա հայ պատմագրության մեջ կոչվում են *վրացի*:

Այս համատեքստում ուշագրավ է XVII դ. մատենագիր Հակոբ Կարնեցու «Շինուած Կարնոյ քաղաքի» աշխատության հետևյալ հատվածը, ուր հեղինակը Իշխանանիստ ձորը նկարագրելիս հաղորդում է. «*Եւ էին բնակիչք երկրիս կէսն Հայք և կէսն ազգաւ և կրօնիւն Վրացի, բայց Հայի լեզուաւ խօսէին*»⁵⁵: Ինչպես տեսնում ենք, Հակոբ Կարնեցին *վրացի* է անվանում Իշխանանիստ ձորի (Ճորոխի հովիտ) այն բնակիչներին, որոնք «կրոնով վրացի» էին, բայց խոսում էին հայերեն⁵⁶: Ակնհայտ է, որ պատմիչն այստեղ հավասարության նշան է դնում «ազգ» և «կրոն» հասկացությունների միջև, իսկ «հայի լեզվով խոսեին» արտահայտությունը հուշում է, որ այդ բնակիչներն էթնիկապես հայ և կրոնով վրացի էին, այսինքն՝ հայ-քաղկեդոնականներ էին:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը բերվածը, նկատում ենք, որ «ազգ» և «եկեղեցի», «կրոն», «դավանանք» հասկացությունները խիստ միաձույլ են ընկալվում հայ միջնադարյան մտածողության մեջ, ինչն արտացոլված է ժամանակի գրավոր աղբյուրներում: Ընդ որում, հաճախ կրոնադավանաբանական նշանա-

⁵¹ Հայ մատենագրության մեջ կրոնադավանաբանական նշանակություն ունի նաև *ֆրանկ* բառը, որ Արևելյան երկրներում եվրոպացիներին, մասնավորապես կաթոլիկ ֆրանսիացիներին ու իտալացիներին տրվող ընդհանուր անվանումն է (տե՛ս Միջին հայերենի բառարան, էջ 833), հմմտ. ժամ. պ. *farangi, farangestan*, որ նշանակում են «եվրոպացի», «Եվրոպա»: Այստեղից էլ՝ *ֆրանգադավան*, որ նշանակում է «կաթոլիկ»: Հայերենում այս բառը գործածվում է նաև «հայ կաթոլիկ» նշանակությամբ:

⁵² Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 278-279:

⁵³ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ե., 2002, էջ 988:

⁵⁴ Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 109:

⁵⁵ Յ. Կարնեցի, *Շինուած Կարնոյ քաղաքին, որ կոչեցաւ Թէուդուպոլիս, որ այժմ Արզրում վերայձայնիպլ կոչի*, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ. Հակոբյան, Ե., 1956, էջ 554:

⁵⁶ Տե՛ս Տ. Մարության, *Հայ դասական ճարտարապետության ակունքներում*, Ե., 2003, էջ 246:

կություններով ցեղանունների գործածության մեջ նկատվում է մատենագրի բացասական վերաբերմունքը, որը բնական է, քանի որ սեփական կրոնն ու դավանանքը միշտ գերադասվում են այլ կրոններից, որոնք որակվում են «սուտ», «կեղծ», «ծուռ» և նմանատիպ այլ ածականներով: Պետք է նշել նաև, որ կրոնական և դավանաբանական հատկանիշները էապես նպաստում են այդ նշանակություններով տարբեր խոսքիմասային պատկանելություններով (գոյական, ածական, բայ, մակբայ) ցեղանվանահիմք նորակազմությունների գոյացմանը՝ փաստորեն, խթանելով լեզվի բառապաշարի հարստացումը:

Haykaz Gevorgyan – The Confessional Meanings of the Ethnonyms in the Armenian Chronicles. - In this article, the confessional meanings of the ethnonyms are presented on the basis of Armenian chronicles. These meanings are expressed in different ways: a juxtaposition of the ethnonym and the word denoting a confession or religion (for example: Armenian faith, Persian or Greek religion), inner reinterpretation of the ethnonym (for example: Jew – someone who belongs to the Jewish faith, Turk, Kurd, Persian – Muslim, Frank – catholic, Georgian – Armenian Chalcedonian etc.) and neologisms, originating on the basis of the given ethnonym (for example: Arm. թուրքանալ – to become Turkish, become Muslim, Arm. հրեանալ – to accept the Jewish faith, Arm. քրդաբարձ – Kurd-like, i.e. a person possessing no faith, morality etc.).

Геворгян Айказ – Конфессиональные значения этнонимов в армянской летописи. - В настоящей статье мы представляем конфессиональные значения этнонимов на основе армянской летописи. Эти значения выражаются по-разному: сопоставлением этнонима с простым словом, выражающим конфессию (армянская вера, персидская, греческая религия и т. п.), внутренним переосмыслением этнонима (например: еврей – иудей, турок, курд, перс – мусульманин, франк – католик, грузин – армянин-халкидонит, и т. п.), а также новообразованиями на основе данного этнонима (например: турок – отуречиться, курд – окурдиться (стать мусульманином), еврей – оевреститься (стать иудеем) и т. п.).

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ
ՏԱՐԲԵՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Հայերենի զարգացման փուլերից միջին հայերենն այն օղակն է, որն ունի դեռևս չուսումնասիրված կողմեր: Միջին հայերենը իր տարբեր մակարդակներում ի հայտ է բերում տարատեսակ բազմաձևություններ ու շեղումներ: Բառապաշարն այդ բազմաձևությունից անմասն չէ: Այն լեզվի ամենազգայուն ու փոփոխվող շերտերից է, և ազդեցությունները նախ և առաջ այստեղ են դրսևորվում:

Որևէ օտար լեզվի ազդեցությունը այս կամ այն լեզվի վրա բնական և անխուսափելի լեզվական երևույթ է և պայմանավորված է քաղաքական, տնտեսական ու մշակութային մի շարք գործոններով: Միջին հայերենի բառապաշարում մեծ թիվ են կազմում գրավոր և բանավոր ճանապարհով մուտք գործած անմիջական և միջնորդավորված փոխառությունները տարբեր լեզուներից: Այս տեսակետից համակողմանի քննություն իրականացնելու նրպատակով փորձել ենք որպես ուսումնասիրության աղբյուր ընտրել տարբեր բովանդակության և տարատեսակ բնագավառներ ներկայացնող աշխատություններ, ինչպիսիք են՝ Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», նրա կողմից թարգմանված «Անսիզ Անտիոքայ» օրենսդրական աշխատությունը, Ներսես Լամբրոնացու թղթերը, «Գիրք վաստակոց» թարգմանական երկը, Մ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» բժշկարանը, 13-18-րդ դդ. մանր ժամանակագրությունները, Կամենեց –Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, Ն. Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայերենի...» և «Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն»¹ բառարանները, Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանը» և այլն: Ի մի հավաքելով եվրոպական տասնյակ փոխառություններ՝ դրանք կփորձենք ներկայացնել սույն հոդվածում: Եվրոպական փոխառությունները առանձնացրել ենք ըստ հետևյալ լեզուների՝ լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն, ռուսերեն, գերմաներեն, ռումիներեն, ուկրաիներեն: Միջին հայերենին անցած բազմաթիվ փոխառություններ ներկայացված են «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության»², Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանում»³, ինչպես նաև Ռ. Ղազարյանի «Միջին գրական հայերենի բառապաշարը»⁴ մենագրության մեջ: Եվրոպական փոխառությունների բազմաթիվ օրինակներ կան Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարա-

¹ Ն. Բիւզանդացի, *Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ժԱ-ժԷ դարուց*, Ժնև, 2001, *Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն*, Կոստանդնուպոլիս, 1884:

² *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, Ե., 1972:

³ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009:

⁴ Ռ. Ղազարյան, *Միջին գրական հայերենի բառապաշարը*, Ե., 2001:

նում», ինչպես նաև «Եւրոպական փոխառեալ բառեր հայերէնի մէջ» գրքում⁵: Որոշ փոխառություններ արձանագրված են Նորայր Բյուզանդացու վերոնշյալ արժեքավոր բառարաններում: Միջին հայերէնի եվրոպական փոխառությունների մեջ երբեմն հանդիպում են բառեր, որոնք իրենց զուգահեռ ձևերն ունեն մի քանի լեզուներում: Այս պարագայում երբեմն դժվար է լինում ստույգ որոշել տվյալ փոխառության բուն աղբյուրը, և այս դեպքերում անհրաժեշտ է լինում էլնել տվյալ բառի արտահայտած իմաստից, գործածության վայրից և փոխառման ժամանակաշրջանից: Միջինհայերէնյան եվրոպական փոխառություններն ավելի շատ վերաբերում են կրոնի, պետականության, բուսաբանության, բժշկության, իրավաբանության ոլորտներին: Միջին հայերէնի եվրոպական փոխառությունների ձևաբանական քննությունը ցույց է տալիս, որ փոխառյալ միավորները հիմնականում գոյականներ են, ավելի փոքր թիվ են կազմում ածականները, բայերն ու մակբայները:

Մեր ուսումնասիրած աղբյուրներում մեծ խումբ են կազմում լատիներեն, լեհերեն, ֆրանսերեն փոխառությունները: Ավելի փոքր քանակով գործածվել են գերմաներեն, իտալերեն, ռումիներեն, ռուսերեն, ուկրաիներեն բառերը: **Լատինական** փոխառություններն ունեն գրքային բնույթ և հայերէնին են անցել մատենագրական ճանապարհով: Սրանք միջնորդավորված փոխառություններ են, որոնց անմիջական աղբյուրը հունարեն, ֆրանսերեն և իտալերեն են: Լատինական փոխառությունները, որոնք հանդիպում են միջինհայերէնյան աղբյուրներում, հիմնականում կրոնական, պետական, հասարակական կյանքին վերաբերող բառեր են, որոնց մի մասը հայերէնին են անցել թարգմանությունների և քարոզների միջոցով՝ *ալպէսոս*-հասպիս, *ադրըսընդաս*-ձիագի, *առմաշ* -ոստիկան, *բուլ* -պապական կոնդակ, *բրէստ*-կուսակալ, *բրեվիար* - ժամագիրք, *բրվէնտ*-հոգևորականի եկամուտ, *գարտինալ*-կարդինալ, *գլոստր*-վանք, *գուբիդում* - երկարության չափ, *գուբլայ* - սաղմոսների շարք, *գոնօնիկոս*- կանոնիկոս, *դիսպոլուս* - սատանա, *դէկրէթալ* -հրաման, *դրաքդուս* - գիտական շարադրանք, *լիկադ* - դեսպան, *լունայ* - լուսին, *լոճիգայ* - տրամախոսություն, *կիւտտր* - սուրհանդակ, *Մարս* - «Հրատ» մոլորակը, *մենիաս* - խաղողի որթի տեսակ, *միսալ* – պատարագամատույց, *պան*-մեղրահաց, *պիպլոդէք* գրքերի հավաքածու, *պրացոլ/պրացալիս* - գինվորական բազպան, *պրօքսիմո* - մերձավոր, բարեկամ, *ջերունդիական* - անորոշ դերբայ, *սիգեդ/սիգել* - 1.կնիք, 2. հրամանագիր, հրովարտակ, *սիվիլական*-քաղաքացիական, *ստրատորոս/ստրատոր* - ձիապան, ախոռապան, *վեստիտոր* - թագադրող, *օնորոս*- պատիվ, *ֆլորին*-արծաթադրամ: Մեծ է նաև **ֆրանսերենի** ազդեցությունը հայերէնի բառապաշարի վրա: Հր. Աճառյանը, ուսումնասիրելով միջինհայերէնյան աղբյուրները, առանձնացնում է ֆրանսիական 70 փոխառություն, որոնց քանակը հետագայում լրացվել է: Անդրադառնալով միջինհայերէնյան մեր նշած աղբյուրներին՝ ֆրանսիական փոխառություններից առանձնացնենք մի քանիսը՝ *անլիճ*- անիշխան, *անջ-*

⁵ Հ. Աճառյան, *Եւրոպական փոխառեալ բառեր հայերէնի մէջ*, Վիեննա, 1951:

ալունջ /ան+ ջալունջ/-առանց գանգատի, անբողոք, **անսիգ**-օրենք, **անսիգվոր** - իրավատեր, **արծուկաք//արշվկաք** - արքեպիսկոպոս, **աղրել** - արտոնել, իրավունք տալ, **ան(օն)** - երկարության հին չափ, արմնկաչափ, **բասաճ** - արշավանք, հատկապես խաչակիրների արշավանք, **բլայթ** - դատի մեջ պաշտպանություն, **բլայթել** - դատ վարել, **բրաջուր** - կաթոլիկ քարոզիչ, **բրետիկադուր** - քարոզիչ, **բրինձ** - իշխան, թագաժառանգ, **բրնձեա//բրնձեա** - իշխանադուստր, **բրվեճ//բրվիճ//բրուվեճ** - արտոնություն, **գամբեռլին //ջամբբոլայ//ջամբոայ//ջամբոնայ//ջամոլան** - սենեկապետ, **գունդութիւն**-կոմսություն, **գունթըտ//գունդ//գունթ//գօնթ** - կոմս, **գունտուհի**-կոմսուհի, **ըմբրուր//բրուր//ըպրուր//ըպրուրն** - կայսր, **ըռե//ըռը//ռե** - թագավոր, **ըռեճիստր** - ցուցակավար, **լիճ** - վասալ, ավատառու, **լիվր** - դրամական միավոր՝ մեկ ֆրանկ, **լճութիւն** - վասալություն, **հանապ** - մեծ և լայն գավաթ **մայիստո // մայստո//մայիսդո** - մագիստրոս՝ պալատական կամ քաղաքական պատվանուն, **մարաջախտ//մարջախտ//մարաճախտ** - գորավար, մարշալ, **մարգիգ** - իշխանական տիտղոս, **մարիաճ**- ամուսնություն, պսակադրություն, թագաժառանգ, **մարկ** - եվրոպական արծաթ դրամ, **պայլ** - 1. մեծ իշխան, 2. Կիլիկյան շրջանում պարոնի կամ ասպետի փոխանորդ, **պայլութիւն** - 1.պայլ լինելը, պայլի պաշտոնը, 2. հոգացողություն, ինսամատարութիւն, **պարոն** -1. Կիլիկյան շրջանում ազնվական կալվածատիրոջ տիտղոս, իշխան, 2.մեծավոր, իշխանավոր, տեր, **պարոնայթ** - իշխաններ, **պարոնութիւն** - իշխանություն, տերություն, **պարոնացնել** - թագավորեցնել, թագավոր դարձնել, **պարոնտեր //պարոնտեր** - հարգական տիտղոս՝ պարոն կամ տեր նշանակությամբ, **ջալրնջել**-բողոքել, գանգատ անել, **ջալունջ այնել** -բողոքարկել, **ջանցլեր, ջանցլերութիւն** - կանցլեր, քարտուղար, քարտուղարություն, **ջանուն**-կանոնիկոս, **ջաստել**-ամրոց, դոյակ, **ջամբո**-գանձատուն, **սօլ**-ոսկուց կտրված մետաղադրամ, **տուպլ//դուբլ**-կրկնակի, **տըպլել//տուպլել** - կրկնակի հատուցել, **սազայ//սայզայ//սայժին** -բոնագրավում, արգելք, կալանք, **սազայ առնել**-բոնագրավել ունեցվածքը, **սազայ տալ, սայզել** -արգելք՝ կալանք դնել իրերի, ունեցվածքի վրա, **սենեսկալ// սենեսկալ**- պալատական մատովակ, **սինջալ** - բարձրաստիճան պաշտոնյա, որը վարում էր արդարադատության և զինվորական գործերը, **սիր** - տեր, արքա, իշխան, գանձարան, **տամ** - իշխանուհի, **տուկ** - ավատատեր, իշխան, դուքս, **տֆրնդել** -պաշտպանել, **ֆայլել** - դատը տանուլ տալ, **տրֆնդել//տֆրնտել** - 1. պաշտպանել. 2. արգելել, արգելք դնել, կաթոլիկական մայր տաճարի քահանա, **ֆրեր**- եղբայր՝ կաթոլիկ միսիոներների ընդհանուր անվանումը և այլն:

Քննելով Արևելյան Եվրոպայի հայկական ամենախոշոր գաղթավայրերից մեկի՝ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի «Հայկական դատարանի» 16-րդ դ. արձանագրությունների մի մասը՝ անմիջապես աչքի են զարնում բառապաշարային այն փոփոխությունները, որ կատարվել են հայերենի մեջ լեհական միջավայրում: Լեհահայերի կյանքի ու կենցաղի մասին հարուստ նյութ են տալիս հայկական դատական մատյանները, որոնցից պահպանվել ու մեզ են հասել 27-ը: Մեր ուսումնասիրած արձանագրությունները գրված են տեղի խոսակ-

ցական լեզվով, որը գրաբարի, միջին հայերենի և լեհահայերենի յուրօրինակ խառնուրդ է արաբերենի, պարսկերենի, թուրքերենի, ղփչաղերենի՝ բազմաթիվ փոխառություններով: Արձանագրություններում հանդիպում են նաև լատիներենից, ռուսերենից, գերմաներենից, ուկրաիներենից կատարված փոխառություններ: Լեհական փոխառություններում մեծ թիվ են կազմում օրենք, իրավունք արտահայտող բառերը, ինչպես նաև հագուստների, զարդերի անվանումները, չափ ու քանակ արտահայտող բառերը՝ պայմանավորված նրանով, որ քաղված են դատական արձանագրություններից և հիմնականում ունեն որոշակի ուղղվածություն: Դրանք են՝ **աբելովադ** – բողոքարկել, **աբելադ առնել** – բողոքարկել, **արեսդ** – կալանք, **արեսդ առնել** – կալանք դնել, **բամեդնիյ**– դատական տուրք՝ գործը լսելու համար, **բան** – հարգական կոչում՝ պարոն նշանակությամբ, **բաննա** – դեռահաս աղջիկ, **բասքա//բասիքա** – մեղվափեթակ, **բիւէ** – հարբեցողություն, **բլախօթ** – քաթանե մեծ թաշկինակ, **բրիսդաւքայ**– աղցանաման, **գրիվնա**, **հրոշ// հրոշ//հրուշ** – դրամական միավոր, գրոշ, **լօքոդ// լօքոդ** – երկարության չափ՝ արմունկից մինչև միջամատի ծայրը, **գրօնքա//գիօնքա//սիօնքա** – ճարմանդ, **խաղիկովադ առնել** – դատական գործ հարուցել, **լանցուխ** – շղթա, **կվալդ** – աղմուկ, աղաղակ, կռիվ, վեճ, **կվալդովադ առնել** – աղմուկ բարձրացնել, բռնություն գործադրել, **կօշքար** – սայլապան, **հրինայ** – դրամական միավոր, **միրոջնիք** – ջրադացյան, **շաֆար** – մառանապետ, տնտես, **պոտնեա** – ճամպրուկ, **քիրի** – սև մահուդ, **պեչքայ//բեչքայ** – տակառ, **ոաթուշ** – բանտ, **ոայդցա** – խորհրդրդական, **սաչովադ առնուլ //շաչովադ առնուլ//օսաչովադ առնուլ** – գնահատել, **սդերքայ** – նկուղ, **սդրդայ** – դեզ, **սնոր**– քուղ, երիզ, ժապավեն, **վոյվոտայ** – 1. քաղաքացիական՝ վարչական բարձր պաշտոնյա, 2. իշխան, 3. հարկահավաք, **տապչան** – որմնաթախտ, **քօրա//քօրիցա**– խոտի դեզ, **քօրչմա** – պանդուկ, օղետուն, բարդ, բարդոց, **մոնիդայ** – դրամ, **նագլատ**– ծախս, **տիլեցիա** – ժամանակի երկարաձգում, հետաձգում, **տովոտ**– ապացույց, փաստարկ, **բամեն** – կշռաքար, **քրեսքա//քրօսքա** – ատրճանակ, կարճափող հրացան, **քուօրնիք** – դատական կատարածու:

Կամենեցի դատական արձանագրությունը ուսումնասիրելիս հանդիպել են մի շարք բառեր, որոնք չկան «Միջին հայերենի բառարան»- ում՝ **բետրոյ**– դույլ, **բոլովլը** – բաց, **բրովոտայ**– առաջնորդ, ղեկավար, **գրաքովցոյ** – կրակովցի, **գօլենցքիյ** – հավաքածու, **կիլէյ** – սուսինձ, **հիվար** – հրացան, **հնիտըլ** – աշխետ, **մինստար**– պաշտոնյա, **նահաւիցա** – ասեղնագործել, **նոսադըլ** – անսանձ, **շքադուլա**– զարդատուփ, **սգալքա**– քարկոտրուկ, **սզլէփս// սքլէփս**– խանութ, կրպակ, **սվեդիյ**– վկա, **ուսդանեա**– դադար, **ուսդանեա առնուլ**– ընդհատել, կարճել, **քաֆդան** – կապա, կաֆտա, **քրավեց** – դերձակ: Միջին հայերենում ավելի փոքր թիվ են կազմում իտալական՝ **ալմանակ** – օրացույց, **գունբայ**–չարագործ, **գունդուստապլ** – սպարապետ, **դուդէշք** – գերմանացիներ, **դուկատ**–իտալական ոսկեդրամ, **դուճ** – դուքս և այլն, գերմանական՝ **դայլառ** – արծաթե դրամ, **լեհլի** – ծածկոց, **լօդ** – կշռի չափ, **ձէխմիսդը**– համբարության ավագ, ռումինական՝ **պրկատ** – քաղաքային վարչության խորհրդական, **բըր-**

քալապ - բերդապահ, ռուսական՝ **ռուբովիյ** - վացարան, **սրդա/սըրդա** - գինդ, օղ, **տրուշաք**՝ քամիչ, **օբեքուն** - խնամակալ, **օժիրելեէ** - մանյակ, **օպշլեաք** - ծալքավոր թեզանիք, ուկրաինական՝ **զքադերդ** - սփռոց, սուփրա փոխառությունները: Սրանք հիմնականում միջնորդավորված ճանապարհով են անցել հայերենին: Այսպես, գերմաներեն փոխառությունները հայերենին են անցել լեհերենի ու ֆրանսերենի միջոցով: Նույնը վերաբերում է նաև ռումիներենին: Հայոց լեզվի քննարկվող ժամանակաշրջանի բառապաշարում հանդիպում են իտալերեն բառեր, որոնք լեզու են ներթափանցել թուրքերենի միջոցով: Ինչ խոսք, չի բացառվում նաև այս լեզուներից փոխառությունների ուղղակի ճանապարհով անցումը: Այս լեզուներից փոխառված գոյականներից նոր բառամիավորներ չեն կերտվել:

Լատինական, ֆրանսիական, լեհական փոխառությունները միջինհայերենյան շրջանում դարձել են բազմաթիվ գոյականների, ածականների, բայերի կազմության բաղադրիչ: Այս փոխառությունների մի մասը, փոխաստու լեզվից վերցվելով՝ ինքնուրույն արժեքով և հնչյունական ձևավորմամբ, փոխառու լեզվում հետագայում կարող է ենթարկվել ածանցման և բառաբարդման: Փոխառյալ բառով և լեզվի սեփական միջոցներով կազմությունները հիմնականում հայ լեզվաբանության մեջ համարվում են սեփական բառակերտումներ: Այսպիսի բաղադրությունները **Գ. Ջահուկյանը** համարում է հիբրիդային կազմություններ: Նա իրավացիորեն նշում է, որ հիմնականում դրանց առաջին բաղադրիչն է օտարազգի ծագման, և այդ բաղադրություններն անվանում է կիսափոխառություններ- կիսապատճենումներ⁶: Մեր ընտրանքում այդպիսիք են **ան-**, **-ութին**, **-/ա/վոր** ածանցներով կազմված **անլիճ**, **անջալունջ**, **անսիզվոր**, **բրնձութին**, **գունդստապլութին**, **գունդութին**, **լճութին**, **կարտինալութին**, **մարզիզութին**, **պայլութին**, **պարոնութին**, **պատրոնութին**, **ջանցլերութին** բառերը: Ի դեպ, թվարկված ածանցները նույն իմաստն արտահայտող ֆրանսերեն բառերի ու ածանցների համապատասխան թարգմանություններն են: Դիցուք՝ **լիճ** բառը հայերենը փոխառել է ֆրանսերեն **lige** (վասալ) ձևից, սակայն **անլիճ** կառույցն արդեն կազմել է **non-lige** կառույցի նմանությամբ՝ **ան-** նախաձանցի և **լիճ** փոխառյալ բառի կցումով, իսկ **լճութին** բառը՝ համապատասխանաբար **ligence** ձևի նմանությամբ՝ **լիճ + ութին**: Հայերեն **տիկնայք** բառի համաբանությամբ **պարոն** բառն ունի **պարոնայք** հոգնակի ձևը: Ընդհանրապես, **պարոն** բառը լիովին յուրացրել է հայերենի բառակազմական առանձնահատկությունները և հիմք է դարձել մի շարք նոր բառամիավորների՝ **պարոնադուստր**, **պարոնամայր**, **պարոնապապ**, **պարոնացավ**, **պարոնորդի** և այլն: Ներմուծված բառերից **գալլիացի**, **գոլոնցի** և **դամբլցի** գոյականները հայերենում ստացել են **-ցի** վերջածանցը, լատիներենից փոխառված **դադմատերեն** (դադմատ-կաթոլիկ) բառը՝ **-երեն** ածանցը, **գունդուհի**, **մարզիզուհի**, **պարոնուհի** բառերը՝ **-ուհի**

⁶ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 225:

ածանցը, *պարոնիկ* բառը՝ *-իկ* ածանցը: Բառաբարդման, ածանցման, ինչպես նաև բառաթեքման ժամանակ հաճախ տեղի է ունենում հնչյունափոխություն: Շեշտազրկված ձայնավորը սղվում է կամ վերածվում *ը*-ի՝ բրինձ-*բրնձութիւն*, լիճ-*լճութիւն* (*ի>ը*), տուպլ-*տպլէլ*, ջալունջ-*ջալնջէլ* (*ու>ը*): Սակայն երբեմն հնչյունական այս կանոնը չի գործում, և շեշտազրկված ձայնավորը մնում է անփոփոխ՝ դուկ-*դուկի*, գունդ-*գունդութիւն*:

Միջին հայերենում փոխառված եվրոպական փոխառություններից փոփոխության են ենթարկվել նաև բայերը: Լ. Հովհաննիսյանը բայական փոխառությունների մասին խոսելիս օտար ձևույթ+մայրենի լեզվի ձևույթ կադապարով կառույցները փոխառություններ չի համարում, և այդպիսի բառերը բառացանկում նշում է «փոխառյալ արմատը մատնացույց անելու միտումով»⁷: Սակայն լեզվաբանը կարևորում է այդպիսի կազմությունների ուսումնասիրությունը, քանի որ ոչ միայն օտար ձևերի ուսումնասիրությամբ, այլև օտար միավորն ընդգրկող մայրենի ձևերի քննությամբ է ավելի լիարժեք բացահայտվում օտար ազդեցությունների դերը փոխառու լեզվում: Փոխառյալ բայարմատով կազմությունները Լ. Հովհաննիսյանն անվանում է օտար հիմքով (արմատով) բայեր՝ նշելով, որ «խիստ առարկելի է առհասարակ փոխառյալ բայ տերմինը»⁸, օրինակ՝ *բլայթ, դալապր, կալօփ, պարոն, տուպլ, քիթ, ֆայլ* և մի քանի բառերի և հայերեն պատճառական ու բայակերտ մասնիկների կցումով են կազմվել *բլայթէլ, դալապրէլ, կալօփէլ, կալօփցնէլ, պարոնացնէլ, տպլէլ, քիթէլ, ֆայլէլ* և այլ բառերը, իսկ *անել, առնուլ, կենալ* բայերի հարադրությամբ կազմվել են մի շարք վերլուծական բարդություններ՝ *մայնդնէլ* - պաշտպանել, *ջալունջ այնէլ* - գանգատ անել, բողոքարկել, *սայգի կենալ* - կալանել, բռնագրավել, *սայգայ տալ* - արգելք դնել, *օմաճ այնէլ* - մեծարել և այլն: Լեհերենից փոխառյալ բայերը հայերենում հիմնականում հարադիր կազմությամբ են ձևավորվում, ինչպես՝ *բողիաթ առնել* - դատարան կանչել, *խոդիկովադ առնել* - դատական գործ հարուցել, *կվալդովատ առնել* - աղմուկ բարձրացնել, *սաչովադ առնուլ* - գնահատել: Սրանցում հարադրի դերում հանդես եկող փոխառյալ բառերը օժտված են բառակազմական մեծ արժեքով և կենսունակությամբ: Սրանք խոնարհվում էին՝ ենթարկվելով հարադրավոր բայերի խոնարհման օրինաչափություններին և հայերենում լայն կիրառություն ունեին:

Այսպիսով, մեր ուսումնասիրած միջինհայերենյան աղբյուրներում քանակապես մեծ թիվ են կազմում իրավական, քաղաքական, հասարակական հարաբերություններ արտահայտող եվրոպական փոխառությունները, որոնք հայերենին են անցել 2 ճանապարհով՝ գրավոր և բանավոր: Գրավոր ճանապարհով մուտք գործած միավորներն ունեն փոխատու լեզվին հավատարիմ մնալու միտում: Բանավոր խոսքում այս փոխառությունների գործածությունը շատ հաճախ մնում է չյուրացված: Հնչյունական, ձևաբանական և իմաստային

⁷ Լ. Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990, էջ 9:

⁸ Նժվ. աշխ., էջ 120:

յուրացմամբ փոխառությունները ձեռք են բերում նոր բառամիավորներ կերտելու ունակություն: Միջին հայերենում եվրոպական փոխառությունների և դրանց հայերեն համարժեքների միջև պայքարում հաղթում են վերջինները: Որոշ թվով բառափոխառություններ որոշակի փոփոխություններով պահպանվել են մինչև այժմ և գործածվում են աշխարհաբարում:

Susanna Grigoryan, Naira Paronyan -European Loan Words According to Different Middle Armenian Sources. - In the course of time Middle Armenian word system has always developed and got richer, reflecting the differences which take place in the life of the nation. This period is very rich in borrowings. These loan words are borrowed from the languages the speakers of which have had cultural, political and commercial connections with Armenians.

The aim of the given article is to analyse the European loan words in Middle Armenian, to clear out the frequency and spheres of their usage, as well as their word formational, morphological and semantic peculiarities. In the period under discussion the number of loan words imported from European languages has reached to 400. The major part of them is borrowed from French, very few in number are the ones borrowed from Russian, German and Romanian.

Сусанна Григорян, Наира Паронян - О европейских заимствованиях из разных среднеармянских источников. - Лексический состав среднеармянского языка постоянно пополнялся и обогащался по ходу развития, отражая изменения, происходящие в жизни народа. Этот период достаточно богат заимствованиями, которые прижились в языке благодаря культурным, политическим и торговым связям армянского народа с другими народами.

Целью этой статьи является исследование европейских заимствований, выяснение сферы их употребления и частотности, а также выявление их словообразовательных, морфологических, семантических особенностей. В рассматриваемом периоде число европейских заимствований достигает примерно 400 слов. Большая их часть заимствована из греческого языка, незначительное число составляют слова, пришедшие из русского, немецкого, румынского языков.

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ
ԾԻՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ
ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ**

Եկեղեցու յոթ խորհուրդներով՝ **մկրտություն, դրոշմ, հաղորդություն, ապաշխարություն, վերջին օծում, քահանայության կարգ, պսակի կարգ** հայոց եկեղեցին իրականացնում է ամբողջ այն շարքը, որ ներառում է մարդու քրիստոնեական ընթացքը՝ ծնունդից մինչև մահ: Առաջին իսկ խորհրդով՝ մկրտությամբ, Գրիգոր Տաթևացին հայ մարդուն վեր է կարգում այլադավաններից, հրեաներից և հրեշտակաց դասից. ըստ նրա՝ ճիշտ դավանությամբ գերազանցում ենք այլադավաններին. ջրի մկրտությամբ՝ հրեաներին, որոնք այդ կարգը այլևս չեն կատարում և մկրտությամբ վերածնվելով Սուրբ հոգով՝ գերազանցում ենք հրեշտակաց դասին՝ իր բառերով՝ դառնալով «որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի»¹: Ծիսակարգը, այսպիսով, մերկապարանոց, միայն խորհուրդների սուսական շարք չէ հայ եկեղեցու համար՝ այլ նորավետարանյան ամբողջ գաղափարախոսության հստակ իրագործում: Այս առումով ծիսական և կրոնական հասկացությունների քննությունը աղերսվում է ժողովրդի, եկեղեցու և լեզվի պատմությանը:

«Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն» աշխատության մեջ արդեն իսկ նշել ենք, որ զգալի թիվ են կազմում նաև կրոնական և ծիսական ոլորտին վերաբերող նորակազմությունները. նշվել են **բազմաքրիստոս, ողջոյնընկալ, ողջոյնառաք, դէսակոչ, գերեզմանօրհնէք, սերմնօրհնէք, մայրօրհնէք, տօնահմայք քահանայթաղէք, քահանայօրհնէք** բառերը, որոնք բոլորն էլ բառաբարդման եղանակով կազմված նորակազմություններ են:

Ըստ հայերենի ավանդական բառակազմական եղանակների կրոնական և ծիսակարգային հասկացությունների մեջ գերակշիռ մաս են կազմում բարդ բառերը, ապա թվաքանակի բազմությամբ հաջորդում են ածանցավոր բառերը, ավելի քիչ են արմատական բառերը (սրանց մեջ են նաև փոխառյալ բառերը): Ածանցավոր բառերի մեջ հաճախ ենք հանդիպում «ան-» նախածանց + գոյական, «ան-» նախածանց + բայ և «-ուրիւն» վերջածանցով բառակազմական կաղապարներին:

Ածանցավոր բառեր. Անմեղր, անմկրտեալ, անմորուք, անփոխանորդ, անփորձել, աշտանակն ապաշխարելի, ապաշխարութիւն, բազպան բուրելի, երդմնեցուցիչքն, ընթերցողութիւն (քահանայության կարգեր) խորան, խոստովանութիւն, կաթողիկոս, կրօնաւոր, հալածու, համբարձում, հաղորդութիւն, հիսներեակ, ճգնաւորք, մկրտելի, մկրտօղ, մկրտեալ, մկրտութիւն, ուխտաւոր, վարջամակ, քահանայութիւն:

¹ Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, Կ.Պոլիս, 1729, էջ 587:

Բարդ բառեր. *Կցական բարդություններ.* Աղանակերպ, անուանակոչություն, արատսիրություն, արենազգն, ամենագոյգ, բաղարջակերք, դեակոչ, դոնապանություն (քահանայության կարգ), խաչօրհնել, ծոատոն, կիսասարկաւագ (քահանայության կարգ), հաղորդադրամ, հրեշտակապետ, նախարարչություն, նշանաքար, շաբաթապահք, որթապաշտ, ջահավառք (քահանայության կարգ), վարդավառ, վերնատունն, տաղաւարահարք, քահանայություն:

Հարադրավոր բարդություններ. «Ագապս մատաղաց», «անբանից պատարագ», «անմեղր գոհ», «աւագ սարկաւագ (քահանայության կարգ), «բանաւոր պատարագ», «եկեղեցւոյ տօն», զգեստք քահանայութեան», «խաչաձև ապարօշն», «խորհուրդք եկեղեցւոյ», «հոգւոյ զալուստ», «հրեղէն լեզուք», «մարմնաւոր պատարագ», «Մեծ շաբաթ» (Ավագ շաբաթ), «Նոր զատիկ», «ջուր սրսկման», «ջուր սրբութեան», «սագաշէն եկեղեցի», «սուրբ աւագան», «սուրբն սրբոց», «սրբություն սրբոցն», «տաղաւարահարաց տօն», «տէրունական տօն», «տօն խաչի», «տօն զատիկի», «տրւչություն օրինացն», «փոխմանն տօն», «քարեղէն տախտակ»:

Իմաստային դաշտում հարադրավոր բարդությունները բավականին հետաքրքիր են և գրեթե մոտենում են նկարագրական բացատրություններին. օրինակ, *«անբանից պատարագ», «անմեղր գոհ» «անխմոր գոհ»* հարադրավոր բարդությունների դեպքում նախորդում են ծավալուն նկարագրական բացատրություններ, ապա՝ ընդհանրացման շնորհիվ դրանք կոնկրետանում են հարադրավոր բարդություններով: Եվ այստեղ նկատելի է մի օրինաչափություն. եթե արմատական բառերում փոխառյալ բառերի առկայություն կա, ապա այստեղ բացառապես գործ ունենք հայերենի երևութների հետ. բերենք մի օրինակ. ի՞նչ է նշանակում «անմեղր գոհ». խոսքը պատարագի սեղանին մեղր չբարձրացնելն է, բառացի նշանակում է՝ «պատարագ՝ առանց մեղրի». «Վասն անխմոր և անմեղր գոհիցն Հարցումն: Վասն է՞ր մեղր ո՞չ ելաներ ի սեղանն: Պատասխանի: Նա ի՞նչ գի մեղրն զհեշտութիւն մարմնոյն ցուցանէ: Երկրորդ՝ զի աղ ո՞չ տանի: Երրորդ՝ մեղրն ո՞չ է վաստակ. ի մեր աշխատանա ց է նուիրելի աստուծոյ: Չորրորդ՝ ի բազում անսուրբ իրաց առնու մեղուն. ի սուրբ իրացէ նւերքն աստուծոյ: Հինգերորդ՝ ի մեռեալ կենդանւոյ է մեղուն. որպէս ասէն ի մեղուշ արջառաց: Վեցերորդ՝ զհեշտ ցանկութիւն նշանակէ. որպէս ասէ առակն (մեղր կաթ է շրթանց կնոջ պոռնկի): Իսկ այն որ զմեղրովն պտուղն նուիրէին քահանայից, բայց ի սեղանն ոչ: Նախ ցուցանէ զխոհեմութիւն բարուց որ ընդունելի է աստուծոյ և մարդոյ. այլ պարզութիւնն է՝ պատարագ: Երկրորդ՝ օրինաւոր ամուսնութիւնն պատուական է վասն որդեծնութեան. այլ ո՞չ է նա՛ առաքինութիւն. որպէս կուսութիւն պահք՝ և աղօթք: Իսկ զի խմոր ո՞չ խառնէին: Նա ի՞նչ գի խմորն զհին չարութիւնն ցուցանէ. որ նախ հրաժարիլ պարտէ, և ապա՝ զբարիս գործել: Երկրորդ, զհպարտացեալ փառքն նշանակէ. գոր ո՞չ է պարտ խառնել ի բարիս: Երրորդ, շարաւահոտ և քացախտ ւտ է. այս մեղաց հոտ է և համ»²:

Բառակազմական առումով ունենք խնդրահարույց նորակազմություններ, որոնցից մեկը «**յիջաջել**» բառն է, որի պարագային ունենք նկարագրական բացատրություն. «Վասն է՞ր այրեցան Նաբաթ և Աբիուր՝ որդիքն Ահարօնի: Պատասխանի: Կամ զի օտար հուր եղին ի բուրվառն որ չէր օրէն: Կամ զի

² **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք հարցմանց*, էջ 355-356:

արբեցան գինով: Կամ թե հպարտացան **լիջաջել** հրոյն ի վերայ սեղանոյն: Կամ զի անժամ խնկարկեցին: Կամ թե յաւուրն կրկին էր խնկարկումն. յառաւօտն և յերեկոյն. և յառաւօտն խնկեալ էր Ահարօն: Այլ որ ուղիղն է, Մովսէս յամենայն ժամ մտանէր ի սուրբն սրբոց. և Ահարօն մի անգամ ի տարւոջն. և քահանայքն ո՛չ մտանէին: Եւ քահանայքն հպարտացան և օտար հրով խնկարկեցին ի ներքս վարագուրին, վասն այն պատժեցան ի խրատ այլոց»³:

Բառակազմութեան բացատրութեան բոլոր փորձերը հանգում են հետևյալ տարբերակին. Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարան»-ում⁴, **«հի»** արմատը (հիացմունք, սքանչանք, գմայլանք բացատրությամբ) համարվում է բնիկ հնդեվրոպական՝ *pe (i) հիմքից, որ հ. հնդկերենում ունի նաև՝ «ուժեղ» իմաստը: Հնարավոր *pe (i) - «յի» անցումը համադրելով նույն բառարանի «ջաջուռ» («գեր, թմբիկե») բառի բացատրությանը (ըստ հեղինակի՝ «փոխառություն, բայց բուն աղբյուրը չի հավաստված»⁵ (կա նաև «Գրգուռ» տեղանունը, որի համաբանությամբ «-ուռ»-ը կարող է դիտարկվել որպես վերջածանց), ապա ենթադրաբար կարելի է ասել, որ «լիջաջելե կարող է նշանակել **«ուժեղացնել, զորացնել»**, այս դեպքում՝ **«կրակը նորոգել»** իմաստով:

Ունենք նաև բարդ հոդակապավոր **«ուրբաթագեն»** բառը: Բառակազմական առումով ունենք գոյական + հոդակապ + բայ կառույցը, սակայն սակայն պարզ չէ՝ խոսքը վերաբերում է զոհաբերության ծիսակարգի՞ն, թե պատարագին, այսինքն **«ուրբաթ օրը զոհաբերո՞ղ», թե՛ «ուրբաթ օրը պատարագող»**, այսինքն պահքի և աղոթքի ավանդական ծիսակարգից մի շեղումի մասին է խոսքը, որ կատարվում էր չարտոնված ուրբաթ օրը. («Եւ զի՞նչ այս: Այսինքն է, զագգս քրիստոնէից տեսանեմք զի ո՛չ ըստ անուանն և զմիութիւն կանոնական սահմանի ունել: ...Իսկ յոյնք, Առաջին՝ նախասրբեալ պատարագն: ...Հինգերորդ՝ զչեզոտքս արեղայ առնել: Վեցերորդ՝ զձև զգեստուն այլաբար ունել: Եօթներորդ՝ ի պահս և յաղօթս և յայլ աւանդութիւնս բազում ունել որոշումն: Ասորիք, Առաջինն՝ **ուրբաթագենն**: Երկրորդ՝ ոմանց խոստովանութիւնն ո՛չ առնել...»⁶:

Եկեղեցու բոլոր կարևորագույն խորհրուրդների դեպքում Տաթևացին տալիս է հանգամանակից և մանրամասն բացատրություններ: «Մկրտության» խորհրդի դեպքում հետաքրքիր տեղեկություն կա նաև «կու» մասնիկի վերաբերյալ: Փաստարկներ բերելով, թե ինչու ի տառբերություն լատին եկեղեցու, կինը չի կարող մկրտել, ինչու կրկնակի չեն կարող մկրտվել, քննարկելուն է մկրտության պահին հնչող նախադասությունը՝ նախապատվությունը տալով գրաբարյան «մկրտեմե ձևին, իր օրերում, տարածում ստացած

³ Նույնը, էջ 364:

⁴ Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 460:

⁵ Նույնը, էջ 650:

⁶ Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, էջ 552:

միջինհայերենյան «կու մկրտեմ» ձևի փոխարեն, որովհետև նրա կարծիքով՝ «Այս անուն ծառայ աստուծոյ գնեալ արեամբն քրիստոսի. եկեալ կամալ յերախայութենէ ի մկրտութիւն: Մկրտի այժմ 'ի ձեռս իմ յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ: Ջոր և ազգն Ֆռանկաց այլայլելով ասեն, ես կու մկրտեմ զքեզ յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ: Ջոր և անյարմար շարաքանութեամբ զկո՛ւն ցուցանեն մկրտել և ո՛չ զնուիրեալն: Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՛ ես կու մկրտեմ. երևի թէ նուիրեալն ո՛չ իւր կաման է եկեալ 'ի մկրտութիւն, այլ բռնութեամբ և 'ի հարկէ՛ կու մկրտեմ: Որ և ըստ այսմ կերպիս ո՛չ լինի տուեալ շնորհք հոգոյն 'ի մկրտողէն առ մկրտեալն. զի պարզևք հոգւոյն ո՛չ արհամարհողաց և չկամողացն լինի տուեալ. այլ հաւատով խնդրողացն. ըստ որում թէ (ամենայն որ խնդրէ առնու) և այլն: Ապա ուրեմն ո՛չ վայելէ ասել թէ ե՛ս կու մկրտեմ⁷, այսպիսով նկատելով երկու հանգամանք. «կու» մասնիկի արդեն իսկ հարկադրական բնույթ ձեռք բերելը, ապա նախադասութեան կառուցվածքի առումով «կու»-ն ուղիղ խնդիր դիտարկելը:

Ի դեմս Սուրբ Գրիգոր Տաթևացու՝ մենք ունենք հայոց եկեղեցու սյուներից մեկին, որ ամենայն ջանք գործադրել է պահպանելու, ուսուցանելու, մեկնելու հայոց եկեղեցու առաքելադիր սկզբունքները, որոնք, ինչպես ինքն է նշում՝ պարտավոր ենք պահել մինչև մեր վերջին շունչը. «...զնոցա կանոնքն ունիմք և զդաւանութիւն, և պահեմք մինչև յելս շնչոյ մերոյ»⁸:

Susanna Grigoryan - Word-Building Patterns of Religious and Ritual Concepts of "The Book of Questions" of Grigor Tatevatsi. - In the main, there are two word-building patterns way - suffixation and word compounding. In word-formative terms is interesting word "higagel", which probably means " make the fire strong." The word is not evidenced in no anciant Armenian dictionary.

Сусанна Григорян - Словообразовательные формы религиозных и обрядовых понятий "Книги вопросов" Григора Татеваци. - Словообразовательных форм в основном две. Это – суффиксация и усложнение слова. В словообразовательном плане интересно слово "higagel", что вероятно означает "усиливать огонь". Слово не упоминается ни в одном старо-армянском словаре.

⁷ Նույնը, էջ 588:

⁸ Նույնը, էջ 547:

**ՀԱՅՈՑ ԼԵՌՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐ**

Հայկական հնագույն տեղանունների զգալի մասը, այդ թվում և լեռնանունները, այսօր՝ 21-րդ դ., ստուգաբանական նոր մեթոդների և աղբյուրների շնորհիվ իրենց հնդեվրոպական, հայերեն բացատրություններն են գտնում: Հայկական լեռնանունների քննությունը տարբեր մակարդակներում հետաքրքիր շերտեր է բացահայտում և՛ հայոց պատմության, և՛ պատմական աշխարհագրության, և՛ ժողովրդի հոգեբանության, լեզվամտածողության փոփոխությունների վերաբերյալ: Ուստի տարբեր հետազոտություններում սփռված հայոց հայտնի լեռնանունների ստուգաբանությունների մեկտեղումը և զուգադրահամեմատական բնութագրումն արդի տեղանվանագիտության կարևոր խնդիրներից է: Այս զեկուցման մեջ զուգադրահամեմատական քննության են ենթարկվում հայ ժողովրդի համար ազգորոշ գործառույթ ունեցող, փաստացի յուրօրինակ ժողովրդանուն հանդիսացող որոշ լեռնանուն-տեղանունների ստուգաբանական վարկածները, որոնք վիճահարույց լինելով հանդերձ, տարբեր կողմերից բացահայտում են լեռների անվանակոչման հայկական ավանդույթները, մեր լեզվամտածողության մեջ «լեռ» հասկացության ըմբռնումները:

Հայկական լեռնանունների անվանման բանաձևը գալիս է վաղնջական ժամանակներից, քանզի լեռն այն աշխարհագրական միավորն է, որին մարդը մեր բնիկ տեղանքի պարագայում հանդիպում և անվանում է ի սկզբանե: Ընդ որում, լեռը, այսինքն՝ նրա անվանումը, ծառայել և ծառայում է որպես կողմնորոշիչ մնացյալ ֆիզիկաաշխարհագրական միավորների անվանման համար. բնակավայրերը՝ քաղաքներ, բերդեր, շեներ ու ավաններ, ջրանունները՝ լճեր, գետեր, վտակներ ու աղբյուրներ, անգամ ձորերն ու հանդերը, հաճախ կոչվում են այն նույն անունով, ինչ մոտակա լեռը: Այսինքն՝ լեռան անունը հեշտությամբ փոխանցվում է տեղանքի մերձակա միավորներին: Թեև նույնանունության այս պարագայում չի կարելի բացառել նաև հակառակ անցումը, երբ երկրանունը, բնականունը, ջրանունը հիմք են դառնում լեռների անվանադրման համար: Այսպես՝ **Սասուն / Սանասուն** տեղանունը և՛ գավառանուն է, և՛ լեռնանուն, և՛ բնականուն, և՛ ջրանուն, այսինքն՝ հնարավոր գրեթե բոլոր միավորների ընդհանրական տեղանուն է: Նրա ծագումը վաղնջական է, եթե բացառենք մի շարք ժողովրդական ավանդությունները, ապա այն զուգակցվում է Ասորեստանի թագավոր Թիզլաթպալասար III-ի արձանագրության մեջ Ուրարտում հիշատակված **Սասուն**՝ ^{URU}Sassu բերդի անվան հետ¹ և՛ հնչյունական, և՛ աշխարհագրական դիրքի առումով, ուստի հնարա-

¹ Տե՛ս *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը*, հ.4, Ե., 1998, էջ 506, նաև՝ **Н.В. Арутюнян**, *Топонимика Урарту*, Ер., 1985, էջ 165-166 :

վոր է՝ բնականուն>լեռնանուն հետագա շրթայի գոյացումը: Տեղանվանական անցումների նման օրինակները սովորաբար են և հանդիպում են թե՛ Պատմական, թե՛ ներկա Հայաստանի բազմաթիվ տարածքներում՝ *Կարմիր-լեռ*, *գետ*, *ձոր*, *ջրվեժ*, *աղբյուր*, *հանդ* (Վայոց ձոր), *Կապույտ-լեռ*, *լեռնանցք*, *գետ*, *աղբյուր* (Գեղարքունիք), *Նապաստակ-լեռ*, *բլուր*, *ձոր*, *աղբյուր* (Գեղարքունիք), *Ատրճանակի կոթ* - *սար*, *դաշտ*, *ձոր* (Արագածոտն) և այլն: Անգամ բանահյուսական աղբյուրներում այս իրողությունն իր արտացոլումն է գտել մեր էպոսում վկայված են *Մանազկերտ* սարը և բնականունը, որտեղ, ըստ որոշ պատումների, ապրում էր քեռի Թորոս-Թևաթորոսը, ըստ այլ պատումների՝ նրա նստավայրը *Կապուտկողն* է (*Ընձաքիսասարը*), որը գտնվում է Վանա լճի հարավում՝ Ռշտունիք գավառում: *Կապուտկողն* և լեռնանուն է, և՛ շրջանի անուն, և՛ բերդի անուն:

Լեռնանուններն առավել հաճախ են հիշատակվում արձանագրություններում, տարբեր փաստաթղթերում, քարտեզներում, ուստի դրանց աղբյուրագիտական վերլուծությունները պատմական, ազգագրական, լեզվական կորսված փաստեր են ի հայտ բերում: Այս առումով լեռնանուններն անհետացած բազմաթիվ լեզուների և դրանց կրող ցեղերի, նրանց կրոնական պատկերացումների, աշխարհընկալման վերաբերյալ բազմաբնույթ արժեքավոր տեղեկություններ պարունակող վավերագրեր են: Դրանց ուսումնասիրության և ստուգաբանության միջոցով հնարավոր է բացահայտել յուրաքանչյուր տարածքի բնիկ ժողովուրդների և հետագա նվաճողների կամ խաղաղ վերաբնակիչների լեզուների բնույթը, տեղանքի միավորների նախնական տեսքն ու որակական հատկանիշները, անվանող ժողովրդի արժեքների, հավատալիքների համակարգը, հոգեկերտվածքը: Հատկապես կարևոր են խեթական, ասուրական և սեմական սեպագիր արձանագրություններում վկայված լեռնանունների ստուգաբանությունները, որովհետև մեծ հնության պատճառով դրանք ենթարկվել են նյունական զգալի փոփոխությունների՝ հեռանալով սկզբնական տարբերակներից, երբեմն անգամ թարգմանվել է, ավելի ստույգ բառապատճենվել: Նման տեղանունները, որպես կանոն, ստուգաբանության մի քանի տարբերակներ ունեն և՛ հնդեվրոպական, և՛ ոչ հնդեվրոպական:

Հովհ. Կարգոյանը Իշպուհնիի և Արգիշտիի համատեղ գահակալության ժամանակ՝ Ք. ա. 810-805 թթ. սեպագիր աղբյուրներում հիշատակված **Մակուրու-թարա** լեռնանունը նույնացնում է Մասիսի հետ՝ մեր կարծիքով հետևյալ տրամաբանական մեկնաբանությամբ. սեպագիր արձանագրություններում նման կազմությամբ երեք լեռնանուն է վկայված՝ *Միրեմու-թարա* (Սուրամի լեռը Բորժոմի մերձակայքում), *Շալանու-թարա* (Սուրամի լեռը Բորժոմի մերձակայքում) և նրանց միջև *Մակուրու-թարան* (Մասիս կամ Արարատ լեռը): Հայկական լեռնաշխարհում գրեթե նույն ուղղությամբ՝ հյուսիսից հարավ տեղակայված այս 3 անվանումների երկրորդ բաղադրիչն ամենայն հավանականությամբ նշանակել է «լեռ», Կարգոյան այն համարում է հնդեվրոպական արմատ. «Բացի դրանից, *Մակուրա-թարա* լեռնանունն առաջին բաղադրիչը պարզապես հնացած հնդեվրոպական արմատ է եւ

նշանակում է «մեծ» (հմմտ. յուն. *մակրոս* «մեծ»): Հետևաբար *Մակուրա-թարա* նշանակում է «Մեծ լեռ»: Նշենք նաև, որ Հայկական լեռնաշխարհում եւ ամբողջ Առաջադարձի Ասիայում Մասիսից բարձր գագաթ չկայ, եւ սեպագիր *Մակուրա-թարա* («Մեծ լեռ») անուանումը, փաստօրէն, նրա իսկական անուանումը չէ, ճիշտ այնպէս, ինչպէս Մասիսը հայ պատմաշախարհագրական երկերում կոչւում է նաև ճիշտ միեւնոյն ձեւով՝ *Հեառն Մեծ*¹:

Այժմ անդրադառնանք *Նաիրի* ժողովրդանվանը, որը սերտ կապ ունի լեռների հետ: Հայաստանը, թէև իր *Նաիրի* անվամբ ասուրերենի միջոցով երբեմն ստուգաբանվում է որպէս գետերի երկիր, ոճու գետ բառից, սակայն Վ. Խաչատրյանն այս ստուգաբանությունը կասկածի է ենթարկում՝ ելնելով այն հանգամանքից, որ Ասորեստանը և շատ այլ երկրներ հարուստ են եղել գետերով, ուստի «գետ» հասկացությունը նրանց համար կարևոր բնութագրիչ հիմք չէր կարող հանդիսանալ օտար տարածքը անվանակոչելու համար: Մեր տարածաշրջանը հանրայնորեն ճանաչված է որպէս լեռների երկիր, ըստ այդմ Վ. Խաչատրյանը եզրակացնում է. «Նաիրին ասուրական դպիրների կողմից ստեղծված տեղանուն է: Ա.Դայմելի բառարանում շումերերենի NA₄ «քար, լեռ» IRI₁₁ «բնակավայր» բառերի դիմաց համապատասխանաբար դրված են ասուրերենի na-a և i-ri-i նույնիմաստ արմատները: Այսինքն՝ ասորեստանցիները դրանք փոխ առել են շումերերենից, որոնցով էլ կազմված է Նաիրի տեղանունը: Այն նշանակում է լեռնային «բնակավայր կամ լեռնաշխարհ»²:

Լեռնաշխարհի ընկալումը կապվում է *Նաիրի* անվան մեկ այլ ստուգաբանության հետ՝ «կրակների երկիր», մեր տարածքի բոլոր լեռները հրաբխային ծագում ունեն, դրանք հնագույն ժամանակներում ժայթքել են, կրակներ սփռել, և այս հանգամանքն էլ նրանց հանրայնորեն ճանաչելի է դարձրել: Ինչպէս նշեցինք, *Նաիրի* երկրանունը երևան է գալիս Ասորեստանի Թուկուլտի Նինուրտա I-ի թողած սեպագիր արձանագրություններում. եթե խեթերը հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքը կոչում էին *Հայասա* կամ *Ազգի*, ապա ասորեստանցիները՝ *Նաիրի*, ընդ որում *Նաիրի* անունը տարածվում էր ոչ միայն Հայասա երկրի վրա, այլև Խուբուշկիայի և Ուրարտուի:

Ն.Ադոնցը *Նաիրի* ժողովրդանվան ծագման վերաբերյալ այլ դիտարկում ունի, նա այն համարում է ոչ թե սեմական, այլ հայկական ծագման տեղանուն՝ *Նաիրի* անունը կապելով *Ուրուատրի/Ուրարտու* անվան հետ, որի հայկական ծագումը՝ *Արարատ* արմատից այսօր արդեն գիտականորեն հիմնավորված է համարվում: Իր մահվան նախօրեին գրված «Հայաստանի պատմություն» աշխատության մեջ գիտնականը պնդում է. «Պետք է նկատի ունենալ, և մենք դրան կանդրադառնանք հետագայում (ցավոք այդ հետագան չեղավ, Ն.Ադոնցը չհասցրեց ավարտին հասցնել իր կոթողային մտահոգումը՝ քառահատոր «Քննական պատմություն Հայոց»-ը-Ն.Դ.), որ *Նաիրի*, *Ուրուատրի* անուններն ազգակցական կապ ունեն *Խու-րի*, *Նամ-րի*, *Կիրրու-*

¹ Յ.Կարազեղեան, *Սեպագիր տեղանուններ*, Ե., 1998, էջ 251-252:

² Վ.Խաչատրյան, *Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում*, Ե., 2012, էջ 61:

ըի և -ըի ածանցն ունեցող ուրիշ շատ անունների հետ և պատկանում են մի լեզվի, որը ոչ մի առնչություն չունի սեմական լեզուների հետ»¹:

Պատմագիտության և լեզվաբանության զարգացումը, ուսումնասիրության նոր մեթոդների և սկզբնաղբյուրների երևան գալն աստիճանաբար հիմք են դառնում հայտնի տեղանունների նոր բացատրությունների համար, ծնվում են ստուգաբանական նոր վարկածներ: Նաիրի երկրանուն-ցեղանվան նշված մեկնաբանություններից յուրաքանչյուրն ունի իր ուժեղ և թույլ կողմերը: Մենք կարծում ենք, որ լեռ հասկացության հետ այս անվանման կապն առավել քան հիմնավոր է: Մենք ունենք լեռնանուն > ցեղանուն > երկրանուն փոխանցում:

Բայց լեռնանուններն կապը բավական սերտ է, ոչ միայն իրենց շուրջ բնակվող ցեղերի անունների հետ, այլ նաև հնագույն, հատկապես հեթանոսական շրջանի հավատալիքները հետ: Լեռնանունների զգալի մասը ստեղծվել է բնապաշտական ժամանակներում, որովհետև, լինելով մարդուն շրջապատող աշխարհի, բնության հզոր միավոր, նրանք ինքնին սրբացվում էին և դառնում պաշտամունքի առարկա: Այստեղից էլ հոգևոր ծառայությունն ընտրած մարդկանց ձգտումը՝ փակվելու լեռներում, այնտեղ աստվածամատույց տաճար-բնակատեղիներ հիմնելու, այս հանգամանք անվանակոչման լուրջ փաստարկ էր: Այսպես՝ *Միս* հնագույն լեռնանունը, որը նաև գավառանուն է, մի շարք բնակավայրերի անվանում, ծագումնաբանորեն կապվում է արամեերենի հետ և նշանակում է՝ «քահանա, կրոնավորների բնակատեղի»²:

Հայաստանի պատմական և ներկա տարածքի լեռնանունների մեծ մասի տեղանվանահիմքերը մենք պայմանականորեն համարում ենք բնիկ՝ ելնելով դրանց հայերեն ստուգաբանվելու, ընկալվելու հնարավորությունից: Հատկանվանագետ Տ.Ավետիսյանն իր «Հայկական ազգանուն» աշխատության մեջ գրում է. «Բնիկ են կոչվում նախնական, ամենահին և տվյալ լեզվով ստուգաբանվող և մեկնաբանվող հիմքերը: Ինչպես դժվար չէ նկատել, այս դեպքում ժամանակային սահմանափակում չի դրվում. այս ենթաշերտում տեղ կգտնեն ինչպես մեր ժողովրդի վաղնջական անցյալից եկող անունները, նույնպես և վերջին մեկ-երկու դարերի ընթացքում ձևավորված անձնանունները»³: Այս դրույթը լիովին կիրառելի է նաև տեղանունների քննության դեպքում:

Այժմ անդրադառնանք հայոց ազգային ճանաչման և ինքնընկալման համար սրբազան նշանակություն ունեցող աստվածաշնչյան *Արարատ* լեռնանվան ստուգաբանության տարբեր վարկածներին, որոնցից ամենահայտնին *Ուրարտու>Արարատ* անցումն է, որտեղ *Ար*-ը հայերի *արմեն* ժողովրդանվան հիմնամասնիկն է: Ինչպես *Նաիրի* պարագայում, ունենք լեռնանուն-ժողովրդանուն սերտ կապը: Լեռն իր անունը ստացել է շրջակայքում բնակություն հաստատած ժողովրդի անունից, որ էլ աստիճանաբար ընդհանրացել է որպես պետական կազմավորման անուն: Բայց սրբազան լեռնանունն

¹ Ն.Ադոնց, *Երկեր*, հ. I, Քննական պատմություն Հայոց, Հայաստանի պատմություն, Ե., 2009, էջ 91:

² Տե՛ս *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ.4, էջ 613:

³ Տ.Ավետիսյան, *Հայկական ազգանուն*, Ե., 1987, էջ 100:

ունի նաև այլ բացատրություններ, որոնցից մենք ուշագրավ ենք համարում Հովհ. Կարապետյանի առաջարկած դիցաբանական տարբերակ. նա *Արարատ* լեռնանունը բխեցնում է Արա Գեղեցիկ դիցանունից. *Aradāt > Արարատ, առաջին բաղադրիչը Արայի անունն է. «Կարելի է, ենթադրել, որ երկգագաթ *Արարատ* լեռը (մեկը *Ազատ Մասիս*, հավանաբար, հայրը, մյուսը *Փոքր Մասիս*, հավանաբար, մայրը) ծնում է Արա Գեղեցիկին (*Արարատ* փաստորեն նշանակում է *Արայատուր*), որի նստավայրը գտնվում է հենց կողքին՝ *Արագած* («Արայի գահ»), և վերջապես *Արայ լեռան*, որը, հավանաբար, հանդիսանում է Արա Գեղեցիկի գերեզմանը, քանի որ հին հայկական դիցաբանության և ժողովրդական ավանդությունների համաձայն՝ Արա Գեղեցիկի գերեզմանը գտնվել է հենց այս լեռան վրա»¹: Այս մեկնաբանությամբ աստվածների դերակատարումը ազգի ձևավորման ընթացքում համարվում է վճռորոշ, ուստի երկրանվան, ապա սրբազան լեռնանվան հիմքում անպայմանորեն որոնում են հերոս աստուծո անունը:

Անվանադրման տեսանկյունից հետաքրքիր է մեր բանահյուսության մեջ մեծ դեր ունեցող *Գրգուռ* լեռնանվան ստուգաբանությունը, որն առաջարկել է Ս. Պետրոսյանը՝ վերը նշված սկզբունքի համաձայն: Գրգուռ անվանումը կապվում է հայասական դիցաբանի ամպրոպի աստուծո հետ՝ Ս. GUR-ը առասպելական նախատիպեր ուներ ամպրոպի տարբեր աստվածությունների մեջ, որոնց զարգացումներից է *Արամազդը* և ժողովրդական հավատալիքների *Գոգո բարան*: Վաղնջահայերի ամպրոպի աստվածն ուներ բնաձայնական մականուն՝ *Գրգուռ*, որն ամպրոպի ձայնային դրսևորումներից է, այստեղից էլ ծագում է *Գրգուռ* լեռնանունը, ինչպես նաև ամսվա 30-րդ օրվա հայկական անվանումը՝ *Գրգուռ*²: Նշենք, որ ըստ ավանդության՝ *Գրգուռ* լեռան ստորոտում է Հայկ նահապետը երեքթևյան նետով սպանել Բելին:

Այս վարկածի համաձայն՝ լեռնանվան հիմք կարող են դառնալ ոչ միայն բուն դիցանունները, այլ նաև աստվածներին տրվող այնպիսի մականունները, որոնք իրենց ծագմամբ ոչ թե լիմաստ բառեր են, այլ բնաձայնություններ: Լեռնանունը բնաձայնության հետ է կապում նաև հին հայկական ավանդություններից մեկը՝ Նոյի տապանն այս տարածքով անցնելիս դիպչում է լեռանը և դղրդում, ավելի ստույգ՝ գոգոում:

Լեռան վեհացման իրողությունն, իհարկե, առանձնակի ընդգծված է քարոտ տարածքներում բնակվող ազգերի պարագայում, ուստի մեր լեռնանունների ստուգաբանության ընթացքում դիցաբանական մոտեցումները գերակայում են: Ջոր օրինակ՝ Ա. Մովսիսյանը, ելնելով «Աշխարհացույցի» պնդումներից, նշում է, որ «հին հայոց աշխարհընկալումներում Բարձր Հայքը համարվել է «Աշխարհի գագաթ», իսկ նրա Մեծ լեռը՝ «աստվածների տեղ».

«Աշխարհացույցը» «աշխարհի գագաթ» անունով է հիշում Բարձր Հայքի հարևանությամբ տարածվող Բյուրակնի լեռների (որտեղ, ըստ մինչև մեր

¹ Յ. Կարազեղեան, *Սեպագիր տեղանուններ*, էջ 16-17:

² Տե՛ս Ս Պետրոսյան, *Դասերը և եռադասության դրսևորումները հին ու միջնադարյան Հայաստանում*, Ե., 2001, էջ 117:

ժամանակները պահպանված հայկական ավանդազրույցների, գտնվել է երկրային դրախտը) ամենաբարձր գագաթը **Մերմանց (Մրմանց)** լեռը: Այն իր անվամբ և բնութագրով կարող է համապատասխանել տիեզերաստեղծման հնդիրանական ավանդազրույցների սերմնաժայթքող կենսածին լեռանը»¹:

Լեռնանվան հիմքը ենթակա է իմաստային-քերականական փոփոխությունների, ընդ որում՝ այն կարող է կոնկրետ բովանդակության հետ մեկտեղ արտահայտել հավելյալ իմաստներ՝ պայմանավորված իր կողմից անվանվող օբյեկտի հանդեպ խոսողի իրադրային վերաբերմունքով²: Օրինակ՝ Տավուշի մարզում գտնվող **Պայտաթափ** լեռան անվանումն ունի մի քանի մեկնաբանություն, որոնք բխում են *պայտ* բառի հիմնային և հարակից իմաստներից. 1) լեռն այնքան քարքարոտ է, դժվարանցանելի, որ ձիերն այն բարձրանալիս կորցնում - մաշում են իրենց պայտերը, և 2) դժվարամատույց լինելով՝ լեռն անհաջողությունների և ձախորդությունների պատճառ է դառնում իր տարածքով անցուդարձ անողների համար, մարդիկ պայտաթափ են լինում, կորցնում են իրենց հաջողության գրավականը՝ տվյալ դեպքում պայտը, որ ժողովրդական հավատալիքների համակարգում հաջողության խորհրդանիշ է: Նույնը վերաբերում է նաև **Պայտապար** անունը կրող լեռնաշղթային: Հնում հիմնական փոխադրամիջոցը ձին էր, ուստի *պայտ* հիմքը լեռնանունների կազմում եզակի չէ:

Արքայից լեռ անվանումը ևս ենթակա է ուղիղ, բառացի և փոխաբերական մեկնաբանությունների, թեև նշենք, որ շատ ավելի հաճախ անվանմանահիմքում ընկած է լինում տվյալ տեղանվանահիմքի փոխաբերական իմաստը: Այսպես՝ **Արքայից լեռ** անվանումը բացատրվում է *արքա* բառի ոչ թե ուղիղ, այլ՝ փոխաբերական իմաստով. Արագածոտնի մարզում գտնվող այս լեռան օդը, շրջակա բնաշխարհն այնքան գերող է, որ անվանադրի կամ անվանադիրների կողմից բնորոշվել է որպես արքայական, այսինքն՝ դրախտային, աստվածային: Նույնը վերաբերում է **Թագավորի պալատ** անունը կրող լեռնանվան բանաձևին, այստեղ թագավորական պալատ երբևէ չի եղել, բայց այն անառիկ է, անհաս, դրա համար էլ ժողովրդի պատկերացման մեջ զուգորդվում է թագավորի նստավայրի հետ: **Խաղաջուր** (Բյուրակն-Մընձուրյան լեռնաշղթա) լեռնանունը ևս պայմանական անվանումների շարքից է, որովհետև առաջին հայացքից այն դասական ջրանուն է, բայց «թեսեյի» հին հուական անվանադրման սկզբունքն աստիճանաբար տեղանուններից դուրս է մղում «ֆյուսեյի»՝ ըստ բնության գաղափարը, և տեղանվան բաղադրիչների իմաստի մթազնումը դառնում է լիակատար:

Յուրահատուկ են նաև բայական կառույցներով արտահայտված լեռնանունները, ինչպես **Գոհանալ** և **Հավատալք**, երկու դեպքում էլ առաջին դեմքի եզակի և հոգնակի բայաձևեր ունենք, որոնք դարձել են ինքնուրույն անվանումներ՝ կորցնելով իրենց քերականական իմաստները: Լեռների վե-

¹ **Ա.Սովսիսյան**, *Արքայից լեռնաշխարհը*, Ե., 2006, էջ 14:

² Տե՛ս **Н.Д. Арутюнова**, *Аспекты семантических исследований*, М., 1980, էջ 157-161:

հուրյան հանդեպ անվանադիրների ուղղակի հիացական, զգայական վերաբերմունքը հիմք է հանդիսացել նման անունների ստեղծման համար:

Յավարտ մեջբերենք սլավոնական տեղանունների ստուգաբանական մեկնություններով հայտնի տեղանվանագետ Յուրի Կարպենկոյի դիտարկումը. «Գտնել իրականության մեջ այն հատկանիշը, որը խթան, ազդակ է դարձել անվան ծննդյան ժամանակ, չափազանց կարևոր է տեղանվանագիտության համար: Միայն այս դեպքում, միայն իմաստաբանական ոլորտից դեպի իրական աշխարհ անցման դեպքում է անէանում տեղանվան ծագման շուրջ տիրող մշուշը: Աշխարհագրական անվանումների ստուգաբանության այս շրջանում ենք հնարավորություն ստանում պատասխանել այն հարցին՝ թե ի՞նչ պատճառներ, պատճառահետևանքային կապեր ունեն տեղանունները»¹: Հայկական լեռնանունների՝ երբեմն անգամ իրար հակասող, վիճահարույց ստուգաբանություններն ակնհայտ են դարձնում այն իրողությունը, որ հնագույն շրջանի լեռների անվանումների հիմքում իրենց տարածքում ապրող բնիկ ժողովրդի, նրա հերոսների և աստվածների անուններն են կամ մականունները, որովհետև լեռնամիավորներն ավանդական իմաստով տեր և հիմնադիր չունեն, նրանք միաժամանակ պատկանում են Արարչին և տեղաբնակներին:

Narineh Dilbaryan - Some Polemical Aspects of the Etymology of the Armenian Oronyms. - Today, in the 21st century, most of the ancient Armenian place names, including oikonyms, using new methods and sources of etymological research, find their interpretation in the Armenian language. Armenian oronyms etymological analysis reveals interesting and unknown layers of the Armenian history, national mentality, religious worldview, historical geography, language communication. With the help of linguistic analysis and interpretation of ancient oronyms their roots can determine the aborigines of this territory, their linguistic community, and later conquerors and immigrants. Different, sometimes even controversial etymological interpretations of ancient Armenian oronyms argue that the basis of these names were Armenian ethnonyms - Ararat Nairi, names and nicknames of pagan gods and mythological heroes - Ara the Beautiful, Aramazd, Hayk, Bel.

Нарине Дилбарян – Некоторые полемические аспекты этимологии армянских оронимов. - Большая часть древних топонимов Армении, в том числе ойконимов, сегодня, в 21-м веке, благодаря новым методам и источникам этимологических исследований находит свое толкование на армянском языке. Этимологический анализ армянских оронимов позволяет выявить интересные и доселе неизвестные пласты армянской истории, национального менталитета, религиозного мировосприятия, исторической географии, языковых общений. С помощью лингвистического анализа древних оронимов и толкований их корней можно определить автохтонов данной территории, их языковую общность, а также завоевателей и поздних переселенцев. Разные, порой даже спорные этимологические толкования древних армянских оронимов доказывают, что в основе этих названий лежат армянские этнонимы – Арарат, Наири, имена и прозвища языческих богов и мифологических героев – Ара Прекрасного, Арамазда, Айка, Бела.

¹ **Ю.А.Карпенко**, Взаимосвязь географических терминов и топонимов.-*Вопросы географии*, вып. 81, М., 1970, էջ 39:

**ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՆԹԱԴԱՇՏԻ ԲԱՅԵՐԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԿԻՐԹ ԽՈՍՔԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ**

Հասարակության մեջ ընդունված **վարքականոնների համակարգը**, որը սահմանում, բացատրում, պարզաբանում է **մարդկանց խոսքային շփման ընթացավարությունը** որոշակի իրադրություններում, կոչվում է **խոսքային շրջման էթիկետ**: Այն իրացվում է **բարեկիրթ խոսքի կառույցների** միջոցով (ռուսերենում՝ **խոսքային բանաձևեր**), որոնց իմացությունը նպաստում է **շփման մշակույթի** զարգացմանը:

Խոսքային էթիկետը (այսուհետև՝ **ԽԷ**), ըստ Լեզվաբանական հանրագիտական բառարանի¹, շփման կայուն բանաձևերի համակարգ է՝ կարգադրագրված հասարակության կողմից՝ պաշտոնական կամ ոչ պաշտոնական իրադրություններում գրուցակիցների խոսքային շփումը սահմանելու կամ կարգավորելու, նրանց հանրային դերերին համապատասխան այդ շփումը ընտրված տոնայնությամբ պահպանելու համար: Լայն իմաստով **ԽԷ**-ը կապված է էթիկետի նշանագիտական և հանրային հասկացությանը՝ կարգավորիչ դեր կատարելով շփման այս կամ այն ոլորտի ընտրության գործում: Նեղ իմաստով **ԽԷ**-ը կազմում է *դիմելու և ուշադրություն գրավելու, ծանոթանալու, ողջունի, հրաժեշտի, ներողություն խնդրելու, երախտագիտություն հայտնելու, շնորհավորանքի, բարենաղթանքի, խնդրանքի, հրավերի, խորհրդի, առաջարկության, համաձայնության, հրաժարման, հավանության կամ խրախույսի, հաճոյախոսության, կարեկցանքի, ցավակցության* ևն բարյացակամ և քաղաքավարի շփման իրադրություններում գործածվող **լեզվական միավորների գործառնախմաստային դաշտ**: **Խոսքային իրադրությունը**, որտեղ իրացվում է **ԽԷ**-ը, սահմանափակված է **գործաբանական** հետևյալ **կոորդինատներով**՝ «**ես-դու-այստեղ-հիմա**», որոնք կազմակերպում են **ԽԷ**-ի լեզվական միավորների դաշտի միջուկը: Այս կոորդինատների ապահովումը պայմանավորում է նրանց **կատարողական** (պերֆորմատիվ)² գործառույթը (այսինքն՝ **միաժամանակյա արտաբերումն ու գործածությունը**):

ԽԷ-ը թեև գործառնախմաստային ընդհանրություն է, սակայն նրան բնորոշ է վառ ընդգծված ազգային առանձնահատկությունը՝ կախված տարբեր հանրույթներում ընդունված խոսքային վարքի եզակի անկրկնելիությունից, ավանդույթներից, ծեսերից, ոչ խոսքային հաղորդակցական միջոցներից ևն: **ԽԷ**-ի բանաձևերի համակարգը պարունակում է նաև դարձվածքներ, առածներ, ասացվածքներ: **ԽԷ** տերմինը առաջին անգամ ռուսագիտության մեջ մուծվել է Վ. Կոստոմարովի կողմից (1967), իսկ համակարգի գիտական ու-

¹ Տե՛ս *Лингвистический энциклопедический словарь* (այսուհետև՝ ЛЭС), М., 1990, էջ 413-414:

² Տե՛ս **Ռ. Դոկտյան**, *Արդի հայերենի ասացական բայերի կատարողական (պերֆորմատիվ) գործածությունը*, Ջահուկյանական ընթերցումներ (Երևան 2011թ., ապրիլի 27-29).-Ե.: 2011:

սումնասիրությունը սկզբնավորվել է XXդ. 60-ական թթ. Ն. Ֆորմանովսկայայի, Ա. Ակիշինայի, Վ. Գոլդինի աշխատանքներով: **ԽԷ**-ի հիմնախնդիրներն ուսումնասիրվում են հանրալեզվաբանության, էթնոլեզվաբանության, գործաբանության, ոճաբանության, խոսքի մշակույթի և այլ գիտակարգերի շրջանակներում¹:

Հայագիտության մեջ, որքանով որ մեզ հայտնի է, **ԽԷ**-ը **լեզվական առումով համակարգային ուսումնասիրության** առարկա չի դարձել². խոսքային բանաձևերի մասին հակիրճ տեղեկություն է հաղորդել Պ. Պոդոսյանը³: Հեղինակը սահմանել է խոսքային բանաձևերը իբրև զանազան գործառություններով հանդես եկող կադապարային արտահայտություններ. դրանք են՝ **ողջագուրման, հրաժեշտի և դիմումի, միջանկյալ արտահայտություններ**, որ գործածվում են հեքիաթներում, **անցանկալի բանից ապահովագրման, երդման, հանդիմանության, գոհության** արտահայտություններ, **մաղթանքներ և անեծքներ, գորովանքի** ու **հաճոյաբանական** արտահայտություններ, **խոսքի ընթացքն արձարծելու, նրան հետաքրքրություն տալու, պատումի մեջ լարվածություն ստեղծելու** արտահայտություններ՝ հատուկ ժողովրդական մտածողությանն ու պատմելու եղանակին:

Առօրյա խոսքի կառուցման առանձնահատկությունների հետ կապված՝ խոսքային որոշ բանաձևերի անդրադարձել է Ն. Սարգսյանը⁴:

Արդի հայերենում գործածվում են **ողջույնի, ծանոթության, դիմումի, ներողություն խնդրելու, երախտագիտություն և շնորհակալություն հայտնելու, խնդրանքի, ցավակցության, խորհրդի, առաջարկության և նախազգուշացման, հրավերի, շնորհավորանքի, բարեմաղթանքի, խրախույսի և հավանության, հաճոյախոսության, համաձայնության և անհամաձայնության, մերժման կամ հրաժարման, հանդիմանության, գրույցի, հարցման ու պատասխանի, հրաժեշտի** և այլ կառույցներ: Սրանք կադապարային արտահայտություններ են, որոնք կարող են լրացվել որոշակի լեզվական միավորներով, ձևավորել ծավալուն **համանշային շարքեր** և հանդես գալ բազմաթիվ տարբերակներով՝ **պայմանավորված խոսքային իրադրությամբ**:

Բարեկիրթ խոսքի կառույցներում (այսուհետ՝ **ԲԽԿ**) կարևոր դերակատարություն ունեն **խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի բայերը** (ասացական, մտածական, զգացական), որոնք արտակա կամ ներակա ձևով մասնակցում են այդ կառույցների ձևավորմանը՝ **իրենց վրա կրելով հաղորդակցման գործընթացի իմաստային ողջ ծանրությունը**, հետևաբար, կար-

¹ Տե՛ս ՄԾԸ, ն. տ.:

² Խոսքային էթիկետի վերաբերյալ որևէ աշխատանք չենք գտել, էթիկետի վերաբերյալ՝ երկուսը: Տե՛ս **Ա. Նազարյան, Գործարար հաղորդակցություն**, Ե., 2001, **Ա. Նազարյան, Հ. Գրիգորյան, Էթիկետի հիմունքներ**, Ե., 2002:

³ **Պ. Պոդոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները** (խոսքի տեսություն), գիրք երկրորդ, Ե., 1991, 200-201 էջ:

⁴ Տե՛ս **Ն. Սարգսյան, Առօրյա խոսքի կառուցման առանձնահատկություններ**, Լեզվի և ոճի հարցեր, X, Ե., 1987, էջ 231-246:

ծում ենք, որ **ԽԷ**-ի կառույցները նպատակահարմար է ուսումնասիրել **խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի** բայերի հետազոտության ծիրում, որտեղ վերջիններս հիմնականում գործածվում են **ապանյութականացած¹ ձևով**: Օր.՝ **խնդրեմ, համեցեք, հաճեցեք, ներեցեք, թույլ տվեք, շնորհ արեք, գիտեք, հասկանում եք, հավատացեք, երևակայեք** և այլ բայեր սովորաբար գործածվում են իրենց հարացուցային ձևերով, իսկ **ԲԽԿ**-երում՝ **ապանյութականացած, օր.՝ Ներեցեք** ինձ սխալ արարքիս համար (նյութական կամ հարացուցային)/**Ներեցեք**, չեք ասի՝ որն է հաջորդ կանգառը (ապանյութականացած), Եթե շատ **խնդրեմ**, դու կմոռանաս՝ ս իմ արարքը (հարացուցային)/**Խնդրեմ**, գրիչը փոխանցեք (ապանյութականացած): Այսպիսով, **ԽԷ**-ի կառույցները առաջանում են **հարացուցային միավորներից** և անընդհատ կրկնվելով՝ **ապանյութականանում**՝ վերածվելով **խոսքային կայուն կառույցների**, ապա նաև՝ **ԲԽԿ**-երի. հիմնականում **կայուն են** այդ կառույցների **կաղապարները՝ հիմնականախթը (մաղթում եմ, ցավակցում եմ** ևն), իսկ դրանց լրացումները կարող են ազատորեն փոխվել, ինչպես օր.՝ **մաղթում եմ** ամենայն անկեղծությամբ/ջերմորեն, **ցավակցում եմ** անկեղծորեն/սրտանց: Արդյունքում առաջանում են այսպիսի **կաղապարներ** կամ **մասնակաղապարներ՝ քայ-դերանուն-(մակբայ)-դերանուն-քայ(անորոշ դերբայ)**՝ **խնդրում եմ Ձեզ (խոնարհաբար) ինձ ներել, քայ-դերանուն-քայ՝ առաջարկում եմ Ձեզ հեռանալ, դերանուն-գոյական-քայ՝ իմ ներողամտությունն եմ հայցում, գոյական-քայ՝ ներողություն եմ խնդրում, քայ-(դերանուն)-ածական-գոյական՝ ընդունեք (իմ, մեր) խորին ցավակցություններս** ևն:

Վերը թվարկված **ԲԽԿ**-երում վերոնշյալ իմաստային ենթադաշտի բայերից շատերը **ներակայվում են**, օր.՝ **շնորհակալություն եմ հայտնում-շնորհակալություն, ներողություն եմ խնդրում-ներողություն, բարև/ողջույն/ եմ հաղորդում-բարև/ողջույն** ևն: Ըստ բարեկրթության պահանջների՝ մենք անընդհատ օգտագործում ենք այս կառույցները. նրանցում գործածվող **վերոնշյալ իմաստային ենթադաշտի** բայերը, պարբերաբար կրկնվելով, լեզվի տնտեսման սկզբունքի համաձայն, ներակայվում են՝ **վերածվելով տիպային էթիկետային նշանների** (հետևաբար՝ **համանունների**). ընդ որում՝ երկրորդ եզրը գործաբանորեն ավելի ընդգրկուն է, որովհետև **ԽԷ**-ը միջոց է՝ գրուցակցի ուշադրությունը գրավելու, նրան իր հարգանքը ցույց տալու, համակրանք առաջացնելու, շփման համար հաճելի մթնոլորտ ստեղծելու, հաղորդակցական նպատակին հասնելու համար:

ԲԽԿ-երը կախված են **շփման առանձնահատկություններից** և գործածվում են **երեք** փուլերում՝ **շփման սկզբում, վերջում և ընթացքում**²:

¹ Տե՛ս **Ռ. Դոխոյան**, *Խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի որոշ բայերի ապանյութականացումը արդի հայերենում*, Ջահուկյանական ընթերցումներ, միջազգային գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2014թ., հունիսի 11-12).- Ե.: 2014:

² Տե՛ս **Л. Введенская, Л. Павлова, Е. Кашаева**, *Русский язык и культура речи: экзаменационные ответы*, Ростов н / Д: Феникс, 2010, էջ 99:

Իրադրությունից կախված՝ շփումը կարող է լինել **պաշտոնական** կամ **ոչ պաշտոնական**, որը պայմանավորվում է **իրադրային** հետևյալ **չափումներով՝** **զրուցակիցների անձով, տեղով, թեմայով, ժամանակով, դրդապատճառով/շարժառիթով, նպատակով**, որոնք ներկայանում են համալիր կերպով¹:

Այժմ հակիրճ ձևով ներկայացնենք հայերենում կիրառվող **ԲԽԿ**-երը և նրանցում գործածվող **խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի** բայերը², որոնք, ինչպես վերը նշեցինք, առավելապես ներակայվում են:

Ողջույնը **ԽԷ**-ի կարևորագույն և պարտադիր կառույցներից մեկն է. նրա միջոցով է սահմանվում շփվողների **կապի հաստատումը**. ցանկացած շփում, որպես կանոն, սկսվում է **ողջույնով**, օր.՝ Բարև/բարև Ձեզ, (**բարևում եմ**), ողջույն (**ողջունում եմ**), բարի օր (**≈եմ մաղթում**)³, շատ ուրախ եմ ձեզ տեսնելու համար, հարգանքներիս հավաստիքը (**≈եմ հայտնում**) ևն:

Ծանոթությունը սովորաբար սկսվում է **ողջույնից**: Եթե հասցեատերը անձանոթ է խոսքի սուբյեկտի հետ, ապա շփումը սկսվում է **ծանոթությունից**: Այն կարող է լինել **անմիջական** կամ **միջնորդավորված**: **Պաշտոնական** շրջման իրադրություններում ընդունված չէ սեփական անձը ներկայացնել. պարտադիր է **միջնորդավորված ծանոթությունը**, օր.՝ Թույլ տվեք Ձեզ **ներկայացնել** պ. կամ տ...., անհրաժեշտության դեպքում կարելի է նաև անմիջականորեն ներկայանալ, օր.՝ **Թույլ տվեք** Ձեզ հետ **ծանոթանալ, թույլ տվեք ներկայանալ**, իմ ազգանուն, անունն է... ևն: **Ոչ պաշտոնական՝ ծանոթանանք**, արի ≈ ևն:

Դիմումը ուշադրություն հրավիրելու կառույց է, որն ուղեկցվում է հետևյալ արտահայտություններով՝ **Ներեցեք**, բարի եղեք, **ասացեք խնդրեմ** ևն: Այն կարելի է բաժանել երկու խմբի՝ **ծառայողական**⁴ և **համագործածական** կամ **չեզոք**: **Ծառայողական դիմումները** գործածվում են ինչպես պաշտոնական, այնպես էլ առօրյա շփման իրադրություններում, երբ տվյալ հասցեատիրոջ անձը մեզ ծանոթ չէ, օր.՝ պարոն դատավոր, քննիչ, բժիշկ, վարորդ, հերթապահ, վաճառող, գնորդ ևն: **Համագործածական դիմումներ** են պարոն, տիկին, երիտասարդ, օրիորդ ևն: Դիմելաձևերի ընտրության դժվարության դեպքում կարելի է գործածել նկարագրական անուղղակի դիմումներ, որտեղ դիմելաձևերը ներակայված են, օր.՝ **Ներեցեք**, եթե դժվար չէ, մի քիչ առաջացեք, սիրալիր եղեք, **ասացեք, խնդրեմ**, տոմսը փոխանցեք ևն:

Ներողություն խնդրելը. քաղաքավարի մարդը, բացատրելով մերժման պատճառը, ներողություն է խնդրում՝ որոշ չափով մեղմելով պատճառած տհաճության, անհարմարության զգացումը, օր.՝ **Ներեցեք**, որ անհանգստաց-

¹ Տե՛ս <http://homeclass.ru/>:

² Վերոնշյալ **ԲԽԿ**-երում **ընդգծված բայերը** պատկանում են **խոսքային գործունեության իմաստային ենթադաշտին**:

³ Կրկնվող բառերը ներկայացնում ենք ալիքագծերով:

⁴ Տերմինը մերն է, օր., Վ. Գուլիինը այս տեսակի դիմելաձևերը անվանում է դիմում-ցուցիչներ: Տե՛ս **В. Гольдин**, *Речь и этикет*, М., 1983, էջ 75-76:

նում եմ/**ընդհատում եմ** Ձեր խոսքը, Ցավոք, չեմ կարող կատարել Ձեր խընդրանքը նն:

Երախտագիտություն և շնորհակալություն հայտնելը. խնդրանքը կատարելու, ծառայություն մատուցելու, օգտակար խորհուրդ ստանալու դեպքում հարկ է խոսակցին շնորհակալություն հայտնել, օր.՝ **Շնորհակալ եմ Ձեզ, շատ զգացված եմ, ցնցված, շոյված եմ** Ձեր ուշադրությունից, շատ բանով եմ պարտական Ձեզ, բառեր չեմ գտնում երախտագիտությունս **արտահայտելու** համար, որքա՜ն երախտապարտ եմ Ձեզ նն:

Խնդրանքը պետք է լինի հստակ ձևակերպված կամ շարադրված, քաղաքավարի և հաստատական ձևով: Հաջողության հասնելու համար խնդրանքը անհրաժեշտ է ձևակերպել առավելագույնս քաղաքավարի և հաստատուն կերպով, լինել նրբանկատ, բայց առանց հաճկատարության: **Խնդրանքի կառույցներ** են, օր.՝ Թախանձագին **խնդրում եմ**, Ձեզ համար դժվար չէ՞ ինձ օգնել, նեղություն կրեք, ես ուզում եմ Ձեզ **խնդրել**, սիրալիր եղեք...: Խնդրանքը երբեմն կարող է զուգակցվել հարցով, օր. **Ներեցեք, կարելի՞ է իմանալ, խնդրել, հարցնել, հետաքրքրվել, ճշտել, տեղեկանալ** նն:

Ցավակցությունը կապված է մահվան, սգո արարողության, վշտալի իրադարձությունների հետ. երբեմն կարող է ուղեկցվել խորհրդով. այն չպետք է լինի չոր, պաշտոնական, պետք է բխի հոգու խորքից, օր.՝ **Թույլ տվեք արտահայտել** իմ խորին վշտակցությունը, անկեղծ ցավակցությունս **եմ արտահայտում**, սրտանց **վշտակցում եմ, սգում եմ** Ձեզ հետ միասին, ինչպես **եմ** Ձեզ **հասկանում, չընկճվեք** ոգով, ա՛յ, **կտեսնեք**, ամեն ինչ լավ կլինի (խորհուրդ **եմ տալիս** ասացականը ներակայված է), այդքան շատ **մի հուզվեք**, Ձեզ ամուր պահեցեք, շատ **վշտացած եմ** նն:

Խորհուրդ, առաջարկություն և նախազգուշացում. որևէ գործ կամ հանձնարարություն կատարելիս խորհուրդ հարցնելու կարիք է առաջանում, որի համար անհրաժեշտ է դիմել որևէ մեկին: **Խորհուրդ** պետք է տալ ոչ կրտրուկ ձևով, նրբանկատորեն, օր.՝ **խորհուրդ եմ տալիս...**: Խորհրդատուն, ելնելով իրավիճակից, առաջարկում է այս կամ այն կերպ վարվել, որևէ բան է առաջարկում կամ զգուշացնում/նախազգուշացնում է որևէ վտանգից, օր.՝ **Թույլ տվեք** Ձեզ **առաջարկել, թույլ տվեք** ձեր ուշադրությունը **հրավիրել...**, ես ձեզ **կառաջարկելի...**, ես Ձեզ **զգուշացնում եմ/նախազգուշացնում եմ...** նն:

Հրավերը լինում է պաշտոնական և ընկերական: Պաշտոնականը բարձրր ոճի արտահայտություն է և ունի ներակայված խնդրանքի տարրեր, օր.՝ **Թույլ տվեք** Ձեզ **հրավիրել**, կարո՞ղ եմ Ձեզ **հրավիրել, համեցեք...** տոնին, ուրախ կլինենք Ձեզ տեսնելու... նն: Ընկերական հրավերը անբռնազբոս է և ունի ներակայված հապճեպության, չպարտադրման, ուղեկցման տարրեր, օր.՝ Կգա՞ս..., արի..., **հրավիրում եմ** քեզ... նն: **Հարցական կառույցը** ընդգծում է չպարտադրված քաղաքավարի հրավեր, օր.՝ Զգնա՞նք մի տեղ...նն:

Շնորհավորանքը լինում է պաշտոնական և մտերմական: Պաշտոնականը բարձր ոճի արտահայտություն է, օր.՝ **Թույլ տվեք** Ձեզ **շնորհավորել, ընդունեք** մեր (ջերմ, սրտագին) շնորհավորանքները, կուլեկտիվի/ընտանիքի ա-

նունից **շնորհավորում ենք**: Մտերմականն ավելի անբռնագրոս է, օր.՝ Շնորհավորում եմ...: Այն կարող է ուղեկցվել նաև բարեմաղթանքի կառույցներով:

Բարեմաղթանք. հրաժեշտից հետո մենք միանգամից չենք ընդհատում շփումը. հեռացող հյուրին հաղորդում ենք մեր բարեմաղթանքները, հույս հայտնում ապագայում նոր հանդիպումների մասին, ողջույն ենք փոխանցում հեռացողի հարազատներին, որը ուշադրության նշան է նրա նկատմամբ, օր.՝ Առողջություն/հաջողություն/բարի ճանապարհ **եմ մաղթում, ընդունեք** իմ ջերմագին բարեմաղթանքները ևն :

Խրախույս և **հավանություն**. հաճախ անհրաժեշտություն է առաջանում խրախուսելու որևէ մեկի առաջարկությունը, հավանությամբ, գովասանքով մղելու որևէ լավ գործի, նպաստելու որևէ բանի կատարմանը, դրսևորմանն ու զարգացմանը, օր.՝ **Հիացած եմ, գովում եմ** Ձեր արարքը, **հավանում եմ** Ձեր գործերը ևն:

Հաճոյախոսությունը կարող է վերաբերել արտաքին տեսքին, մասնագիտական ունակություններին, խոսակցի մարդկային և բարոյական արժանիքներին, այս կամ այն արարքին, օր.՝ Դուք այսօր շատ գեղեցիկ տեսք ունեք, հրապուրիչ եք, Ձեր հագուստը շատ է ձեզ սագում, հնարամիտ եք, հմուտ մասնագետ եք, հաճելի է Ձեզ հետ գործ ունենալը: Վտանգավոր է, եթե իրականությունը ծայրահեղորեն գերազանցված է և հնչում է քծնելու, շողոքորթելու նպատակով, անկեղծ չէ. հաճոյախոսություն է հաճոյախոսության համար:

Համաձայնություն և **անհամաձայնություն**. մենք համաձայնում ենք որևէ մեկի կարծիքին՝ համամիտ՝ համակարծիք լինելով նրան, հայտնելով դրական պատասխան, հաստատելով գրուցակցի ճշմարտացի լինելը, օր.՝ **Խընդրեմ, չեմ առարկում...**, վարվեք, ինչպես **հարկ եք համարում**, պատրաստ եմ Ձեզ լսելու, **համաձայն եմ, ընդունում եմ**, որ... , դեմ չեմ... ևն: Մենք չենք համաձայնում, երբ կասկածում ենք կամ վստահ չենք գրուցակցի արտահայտած մտքերին, նրա արարքների ճշմարտացիությանը, համակարծիք չենք ևն, օր.՝ **Ներեցեք**, բայց ես այդպես **չեմ կարծում**, համամիտ չեմ Ձեր **արտահայտած** մտքերին/համակարծիք չեմ Ձեզ, թույլ տվեք **չհամաձայնել** Ձեզ հետ, ես **համոզված եմ/մտածում եմ/կարծում եմ/ենթադրում եմ**, որ Դուք ճիշտ չեք ևն: Վերջինիս ենթակառույցն է **կասկածանքը**, օր.՝ Ի՞նչ **եք կարծում**, այդպե՞ս է, մի՞ թե դա ճիշտ է, ինչպե՞ս **եք վերաբերվում...**, ճի՞շտ եմ արդյոք **հասկացել** ևն:

Մերժում կամ **հրաժարում**. գրուցակցի խնդրանքը կատարելու անհնարիությունն առաջացնում է անհարմարության զգացում, այդ պատճառով էլ մերժումը պետք է զուգակցել քաղաքավարությամբ, օր.՝ **Կմտածեմ**, միանգամից չեմ կարող **պատասխանել**, չեմ **խոստանում**: Խոսակցության ժամանակ մարդիկ խուսափում են «ո՛չ», «**չեմ կարող**», «**չգիտեմ**» բառերից կամ դրանք **մեղմում են** վերոնշյալ **իմաստային ենթադաշտի** տարբեր բայերով կամ **փոխարինում**, օր.՝ **Ցավում եմ**, բայց չեմ կարող կատարել Ձեր խնդրանքը, պետք է **խորհրդակցեմ** որևէ մեկի հետ:

Հանդիմանություն. ստանձնած պարտավորությունների չկատարումը, հանձնարարությունների կատարման ընթացքում թերանալը կարող են պատ-

ճառ դառնալ հանդիմանության, օր.՝ Թերանում եք Ձեր պարտականությունների կատարման մեջ, **շատախոսում եք, ընդհատում, Ձեզ այնքան էլ հեշտ չէ հասկացնելը, ճիշտ չեք դատում/ասում** ևն:

Զրույց. գրույց վարելը¹ յուրօրինակ արվեստ է և պահանջում է որոշակի խոսելաոճ, լռելու, գրուցակցին լսելու, անհրաժեշտության դեպքում քաղաքավարի կերպով միջամտելու կամ ընդհատելու կարողություններ, օր.՝ **Ներեցեք**, որ ընդհատում եմ, **կցանկանալի ավելացնել ներեցեք, չէի ք կրկնի**, ես Ձեզ լավ **չլսեցի**: Ցանկալի է խուսափել խոսակցի մտքերը հաստատող արտահայտություններից, օր.՝ Ինքնին հասկանալի է, ճիշտ **եք ասում** ևն²: Ենթակառույց է **հեռախոսային գրույցը**, որում գործածվում են **հարցուպատասխանական կառույցները**, օր.՝ Այո, բարև Ձեզ, Ձեզ **անհանգստացնում է** այսինչը, **ներեցեք**, ո՞վ է **խոսում/հարցնում**, տանը չէ, ինչ **հաղորդեմ, խնդրեք** նրան, որ ինձ զանգահարի, **խնդրում եմ** լսափողը փոխանցել... Դուք **սխալվել եք** ևն:

Հարցում և պատասխան. երբեմն հարցը, խնդրանքը լրացվում է մի բան իմանալու, տեղեկանալու ցանկությամբ, օր.՝ **Ներեցեք**, կարո՞ղ եմ **հարցնել**, ուզում եմ **իմանալ/հարցնել/տեղեկանալ/ճշտել** ևն: Հարցի (խնդրանքի) ներմուծումը **հարցման թույլտվության** գործառույթ է կատարում, որից հետո հնչում է **պատասխան՝** ի հաստատումն խոսակցությունը շարունակելու թույլտվության, օր.՝ **-Թույլ տվեք հարցնել... -Խնդրեմ, հարցրեք**, ինչ-որ անհասկանալի բան կա ևն³: Պատասխանները նույնպես կաղապարային են և հարցերի հետ միասին կազմում են **երկխոսական միություն**⁴:

Հրաժեշտ. ցանկացած շփում ավարտվում է հրաժեշտի հետևյալ կառույցներով, օր.՝ Մնաք բարով, ցտեսություն, մինչ նոր հանդիպում, մինչ վաղը, ամենայն բարիք (≈եմ **ցանկանում**), բարի (խոսքով ինձ) **հիշեք** ևն: Հրաժեշտի արտահայտություններին կարող են հաջորդել խնդրանքի (**մի մոռացեք**, անցեք, **գրեք**, զանգահարեք, ողջուններ **հաղորդիր** այսինչին) և բարեմաղթանքի (հաջողություն/... եմ **ցանկանում**) կառույցները⁵՝ ապագայում հանդիպելու ակնկալիքով: Այսպիսով, **վերոնշյալ իմաստային ենթադաշտի բայերը**, գործածվելով համապատասխան խոսքային իրադրություններում, ներկայացնում են ասելիքի բովանդակությունը:

ԲԽԿ-երը դրսևորում են նաև **ոճական** որոշակի առանձնահատկություններ, որոնց տարբերությունները մեծ մասամբ որոշվում են նրանց՝ տարբեր **գործառական ոճերի** պատկանելությամբ. յուրաքանչյուր գործառական ոճ ունի իր **ԲԽԿ**-երը: **Գիտական ոճում** ընդունված **ԲԽԿ**-երը որոշում են շարադրանքի կարգը, հղումները, առարկությունները ընդդիմախոսներին. ընդունված չէ անհամաձայնությունը կտրականորեն արտահատելը: **Գեղարվեստա-**

¹ Մեր կարծիքով, **համացանցային շփումը** ևս կարելի է համարել բարեկիրթ խոսքի կառույց, որը իրացվում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ձևով և ուսումնասիրման կարիք ունի:

² Տե՛ս **Ա. Նազարյան, Չ. Գրիգորյան**, նշվ. աշխ., Ե., 2002, էջ 114-115:

³ Տե՛ս **Н. Формановская, А. Акишина, Т. Акишина**, *Спросите, попросите...*, М., 1989, էջ 7:

⁴ Տե՛ս ն. տ., էջ 130:

⁵ Տե՛ս **А. Акишина, Н. Формановская**, *Русский речевогой этикет*, М., 1975, էջ 173-174:

կան ոճում գործածվող **ԲԽԿ**-երը նպաստում են կերպարի խոսքային բնութագրի ստեղծմանը: **Հրապարակախոսական ոճում** գնահատականի չեզոքացումը սկզբունքորեն անհնար է. շփումը ենթադրում է սեփական դիրքորոշման բացահայտ արտացոլում: Դատական հաղորդակցության մեջ օգտագործվող կառույցները կարգավորում են մեղադրյալի և տուժողի հարաբերությունները: **Պաշտոնական ոճն** աչքի է ընկնում նյութի հաղորդման և շարադրման խստորեն մշակված կառույցներով. **ԲԽԿ**-երը հատկապես գործածվում են պաշտոնական փաստաթղթերում, մասնավորապես՝ նամակներում, պայմանագրերում, դիմումներում և գործնական այլ գրություններում: **Առօրյա-խոսակցական ոճը**, գործադրվելով ոչ պաշտոնական իրադրություններում, ենթադրում է անբռնազբոս լեզվական միջոցներ՝ **խոսակցական ոճի** միավորներ, **օտարաբանություններ**, **ժարգոնային բառեր** և **արտահայտություններ**:

ԽԷ-ի կառույցների գործածության մեջ շատ կարևոր է նաև **հնչերանգի** և **հարալեզվական՝ ոչ խոսքային** միավորների (ժեստերի և միմիկայի) դերը:

Ruzanna Dokhoyan -The Use of the Verbs in the Semantic Subfield of the Speech Activity of Modern Armenian in the Structures of Cultured Speech.- The system of the admitted behavior in the society which defines, explains and simplifies the procedure of human communication in certain events is called a speech communication etiquette. It is realized through speech formulas. In Armeniologie the speech etiquette has not become a matter of systematic study and as it is connected with the speech activity we find it expedient to study it within the limits of the study of semantic subfield of speech activity. In speech formulas the verbs of the semantic subfield of speech activity play an important part (the verbs of "say", "think", "feel") which exist in those formulas in an explicit or implicit way bearing the whole semantic weight of speech activity. The verbs of above-mentioned subfields are used desemantically in those formulas changing into type etiquette signs.

Дохолян Рузанна-Употребление глаголов семантического подполя речевой деятельности современного армянского языка в речевых формулах.- Принятая в обществе система правил поведения, которая устанавливает и разъясняет процедуру человеческого общения в определенных ситуациях, называется речевым этикетом. Последний реализуется с помощью речевых формул. В арменоведении речевой этикет не был предметом исследования, и так как он связан с речевой деятельностью, мы сочли целесообразным обратиться к речевым формулам в пределах семантического подполя речевой деятельности. В речевых формулах важную роль играют глаголы семантического подполя речевой деятельности (глаголы говорения, мышления, чувств), которые как эксплицитно, так и имплицитно наличествуют в формулах, принимая на себя вся семантическая тяжесть речевого общения. Вышеупомянутые глаголы употребляются в этих формулах десемантизационным образом, разорвав связь с глагольной парадигмой и превратившись в типичные этикетные значения.

«ՈՏՆԱՄԱՆ» ԵՎ «ԿԱՇԻ» ՆՇԱՆԱԿՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է, հնդեվրոպացիները հնուց անտի ոտնաման պատրաստում են հիմնականում կաշվից¹: Մկգրնապես ոտնամանը միայն կաշի էր, որ փաթաթվում էր ոտնաթաթի շուրջը և կաշվե թելերով կապվում ամրացվում, ինչպես, օրինակ՝ տրեխը: Հետո սկսեցին թելերով կարել կաշվի կտորներն այնպես, որ ոտնաթաթի ձևն ունենա: Ավելի ուշ հայտնվեցին հաստակաշի ներբաններն ու կրունկները:

Սա նշանակում է, որ ոտնամանը փաստորեն կաշի էր, կաշին էլ՝ կոշկացու: Այսինքն՝ ոտնամանն ու կաշին սերտորեն առնչվող երևույթներ էին և ինչոր ժամանակ նույն հասկացության մեջ էին առնված: Հետագայում դրանք տարբերակվեցին, ինքնուրույնացան, սակայն պահպանեցին իմաստային ու գործառական կապը, երբեմն էլ՝ ձևական-բառային առնչությունը: Պատահական չէ, որ որոշ լեզուներում կան «ոտնաման» և «կաշի» նշանակող նույնարմատ բառեր: Օրինակ՝ *sek->*(s)ker- «կտրել»>ռուս. черевик «մաշիկներ» և ко-ра «կեղև» (*Պոկ. 938-947*), *sek- > *skeu- «ծածկել» > հ.իռլ. skūr «կաշի» և իռլ. cūa-rān «կոշիկ», անգլ. shoe «կոշիկ» և skin «կաշի» (*Պոկ. 951-953, OED*): Երբեմն էլ նույն բառն ունի երկու իմաստն էլ, օրինակ՝ գոթ. skauda «կոշիկ», skauda-raip «կաշեփոկ, կաշվե գոտի» (*Պոկ. 951-953*), հայ. լեկ «1. մշակված կաշի, 2. տրեխ», *փոկ* «1. կաշվի շերտ, 2. տրեխ»:

Այս տեսակետից և այս համաշարում խիստ հատկանշական է «կաշի» և «ոտնաման» նշանակող հայերեն մի քանի համանման, հարանուն կամ համանուն բառազույգերի առկայությունը:

1. Կաշի և կօշիկ: Այս երկու բառերը համարվում են հին փոխառություններ: Հ. Աճառյանն ընդունում է Հ. Հյուբշմանի այն կարծիքը, թե կօշիկ-ը փոխառություն է պահլավերեն ենթադրյալ «*kafšik հոմանիշ ձևից», թեև վկայված կա միայն kafšak ձևը (*ՀԱԲ, 2, 687*): Ըստ Հ. Աճառյանի՝ կաշի-ն «թերևս ասորաբաբելական աշխարհից փոխառեալ մի բառ է» (qas' «չորանալ» արմատից) (*ՀԱԲ, 2, 517-518*): Սրանց հետ մասամբ համաձայն է Գ. Ջահուկյանը: Նա կօշիկ-ի համար պահլավերեն ենթադրյալ ձևեր չի վկայակոչում (*ՀԱԲ, 395-396*), իսկ կաշի-ի համար վկայակոչում է ակկադ. kūšu ձևը՝ սա էլ փոխառություն համարելով սումերերենից (*ՀԱԲ, 383*): Նաև նշում է, որ արաբերեն qas' «չորանալ» արմատը և նրանից ծագած բառերը կապ չունեն ակկադերեն բառի հետ: Մի քանի հանգամանք, սակայն, հարկադրում են կասկածի տակ առնելու այս ստուգաբանությունները: Ակնհայտ է այս երկու բառերի արտաքին մեծ

¹ Ինչպես հայտնի է, «Հայաստանում կաշեգործությունը հին և տարածված արհեստ էր» (*Հայկական համառոտ հանրագիտարան*, հ. 2, Ե., 1995, էջ 598):

նմանությունը: Անհավանական է, որ այդ նմանությունը լինի պատահական՝ երկու տարբեր աղբյուրներից փոխառությունների պարագայում: Ուրեմն պետք է պարզել դրանց ծագումնաբանական ընդհանուրությունը: Ընդ որում՝ փաստեր չկան, թե դրանց ընդհանուր աղբյուր են ասորաբաբելական կամ իրանական լեզուները: Հետևաբար ամենից հավանական աղբյուրը հնդեվրոպական նախալեզուն է:

2008 թ. հնագետները Հայաստանում՝ Վայոց ձորի Թոչնի (Արենի-2) քարանձավում պեղեցին աշխարհի հնագույն կաշվե կոշիկը, որը կարված է կովի կաշվի մեկ ամբողջական կտորից և միջազգային 4 անկախ փորձագիտական հաստատությունների կողմից թվագրվել է մոտավորապես մ.թ.ա. 3600-3500 թ.¹: Դա նշանակում է, որ հայերը կաշվից կոշիկ կարելիս ու հագնելիս են եղել ավելի քան 5500 տարի առաջ, երբ հայերենը դեռ չէր առնչվել ո՛չ իրանական, ո՛չ էլ ասորաբաբելական լեզուների (այդ թվում՝ ակկադերենի) հետ²: Ուստի փոխառություն պետք է ենթադրել հակառակ ուղղությամբ՝ հայերենից դեպի այդ լեզուները:

Նկատենք, որ կաշին կենդանու մարմնի բնական ծածկն է, իսկ կոշիկը՝ ոտքի ձեռնաշեն ծածկը: Ուստի օրինաչափ է, որ հնիլ. *skeu- «ծածկել» արմատից են բխեցվում մի կողմից՝ «կոշիկ» նշանակող անգլ. shoe, իռլ. cūarān, կիմր. curan (*OED, shoe*), իսլ. skor, կոռն. eskit (*Պոկ. 951-953*), լատվ. kurpe (*Wik.*), լիտվ. kaustity, մակեդ. чевли և այլ բառեր, մյուս կողմից՝ «կաշի, մորթի» նշանակող հուն. σκῦτος (*Պոկ. 951-953*), անգլ. hide, գերմ. Haut, լիտվ. skūra, լատ. cutis (*OED, hide*), *corium*, ֆր. cuir (*Wik.*), ռուս. шкура (լեհերենից) (*Ֆաս. 2, 276-277*) և այլ բառեր: Հնդեվրոպական նույն նախաձևից առաջացած այս բառերի մեծ մասը կազմված է տարբեր աճականներով ու ածանցներով, մի քանիսը՝ առանց դրանց: Մի մասը կորցրել է *s սկզբնահնչյունը, մի քանիսը՝ երկրորդ՝ *k հնչյունը: Այս արմատից են բխեցվում նաև «կոշիկ»-ին և «կաշի»-ին հարակից իմաստներ արտահայտող հայ. կեղև [*keleb- կամ *kel-ep-] (*ՀՄԲ*), խաղախ «կաշի, մորթ» [**khol-*], խեճեպ «կճեպ, կեղև, պատյան» [**(s)k(h)ed-*], խորխ «մորթ, կաշի, կճեպ» [**khor-kh-*] (*ՀՄԲ*), քերթել «մաշկել, պլոկել» [**^(s)ker-p-*] (*Պոկ. 938-947, ՀՄԲ, ՀՄԲ*), իլլայ «շղարշ, քող» [**^(s)keu-l-*] (*Պոկ. 951-953*), շերտ [**sqerd-*]³, խաւ [**khəu-*] «նուրբ մազածածկույթ», խուփն [**khu-ph-*] «կափարիչ» (*ՀՄԲ*) և մի շարք այլ բառեր:

Այս գուգադրվող բառերի, ինչպես նաև դրանց նախաձևերի միջև իմաստային անցումը հետևյալն է. «կտրել» > «կաշվի կտոր» > «կաշի» > «կաշվի կտո-

¹ St' u <http://news.am/arm/news/23186.html>, <http://blogs.plos.org/everyone/2010/06/09/pinhasi-shoe/>, http://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB_1_%D5%AF%D5%B8%D5%B7%D5%AB%D5%AF:

² Ինչպես հայտնի է, ակկադերենի հետ հայերենի շփումները հնարավոր են համարվում մ.թ.ա. 24-րդ դ. հետո, իսկ իրանական լեզուների հետ՝ մոտավորապես մ.թ.ա. 10-րդ դ. հետո միայն (**Գ. Չահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 468-469, 489-493):

³ **Է. Աղայան**, *Բարաքնական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974, էջ 128-129:

րից (ոտնաման)» > «կոշիկ» (*Wik. kurpe*): Սրան լրացնում է «կտրել, քերթել» > «կաշի» > «ծածկել» > «ոտնաման» անցումը:

Նույն *skeu- «ծածկել» հնիւլ. արմատից առանց դժվարության բխեցվում են նաև հայերենի **կաշի** ու **կօշիկ** բառերը: Նկատենք, որ այդ երկու բառերն էլ ածանցավոր են՝ **կօշ-իկ**, **կաշ-ի**: Սրանց ընդհանուր արմատն է՝ **կաւշ/կաշ**¹: **Կաշի** բառի՝ սերում, ծագում նշող **-ի** վերջածանցը բառին տվել է «կոշիկի, կոշկացու» բնիմաստը²:

Նախ պետք է ենթադրել *(s)keu- արմատի ձայնդարձի ստորին աստիճանով և *s աճականով (s)kəu-s->**կաւ-շ** «կաշի, կոշիկ» համապատասխանությունը³ (բուն արմատն է *(s)k-, որ պարզական *sek-ի սղված տարբերակն է)⁴: Հնիւլ. *(s)kəu-s-ը հայերենում կորցրել է *s սկզբնահնչյունը, *əu երկբարբառը դարձել է **աւ**, իսկ *s աճականը դարձել է **շ**: Այս անցումների բանաձևն է՝ *(s)kəu-s- > *kəus- > *kaus- > *kauš- > **կաւշ**: **Կաւշ**-ից այնուհետև առաջացել է **կաւշ-ի** ածանցյալը, որը հետագայում (դեռ նախագրային շրջանում) տվել է **կաշ-** արմատային տարբերակով **կաշի** ձևը⁵: Միայն «ոտնաման» իմաստը պահպանած **կաւշ** բառը այնուհետև ստացել է **-իկ** ածանցը՝ **կաւշիկ**: Շատ ավելի ուշ ժամանակի է վերաբերում **կօշիկ** ձևը:

Ինչպես հայտնի է, առևտրային արժեք ունեցող մշակութային երևույթները արագորեն փոխանցվում են երկրից երկիր՝ իրենց հետ հաճախ տանելով ու տարբեր լեզուների փոխանցելով սկզբնական անվանումը: Այդպես պետք է հայերենից իրանական լեզուներին (սրանցից էլ՝ արաբերենին) անցած լինի **կաւշ** արմատը մինչև **-իկ** ածանցն ստանալը և առավել ևս մինչև **աւ** > **օ** հնչյունափոխությունը (մ.պրս. kafšak, պրս. kafš, թաջիկ. kaφա, բելուջ. kauš, քրդ. kevš, արաբ. qafš և այլն): Հայերենի հնչյունափոխված բարբառային **քօշ**

¹ **Աւ (օ) - ա** անցումը հայերենին բնորոշ է (հմմտ. *մօտ - մատ-ոյց, թօն - թան, թօշ-նել - թարշ-աւ, արօտ - արած-ել, արտօս-ր - արտաս-ուք, ծանօթ - ճանաչ, յօտ-ել - յատ-ել* և այլն):

² Այդ ածանցի ծագման մասին տե՛ս **Գ. Զահուկյան**, Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 2, Ե., 1998, էջ 25-26:

³ Բառասկզբի *(s)k->**կ-** համապատասխանության այլ օրինակներ են նույնարմատ **կեղև** [*keleb- կամ *kel-ep-], **կտոր**, **կտուր**, **կուրտ** [(s)keu-t-] և այլ բառեր (տե՛ս նաև ՀՄԲ): Աճական **-շ**-ն առկա է նաև մի շարք այլ բառերում և բխեցվում է *s (խարշ, մաշ-ել, մոշ, գարշ, լպիրշ, գորշ, խորշ, թուշ), *-skh (որոշ, նուշ) կամ *-k' (ավիշ) նախաձևից (տե՛ս ՀՄԲ, համապատասխան բառահոդվածները):

⁴ Հնիւլ. այս արմատն իր ձևային ու իմաստային բազում ճյուղավորումներով խիստ տարածված է դուստր լեզուներում: Ածանցյալների այդ հսկա բազմությանը կարելի է ծանոթանալ Յ. Պոկոռնու «Հնդեվրոպական ստուգաբանությունների բառարանում» և Ս. Նիկոլակի «Հնդեվրոպական ստուգաբանության շտեմարանում» մասնավորապես *sken- «կտրել, պոկել», *(s)**ken-(d-)**- «մաշկել, ճեղքել», *(s)**ker-4**, (s)**kerə-**, (s)**krē-** «կտրել», *(s)**ker-p-** «կաշվի կտոր, կոշիկ», *(s)**keu-2**, (s)**keuə**, (s)**kū-** «ծածկել, թաքցնել, փաթաթել, ծածկոց», *(s)**keu-1-(kh-)** «ծածկ, թաղանթ, կաշի, մորթի», *(s)**ko-1-** «կտրել» և այլ գլխաբառերի տակ:

⁵ Այդ անցմանը թերևս նպաստել է այն հանգամանքը, որ այդ բառը պատկանել է **n-ա** խառը հոլովման, և սեռական-տրականի ու բացառականի **կաւշույ**, գործիականի **կաւշեաւ** ձևերում գործել է տարնմանության երևույթը, որի պատճառով առաջին **ւ-**ն ընկել է (**կաւշույ** >**կաշույ**, **կաւշեաւ** >**կաշեաւ**): Հետո այդ կրճատված ձևն ընդհանրացել է մյուս հոլովաձևերի և ուղիղ ձևի համար:

տարբերակից են փոխառյալ թուշ. qoš, վրաց. qoši բառերը: Հայերենի **կօշկակար** բառի ամփոփված **կօշկար** տարբերակից է փոխառյալ թրք. köşgër բառը: Նույն արմատից հայերենում կան նաև **կաշանալ, կաշել** «կաշի դառնալ, կաշվի պես չորանալ», **կաշեցե** «կաշվե, կաշուց», **կաշեղէն** ածանցյալները (*Մայլի. 2, 387*): Հնարավոր է նույն արմատից ենթադրել **կօշ** «ամուր կեղևով դդում, որից ջրաման են պատրաստում», **կօշարայ** «սափորաձև աման» (*Մայլի. 2, 511*), **գուշ/գոշ/կօշ** «փայտե աման» (*Մայլի. 1, 470, ՀԱԲ 1, 596, ՀԱԲ, 173*) բառերը:

Նույն արմատից ծագած պետք է համարել նաև **կաճ (կայճ)** «թաղիք» բառը, որ համարվում է անհայտ ծագման (*ՀԱԲ 2, 497, ՀԱԲ, 377*): Պատճառաբանությունը հետևյալն է: 1. **Կաշի** և **կաճ** բառերը արտաքուստ շատ նման են: 2. Կաշին և կաճը ծածկոցի տեսակներ են՝ ստացված նույն մորթու մշակումից, թեև տարբեր արտադրաբանությամբ: 3. Կաճը կաշվի փոխարինիչ է. նրանից նույնպես ոտնաման է պատրաստվում (հատկապես ձմեռային): 4. Այլ լեզուներում նույնպես **կաշի** և **կաճ** բառերը երբեմն նույնարմատ են (օրինակ՝ *pel- «կաշի, մաշկ, թաղանթ» > անգլ. fell «մորթի», film «թաղանթ», felt «թաղիք, կաճ», նաև լատ. pellis «կաշի»): **Կա(յ)ճ**-ը կազմվել է *d աճականով՝ *(s)keu-/(s)kəu-/(s)kəi-d-> **կա(յ)ճ**: Նկատենք, որ կաճագործությունը Հայաստանում հին և զարգացած արհեստ է: **Կաճ** բառը հայերենից անցել է մի շարք լեզուների (թուրքերեն, վրացերեն, հունգարերեն, լեհերեն, սերբերեն, գնչուերեն և այլն) (*ՀԱԲ 2, 497*):

Նույն արմատից ծագած պետք է համարել նաև **սեկ** «այծի կամ ոչխարի մորթուց ստացվող բարակ, ներկված կաշի»¹ և **սերեկ/սարեկ** «ամանի բերանին իբրև կափարիչ կապվող կաշվե կտոր» բառերը²: Սրանց ծագումնաբանական կապը ակնհայտ է: Հնագույնը պետք է որ լինի **սարեկ**-ը, որից առնմանությամբ կարող էր առաջանալ **սերեկ**-ը, սրա կրճատումով էլ՝ **սեկ**-ը: **Սարեկ**-ը կարելի է բխեցնել հնիսլ. *sek- «կտրել» պարզական արմատի *(s)kə- տարբերակի քմայնացած սկզբնահնչյունով *k ərē-g- ընդլայնումից³ (*k' ərē-g- > սարեկ > սեկ)⁴:

Նույն արմատի հետ կարող է կապված լինել նաև **կաշառեկ** բառը⁵, քանի որ, ինչպես Մովսես Խորենացին է վկայում, հնում ընդունված էր, իբրև վար-

¹ Հին Հայաստանը հայտնի էր կոշիկի կարմիր, կանաչ և այլ գունավորմամբ սեկի արտադրությամբ (*Հայկական համառոտ հանրագիտարան*, հ. 2, Ե., 1995, էջ 598):

² **Սեկ**-ը համարվում է չստուգաբանված արմատ, իսկ **սերեկ**-ը Գ. Ջահուկյանը կասկածով փորձում է կապել հնիսլ. *k'er- «հյուսել, կցել» արմատի հետ (*ՀԱԲ, 677*):

³ Քմայնացած *k'-ի համար հմմտ. վերոհիշյալ *(s)k'id- > **ցիս**, *(s)k'el- > **ցեղ, ցել** ստուգաբանությունները (*ՀԱԲ*), *k'ik- «կաշեփոկ», *k'orəw- «զրահ, սաղավարտ» (*Նիկ.*), *k'el- «ծածկել, պատել» (*ՀԱԲ, Սեղմ* գլխաբառի տակ) արմատները:

⁴ Չի բացառվում նաև, որ **սեկ** բառը ոչ թե առաջացած լինի **սերեկ**-ից, այլ դրա ամենանախնական պարզագույն *sek- «կտրել» արմատի անմիջական և ուղղակի ժառանգորդը լինի (*sek- > սեկ):

⁵ Գ. Ջահուկյանը **կաշառ** բառը կասկածով կապում է ակկադերենի հետ՝ <q(i)ašu(m) «նվիրել» (*Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն*, էջ 472):

ձանք՝ ընտիր կարմիր կաշի նվիրելով սիրաշահելու սովորությամբ¹: Թերևս դրա վկայությունն են նաև **կաշիկ-ք** «վարձ» (*ՀԱԲ 2, 687, ՀԱԲ, 396*) և **կօշնել** «ձոնել, ընծայել» (*ՀԱԲ 2, 687*) բառերը: Որոշ բարբառներում (օրինակ՝ Հաճնի) **կօշիկ** բառով են անվանվում միայն կարմիր կաշվից կարված ճտքավոր ոտնամանները (*ՀԱԲ 2, 687*): Այս նկատի ունենալով՝ հայերեն **կաշառել** բառի սկզբնաղբյուր համարվող ակկադերեն *q(i)āsu(m)* «նվիրել» բառը կարելի է, ճիշտ հակառակը, փոխառություն համարել հայերենից: **Կաշիկ-ք** «վարձ» բառը վկայված է Փ. Բուզանդի «Հայոց պատմությունում» և «Աստվածաշնչում»: Այդ վկայությունների վերլուծության հիման վրա **կաշառել-ը կաշ/ կաշ** արմատի հետ կապելու փորձ է արել նաև Բ. Առաքելյանը²:

2. Տեռ(ել) և տրեխ: Ոտնամանի ամենապարզ, ամենահին և արտադրաբանությամբ ամենահին տարատեսակը հայերենում կոչվում է **տրեխ**: Հետևաբար այս բառը ևս պետք է որ ունենա հնագույն ծագում: Մակայն կարելի է ասել, որ այս բառը դեռևս ստուգաբանված չէ:

Գ. Ջահուկյանը ենթադրում է իրանական փոխառություն՝ առանց որևէ ստույգ աղբյուր մատնանշելու (*ՀԱԲ, 736*): Հ. Աճառյանը նմանեցնում է արաբերեն *ṭirāq* «կոշիկի կաշի, կաշվի կտոր, վահանը պատելու կաշվե շրջանաձև կտոր» բառին՝ խոստովանելով, որ դրա և **տրեխ**-ի հարաբերությունը չի կարող որոշել (*ՀԱԲ 4, 435*): Նա նույն տեղում նշում է նաև «Նոր հայկագեան բարարանի» ենթադրությունը, թե հայերենից է տաճկ. **չարըխ** «տրեխ» բառը:

Մինչդեռ **տրեխ** բառը առանց մեծ դժվարության կարելի է բխեցնել «կտրել, կաշի» նշանակող նախալեզվյան մեկ այլ արմատից՝ ***der-/derə-/drē- *kh-** աճականով (***drē-kh-**)³: Նույն արմատից են նաև հայ. **տեռ** «շղարշ, քող», **տեռ** «մաշկի կոշտացում, կոշտուկ» և **տեռել** «կաշին պլոկել» բառերը (***der-s-**) (*ՀԱԲ 4, 395, ՀԱԲ, 727*), ինչպես նաև **տարր** «մասնիկ», **տառ** «գրանշան» բառերը, **տրամ-** նախածանցը (*ՀԱԲ, 725*) և այլն⁴:

Փաստորեն այս դեպքում ևս աշխատում է իմաստային անցման «կտրել» > «կաշվի կտոր» > «կաշի» > «կաշվի կտորից (ոտնաման)» > «կոշիկ» բանաձևը՝ ի դեմս **տրեխ – տեռել** գուգահեռի:

3. Մաշկ և մաշիկ, մորթ և մոյկ: Հայերենում առկա է **կաշի – կօշիկ**-ին և **տեռ – տրեխ**-ին հոմանիշ ևս մի բառագույգ՝ **մաշկ – մաշիկ**: Այս դեպքում ևս ակնբախ են թե՛ ձևային, թե՛ իմաստային, թե՛ գործառական ընդհանրություն-

¹ Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն*, Ե., 1981, էջ 214:

² Բ. Առաքելյան, «Կօշիկը» որպես սոցիալական տերմին, «Տեղեկագիր. ՄՄՀՄ ԳԱ հայկ. ֆիլիալ», հմ. 3, Ե., 1940, էջ 75-79: Այստեղ հեղինակը նկատում է, որ «Աստվածաշնչի» հայերեն թարգմանության մեջ **կօշիկք** «վարձ» բառին երբայերեն բնագրում համապատասխանում է «կաշառք» նշանակող բառ:

³ Բառավերջի **խ**-ի համար հմմտ.՝ **նեխ** (*nekh-), **ցախ** (*k'ākh-), **բուխ** (*bhu-kh-), **թուխ** (*tu-kho-), **գլուխ** (*ghōul-kho-), **մուխ** (*smukh-) (*ՀԱԲ*):

⁴ Հիշյալ ***der-/derə-/drē-**-ն հնդկարական լեզուներում տարածված արմատ է, սակայն հայերենում ունի համեմատաբար սակավաթիվ դրսևորումներ: Նույնարմատ ցեղակից ձևերին կարելի է ծանոթանալ վերոհիշյալ աղբյուրներում՝ ***der-eu-**, ***derə-u-**, ***dī-u-** «հատել, ճեղքել, պայթել, փղձկալ», ***deru-**, ***de-dru-** «մաշկել, քերթել» և այլ գիսաբառերի տակ:

ները: Սակայն զարմանալիորեն այս կապը չի նկատվել, և դրանց ծագումնաբանական ընդհանրությունը պարզելու փորձ մեզ հայտնի չէ: Այս երկու համահունչ բառերը ևս անհավանական կերպով համարվում են տարբեր լեզուներից փոխառություններ: Հ. Աճառյանը **մաշիկ** բառը նմանեցնում է վրացերեն *mašia* «կնոջ կրունկավոր կոշիկ» բառին (*ՀԱԲ 3, 260*): Գ. Ջահուկյանը հայերեն և վրացերեն բառերի համար ենթադրում է մի երրորդ անհայտ ընդհանուր աղբյուր՝ «գուցե իրանական» (*ՀԱԲ, 510*): Հ. Աճառյանը **մաշկ** բառը համարում է փոխառություն ասորերեն *meškā* «մորթ» բառից, որը մի շարք զուգահեռներ ունի սեմական լեզուներում, չնայած նշում է, որ Պ. Լագարդը տեսնում է հակառակ ուղղությամբ փոխառություն (*ՀԱԲ 3, 260*): Գ. Ջահուկյանը համաձայն է Հ. Աճառյանի հետ (*ՀԱԲ, 510*):

Մաշիկը պայտած բարձր կրունկով, սրաքիթ, սեկե կոշիկն է (թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար) (*Մայի. 3, 258*), այսինքն՝ ոտնամանի ավելի զարգացած տեսակն է, քան տրեխը, ավելի բարձրաճ, քան ընդհանրապես կոշիկը: **Մաշիկ** բառը արևելահայ գրական-խոսակցական լեզվում իմաստափոխվել է և այժմ կիրառվում է «հողաթափ» իմաստով: Կարևորն այն է, որ մաշիկը կոշիկի տարատեսակ է, որ կարվել է ոչ թե պարզապես կաշվից, այլ հատկապես նուրբ կաշվից՝ մաշկից: Ուրեմն հնում **մաշկ** բառն ունեցել է նաև «մշակված նուրբ կաշի» իմաստը: **Մաշկ** և **մաշիկ** բառերի կապը երևում է «կոշկակար» նշանակող **մաշակար/մաշկակար/մաշեկար/մաշկար** բառային տարբերակների առկայությունից: Բացի այդ, Հ. Աճառյանը **մաշիկ**-ը համարում է **մաշ**-ի նվազականը (*ՀԱԲ 3, 260*): Հետևաբար կարելի է ենթադրել **մաշ**-ընդհանուր արմատը, որից **-կ** աճականով կազմվել է **մաշկ** բառը:

Ս. Նիկոլանի կազմած «Հնդեվրոպական ստուգաբանության շտեմարանում» գտնում ենք **mais-* «մաշկ, կաշի, մորթի» արմատը և դրա մի քանի այլ տարբերակներ (ընդլայնումներ) (*Նիկ. 1681, 1821*): Յ. Պոկոռնու բառարանում կա *moiso-s / maiso-s* «ոչխար, ծածկել, կաշվե» արմատը՝ իր տարբերակներով (*Պոկ. 747*)¹: Ինչպես տեսանք, «կաշի» և «ծածկել» իմաստները հարաբերակից են: Տվյալ դեպքում դրանց հարաբերակից է նաև «ոչխար» իմաստը, քանի որ մաշիկը պատրաստվում էր ոչխարենուց կամ այծենուց ստացված կաշվից: Այսպիսով կարող ենք նշված նախաձևից ուղղակիորեն բխեցնել **մաշ**-արմատը [**ma(i)s-* > **մաշ**- «նուրբ կաշի, սեկե կոշիկ»]: Այդ **մաշ**- արմատից **-իկ** ածանցով առաջացել է **մաշիկ** բառը, **-կ** աճականով՝ **մաշկ** բառը՝ **ma(i)s-g*²:

Նույն արմատից են նաև **մաշկշոր** «կոշիկի մեջ դրվող կաշի՝ ընդդեմ խոնավության», **մաշկալ** «կրակաշոր, կպչան», **մաշկեակ** «ոչխարենուց կարած զգեստ», **մաշկիկ** «հավի ազդրի կաշվից կարված պարկիկ՝ ծարիրի համար» բառերը (*Մայի. 3, 258*):

¹ Նշված աղբյուրներում նույն արմատի տարբերակներից կամ դրա ընդլայնումներից սերված մի շարք բառեր են տրված նաև ***mak-**, ***maks-** «պարկ, փուքս, փոր», ***mak-** «կաշվե պայուսակ», ***molko-** «կաշվե պայուսակ» և այլ գլխաբառերի տակ:

² Հմտ. սլավոնական լեզուներում *koza* > *козья* > *кожа* անցումը (*Ֆաու. 2, 276-277*), պարկերենում *mīš* «ոչխար» > *mīšin* «կաշի» անցումը և այլն (*ՀԱԲ 4, 405*):

Հնդեվրոպական հիշյալ արմատի պարզականն է՝ *ma(i)-/*mo(i)- /*me(i)- «կտրել, մաշկել»: Դրա *mo(i)- տարբերակից կարելի է բխեցնել անհայտ ծագման համարվող **մորթ** (*mor-th-) «մաշկ, մորթի» բառը, ինչպես նաև **մոյկ/մոյգ** [*moio-g- կամ *me(i)u-g-] «կոշիկ» բառը, որ մինչ այժմ համարվել է իրանական փոխառություն (մ.պարսկ. mōk ձևից [ՀԱԲ 3, 344, ՀՄԲ, 534]): Հետևաբար ունենք «կաշի - կոշիկ» զուգահեռի ևս մի դրսևորում՝ **մորթ - մոյկ**: Մույկը, ի դեպ, նշանակում է ընդհանրապես «ոտնաման» (կոշիկ, հողաթափ), իսկ արևմտահայերենում՝ «մինչև ծնկները հասնող ճտքերով կոշիկ»:

Նույն արմատից ծագած պետք է համարել նաև **մոթալ/մորթաղ** «տիկ հանած և մազազերծված կաշի, կաշվե պարկ, տկճոր» (<*mo(r)-th-աղ/ալ) բառը (Մալխ. 3, 353, 360):

4. Օղենի «ոչխարի մորթի» և օղ «ոտնաման»: Հայերենում կա նաև «կոշիկ» նշանակող մի հնացած բառ՝ **օղ**: Դա ստուգաբանվում է որպես բնիկ հայերեն բառ (*ou-dh- > օղ)՝ կապվելով **օթ** (*ou-t-), **ագանիմ** (*óuō-), **յ-ագչիմ** (*ou-), **գ-գենուլ (կենայ)** «հագնել» [(o)ue(s)-nu-], դրանցից ածանցյալ **օթոց** «ծածկոց, թիկնոց», **զգեստ** «հագուստ» բառերի հետ (ՀՄԲ 4, 607, ՀՄԲ 100): Այստեղ չի երևում **օղ** «կոշիկ» բառի հանրույթային կապը «կաշի» հասկացության հետ: Բայց դա կերևա, եթե նկատի ունենանք այդ բառին արմատով համանուն **օղի** «ոչխար» բառը, որի ածանցյալներն են՝ **օղենի** «ոչխարենի», **օղիկ** «ոչխարենու մուշտակ»: Գ. Ջահուկյանը **օղի**-ն կապում է **հովիվ** բառի հետ՝ որպես բնիկ հայերեն (*owi-dh-iio- > օղի)՝ որևէ կապ չմատնանշելով **օղ** «կոշիկ»-ի հետ: Մինչդեռ եթե ***օղ** «ոչխար, մորթի, կաշի» արմատը դիտարկենք որպես **օղ** «կոշիկ» բառի նախաձև, ապա ամեն ինչ տեղը կընկնի: Դա ենթադրել է տալիս, որ հնիլ. *eu-/*ou- արմատի բնիմաստը ևս նույնն է՝ «ոչխար, մորթի, կաշի»: Դա տրամաբանական է, քանի որ մարդու մարմնի առաջին ծածկոցը, առաջին հագուստը հենց մորթին է եղել, հատկապես ոչխարենին: «Ծածկոց, հագուստ» իմաստը բնականաբար ածանցյալ է «մորթի»-ից: Իսկ «ծածկոց, հագուստ»-ից էլ ածանցյալ է «հագնել»-ը: Այս վարկածը հաստատվում է, երբ անդրադառնում ենք **eu-2** «կրել, հագնել» արմատից բխեցվող ժառանգ ձևերին: Դրանց թվում կան ոչ միայն «հագուստ» նշանակող մի շարք բառեր, այլ նաև լատ. *induvium* «ծառի կեղև», *ōmen* «սրունքի մաշկ» բառերը (*Պոկ. 346*):

Այսպիսով, հայերենում առկա են «կաշի» և «ոտնաման» նշանակող հրնդեվրոպական ծագման ոչ փոխառյալ մի շարք բառեր՝ հակառակ մինչ այժմ իշխող տեսակետի¹: Դրանք են՝ **կաշի, խաղախ, խորխ, սեկ, մաշկ, մորթ, մոթալ, օղենի, կոշիկ, տրեխ, մաշիկ, մոյկ, օղ** և այլն: Այս շարքը իրականում ավելի մեծ է: Մի քանի այլ բառերի կանդրադառնանք մեկ այլ առիթով:

¹ «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» գրքում Գ. Ջահուկյանը վաղնջահայերի կենցաղին նվիրված հատվածում արտահայտել է իշխող տեսակետը. «Հավանաբար լայն չափերով չի գործածվել նաև կաշին, որի բնիկ հնդեվրոպական անվանումը հայերենում բացակայում է» (էջ 263): Վերոհիշյալը նկատի ունենալով՝ սա պետք է համարել հապճեպ եզրակացություն, որ ներկայումս հակասում է թե՛ մատենագրական, թե՛ պատմական, թե՛ ազգագրական, թե՛ հնագիտական և թե՛ նույնիսկ լեզվական տվյալներին:

Համառոտագրություններ

- ՀԱԲ - Ն. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979
- ՀՄԲ - Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010
- Մալիս. - Ս. Մալիսասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945
- Ֆաու. - М. Фасмер, *Этимологический словарь русского языка*, тт. 1-4, М., 1964-1973
- Պոկ. - J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 2005 (<http://dnghu.org/indoeuropean.html>)
- Նիկ. - S. Nikolaev, *Database of Indo-European etymology* (<http://starling.rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=|data|ie|piet&first>)
- Վիկ. - Wiktionary (<https://en.wiktionary.org/wiki>)
- OED – Online Etymology Dictionary (<http://www.etymonline.com>)

Hovhannes Zakaryan - Etymology of Several Armenian Words Meaning "Footwear" and "Leather". - Several Armenian words meaning "footwear" and "leather" are not etymologized or are considered to be borrowings. The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward new etymologies for them as native Armenian words of I. E. origin. They are: *կաշիկ* "shoe" and *կաշի* "leather" < *skeu-, (s)kəu-s- "to cover, wrap", *կաշի* < *(s)keu-/ (s)kəu-/ (s)kəi-d- "to cover, wrap", *սեկ* "morocco" < *sek- "to cut" (or *(s)k'ərē-g- > սարեկ > սերեկ > սեկ), *կրեկ* "brogue" < *der-, *drē-kh- "to cut, split, skin", *մաշիկ* "scuff" < *me(i)-, *ma(i)-s- "skin, fell, fur", and *մաշիկ* "skin" < *ma(i)s-g-, *մոկ* "boot" < *me(i)-, *mo(i)ə-g- "to cut down, to strip", and *մոկ* "hide" < *mo(i)-r-th- "to cut down, to strip".

Оганес Закарян - Этимология некоторых армянских слов, обозначающих "обувь" и "кожа". - Некоторые армянские слова, обозначающие "обувь" и "кожа", считаются заимствованными или же не этимологизированными. В статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются новые этимологии, согласно которым данные слова являются исконно армянскими словами индоевропейского происхождения. Эти слова: *կաշիկ* "туфля" и *կաշի* "шкура" < *skeu-, (s)kəu-s- "покрывать, обертывать", *կաշի* < *(s)keu-/ (s)kəu-/ (s)kəi-d- "покрывать, обертывать", *սեկ* "сафьян" < *sek- "резать, отрезать" (или *(s)k'ərē-g- > սարեկ > սերեկ > սեկ), *կրեկ* "лапот" < *der-, *drē-kh- "рассекать, раскалывать, кожа", *մաշիկ* "башмак" < *me(i)-, *ma(i)-s- "кожа, шкура, мех", и *մաշիկ* "кожа" < *ma(i)s-g-, *մոկ* "сапог, ботинок" < *me(i)-, *mo(i)-ə-g- "сокращать, сдирать кожу", и *մոկ* "мех" < *mo(i)-r-th- "сокращать, сдирать кожу".

**ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Հիվանդություն հասկացությունը, իբրև օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության խանգարում¹, ուշագրավ բառադրսևորմաներ ունի միջնադարյան բժշկարաններում (12-17-րդ դդ): Գրաբարում վերջինս արտահայտվում է *հիւանդութիւն, ցաւ, ախտ*, նաև՝ *խօթութիւն* գոյականներով: Այլ է պատկերը միջին հայերենում: *Հիվանդություն* հասկացության՝ այս շրջանի դրսևորումների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով դիտարկել ենք Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն», Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» (12-րդ դ.), Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցավոց», Իշող քահանայի «Գիրք ի վերայ բնութեան», Թարգմանական «Բժշկարան ձիոյ», նաև՝ «Գիրք վաստակոց»² (13-րդ դ.), Ամասիացու «Անգիտաց անպէտ», «Օգուտ բժշկութեան» (15-րդ դ.), Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» և Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանները (16-17-րդ դդ.): Նշված բժշկարաններում ընդհանրապես չի կիրառվել *խօթութիւն* գոյականը, *ախտ*-ը հազվադեպ է հանդիպում (2 անգամ կիրառվել է Աբուսայիդի բժշկարանում)³, իսկ *հիւանդութիւն*-ը և *ցաւ*-ը շարունակել են գործածվել:

Ցաւ գոյականը երրորդ՝ «հիվանդություն» իմաստով⁴ ամենից շատ կիրառվող բառերից է, որը հավասարապես հանդիպում է միջնադարյան բոլոր բժշկարաններում, ինչպես՝ «Վասն միօրեայ ջերմանն, որ պատճառն ի յայտուցէ լինի...կամ ՚ի *ցաւէ* մի, որ այլ անդամսն լինի»⁵: «Եւ *ցաւոց* շարժմունս և զդեղերուն օգտակարութիւն, զոր իմացեալ գրեցին բժշկապետքն» (Աբուս., էջ 116): «Այլ դեղ շատ ազգ *ցաւոց* օգտէ»⁶: «Յաղագս *ցաւուն*, որ կոչի պախրեցաւ»⁷: «Ընդհա *ցաւ* մն է, որ կանայք գիտենան, թէ փորն օձ կա»⁸: «Այս *ցաւս*

¹ Տե՛ս Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 875:

² «Գիրք վաստակոց» թարգմանական երկը մի փոքր վերապահումով ևս ընդգրկել ենք բժշկարանների շարքում, քանի որ վերջինս, բույսերին և պտուղներին առնչվելով, սերտ կապ ունի նաև բժշկության հետ:

³ Տե՛ս Աբուսայիդ, Յաղագս կազմութեան մարդոյն, Ե., 1974, էջ 122, 123: Այսուհետև օրինակները կնշվեն փակագծերում՝ Աբուս. համառոտագրությամբ:

⁴ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Ե., 2000, հ.Բ, էջ 580:

⁵ Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832, էջ 22: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում՝ ՄՀՁՄ համառոտագրությամբ:

⁶ Գիրք վաստակոց, Վենետիկ, 1877, էջ 218: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում՝ ԳՎ համառոտագրությամբ:

⁷ Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցավոց, Ե., 1962, էջ 112 : Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում՝ Գր. համառոտագրությամբ:

⁸ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Ե., 1940, էջ 420: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում՝ ԱԱՕԲ համառոտագրությամբ:

իստ դժար ցաւ է և անողջանալի, հագարէն մեկն չի խալսիր»⁹: «Եօթն ցեղ *ցաւ* են, որ զաւակն ի ծնողացն առնու»¹⁰:

Բուն **հիվանդություն** բառը ավելի քիչ է գործածվել բժշկարաններում: Վերջինս հիմնականում հանդիպում է Գրիգորիսի, Ամասիացու և Ասար Մեբաստացու բժշկարաններում, սակայն նվազ կիրառությամբ է աչքի ընկնում: Օրինակներ. «Եթէ աչքն լոյս սակաւ տեսանէ *ի հիւանդութեանն*, ... նայ վատ նշան է» (Գր. 203): «Թէ ծխես, օգտէ վապային հիւրնդութեան»¹¹: «Վասն, որ իստ շատ հիւանդութիւն լինի» (ԱՍ 158): Միջնադարյան բժշկարաններում **հիվանդութիւն** հասկացությունը հանդիպում է նաև այլ բառադրուսներում, որոնք պայմանավորված են որոշ բառերի վերաիմաստավորմամբ և առաջ են եկել բառիմաստի ընդլայնման ճանապարհով: Դրանցից առաջինը, որ միջնադարյան բժշկարաններում գործածվել է իբրև **հիվանդություն**, **քամի** գոյականն է: Նախ մի փոքր այս բառի մասին: Որքան էլ զարմանալի կարող է թվալ, **քամի** բառանունը վկայված չէ գրաբարյան մատենագրության մեջ: Առձեռն բառարանը այն բերում է ռամկոբէն նշումով¹², ՆՀԲ-ն ևս բնորոշում է «առաւել ռամկօրէն» և տալիս «հողմ և փուք» իմաստները¹³: Գ. Ջահուկյանը ծագումով անհայտ **քամի** բառը¹⁴ տեղադրել է հնագույն հայերենի բարբառային տարբերակների շարքում՝ ուշ բնորոշմամբ՝ **հողմ-այս-սիք-քամի**¹⁵: Միջին հայերենի բառարանում արդէն գտնում ենք **քամի** բառանվան լայն ու բազմիմաստ կիրառություններ՝ հետևյալ իմաստներով՝ «1. Օդ, 2. Հողմ, 3. Փուք, 4. Ցավ, 5. Հողացավ, 6. Փխր.՝ ոչնչություն»¹⁶: Միջնադարյան բժշկարաններում **քամի** բառն այս բոլոր իմաստներով էլ կիրառվել է: Մեզ հետաքրքրողը տվյալ պարագայում «հիվանդություն» իմաստն է, որը, սակայն, ՄՀԲ-ում արձանագրված չէ. այստեղ բերվող **քամի** –ի «ցավ» իմաստը նշված է նեղ առումով՝ «ցավի զգացում» նշանակությամբ¹⁷: **Քամի**-ն բառիմաստի ընդլայնմամբ «հիվանդություն» իմաստով է գործածվել «Գիրք վաստակոց»-ում, «Բժշկարան ձիոյ»-ում, Գրիգորիս Ամասիացու և Ասար Մեբաստացու բժշկարաններում: Բերենք օրինակներ. «Բակլայն՝ ազգի-ազգի **քամիք** ընծայէ»՝ ի մարմինն (ԳՎ 21): Եւ այս ուռուցս կարէ ընծայիլ *ի քամոյ*, որպէս և

⁹ Բունիաթ Մեբաստացի, Գիրք բժշկութեան տումարի, Ե., 1987, էջ 94: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում ԲՍ համառոտագրությամբ:

¹⁰ Ասար Մեբաստացի, Գիրք բժշկական արհեստի, Ե., 1993, էջ 111: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում ԱՍ համառոտագրությամբ:

¹¹ Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպետ, Վիեննա, 1926, էջ 131: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում ԱՍԱՍ համառոտագրությամբ:

¹² Առձեռն բառարան հայկագնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 823

¹³ Տե՛ս Նոր բառգիրք հայկագեան լեզուի, Վենետիկ, 1837, հ.Բ, էջ 977:

¹⁴ Գ. Ջահուկյան, Ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 775:

¹⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 402:

¹⁶ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետ՝ ՄՀԲ), Ե., 2009, էջ 798:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

արծվիքն և բարակցավութիւնն (Գր. 31): Եւ սպեղանին օգտէ *քամուն*, որ ի կոպն լինի (ԱՍԱԱ 215): Այն *քամին*, որ ֆաթիւ ասեն կամ յաղիքն լինայ կամ ի ձվերն (ԱՍՕԲ 405): Կին, որ տղան ձգէ կամ *քամի*, որ ի յարգանդն լինայ (ԱՍՕԲ 424): Նկատենք, որ միջնադարյան բժշկարաններում *քամի*-ն գուգահեռաբար կիրառվել է 3 իմաստով՝ «փորի գազեր», «հոդացավ» և «հիվանդություն»:

«Հիւանդություն» նշանակությամբ, կիրառվել է նաև *վատություն* գոյականը: Գրաբարի բառարաններում վերջինիս համար նշվում են *ծուլություն*, *վախկոտություն*, *անկարգություն*, *չարություն*, *ապերախտություն*, *անպիտանություն* իմաստները¹⁸: Միջին հայերենի բառարանում արդեն գտնում ենք *վատության* իմաստային նոր դրսևորումը: Այն վկայվել է է դեռ 12-րդ դ.՝ ծագումով ասորի բժիշկ Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյ» բժշկարանում. «...և յանձն ելնդնի և մկնատամներ այնէ և ծաղիկ և քութեշ և խէչէփառ և խոզք և այլ *վատութիւնք*» (Աբուս., էջ 201): ՄՀԲ-ն բերում է միայն այս օրինակը, մինչդեռ 13-րդ դ. ասորի բնագետ և բժիշկ Իշօխի «Գիրք ի վերայ բնութեան» բնափիլիսոփայական երկում ևս գտնում ենք հիվանդության իմաստով *վատութիւն*-ը. «...և յստակութենէ ձայնին ծանուցանի առողջութիւն և *վատութիւն*»¹⁹: Այս նույն իմաստով *վատութիւն*-ը կիրառել է նաև 15-րդ դ. մեծ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացին «Օգուտ բժշկութեան» երկում, ինչպես՝ «Եւ սաֆրան որ այս կերպովս լինի՝ գուշակէ ստամոքին *վատութիւն* եւ լերդին եւ զվնասակար ցաւեր» (էջ 24):

Ուշագրավ է հատկապես *նեղ* «անձուկ» բառի վերաիմաստավորումը: *Նեղ*-ը գրաբարում բազմիմաստ բառ է և ածականից բացի կիրառվել է նաև իբրև գոյական՝ «նեղություն, նեղ տեղ, վիճակ», «նեղսրտութիւն» իմաստներով²⁰: Մյուս բոլոր բառարանները՝ այդ թվում նաև ՄՀԲ-ն, *նեղ*-ի համար այլ իմաստ չեն բերում: Պետք է նկատել, սակայն, որ ՄՀԲ-ում կա *նեղոտ* բառը, որի համար նշվում է «հիվանդությամբ տառապող, հիվանդ» իմաստը (ՄՀԲ, էջ 570): Միւ. Հերացու աշակերտ և հետևորդ Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցավոց» բժշկարանում *հիվանդության* փոխարեն ամենից հաճախ կիրառվել է հենց *նեղ* գոյականը: Ի դեպ նկատենք, որ Գրիգորիսի երկը թերևս միջնադարյան բժշկարաններից ամենահարուստն է *հիվանդություն* հասկացության՝ վերը բերված վեց բառային դրսևորումներից հինգը (վատությունից բացի) այստեղ գործածվել են: Բայց ամենաշատը հանդիպում է հենց *նեղ*-ը. Եւ այս երկու *նեղս* մուխատրայ են և վնասակար և մահաբեր (57): Զի այս 2 *նեղս* զխելս կորուսանեն (57): Զի այս *նեղիս* ընծայումն ի սարսամէն լինի (5): Այս *նեղս* ցամբեցնող է ամէն մարմնոյն և աւիրէ զանդաման (36): Նշված բժշկարանի՝ տարբեր հիվանդությունների նկարագրությանը վերաբերող մի շարք գլուխներ հենց *նեղ*-ով էլ վերնագրված են, ինչ-

¹⁸ Տե՛ս Առձեռն բառարան հայկազգեան լեզուի, էջ 751: Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հ. Բ, էջ 789: Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, հ. Բ, էջ 504:

¹⁹ Տե՛ս Իշօխ, Գիրք ի վերայ բնութեան, Ե., 1979, էջ 97:

²⁰ Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հ. Բ, էջ 410:

պես. Դուռն վասն լեզուին եւ իւր *նեղերոյն*, եւ բերանին եւ իւր *նեղերոյն* (էջ 97): Վասն նշանացն *նեղերոյն* (103): Վասն թոքին *նեղերոյն*, պատճառն և նըշանն (էջ 105): Վասն սրտին *նեղերոյն* (110): Վասն աղեաց *նեղերոյն* (137): Վասն երիկամաց *նեղերոյն* (156): Վասն փաղայքշտին *նեղերոյն* (160): Վասն նշանացն *նեղերոյն* (183): Դուռն վասն սուր եւ երկար *նեղերոյն* (192): Գրիգորիսի բժշկարանում *հիվանդությունն* հասկացությունն արտահայտվել է նաև *նեղութիւն* գոյականով, որ գրաբարում ունի «նեղվածք, կարիք, նեղսրտություն և տառապանք» իմաստները: Նկատենք, որ *նեղության* իմաստային այս նոր դրսևորումը ևս արձանագրված չէ ՄՀԲ-ում: Ստորև բերվող օրինակներում ակներև է «հիվանդություն» իմաստի դրսևորումը, ինչպես՝ Եւ թէ *նեղութիւնն* ի գիջութենէ լինի՝ մարմինն կենայ զերդ առողջութեան (147): Ասէ Դիոսկորոս փիլիսոփայն, թէ մարդիք եղեն կարօտ տգրկի վասն իւրեանց *նեղութեանց* (47): Դուռն վասն շարժողական երակաց նշանի, որ ցուցանեն *զնեղութիւն* մարմնոյն (3): Զի հետ այս *նեղութեանս* ուժն հաստատ է և տաքութիւնն յոլով (15): *Նեղությունն* գոյականն իբրև հիվանդություն գործածել է նաև Ամասիացին. Եւ այն մարդն, որ *նեղութիւն* ունի ի յանձն աւծես, աւգտէ (ԱԱԱԱ 172): *Հիվանդութիւն* հասկացության վերոհիշյալ բոլոր բառային դրսևորումները, *հիվանդությունն*, *ցավ*, *քամի*, *նեղ*, *նեղություն* և *վատությունն*, հոմանիշ լինելով, միջնադարյան բժշկարաններում երբեմն կիրառվել են զուգահեռաբար՝ մի դեպքում բառակրկնությունից խուսափելու համար, ինչպես՝ Եւ այս *ցաւս*, որ անուանի իրաս, և այս *նեղս* լինի ի խնծին յակոացսն ուռից (Գր. 101), Վասն նշանացն *նեղերոյն*, որ ցուցանէ զամէն *ցաւսն* (Գր. 183), մեկ այլ պարագայում՝ իմաստային տարբերություններն արտահայտելու նպատակով, ինչպես՝ Գիտացիր, որ *ցաւն* յառաջն իմացնող է, որ մարդոյն բնութիւնն փոխել է և ի *հիւանդութիւն* դարձել (ԱՍ 95): Ապա թէ *հիւանդութենէ* լինի մնացեալ *ցաւն*, այդոր դեղ չեն գրեր բժշկապետքն և դժարօք է իր լաւացնելն (ԱՍ 122):

Այսպիսով, *հիվանդութիւն* հասկացության համար միջնադարյան բրժշկարաններում գործածվել են հոմանիշ վեց բառեր՝ *հիվանդությունն*, *ցավ*, *քամի*, *նեղ*, *նեղություն*, *վատություն*, որոնցից չորսը հանդես են եկել իմաստային նոր՝ միջին հայերենին բնորոշ կիրառություններով:

Hasmik Tadevosyan - Lexical Manifestation of the Concept of “Disease” in the Medical Books of Middle Ages.- This article studies the words, meaning *disease*, which were used in the medical books of middle ages (12-17c.). There were used not only the words *հիվանդություն* and *ցավ*, which were in Grabar, but also four new words: *քամի*, *վատություն*, *նեղ*, *նեղություն*, which have similar meaning as the above mentioned words and are caused by appearance of new meanings.

Тадевосян Асмик - Лексические проявления понятия “болезнь” в лечебниках средневековья.- В статье рассматриваются слова, обозначающие *болезнь* и употребившиеся в лечебниках средневековья (12-17вв.). В этих лечебниках были использованы не только слова *հիվանդություն* (*болезнь*) и *ցավ* (*боль*), которые были в грабаре, а также четыре новых слова: *քամի*, *վատություն*, *նեղ*, *նեղություն*, употребления которых обусловлены появлениями новых смыслов.

ԵՐԿԱՐՔԱՌՆԵՐԸ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հնչաշղթայում երկբարբառ ասելով՝ հասկանում ենք վանկում երկու ձայնավորների միասնական արտաբերությունը, որտեղ ձայնավորներից մեկը կորցնում է իր վանկարարության գործառույթը: Եթե ձայնավորներից առաջինն է վանկարար, ապա երկբարբառը կոչվում է իջնող երկբարբառ, իսկ եթե երկրորդն է վանկարար, ապա խոսում ենք բարձրացող երկբարբառի մասին: Չարմանալիորեն կան լեզուներ, ուր երկբարբառ հասկացության մեջ իրար հաջորդող ձայնավորները չունեն մեկը մյուսի նկատմամբ իշխող դիրք, այլ երկու ձայնավորներն էլ հավասարաթեք են, ինչպես լատիշերենում և նիվխերենում: Հնչյունաբանության մեջ տարբերակում են նաև այսպես կոչված հնչյունային և հնչույթային երկբարբառներ, ասենք՝ ռուսերենում «*большой*» բառի *ой*-ը հնչյունային երկբարբառ է, մինչդեռ հնչույթաբանորեն այն ձայնավորի և յ բաղաձայնի կապակցություն է: Մեր ուսումնասիրությունը համաժամանակյա է և չի դիտարկում պատմական հնչյունաբանության հարցեր: Որպես կանոնական ընդունում ենք Մ. Աբեղյանի մոտեցումը, որը հեղինակը ձևակերպել է դեռևս նախանցյալ դարի 90-ական թթ.: Այն է՝ «Մեր հին ու նոր լեզուների գլխավոր տարբերությունը նրանում է կայանում, որ մեր նոր լեզուն (բարբառները) ինչպես քերականության, նույնպես և հնչյունաբանության մեջ պարզության է դիմում: Երկբարբառները բաղադրյալ հնչյուններ են, այնինչ ձայնավորները պարզ հնչյուններ են, երկբարբառ հնչյուններ ունենալը մեր հին լեզվի գրաբարի հատկությունն է, այնինչ նոր լեզուն (բարբառները) թոթափել է երկբարբառ հնչյունները, այդ բաղադրյալ երկձայն ձայնավորներին փոխանակել տալով պարզ ձայնավորներ»:¹

Գուցե այժմ եկել է մի ժամանակաշրջան, որ նորից պետք է ընդունենք, որ հայերենը սկսել է գործածել երկբարբառներ: Մեր կարծիքն այն է, որ ամեն մի լեզու, կրելով այլ լեզուների ազդեցությունը, ոչ թե յուրացրել է օտար լեզուների այս կամ այն հատկանիշը, այլ փորձում է դրանք համապատասխանեցնել իր քերականությանը, իր հնչյունաբանությանը՝ *սուիտա*, *աուդիտ*, *Լիոն*, *Նյու Յորք*, *Նյու Ջերսի*, *գլաուկոմա*, *նեոլիտ*, *նեոն*, *ռադիո*, *Կաուտսկի*, *կաուչուկ* և նման բազմաթիվ օտար փոխառություններ ենթարկվում են մեր կանոններին՝ մեր հնչարտաբերությանը: Ինչ խոսք, օտար լեզվով խոսելիս աշխատում ենք պահպանել դրանց հնչարտաբերությունը: Այն, որ արևմտահայերեն ուղղագրությունը մեծ մասամբ պահպանել է գրաբարյան գրությունը և սովորաբար օտար փոխառություններում կիրառում է այդ գրությունը, դեռևս չի նշանակում՝ թե՛ բուն և թե՛ փոխառյալ բառերում պետք է ունենանք այդ գրա-

¹ Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Ը, Ե., 1985, էջ 295: «Գրաբարի երկբարբառներ» անվանումով այն առաջին անգամ տպագրվել է 1890թ. «Նոր դարում»:

յին արտասանությունը: Խոսքը կենդանի իրողություն է, իսկ գրաբարում այն կարող է լինել ավանդական: Այս առումով, գտնում ենք, որ արևմտահայերենում չեն առաջացել նոր հնչույթներ և երկբարբառներ՝ *յուր, հյուր, դյուր, թյուր, նյութ, շյուղ* և այլ ձևերում առկա է նույն հնչարտաբերությունը, ինչպես և բառավերջում՝ *անկյուն, սոսափյուն, միություն* և այլն: *Էօժեն* և *քեռշք* բառերում չկա երկբարբառ, ինչպես չկա երկբարբառ *նեռլիթ, նեռն, Գեղեռն* և այլ բառերում: Այս բառերում կողք կողքի հանդես եկող ձայնավորները կա՛մ հնչում են բաղաձայն + ձայնավոր (այսուհետև՝ բ+ձ) կապակցություն՝ *քյոշք, արդյոք, ոստյոք*, կա՛մ բաժանվում տարբեր վանկերի՝ *է-օժեն, նե-ռ-լիթ, ոստի-ռ, Մարի-ա*:

Նկատենք, որ լեզուն փորձում է պահպանել իր հնչարտաբերությունը ինչպես հատույթային, այնպես էլ վերհատույթային մակարդակներում. այդ է, որ երբեմն *ակցենտ* հասկացություն է համարվում, երբ օտար լեզվով խոսելիս պահպանում են մայրենիի արտաբերությունը:

Գրական հայերենի երկու տարբերակներում էլ երկբարբառները չեն պահպանվել. դրանք վերածվել են պարզ ձայնավորների կամ ձայնավոր+բաղաձայն (այսուհետև՝ ձ+բ) կապակցությունների²: Այդ գործընթացն սկսվել է 11-րդ դ., ինչպես նշում է Մ. Աբեղյանը, և ընդհանուր հայերենի հատկանիշ է: Երկու գրականներն ունեն վեց պարզ ձայնավորներ (չկա քմայնացված /չքրմայնացված ձայնավորների հակադրություն. օրինակ՝ երկու *ռ* կամ երկու *հ*): Արտասանական մակարդակում հնչույթային տարբերությունները դիտարկվում են ոչ թե որպես նոր հնչույթներ, այլ նույն, միևնույն հնչույթի դիրքային տարբերակներ, քանի որ բառային մակարդակում դրանք իմաստային տարբերակվածության չեն հանգեցնում: Այն, որ առանձին արտաբերողներ գործածում են օտար հնչումներ, չի նշանակում, թե հայերենի հատկությունն է. դա պարզապես դրանց կրթական մակարդակի արտացոլումն է: Անշուշտ, բացի օտար ազդեցությունից այդպիսի կարծիքի պատճառը կարող է լինել դասական ուղղագրությունը՝ *իւ չու* (արտասանական մակարդակում), ինչպես նաև մեկ վանկի սահմաններում երկու ձայնավորների առկայությունը՝ *առուդիտ, Լեռն, իռն, միակ* և այլն: Վերջիններս հնչարտաբերական մակարդակում կարող են դիտվել որպես երկբարբառներ:

Հնչարտաբերության մակարդակում, ինչպես նկատում է ակադ. Էդ. Աղայանը, հնարավոր է մեկ վանկից ավելի հնչակապակցությունների միասնական արտաբերություն. այսպես օրինակ՝ *միակ* (նաև՝ *թիակ, ձիուկ, դիակ*) բառը կարող է հնչվել որպես մեկ վանկ, այսինքն՝ այստեղ *իւ*-ն կարող է դիտվել որպես երկբարբառ: Նույնը նաև գրական արևելահայերենում կարող ենք դիտարկել այն դեպքերում, երբ փոխառյալ բառերը, բառակապակցությունները կամ հապավումները կարող են դիտվել որպես երկբարբառային դրսևորումներ՝ *Ռիո դե Չանեյրո, Մառ Յզե Դուն, նեռռեպիզմ, գլաուկոմա*,

² Որոշ լեզվաբաններ ձայնավոր+յ բաղաձայն կապակցությունները՝ *ոյ, այ, ույ, էյ, իյ*, դիտում են որպես երկբարբառներ կամ երկհնչուններ, մինչդեռ դրանք երկու հնչունների կապակցություններ են:

ՄԵԱՏՆ և այլն: Նշված բոլոր դեպքերում հայերենի հնչույթային համակարգը դիտարկում է սրանք որպես տարբեր վանկերի դրսևորումներ՝ **նե-ո-ոե- ա- լիզս:**

Հայերենում երկբարբառներից խուսափելու միջոց է նաև ձայնավորների միջև *յ* ձայնակապի առկայությունը (գրային մակարդակում այն դրվում է **ա, ո** ձայնավորներից հետո *Մարոյի, Աննայի*, բայց՝ *Գայանեի, վերարկուի, Մոջիի*), որը մի տեսակ վանկաբաժանի դեր է կատարում՝ *Մարի-ա, Մա-րի-յա*: Սովորաբար այդ *յ*-ն միանում է հաջորդ ձայնավորին, որը հայերենի վանկատման կանոններից մեկն է, երբ կից ձայնավորների միջև գտնվող միակ բաղաձայնը անցնում է հաջորդ վանկ:

Վիճարկելի է այն դրույթը, թե ինչպես են արտասանվում բառամիջում *բաղաձայն+յ* կապակցությունները. *արդյոք, միություն, ընտանյոք, անկյուն* և այլն (*արդ-յոք* և *ար-դյոք, ան-կյուն* և *անկ-յուն* և այլն): Որոշ հետազոտողներ այն կարծիքին են, թե գրության մեջ արտահայտված *իւ* կապակցությունը բառակցքում և բառամիջում ունի երկբարբառային դրսևորում, ուրիշները գտնում են, որ այն քմայնացված պարզ ձայնավոր է:

Երկու կարծիքներն էլ ճիշտ չեն. տվյալ դեպքում խոսքը ոչ թե գրաբարյան հնչարտաբերության, այլ ժամանակակից երկու գրականներում այդ նույն տառակապակցությունների հնչման մասին է: Բոլոր դեպքերում և բառի բոլոր դիրքերում նշված կապակցության գրությունը համապատասխանում է *բաղաձայն+ձայնավոր* հնչմանը, այն է՝ *[յու]*: Այդ հնչումը պահպանվում է ինչպես բառի բացարձակ սկզբում՝ *իւր*, այնպես էլ բառամիջում՝ *նիւթ, հիւթ*, ինչպես նաև բոլոր *-թյուն-ով* կապակցություններում՝ *գիտություն, միություն* և այլն:

Գրաբարյան բառավերջի *իւ* կապակցությունը ինչպես գրաբարում, այնպես էլ ժամանակակից երկու գրականներում հնչում է *[իվ]*, օր.՝ *պատիվ, հացիվ, բանիվ* և այլն: Եթե գրաբարում *յ*-ն դիտվել է որպես երկբարբառի տարր, ապա աշխարհաբարում այն արդեն պարզ ձայնորդ է, և ասենք *հայ, բայ, նոյ, գոյ* և նման ձևերում մենք ունենք երեք հնչույթից կազմված բառեր, և *հայ-հա, բայ-բա* գույգերը չեն հակադրվում երկբարբառ-ձայնավոր հակադրությանը, այլ՝ *յ-Օ* հակադրությանը: Բառի աճելու դեպքում *յ*-ն անցնում է հաջորդ վանկ՝ *հա-յի, գո-յություն, նո-յի* և այլն, ինչպես՝ *հաց-հա-ցի*:

Այսպիսով, ինչպես գրական արևելահայերենում, այնպես էլ գրական արևմտահայերենի ժամանակակից վիճակում չկան երկբարբառներ:

Robert Tokhmakhyan – The Diphthongs in Western Armenian. - Some scholars of Western Armenian argue that there are diphthongs in Western Armenian. They totally believe that combined sounds like եո(yo) and իւ(ü) are diphthongs, and try to prove that the latter is a separate phoneme; ու (u) palatalized vowel.

In the present article the author presents his viewpoint that we deal with sequence of two vowels in case of combined sounds եո(yo), which are divided into separate syllables. In the case of իւ(ü) we have the sequence of ե+ու, as it is in Eastern Armenian.

Thus, in both literary languages (Eastern Armenian and Western Armenian) there are neither diphthongs nor palatalized vowels.

Тохмахян Роберт – Дифтонги в западноармянском. - Некоторые исследователи западноармянского придерживаются того мнения, что в западноармянском есть дифтонги, причем таковыми считаются сочетания *ɫɛ* и *ʃɛ*, рассматривая последний как отдельную фонему – палатализованную гласную *ɲɛ*.

В статье выражается точка зрения, что в случае сочетания *ɫɛ* имеем дело с последовательностью двух гласных, которые разделяются на разные слоги, а в случае *ʃɛ* – имеем последовательность *ʃ + ɲɛ*, также как и в восточноармянском. Таким образом, в двух литературных языках отсутствуют как дифтонги, так и палатализованные гласные.

**ԲՆԱԿԱՐԱՆ, ՏՈՒՆ, ԿԱՀ-ԿԱՐԱՍԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԻ
ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ¹**

Գեղարքունիքի մարզի հինգ վարչական միավորներում (Գավառի, Մարտունու, Սևանի, Վարդենիսի և Ճամբարակի) գործառում են Բայազետի, Մշո, Դիադինի, Արարատյան, Ղարաբաղի, մասամբ Վանի բարբառները՝ իրենց յուրահատուկ ենթաբարբառներով ու խոսվածքներով:

Սույն հոդվածում ընդհանուր գծերով կներկայացնենք հիշյալ տարածաշրջանի *տուն* և *տնտեսություն* իմաստային դաշտն արտացոլող բառանունները: Քննվող նյութի իմաստային դաշտն արտացոլող բառանվանումների ցանկում ներառել ենք *շեմ*, *որսնախորշ (պատրիան)*, *առաստաղ*, *երդիկ* հասկացությունների՝ Գեղարքունիքում առկա բարբառային դրսևորումները:

Շեմ հասկացությունը հիշյալ տարածաշրջանում արտացոլված է հիմնականում *շեմ*, *դրրընդի*, *մրդակ*, *ճրխան* բարբառային բառաձևերով:

Գրաբարյան *անդ* բառաձևը Հ. Աճառյանը համարում է բնիկ հայերեն բառ՝ հնդեվրոպական ծագումով, որի ցեղակիցներ են սանս. *ata* (դռան շրջանակը), լտ. *antae* (դռան երկու կողմերի սյուները): *Անդ* «սեամ, շեմք» առանձին անգործածական է, այն պահված է միայն *դրանդ*, *դրանդք*, *դրանդի* բառաձևերում: Իմաստն է նախադուռ, *դռան գավիթ*, *մուտք կամ շեմք*: Կազմված է *դր-դուռ* (հմմտ. դրացի) և հիշյալ *անդ* բառերից²:

Մարտունու շրջանում պահպանված է հնդեվրոպական *անդ* արմատից կազմված *դրանդի* բառաձևը, բայց արդեն հասկացության ոչ լիարժեք իմաստով. *դրրընդի* բառաձևն ունի դռան վերին շեմ նշանակությունը: Հիշյալ տարածքում *շեմ* հասկացության դիմաց գրեթե համընդհանուր կիրառություն ունի նույն *շեմ* բառանունը: Այն գործածական է *ե*-ի երկբարբառային արտասանությամբ՝ *շեմ*, Սևանի, Մարտունու, Վարդենիսի որոշ խոսվածքներում: Ներքին Գետաշենում Մուշ-Տիգրանակերտ բարբառախմբին բնորոշ *շեմ-գալ* (շեմ+կալ արմատների բառաբարդմամբ առաջացած) բառանունն է արձանագրված, Ճամբարակում բառը վկայված է *շրմբափետ* գուգաբանությամբ, որը շեմք+փայտ բաղադրիչներից կազմված բառաձև է:

Ըստ Գ.Ջահուկյանի՝ աբխազերենը հայերենի հետ շփման մեջ է եղել հին ժամանակներից սկսած, և *շեմ*-ն ու մի շարք այլ բառեր արդյունք են նրանց հեռավոր ցեղակցության և հնդեվրոպա-աբխազ-ադրդեական հնագույն շփումների և «տարրական ցեղակցության» (մանկական բառեր, բնաձայնություններ, ձայնարկություններ): Գիտնականը հնարավոր է համարում *սեամ*

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ N SCS <<13-6B382>> գիտական թեմայի շրջանակներում:

² Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Ե., 1971, էջ 186:

(սեւ, շեւ, շեւ) բառի արևմտակովկասյան ծագումը, թեև կարծում է՝ նմանությունը կարող է և պատահական լինել³: Ղարաբաղյան խոսվածքներում *շեւ* հասկացության բառանուն է դիտարկվել *մղակ* բառաձևը: Այն գործածական է Վարդենիսի, Ճամբարակի շրջաններում Դաշտային Ղարաբաղից բռնագաղթածների խոսքում (Արտանիշ, Ջիլ, Փամբակ):

Մղակ բառի ծագման հավաստիությունն անորոշ է, չնայած Հ. Աճառյանը գրում է. «Գավառական բառեր անունը կուտանք բոլոր այն բառերուն, որոնք օտար լեզվէ մը փոխ առնված չեն, հայերեն են, բայց միննույն ժամանակ հին մատենագրության մեջ ավանդված չեն, ինչպես ղարաբաղոց *մղակ* «*դուռ*» բառը»⁴: Սակայն մեկ այլ տեղում գիտնականը, ներկայացնելով արաբական փոխառությունները, շինության և շենքի մասեր իմաստային-թեմատիկ խմբում փաստում է նաև *մղակ*-ը՝ որպես դռան փակ⁵: Ղարաբաղի բարբառում առ այսօր էլ *մղակ* բառը գործածվում է *դռան օղակ* իմաստով: Չի բացառվում *մղակ* բառի արաբերենից փոխառյալ լինելը: Մեր կարծիքով՝ ժամանակի ընթացքում *մղակ* բառը դռան փակ իմաստից բառիմաստի ճյուղավորմամբ ձեռք է բերել նախ *դուռ* իմաստը, ապա ժամանակի ընթացքում *դուռը* և *շենը* իմաստային համանիշություն են ձեռք բերել, և բառը ստացել է *շեւ* իմաստը: Այսօր էլ *մղակ* բառը փոխաբերացմամբ բառիմաստային մեկ այլ դրսևորում է ձեռք բերել. Ճամբարակ քաղաքի, ինչպես նաև Դրախտիկ գյուղի խոսվածքներում գործածվում է շենքին կից *բակ* իմաստով (Մըղակումը խօսիչքը հաղ էն անըմ):

Գեղարքունիքում *շեւ* նշանակության բառանուն ենք դիտարկել նաև *ճրխան*-ը: *Ճրխան*-ը *ծխնի* բառի բարբառային տարբերակն է: Այն վկայված է Սևանի Գեղամավան և Մարտունու Վարդենիկ գ.-երում: *Շխնի* բառի առաջնային իմաստն է՝ հնատիպ դռների ներքնում և վերնում հատուկ ելուստ, որ ներքևից հագնում է շեմի փոսիկին, իսկ վերևից՝ դրանդիին: Քանի որ այդ ելուստը եղել է շեմի վրա, հավանաբար այստեղից էլ հայերենի որոշ բարբառներում *ծխնի*-ն իր *ճխան* բարբառային տարբերակով իմաստային բնեռացումով ձեռք է բերել *շեւ* նշանակությունը: Ջահուկյանը չի բացառում *ծ(դ)խնի* բառի ուրարտական ծագումը⁶: Վարդենիսում (որի բնակիչները Դիադինից են) որպես կիսաբաց դուռ *ճըղլսիկ* բառանունն է գործածվում, որը նաև *շեւ* իմաստն ունի (*ճըղլսիկի* վըրեն է կայնէ): Վարդենիկ գյուղում արձանագրել ենք *կըշտանոց* բառանունը, որը հավանաբար դռան շրջանակն է: Օր.՝ Էտա դ ուռն, օր կըխաքի *կըշտանոցի*: Մեր կարծիքով, հիշատակված բառանունը *կուշտ (կողք)* արմատի և *-անոց* վերջածանցի համադրությամբ առաջացած բառաձև է:

³ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանաշրջան* (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Ե., 1987, էջ 602:

⁴ Հ. Աճառյան, *Հայերեն գավառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 4:

⁵ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 1951, էջ 199:

⁶ ՀԼՊՆԺ, էջ 439:

Որմնախորշ: Սենյակում պատի մեջ թողած՝ երեսը բաց պահարան հասկացության բառանուններից Գեղարքունիքում առկա են **ակնատ, պարրհան, պատուխան, դոլար, թարեք** բառաձևերը:

Ակնատ-ը բնիկ հայերեն բառ է, որն առաջացել է ակն(աչք) և հատ(ել) բաղադրիչների բառաբարդումից: Հ. Աճառյանը վկայակոչում է **ակնատ** բառի գավառական ձևերը՝ **ակնատ, հակնատ**, որոնք բարբառներում հանդես են գալիս թռչուն որսալու ցանց, ինչպես նաև **ակնատ**՝ պատի մեջ բացված դարան կամ սենյակից սենյակ բացված փոքր պահարան նշանակությամբ⁷: **Ակնատ** բառաձևը **պատրհան** իմաստով արձանագրել ենք Գավառի Մուխան գյուղում:

Հայերենի բարբառների մի սովոր մասում որմնախորշ իմաստով գործածվել է **պատրհան** բառանունը: Հ. Աճառյանը **պատուհանի** համար ներկայացնում է երկու իմաստ՝ 1. լուսամուտ, 2. պատի մեջ պահարան: Ըստ Ջահուկյանի՝ **պատուհան** բառի հին ձևը **պատուրհան**-ն է՝ առաջացած իրանական **paturhānā (pati-frāna)** ձևից⁸: Լ. Հովհաննիսյանը նշում է, որ **պատուհան** բառի իրանական ծագման փաստարկումներ կան որոշ իրանագետների մոտ: Գիտնականը ավելի հավանական է համարում Բենվենիստի բացատրությունը. «Միջին իրանական **pātfrās**-ի համաբանությամբ՝ հյ. **պատուհան**, տեսնում է միջ. իրանական ***pātrfān <*pāti.pāna.*frāna**, սնս. **prāna**, «փչել» ***patifrana** կազմության մեջ տեսնելով «ողանցք, լուսամուտ» իմաստը (**BSL, 1963, 63**), մանավանդ որ ***patifrana**-ի համապատասխանությունը ակնհայտ է հատկապես **պատուհանի պատրհան** տարբերակի հետ, որն ավելի հին ձև է և պահպանված է նաև արդի որոշ բարբառներում»⁹: **Որմնախորշ** հասկացության դիմաց **պատրհան** և **պատուհան** բառանունները Գեղարքունիքի մարզում փաստված են մի քանի տարբերակով: Ղարաբաղի բարբառին բնորոշ **պրտրհան (ա>ը)** բառաձևը առկա է Ճամբարակի խոսվածքում (բնակիչները, ինչպես գիտենք, հին արցախցիներ են): **Պատուխան (հ>խ)** հնչատարբերակով է վկայված Գավառի Այրիվանք, Վարդենիսի Մաքենիս և Մարտունու Վարդենիկ գ.-երի խոսվածքներում: **Պաղրիխան** (բառամիջի խուլի ձայնեղացմամբ) բառաձևը գործածվում է Սևանի Գեղամավան գ. (Մակուից վերաբնակեցվածներ): **Պատրիխան (հ>խ)** հնչատարբերակով բառն առկա է Գավառի Մարուխան գյուղում:

Պատի մեջ թողած, երեսը բաց պահարան իմաստով Գեղարքունիքում առկա է նաև **թարեք** բառանունը, որը վկայված է Գավառի Հացառատ գյուղում: Ա.Խաչատրյանը, հետաքրքիր դիտարկում կատարելով **թատ** բառի ծագման շուրջ, քիչ հավանական է համարում Աճառյանի այն կարծիքը, որ այն փոխառված է պարսկերեն tar, tarak «գագաթ, ծայր» բառից: Նա **թատ**՝ 1. «դարակ, **թարեք**», 2. «գառիթափ, բարձունք», 3 «ձյան վրա բարձրադիր,

⁷ ՀԱԲ, հ. 1, էջ 109:

⁸ Նույն տեղում, էջ 540:

⁹ Լ. Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990, էջ 257:

երթնեկությունից ամրացված ճանապարհ», 4. «թռչունների հանգրվանելու ձող» իմաստերով բառերում շատ է կարևորում թառի՝ որպես ձյան վրայի ճանապարհի, բարձրադիր (գետնից բարձր) լինելը, որն էլ, ըստ բարբառագետի, ընկած է բառի առաջացման հիմքում, և այդ բառերի համար կանխադրում է **pt* նախաձևը¹⁰:

Պարսկերենից փոխառյալ *դոլաբ* բառանունը՝ որպես որմնախորշի նշանակելի, գործածական է Գավառի, Ճամբարակի և Մարտունու որոշ խոսվածքներում (Արտանիշ, Գեղարքունիք, Ծովինար գ.-եր):

Երդիկ բառը վկայակոչել են դեռևս 5-րդ դարի մատենագիրները: Բառի ստուգաբանությունը հստակ չէ: Գեղարքունիքի՝ Դաշտային Ղարաբաղից բռնագաղթածների խոսքում այն հանդես է գալիս բառի արմատական *երդ* բառաձևով (*հերթ*՝ Վարդենիսի Ջիլ գ.), իսկ Սևանի, Գավառի, Մարտունու խոսվածքներում՝ *երդ* բառային սկզբնաձևից *-իկ* վերջածանցի համադրությամբ ձևավորված *երդիկ* բառանվամբ: Գեղարքունիքի տարածքում գործառում է *երդիկ* բառանվան *հ'երթիկ*, *հ'երտիկ* շնչեղ *հ'* ձայնեղով տարբերակը (Գեղամավան, Ծաղկունք), նաև *երդիք* բառի հոգնակի հայցական հոլովաձևով բառաձևը՝ *հ'երթիս* (Վարդենիկ, Վաղաշեն, Լուսակունք), *երտիս* (Ծովակ):

Որպես *երդիկ* հասկացության զուգաբանություն Ճամբարակի Արտանիշ գյուղում փաստված է արաբերենից փոխառված *բուխարիկ* բառանունը:

Առաստաղ: Այս հասկացության բարբառային զուգաբանություններից Գեղարքունիքում գործածական են *առիք*, *օջորք*, *լամփա*, *պատալօլ* բառանունները: Տարածական ընդգրկումով Գեղարքունիքում ամենագործածականն են *առիք*-ը և *օջորք*-ը: Հ. Աճառյանը *առիք*-ը համարում է բնիկ հայերեն բառ՝ հնիս. *stel* - *դնեթ, գետեղեթ, բարձրացնեթ, կանգնեցնեթ, ցից, սյուն, յենարան* արմատից՝ *առ* մասնիկով¹¹: Գ.Ջահուկյանը *առիք* (*առաստաղ*) բառի ստուգաբանությունը կասկածելի է համարում իմաստային զգալի տարբերության պատճառով¹²: *Առիք* բառանունը՝ *հառիք*, *հ'առիք*, *հսնիք*՝ հնչյունական տարբերակներով, գործածվում է հիմնականում Գավառի, Մարտունու, Վարդենիսի խոսվածքներում: Գեղարքունիքի մարզի Մշո, Բայազետի խոսվածքներում տան հիմնավոր մաքրություն իմաստով գործածվում են *պատուհառիք* կամ *պատուհառիք*, ինչպես նաև *ավելխորթ*, *խորթուսուրփ անել* յուրօրինակ բառաձևերը (Օրինակ՝ Վարդենիկ գյուղում կասեն. «Մաբախտան *պատուհառիքի* էմ»):

Օջորք: Հ.Աճառյանի կարծիքով՝ *օջորք* բառը սերտ աղերսներ ունի *աճառ* արմատի հետ, որը, ըստ նրա, արաբական փոխառություն է՝ *iġġār* «տանիք»¹³: Միջին հայերենում արդեն գործածվում է *ոճոռք* բառը՝ իբրև առաստաղ: *Առաստաղ* հասկացության *օջորք* բառանունը Գեղարքունիքի

¹⁰ Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Ե., 2010, էջ 32-33:

¹¹ ՀԱԲ, հ. 1, էջ 254:

¹² ՀԼՊՆԺ, էջ 188-189:

¹³ ՀԱԲ, հ. 1, էջ 140:

մարզում վկայված է Մակուի խոսվածքներում (Սևանի Գեղամավան (*հառիք* բառին զուգահեռ), Ծաղկունք գ-երում):

Համփա: Գ.Ջահուկյանը գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները ներկայացնելիս դրանց մեջ առանձնացնում է նաև *լամփա* -ն (**lmp-*)՝ «առաստաղի տախտակ» իմաստով¹⁴: *Համփա*-ն մեկուսացված գործածվում է Գեղարքունիքի մարզում՝ Ղարաբաղ-Շամախիի միջբարբառի խոսվածքներով խոսող բարբառային միջավայրում (ինչպես օրինակ՝ Փամբակ, Ջիլ գ.-եր): **Առաստաղ** հասկացության բառանունների մեջ հիշատակված ռուսերեն *պատալոկ* բառանունը գրեթե համընդհանուր կիրառություն ունի:

Այսպիսով՝ քննելով Գեղարքունիքի մարզում առկա տուն և տնտեսություն իմաստային դաշտի որոշ բառանվանումներ՝ գալիս ենք հետևյալ եզրակացության:

1. Հայ բարբառները շատ հաճախ անադարտորեն պահպանում են հնդեվրոպական բառանունները, ինչպես օրինակ՝ *դրանդի, ակնատ, առիք, լամփա*:
2. Հիշյալ տարածքում բառանունները երբեմն հանդես են գալիս որոշակի իմաստային տեղաշարժերով, ինչպես *դրանդի, մրդակ, ծխնի, ճղակ* բառերի դեպքում:
3. Պատմական հանգամանքների բերումով լեզուն կամ բարբառը անմասն չի մնում փոխառություններից: Գեղարքունիքի մարզի տուն և տնտեսություն իմաստային դաշտի բառանուններից փոխառյալ են համարվում *շեմ, օջորք, պատրիան, բուխարիկ* բառանունները:
4. Կան նաև չստուգաբանված և վիճահարույց ստուգաբանությամբ բառեր, ինչպիսիք են՝ *երդիկ, առիք, մղակ, թարեք* և այլն:

Khachatryan Hasmik - Words Reflecting the Semantic Thematic Group of Apartment, House, and Kitchen Utensils in the Dialects of the Gegharkunik Province.- The article examines the words reflecting the concepts of շեմ (threshold), պատրիան (recess), առաստաղ (ceiling), երդիկ (skylight) in the semantic field of “house and household” in the dialects of the Gegharkunik province. These include դրանդի, առիք, լամփա, which are considered of Indo-European origin. The following words of the abovementioned semantic field in the Gegharkunik dialects are considered borrowed: շեմ, օջորք, պատրիան, բուխարիկ.

Хачатрян Асмик - Словоформы семантической группы рúսակարան (квартира), տուն (дом), կահ-կարասի (домашняя утварь) в говорах Гегаркуникской области Армении.- В статье исследуются диалектные словоформы понятий շեմ (порог), պատրիան (окно), առաստաղ (потолок), երդիկ (дымоход в потолке), входящих в семантическое поле «дом и хозяйство» в диалектах Гегаркуника. В этой группе словами индоевропейского происхождения считаются դրանդի (порог), առիք (потолок), լամփա (лампа). В Гегаркунике из указанной семантической группы слов заимствованы շեմ, օջորք (потолок), պատրիան, բուխարիկ (очаг, камин).

¹⁴ Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 283-294:

**ՏՈՒՆ ԵՎ ՀՅՈՒՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԻ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ¹⁵**

Ինչպես վկայված է շրջանառվող լեզվաբանական գրականության մեջ, հայերենը տան և նրա մասերի վերաբերյալ բնիկ հնդեվրոպական բառանունները լավ է պահպանել: Դրանցից հիշատակության են արժանի **տուն, խուղ, դուռն, անդ, որմն, ձեղուն** և այլն: **Տուն** հասկացության **տուն** բառանունը հնդեվրոպական լեզուների մեծ մասում տարածված արմատներից է *dem-/dom (հայ. տուն):

Բարբառային հայերենում **տուն** հասկացությունը դրսևորվում է հիմնականում **տուն** բառանվամբ և գրեթե համահայերենյան կիրառություն ունի: Քանի որ բառը կարճ է և բարեհունչ, բարբառներում համարյա փոփոխությունների չի ենթարկվել՝ չհաշված բարբառային առանձնահատկությունները: Այսպես՝ Ալաշկերտում, Ախալցխայում, Երևանում, Կարինում բառը վկայված է **տուն** հնչատարբերակով, Զեյթունում, Խարբերդում, Հաճընում, Համշենում, Նոր Նախիջևանում, Պոլսում, Սեբաստիայում, Տիգրանակերտում խուլի ձայնեղացմամբ՝ **տուն>դուն**, Ակնում, Ասլանբեկում, Պարտիզակում՝ **դուն**, Ագուլիսում, Գորիսում, Արցախում՝ այս խոսվածքներին բնորոշ **ու>օ** հնչյունափոխությամբ պայմանավորված, **տուն>տոն**, Սվեդիայում՝ **դոն**՝ ըստ Աճառյանի¹⁶, իսկ ըստ Գ.Հանանյանի՝ Սվեդիայի բարբառի Խտրբեկի խոսվածքում՝ **դէուն**, քանի որ **ու** ձայնավորին շեշտակիր դիրքում համապատասխանում է կա՛մ առաջնային շարքի շրթնայնացած օ-ն կա՛մ օյ, էու, օու երկբարբառները, օր.՝ **տուն>դէուն, շուն>շօուն, ուղտ>էուղդ**¹⁷:

Հետաքրքրական է նաև Աճառյանի դիտարկումը, որում լեզվաբանը, վկայակոչելով Մառին, կարծիք է հայտնում, որ վրացերենը մեզանից փոխառել է **տուն** արմատը և գործածում է **տանուտորթա** «ժամանակ տանուտերութեան», **սատանտրո** «տանուտեր» բառերում: **Տուն** արմատը գործածվել է նաև Բուլանուխի մոտ գտնվող Հասան Կորանի քրդերի խոսվածքում՝ **տընշէնօ** «տնաշեն» բառաձևով¹⁸: Որպես **տուն** հասկացության բառանուն Ա.Հանեյանի «Տիգրանակերտի բարբառը» աշխատության մեջ արձանագրված է **վընազրոանք** բառաձևը¹⁹, որը **բնակարան** բառի բարբառային հնչյունական մի տարբերակ է: Հարկ է նշել, որ հայերենի բարբառներում շատ տարածված ու

¹⁵ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ N SCS «13-6B382» գիտական թեմայի շրջանակներում:

¹⁶ **Հ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ.4, Ե., 1979, էջ 428:

¹⁷ **Գ.Հանանյան**, *Սվեդիայի բարբառը*, Ե., 1995, էջ 38:

¹⁸ *ՀԱԲ*, հ.4, էջ 428:

¹⁹ **Ա.Հանեյան**, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 224:

սովորական են հիշյալ բառանվան **բրնագռել, բրնագրովել** բայական բառաձևերը, հասկապես՝ Նոր Բայագետում, Մուշում, Բասենում:

Տուն արմատով հետաքրքիր բառաձև է գործածվում Գեղարքունիքի մարզում՝ Ծովագյուղում (բնակիչները գաղթել են Արծափից 1830-ական թթ.) **փրլից տուն**, որ նշանակում է գետնափոր տուն:

Հայերենի բարբառները «փոքրիկ տուն, խրճիթ» իմաստով բառանունների առավել քան հարուստ ներկայանակ ունեն:

1. **տունճիկ**: Այս բառանունը փաստում է Աճառյանը որպես «պզտիկ հիւղակ»։ Տունճիկին մեջ մարդ մը կը բնակէր (Պուլիս?)²⁰: Կարծում ենք՝ բառը **տուն** արմատից է, փաղաքշական-փոքրացուցիչ **-ճիկ** ածանցով:

2. **հիւղ**: ՆՀԲ-ն բառը ներկայացնում է առանց վկայության, Աճառյանը այն համարում է բնիկ հայերեն բառ և բերում է մատենագրական վկայություններ՝ **հիղ, հուղ, հեղ, հեղք** տարբերակներով. **Հիղք** մրգապահացն պարիսպ է և ամրութիւն, Իբրև **գհիղս** մրգապահաց: Փաստում է նաև, որ Ջեյթունում առկա է **հուղ** բառաձևը՝ որպես հողաշեն խրճիթ²¹:

Հայերենի բարբառներում առկա **հյուղ** բառանունը՝ որպես խեղճ տնակ, խրճիթ, դրսևորված է նաև **խուղ** բառաձևով: Հ.Աճառյանը, անդրադառնալով **խուղ** բառին և փաստելով դրա առկայությունը Խարբերդում խրճիթ իմաստով, կարծում է, որ **խուղ**-ը նույն **հյուղն** է: Իսկ **խուղը** մեկ այլ իմաստով՝ որպես քարաշեն փոքր շենք, որի մեջ մածուն և այլ տեսակ կաթնեղեն են պատրաստում, գործառում է Խոտրջուրում: Նույն իմաստով Մասունում առկա է **խըղտուն** (այսինքն՝ **խուղ+տուն**) բառաձևը: Բաղեշում **խուղ** բառն ունի «գոմաներում շինված խրճիթ» նշանակությունը, որից էլ հիշյալ խոսվածքում **խուղվոր**՝ հյուղում ապրող, բառանունը: Հաճընում **խուղ**-ը այգիներում շինված տնակն է: Թրքախոս հայերը Ադանայում նույնպես պահել են **խուղ** «հյուղ» բառը: Պետոյանը ևս Մասունի խոսվածքում արձանագրել է **խուղ** բառանունը՝ հյուղ, խուց նշանակությամբ, որը պատրաստում են ամառային արոտավայրերում որպես բնակարան, բայց ծածկում են միայն կանաչ ճյուղերով²²:

Հարկ ենք համարել ներկայացնել «Հայոց լեզվի բարբառային բառարանում» առկա **խուղ** բառի բառիմաստային զարգացումները, ինչպես նաև նրա տարածվածության սահմանները: **Խուղ**- 1. Շուլավեր, Շիրակ, Մասուն, Խարբերդ, Մուշ՝ հյուղակ, խրճիթ, 2. Բալու, Հաճըն՝ Այգիների մեջ չորս սյուների վրա հենված 7-8 մետր բարձրությամբ կառուցվածք՝ այգին դիտելու և հսկելու համար: 3. Խոտրջուր՝ Քարաշեն փոքր շենք, որտեղ մածուն, կարագ, պանիր են պատրաստում, այսինքն՝ կաթնատուն: 4. Քղիում տան գետնե հատակը, որը, սակայն, մեր կարծիքով՝ կապ չունի հյուղ բառի հետ, այն թերևս հող բառի բարբառային հնչյունակական տարբերակն է: 5. Շիրակում՝ արոտավայր, 6. Շիրակում՝ ամառանոց²³:

²⁰ **Հ.Աճառյան**, *Հայերեն գաղափարական բառարան* (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 1041:

²¹ *ՀԱԲ*, հ.3, էջ 99:

²² **Վ.Պետոյան**, *Մասունի բարբառը*, Ե., 1954, էջ 133:

²³ *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Բ, Ե., 2002, էջ 378:

Շարունակելով *հյուղ* բառի քննությունը՝ Աճառյանը համարում է, որ հայերենից փոխառյալ է քրդերենում առկա *holik*-ը, որն այնուհետև անցել է Մշո բարբառին *հոլըկ* բառաձևով²⁴: Այսինքն՝ հայերենից անցել է քրդերենին, քրդերենից՝ բարբառային հայերենին: *Հոլըկ*-ը Նոր Բայազետում, Մուշում ամառանոցի համար սարը բարձրացած նախորդների հյուղակն է եղել: Խոսվածքների մի մասում էլ *հոլիկ* բառանունը (Երզնկա՝ *հոլիկ*) նաև այգիների մեջ կառուցված փոքրիկ հյուղակ իմաստն ունի²⁵, որը Կարնո բարբառի որոշ խոսվածքներում առկա է *հոլնիկ* տարբերակով:

Հոլըկ բառանունը սարվորների համար պատրաստված տուն իմաստով այսօր էլ գործածական է Գեղարքունիքի մարզի մի շարք խոսվածքներում, քանի որ նրանց մի մասը Մուշի և Բայազետի բարբառները կրողներն են (Նոր Բայազետ՝ Նորատուս, Գեղարքունիք, Սարուխան գ.-եր, Մուշ՝ Վարդենիկ, Ջորագյուղ, Ծակքար գ.-եր): Սակայն հարկ է նշել, որ հիշյալ տարածքների որոշ խոսվածքներում (Վարդենիս, Ծովակ, Լճավան) *հոլըկ*-ը գործածվում է նաև բույն իմաստով (*շան հոլըկ*, *խավի հոլըկ*):

Խուղ բառի բարբառային տարբերակ է նաև *խուլակ* բառանունը, որը փաստված է ՀԼԲԲ-ում և առկա է Խոտրջուրում *խուլագ*, Ջավախքում *խուլակ* հնչյունական տարբերակներով, որի նշանակությունն է հյուղակ, տնակ, խըրճիթ: Մէ խուլակըմ շինէ, մէչն է մըտէ²⁶: Ըստ Հ.Աճառյանի՝ հայերեն *խուղ* բառից են վրացերեն *խուլա*, *խուխուլա* «հյուղ, խրճիթ, փոքրիկ խանութ» բառերը: Փաստելով Խոտրջուրում առկա *խուլագ* և Ախալքալաքում *խիլակ*՝ հյուղակ, տնակ, հովվի խրճիթ, բառերը՝ լեզվաբանը կարծում է՝ դրանցում լ ձայնորդի առկայությունը ենթադրել է տալիս, որ այդ բառերը նոր ժամանակ հետ առնված փոխառություններ են, այսինքն՝ դարձյալ հայերեն բառը, այս անգամ էլ վրացերենից միջնորդավորված կերպով, դարձյալ անցել է մեր բարբառներին²⁷: Դ.Կոստանյանի «Երզնկայի բարբառում» արձանագրված է *խուզուլ* բառանունը՝ այգիների ու բանջարանոցների մեջ շինված հյուղակ նշանակությամբ²⁸, որը, կարծում ենք, *խուլագ* բառի հնչյունական մի տարբերակ է:

Գ.Ջահուկյանը *խուղ (հիւղ)*-ը բնիկ հնդեվրոպական բառ է համարում *khu-lo - *(s)keu - «ծածկել, փաթաթել» արմատից: Ըստ նրա՝ հ.-ե. *k-h (*ku)-ի դիմաց սովորական *p*-ի կողքին՝ նաև *h*, որը պետք է գա *kh-ով տարբերակից՝ *քի* (*kēuo), և *խուղ* (*khu-lo), այլև *հիւղ* (*(s)keu)- ծածկել, հմմտ. հ.հնդկ. skāuti - ծածկում է, հ.իսլ. cūl անկյուն, ապաստան²⁹: *Հյուղ* բառի ստուգաբանության հետաքրքիր դիտարկում է անում Գ.Ղափանցյանը: Նա կարծես մեր-

²⁴ ՀԱԲ, հ. 3, հ. 2. Ե. 1977, Ե. 1973, էջ 99, էջ 416-417:

²⁵ Դ.Կոստանյան, *Երզնկայի բարբառը*, Ե., 1979, էջ 154:

²⁶ ՀԼԲԲ, հ.Բ, էջ 377:

²⁷ ՀԱԲ, հ.2, էջ 417:

²⁸ Դ.Կոստանյան, *Երզնկայի բարբառը*, էջ 156:

²⁹ Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան* (այսուհետև՝ ՀԼՊ ՆԺ), Ե., 1987, էջ 253, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 2010, էջ 347:

ծում է հայերենի *խուղ* և նրա երկվորյակ *հիւղ* բառերի, ինչպես նաև *ցի* (տան ծածկը) և *քի* (տան կամ քարանձավի վերի դուրս ցցված մասը) բառերի հընդեկրոպական ծագումը, որը, ըստ նրա, մոլի հնդեկրոպաբանները նախալեզվի *sgu* կամ *gu* ծածկել արմատի հետ են կապում: Ըստ Ղափանցյանի՝ հնագույն ժամանակ բառը եղել է երկու ձևով. մեկը՝ *xula*, որից էլ *խուղ*-ը՝ Բաղեշի, Խարբերդի, Կիլիկիայի, Խոտրջուրի և Կարինի (Ախալքալաք) խոսվածքներում, որն անցել է նաև վրացերենին՝ ունենալով տարնմանությամբ և *հիւղ* տարբերակը: Մյուս ձևն է *հիղ* կամ *հեղ*, որը համեմատելի է իտերեն *hila* կամ *hēla* բառաձևերի հետ, ունի սկզբում դրված «տուն» որոշիչը և նշանակում է «տաճարի գավիթը կամ նախասենյակը»: Գիտնականը կարծում է, որ հայերենում *հեղինակ*, *հեղնակ*, *հեղինակ*, *հիւղանակ*, *հիւղենակ* տարբեր գրությամբ ձևերը առաջացել են *հեղ* կամ *հիւղ* արմատից՝ «առաջնորդ, գլխավոր, վարիչ» նշանակությամբ, սկզբում ունեցել են «տաճարի գավթում գտնվողը», այսինքրն՝ ուխտավորների առաջինը, առաջնորդը իմաստը: Ապա ենթադրում է, որ *խուղ* (*xul*) ձևը բալայերեն է, որովհետև գործածվում է այդ ցեղերի տարածման վայրերում՝ Խարբերդ (Բալահովիտ), Բալու, Բաղեշ, և այս տեղերից գաղթած Կիլիկիայի հայերի շրջանում (Զեյթուն, Հաճրն): Խոտրջուրցիները, ինչպես և ջավախքցիները և վրացիները, *խուղ*-ը փոխ են առել բալայացիներից, որոնք մասամբ գնացել են Քուռ և Արաքս գետերի հովիտներով: *Հիւղ* կամ *հեղ* (*hil//hel*) ձևը անցել է հայասացիների միջոցով, և ըստ գիտնականի՝ շատ հետաքրքրական լեզվաաշխարհագրական երևույթ է այն, որ Տարնում, Բագրևանդում, Վասպուրականում և Այրարատում այդ բառերը բացակայում են³⁰: Մեր կարծիքով՝ Ղափանցյանի այս դիտարկումը խիստ ուշագրավ է և խորհելու առիթ է տալիս:

3. Բարբառային հայերենում փոքր տուն, խրճիթ հասկացության բառանուններ են դիտարկվել *քոլիկ*-ը և *քոխտիկ*-ը, որոնք պարսկերեն *kox*՝ տնակ, արմատից փոխառություններ են համարվում³¹: *Քոլիկ*-ը և *քոխտիկ*-ը Մուշում, Գյումրիում և Բուլանուխում պարսիզպանի հյուղակ կամ ընդհանրապես աղքատիկ խրճիթ նշանակությամբ է գործածվում: *Քոխտիկ* բառաձևը արձանագրել է նաև Ս.Ամատունին. «Գրհուկ, հորթնոց, մառան, *քոխ-քոխտիկ* ամենն էլ թամամ են: Թագավորի տղա, դու իմ *քոխտիկ* ի՛մալ մտնաս»³²: Աճառյանի կարծիքով՝ *քոլիկ*-ը նույն *քողտիկն* է, որը Ալաշկերտի խոսվածքում լեռների մեջ շինված հյուղ է նշանակում³³: Բառը վկայված է նաև Խոյի և Մակուի խոսվածքներում և այգիներում պահապանի համար պատրաստված հյուղ նշանակությամբ է գործածվում: Ըստ Աճառյանի՝ Ն.Բայազետում *քողտիկը* մառան հասկացության նշանակելի է և աղերսներ ունի *գողտիկ* բառի

³⁰ Գ. Ղափանցյան, *Հայոց լեզվի պատմություն*, Ե., 1961, էջ 181:

³¹ Ս. Մալխաեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 4, Ե., 1945, էջ 583:

³² Ս. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Էջմիածին, 1912, էջ 354:

³³ ՀԳԲ, էջ 1120-1121:

հետ. վերջինս Ազայում գործածվել է պահարան կամ մառան նշանակությամբ, որի մեջ հաց և ուրիշ ուտելիք են պահել³⁴:

4. **Քօնձախ:** Բարբառների բառային հնաբանությունները դիտարկելիս Գ.Ջահուկյանը, գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատների շարքում ներառում է **քօնձախ** բառանունը: Ի դեպ, գիտնականը ենթադրաբար **քօնձախ** բառին առնչակից է համարում **քնձոտ**, **քնձոտ** (Երևան), **քնձոտ** (Պոլիս), **քնձոտ** (Երևան, Ղարաբաղ, Նոր Նախիջևան) բառերը՝ «խեղձ, ողորմելի նշանակությամբ», և դրանք կապում է հ.հնդկերեն khanati «քանդում է, փորում է», հայ. >իրան. քանդել բառերի հետ՝ այս բոլորը բխեցնելով հ.-ե. (s)k(h)ed-, (s)k(h)e-n-d-«ճեղքել, պատռել, ցրել» արմատից³⁵: **Քօնձախ** բառանունը ավերված, քարուքանդ եղած տուն իմաստով է գործածվում նաև այսօր Մուշի, Նոր Բայազետի, Մակուի խոսվածքներում: Մ.Ասատրյանը «Ուրմիայի բարբառում» բառը փաստել է որպես նեղ, անձուկ խրճիթի նշանակելի³⁶:

Որպես **հյուղ** հասկացության բառանուն՝ բարբառային հայերենում առկա է նաև **ծրղաղակ** բառը: Ղարաբաղում, ինչպես նաև Կարճևանում բառն ունի թռչուն որսալու կամ ձուկ բռնելու համար բարակ ճյուղերով շինված ծուղակ իմաստը, որը, ի դեպ, Ղարաբաղում գործածվում է նաև փոքրիկ, խղճուկ տուն, խրճիթ նշանակությամբ: Բառը վկայում է նաև Աճառյանը³⁷: Ա.Սարգսյանը «Ղարաբաղի բարբառի բառարանում» ևս արձանագրել է **ծրղաղակ//ծրղարակ** բառանունը, որը, ինչպես հիշատակեցինք, նախ բարակ ճյուղերից հյուսված փոքրիկ կողովանման հարմարանք է, որով թռչուն կամ ձուկ են որսում. «**Մրղաղազը** մին դուշ ա ըղնում», և 2. փոխաբերական իմաստով նաև՝ անշուք, փոքրիկ տնակ. «Մին **ծրղարակ** ա շինալ, մաչին ինքըն ա կրնե՞՞ր ապրում ըն»³⁸: Ջահուկյանը **ծողակ**, **ծաղակ**, **ծաղուկ**, **ծղաղակ**, **ծաղաղակ**, **ծալալակ**, **ծղուղակ** բառաձևերը բխեցնում է **ծուղակ** բառից, որի իմաստն է որոգայթ, թակարդ: Բառի ծագումն անհայտ է համարում, և նրան քիչ հավանական է թվում բառի աղերսը հ.-ե. ***geu-1** ձևից՝ ***geū**-«ծռել» արմատի քմայնացած ***g'eu-** տարբերակից³⁹:

Տէփ: Ա. Սարգսյանի բառարանում այգիներում փոքրիկ հյուղակ իմաստով Ղարաբաղում վկայված է **տէփ** բառանունը (Մեր խաղվեն բաղումը մին **տէփ** ա իլնլ, բաղվանչին ըտեղ ար քօն իննում): Ինչպես Ղարաբաղի բարբառում, այնպես էլ այլ բարբառներում **տէփ**-ը նաև այլ հասկացությունների նշանակելի է, ինչպես օրինակ՝ 1. ձվաձև բարձ՝ դափ, որով թոնրի կողերին են կպցնում բացված խմորը (**Տէփը** ըղնում ա թուրնէն մաչը, էրվում), 2. Օրորոցում երեխայի տակը դրվող բարձ, մեջտեղը անցքով (Լօլակը **տէփին** մաչին ըն տիննում): Բառը գործածական է նաև հետևյալ դարձվածքներում. Տէփին տինիլ,

³⁴ ՀԳԲ, էջ 248:

³⁵ Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն* (այսուհետև՝ ՀԲՆ), Ե., 1972, էջ 311:

³⁶ Մ.Ասատրյան, *Ուրմիայի բարբառը*, Ե. 1962, էջ 329:

³⁷ ՀԳԲ, էջ 520:

³⁸ Ա.Սարգսյան, *Ղարաբաղի բարբառի բառարան*, (այսուհետև՝ ՂԲԲ), Ե., 2013, էջ 308:

³⁹ ՀՄԲ, էջ 368:

պատան տալ, այսինքն՝ գործը տեղը տեղին՝ կարգով՝ ճիշտ կատարել: Ուստա Կոփին ամմեն հինչը լավ ա անում, տեփին ա տինում, պատան տամ: Տեփը ճրղած՝ աշխույժ, համարձակ. Տեփը ճրղած դավալ ա մեր Խօրէնը⁴⁰: Ի դեպ, ՀԼԲԲ-ում **տեփը** կս արձանագրված է մի քանի իմաստներով: Բացի վերը նշված իմաստներից՝ այն ունի նաև տեփուր, փայտե կլոր ափսե կամ սկուտեղ, ինչպես նաև ժամանակավոր ապրելու տնակ նշանակությունները. Ամեռնը տավարը պահում ընք սարեն, մունք ալ ապրում ընք **տեփումը**: Բառաբանում Գորիսի խոսվածքի համար կս վկայված է **տեփը**՝ որպես այգեպանի փոքր հյուղակ⁴¹: Գ.Ջահուկյանը գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները քննելիս բերում է մի շարք բառեր, որոնցում հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների բառային իմաստները զգալիորեն շեղվում են: Այս բառերի ցանկում նա ներառում է **տեփ** (deph-) (Ղրբ.), **տսփոց** (*demph?) (Վան) լավաշթիսի, բացված խմորը թոնրի կողերին խփելու ձվաձև բարձ (Ղրբ.), **տեփ** «երեխայի տակ դրվող բարձ» (Ղրբ.), «թերևս նաև **տեփ**՝ «այգու մեջ շինված հյուղակ, քոլիկ, քողտիկ» բառերը՝ համեմատելով հայ. տոփել, հուն. δέφω «ճմռել», սերբ. dèpiti «խփել, հրել» բառերի հետ (հ.-ե. deph- «տորոել, խփել ճմռել»)՝⁴²:

Օբա: Հայերենի բարբառներում առկա է նաև **օբա** բառանունը՝ որպես ամառանոց կամ ամառանոցում մի ընտանիքի հարկաբաժինը (Կարճևանում, Մակուում, ինչպես նաև Գավառի խոսվածքներում՝ **հօբա** տարբերակով): Թուրքերեն փոխառություն է **oba**-ն՝ մեծ վրան իմաստով: Բառն ունի նաև քաղաքից դուրս մի սրբի ուխտատեղի նշանակությունը: Թելեթի Ս.Գեորգի **օբային** էս էլ էի գնացել⁴³:

Յուրդ: Թուրքերենից փոխառյալ բառ է, որը բնակատեղի, տուն և վրանատեղի (յայլաղում) իմաստներով գործառում է Արարատի, Շամխորի, Ուրմիայի, Խարբերդի, Արաբկիրի (Գամիրք), Վանի խոսվածքներում, որը, սակայն, ավելի հաճախ գործածվում է անեծքների մեջ կամ որպես կշտամբանքի արտահայտություն: Այսպես՝ **Յուրդդ** բըլի (կամ՝ չըբըլի), Մըսրա Մելիքի **յուրդ** ու յուվեն (բույն) քանդվի⁴⁴ և այլն:

Բարբառային հայերենում մի շարք այլ բառանուններ են վկայված փոքրիկ, անշուք խրճիթ իմաստով, որոնց ծագումը հայտնի չէ: Այսպես՝ **կնսյը** Մասունում՝ հյուղ, տնակ⁴⁵, **մօղզօլ**՝ Կարինում (Շիրակ)՝ խրճիթ, նեղ, անձուկ բնակարան, նեղ անցք, **պըզլօզ**, **բըբլօզ** Վանում, Մուշում, **քըցուլակ**՝ Ղազախում և Օշականում՝ նեղ, անձուկ, անփառունակ տնակ: **Կօկալ**-ը, ըստ Աճառյանի, Ղազախում նախ շուք, ստվերոտ տեղ է նշանակել, հետո նաև՝ խրճիթ: Ս.Ամատունին բերում է բարբառային հետևյալ օրինակները. «Էդ գօր-

⁴⁰ ՂԲԲ, էջ 717:

⁴¹ ՀԼԲԲ, հ.Ձ, էջ 174:

⁴² ՀԲՆ, էջ 301-302:

⁴³ ՀԼԲԲ, հ.Է, , Ե., 2012, էջ 160:

⁴⁴ ՀԼԲԲ, հ.Դ, Ե., 2007, էջ 122:

⁴⁵ Վ.Պետոյան, *Մասունի բարբառը*, էջ 135:

տան բին *կօկալնիդ* էլ գլխներիդ փուլ կածեմ: Մնացած *կօկալն* էլ գլխին բրիշակ կանի: Գնաց իրան քարուքանդ *կօկալը*: «Եասավուլին որտե՞ղ պրիեմ, մի *քըցուլակ* ունենք, ընտեղ էլ մենք ենք տեղավորվում»⁴⁶:

Այսպիսով՝ քննելով *տուն* հասկացության բառանունները՝ գալիս ենք այն եզրակացության, որ հնդեվրոպական *տուն* բառանունը համահայերենյան կիրառություն ունի: Այլ է պատկերը փոքրիկ տուն, խրճիթ, այգեպանի տնակ իմաստով բառանունների դեպքում: Այս բառերի շարքում առկա են և՛ բնիկ հայերեն բառեր, ինչպես, օրինակ, *հյուղը*, *քոնձախը*, *տեփը*, և՛ փոխառյալ ու օտար բառեր՝ *քոլիկ*, *քոխտիկ*, *յուրդ* և այլն, ինչպես նաև չստուգաբանված ու փոխաբերացմամբ առաջացած բառանուններ, ինչպես՝ *ծղաղակ*, *մողզոլ*, *կօկալ* և այլն: *Տուն* հասկացության բառանունները քննելիս շատ հաճախ առնչվում ենք նույն բառանվան՝ բարբառներում առկա բառիմաստային տարբեր դրսևորումների հետ, օրինակ՝ *տեփ*, *ծղաղակ*, *խուղ* բառերի դեպքում: Հետաքրքրական է նաև, որ տուն հասկացության որոշ հայերեն բառեր փոխառվել են հարևան ժողովուրդների կողմից, այնուհետև բարբառների միջոցով վերադարձել են, ինչպես՝ *խուլագ*, *հոլըկ* և այլն:

Hasmik Khachatryan - Dialectal Characteristics of the Words Reflecting the Concepts of House and Cabin. The article examines the words reflecting the concept of house in the dialects of Armenian which are the following words of Indo-European origin: տուն, փրնագրռանք, տունճիկ. As for the meanings of cabin or hut, for these the dialects of Armenian have both native Armenian words (հյուղ, քոնձախ, տեփ) and borrowed and foreign words (քոլիկ, քոխտիկ, յուրդ), as well as figuratively used words and words without clear etymology ([tsghaghak]/ծղաղակ, [moghzol]/մողզոլ, [kokal]/կօկալ).

Хачатрян Асмик- Диалектное описание форм лексемы *տուն* (дом) и *հյուղ* (хижина, лачуга). - В статье исследуются употребляемые в армянских диалектах формы понятия տուն, имеющие индоевропейское происхождение: տուն, փրնագրռանք (дом), տունճիկ (дом, заимствованные и иностранные слова: քոլիկ (хибара), քոխտիկ (дом), յուրդ (юрта), а также заимствованные и неэтимологизированные: ծղաղակ (цагак), մողզոլ (мозгол), կօկալ (кокал).

⁴⁶ ՀԳԲ, էջ 587, ՀԲԲ, էջ 353:

ՌՈՒՍԵՐԵՆ ՓՈՒՍԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ¹

Բայազետի բարբառում ռուսերենից կատարված փոխառությունների քանակը ըստ մեր հաշվումների կազմում է մոտ 1300 բառային միավոր²: Բարբառով գրի առնված ամենավաղ նյութերում, որոնք վերաբերում են XI X դ. վերջերին և XX դ. սկզբներին³, ռուսերեն փոխառյալ բառեր չեն հանդիպում: Կարելի է ենթադրել, որ այդպիսիք Բայազետի բարբառում մեծ քանակով ի հայտ են եկել նոր հայրենիքում (Սևանա լճի ափին) և առավելաբար խորհրդային շրջանում⁴: Ռուսերենից կատարված փոխառությունները վերաբերում են բազմազան ոլորտների⁵, ինչպես **բնակարան, տուն և կահույք** (պմտալօք, պօլ, մկուշկա, ֆօռթուշկա, գալ, կուլինի, կըլադօվկա, զանավետկա, պմդակօննիկ, կըրիշմ, պմդվալ, բալկոն, զամօկ, կըռեպօ, պիսմեննի ստօլ, կմռաֆադ, լիժանկա, տըմբուշկա, լուստըրա, լամփուշկա, տմբուրետկա, կուշետկա, նմշնիկ, շտեպցել, ըշչօտչիկ, կմլիդօր, պըլենդուգ, պմռավօ, պըլաշչադկա, կըվատտիրա, դըվուխըսպալնի և այլն), **ուտելիք և խմելիք, խոհարարություն և ամանեղեն** (պիսօք, գալէթ, պէչենի, պէրաշկի, տըվարօգ, կմնֆեռտ, մմրօժնի, մմնի կըրուպա, պիվա, վարենի, սօկ, կմմպօտ,

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

² Կարծում ենք՝ այդպիսիք շատ ավելի մեծ քանակություն են կազմում, որովհետև մեր ուսումնասիրությունը չի ընդգրկում և չէր էլ կարող ընդգրկել բարբառային ողջ խոսքը իր բոլոր դրսևորումներով: Ի դեպ, XX դ. սկզբներին Հ.Աճառյանը հայերեն բարբառներում ռուսերենից փոխառյալ բառերի քանակը համարում է 600 (Հ.Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆ., 1913, էջ 3): Ռ.Մարկոսյանը «Արարատյան բարբառ» աշխատանքում բերում է ռուսերենից այդ բարբառ անցած մոտ 300 բառերի ցանկ (տե՛ս Ռ.Մարկոսյան, Արարատյան բարբառ, Ե., 1989, էջ 380-384):

³ Տե՛ս Ս.Նավասարդեանց, Հայ ժողովրդական հեքիաթներ, 5-րդ գիրք, Տփլիս, 1889, էջ 79-80. «Ազգագրական հանդես», XIII գիրք, 1906, թիվ 1, էջ 37-82. «Ազգագրական հանդես», XIV գիրք, 1906, թիվ 2, էջ 69-85. «Ազգագրական հանդես», XI X գիրք, 1910, թիվ 1, էջ 115-150:

⁴ Խոսելով Ուրմիայի /Խոյի/ բարբառում ռուսերենից կատարված փոխառությունների մասին՝ Մ.Ասատրյանը նշում է, որ նախքան խորհրդային կարգերի հաստատումը բարբառը մեկ դարից էլ քիչ ժամանակահատվածում ռուսերենից կատարել է որոշ փոխառություններ բանավոր ճանապարհով (ինչպես՝ ակուշկա, ըշկափ, ըստօլ, կանփետ, պալտոն և այլն), իսկ խորհրդային տարիներին բարբառին ռուսերեն են անցել գրական հայերենի միջնորդությամբ (տե՛ս Մ.Ասատրյան, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, Ե., 1962, էջ 147-148):

⁵ Պետք է նշել, որ այդ փոխառությունները գրեթե ընդհանուր են արևելյան բարբառների և խոսակցական հայերենի համար, վերջինից էլ թերևս անցել են բարբառներին: Բայազետի բարբառը կրող հանրությունը երբեք ռուս ժողովրդի հետ անմիջական լեզվական շփումներ չի ունեցել, եթե նկատի չունենանք XIX դարում ռուսական զորքի առկայությունը Բայազետում և Ռուսաստան արտագնա աշխատանքի մեկնողներին:

բուխանկա, սրմէտան, զակուսկի, տմլերկա, բուլութ, չաշկա, պէպէլնիցա, բու-
թուկա, կմստուրկա, վէդրօ, ժարօվնիկ, ժարիթ, սուբ, բօռշ, կըրեմ, ումիվալ-
նիկ, խալադէլնիկ, սմսիներսկի և այլն), **գործիքներ և նյութեր** (մթֆյօռկա, պը-
լասկագուպցի, կըրասկա, գաժիգալկա, լապատկա, վիլկ, նմժօվկա, նմսիլկա,
պըրօպուշնիկ, տըրումբա, կըլէ, գամասկա և այլն), **հագուստ և զարդեր, հար-
դարանք** (յուպկա, բըլուզկա, կմստում, սմռուշկա, մմյկա, նմսկի, վարատ-
նիկ, պըլաշ, կուռտկա, բասանօշկա, բէգադնիկ, տուֆլիկ, յապօնկա, շուբ, պմլ-
տոն, շըլապկա, նէվէտիսկա, կմլիցօ, մբադօկ, ըզնաչօկ, բուլավկա, պմմադա,
պուդրի, մմնիկուռ, մդիկուլօն, բըռիլանտ, ցեփ և այլն), **տէխնիկա, սարքեր,
ավտոմասեր** (տէլէվիզըր, պըրյօմնիկ, վարկա, ըստաբլիգատօր, նմսօս, պիլա-
սօս, գըռուզավիկ, լէխկավիկ, բագաժնիկ, բանդաժ, մբլիցօվկա, մմտօռ, կըռի-
լօ, պուսկաչ, ըսկօռօստ, գադնի, պէրէդօկ, բառդաչօկ, վերիս, պէդալ և այլն),
ռազմական գործ (սմլդաթ, պմլկօվնիկ, պօլկ, պիստալէթ, գըրանատ, պօստ,
չասավօ, պուլիմյօստ, մֆիցեր, ոյադավօ, պուլ, ըստվօլ, շտիկնօժ, մմլադօ, դը-
նէվալնի), **արհեստներ** (պմռոնօ, մմտօռիստ, մբիվչիկ, խադավիկ, պըլօդնիկ,
մէբէլչիկ, մմյար, կմֆէլչիկ), **օբեկտ** (գակոն, միլիցա, սուդ մնէլ, մդվակաստ,
գայի պօստ, նմբուշէնի, վիսիլկա, յուրիստ, գապրետ, ըշտըռաֆ), **աշխատան-
քային գործունէություն** (պէրէրիվ, ննչնլնիկ, վիզըվըր, դակլադ, պիտիմի-
նուտկա, օտպուսկ, պուտյօվկա, սկըլադ, միւրաննիկ, ցեխ, մտդէլ, մստավկա,
դալաժիտ մնէլ, ըսմէնչիկ), **մարդկային հասկանիշներ** (շուստըրի, տուպօյ,
բիկ, խալտուրչիկ, մբիժնիկ, ըսկըբօ, դուռակ, մէլըշնիկ, խիտրի, բայէվօ, բօ-
սակ, գօռդի, գէրօյ, դուխօվ, նմզլի, նմխալ), **գույներ** (բէժըվի, մմտըվի, ռօզըվի,
կըրեմըվի, մպէլսիներվի, սեռի), **կենդանիների որոշ անուններ** (բիկ, կըռիս,
կմզյօլ, կմբան) և այլն: Առանձին խումբ են կազմում փոխառյալ հատուկ ա-
նունները, որոնք հաճախ ռուսերեն անունների կրճատ ձևեր են՝ սովորաբար
համապատասխան հնչյունափոխություններով, ինչպես՝ Շմշա, Միշա, Վալօդ,
Վըլադ, Սէրօժ, Գալյա, Գըրիշ, Դիմիտըր, Նմդյա, Բլիչ, Լուդա, Լօվա, Սմբուս,
Ժէնիկ, Սըվէտ, Ժօրիկ, Լէնա, Լուբա, Կօլյա, Միտյա, Վիտյա, Յուրիկ, Նօլվէտ,
Նինա, Շուռիկ, Վալյա, Օլգա, Վասիլ և այլն: Ռուսերենից փոխառված բառեր
գրեթէ չեն հանդիպում մարմնի մասերի, ընտանեկան հարաբերությունների
անվանումներում, ֆիզիկական աշխարհին, ժամանակին ու տարածությանը,
թիվ ու քանակին վերաբերող հասկացությունների անվանումներում⁶: Ռուսե-

⁶ Ինչպես նկատել է Ա.Սուքիասյանը, «Որպես կանոն, խիստ հազվադեպ են փոխառվում հիմ-
նական ֆոնդի բառերը, օրինակ՝ ազգակցական-արյունակցական կապեր ցույց տվող ... բա-
ռեր, մարմնի մասերի անվանումներ...», անձնական դերանունները, քանակական թվա-
կանների մեծ մասը, կարևորագույն բայերը, հիմնական որակական ածականները և այլն»
(Ա.Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 188):

րենից փոխառյալ շատ բառեր էլ դուրս են մղվել կամ դուրս են մղվում բարբառային խոսքից: Դրանք բառեր են, որոնց աստիճանաբար փոխարինում են հայերեն համարժեքները (օրնակ՝ ըշկօլ – դըբոց, ըշկաբ – պմհարան, ըստօլ – սեղան, սմքան–բ՛ածակ, բիլէտ – տօմս, սուդյա – դադավոր), կամ էլ այլևս գործառույթ չունեցող իրողությունների անվանումներ են (մբօզ /սայլախումբ/, գալիֆե, կմլօշ, կմմօդ, կըրասինգա, կօմսօմօլ, պմոտյա, կօլխօզ, պիյօններ, բըրիգադիր, ռայկօմ, պմլիտբուրօ) և այլն:

Ե՛վ այլ լեզուներից, և՛ ռուսերենից կատարված փոխառությունները բնականաբար ենթարկվում են բարբառի հնչյունական օրինաչափությունների, այլ կերպ ասած՝ դրանցում արտահայտվում են բարբառում գործող հնչյունական իրողությունները: Ինչպես նկատել է Հ.Աճառյանը, «մայր ձևին և անկէ փոխառեալ հայացած ձևին համեմատութիւնը նոյնպէս երևան պիտի հանէ խումբ մը ձայնական օրէնքներ, որոնց ուսումնասիրութիւնը դարձեալ մաս պիտի կազմէ հայ Ձայնաբանութեան գիտութեան»⁷: Բայազետի բարբառի՝ ռուսերենից կատարված փոխառությունները թույլ են տալիս դիտարկել բարբառային խոսքի հնչյունական կազմությանը ներկայում բնորոշ մի շարք օրինաչափություններ, ինչպես նաև դրանցում կատարված տեղաշարժերը նախորդ փուլերի բառաշերտերի իրողությունների համեմատ: Այսպես, ռուսերենից փոխառյալ բառերում նույնպես համապատասխան դիրքերում⁸ կայուն կերպով գործառուում է շրթնայնացած մ ձայնավորը (մնդրես, պմլտոն, կմսիր, տմբլիցա, ֆմնէրկա, սմմասըվալ, շմգ, մմստեռ, նմբուշէնի և այլն), ընդ որում՝ այն համապատասխանում է նաև տվյալ դիրքերի՝ ռուսերենում օ հնչույթի a հնչատարբերակին, ինչպես՝ մնդբօյ, պմնդիօդ, կմլիդօր, տմլչօկ, ֆմոռունգա, սմլղաթ և այլն: Փոխառություններում իրենց բաշխման օրինաչափությունները հիմնականում պահպանում են է,ե հնչյունները⁹, ինչպես՝ մգրէգատ, մգենտ, բատարէ, բեսէտկա, գադեռժկա, գասէդանի, ժէշտ, ժեռորվա, ինժիներ, յեխիդնի և այլն: Հին բառաշերտի համեմատությամբ փոխվել է օ և ո հնչյունների գործառական փոխհարաբերությունը: Եթե Բայազետի բարբառի հին բառաշերտում անշէշտ դիրքում գործառում է միայն օ-ն, իսկ շէշտակիր վանկում՝ սովորաբար ո-ն, ապա ռուսերեն փոխառություններում երկու դեպքում էլ ունենք օ¹⁰, ինչպես՝ նմբօռ, մօստ, մօշնի, կօմսօմօլ, պօլ, կըռօս, ըստօլ, գամօկ, զօնթիկ, չասավօ, չուժօյ և այլն¹¹: Ռուսերե-

⁷ Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 5:

⁸ Այդ դիրքերի մասին տե՛ս Վ.Կատվայան, Հայ բարբառագիտության հարցեր, էջ 37-62:

⁹ Այդ օրինաչափությունների մասին տե՛ս Վ.Կատվայան, նշվ. աշխ., էջ 153-170:

¹⁰ Իրողությունը դրսևորվում է նաև միջինհայերենյան շրջանին վերաբերող պարսկաթուրքական և այլ կարգի փոխառություններում (օր.՝ դօշ, դօստ, թօփ, կօշ, սինօռ, քօք և այլն), այսինքն՝ սկզբնավորվել է ավելի վաղ շրջանում:

¹¹ Բացառություն է կազմում ն-ից առաջ շէշտակիր դիրքը, որտեղ հաճախ հանդես է գալիս ո. բալկոն, բիթոն, բալոն, գակոն և այլն:

նից փոխառյալ շատ բառեր, իրենց վերջում ունենալով ա կամ օ, էականորեն ընդլայնել են Բայագետի բարբառի բառավերջում այդ ձայնավորների գործառնությունը, ինչպես՝ անկուշկա, սանֆետկա, տրրումբա, բուտկա, կիսլատա, բայեվօ, ֆըսյօ, մֆտօ, վեդրօ և այլն: Ռուսերեն փոխառյալ բառերում քմայնացած *յ* ձայնավորի խիստ սակավ գործածությունը (*յ* ունեցող բառերից են՝ բըռնկ, բուգն, լնք, խնգեն, կըրիշն, կուգն, ձնձն, ննսիկկա, ննչնլիկ, նիչն, ռեգն, ֆնննր) թույլ չի տալիս խոսել բարբառումս այդ հնչյունի հետագա տարածման միտումի մասին: Հին բառաշերտի բառասկզբի շնչեղ ձայնեղների առկայությամբ՝ ռուսերեն փոխառությունների բառասկզբում հանդես են գալիս ձայնեղներ¹², ինչպես՝ բատարե, բօսակ, գըռուգավիկ, գայկա, դաժե, դօպուսկ, ձնձն և այլն:

Ռուսերեն փոխառությունները էական տեղաշարժ են երևան բերում շեշտափոխական հնչյունափոխության ոլորտում: Եթե բարբառիս հին բառաշերտի շեշտակիր վանկի **ի, ու, է** ձայնավորները սովորաբար և **ա, ո, է** հնչյունները հաճախ շեշտագրկման հետևանքով կարող են ենթարկվել փոփոխությունների (տանիս-տանսի, ջ՛ուր – ջ՛ըրվոր, կէս – կիսել, բ՛երան – բ՛երնի, մըրոտ – մըրօտել, ցօրեն – ցօրնի), ապա ռուսերեն փոխառյալ բառերում ձայնավորների նման փոփոխությունները խիստ հազվադեպ են. կմնֆետտ – կմնֆըռտի, մոյյալ – մոյըլի, բիկ – բըկութուն, բինդ – բընդի, գուբ – գըբեր, ըշկաբ – ըշկըբի, կմռաֆադ – կմռաֆտի, կմռնիզ – կմռնըզի, յաշիկ – յաշկի, շուբ – շըբավոր, չին – չըներ, պմոդվալ – պմոդըլի, ռեզին – ռեզնե, սմլդաթ – սմլդըթի, սմքան – սմքնի, վիլկ – վըլկել, վինդ – վընդի, տուշ – տըշի: Հնարավոր է, որ այս բառերը ռուսերեն փոխառությունների համեմատաբար վաղ շրջանի շերտ են ներկայացնում՝ ի տարբերություն չհնչյունափոխվող փոխառությունների, որոնք էլ ներկայացնում են բարբառիս նոր իրավիճակը շեշտափոխական հնչյունափոխության առումով: Ռուսերեն փոխառություններում արձանագրվում են բարբառիս հնչյունական օրինաչափություններով պայմանավորված փոխազդեցական հնչյունափոխության զանազան դեպքեր, ինչպես՝ առնմանական իլացում (մբլօշկա /обложка/, բասանօշկա /босоножки/, բեսետկա /беседка/, գըլատկի /гладкий/), ձայնեղացում (մդբիտ /отбить/, մոբոյ /отбой/, բանգա /банка/), հպաշփականի շփականացում (բօշկա /бочка/, զագրանիշնի /заграничный/), դրափոխություն (մվայրա /авария/, բոսօք /брусок/), հնչյունի անկում (մթվօռկա /отвертка/, միչօտ /отчет/), հավելում (մբէլանցի /операция/, մպտերկ /аптека/, կըրանթ /кран/, ըստօլբա /столб/), հնչյունների միաձուլում (յավիցա /явиться/, դաբիցա /добиться/) և այլն: Թերևս բարբառիս արտաբե-

¹² Տեղաշարժը վերաբերում է ավելի վաղ շրջանի, որովհետև արաբապարսկաթուրքական փոխառություններում ևս բառասկզբում ունենք ձայնեղ պայթականներ ու հպաշփականներ, ինչպես՝ բօյ, բէխեր, բօղագ, դուզ, ջանավար, բնրնքնթ, ջեր, ջուղար և այլն:

րական յուրահասկություններին փոխառությունների հարմարեցման միտումով է, որ շատ դեպքերում ռուսերենի երկհնչյունների դիմաց ունենք պարզ ձայնավորներ (բօսակ /босаяк/, դոյմ /дюйм/, ժիրիբովկա /жеребьевка/, լուկ /люк/), խուլի դիմաց՝ շնչեղ (գալօփ /галоп/, գառշօք /горшок/, զանիթ /занять/, ժարիթ /жарить/), խուլի դիմաց՝ ձայնեղ (մտկօզ /откос/, խամուդ /хомут/, ըսկրբօ /скупой/), օ-ի դիմաց՝ ու (մկուշկա /окошко/, բուլդուզեր /бульдозер/, գարուխ /горох/, լամփուշկա /лампочка/), երկշրթնային պայթականի դիմաց՝ շրթնատամնային շփական (մվգօն /обгон/, գառդիբովկա /гардероб/), շրթնատամնային շփականի դիմաց՝ պայթական (ըշկաբ /шкаф/), ւ – ի դիմաց՝ շկամ չ (շիթ /шит/, շիտօկ /щиток/, չտակ /щетка/, բօռշ /борщ/) և այլն: Բայագետի բարբառում շատ տարածված է ռուսերեն փոխառությունների վերջին ձայնավորի անկուրը (մժիդանի /ожидание/, գօդնի /годный/, ըշկօլ /школа/):

Երբեմն փոխառյալ բառերը Բայագետի բարբառում հանդես են գալիս հնչյունական գուգաձևություններով, ինչպես՝ մպերացյա - մբելանցի, կմստուրկա - կմստըրուտկա, մվարյա - մվայրա, դիրեկտօր - դերեկտօր, գարյատկա – գարատկա, ըսպիշկա – ըշպիշկա – իպիշկա և այլն:

Իրենց առատությամբ ու գործածականությամբ հանդերձ՝ ռուսերեն փոխառությունները բառակազմական առումով գործուն չեն, դրանք խիստ սակավ են բարդություն կազմում հայերեն որևէ բաղադրիչի հետ (օրինակ՝ կրբեմախառը, մմրգարինախամ): Հանդիպում են ռուսերեն փոխառյալ բարդություններ, որոնց բաղադրիչները առանձին ևս փոխառված են, ինչպես՝ պմնել և վօզ - պմնելավօզ, պմր և վօզ - պմրավօզ, սուխօյ մտկազ, տըրուդավօյ կրնիշկա և այլն: Ածանցական կազմություններում սովորաբար գործառում են ռուսերենի ածանցները, ինչպես՝ մբիվկա - մբիվչիկ, մխրանա - մխրաննիկ, մկառոյօն - մկառոյօնիստ, մտդել - մտդելնի, բագաժ – բագաժնիկ, բալկոն – բալկոնչիկ, բըռնկ - բըռնկօվչիկ, գըռուզ – գըռուզավիկ, գակոն – գակոննի, գավօդ – գավադսկօ, կմմանդ - կմմանդիր, կըրեմ – կըրեմըվի, մօմենտ – մօմենտալնի, գօդնի – նիգօդնի, պըլեն – պըլենավիկ, պըռախօդ – պըռախադնօյ, պըրինցիպ – պըրինցիպալնի և այլն: Հայերեն սակավաթիվ ածանցներ են ռուսերեն փոխառություններով բաղադրություններ կազմում. բըկություն /բիկ/, գ՛ալըստուկավոր, դէֆէկտավոր, դուխօվ, ռիսկօվ, վիդօվ¹³, դոյմանոց, շպիյօնություն, ժէշտե, ռեգնե, խըլամանոց, ներվային, շուստըրություն:

Ռուսերեն փոխառությունները բարբառումս սովորաբար չեն իմաստափոխվում: Իմաստափոխության՝ մեր ունեցած օրինակներից են՝ адрес (հասցե) - մդրէս (բցս. հեղինակություն), бык (ցուլ) – բիկ (անհասկացող), кабан (վարազ) – կմբան (անճոռնի մարմնեղ), лак (լաք) - լմք (կպչուն անձնավորություն), закуска (թեթև ուտեստ) – գակուսկի (ոգելից խմիչքի ակրատ), лампа

¹³ Գործիականի վերջավորությունը սրանցում ունի ածանցի արժեք:

(լամպ) – լամփ (նավթալամպ), *холод* (ցուրտ) – խօլօդ (սառնարանի սառցախցիկ), *капля* (կաթիլ) – կմբլի (սրտի դեղի կաթիլներ), *шоссе* (խճուղի) – շօշ (գյուղի հիմնական փողոցը) և այլն: Երբեմն ռուսերեն փոխառությունները կարող են իմաստագուրկ լինել (օրինակ՝ *пора я* կապակցությունը պահմտոցի խաղի ժամանակ արտասանվում է *պառայա*, որը գործածվում է բանաձևային «պա-ռա-յա, բ՛ա-ցե-ցի, վիրը տեսա՝ թը-քե-ցի» արտահայտության մեջ առանց որևէ իմաստի) կամ հնչյունափոխության հետևանքով կորցնել ներքին ձևը (օրինակ՝ *город за город* արտահայտությունը դարձել է *գորօզագորօզ* և սոսկ համապատասխան խաղի անվանում է՝ առանց բաղադրիչների ընկալման): Սակավ են այս փոխառություններով դարձվածքները. *մբառօտը ֆրոշալ* – պատասխանը տալ, *անկէտա՞ յես լրնացրնում* – շատ ես հարցեր տալիս, *բայթա բեդեր* – երկար և կեռ բեդեր ունեցող, *ըսպօռ գ՛ալ* – գրագ գալ, *կմմանդ քաշել* – հրամայել, *յառլիկ կըպցրնել* – անվանարկել, *չրները հրնգնել* – հեգն. աստիճանագրկվել և այլն:

Ռուսերեն փոխառությունների մեծ մասը գոյականներ են՝ և՛ թանձրացական (մոյալ, բալկոնչիկ, բանգա, բըռասլետ, գալէթ, գարուխ, գաբօռ, գակուսկի և այլն), և՛ վերացական (մբէլանցի, մբսլուծիվանի, մգրանիչէնի, մխօտ, մպոավդանի, մվարյա, մտկօզ, բուզմ, դավէրյա, գադէոժկա, ուկլօն և այլն): Գոյականները բարբառում յուրացվել են ըստ թվի և հոլովի կարգերի: Անեզական գոյականները վերածվել են սովորականների՝ եզակիի համապատասխան ձևով, ինչպես՝ *обои* (պաստառ) – մբօյ, *отходы* (մնացորդներ) – մտխօդ (մնացորդ), *консервы* (պահածոներ) – կմնսեռվա (պահածո), *носки* (պատգարակ) – նմսիկա և այլն: Միավանկ գոյականները հոգնակին կազմում են –եր (խօդեր, լիստեր, լէնթեր, զըբեր), իսկ բազմավանկները՝ –ներ (դամաշնիկներ, մտխօդներ, կմբբուրատըրներ) հոգնակերտներով: Ձայնավորով ավարտվող գոյականները հոգնակին կազմում են բարբառի օրինաչափություններով (բալկա – բալկէք, սմռուշկա – սմռուշկէք, բատարէ – բատարէներ/ք, պմռավօներ, վէդրօներ, պէչէնիք, սմպաշկիք): Հոլովումը նույնպես տեղի է ունենում բարբառի օրինաչափություններով, ինչպես՝ սմռուշկա – սմռուշկի, բալկոն – բալկոնի, բասէ – բասէյ, բիկ – բըկի, գարանտյա – գարանտյայ, գակուսկի – գակուսկու, կըլէ – կըլէյ, կօլցօ – կօլցօյ, յեզդա – յեզդայ և այլն:

Շատ են ածականները՝ ինչպես որակական, այնպես էլ հարաբերական (մպասնի, բայեվօ, բըռնկ, բիկ, բօսակ, գըլատկի, գօդնի, դէլավօյ, դուխօվ, զիմնի, դուբին, գակոննի, գավադնօ, ըսկըբօ, ժէնըսկի, ժիտկի, ժուլիկ, ժօսկի, լիշնի, լօդըռ, խիտրի, կմպոիզնի, կըլէչատնի, մօշնի, յեխիդնի, սմլիդնի և այլն), մակբայները (մկուռատնի, մտդուշի, մտկըռավէննի, դավօլնի, խալաստօ, կմտէզօրիկ, մմմենտալնի, կըռուզօմ, մյօռտըվի, նիչմ, չօտկի, պմդըրյադ, պմստայաննի, պըռօտիվ, ռէզկի, սըռագու, վափշէ, վէշնի, սօշնի և այլն): Որո-

շակի քանակություն են կազմում վերաբերականները (դաժե, գատօ, զըրյա, լիշբի, կմոսչե, մմլադեց, պմդումայեշ, պմժալուստա, պըոստը, պըրիվետ, սեռավնօ, ֆըսյօ): Հազվադեպ հանդիպում են այլ խոսքի մասերի բառեր, ինչպես՝ դավայ, ուռա՝ (ձայնարկություն), կմկոյ նիբուդ, ցելի (դերանուն), չերեզ (կապ), պըրիչօմ, ռազ (շաղկապ): Բայազետի բարբառում ռուսերեն փոխառյալ հիմքերով համադրական բայերի թիվը սահմանափակ է: Հանդիպում են նման մի քանի կազմություններ, ինչպես՝ մսֆալտել, բըկընալ, բօմբել, դուխօվնալ, զամասկել, լօդընալ, լնքել, խօդել, ներվայնանալ, շուստըրիյանալ, չօտկել, պիսօքել, պօլել, ռեմօնտել, սըվարկել, տմվութել, տօշկել, տօռմուզել, ֆիլտըրել: Ինչպես երևում է, բերված բայերը մեծ մասամբ Ե խոնարհման ներգործական սեռի են՝ հիմնականում *մի բանով պատելու* նշանակությամբ, իսկ Ա խոնարհման սակավաթիվ բայերն ունեն *մի բանի վերածվելու* նշանակություն: Մեծ քանակություն են կազմում հարադրական կազմությունները՝ ռուսերեն հարադրով և վերացական նշանակությամբ բայական բաղադրիչով, ինչպես՝ մբելանցի մնել/հըլնել, մդբոյ տալ, մխօտ ունենալ, մկռուժիտ մնել, մնալիզ մնել/տալ, մնչօկ հ՛ավքել, մնչօտ տալ, մսլաժնենի տալ, մստավիտ մնել, մվգօն մնել, մվարյա տալ, մտկազ մնել, մտվետ տալ, բալետ մնել, բօնթ մնել, գարանտյա տալ, դավերյա մնել, զակուսկի մնել, զանիթ մնել/հըլնել, սպօռ մնել, լեվի էթալ, խալտուրա մնել, մմտերյալ գ՛ըրել, մմրօզ մնել, յազվա հ՛ըլնել, կըրիշն մնել, պօլ գաննել, չուժոյ խանել, չուչել դ՛առցընել, պմպիլօզ քաշել, պմս տալ, պմրարիչ գաննել, պերեբոյ հ՛ըլնել, պըլան քաշել, պըրիստուպ բ՛ըռնել, պիտնօ բ՛ըռնել, ռեզբա խանել, , վընուշկեքի մեչ հ՛ըլնել, օչերեդ կմյնել, դաբրօ տալ և այլն: Որոշ ձևեր թերևս կիսապատճենումներ են ռուսերենից, ինչպես՝ վերիս վերցել (взять верх), չեստ տալ (отдать честь), կմմանդ տալ (подать команду), պըլեն հընգընել (попасть в плен), կօպյա խանել (снять копию) և այլն: Տարածված են նաև բայական այնպիսի հարադրություններ, որոնցում ռուսերեն բաղադրիչը ներկայանում է անորոշ դերբայի՝ բարբառում իբրև այդպիսին չընկալվող ձևով, ինչպես՝ գուլյատ հ՛ըլնել, դաբավիտ մնել, դաբիցա հ՛ըլնել, ժարիթ մնել, պերեժիվատ հ՛ըլնել, մդբիտ մնել, բուքսավատ մնել, դալաժիտ մնել, զաստավիտ մնել, յավիցա հ՛ըլնել, պըլատիտ հ՛ըլնել, զուբիտ մնել, դակազատ մնել և այլն: Բայաձևերը կարող են վերածվել անունների, օրինակ, жарить (տապակել) բայը բարբառում վերածվել է ժարիթ (տապակած կարտոֆիլ) գոյականի, իսկ занят (զբաղված է) բայաձևը՝ զանիթ (զբաղված) ածականի: Խոնարհման մեջ ռուսերեն փոխառությունները որևէ յուրահատկություն հանդես չեն բերում:

Այսպիսով, ռուսերենից Բայազետի բարբառում կատարված փոխառությունները, լինելով զգալի քանակության և ունենալով մեծ գործածականություն, առավելապես հետաքրքրություն են ներկայացնում հնչյունաբա-

նական առումով; Այդ փոխառությունները բառակազմական առումով գործուն չեն, քերականական առումով լիովին հարմարվել են բարբառի օրինաչափություններին և յուրահատկություններ են հանդես բերում բայակազմության մեջ:

Viktor Katvalyan - Russian Borrowings in Bayazet Dialect.- Russian borrowings in Bayazet dialect amount to approximately 1300 lexical units. They have emerged mainly during Soviet times and presently are widely used. Russian borrowings of the dialect have particular interest in respect of phonetics. In terms of word formation they are not active, in respect of grammar they are fully adapted to the regularities of the dialect and have particular peculiarities in the verb formation.

Виктор Катвалян- Русские заимствованные слова в Баязетском диалекте.-Число русских заимствованных слов в Баязетском диалекте составляет около 1300 лексических единиц. Эти заимствования в основном появились в советский период и в настоящее время имеют высокое функционирование. Они представляют интерес в фонетическом отношении. В рамках словообразования они не действены, в грамматическом отношении полностью приспособились к закономерностям диалекта и проявляют особенности в отношении образования глаголов.

ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. Հ.Ե. *reg' > հայ. (ա)ռա(կ/ծ)

Finde etymologien, suche sie nicht!
(L. Spitzer)

Հայերեն *առած* բառը Աստվածաշունչ գրքում գործածվել է 16 անգամ, իսկ *առակ*-ը՝ 115, մոտավորապես 1-ը 8-ի հարաբերությամբ:

Դրանք նույն արմատի տարբերակներ են, ծագում են հնդեվրոպականի համար վերականգնվող նախաձևից: Նախկինում դրանց ծագմանը տրրվել է այլ մեկաբանություն:

Նախ անդրադառնանք եղած մեկնաբանություններին:

Հայ. *առած* «1. երկնային ներշնչում, հայտնություն, տեսիլ, 2. աստվածային սպառնալիք, պատգամ», որ սկզբնապես վերաբերում էր աստվածներին, իսկ հետագայում նաև նկատի են առնվում «սուրբ հայրերի պատվերները (իմա՝ պատվիրանները - Վ. Հ.), բարոյական վճիռ կամ իմաստասիրական ճշմարտություն», նոր հայերենում նշանակում է «առակ, ասացվածք»¹: Ըստ Աճառյանի՝ բառը «կազմուած է -*ած* մասնիկով *առ-ն-ուլ* բայից (իմմտ. *արարած*), ճիշտ ինչպես հոմանիշ հուն. *λήμμα* «1. ստացած բան, շահ, 2. իմաստասիրական առած, 3. ներշնչում, մարգարեություն»՝ կազմուած *λαμβάνω* «առնել» բայից»²: Միաժամանակ նշվում է, որ նման «մեկնությունը ծանօթ էր հներին», ըստ այդմ էլ՝ հետագա հայ բառարանագիրներին, նաև հայ և եվրոպացի լեզվաբաններին: Այսպես, Ֆ.Մյուլլերը բառը համեմատում է հինդկ. *rāji*, զենդ. *rāza*, այլև զենդ. *rāzarə* «կարգ», որը բավականին մոտ է հավաստիությանը: Ըստ Ս. Տերվիշյանի՝ այն բաղադրված է *առ* մասնիկով, այլև նույնն է *առակ* բառի հետ»³: Կարծիք է հայտնվում նաև, որ բառն ունի *առ-ած* բաղադրությունը, որում *ած* բաղադրիչն «*ասել* բայի հնագույն ձևն է»: Այս կարծիքը, ինչպես Աճառյանն է նշում, ընդունում է Մեյեն և այլն⁴:

Իսկ *առակ* բառի (ըստ Աճառյանի) «առաջին և նախնական նշանակությունն է «օրինակ», և ըստ այսմ (այն) շատ անգամ գործածուած է *օրինակ* բառի հետ միասին», և մյուս՝ նախորդի կոնկրետ նշանակություններն են՝ 2) «դիտելու բան, տեսնելու առարկա», 3) «ձանակ, նշավակ, խայտառակ» և այլն, որն (ըստ Աճառյանի) «կազմված է *ակն* «աչք» բառից՝ *առ* նախորդով. սակայն այստեղ առնուած է բառի հնագույն արմատական *ակ* < հնիս. **ōki* ձևը»⁵: Այս դեպքում ևս Աճառյանը բերում է այն կարծիքները, որ հայտնվել են այդ բառի բացատրության կամ ստուգաբանության դեպքում, որոնցից ոչ մեկը հավա-

¹ Հ.Աճառեան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1969, էջ 249:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում: Հմմտ. S.Dervischjan. *Das altarmenische* Գ, Wien, 1877, էջ 91:

⁴ Նույն տեղում:

⁵ Նուն տեղում, էջ 249-250:

նական չէ, բացի նրանից, որ ստուգաբանական անհաջող բառարաններից մեկում *առակ*-ը բխեցվում է *ակն* «աչք» բառից, իսկ *անառակ*-ը *առակ*-ից⁶:

Ինչպես կարելի է նկատել, թե՛ մեկ, թե՛ մյուս բառի իմաստ(ներ)ը ճիշտ են նշված, սակայն առասպելաբանական (միֆոլոգիական), եթե ոչ նաև բանաստեղծական (պատկերացումային) կողմը բացատրված չէ. պարզ չէ նաև իմաստի կամ իմաստների անցումների հարաբերական ժամանակագրությունը. իմաստի սուկական նշումը բավարար չէ պատկերացման և անցումների համար:

Գ. Ջահուկյանը հայ. *առած* բառը բերում է (*առ*)*ած* տեսքով և բխեցնում հե.* *əg' -* [**eg' -*], նաև հայ. *առ-եմ* ձևը (<*eg' -*), որ ըստ հեղինակի բառացանկի, գուգահեռ ունի միայն իտալյան լեզուներում⁷: Ընդ սմին նշվում է հետևյալը. «*Առած* բառի *ած*-ի ստուգաբանությունը տրված է ըստ Մաքսուդյանի [MSL, 17, 356], որի կարծիքն ընդունում են Մեյեն [Ernout-Meillet, 1959, 19] և Պոկոնին [Pok., 1, 290]: Աճառյանը [ՀԱԲ, 1², 249] կազմված է համարում *առ-նում* բայից *-ած* ածանցով («առնված բան»)»⁸: Այնուհետև, Գ. Ջահուկյանը *առակ* բառի համար ունի բոլորովին այլ կարծիք, այն է՝ *առ-ակ* բաղադրություն, որի *առ* (<**porsō* [**(h)orū-*]) բաղադրիչը հնագույն հայերենում «առաջին հերթին գործածվելով որպես նախդիր՝ տարբեր հոլովներով, ... հին հայերենում արտահայտում է գերազանցապես մերձավորության գաղափար, որ հիմնականում պահպանվում է նաև նախաձանցային կազմության դեպքում: ...*առ*-ով և *առ*-ով սկսվող արմատների մոտ հանդիպում է լրացուցիչ *ա* (*առա-*), որ կարող է լինել կամ նախահավելվածային, կամ, թերևս, հ.-ե. **-ō* վերջաձայնի զրո աստիճանի արտացոլում՝ **porsō- > առա-*»⁹: Սրանից բացի, տվյալ դեպքում նշելի է նաև հետևյալը. «Հունարան դպրոցի ներկայացուցիչների կողմից *առ*-ն ստացել է նոր գործածություն՝ հուն. *προς*-ի դիմաց: Առանձնացնենք ոչ հունարան հին կազմությունները՝ *առագաստ* (հմմտ. *ագանիմ* «հագնել»), *առածիմ* (հմմտ. *ածեմ*, *ածիմ*), *առակ*, *առակորուկ* «հակառակող»...»¹⁰:

Հետագայում, *առակ* և *առած* բառերի վերաբերյալ Գ. Ջահուկյանի բառարանում նշվում է սուկ հետևյալը. «ԱՌԱԿ, տե՛ս *առ* և *առ-եմ*: «ԱՌԱԿ, տե՛ս *ակն* / *աչք*»¹¹:

Նորագույն տվյալները հնարավորություն են տալիս հայ. *առած*, այլև *առակ* բառերի համար առաջարկել նոր ստուգաբանություն, տալ համեմատաբար ավելի հավաստի բացատրություններ:

Ամենից առաջ նշենք, որ ծագումնային նույնական արմատի տարբերակներից առաջ եկած հայ. *առակ*//*առած* բառերի ստուգաբանական մեկնա-

⁶ Նույն տեղում, էջ 250:

⁷ Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 121:

⁸ Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 163:

⁹ Նույն տեղում, էջ 243:

¹⁰ Նույն տեղում, էջ 243-244:

¹¹ Գ.Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 73:

բանության համար ելակետային նշանակություն ունի այն, որ ամենից առաջ պետք է հաշվի առնել դրանց իմաստային-պատկերացումային ոլորտը՝ տարածական և ժամանակային կտրվածքների մեջ: Այն, ինչ հնագույն է և նախնական, հետագայում, մանավանդ հայերեն գրավոր ավանդույթով ամրագրվելիս կարող են ունեցած լինել բավականին զգալի փոփոխություններ: Նախնականի վերականգնումը արտահայտության և բովանդակության պլանների մեջ՝ տվյալ դեպքում ունի առանցքային նշանակություն:

Հայ. *առակ//առած* բառերի նախնական (եթե ոչ՝ սկզբնական) իմաստը կապվում է «ասել, խոսել» ընդհանուր իմաստի հետ, ընդ որում տարածաժամանակային հստակ բաշխվածությամբ: Իսկ դա այլ բանի հետևանք չէ, քան ձայնական գործողության, որ հանդես է գալիս տվյալ պահին, տվյալ դեպքում: Վ. Ի. Տոպորովը գտնում է, որ տեքստի կառուցումը տեղի է ունենում տարածության և ժամանակի մեջ, և *տարածության* լիարժեք չափումն այլ կերպ չէ, քան «այստեղ-հիմա» (ոչ թե՛ «այստեղ»), նույնը *ժամանակի*՝ ոչ թե պարզապես «հիմա», այլ «հիմա-այստեղ»¹²:

Հայ. *առակ//առած* բառն ունի զգալի թվով զուգահեռներ ցեղակից լեզուներում, որոնցում պահպանված են ոչ միայն հնագույն իմաստները, այլև տեղ են գտել նորերը: Հմմտ. հինդկ. *rájas* «տարածություն» (*rjāti* «տարածք»-ի դեպքում)¹³:

Լատ. *regō* «ղեկավարում եմ, ուղղորդում եմ, որոշում՝ վճռում եմ և այլն», *rēxi* «ղեկավարեցի, ուղղորդեցի, որոշեցի՝ վճռեցի և այլն» ձևերի անորոշ դերբայն է *regēre* 1) «ղեկավարել, կառավարել (նավը, ձիերին, մարդկանց և այլն), 2) «ուղղել, ուղղորդել (դեպի նպատակը՝ նպատակին)», 3) «որոշել, վճռել, հաստատել», 4) «հրահանգել, ցուցում տալ»¹⁴ :

Այնուհետև՝ լատ. *rex* 1) «թագավոր», 2) «արքայազն, իշխան», 3) (*ա-նեգ.*) «արքայական զույգ», 4) «զերագույն քուրմ», 5) «բռնակալ», 6) «տիրակալ, գերիշխան, տեր», 7) «խրատատու, դաստիարակ» և այլն¹⁵:

Այս երկուսի մեջ ամենանախնականը «ասել, (իր խոսքը) առաջ բերել՝ առաջ տանել» իմաստն է, այսինքն՝ ղեկավարելը, կամ ղեկավարը այդպիսին է ամենից առաջ, նախկնաբար իր խոսքով, իր ասածով, որով պիտի կատարվի, իրագործվի նախատեսվածը, տեղի ունենալիքը:

Մյուս կողմից, հայ. *առիւծ // առեւծ* տարբերակային արմատն ավանդաբար բխեցվում է հե. **reug*՝ «մոնչել» արմատից, որ, ինչպես նաև Աճառյանն է գրում, «տալիս է հայ. *ռեւծ* և *ռ*-ի պատճառով՝ *ա* հավելվածով՝ *առեւծ*», որն էլ համեմատվում է ցեղակից մի շարք ձևերի հետ¹⁶: Բառի հետագա բացատ-

¹² В.Н.Топоров, Пространство и текст.- В кн.: «Текст: Семиотика и структура», М., 1983, էջ 239:

¹³ Հմմտ. В.Н.Топоров, նշվ. աշխ., էջ 239:

¹⁴ И.Х. Дворецкий, Латинско-русский словарь, М., 1976, էջ 864: Հմմտ. Վ, Համբարձումյան, Լատիներենի դասագիրք, Ե., 2007, էջ 336:

¹⁵ И.Х. Дворецкий, նշվ. աշխ., էջ 881:

¹⁶ Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 259: Աստվածաշնչում, օրինակ, *առիւծ // առեւծ* բառը գործածվում է 143 անգամ, ընդ որում *իւ*-ով՝ 76, իսկ *եւ*-ով՝ 67:

րությունը, մանավանդ ցեղակից՝ հուն. *ὄρουγῆ* «ռոնց», *ὄρουγιδος* «մոնչին» և այլն, միով. *rucht* «ռոնց, աղաղակ», գոթ. *in-rauhtjan* «կատաղել» և այլ ձևերի իմաստաբանության հետ կապված, Աճառյանը այլ կերպ է մեկնաբանում. «Այս բոլորը կազմուած են պարզական *reu-* «ռոնալ, գոչել, մոնչել» արմատից՝ *g'* աճականով: Նոյնից *k* աճականով ունինք հսլ. *rykati*, ռուս. *рыкать, рычатъ* «մոնչել, բառաչել» և այլն»¹⁷: Հմմտ. նաև ռուս. *речь* «խոսք»:

Հ. Աճառյանը մեկ այլ դեպքում հետևյալ կերպ է անդրադառնում *առեւծ* բառին: «Երբ ստուգաբանելու համար *առիւծ* (հին ձևը *առեւծ*) բառը դիմենք հնդեվրոպական նախալեզվի (լատիներեն *rex* «թագավոր») «տիրել, կառավարել» արմատին, որ պիտի տար հայերեն *ռեւծ*, *ռ*-ի (իմա՝ ա-ի) հենարանով *առեւծ*, ավելացնենք մեր կողմից *ւ* (*առեւծ*) և դուրս բերենք թագավորից մի գաղտնի անուն. օրինակ առնելով պարսկերեն *šir* «առյուծ» բառը, որ ծագում է իբր զենդերեն *xši* «իշխել» արմատից, ինչպես ստուգաբանեց Ղափանցյանը (Տեղեկագիր ինստիտուտի, 2, 106), կատարում ենք շատ կամայական ստուգաբանություն: Իրավունք չունենք մեր կողմից որևէ *ւ* ավելացնելու. պարսկերեն *šir* «առյուծ» բառի ծագումը «իշխել» բայից առաջարկել է Դարմաստետերը (Etym. iran, 1, 106), որ հիշում է Հոռնը (§ 803), բայց չի ընդունված լեզվաբանների կողմից, և Բարթոլոմեն իր բառարանում ամենևին չի էլ հիշատակում այն: Այսպես որ համեմատությունն իսկ անգո է: Շատ ավելի բնական է դնել *առեւծ* հնդեվրոպական նախալեզվի *reug*՝ «մոնչել» արմատից, որից ունենք հունարեն *ἐρύγοντα* «մոնչելով», *ωρῶγῆ* «մոնչյուն», լատիներեն *rugis* «առյուծի մոնչելը», միջին իռլանդերեն *rucht* «ռոնց, աղաղակ», անգլոսաքսոներեն *rēoc* «վայրի, վայրենի»¹⁸:

«Առյուծի մոնչյուն» նշանակող հնդեվրոպական բառի նորագույն համեմատություններում առնչություն կա նաև «(ցուլի) բառաչյուն՝ մոնչյուն» [թերևս նաև «(գումեշի) մոլնգոց»] իմաստների հետ: Հմմտ. հիով. *rucht* «մոնչյուն, ռոնց», հուն. (*hnu.*) *ἐρύγομαι* «ռոնալ, բառաչել» (փոխաբերական իմաստով՝ «հերոսի, ծովի համար ասված». հուն. ունի նաև «ցուլի համար ասված». *ἐρύγηλος* «մոնչացող, բառաչող»), լատ. *rugio* «մոնչում եմ (ինչպես առյուծը)», հսլավ. *rŭžŏ* «վրնջում եմ», հռուս. *рѣжати* «վրնջալ, խրխնջալ» (<հե. **reuk*՝-): «Այս սկզբնական նշանակությունից բնականաբար առաջ է գալիս կենդանիների անվանումը, մասնավորապես «առյուծ». հայ. *առեւծ* «առյուծ» (*Մ ճառյան* 1971, 1, 259), հմմտ. հանգլ. *rēoc* «վայրի» (իմաստային զարգացման առումով. հմմտ. ռուս. *лютый зверь*), հիսլ. *raukn* «լծված կենդանի»¹⁹:

Կարծում ենք, որ ձայնային գործողություն կատարելու տեսանկյունից «խոսել, ասել» (մարդու դեպքում) և «մոնչալ, մոնչ արտահայտել» (զագանի, հատկապես՝ առյուծի դեպքում) նախնական իմաստով նույնն է, և հա-

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 6, Ե., 1971, էջ 762:

¹⁹ Տե՛ս Թ. Բ. Գամքրելիձե, Վյաչ. Վս. Իվանով, *Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, т. 2, Тбилиси, 1984, էջ 511:

մեմատաբար ավելի ուշ է, որ տարբերակվել (դիֆերենցվել) է՝ մարդ - գազան (մյուս կենդանի) հակադրությամբ: Մյուս կենդանիներից, օրինակ, *առիւծ* (*առեւծ*) անունը ծագում է հնդեվրոպական նույն արմատից, ինչ *առակ* և *առած* բառերը (*reg'-). *առյուծ* անունը իր իսկ ձայնային առանձնահատկությունից է, իրեն բնորոշ ձայնով է պայմանավորված:

Հայերենի համար վերականգնելի առավել հավանական ձևը, այլև իմաստային զարգացումը հավաստում են առավելապես հնագույն վիճակների հետ առնչություն, որն ուսումնասիրողից պահանջում է առավել լայն քննարկում և նորագույն տվյալների վրա հիմնված վերլուծություն:

Այդ առումով հիշենք հայերենի ուսումնասիրությանը վերաբերող մեկերկու զգուշացում, մասնավորապես հայ. *կ//ծ* պայթականների ծագման և տարբերակման, առհասարակ առերևույթ մեկնաբանության հետ կապված:

ա) Անդրադառնալով հայերենի հնչյունաբանության և ստուգաբանության խնդիրներին՝ Ջ. Բոլոնիեզին գրում է հետևյալը. «Հայերեն բառերի սխալ ստուգաբանությունների վերլուծության հիման վրա երբեմն արվել են համարձակ հետևություններ կամ ամբողջովին անհիմն եզրակացություններ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողել նույնիսկ հայերենի հընչյունաբանության ուսումնասիրության վրա»²⁰:

բ) Թ. Վ. Գամկրելիձեն առաջ է քաշում հետևյալ դրույթը. «Հայերենի պայթականների համակարգի վերլուծությունը հնդեվրոպական համակարգի հարաբերակցությամբ թույլ է տալիս դատելու նրա բացառիկ հնատիպության մասին», այլև՝ «կատկայինների տեսության լույսի ներքո պայթականների գրաբարյան համակարգը գերմանականի պես հանդես է գալիս իբրև հնդեվրոպական նախնական համակարգին ամենամոտ կանգնածը հնչյութաբանական հնատիպ հարաբերակցությունների պահպանման տեսանկյունից»²¹:

գ) Որ հայ. *առած* // *առակ* տարբերակային բառերը չեն կարող ունենալ հունատիպ *առ-* նախդրով կազմություն (*առ-ած* // *առ-ակ*), կարելի է հիշել Ա. Փերիխանյանի ստուգաբանությունը հայ. *հարեւան* բառի, որում մերժում է, ի թիվս այլոց, նաև Մ.Աբեղյանինը, ըստ որի «բառը կազմված է հայ. *յար(ա)* - + հայ. *վան* (հմմտ. *վան-ք*) բաղադրիչներից և հորինվածքով համանման է հուն. *παροικος*-ին»²²:

Մեկ այլ օրինակ. ունենք հայ. *առոզանել* // *ռռոզանել* «ռռոզել» (<*srou-, հմմտ. հինդկ. *srávati* «ռռոզել, ջրել»), ըստ որի հայ. *ա-*ն հետագա հավելում է (**ա-ռոզ*-)՝ մի կողմից, հայ. *առոզանել*, *առոզանութիւն*, որ պատճենում է հուն.

²⁰ Ջ. Բոլոնիեզի, *Հայերենի հնչյունաբանության և ստուգաբանության խնդիրները*.- «Միջազգային հայերենագիտական գիտաժողով. 21-25 սեպտեմբերի 1982թ., Ջեկուցումների թեզիսներ», Ե., 1982, էջ 21:

²¹ Թ. Բ. Գամկրելիձե, *Индоевропейская «глotalная теория» и система древнермянского консонантизма*.- «Միջազգային հայերենագիտական գիտաժողով. Երևան, 21-25 սեպտեմբերի, 1982 թ. Ջեկուցումներ», Ե., 1984, էջ 33:

²² Հմմտ. Ա.Գ. Սերիխանյան, *Материалы к этимологическому словарю древнеармянского языка*, Часть 1, Отв. ред. д.и.н. И.М.Дьяконов. Ереван: Изд-во НАН РА, 1993.

προσφδία (<προσ-φδία) «առոգանություն» բառի՝ մյուս կողմից²³: Այս դեպքում, հավանաբար, գործ ունենք պատմականորեն առաջ եկած փոփոխության ենթարկված հին և համեմատաբար հետագա իմաստների, այսպես կոչված, իմաստային բաղադրության հետ: Հնարավոր է հնդեվրոպական միասնության շրջանում տարբերակային ձևեր դիտել *srou-// *reg'- արմատները՝ հընչունական ինչ-ինչ մեկնաբանությամբ «հոսել, դուրս հանել, արտաբերել» (հմմտ. *amm* «հոսք») ընդհանուր իմաստով, որն արդեն բոլորովին այլ հարց է:

Vazgen Hambardzumyan - Etymology: IE reg'- > Arm. *u-nu* (կ/ծ) [a-ĭak(k/c)] “speech, word”. - In this article the etymologies of the words առակ [arak] and առած [arac] are given as the roots for phonetic variation of կ/ծ [k/c] which previously had not quite precise etymology. We suggest more credible etymology.

Амбарцумян Вазген - Этимология: И.-е. *reg'- > арм. *u-nu* (к/ц) «речь, слово». - В статье дается этимология слов առակ [arak] и առած [arac] как отдельных корней с фонетическими вариантами կ/ծ[k/c]. Раньше их этимология не была убедительной: мы предлагаем более достоверную этимологию.

²³ Հմմտ. **Ա. Մուրադյան**, *Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում*, Ե., 1971:

«ՓԱՐԱԻՈՆ» ԲԱՌԻ ՇՈՒՐՁ

Գրաբարում *փարալոն* բառը շրջանառության մեջ է մտել Աստվածաշնչի թարգմանությամբ: Հին կտակարանում բառը ունի 200-ից ավելի կիրառություն, նոր կտակարանում հաճախական չէ (վկայված է հինգ անգամ)¹: Բառը հաճախական չէ և 5-րդ դ. ինքնուրույն գրականության մեջ: Այն վկայված չէ Կորյունի, Բուզանդի և Եղիշեի գրքերում (վերջինիս դեպքում նկատի ունենք «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատությունը): Ազաթանգեղոսը և Խորենացին ունեն մեկական վկայություն (նկատի ունենք Խորենացու «Պատմությունը»), Փարպեցին՝ երկու, Եզնիկը՝ 4: Եզնիկի վկայությունները նույն համատեքստում են, այսինքն՝ տեղեկությունները միևնույն անձի մասին են²: Ինքնուրույն գրականության և Նոր կտակարանի օրինակները քաղված են Հին կտակարանի տարբեր հատվածներից:

Եղիշեն մեկ այլ ծավալուն աշխատության մեջ ակնարկում է ոմն «կաղ» *փարավոնի* մասին. «Եւ մինչ դեռ խաղաղասեր վարուք կատարեր զկեանս իւր, եկն ել ի վերայ նորա Փարաւոն Կաղ յերկրէն եգիպտացոց, եղ ընդ նմա պատերազմ եւ սպան զնա յերկրին Հրեաստանի»³:

Այս վկայության մեջ, ինչպես տեսնում ենք, փարավոնի անձնանվան և թագավորության ժամանակաշրջանի վերաբերյալ որևէ փաստ չկա:

Փորձենք պարզել, թե եգիպտական բազմաթիվ փարավոնների շարքում ով է հիշյալ «կաղ» *փարավոնը*:

Կարծիք կա, որ կաղ է եղել Թուֆանհամոնը:

Վերջինիս դամբարանում հայտնաբերվել է 80 գույգ կոշիկ և ռենտգենյան ուսումնասիրությամբ պարզվել է, որ աջ ոտքը ավելի կարճ է եղել⁴: Վստահորեն կարելի է պնդել, որ Եղիշեի վկայած «կաղ» *փարավոնը* Թուֆանհամոնը չէ: Իրադարձությունների նկարագրությունը չի համապատասխանում Թուֆանհամոնի ապրած ժամանակաշրջանին:

5-րդ դարի թարգմանական գրականության մեջ հիշատակվում է նեքավով կաղ փարավոնը. «Եւ ոսկին տային Փարաւոնի նեքաւովր (այլ ձեռ. Նեքաւով)՝ կաղ Փարաւոնի»⁵: Եղիշեն, հավանաբար, նկատի է ունեցել այս վկայությունը:

Հետհինգերորդարյան գրականության մեջ (ոչ թարգմանական) Նեքավովի մասին տեղեկություն է հաղորդում Փիլոն Տիրակացին (VII դար). «Յետ

¹ Տե՛ս *Համաբարբառ հին եւ նոր Կտակարանաց*, Երուսաղեմ, 2010, էջ 1499-1500:

² Տե՛ս *Եզնրկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց*, Ե., 1964, էջ 134:

³ **Եղիշե**, *Վարդապետութիւն ըստ Յովհաննու սիրելոյ ի չարչարանս տեսոն* (Մատենագիրք Հայոց, Ա հատ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1004):

⁴ Տե՛ս www.liveinternet.ru/tags/фараон-Тутанхамон.

⁵ *Մրբոյն հորն Եւագրի Պոնտացոյ Վարք և մատենագրութիւնք*, Վենետիկ, 1907, էջ 238:

սորա թագաւորեաց Յովաքազ՝ որդի իւր, ամս Գ: Չսա կապեաց Նեքաւով արքայ Եգիպտացոց եւ իջոյց յԵգիպտոս»⁶:

13-րդ դ. հեղինակ Մխիթար Այրիվանեցին համարյա կրկնում է հիշյալ վկայությունը՝ հավելելով «կադ» մակդիրը. «Յովաքազ ամս 3, զսա գերի տարաւ Նաքաւով փարաւոն կադ»⁷: Ավելի ուշ Ջաքարիա Սարկավազը *նեքաւով* բառը գործածում է ինքնախարագանական «անկարող, անճարակ, տկար» իմաստով. «... և դուք անմեղադիր լերուք, զի այս է կարողութիւն իմ. Ջթերին՝ ձերում գիտութեամբ լցեք, և նեքաւով Ջաքեոսս ի պախարակելոյ ազատ արարեք, և լերուք ողջ հոգւովն Աստուծոյ. Ամէն»⁸:

Եղիշեի վկայած փարավոնի անձնանվան և թագավորության ժամանակաշրջանի որոշման հարցում, անշուշտ, պետք է հենվել համատեքստում բերվող այլ անձնանունների՝ աստվածաշնչյան Յովաքազ, Յովսիաս (Եղիշեի գրքում՝ Ովսիաս) և իրադարձությունների վրա: Այս դեպքում էլ դժվարություններ է հարուցում տարբեր ժամանակներում ապրած, բայց նույն անունը կրող անձանց հանգամանքը⁹:

Աստվածաշնչի և Աստվածաշնչին վերաբերող տարբեր ուսումնասիրությունների և բառարանների վկայությունների համադրմամբ հանգել ենք այն եզրակացության, որ այդ փարավոնը Նեքավովն էր: Բայց եղել է երկու Նեքավով՝ դրանցից մեկը մ.թ.ա. 667 թ. հավատարմության երդում է տվել Արշուրբանիպալին՝ հետագայում հարելով վերջինիս դեմ գործող ընդդիմությանը: Սա Եգիպտոսի կյանքում որևէ նշանակալից դեր չի ունեցել, իսկ թող, որը պատմության մեջ ավելի հայտնի է, թագավորել է մ.թ.ա. 610-594 թթ., իսկ Եղիշեն «Եւ մինչդեռ խաղաղասէր վարուք կատարէր զկեանս իւր» նախադասության մեջ նկատի ուներ այն Յովսիային, որը մահացել է Նեքավովի դեմ մղած պատերազմում՝ մ.թ.ա. 609 թվականին¹⁰:

Աստվածաշնչում, Ս. գրքի մեկնություններում, հատուկ անունների ցանկերում Նեքավովի «կադ» լինելու մասին խոսք չկա¹¹: Ինչ վերաբերում է Եւագր Պոնտացու վկայությանը, կարծում ենք՝ *կադ* բառով հեղինակը Նեքավովի մարմնական արատը չի նշում: Աստվածաշնչյան համարյա բոլոր անձնանունները նախապես ունեցել են բառային իմաստ, և այդ բառիմաստները միշտ չէ, որ արտահայտում են այս կամ անձի կամ նրա գործունեության բնորոշ հատկանիշները:

⁶ Տե՛ս *Մատենագիրք Հայոց*, Ե հատոր , Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005 թ., էջ 918-919:

⁷ *Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց. Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին*, Մոսկվա, 1860 թ., էջ 38:

⁸ *Ջաքարեայ Սարկավազի Պատմագրութիւն*, հատոր առաջին, Վաղարշապատ, 1870, էջ 4:

⁹ Տարբեր *Յովաքազների և Նեքավովների* մասին տե՛ս Библиейская энциклопедия, М., 1891, стр. 348, **Փ.Ա.Брокгауз, И.А.Ефрон**, *Энциклопедический словарь*, т. 38, стр. 953-954: Բառարան Սուրբ գրոց. Կոստանդնուպոլիս, 1881, էջ 388-389:

¹⁰ *Բառարան Սուրբ գրոց*, էջ 396, 620:

¹¹ Բացի նշված գործերից տե՛ս նաև *Еврейская энциклопедия*, С.Петербург, стр. 694.

Օրինակ՝ *Չարուդոն* նշանակում է «բնակարան», *Չարարիա* «հիշատակ», *Բոնու*՝ «արագություն» կամ «հոգով ուժեղ», *Ուլսէէ*՝ «փրկություն», *Մէրուլբ*՝ «աճումն», *Յովնաթան*՝ «պարզ տեան», *Յովնան*՝ «աղավնի»:

Եբրայերեն *Nəḳō*, եգիպտ. *Nkaō* նշանակում է «հարվածյալ»¹²: Այս բառիմաստն է պատճառը, որ Նեքավովին Եվագր Պոնտացին (կամ նրա թարգմանիչը) վերագրում է *կադ* մակդիրը:

Այժմ անդրադառնանք *փարաւոն* բառի հետ կապված լեզվաբանական որոշ հարցերի: Ինչպես նշել ենք, գրաբարում գործառության հիմնական ոլորտը Հին կտակարանն է: Քրիստոնեական ժամանակագիրները *փարաւոն*-ը համարում էին հատուկ անուն: Այդ պատճառով էլ մի շարք լեզուներով հրատարակված Սուրբ գրքերում այն գրվում է մեծատառ. (հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն), գրաբար և արևմտահայերեն թարգմանություններում նույնպես մեծատառ է, արևելահայերեն՝ փոքրատառ, փոքրատառ է նաև ռուսերենում¹³: *Փարաւոնի* հատուկ անուն դիտելն է պատճառը, որ բառը տեղ չի գտել Նոր հայկազյան և Առձեռն բառարաններում: (Չարմանալիորեն ՆՀԲ-ն չի նկատել նաև *փարաւոն* բաղադրիչով կազմությունները). *փարաւոնակերպ*-ը՝ վկայել է Փարպեցին, *փարաւոնեան*-ը՝ Ագաթանգեղոսը (Առձեռն բառարանը վկայել է միայն *փարաւոնակերպ*-ը):

Ճիշտը, անշուշտ, *փարաւոն*ը հատուկ անուն չդիտելն է: Իրականում այն եգիպտական թագավորներին տրվող տիտղոս է: Խուսափելով թագավորի սուրբ անունը տալուց՝ եգիպտացիները ասում են *per-oh*, որը սկզբնապես նշանակել է «մեծ տուն, պալատ», իսկ XII դինաստիայից սկսած՝ «թագավոր», որը համարվում էր արևի որդի և Օսիրիսի ժառանգորդը¹⁴: Այդ անվանումը մտել է հին կտակարան *phar'o*, իսկ հունարեն *φοραω*, հայ. *փարաւոն* ձևով:

Հայերենում *փարաւոն* բառը ունի գրության մի առանձնահատկություն ևս. խոսքը բառավերջի *ն*-ի մասին է: Հունարենում, ինչպես և եբրայերենում ու ղպտիերենում առանց *ն*-ի է: Լատիներենում ուղղական հոլովով գործածվելիս *Pharao* է, հմմտ. «Եւ եղև յետ երկուց ամաց աւուրց ետես Փարաւոն երագ» (Օճնդ. ԽԱ, 1), լատ. «Post dous annos vidit Pharao somnium»: Իսկ թերված

¹² Տե՛ս *Բարարան Սուրբ գրոցի* համապատասխան գլխաբառերը: Բոնու-ի «հոգով ուժեղ» իմաստը, տե՛ս *Симфония к синодальному изданию Библии*, Стокгольм, 1995, стр. 141. (Այս երկու բառարանների մեկնություններում նկատվում են տարբերություններ):

¹³ Տե՛ս **Septuaginta**. *Id est Vetus Testamentum Graece*, Stuttgart, 1935, 1939: *Biblia Sacra Vulgata*, Stuttgart, 1969, 1994. *La Bible. Ancien et Nouveau Testament*, 1991, *Библия книги священного писания Ветхого и Нового Завета*, М., 1964. Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանաց, Վիեննա, 1929: *Աստուածաշունչ* Մատեան Հին և Նոր կտակարանների. արևելահայերեն նոր թարգմանություն (վերահրատարակություն), Էջմիածին, 1999 թ., *Աստուածաշունչ* գիրք Հին եւ Նոր կտակարաններու, Moscow, 1994. *Աստուածաշնչի* հին հրատարակություններում (Վենետիկ, 1805, Ս.Պետերբուրգ, 1817) բոլոր հատուկ անունները փոքրատառ են):

¹⁴ Տե՛ս *Большая Советская энциклопедия*, т. 14, М., стр. 956.

ձևերում՝ Pharaonis, Pharaoni(Genes. 40, 11): Հունարենում ֆարաօ-ն չհղղվվող բառ է¹⁵:

Հին սլավոներենում՝ фарао է, իսկ հին ռուսերենում՝ фараонъ¹⁶:

Հունարեն ֆարաօ-ի հայերեն *փարաւոն* տառադարձումը, կարծում ենք, առաջին հերթին պայմանավորված է գրաբարի ուղղագրության առանձնահատկություններով. հուն. օ-ն *աւ* գրելու դեպքում կստացվեր բաց վանկ և կհնչեր *փարաւաւ, գրության և արտասանության անհամապատասխանություն կստեղծեր նաև բառավերջում ո-ի գրությունը՝ փարաւո(յ):

Նկատենք, որ գրաբարյան *ֆ*-ն մի շարք դեպքերում (նկատի ունենք աստվածաշնչյան կիրառությունները) նաև հոդի դեր է կատարում:

Հայերենի ուղղագրական և արտասանական առանձնահատկություններից ելնելով՝ հայ թարգմանիչները շրջանցել են եբրայերենում և հունարենում գործածվող բառաձևը և նախընտրել ասորերենի *ֆ*-ով գրությունը:

Lavrenti Hovhannisyán – On the “Pharaoh” Word. – The article explores some features (frequency of word usage, word formation) of the word Pharaoh in the Old Armenian language. A comparison of various facts reveals the personality and *Lame Pharaoh’s* reign time which are mentioned in one of the works of the 5th century’s historian Yeghishe.

Оганесян Лаврентий – О слове “фараон”. – В статье исследуются некоторые особенности (словоформа, частотность употребления) слова *фараон* в древнеармянском языке.

Сопоставлением различных фактов устанавливаются личность и время правления “хромого фараона”, о котором упоминается в одном из произведений историка пятого века Егише.

¹⁵ Տե՛ս **И.Х.Дворецкий**, *Древнегреческо-русский словарь*, т. II, М., 1958, стр. 1714:

¹⁶ Տե՛ս **М.Фасмер**, *Этимологический словарь русского языка, издание второе*, т. IV, М., 1987, стр. 185: Բնականաբար, բառը դիտվում է որպես հունարենից կատարված փոխառություն ֆարաօ (v) ձևից: Անհասկանալի է փակագծերում դրված (v)-ն: Գուցե հունարեն ինչ-որ աղբյուրներում բառը վկայված է v-ով, բայց փաստ է, որ հուն. Աստվածաշնչում առանց v-ի է:

ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՒՅՆԱՆԻՇՆԵՐԻ՝
XVIII ԴԱՐԻՑ ԱՎԱՆԴՎԱԾ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ձեռագիր բառարաններում (այսուհետև՝ ՁԲ) բառիմաստային փոփոխություններ տարբերակելու խնդիրը բավականին բարդ է. ՁԲ-ները չունեն բնագրային օրինակներ, ուստի դժվար է վստահաբար պնդել, որ բառը նոր իմաստ, իմաստային նոր երանգ է ձեռք բերել: ՁԲ-ներում բառիմաստի փոփոխություն արձանագրվում է հայերենի տպագիր բառարանների համադրությամբ:

Արդիւնաւորել բայն առկա է *Շահել. օգտել. ստանալ. ընդունել զպըտուղն* նույնանիշային շարքում (այսուհետև՝ ՆՇ) (Ձեռ. Ձեռ. 566(I), 263ա. 775, 70բ. 873, 208ա. 3110, 103ա. 6762, 119բ)¹: Գրաբարի տպագիր բառարանները *արդիւնաւորել*-ը հղում են *արդիւնացուցանել*-ին՝ իբրև «Յարդինս ածել. բուսուցանել. աճեցուցանել. արտադրել. պտղաբեր և հասուն կացուցանել», «Ի կատարումն հասուցանել. արդեամբք ճշմարտել»²: Մ.Սեբաստացին *արդիւնաւորել*-ը բացատրում է «շահ ընել. վաստրկիլ»³: Մ. Ջախջախյանը «Ստանալ վարձս ըստ գործոց բարեաց, կամ արժանի լինել վարձուց» նշանակությունը առանձնացնում է աստղանիշով (*-ով)⁴ ընդգծելով՝ «...աստղանիշ բառքն և նշանակութիւնքն չեն նախնի մատենագրաց, այլ արդիք և նորահնարք» (ՋԲ, էջ 9): Մ. Գաբամաճյանը ԱԲ-ի նմանությամբ հավելում է «վարձք տալ»-ը⁵: Մ. Մալխասյանցն առանց որևէ նշումի *արդիւնաւորել*-ի համար առադրում է «Արդինք առաջ բերել, արտադրել մի օգտակար բան իբրև աշխատանքի արդիւնք» իմաստները⁶: Արդի հայերենի բացատրական բառարանները առաջնային իմաստով նշում են «արդյունավոր դարձնել»-ը, այսինքն՝ «արդյունք բերող, շահեկան դարձնել»-ը⁷: Ասել է՝ ճիշտ այն, ինչ արձանագրվում է

¹ Փակագծերում նշվում են ձեռագրահամարը և էջը: Պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

² *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկ, 1836, էջ 355: *Առձեռն բառարան հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865, էջ 134: **Ռ.Ղազարեան**, *Գրաբարի բառարան* (այսուհետև՝ ԳԲ), հ. 1, Ե., 2000, էջ 207:

³ **Մ.Սեբաստացի**, *Բառգիրք ի գրաբարե յաշխարհաբարոն ուր մեկնին բառք հայկազեան լեզուի սոսկ աշխարհաբար կամ տաճկական բառիք* (այսուհետև՝ ԲԳԱ), հ. 2, Վենետիկ, 1769, էջ 55:

⁴ **Մ. Ջախջախեան**, *Բառգիրք ի բարբառ հայ և իտալական* (այսուհետև՝ ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 232:

⁵ **Մ.Գաբամաճեան**, *Նոր բառագիրք հայերեն լեզուի* (այսուհետև՝ ԳՆԲՀԼ), Կ.Պոլիս, 1910, էջ 197:

⁶ **Ստ. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՄՀԲԲ), Ե., 1944, հ. 1, էջ 259:

⁷ *Մանանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Ե., 1969, էջ 214: **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 128:

ըստ ՁԲ-ների. *արդիւնաւորել*-ը նաև «շահել»-ն է՝ *արդիւնաւորել*-ի «արդյունք ստանալ»-ու իմաստային զարգացմամբ:

Ուրանալ. զլանալ. ժխտել. ուրաստ լինել ՆՇ-ն եզրափակում է *բացասել* բայը (Ձեռ. Ձեռ. 566(1), 265ա. 775, 71բ. 873, 209բ. 3110, 104բ. 6762, 120բ): Գրաբարի տպագիր բառարանները *բացասել*-ը բացատրում են իբրև «Բացարձակ ասել, բացայայտ՝ յայտնապէս՝ հրապարակով ասել. յայտնել. վճռել. վճիռ հատանել» (ՆՀԲ, հ. 1, էջ 472. ԱԲ, էջ 182. ԳԲ, հ. 1, էջ 279), այսինքն՝ ընդունում են «ոչ փակ» նշանակությամբ *բաց* արմատը՝ միաժամանակ նշելով, որ «...բացասել, որպէս ժխտել, ուրանալ. ոչ ասել, տե՛ս Ապուսել» (տե՛ս ՆՀԲ և ԱԲ): ԲԳԱ-ն արդէն մեկնում է «չէ ըսել» (ԲԳԱ, էջ 76): ՁԲ-ն «Ժխտել. ոչ ընդունել, ուրանալ» նշանակությունն առանձնացնում է իբրև «արդի և նորահնար» (ՁԲ, էջ 309): ՄՀԲԲ-ում *բացասել*-ի՝ վկայված ոչ առաջնային՝ երկրորդական իմաստներից են «Բացասական պատասխան տալ, ժխտել, «ոչ» ասել: Մերժել, չընդունել, չկատարել» (ՄՀԲԲ, հ. 1, էջ 279), որոնք արդի հայերենի բացատրական բառարաններում միակն են (ԱՀԲԲ, էջ 182. ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 306), իսկ արևմտահայերենի բառարաններում՝ առաջնայինը⁸:

Բառին ու բառիմաստին անդրադառնալիս հարկ է հիշատակել Հ.Աճառյանի՝ *բաց* բառին և *աս* արմատին առնչվող դիտարկումները: Ըստ Հ.Աճառյանի՝ «**Բաց** բառը յունարան հեղինակների մօտ դարձել է նախամասնիկ...որով շատ յունարէն բառեր ստրկօրէն թարգմանուած են նաև հայերէն, ինչ. բացասել = *ἀπόφρα...*» և «յունարան հեղինակների մօտ**բացասական, բացասոցել**... և այլափոխեալ ձևերով՝ **ապուսել** (**ապ** բացասականով) «ժխտել, ուրանալ, մերժել»» (ՀԱԲ, հ. 1, էջ 266, 404): Ուրեմն և կարելի է ամբողջով, որ *բացասել*-ը ՁԲ-ներում ունի «ժխտել, մերժել» իմաստը՝ մեկ անգամ ևս հաստատելով այն նաև ԲԳԱ-ով:

Բնախոս բառով է ավարտվում *Իմաստուն. գիտուն. գերիմաստ. քաբունի. վարդապետ. իմաստասէր. բանասէր. բանիբուն. գրոց աշակերտ կամ հրմուտ գրոց. հանճարեղ. ուշիմ. մտացի. կորովամիտ. կորովաբան. մտավարժ. նրբամիտ* (տե՛ս *գիմուտն*) ներհուն ՆՇ-ն (Ձեռ. Ձեռ. 775, 60բ. 3110, 90ա): Գրաբարի տպագիր բառարաններում այն վկայված է «Որ խօսի զբնութենէ զգալի էակաց... Եւ Բարոյախօս. առակախօս. Եւ Ճշմարտախօս. ճշգրտաբան. հաւաստապատում. հնախօս» նշանակություններով (ՆՀԲ, հ.1, էջ 494. ԱԲ, էջ 190.ԳԲ, հ.1, էջ 289): Բնականաբար այս ամենից կամ էլ այդպէս խոսողը ենթադրաբար պետք է՝ իմաստուն լինի՝ նկատի առնելով, որ Հ.Աճառյանի վրկայությամբ իրանական լեզուներում *բուն*-ը ունի նաև «հիմ, արմատ, հիմնական» նշանակությունները (ՀԱԲ, հ.1, էջ 483), ասել է՝ *բնախոս*-ը «էությունը, իսկությունը, մանրամասները» բացահայտողն է: ԲԳԱ-ի բացատրությունն է

⁸ Պ. Ճիգմեճեան, *Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*, Հալէպ, 1954, հ. 1, էջ 657: Գ.Ճերեճեան, Փ.Կ.Տոնիկեան, Ա.Տէր Խաչատուրեան, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէրրուր, 1992, հ. 1, էջ 311: Ա.Կոսնեան, *Բառգիրք հայերէն լեզուի*, Պէրրուր, 1998, էջ 63: «Մերժող, ժխտող» նշանակությամբ *բացասոց* բառն է արևմտահայերենում վկայում Ա.Սարգսյանը. Ա.Սարգսյան, *Արևմտահայերենի բառարան*, Ե., 1991, էջ 54:

«թապիլեթի վրայ խօսող» (ԲԳԱ, էջ 79), այսինքն՝ «բնությունից, բարքից խոսող»⁹: Հատկանշական է, որ պահպանելով վերոնշյալ իմաստները՝ ՄՀԲԲ-ն հավելում է «բնախօսութեան մասնագետ, ֆիզիոլոգ» նշանակությունը (ՄՀԲԲ, հ. 2, էջ 313), որը միակն է արդի հայերենի բացատրական բառարաններում (ԱՀԲԲ, էջ 195. ԺՀԼԲԲ, հ.1, էջ 328): Հետևաբար կարելի է բառիմաստի փոփոխություն, թերևս լայնացում, արձանագրել ՁԲ-ներում, այլև բառիմաստի որոշակի նեղացում, այսինքն՝ իմաստափոխություն տերմինավորումով¹⁰, արդի հայերենում:

Ինչ վերաբերում է Ձեռ. Ձեռ. 566(I) (109ա), 6762-ում (247ա) առկա *բանախօս* տարբերակին, ապա այն ևս կարող է ընդունելի համարվել: *Բանախօս*-ը հայերենում ունեցել և պահպանել է «Որ հրապարակախօս լինի. ատենախօս. ճառախօս. հռետոր» իմաստը (ՆՀԲ, հ. 1, էջ 433. ԱԲ, էջ 167. ԳԲ, հ. 1, էջ 256. ՄՀԲԲ, հ. 1, էջ 326. ԱՀԲԲ, էջ 167. ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 279): Եվ ուրեմն ենթադրելի է, որ հրապարակավ խոսողը, հռետորը, ճառախոսը պետք է՝ առնվազն մտավարժ լինի (չակնարկելով անգամ կորովամիտ, գիտուն, իմաստուն լինելը):

Զջարել բայը հանդիպում է միայն Ձեռ. Ձեռ. 566(I), 3110, 6762 -ում՝ *Նախանձել. մախալ. չարակնել. յաջախել. ընդ ակամբ հայիլ. ռխալ. խեռալ. հեռունել* ՆՇ-ում (համապատասխանաբար՝ էջ 262ա, 102բ, 118բ): ՆՀԲ-ն բայի համար նշում է՝ «**Զջարանամ, զջարիմ** որ և իբր ոմկ. **Չարանալ** ասի. այսինքն Զայրանալ, զայրագնիլ. դժուարիլ, դժկամիլ և խորհել չարիս հասուցանել. չարակնութեամբ վառիլ ի վրեժ քինու» (ՆՀԲ, հ.1, էջ 751), ԱԲ-ն և ԳԲ-ն առադրում են «ցաւիլ, տրտմիլ (բարի մտքով)» (ԱԲ, էջ 300), «նեղանալ» (ԳԲ, հ. 1, էջ 450) իմաստները, որոնք վկայում է նաև ՄՀԲԲ-ն (ՄՀԲԲ, հ. 2, էջ 38): Ակնհայտորեն, ըստ բառարանային տվյալների, *զջարել*-ը սկզբնապես չի ունեցել «նախանձել» նշանակությունը. նշվածներից այն հավելում է ԲԳԱ-ն (ԲԳԱ, էջ 133): «Բառգիրք հայոց»-ը *զջարիլ*-ը բացատրում է իբրև «խոժոռիլ, կամ խողխողել, կամ սպանանել»¹¹: «Նախանձել» իմաստը հավաստում են արևմտահայերենի բառարանները՝ *զջարիլ*-ն արձանագրելով նաև «տժգոհիլ»¹², «խոժոռիլ» (ԳՆԲՀԼ, էջ 476) նշանակություններով: 1859թ. Վենետիկում հրատարակված «Համառոտ բառարան ի պէտս նորավարժից»-ը *զջարել*-ը բացատրում է իբրև «բարի նախանձով վառուիլ»¹³: «Նախանձել» իմաստը հաստատվում է նաև ՆՇ-ում առկա *հեռունել* հարադրությամբ: Հ.Աճառյանը վկայում է, որ *եռ*

⁹ Ըստ Հ.Աճառյանի՝ արաբ. [tabiat] تَبِيْعٌ բառն է. գործառում է Նախիջևանի, Վանի, Ղարաբաղի բարբառներում. **Հ.Աճառեան**, Թուրքերեն փոխառեալ բառերը հայերենի մէջ.- *Էմինեան ազգագրական ժողովածու*, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 119: *Թապիլեթ* բառը «բարք» բացատրությամբ արձանագրում է նաև Եղիա Մուշեղյան Կարնեցին. տե՛ս **Եղիա Մուշեղյան Կարնեցի**, *Թուրքերեն-հայերեն բառարան*, Ե., 1986, էջ 49:

¹⁰ **Հ Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 246:

¹¹ *Բառգիրք հայոց* (այսուհետև՝ ԲՀ), Ե., 1975, էջ 105:

¹² **Պ. Ճիգմեճեան**, *Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*, հ. 2, էջ 1192:

¹³ *Համառոտ բառարան ի պէտս նորավարժից*, Վենետիկ, 1859, էջ 57:

արմատից «**հ** սաստկականով» *հեռ*-ը «նախանձ, դի, կռի» նշանակությունն ունի (ՀԱԲ, հ. 2, էջ 30, 359. հ. 3, էջ 81): Արդի հայերենի բացատրական բառարանները չեն նշում *զչարել* բայը:

Խարդախամիտ բառն առկա է *Չար և պէս պէս տեսակք չարի...* ՆՇ-ում (Ձեռ. Ձեռ. 566(I), 265բ. 775, 71բ. 873, 210ա. 3110, 105ա. 6762, 121ա): Բառը՝ «խաբեբա» նշանակությամբ, հիշատակում են ԱԲ-ն (էջ 372) և Լ. Հովհաննիսյանը¹⁴: Արդի հայերենի բացատրական բառարանները հավելում են նաև «նենգ» նրբիմաստը (ԱՀԲԲ, էջ 570. ԺՀԼԲԲ, հ.2, էջ 499), որն էլ «չարարուեստ» (ՆՀԲ, հ. 2, էջ 412), «չարագործ» (ԱԲ, էջ 613), «գաղտնի չար դիտաւորութիւն» (ՄՀԲԲ, հ. 3, էջ 450), «չար բնավորություն ունեցող»-ն է (ԱՀԲԲ և ԺՀԼԲԲ, ն.տ.): Եվ ուրեմն պարզորոշ է արդի հայերենում *խարդախամիտ*-ի հենց ՆՇ-ից բխող «չար» նշանակությունը: Թեև չի կարելի պնդել, որ խարդախ կամ խաբեբա անձնավորությունն անվերապահորեն չար է:

Բոյն. որջ. մորի ՆՇ-ում (Ձեռ. Ձեռ. 566(I), 239ա. 775, 55բ. 873, 188բ. 3110, 75բ. 6762, 103բ) առկա *խշտի* բառը հայերենի մի քանի բառարաններ բացատրում են իբրև «Անարգ կամ խիստ՝ գետնատարած անկողին՝ գազանաց և մարդկան. տեղի ընկողմանելոյ. մանաւանդ գետնի վրայ» (ՆՀԲ, հ. 1, էջ 955. ԱԲ, էջ 383. ՀԱԲ, հ. 2, էջ 368. ԳՆԲՀԼ, էջ 625), ԲՀ-ն՝ «տեղի, կամ անկողին» (ԲՀ, էջ 144), մի քանիսն էլ՝ նաև «որջ» (ՋԲ, էջ 681)¹⁵: ԲԳԱ-ն նշում է *խշտի*-ի «բուն» իմաստը (ԲԳԱ, էջ 173): XX- XXI դդ. հրատարակված բառարաններում բառը վկայված է նաև իբրև «ձեղնահարկում փոքրիկ խուց ծառաների համար. կատվի՝ շան համար պառկելու լաթ» (ՄՀԲԲ, հ. 2, էջ 277), «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում՝ «Չուլ, փալաս՝ գցելու և վրան պառկելու համար»¹⁶, բայց և «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ը *Բոյն* բառահոդվածում «հնց.» նշումով արձանագրում է *խշտիք*-ը¹⁷ (նաև՝ *որջ*-ը. ՀԼՀԲ, էջ 131): Կարելի է հավանական համարել, որ հայերենի զարգացման որոշակի ժամանակահատվածում, նաև որոշակի տարածքում «գետնատարած անկողին»-ը հասկացության առավելագույն ընդգրկմամբ և իմաստի լայնացմամբ «որջ» է նշանակել:

Ձեռ. Ձեռ. 775(76ա), 6762-ում (126ա)՝ *Վնասել. մեղանչել. չարիս հասուցանել. չար ինչ առնել նմա* ՆՇ-ում, վկայված է *խուել* բայը: Գրաբարի բառարաններն այն մեկնում են «... (որպես թե՛ իբրև զխոյ բախել կամ հարկանել.)... Խեթկել. եղջերցել. նեղել. հարստահարել. տառապեցուցանել. տագնապել» (ՆՀԲ, հ. 2, էջ 982), նաև «չարչրկել, դպչիլ, քշպել» (ԱԲ, էջ 393), այլև

¹⁴ Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառարան: Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010, էջ 135:

¹⁵ Մ. Քաջունի, *Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դարութեանց* (այսուհետև՝ ՔՄ), հ. III (Համառոտ հայերեն գաղղիերեն), Վենետիկ, 1893, էջ 101: **Կոմիտաս Ոսկեան**, *Առձեռն բառագիրք հայերեն - գաղղիերեն* (այսուհետև՝ ԱԲՀԳ), Կ. Պոլիս, 1893, էջ 296: **Ա. Խոնդաբաշեանց**, *Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ* (այսուհետև՝ ԽԲՀՌ), հ. 1, Մոսկոյա, 1838, էջ 510):

¹⁶ *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), Ե., հ. 2, 2002, էջ 344:

¹⁷ **Ա. Սուքիասյան**, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան* (այսուհետև՝ ՀԼՀԲ), Ե., 1967, էջ 268:

«վիրաւորանք հասցնել, նեղութիւն պատճառել, տագնապի ենթարկել» (ԳԲ, հ. 2, էջ 590): ԲՀ-ն նշում է «զգուել, կամ խարել, կամ նեղել, կամ անարգել» իմաստները (ԲՀ, էջ 147): ԲԳԱ-ն արդեն մեկնում է «մարդու դպչիլ. զուլում ընել» (ԲԳԱ, էջ 178): Հ.Աճառյանի՝ «գու.» և հարցական նշումներով դիտարկումը վերաբերում է բարբառներում (Ախց. ՆՆխ.) «խանդոտիլ», «զգուիլ, գանիլ» նշանակություններով գործառող *խվալ*-ին («Նո յն է արդեօք **խվալ**...»): ՀԱԲ, հ. 2, էջ 413): Հարկ է նշել, որ ՀԼԲԲ-ն առանձնացնում է Խոտրջուրի և Նոր Նախիջևանի բարբառներում հանդիպող *խվել*-ը՝ «խորշել, զզվել» նշանակությամբ (ՀԼԲԲ, հ. 2, էջ 370), ՄՀԲԲ-ն՝ հավելում «Հարցմունքներով նեղացնել»-ը (ՄՀԲԲ, հ. 2, էջ 306): Բայրը *Նեղել* և *Չարչարել* բառահոդվածներում «հնց.» նրշումով արձանագրում է ՀԼՀԲ-ն (էջ 488, 526): Արևմտահայերենի մի քանի բառարաններ *խուել* բայը վկայում են «նեղել» և «չարչարել» նշանակություններով¹⁸: *Խուել* բայի՝ «վնասել» նրբիմաստը ենթադրելի է, քանի որ վիրավորելը, «նեղություն պատճառելը, տագնապի ենթարկելը» ոչ միայն նեղում, չարչարում են, այլև, անշուշտ, վնասում:

Կամակոր. *ապառում. անզգամ. սուպր. բիրտ. քմբոստ. հեստ (տե՛ս զխիստն)* ՆՇ-ի հենաբառը (Ձեռ. Ձեռ. 566(I), 252բ. 775, 64ա. 873, 199բ. 3110, 94բ. 6762, 112բ) ՆՀԲ-ն մեկնում է «Ծամածուռ. խեղաթիւր. ոլորեալ և Մոլորեալ. թիւրեալ՝ իրօք կամ նմանությամբ»՝ նաև նշելով՝ «Ըստ հոմաձայնութեան յետին վկայութեանցս՝ ռամկօրէն կամ առ յետնագոյնս Կամակոր ասի յամառն և կամապաշտ» (ՆՀԲ, հ.1, էջ 1040): ՆՀԲ-ի վերջին դիտարկմանը Հ.Աճառյանը հավելում է՝ «...բառս կարծելով **կամք** և **կոր** բառերից բարդուած՝ գործածում են «յամառ» իմաստով. և այս սխալ նշանակութիւնը անցել է նաև արդի հայերենին» (ՀԱԲ, հ. 2, էջ 500): ԲԳԱ-ն *կամակոր*-ը բացատրում է «ինատճի» (ԲԳԱ, էջ 190)՝ իբրև «թուրքերէնէ փոխառեալ» «յամառ»¹⁹: «Յամառ» նշանակությունը, թեև առանց վկայության, առանձնացնում են նաև ԱԲ-ն (էջ 417), ՋԲ-ն (էջ 742): Առադրելով “непокорный, неуступчивый, несговорчивый” իմաստները՝ նույնն է վկայում ԽՀՌԲ-ն (հ.1, էջ 555): ՆՇ-ում *կամակոր*-ի «համառ» նշանակությունը կարող է հաստատվել նաև *սուպր* բառով, որը Սվեդիայի բարբառում ունի «համառ (երեխա)» նշանակությունը (ՀԼԲԲ, հ. 5, էջ 379): Փաստորեն նկատի առնելով բառարանային տվյալները, այլև ՆՇ-ում *կամակոր* բառի առկայությունը՝ կարելի է արձանագրել, որ սկզբնապես նաև XVIIIդ. ավանդված ՁԲ-

¹⁸ **Յ.Գայանեան**, *Բառարան- գանձարան հայերէն լեզուի*, Գահիրէ, 1938, էջ 196: **Պ. Ճիզմէճեան**, նշվ. բառ., հ. 2, էջ 525: **Ա.Տէր Խաչատուրեան**, **Հ. Գանգրունի**, **Փ.Կ. Տօնիկեան**, Հայոց լեզուի նոր բառարան, Պէրուր, 1968, էջ 269: **Գ.Ճերէճեան**, **Փ.Կ. Տօնիկեան**, **Ա.Տէր Խաչատուրեան**, նշվ. բառ., հ. 1, էջ 872:

¹⁹ Հ.Աճառեանը «թուրքերէնէ փոխառեալ» «յամառ» նշանակությամբ *ինատճի*-ն վկայում է Պոլսի, Վանի, Նախիջևանի բարբառներում (Հ.Աճառեան, Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ.- *Էմինեան ազգագրական ժողովածու*, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 143): Բառը «կամակոր, կամապաշտ» նշանակությամբ առկա է նաև Եդիս Կարնեցու բառարանում. **Եդիս Մուշեղյան Կարնեցի**, նշվ. բառ., էջ 50:

ներում է առկա բառի «յամառ և կամապաշտ», ըստ Հ. Աճառյանի, «սխալ» նըշանակությունը:

Ձեռ. Ձեռ. 566(I) (243բ), 6762 (107ա)-ում՝ *Ջբաղիլ. պատառել. պարապել. դատարկանալ* ՆՇ-ում, առանձնանում են *պարապել* և *դատարկանալ* բայերը: Գրաբարի տպագիր բառարաններում *պարապել* բայի նշանակություններն են «Պարապառնուլ. դատարկանալ. յետս կալ. պարապ բերել. դեզերիլ. զհետ լինիլ իմիք. պատկառ կալ», «բան գործ չունենալ» (ՆՀԲ, հ.2, էջ 628. ԱԲ, էջ 689, ԳՀԲ, էջ 585): Հ.Աճառյանը բառի ««գբաղիլ» նշանակութեան զարգացման համար» համեմատում է հունարենում *σχολάζω*՝ «պարապ ժամանակ անց կացնել. 2. պարապ ժամանակը մի զբաղմունքի նուիրել, զբաղիլ, ուսումնասիրել», այլև վրացերենում *մոցալէ* «պարապ» - *մոցալէբա* «գբաղիլ» իմաստները (ՀԱԲ, հ. 4, էջ 57): ԲԳԱ-ն *պարապել*-ն արդեն մեկնում է «բանի մէջ տալտրքմիշ ընել» (ԲԳԱ, էջ 336), այսինքն՝ ինչպես փոխաբերական («перен.») նշանակությամբ բացատրում-նշում են թուրքերեն-ռուսերեն բառարանները՝ *daldırmak* “ծыты погруженным в мысли, задуматься”²⁰, ասել է՝ «խորհել, մտածել»: Այս փոխաբերական նշանակության առնչությամբ հարկ է հիշատակել *պարապել* բայի համար Եր.Մեղրեցու արձանագրած միակ «խոկալ» իմաստը (ԲՀ, էջ 271), և, այսպիսով, թերևս, կպարզվի, թե որտեղից է բառարանագիրը «փոխառել» այն: ՄՀԲԲ-ն «պարապ՝ ազատ ժամանակ գտնել մի բանի համար» նշանակությունը համարում է «հնացած»՝ նշելով արդեն՝ «գործից ազատ ժամանակը լցնել մի երկրորդական զբաղմունքով, ժամանակը նուիրել մի (հիմնական) աշխատանքի, ազատ ժամանակը նուիրել մեկին՝ սովորեցնելու կամ սովորելու նպատակով» իմաստները (ՄՀԲԲ, հ.4, էջ 78): Արդի հայերենի բացատրական բառարաններն արձանագրում են միայն «զբաղվել մի բանով, մի բան սովորել, ուսուցանել, սովորեցնել» իմաստները (ԱՀԲԲ, էջ 1201. ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 186): Ակնհայտորեն *գբաղիլ, պատառել* բայերին հաջորդող *պարապել*-ը ՆՇ է ներառվել հենց «զբաղվել մի բանով» նշանակությամբ: Մ. Աբեղյանի հավաստմամբ՝ «Կնշանակե՛լ այս բառը ստացել է սկզբնականի հակառակ նշանակություն»²¹:

Փոքր-ինչ տարակուսելի է ՆՇ-ն եզրափակող *դատարկանալ* բայի առկայությունը. այն հականիշ է վերը նշված հոմանիշ բառերին և հայերենում, ըստ բառարանների, ունի միայն «անգործ լինել և կալ. խափանիլ գործոյն և ի գործոցն» (ՆՀԲ, հ. 1, էջ 601. ԱԲ, էջ 235. ԳԲ, հ.1, էջ 353. ԳՀԲ, էջ 207), «դատարկ դառնալ, դատարկվել» իմաստները (ՄՀԲԲ, հ.1, էջ 494. ԱՀԲԲ, էջ 281. ԺՀԼԲԲ, հ.1, էջ 480): Թերևս կարելի է ենթադրել, որ ՁԲ-ն ժամանակագրական կտրրվածքով ընդօրինակվել է *պարապել* բայի՝ իմաստների փոխհաջորդման²²

²⁰ St' u *Турецко-русский словарь*, М., “Русский язык”, 1977, ст. 206: Հ.Աճառյանը «թուրքերենէլ փոխառեալ» «մխել» նշանակությամբ *տալտրքմիշ ընել*-ը վկայում է Նախիջևանի բարբառում, սակայն «կուժը դատարկել» իմաստով (Հ.Աճառյան, նշվ. աշխ., հ.Գ, էջ 328):

²¹ Մ.Աբեղյան, *Երկեր*, հ. 2, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1974, էջ 113:

²² Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 106:

շրջանում, ասել է՝ ընդօրինակողը, հավելելով *դատարկանալ* բայը, տեղյակ չի եղել *պարապել*-ի նոր իմաստին և հավելել է *դատարկանալ*-ը իբրև «բան գործ չունենալ» նշանակությամբ *պարապել*-ի նույնանիշ:

Տալ. պէս պէս կերպք տալոյ... ՆՇ-ում (Ձեռ. Ձեռ. 566(I), 273ա. 775, 76բ. 873, 216ա. 3110, 108բ. 6762, 126ա) առկա *վերատրել* բայը գրաբարի տպագիր բառարանները վկայում են «Ի վեր տալ իւրմէ. բիւել. դուրս տալ. ուռճանալ» նշանակություններով (ՆՀԲ, հ. 2, էջ 810. ԱԲ, էջ 758. ԳԲ, հ.2, էջ 517. ՄՀԲԲ, հ. 4, էջ 327): Այն՝ իբրև «տալու տարբեր ձևերից մեկը», ՆՇ է ներառվել «նորից, կըրկին տալ» իմաստով: Բաղադրված է ըստ Հ.Աճառյանի «յետին յունաբան հեղինակների մօտ» «վերստին, կրկին, նորից, դարձեալ» նշանակությամբ²³ «իբր յն. ձսս- նախդիրին համապատասխան» *վեր-* նախածանցով (ՀԱԲ, հ. 4, էջ 330) և *տալ* բայի հրամայականի *տուր*՝ «շատ անգամ բարդութանց և անծանցմանց մէջ մտնող» ձևով, որի համար Հ. Աճառյանը «յետնաբար» նշում է օրինակներ՝ «**բացատրել, բարեսրութիւն, փառատրութիւն** ևն» (ՀԱԲ, հ. 4, էջ 337): ԲԳԱ-ն մեկնում է «յետ տալ. վրան բերել. եւելցնել» (ԲԳԱ, էջ 374): *վերատրեալ* ձևը իբրև «օտար ազդեցությունների կիրառման տիպական օրինակ» արձանագրվում է XVII դ.՝ Հովհաննես Հոլովի «Համառոտութիւն ճարտասանական արհեստի» երկում (ցավոք, ուսումնասիրության մեջ նշանակությունը չի տրվում)²⁴: ԲՀ-ն *վերատրեալ*-ը հղում է՝ *վերցուցեալ*-ին (ԲՀ, էջ 302): *վերատրել* բայը վկայում է նաև Հ. Բարսեղյանը²⁵:

Քնափ բառը հանդիպում է *Ծոյլ. յոյլ. պղերգ. դանդաղ. հեղգ. դանդաղկոտ. յապաղկոտ. վեհերոտ. վատ. դատարկակեաց. գաղջ. թոյլ. մեղկ. թմրբրեալ. յամբ. յամառոյ. քնեած. անարի* ՆՇ-ում (Ձեռ. Ձեռ. 566(I), 251բ. 775, 63բ. 873, 199ա. 3110, 94ա. 6762, 112ա): Ըստ ՀԱԲ-ի՝ բառն առկա է Գր. Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում «քնկոտ» նշանակությամբ (ՀԱԲ, հ. 4, էջ 592): Իբրև գրաբարում չվկայված բառ՝ նույն՝ «քնկոտ» նշանակությամբ, արձանագրում են Ս.Գրիգորյանը և Լ.Հովհաննիսյանը²⁶: ԲԳԱ-ում *քնափ*-ը հղումով է՝ «տե՛ս քնեած» (ԲԳԱ, էջ 411): ԲՀ-ն բառը բացատրում է «քնով ամփշեալ» (ԲՀ, էջ 334), նույնն է վկայում Ն.Բյուզանդացին՝ նշելով, որ բառն առկա է հին բառգրքերում²⁷: ՄՀԲԲ-ն «հին բառ կամ նշանակութիւն» նշումով հավելում է նաև «շատ քնող» բացատրությունը (ՄՀԲԲ, հ. 4, էջ 579)²⁸: Գ.Փեշտրմալձյանը, *քնափ*-ը հղելով *քնեած*-ին, մանրամասնում է՝ «...և յայսմանէ նմանութեամբ առեալ, Քնեած կոչին արք դանդաղկոտք և պղերգք, և թմրեալք զգայութեամբք, և

²³ «Վերստին տեսնել» նշանակությամբ *վերատեսանել* բայն է վկայում IXդ. Լ.Հովհաննիսյանը. **Լ.Հովհաննիսյան**, *Գրաբարի բառարան*, էջ 266:

²⁴ **Լ.Հովհաննիսյան**, XVII դարի գրաբարը. - *Լեզվի և ոճի հարցեր*, VII, Ե., 1983, էջ 188-189:

²⁵ **Հ.Բարսեղյան**, *Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան*, Ե., 1973, էջ 871:

²⁶ **Ս.Գրիգորյան**, *Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ* (Գրիգոր Տաթևացի), Ե., 2009, էջ 33: **Լ.Հովհաննիսյան**, *Գրաբարի բառարան*, էջ 289:

²⁷ **Ն.Բյուզանդացի**, *Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց* (այսուհետև՝ ՆԲԲ), Ժնեւ, 2000, էջ 745:

²⁸ Այդպես է վկայում նաև ԺՀԼԲԲ-ն (հ. 4, էջ 741), ԱՀԲԲ-ն՝ առանց որևէ նշումի (էջ 1571):

ապուշք մտօք »²⁹, ասել է՝ *քնափ*-ը «քնից թմրած, դանդաղկոտ, ծուլ»-ն է: Այսպես մտածելու-համարելու են տրամադրում «Գիրք հարցմանց»-ից քաղված հետևյալ նախադասությունները՝ «Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ մաղձն առնե տրտմութիւն և սրտմտութիւն... և պալղամն ծոյլ և *քնափ*», «Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ թէ *քնափ* և թէ կուօղ»³⁰, որոնց օգնությամբ, թերևս, կարելի է հավաստել, որ ծուլը կարող է քրնատ, քնկոտ լինել, սակայն ամեննին պարտադիր չէ, որ *քնափ*, ասել է՝ շարունակ քնել ցանկացող անձը ծուլ լինի: *Քնափ*-ի այս իմաստը, ինչպես նշում է Գ. Փեշտրմալճյանը պայմանավորված է բառի համաբանական գործածությամբ:

Այսպիսով, առանձնացված բառերը գրաբարի տպագիր բառարանների համեմատությամբ հանդես են գալիս այլ բառիմաստներով, նրբիմաստներով, որոնք հաստատվում են XVIII դ. (Մխ. Սեբաստացի) և XVIII դ. հետո հրատարակված բառարաններով. այդ բառիմաստները մեծավ մասամբ պահպանվում են արդի հայերենում:

Nazik Hovhannisyán - Changes to the Meaning of Words in XVIII Century Manuscript Dictionaries of Synonyms.- Some words in the XVIII century manuscript dictionaries of synonyms are fixed by new lexical meanings and nuances.

The words արդիւնաւորել (make use), բացասել (to deny), բնախոս (wise, sage), զգարել (to envy), խարդախամիտ (evil, bad) խշտի (den, lair), խուել (to damage), կամակոր (opinionated), պարապել (to be busy), վերատրել (to give), քնափ (lazy) are considered.

Оганесян Назик- Изменения значений слов в рукописных словарях синонимов XVIII века. - Некоторые слова в рукописных словарях синонимов XVIII века зафиксированы новыми значениями и нюансами значений.

Рассмотрены слова արդիւնաւորել (воспользоваться), բացասել (отрицать), բնախոս (мудрый), զգարել (завидовать), խարդախամիտ (злой), խշտի (логово, берлога), խուել (вредить), կամակոր (упрямый), պարապել (быть занятым), վերատրել (давать, дать), քնափ (ленивый).

²⁹ Գ. Փեշտրմալճեան, *Բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, Կ. Պօլիս, 1846, էջ 923:

³⁰ Գր. Տաթևացի «Գիրք հարցմանց»/համաբարբառ, կազմ.՝ Ս. Գրիգորյան, Գիրք Դ, 2013, էջ 909 - 910:

ԱՍՏԿԱՆՆԵՐԻ ԲԱՂԴԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ
ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Գրաբարում և ընդհանրապես հայերենում խոսքի մասերը, բացի բայերից, իրենց այսպես կոչված բառարանային ձևով քերականորեն նշույթավորված չեն: Ածական անունը նույնպես չունի խոսքիմասային պատկանելությունը որոշող ձևաբանական հատկանիշ, ավելին, գրաբարում առկա է անունների մի զգալի քանակություն, որոնք կարող են հանդես գալ ն՝ որպես գոյական, ն՝ որպես ածական: Այդուհանդերձ, գրաբարի քերականական համակարգում ածականները որպես ինքնուրույն խոսքի մաս առանձնացնելու հիմքը ոչ միայն նրանց իմաստային կողմն է՝ առարկայի որակական կամ հարաբերական հատկանիշ ցույց տալը, այլև մի շարք ձևական չափանիշներ՝ համեմատության աստիճանների առկայությունը, հոլովման համակարգի միայն իրենց բնորոշ առանձնահատկությունները, ինչպես նաև շարահյուսական գործառույթների շրջանակը: Որպես ածականների խոսքիմասային ցուցիչ բաղադրյալ բառերի դեպքում կարող է հանդես գալ նաև բառակազմական հատկանիշը՝ որոշակի ածականակերտ ածանցների և բառաբարդման որոշակի կաղապարների տեսքով:

Նախաձանցներից ակնհայտ ածականակերտ գործառույթ ունի ժխտական նախաձանցների իմաստային խումբը, բացի չ- ածանցից, որը կարող է դրվել զանազան խոսքի մասերի (այդ թվում նաև ածականների) վրա որպես տրամաբանական բացասման ցուցիչ՝ չաստուած, չքահանայ (գոյ.), չբարի (ած.), չմարդկապես (մակբ.) և այլն, և խոսքի մասերի փոխակերպիչի դեր չի կատարում: Մյուս ժխտականները՝ **ան-, սպ-, դժ-, տ-**, տարբեր խոսքի մասերից կազմում են ժխտական կամ բացառողական իմաստով ածականներ: Ինչ վերաբերում է ածականակերտ վերջաձանցներին, ապա դրանցից ամենակարևորները իրենց փոխակերպական արժեքով կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով (օրինակների վերևում դրված Գ, Մ, Դք ցուցիչները նշանակում են, որ տվյալ բառը խոսքիմասային երկարժեքություն ունի):

Ածականակերտ վերջաձանցներ	Անփոխակերպ կարգավոր	Փոխակերպական կաղապարներ				
		Գ→Ա	Թ→Ա	Դ→Ա	Բ→Ա	Մ→Ա
-ագար	-	խելագար	-	-	-	-
-(ա)զին	զուարթագին	ուժզին	-	-	տառապազին	-

-ագոյն	ագահագոյն	առիծագոյն	-	ինքնագոյն	իմացագոյն	զկնիագոյն ^Մ
-ագան	սրբագան	աստուածագան	-	ամենագան	-	-
(-ած)	-	-	-	-	կատաղած	-
-ածոյ	-	-	-	-	կոփածոյ	-
-ուածոյ	-	-	-	-	մանուածոյ	-
-ակ	անուշակ	կամակ	-	-	բուժակ	-
-ական	ագատական	արքայական	երկական	իմոյական	լալական ^Գ	յանկարծական
(-կան)	-	բժկան	-	-	-	-
-ակար	-	վնասակար	-	-	-	-
-ային	ամբարձային	աշնանային	-	մերային	-	-
(-այն)	-	-	միայն ^Մ	ամենայն	-	-
-անի	-	լեզուանի	-	-	-	-
-անուտ	-	-	-	-	հոսանուտ	-
-ատ	կրճատ	ականջատ	-	-	-	-
-արէն/-երէն	յունարէն	արիւնսերէն	-	-	-	-
-ացու	ապականացու	մահացու	-	-	-	-
-աւէտ	ուրախաւէտ	ծաղկաւէտ	-	-	-	-
-աւոր	-	կամարաւոր	եալթնաւոր	-	զգայաւոր	-
-եալ	բարձրեալ	-	-	-	անիծեալ ^Գ	-
-եայ	-	կաշեայ	-	-	-	-
-եան	-	եղեմեան	հազարեան	-	-	-
-եղ	-	հանճարեղ	-	-	-	արագեղ
-եղէն	-	արծաթեղէն	-	-	-	-
-ենի	քաղցրենի	հայրենի	-	-	-	-
-եցիկ	-	գեղեցիկ	-	-	-	-
-ի ¹	դալարի	ազգի	-	-	-	-
-ի ²	-	-	-	-	ըղձալի ^{ԳԲ}	-

-իկ	հանդարտիկ ^Մ	տոհմիկ	-	-	մուրացիկ ^Գ	-
-ին	դժուարին	առաւա-տին	(երե-քին ^Թ)	իւրոյին	-	-
-իչ	-	-	-	-	գաւրացուցիչ	-
-կէն	-	կոճկէն	-	-	-	-
-կոտ	դանդաղ-կոտ	վախկոտ	-	-	գայրացկոտ	-
-նի	յայտնի	-	-	-	-	գաղտնի ^Մ
-ոդ	աջոդ	-	-	-	-	-
-ոյ	աջոյ	ազդոյ	-	-	եվոյ	առաջոյ
-ոտ	հիւանդոտ	խնամոտ	-	-	թափառոտ	-
-ու	-	-	-	-	հատու	-
-ուկ	ողորմուկ	-	-	-	առուկ	-
-ուն	խաղաղուն	խոհուն	-	-	աճուն	-
-ունակ	նմանունակ	լուսունակ	քառու-նակ	մերունակ	բնակունակ	նախու-նակ
-ունի	ծերունի ^Գ	արքունի	-	-	-	-
-ուչ	-	-	-	-	վայելուչ	-
-ուտ	ծանծա-դուտ	ապառա-ժուտ	-	-	-	-

Սակայն նույնիսկ բուն ածականակերտ ածանցներով կազմված բառերը կարող են ենթարկվել հետագա գոյականացման կամ գործածվել փոխանվանաբար, այնպես որ ածականների որոշման միջոցը դառնում է նրանց հիմնական շարահյուսական գործառույթը որոշչային պաշտոններում: Ածականը գրաբարում թեքվող (հոլովվող) խոսքի մաս է, հետևաբար օժտված է անվանական՝ հոլովի, թվի և առկայացման քերականական կարգերով, սակայն այդ կարգերն ունի ոչ թե ինքնակա կերպով, այլ որպես առգոյակական խոսքի մաս՝ արտահայտելով այն գոյականի քերականական կարգերը, որի որակական բնութագրմանն է ծառայում: Սա հատկապես վերաբերում է առկայացման կարգին, երբ ածականն իր վրա է վերցնում գոյականի հոդերը (օր.՝ շամբշտոն Շամիրամ):

Բուն ածականին հատուկ քերականական կարգն է բաղդատականության (համեմատականության) կարգը, որը սակայն հայերենում, ներառյալ և գրաբարը, լիակատար ձևաբանական արտահայտություն չունի և կարող է դրսևորվել ինչպես հատուկ մասնիկներով, ուղեկցող բառերով, այնպես էր շարահյուսական որոշակի կառույցներով՝ նկարագրական եղանակով: Բովանդակության պլանում ևս համեմատականության կարգը հստակ հակադրություններ չի ստեղծում ըստ աստիճանների (դրական, բաղդատական, գերադրական): Կարելի է ասել, որ համեմատականության իմաստային համակարգում փաստորեն գործ ունենք տվյալ հատկանիշի առավել կամ պա-

կաս չափի դրսևորման հետ՝ համեմատությամբ կամ առանց համեմատության: Ըստ այդմ կարելի է առանձնացնել երկու իմաստային և համապատասխանաբար՝ երկու ենթակարգ՝ բուն համեմատականություն (հատկանիշի տարբեր չափերի առկայություն երկու առարկաների, կամ միևնույն առարկայի երկու վիճակների մեջ) և սաստկականություն՝ հատկանիշի դրսևորման ավելի բարձր աստիճանի առկայություն մեկ առարկայի մեջ առանց համեմատության: Ընդ որում, երկու ենթակարգում էլ պայմանականորեն հնարավոր է տարբերակել երեք աստիճան՝ դրական, բաղդատական և գերադրական՝ համեմատականության ենթակարգում և դրական, սաստկական և բացարձակ՝ սաստկականության ենթակարգում: Այսպիսի բաժանման պայմանականությունը բխում է նրանից, որ այս առանձնացված աստիճանները արտահայտության պլանում ձևական հստակ հակադրություն չունեն և միևնույն ձևը տարբեր խոսքաշարերում կարող է հանդես գալ մե՛րթ որպես բաղդատական, մե՛րթ որպես գերադրական, մե՛րթ որպես սաստկական կամ բացարձակ:

Առավել հստակ դրսևորում ունի համեմատականության ենթակարգի բաղդատական աստիճանը, թեև հիմնականում կազմվում է նկարագրական եղանակով՝ ածականի դրական (անփոփոխ) աստիճանի և **քան** բառի կապակցությամբ, ընդ որում, համեմատվող առարկայի անվանումը դրվում է **զ** նախդիր ունեցող որոշյալ հայցականով՝ *բազում եղեն, քան զհեր զխոյ իմոյ¹. հատու քան զամենայն սուր երկսայրի. հզար է բորբոքումն նորա քան զհրոյ. թեթև քան զաւղ* և այլն: Բաղդատական աստիճանը կարող է արտահայտվել նաև **ևս, առաւել** բառերի ուղեկցությամբ՝ կա՛մ առանձին (*երանելի ևս էր. զևս հնարաւորն. զևս գերազանցն. լաւ ևս լիցի. առաւել ևս զհտուն*), կա՛մ **քան+զ** կապակցության հետ (*մեծ ևս քան զայս*): Բառակազմական եղանակով բաղդատական աստիճանը կազմվում է **-ազոյն** ածանցի հավելումով ածականական հիմքին՝ *համեստ հայեցուածովք, համեստազոյն ևս ձայնիւ. ուսուցանէր մանկազոյն աշակերտացն. պարտէր ընչեղազոյն գոլ քան զարքայ. առաւել քան զիս էին քեզ հարազատազոյնք. ամրագունի ևս տեղոյ էլեալ ի խնդիր. քան զՀերակղէս, ասէ, ևս զաւրազոյն էր. ևս լաւագունի, քան զինքն. և ևս առաւելագոյն էր ոսկւով. չեմ անմտազոյն քան զքեզ. մի թէ իմաստնագոյն իցես քան զԴանիէլ. որոց խառնուած առողջագոյն զհաստատութիւն կենաց գործէ. նախ խոնարհագոյն և առակախաւս բանիւք ... իմաստացուցեալ ևն:*

Ինչպես երևում է օրինակներից, **-ազոյն** ածանցի առկայությամբ էլ բաղդատական աստիճանի կազմությանը մասնակցում են **քան+զ նախդիր** կառույցը և **առաւել, ևս** բառերը՝ սաստկացնելով համեմատականության իմաստը, որը V դարում բավարար չափով չէր կարող արտահայտվել միայն **ազոյն** ածանցով, քանի որ վերջինս բազմագործառական էր և լիովին «մասնագիտացված» չէր բաղդատականության արտահայտման համար: Մասնավորապես, **-ազոյն** ածանցով երբեմն կազմվում էր նաև գերադրական աստիճանը, որ պարզ է դառնում խոսքաշարից, օր.՝ *և թէպէտ և արհամարհելի էին առ*

¹ Օրինակները քաղված են V դ. դասական հեղինակների երկերից:

նախանձու, սակայն լաւագոյնք էին և երևէին յամենայնի. քան զթուլագոյնս ի թագաւորաց. ոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց. և առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ աւրինաց Աստուծոյ. բայց ոչ միայն զմեծամեծսն, այլ առաւել ևս զթեթևագոյնս բարձրագոյնս՝ անարգամեծարն Քրիստոս ... յարգէ. ինքն Քրիստոս ոչ անդէն ի սկզբանն զբարձրագոյնսն և անհասագոյնսն որոտաց ևն: Ավելի հաճախ, սակայն, **-ագոյն** ածանցը պարզապէս ածականակերտ արժեք ունի՝ սաստկականության երանգով և նշում է հատկանշի մեծ չափի առկայությունն առանց համեմատության՝ որք ի պատուականագոյն («շատ պատվական») ազգն երթեալ էին. իսկ նորա միանգամայն զճշմատագոյնն (=զճշմարիտն) առաջի եղեալ. քանզի տեղեկագոյնք («լավ տեղյակ») և ընդելականք էին հոգւոյն տունն իւրայելական. ի վարս և ի գնացս խոհեմագոյն («շատ խոհեմ») և հանճարեղ իւրատուք. զորմէ պարտ էր մեզ հրաշափառագունիւ անցանել բանիւ. վասն որոյ թողեալ այնուհետն զպերճագոյն հանդերձս, իսարագնագգեստ եղեալ. զի թէպէտ և ծերագոյն («բավական ծեր») էր՝ երիտասարդապէս հարդարեաց և մղեաց զճակատն. բարձրագոյն («շատ բարձր») բարբառով ի փառաւորութիւն դառնայ. մի որ հանդգնագոյն («չափազանց հանդուգն») վասն ասացելոցն զմեզ համարեսցի. վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին. որք էին սուրբք և զուարթագոյնք. ծանրագոյն («խիստ ծանր») պատուհասիւք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս. արք զգաստք և զգուշագոյնք ևն:

Որ **-ագոյն** ածանցը վերը բերված օրինակներում բաղդատական կամ գերադրական աստիճանի իմաստ չունի, այլ պարզապէս հատկանշի մեծ չափ է նշանակում, ցույց են տալիս և միևնույն նախադասության կամ խոսքաշարի մեջ առկա մյուս ածականները՝ դրված ուղիղ ձևով, այսպէս կոչված դրական աստիճանով: Դրանք մեծ մասամբ արտահայտչական նպատակադրումով բերված հոմանիշների շարքեր են, որոնց մեջ **-ագոյն** ածանցով ձևերը չեն առանձնանում որպէս հատկապէս համեմատականության աստիճանի դրսևորում. հմմտ.՝ *ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեան, առաւել զգագանամիտ, զվայրենագոյն, զճիւաղաբարոյ կողմանցն. ճառս յաճախագոյնս, դիւրապատունս, շնորհագիրս, բազմադիմիս* և այլն:

Շատ դեպքերում էլ **-ագոյն** ածանցը հավելւորդային արժեք ունի, քանի որ սերող հիմքն ինքնին արտահայտում է տվյալ հատկանիշը, հատկապէս տեղանիշ ածականների և մակբայների մեջ՝ **հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարիսաւ. բացագոյն ի քաղաքէ նորին աւելի քան երեք հարիւր ասպարիսաւ ի հիւսիսոյ. սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ. ներքսագոյն քան զպարիսպն. նմանագոյնս որպէս ինձ՝ և քեզ գործէ վտանգս. ապա թէ այլագագոյն ինչ խորհիս համառեալ: Կազմում է նաև տեղի և ժամանակի ածականներ ու մակբայներ՝ *վերագոյն, վաղագոյն, յառաջագոյն, կանխագոյն, նախագոյն* և այլն, որոնք համեմատականության երանգ չունեն (**-ագոյն** ածանցը հանդէս է գալիս որպէս *-ապէս* ածանցի հոմանիշ՝ *նմանապէս, այլապէս, նախապէս, կանխապէս* և այլն): Բուն իմաստով գերադրական աստիճանի գոյությունը գրաբարում, ինչպէս նշվեց, պետք է ընդունել պայմանականորեն: Գրաբարի քերա-**

կանություններում ընդունված է նշել, որ ածականների գերադրական աստիճանը կազմվում է *յոյժ, կարի, սաստիկ, անհնարին, յետին, երիցս* և նման բառերի օգնությամբ, նկարագրական եղանակով՝ *զկահ և զկարասի բազում սաստիկ յոյժ. և էր նա գեղեցիկ յոյժ տեսանելով. կարի զարաւոր են յոյժ. մի կարի արդար լինիր. կարի յոյժ ուրախ եղէ. որք էին յոյժ տղայք. ի լեառն մի բարձր յոյժ. յետին չար է, քան զամենայն չարիս. երիցս երանելեաց նախահարց առաքինությունս* ևն:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս առարկայի հատկանիշը հիմնականում առնվում է առանց այլ առարկաների հետ ունեցած հարաբերության: Փաստորեն նշվում է միայն տվյալ հատկանիշի առանձնահատուկ, բարձր չափի առկայությունը այսպես կոչված էլատիվի՝ հատկանիշի բացարձակ չափի կամ էքսցեսիվի՝ հատկանիշի ավելցուկության արժեքով՝ հատկապես հուզարտահայտչական բնույթի խոսքաշարերում: Կարելի է ասել, որ իրականում գրաբարի ածականների մեջ գերադրականության կամ սաստկականության իմաստն արտահայտվում է առավելապես բառային և ոչ թե քերականական միջոցներով:

Բառակազմական (ածանցման) միջոցով գերադրականը կազմվում է *-ազոյն* ածանցի օգնությամբ, ինչպես ցույց տրվեց վերը բերված օրինակներով. հմմտ. նաև՝ *քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանց այնոցիկ և ամենեցուն քաջ*: Օրինակը ցայտուն կերպով վկայում է, որ գերադրականության իմաստը պայմանավորված է ոչ այնքան ածականի բառաձևով (մի դեպքում՝ *-ազոյն* ածանցով, մյուս դեպքում՝ պարզ *քաջ* հիմքով), որքան շարահյուսական կառուցվածքով և *ամենեքին (ամենեցուն, ամենեցունց)* բառի առկայությամբ: Թերևս այս կառույցի ազդեցությամբ գրաբարի հետագա շրջանում ձևավորվում է գերադրականության արտահայտման ևս մի բառակազմական միջոց: *Ամեն-* արմատը բաղադրությունների մեջ սկսում է վերածվել ածանցակերպի՝ «բոլորից ավելի» իմաստով (*ամենաբարի, ամենաբարձր*), սակայն *ամեն-* սկզբնաբաղադրիչով V դարից վկայված կազմությունները դարձյալ բացարձակ գերադրականի իմաստ ունեն՝ առանց համեմատության, այսինքն՝ *ամենաբաղձ դաշտն Այրարատոյ նշանակում է «խիստ բաղձալի, հույժ ցանկալի»* կամ՝ «ամեն բանով բաղձալի» կամ նույնիսկ՝ «ամենքի համար բաղձալի» և ոչ թե «ամենից ավելի բաղձալի», *ամենաբարի թագաւոր* «ծայրագոյն բարի» [բացատրությունը ըստ ՆՀԲ-ի], *հնազանդեալ ըստ ամենահեշտ լծովն, որ թեթն է առաքինեաց* «կարի հեշտին և հեշտալի, քաղցր յոյժ» [ՆՀԲ]:

Գերադրականության որոշ երանգ են պարունակում նաև ածականների կրկնությամբ կազմված բարդությունները՝ *մեծամեծ, մանրամանր, ջերմաջերմ, դառնադառն* կամ վերլուծական բաղադրությունները՝ *յոյժ յոյժ, քաջ քաջ, ամուր ամուր* և այլն:

Նկարագրված առանձնահատկությունները թույլ են տալիս ասելու, որ դասական գրաբարում ածականների բաղդատականության կարգը լիակատար քերականացված չի եղել և դրա իմաստագործառական դրսևորումները

միջանկյալ դիրք են գրավել քերականական և բառակազմական մակարդակների միջև:

Liana Hovsepyan – Category of Degrees of Comparison in Classical Old Armenian.– The parts of speech in Armenian (including classical Old Armenian as well), with the exception of verbs, are not grammatically marked. The adjectives also have no morphological formants indicating this part of speech. The forms of nouns and adjectives, adjectives and adverbs are often similar. However there are some formal characteristics, e.g. degrees of comparison, for distinguishing adjectives as a separate part of speech. Two sub-categories can be differentiated in the category of comparison: the sub-category of comparison and the sub-category of intensity. In both cases the grammatical meanings can be expressed by morphological and/or word-forming means. This fact signifies that the category of degrees of comparison in Old Armenian had not been completely grammaticalized and occupied intermediate place between the grammatical and the word-formative levels.

Овсебян Лиана – Категория сравнительности прилагательных в классическом древнеармянском языке.– В армянском языке (включая древнеармянский) так наз. исходные формы частей речи, за исключением глаголов, морфологически немаркированы. Прилагательные также не имеют грамматического показателя частеречной принадлежности. Нередки также случаи формального совпадения прилагательных и существительных, а также прилагательных и наречий. Тем не менее, имеется ряд формальных показателей, в частности, наличие степеней сравнения, позволяющих выделять прилагательные как самостоятельную часть речи. В категории степеней сравнения, исходя из формальносемантических особенностей, можно выделить подкатегории собственно сравнения и интенсивности проявления признака. В обоих случаях грамматические значения могут выражаться как морфологическими, так и лексическими средствами. Это свидетельствует о том, что категория степеней сравнения в древнеармянском языке не подверглась полной грамматикализации, и ее проявления занимают промежуточное положение между грамматическим и словообразовательным уровнями.

Մանուկյան Տաթևիկ (Հայաստան,
Մ. Մաշտոցի անվան Մատենադարան)

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԺԷ ԴԱՐԻ ՁԵՌԱԳԻՐ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ուսումնասիրել ենք ժԷ դարի երեք ձեռագիր, որոնք ընտրել ենք Երևանի Մատենադարանից (այսուհետ՝ ՄՄ) և Զմմառի վանքի Մատենադարանից (այսուհետ՝ ԲԶ): Այդ ձեռագրերն են՝ ՄՄ 12 (1692 թ., Լեոպոլիս)², ՄՄ 2276 (1688-ից առաջ, Ամասիա)³, ԲԶ 547 (1653 թ., Նոր Զուղա)⁴: Ձեռագրերի ընտրությունը կատարել ենք՝ սկզբունք ընդունելով դրանցում տերմինների չուսումնասիրած և չիրատարակած լինելը: Երեք ձեռագրերն էլ ոչ միայն քերականական, այլ նաև տարբեր բնույթի նյութերից բաղկացած ժողովածուներ են: Աշխատանքը նորահայտ քերականական տերմինների վերհանումն ու լեզվաբանական քննությունն է: Ձեռագրերից առանձնացրած տերմինների քննությունը կատարել ենք նախ ըստ հայտնիության աստիճանի, ապա ըստ գործածության բնագավառների և ըստ կազմության:

Ըստ հայտնիության աստիճանի՝ դասակարգումը հետաքրքիր է աղբյուրագիտական և լեզվական տերմինների կիրառման ժամանակագրության տեսանկյունից: Ըստ հայտնիության աստիճանի՝ տերմինները բաժանել ենք հետևյալ խմբերի. 1. նորահայտ տերմիններ, 2. հայտնի տերմինների ավելի վաղ վկայություններ, 3. հայտնի տերմինների այլ իմաստով կիրառություններ, 4. հայտնի տերմինների հնչյունական կամ բառակազմական նոր տարբերակներ⁵:

Երեք ձեռագրից առանձնացրել ենք ութ տասնյակ տերմին⁶: Ի դեպ, նշենք, որ այս դասակարգումը չի բացառում, որ միևնույն տերմինը կարող է պատկանել մյուս խմբերին ևս⁷:

² Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, Ե., 1984, էջ 45-50:

³ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, Ե., 2012, էջ 766-770:

⁴ Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին, հ. Բ, «Անտոնեան հաւաքածոյ», Վիեննա, 1971, էջ 155-156:

⁵ Հայտնի տերմին ասելով՝ նկատի ունենք լեզվաբանական այն տերմինները, որոնք ավանդված են մինչև ժԷ դարի քերականներից:

⁶ Տերմինների նորահայտ լինելու հանգամանքը ստուգելու համար առաջնորդվել ենք հետևյալ հրատարակությունների տվյալներով՝ **Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան** (Ե., 1975), **Եսայի Նչեցի, Վերլուծություն քերականութեան**, «Բառացանկ քերականական տերմինների և դժվարիմաց բառերի» (Ե., 1966), **Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում**, «Տերմինների այբբենական ցանկ (հայերեն-հունարեն)» (Ե., 1971), **Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականի**, «Երկում վկայված քերականական տերմինների ցանկ» (Ե., 1977), **Յովհաննէս Օրթոբեցի, Համառատ տեսություն քերականին**, «Բառացանկ քերականական տերմինների և դժուարիմաց բառերի» (Լոս Անձելես, 1984), **Նիկողայոս Ադոնց, Երկեր**, հ. Գ,

Առաջին խմբում ներկայացրել ենք բացառապես նոր տերմիններ, որոնք ունեն սահմանումներ կամ ներկայացված են օրինակներով. կան նաև զուտ տերմինների հիշատակություններ առանց որևէ բացատրության: Սահմանմամբ մեզ հասած տերմինները հետևյալներն են⁸

Արարողականք՝ անորոշ դերբայի հոլովված ձևերը անվանելու տերմին, ներառում է միայն երեք հոլոված, քանի որ անորոշ դերբայի հարացույցը պակասավոր է, կոչել են նաև պակասական ընդունելություն. «արարողականք ասին, վասն զի ի ներգործելոյ կամ ի սպասաւորելոյ իրին ունի նշանակութիւն առանց զանազանութեան ամանակի, որով զի նա զժամանակ կամ զսպասաւորութիւն ցուցանէ, տինա ոչ ունելով թիւ ինչ որպէս նայն եւ զաղափարք են սորա Գ.՝ նախ՝ լոյ, երկրորդ՝ ալ կամ ել կամ ուլ, երրորդ՝ լով ... բայց ոմանք կամին զսա պակասական ընդունելութիւն գոլ, վասն զի միայն երից հոլովոց ցուցութիւն ունի...» (ՄՄ 2276, 160ա), սրան համարժեք Գալանոսն էլ ունի գործակալ տերմինը⁹:

Եղանակագրութիւն՝ քերականության բաժիններից, որն ուսումնասիրում է գիրը, տառը իր տարատեսակներով հանդերձ. «կերպ գրութեան է, բացայայտօղ զձև և ուղիղ գրելոյ, որ տառիք եղանի...» (ՄՄ 2276, 139ա):

Երկրորդաընտրական շաղկապ՝ շաղկապի տեսակ. «երկրորդաընտրականք (այսպէս) են, որք յառաջնոյն վրիպեալք զերկրորդն ընտրել հարկաւորին, որք են այսք՝ գէթ, գոնէ, փարթար...» (ՄՄ 2276, 175ա), նույնանում են թարգմանչի վարանական շաղկապների հետ¹⁰:

Կատարունական բայ՝ բայի տեսակ, նույնն է՝ չեզոք սեռի բայեր. «կատարունականք այն ասին, որք զիմացումն կատարեալ ցուցանեն, թարց առադրելոյ հոլովմանց...» (ՄՄ 2276, 154բ):

Հաւանական շաղկապ՝ շաղկապի տեսակ. «հաւանական կամ հաւաքադրականք են, որովք ի յառաջասացեալ պատճառաց իրք ժողովին, որք են այսք՝ ապա, ապաքէն, ուրեմն, ապա ուրեմն...» (ՄՄ 2276, 175բ), «հաւանականք են, որք զկնի ճառելոյն ընդ եզրակացութեանն յարառոցին եւ են այսք՝ ուրեմն, ապա ուրեմն, ապաքէն...» (Bz 547, 34ա)¹¹, նույնանում են թարգմանչի տարակուսական շաղկապների հետ¹²:

«Ցանկը անուանց և բառից» (Ե., 2008), *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հհ. Ա-Բ (Վենետիկ, 1936-1937), Լ. **Հովհաննիսյան**, *Գրաբարի բառարան: Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր* (Ե., 2010):

⁷ Նույն տերմինի մասին երկրորդ անգամ հիշատակելիս այլևս չենք բերում բնագրից մեջբերումը, ինչպէս նաև չենք նշում ձեռագրի համարն ու էջահամարը և ԼԲ-ի հղումը:

⁸ Հոդվածի ծավալից էլնելով՝ հնարավոր չէր խոսել բոլոր ութսունմեկ տերմինի մասին:

⁹ **Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան**, *Լեզվաբանական բառարան* (այսուհետև՝ ԼԲ), Ե., 1975, էջ 75:

¹⁰ **Ն. Աղոնց**, *Երկեր*, հ. Գ, Ե., 2008, էջ 37:

¹¹ Հետագայում Բաղդասար Դպիրը գործածել է հավանական միջարկություն, իսկ Հ. Աճառյանը՝ հավանական բայ տերմինները, ԼԲ, էջ 172:

¹² **Ն. Աղոնց**, նշվ. աշխ., էջ 36:

Ներկայական հոլով՝ նույն ներգոյական հոլովը. «ամենայն բայք, որ նշանակեն զդրոթին կամ դադարումն ի տեղոջ կամ կալումն կամ կայութիւն, զներկայական հոլով առնուն, որպէս՝ Պետրոսէ ի տան, Աստուած ի տաճարի իւրում յայտնի...» (ՄՄ 2276, 188բ):

Հաջորդիվ բերում ենք օրինակներով ներկայացվածները՝

Անորոշելի էակ անուն՝ վերացական իմաստ արտահայտող անուն. «անորոշելի, որգոն՝ սուրբ...» (Bz 547, 5ա):

Անցուցական առբայ՝ ժամանակական առբայի տեսակ. «էւ ոմանք անցուցականք որգան՝ միշտ, հանապազ, ցանգ, յար, յաւեժ...» (Bz 547, 30ա):

Բացայայտական առբայ՝ առբայի տեսակ. «բացայայտական՝ այս է, այդ է, որբար, որգոն, որգան, հիկէն, հիբար, հիգան, հիպէս, որպակ, հիպակ...» (ՄՄ 2276, 173ա):

Զարդ նախադրություն՝ նախադրության տեսակ. «էւ ոմանք զարդք միայն, որպէս՝ ներ, արտ, ատր...» (Bz 547, 28ա):

Զարդ և հարկաւոր նախադրություն՝ նախադրության տեսակ. «իսկ ոմանք և զարդք և հարկաւորք, որք են այսքան՝ արդ, տի, ըստ, ըգ, ցը, ըն, յ, ի, առ...» (Bz 547, 28ա):

Զգալի էակ անուն՝ նյութական իմաստ արտահայտող անուն. «զգալի, որգան՝ քար...» (Bz 547, 5ա):

Իմանալի էակ անուն՝ մտածական իմաստ արտահայտող անուն. «իմանալ, որպակ՝ իրատ...» (Bz 547, 5ա):

Վաղվադական առբայ՝ առբայի տեսակ. «վաղվադական՝ վաղվադակի, վաղվադ, փութակի, փոյթք ընդ փոյթ, փութով...» (ՄՄ 2276, 172բ):

Թվարկենք մի քանի տերմին էլ, որոնք ձեռագրերում առանց որևէ բացատրության են ներկայացված՝

Կատարելական շաղկապ՝ շաղկապի տեսակ, բացատրված չէ, օրինակներ չկան (ՄՄ 2276, 174բ):

Անտիտական առբայ՝ առբայի տեսակ, սահմանված չէ, օրինակներ չկան (Bz 547, 29ա):

Կա տերմինների մի խումբ էլ, որը սահմանում, օրինակներ չունի, հասկացվում է այլ քերականական հասկացությունների հետ հարաբերվելիս՝

Այապուսական առբայ՝ առբայի տեսակ, որի մեջ են մտնում բացասական, փոխերդմնական և հրաժարական մակբայները (Bz 547, 31ա):

Կիտաստորատ՝ կետի տեսակներից, տրոհության նշան. «կէտն բաժանի ի վերջակէտ, միջնակէտ, կիտաստորատ, ստորատ...» (ՄՄ 12, 7բ), կէտ և ստորակէտ¹³:

Նենթակայական հոլով՝ նույն կրողական, հայցական հոլովը. «էւ կրողականն՝ նենթակայական...» (ՄՄ 2276, 149ա):

¹³ Հետագայում այս տրոհության նշանը՝ այլ տարբերակներով կիրառում է Խ. Աբովյանը՝ կէտ ընդ ստորակէտի, կէտ-ստորակէտ, ԼԸ, էջ 151:

Շրջադրական հոլով՝ նույն բակառական հոլովը. «բակառականն՝ շրջադրական...» (ՄՄ 2276, 149ա):

Պատահական բայ՝ բայի տեսակ, բացի էական (գոյություն ունենալու իմաստ արտահայտող) և կոչական (ասացական) բայերից մյուս բոլոր բայերը (ՄՄ 2276, 154բ):

Երկրորդ բաժնում խմբավորել ենք քերականագիտությանը արդեն հայտնի բոլոր այն տերմինները, որոնց ավելի վաղ վկայությունները գտել ենք մեր ձեռագրերում: Այսպես՝

Անդրադարձական դերանուն՝ դերանվան տեսակ. «յաղագս անդրադարձական դերանուանց, որք են՝ իւր և իւրեան, քանզի անդրադարձականք ասացեալ են, զի անդրադառնան առ նոյն երրորդ դէմն, որ յառաջեաց...» (ՄՄ 2276, 182ա.), այս դերանունը մեր ձեռագրում վաղ վկայություն է, քանի որ այն գործածել է Ա. Ասովաճատրյանը¹⁴, իսկ անդրադարձ դերանուն տարբերակով էլ՝ Խ. Աբովյանը¹⁵:

Անշաղկապ բան՝ բարդ նախադասության տեսակ, որը կապակցվում է առանց շաղկապի, շարահարությամբ (Bz 547, 72ա), տերմինը ներառված է ԼԲ-ում (էջ 17), սակայն աղբյուրը նշված չէ, և մենք վերապահումով կարծում ենք, որ ձեռագրինն ավելի վաղ վկայություն է:

Ջարմացական նշան՝ առոգանության ոլորակ ենթախմբի նշան. «զարմացական, որ և երկար ասի...» (ՄՄ 12, 7բ), կա «զարմացական կետ» նույն բացականչական նշան իմաստով տերմին՝ վկայված Խ. Աբովյանից¹⁶:

Էական բայ՝ բայի տեսակ, գոյություն ունենալու իմաստ արտահայտող բայ. «էականք ասին այնք, որք զէութին իրին ցուցանեն, որգոն՝ ես եմ, դու ես, նա է, էի, էիր, էր, եղէց, եղիցիս, եղիցի...» (Bz 547, 13ա), այս տերմինը մեր ձեռագրում վաղ վկայություն է, քանի որ այն առաջինը գործածել է Ռսկան Երեվանցին¹⁷:

Կրկնածական անուն՝ կրկնակի ածանցված բառ. «կրկնածականք ասին, զի ածանցեալքս ևս կարեն ածանցիլ, որպակ՝ փառաւորական, իմաստնական, առաջնորդական, ընկերակցական, տերունական, սրբութենական...» (Bz 547, 7ա), տերմինը Մխիթար Մեբաստացուց վկայված կրկնածանցական անուն տերմինի վաղ վկայությունն է¹⁸:

Յիախնդրութիւն՝ յ-ի ուղղագրական կանոնների բաժին (Bz 547, 37բ), Մրքուզ ունի «յի խնդրութիւն»¹⁹ տերմին. ձեռագրինն ավելի վաղ վկայություն է:

¹⁴ ԼԲ, էջ 13:

¹⁵ Նույն տեղում, էջ 12:

¹⁶ Նույն տեղում, էջ 97:

¹⁷ Նույն տեղում, էջ 100:

¹⁸ Նույն տեղում, էջ 158:

¹⁹ **Յօհանէս Զուղայեցի**, *Համառօտ քերականութիւն և տրամաբանութիւն*, Ամստերդամ, 1711, էջ 34:

Երրորդ խմբում ընդգրկել ենք քերականագիտության մեջ հայտնի բոլոր այն տերմինները, որոնք ձեռագրերում ունեն այլ իմաստներով կիրառություններ: Դրանք են՝

Առադրական անուն՝ նույն պատահական անունը, այսինքն ածականը, անվան տեսակ. «սա պատահականս անունս առադրական կոչի...» (ՄՄ 2276, 144ա), Ոսկան Երևանցին օգտագործել է առադրական շաղկապ, տերմինը մեր ձեռագրում այլ իմաստով է գործածված²⁰:

Բակառական հոլով՝ նույնն է՝ պարառական հոլով. «բակառական՝ զՀումերոսի...» (ՄՄ 2276, 149ա), «բայքն նշանակիցեն զշրջապարութին զբակառական խնդրեն, որկէն շուրջ պատեցին գնովա...» (ՄՄ 2276, 188բ), «բակառական՝ զՊետրոսի... եւ բակառականին ի սկզբանն զայ դնի, իսկ վերջն որպէս գործիականին է...» (Bz 547, 10ա), այլ իմաստ է ձեռք բերել տերմինը, քանի որ «բակառական» տերմինը Դավիթ քերականը գործածել է որպէս բակձաձական կամ հավաքական անուն²¹ իմաստով:

Զանազանական շաղկապ՝ շաղկապի տեսակ, նույնն է՝ ներհակական շաղկապներ²². «զանազանական, ընդդիմացուցական և ներհակական է, որով յառաջադրեալ իրին, այլ իր հակակայ յարադրի, որք են այսք՝ այլ, բայց, իսկ, նա, սակայն, այլ սակայն...» (ՄՄ 2276, 175ա), մեր ձեռագրում այլ իմաստ ունի, քանի որ Սիմեոն Ջուղայեցին գործածել է զանազանական մակբայ²³ տերմինը:

Կոչական բայ՝ բայի տեսակ, նույնն է՝ ասացական բայ. «եւ է բայ եռակի՝ էական, կոչական և պատահական... եւ կոչական այսոքիկ, հիբար՝ յորջորջիմ, անուանիմ, ասիմ, կոչիմ, ձայնիմ» (ՄՄ 2276, 154բ), հայտնի են կոչական հոլով՝ Դավիթ քերականից, կոչական շաղկապ՝ Համամ Արևելցուց²⁴, տերմինը մեր ձեռագրում այլ իմաստով է հանդիպում:

Տարր՝ վանկի անվանում. «յաղագս վանգի կամ փաղառութեան, որ և տարր ասի...» (ՄՄ 12, 7ա), տերմինը այլ իմաստով է գործածված, քանի որ մինչ այդ այն հայտնի էր որպէս տառ, մասնիկ, յօդ իմաստով²⁵:

Չորրորդ խմբում հայտնի տերմինների հնչյունական կամ բառակազմական նոր տարբերակներն են: Դրանցից են՝

Ընդդիմացուցական շաղկապ՝ շաղկապի տեսակ. «զանազանական, ընդդիմացուցական և ներհակական է, որով յառաջադրեալ իրին այլ իր հակակայ յարադրի, որք են այսք՝ այլ, բայց, իսկ, նա, սակայն, այլ սակայն...» (ՄՄ 2276, 175ա), նույնն է՝ թարգմանչի ընդդիմակ շաղկապների հետ²⁶, վերջինիս բառակազմական նոր տարբերակն է:

²⁰ ԼԲ, էջ 25:

²¹ Նույն տեղում, էջ 44:

²² Նույն տեղում, էջ 232:

²³ Նույն տեղում, էջ 97:

²⁴ Նույն տեղում, էջ 156:

²⁵ Գ. Աւետիսեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բարոգիրք հայկազեան լեզուի* (այսուհետն՝ ՆՀԲ), հ. II, Վենետիկ, 1837, էջ 859:

²⁶ Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 37:

Կրկնաձական անուն՝ կրկնակի ածանցված բառ. «կրկնաձականք ա- սին, զի ածանցեալքս ևս կարեն ածանցիլ, որպակ՝ փառաւորական, իմաստ- նական, առաջնորդական, ընկերակցական, տերունական, սրբութենական...» (Bz 547, 7ա), այս տերմինը Կղեմես Գալանոսից վկայված «կրկնաձանց անուն» տերմինի բառակազմական նոր տարբերակն է²⁷:

Հայրանունակ անուն՝ թարգմանչի նույն հայրանունական ածանցա- կան անուն տերմինի բառակազմական նոր տարբերակն է²⁸. «որ ի հատուկ ա- նուն է հորն և կամ ի նախնեաց ձևացեալ է...» (ՄՄ 2276, 145ա):

Հենգնական առբայ՝ առբայի տեսակ. «հենգնական՝ իշ, վահ, ահ, եհ...» (Bz 547, 31ա), նույնն է՝ հեգնական մակբայները²⁹ և դրա բառակազմական նոր տարբերակը:

Պակասական բայ՝ անկանոն բայի տեսակ, նույնն է՝ պակասավոր բա- յեր. «պակասականք են, որք ոչ ընդունին զամենայն ամանակս խոնարհմանց ...» (ՄՄ 2276, 168ա), Հովհաննէս Հոլովն ունի պակասավոր բայեր տերմինը³⁰, մեր ձեռագրում առկա տերմինը բառակազմական նոր տարբերակ է:

Սպառական առբայ՝ առբայի տեսակ. «սպառական՝ իշտ, տի, օն և օն լիցի...» (Bz 547, 31ա), նույնն է՝ թարգմանչի սպառնական և խրոխտական մակ- բայների հետ³¹, բառակազմական նոր տարբերակ:

Արտաքին դասակարգումից բացի կատարել ենք տերմինների բուն դասակարգում. տերմիններն առանձնացրել ենք ըստ գործածության բնագա- վառների:

Ուղղագրական տերմիններն են՝ եղանակագրութիւն, յիախնդրութիւն:
Հնչյունաբանական տերմինն է՝ տարր:

Ձևաբանական տերմիններ, որոնք մեծ թիվ են կազմում՝ ամանակա- կան առբայ, ամանակական անուն, այապուսական առբայ, անդրադարձական դերանուն, անորոշելի էակ անուն, անտիտական առբայ, անցուցական առբայ, աշխատական առբայ, ապուսական առբայ, ապուսահետևական շաղկապ, ա- րարողականք, բակառական հոլով, բայաւարտական շաղկապ, բացական առբայ, զարդ նախադրություն, զարդ և հարկաւոր նախադրություն, զանազա- նական շաղկապ, զգալի էակ անուն, էական բայ, ընդդիմացուցական շաղ- կապ, թիւ, իմանալի էակ անուն, կատարելական շաղկապ, կատարունական բայ, կերպափոխական շաղկապ, կոչական բայ, կրկնաձական անուն, հայրա- նունակ անուն, հաստատական շաղկապ, շարամանական շաղկապ, շարու- նական առբայ, շրջադրական հոլով, պակասական բայ, փաստադրական շաղ- կապ, փոխերդմնական առբայ, փոփոխական բայ:

Շարահյուսական տերմիններ՝ ամանակաւոր բան, անամանակ բան, անշաղկապ բան, առբայական բան, առնլիք, ընդունելական բան, ինքնաձա-

²⁷ *ԼԲ*, էջ 158:

²⁸ Նույն տեղում, էջ 168:

²⁹ Նույն տեղում, էջ 207:

³⁰ Նույն տեղում, էջ 253:

³¹ **Ն. Աղոնց**, նշվ. աշխ., էջ 32:

կան բան, կոչական բան, հարկաւորք, շաղկապաւոր բան, որական բան, սահմանական բան, ստորոգական բան:

Կետադրական-առոգանական տերմիններ՝ զարմացական նշան, կիտաստորատ, հարցական նշան, փառէնթագիս:

Կատարել ենք նաև քերականական տերմինների քննություն ըստ կազմության՝ առանձնացնելով հետևյալ խմբերը. 1. պարզ կամ արմատական տերմիններ: Այս խմբում հետևյալներն են՝ թիւ, տարր, փառէնթագիս: 2. բարդ տերմիններից միայն մեկն ունենք՝ կիտաստորատ: 3. ածանցավոր տերմիններ են՝ առնչիք, արարողականք, եղանակագրութիւն, հարկաւորք, հոլովմունք, յիախնդրութիւն: 4. բառակապակցություն-տերմինները մեծ թիվ են կազմում. առանձնացրել ենք երկանդամ և եռանդամ բառակապակցություն-տերմիններ:

Երկանդամները հետևյալներն են՝ ամանակական առբայ, ամանակական անուն, ամանակաւոր բան, այսպուսական առբայ, առաւելական բայ, զարդ նախադրութիւն, զանազանական շաղկապ, զարմացական նշան, էական բայ, ընդդիմահարցական շաղկապ, ընդդիմացուցական շաղկապ, ընդունելական բան, ինքնածական բան, կատարելական շաղկապ, կատարունական բայ, կերպափոխական շաղկապ, կոչական բայ, կոչական բան, կրկնածական անուն, հայրանունակ անուն, ներկայական հոլով, շաղկապաւոր բան, շարամանական շաղկապ, շարունական առբայ, շրջադրական հոլով, որական բան, սահմանական բան, սպառական առբայ, ստորոգական բան, վաղվաղական առբայ, վարկական առբայ, տարրորշական առբայ, տրամադրական բայ, փաստադրական շաղկապ, փոխերդմնական առբայ, փոփոխական բայ:

Եռանդամ բառակապակցություն-տերմիններն են՝ անորոշելի էակ անուն, զարդ և հարկաւոր նախադրութիւն, զգալի էակ անուն, իմանալի էակ անուն:

Այսպիսով, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում միջնադարյան ձեռագրերից վկայված ութսունմեկ նորահայտ տերմին:

Tatevik Manukyan - Linguistic Terms in the Handwritten Grammatical Works of the 17th Century. - The article examines linguistic terms from three manuscripts of the 17th century, which are selected from the Yerevanian Matenadaran and the Bzommar Temple. Fixed terms are examined first by their level of fame, then based on the part of the grammar and structure.

For the first time, about 81 new terms from manuscripts are introduced in scientific circulation.

Манукян Татевик - Лингвистические термины в рукописных грамматических трудах 17-ого века. - В статье исследуются лингвистические термины из трех рукописей 17-ого века, которые выбраны из Матенадаранов Еревана и храма Зммар. Термины исследованы сначала по уровню их известности, затем по частям Грамматики и по структуре.

Впервые из рукописей в научный оборот введены около 81 новых терминов.

**ԵՐԵՅԿԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայերենի տարածքային տարբերակներում կան մի շարք բառեր, որոնք չնայած արտահայտած իմաստով չեն առնչվում կրոնական ոլորտին, սակայն դրանց կազմությունը բխում է կրոնական հավատալիքներից: Նման բառերը կարելի է անվանել հարիմաստ բառեր:

Կրոնականացման բովանդակություն ունեցող բառերին իմաստաբանորեն հարակից են *երեցկին* // *տերտերակին* բառերը, որոնք ինչ-որ առումով հարում են նվիրապետությանը, բովանդակում են հոգևոր սպասավորների կանանց հանդեպ ցուցաբերվող հարգականություն: Հ. Խաչատրյանն «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում» աշխատության մեջ ձևաիմաստային այս միավորները դիտարկում է որպես ծիսական հիմքով ձևաբանական ազգակցական հարաբերություններ արտահայտող անուններ¹:

Հարգական վերաբերմունքի են արժանանում նաև հոգևոր սպասավորների մայրերը, որոնց մեծարում են *տիրուհի* պատվանունով: *Տիրուհի* պատվանունը որոշ վայրերում տրվում է նաև երեցկնոջը:

Ի տարբերություն հոգևոր սպասավոր հատկանշող *երեց* արմատական ածականի՝ *երեցկին* կցական բարդությունն առավել հաճախադեպ է գործառուում հայերենի տարածքային տարբերակներում՝ ենթարկվելով ձայնավորական և բաղաձայնական համակարգային տարբեր հնչյունափոխությունների:

Ահավասիկ՝ ա) - ում ճյուղի բարբառախումբ՝ *իրիսկին* // *երիցկին* (Արարատյան), *իրիցսկին* // *իրիցկընդեզ* (Գորիս), *ըրցսկին* (Ագուլիս), *իրիսգէն* (Օրդուբադի Մեսրոպավան), *ըրիցկին* // *ըրիցկին* (Գեղարքունիքի Վերին Ճամբարակ, Բերդ), *հըրցսկին* // *ըրցսկին* // *ըրցսկէն* (Մեղրի, Կարճևան, Կաքավաբերդ), *հըրցակէն* (Ղարաբաղ), *իրիցկընիկ* (Մառնեուլի Խոժոռնի) և այլն:

բ) Կը ճյուղի բարբառախումբ՝ *իյիցգին* (Հաջըն), *իյիցկին* (Զեյթուն), *իրիցկընէիկ* (Մոկսի Մամոտանց), *երիցկին* (Ախալքալաքի Կարծախ), *իրիծկին* // *իրիծսկին* (Արագածոտնի Մելիքյուղ, Հարթավան, Արագած, Արայի, Ափնա և Կայք), *իրիծսկին* (Մասունի Մառնիկ, Մուշի Հացիկ և Բոստաքյանդ, Բուլանուխի Կողակ և Ոտնչոր, Մոտկանի Մրցանք), *իրիցգին* (Բեյլան, Տավորիկի Իրցանք, Մոտկանի Նիչ), *իրիծգին* (Ճանիկ, Մամսունի Օբելդա), *իրըցգին* (Եղեսիա, Մասունի Քոփ), *իրըցագան* (Սվեդիա), *երըսգին* (Բալուխի Նաջարան), *իրըձգին* (Գելիեգուզան, Աշտարակի Լեռնարոտ), *իրըզգին* (Մասունի

¹ Հ. Խաչատրյան, *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում*, Ե., «Լուսաբաց» հրատ., 2009, էջ 228:

Արփի, Աշնակ), *հրբսկընիգ* (Մասունի Հազգո և Ռաբաթ), *հրբսկէին* (Քեսաբ), *էրեցկին* (Խարբերդի Սվջոդ), *հրիսգին* (Ակն, Ասլանբեկ, Ռոդոսթո, Մեքաստիայի Խուռնավուլ, Մալաթիա), *ինիցկին* (Էրզրում, Քղիի Հարդիֆ) և այլն: «*Էրիցկինը լաթերը կըսէնէր*» (Խարբերդ): Տիգրանակերտցիների բանահյուսությունից հայտնի է «*Թէյզի իրիցգինէ չըսէննի, դէրդէրէ չսնիլի հոքուն, քի մսի հգսի*» ասացվածքը:

զ) - Ս և լ ճյուղերի բարբառախումբ՝ *իրիցկին* (Մակուից եկածներով բնակեցված Ապարանի Վարդենիս և Աշտարակի Օհանավան):

Ինչպես ցույց են տալիս օրինակները, *էրեցկին* կցական բարդության հնչյունական զուգաբանություններն ակնհայտորեն գերակշռում են արևմրտյան տարածքի բարբառներում և շատ քիչ են հանդիպում արևելյան և գրեթե չեն գործածվում պարսկահայ տարածքի բարբառներում: Սահմանափակ թրվով բարբառային կոյակներում հանդիպում են բառակապակցական հոմանիշներ, ինչպես, օրինակ՝ *հրիսկին մայրիգ* (Արաբկիր), *ըրցու կընիկ* (Մոկսի Խալենց), *իրիցին կընէկ* (Գորիսի Շինուհայր) և այլն:

Էրեցկին բարդ բառը հանդես է գալիս նույնանունաբար, որը, ըստ Հ. Աճառյանի, արտահայտում է «ընկույզի ամբողջական միջուկ»² իմաստը: Պոլսում, Անկարայում, Կենտրոնական Անատոլիայի այլ վայրերում կատարած մեր հարցումների արդյունքում պարզեցինք, որ հայախոս, ինչպես նաև որոշ թրքախոս հայեր, ճանաչում են այդ բառը *իրիսգին* // *իսգին* ձևով և «ընկույզի ամբողջական միջուկ» իմաստով: «*Ընկոյզս էրեցկին էլավ*»³ (Պոլիս): Չի բացառվում, որ տվյալ դեպքում առկա է ոչ թե *էրեց+կին* բարդությունը, այլ *էրեց (մեծ)+սգին* ածանցավորը:

Էրեցկին բառի հոմանշային շարքում բառակազմական հետաքրքրություն են ներկայացնում *տէր* բառով բաղադրվածները, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ հիմնականում խմբերով՝ ա) տեր+ուհի, բ) տեր+ ա+ կին(իկ), գ) այ տեր+ա+կին(իկ), դ) տեր+տեր+ա+կին(իկ), ե) տերի, տիրոջ կամ տերտերի կին(իկ) հատկացուցիչ - հատկացյալ բառակապակցություն:

ա) Տեր+ուհի: Ինչպես արդեն նշեցինք, *տիրուհի* ածանցավոր կազմությունը պատվանուն է, որը տրվում է ոչ միայն հոգևոր սպասավորների կանանց, այլև մայրերին: Փերիայի Շուրիշկանում և Միլակերտում գործածական է գրականհայերենյան *տիրուհի* ածանցավոր կազմությունը: Հայերենի տարածքային տարբերակներում ունենք հետևյալ հնչյունական զուգաբանությունները՝ *տիրուհնի* (Ապարան, Վերին Բուրվարի Դեյնով, Նուխիի Դաշպուլադ), *տիրուխնի* (Օշական, Բուլանուխի Միրբար և Գյաբոլներ, Բասենի Գոմաձոր, Մուշի Դուգնուգ, Ջառ, Խիզանի Խարիդ, Բայազետի Մուսուն), *տիրոխնի* (Արարատյան, Գորիս, Շարուրի Ուլյա և Նորաշեն, Իգդիրի Հախվերիս, Մանազկերտի Բաղնուս, Կոզովիտի Արծափ, Մարտունու Մուլալու), *տի-*

² Հ. Աճառեան , Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 307:

³ Հ. Աճառեան , Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 307:

րողնի (Վան), *տրրոխնի* (Նախիջևանի Շուռուտ, Օրդուբադի Մեսրոպավան), *տոնրօխնի* (Վերին Հայոց ձորի Հորմորուր), *տուրօխնի* (Շատախի Սըվտըկի), *տէրօխնէ* (Նախիջևանի Նորս), *տէրօխնըէ* (Սպարկերտի Տոսու և Վերին Հուրուք, Ուշի), *տէրօխնիք* (Բիթլիսի Դերըկ) և այլն: «*Տիրուխնին վըլյցկ կանի*» (Արծկէի Հառեն, Արջրա, Կոճերեր):

Ինչպէս նկատելի է, *h > խ* (ղ) հնչյունական անցումից բացի բոլոր օրինակներում առկա է *ն* ձայնորդի հավելում: Կարծում ենք, այդ հավելումը կատարվել է *օրհնէլ* բառիմաստի ազդեցությամբ և բառակազմական ու բառիմաստային գուգորդությամբ: Հ. Խաչատրյանը բացատրում է *տէր օրհնյա՛* բառակազմակցության հնչյունափոխված տարբերակի և *ուհի* վերջածանցի բարկությունը:

Շատախի տարածքում գրանցված է *տրրխորի* տարբերակը, որում, կարծում ենք, առկա է *ռխ > խ* դրափոխություն և առաջին վանկի *ր* ձայնորդի համաբանությամբ բարդության երկրորդ բաղադրիչի մեջ *ր* ձայնորդի հավելում: Մոկսի բարբառի *տրխօրի* կազմության մեջ *ր* ձայնորդը հայտնվել է բառավերջում: Մ. Մուրադյանը *տրրխորի* բառաձևը բաժանում է *տէր* և *հուրի* բաղադրիչների⁴, իսկ Հ. Խաչատրյանն առաջարկում է *տէր* և Հ. Աճառյանի կողմից վկայաբերված *ուհի* ածանցի հնագույն *ուրիք*⁵ բառակազմական գումարելիները⁶:

Լ աճականով *տիրուխլի* հետաքրքիր տարբերակն է գործառվում Ապարանի տարածաշրջանի Լուսազյուղում:

Տիրուհի - երեցկինը հասարակ անունից անցում է կատարել հատուկ անվանակարգ և լայն տարածում ունի հայերենի բարբառներում: Օրինակ՝ *Տիրօհի* (Նախիջևանի Մեծոփ), *Տարուհի* (Շուշի), *Տուրուհի* (Վինան), *Տրրո՛ւհի* (Գորիս), *Ղուրուհի* (Մալաթիա), *Ղիրիքի* (Զմշկաձագ) և այլն:

Զմշկաձագի օրինակում ունենք հայերենի մի շարք բարբառներին բնորոշ *h > ֆ* հնչյունափոխություն (իմա՝ *հող > ֆող*, *հոր > ֆոր*), որը սովյալ պարագայում տեղի է ունեցել ոչ թե բառակազմում, այլ բառամիջում:

Հաճախադեպ են նաև արտակարգ հնչյունափոխությամբ տարբերակները, ինչպէս օրինակ՝ *Տրունի* (Հաթերք), *Տիրուն* (Ծայծակ, Եղվարդ, Բալխո, Բեժանո, Նախիջևանի Գյումուր, Ուլյա, Քըխսամ, Ալաստան, Կտրած քար, Իրցանք, Հագարեն, Չոլախլու, Հադգոն, Աղավնատուն, Փիրան), *Տիրուխ* (Ծայծակ, Կվերս), *Տիրօ* (Գետազատ, Կոդակ), *Ղուրիգ* (Մալաթիա), *Ղիրուխ* (Բեյլան), *Ղիրօ* (Մըշկեդ, Փսանք) և այլն:

Նկատելի է, որ երեցկին // *տիրուհին* և հատկանուն *Տիրուհին* բարբառներում բացառապես հանդես են գալիս հնչյունափոխական տարբեր լուծում-

⁴ Մ. Մուրադյան, *Շատախի բարբառը*, Ե., 1962, էջ 216, *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. 2, էջ 209:

⁵ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, Ե., 1957, էջ 306:

⁶ Հ. Խաչատրյան, *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում*, Ե., «Լուսաբաց» հրատ., 2009, էջ 231:

ներով և առանձին ձևերով: Միայն Արճեշի Ծայծակ և Խոշարի Հուռթուկ գյուղերում է *Տիրուխնի* ձևը միաժամանակ նշում է և՛ անձնանուն, և՛ երեցկին:

Տիրուհի հատկանունը կիրառելի չէր Նախիջևանի Փարադաշ բնակավայրում, և տրված բառի *տիրոխնի* հնչյունափոխված տարբերակն ունի միայն *երեցկին* իմաստը:

Վանի բարբառի *տիրուհնի* և Արարատյան բարբառի Էջմիածնի խոսվածքի *տիրոխնի* նույնանունները, որպես հարիմաստ բառեր, մասնանշում են մենաստաններում գործածվող փղոսկրյա կամ փայտյա՝ ձեռքի նմանվող առարկան, որով քորում են մեջքը: Ինչպես նկատում ենք, Վանի տարածքում գործածվող տարբերակի մեջ չի կայացել *h > ի* համակարգային անցումը, որը կարելի է բացատրել աշխարհիկ բովանդակությունը հոգևորից տարբերակելու միտումով:

բ) Տեր+ա+կին(իկ): Տերակին (Տիգրանակերտ, Ղարաբաղ) կառույցը կարելի է համարել *տերտերակին* բաղադրության ամփոփ ձևը, որը ենթարկվում է ձայնավորական և բաղաձայնական տարբեր հնչյունափոխությունների. *տըրակին* (Ագուլիս), *դիրսկէն* (ԼՂՀ Տոնաշեն, Սողոմոնագոմեր, Գետի գոմեր, Դաստակերտ, Հաղրութի Քարագլուխ, Բերդաձոր, Ղազանչի), *դըրսկէն* (Վերին Հոռաթաղ), *դըրսկէն*՝ (Ղազարահող) և այլն: Ինչպես նկատելի է, մի քանի օրինակներում քմայնացել է *ա* հոդակապը՝ Տիգրանակերտի բարբառի օրինակում բառակազմում համակարգային օրինաչափական ձայնեղացում տեղի չի ունեցել: Միայն ԼՂՀ Ուրգունի (*դերակընէզ*) և Կաղարծիի (*դիրակընրէզ*) խոսվածքային վայրերում հանդիպեցինք կղզյակային *տեր + ա + կին + իկ*: Ինչպես վերևում նկատեցինք, *-իկ* վերջածանցով *տեր + տեր + ա + կին + իկ* կառույցը ևս արձանագրված է միայն ԼՂՀ տարածքում: Պետք է ասել, որ ընդհանրապես փոքրացուցիչ *-իկ* վերջացանի գործառույթը փաղաքշականություն արտահայտելն է: Սակայն *կին+իկ* կառույցում *-իկ* - ը ակնհայտորեն չունի այդ իմաստը և առավելաբար հասարակաբանության իմաստատարներ է ձեռք բերել: Ինչպես տեսնում ենք, Ղարաբաղի բարբառի՝ նշված սակավ թվով բնակավայրերում *-իկ* վերջածանցով կառույցները հարգականություն են արտահայտում:

գ) Այ տեր+ա+ կին(իկ): Այ կոչական բառ -մասնիկով այս կազմություններում կոչականական իմաստը մթազնել է: *Ըդըրակին // ըդըրկին* (Գորիսի Վաղատուր), *ադերակին* (Գորիսի Վերինշեն և Բուն), *ադերակընէզ* (Կապան) և այլն: Նկատելի է, որ ինչպես նախորդ, այնպես էլ այս կառույցի օրինակները ևս բնորոշ են հիմնականում Ղարաբաղի բարբառի խոսվածքներին:

դ) Տեր+տեր+ա+կին: Հայերենի բարբառներում լայնորեն տարածված է *տերտերակին* բարդությունը՝ համապատասխան հնչատարբերակներով: Գրականհայերենյան *տերտերակին* հնչարտաբերությունն է գրանցված Արարատյան բարբառատարածքում (Լոռի, Դվին), Ղարաբաղում (Ղազախ, Կիրովաբաղ), Պարսկահայքում (Մուժումբար, Փերիայի Սանգիբարան): Գեղարքու-

նիքի Վերին Ճամբարակում այս հնչատարբերակի վերջին վանկի *ի* ձայնավորը արտաբերվում է որոշակի փակվածքով՝ *տէրտէրակի^Ձ*։

Է>Ե երկբարբառ, *ը, ըօ, ի, ա* հոդակապի քմայնացում, կոկորդայնացում, սղում կամ ընդգծված շեշտադրություն, առոգանական տարբերակում, *ի > է* ձայնավորական և բառասկզբի կամ բառամիջի *ղ* խուլ պայթականի ձայնեղացում, *ր* ձայնորդի անցում *ռ* թրթռայինի, վերջին արմատի *կ* խուլի ձայնեղացում կամ քմայնացում բաղաձայնական հնչյունափոխությունների են ենթարկված բարբառային գրեթե բոլոր բառաձևերը։ Այսպես՝ *տէրտէրագին* (Նորք, Օշական), *տէրտէրագին* (Բյուրական), *տէտտէրսագին* (Նախիջևանի Ազնաբերդ, Եղեգնաձորի Խաչիկ և Գնիշիկ), *տըրտըրակին* (Գորիսի Քարահունջ, Բերդի Նավուր), *տէրտէրկին* (Թաղիաբաղ), *տըրտէրակին* (Թումանյանի Թեղուտ), *ղէրղէրագին* (Աշնակ), *տիրտիրսկին* (Կիրովաբաղ), *տիրտիրսկին* (Դաշքեսանի Բանանց) և այլն։ Միայն Հավարիկում հանդիպեցինք *տէր + տէր + ա + կին + իկ* բարդ- ածանցավոր կառույցին՝ *տէրտէրակըն_ըօկ*։

Ինչպես նկատելի է, *-ոււ*, մասամբ նաև *լ-ս* ճյուղի բարբառների շարքում տեղ է գտել արևմտյան խմբակցության Մասունի բարբառը՝ ի դեմս Տավորիկի, Գելիեգուզանի գաղթականներով բնակեցված Արագածոտնի մարզի Աշնակ գյուղի խոսվածքի։ Չի բացառվում, որ խոսվածքը ենթարկված լինի լեզվական նոր միջավայրի ազդեցությանը։

Երկրորդ, երրորդ և չորրորդ կետերում բերված օրինակները բացառապես հոդակապով են և բնորոշ են արևելյան խմբակցության բարբառներին, մասնավորաբար՝ Ղարաբաղի բարբառի խոսվածքներին։ «Մեր հին լեզվի պատմությունն ուսումնասիրողները անհոդակապ բարդությունները համարել են բուն ժողովրդական կազմություններ և այդպիսիք հակադրել են հոդակապով բարդություններին, որոնք համարվել են գուտ գրական, ոչ ժողովրդական կազմություններ։ Այսպիսի մեկնաբանությունը որոշ վերապահությամբ պետք է ընդունել», - գրում է Վ. Առաքելյանը⁷։ Տվյալ դեպքում ունենք արևելյան տարածքին բնորոշ հոդակապավոր ժողովրդական կազմություններ։ Վ. Առաքելյանի նշած հակադրությունը այս տարածքներում չի գործել, որը կարող ենք բացատրել հին լեզու, այսինքն՝ հիմնականում արևմտյան լեզվական հատկանիշներ ունեցող գրաբար, և նոր լեզու, այսինքն՝ արևելյան լեզվական հատկանիշներ ունեցող ժողովրդախոսակցական լեզու հարաբերակցությամբ։

ե) Երեցկին իմաստն արտահայտվում է նաև *տէր* կամ *տէրտէր* բառերով և *կին + իկ* ածանցական կառույցով, որը ակտիվ գործառույթ ունի *տէրտէրի կին + իկ* // *տիրոջ կին + իկ* հատկացուցիչ- հատկացյալ բառակապակցության մեջ։ Այն հնչյունական տարբերակներով բնորոշ է բազմաթիվ բնակավայրերի, ինչպիսիք են արևելյան և պարսկահայ տարածքներից՝ Հին Ջուղան, Շահումյանը, Նուխին (*տէրտէրի կընիկ*), Մարտակերտի Մարաղան

⁷ Վ. Առաքելյան, *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, ՀՍՍՀ ԳԱ, Ե., 1983, էջ 128։

(տերտերի կրնիկ), Շահումյանի Բուզլուխը (տիրտերին կրնեկը), Կապանի Ներքին և Վերին Խոտանանները (դերու կրնեկ), Ղարադաղի Վինանը (դերի կրնեկ), Ղարադաղի Ղասմաշենը (դերեն կրնեկ), արևմտյան տարածքից Ադրախի Հասարստանը (տերտրոջ կրնիկ), Բասենի Արմտլուն (տերդրոջ կրնիկ), Տրապիզոնը (դերդերին գրնիգը), Սասունի Մառնիկը (դերդրոճ գրնիկ), Տրապիզոնից փախածներով բնակեցված Աբխազիայի Ծինգերը, Միմերը, 2-րդ Բագատյաշան (դերային գրնիգը), համշենցիներով, սամսոնցիներով բնակեցված Աբխազիայի Ալախաձեն (դերի գրնիկ) և այլ բնակավայրեր:

Բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի Գորիսի և Խնձորեսկի խոսվածքներում նշված բառակապակցության սկզբում ավելանում է այ > ա > ը կոչական բառ-մասնիկը՝ համապատասխանաբար կազմելով ադորը կրնըէկ, ըդերի կրնէկ բարբառային զուգաբանությունները, որոնցում, սակայն, մթագնել է կոչականի իմաստը: Մեկից ավելի զուգաբանություններ ունեն սահմանափակ թվով տարածքներ՝ դիրսկին // դիրակեն // տերդրոճ կրնիկ (Մարտակերտի Չազլիկ), տիրակեն // տիրտիրակեն // տերին կրնեկը (Նուխիի Մաբաթոու), տիրտիրսկին // տիրսկին (Խանլար, Ելենսդորֆ) և այլն: Ուսումնասիրությամբ պարզեցինք, որ ոչ մի բնակավայրում չի գործառվում տերտերի կին բառակապակցությունը, այն բացառապես տերտերի կամ տիրոջ կին + իկ է: Բանահավաք Ս. Վարդանյանը Համշենի Խովա և Բորչկա բնակավայրերում երեցկին բառին որպես հոմանիշ նշում է քեշիշի գենիգ⁸ հատկացուցիչ -հատկացյալ բառակապակցությունը: Եզակի հետաքրքիր բարբառային հոմանիշ է Նուխիի Դաշպուլաղ բնակավայրում գրանցված նանէ բառը: Արևմտյան բարբառներով հաղորդակցվող Մոկս, Ոզմ, Ալաշկերտից գաղթածներով բնակեցված Մարտունու Լիճք և արևելաբարբառախոս Իջևանի Աչաջուր և Ծաղկավան, Մարտակերտի Չափար բնակավայրերում երեցկին բառը ինքնին կամ որևէ հոմանիշով արտահայտված չէ:

Այսպիսով, երեցկին բառը բովանդակում է հարգականություն և հնչյունական զուգաբանություններով կամ հոմանշային տարբերակներով գործառվում է հայերենի տարածքային տարբերակներում:

Haykanush Mesropyan- The Dialect Expressions of the Concept of “Yeritskin” (pastor's wife).-The religious-words ‘yeritskin’ / terterakin (translated as ‘pastor's wife’) expressing respect refer to the ecclesiastical terms. These examples show that the ‘yeritskin’ (‘pastor's wife’) complexity phonetic variations dominated in the eastern dialects, they occur in the western dialects very rarely and they are almost not utilized in the dialects of the Armenian diaspora in Persia.

The mothers of the monks were also treated respectfully and they were referred to with the honouring names of ‘Tiruhi’ (trans. ‘mistress’). ‘Tiruhi’ / ‘yeritskin’ common

⁸ Ս. Վարդանյան, Կրոնավորի համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Ե., ԵՊՀ հրատ. 2009, էջ 28:

name was transferred to a proper nomination and it is widespread in the Armenian dialects.

Месропян Айкануш- Диалектные выражения понятия “жена пастора”. -К словам, имеющим религиозно-церковное содержание, принадлежат ерецин // *terterakin* (“жена пастора”), выражающих почтение. Примеры показывают, что фонетические варианты слова “*երեցկիս*” распространены в западных и восточных диалектах армянского языка и очень редко встречаются в армяноперсидских диалектах.

Особое уважение выражается и к матерям монахов, которые описываются почитательным словом “*տիրուհի*”. Простое существительное “*տիրուհի*” употребляется как женское имя и фонетическими вариантами распространено в армянских диалектах.

**ԲԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ
ԿԻԼԻԿԻԱՅԻ ԵՎ ԱՆՏԻՈՔԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ**

Կիլիկիայի հայկական թագավորությունը, ինչպես պատմությունից է հայտնի, ձևավորվել է XI դ. (1080թ.) և գոյատևել երեք դար: Այն կործանվել է 1375թ.: Երկիրը սկզբում Եգիպտոսի հպատակության տակ է ընկել, այնուհետև՝ 1482թ., այդ տարածքը զավթել և այնտեղ մինչ օրս իրենց տիրապետությունն են հաստատել թուրքերը: Աստիճանաբար հայ բնակչության մեծ մասը թրքախոս է դարձել: «Հայախոս վայրերն էին Ձեյթունը, Հաճընը և Մարաշը, սրանց վրա ավելացնելով նաև Անտիոքի գյուղերը և Սվեդիայի (Մուսա լեռան) շրջանը, կարելի է կազմել մի բարբառային միություն՝ «Կիլիկիայի բարբառ» անվամբ¹: Կոտորածից մի կերպ փրկված Կիլիկիայի հայերը բնակություն հաստատեցին Սիրիայում և Լիբանանում: Նրանց մի մասն էլ ժամանակին գաղթեց Հայաստան:

Առաջնորդվելով Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգմամբ՝ փաստում ենք, որ Կիլիկիայի միջբարբառախամբի մեջ մտնում են Մարաշ-Ձեյթունի բարբառը՝ Մարաշի, Ձեյթունի խոսվածքներով, և Հաջընի բարբառը միայն մեկ՝ Հաջընի խոսվածքով²:

Մեր ուսումնասիրության համար վերոբերյալ բարբառային միավորների բայական համակարգերի հիմք է ծառայել Հ. Աճառյանի «Քննություն Կիլիկիայի բարբառի» ծավալուն աշխատանքը: Հ. Աճառյանը սույն աշխատության՝ բային նվիրված բաժնում, ինչպես և այլ բարբառների վերաբերող իր աշխատանքներում, բերում է բաղադրյալ ժամանակների մի ցանկ, որում հստակ կարելի է առանձնանել երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը:

Մարաշ-Ձեյթունի բարբառի Ձեյթունի խոսվածքը պատկանում է Կը ճյուղին: Ներկա ժամանակը կազմվում է Կը> Գօ/ Գու մասնիկի օգնությամբ: Երկրորդական վերլուծական ժամանակները, ինչպես նշեցինք, վերցրել ենք Հ. Աճառյանի աշխատության բայի բաղադրյալ ժամանակների հարացույցից: Դրանք են՝ սահմանական եղանակ. *սիյօձ էղօ* «սիրած եղա», *սիյիլօ էղօ* «սիրելու եղա», *սիյօձ նալու իս* «սիրած եմ լինելու», *սիյօձ նալու ա* «սիրած էի լինելու»: Հարկադրական եղանակ-*սիյօձ քինամ* «սիրած պիտի լինեմ», *սիյօձ էղօձ քինամ* «սիրած եղած պիտի լինեմ», *սիյօձ քինի* «սիրած պիտի լինեի», *սիյօձ էղօձ քինի* «սիրած եղած պիտի լինեի», *սիյիլ^{ու}օ քիդի նամ* «սիրելու պիտի լինեմ», *սիյիլ^{ու}օ քիդի նի* «սիրելու պիտի լինեի»: Պայմանական եղ.-*սիյօձ գունամ* «սիրած կլինեմ», *սիյօձ գօգունամ* «սիրած կլինեմ» (հարակատարի

¹ Հ. Աճառյան, *Քննություն Կիլիկիայի բարբառի*, Ե., 2003, էջ 9:

² Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 132:

շարունակական), *սիյօձ գունի* «սիրած կլինեի», *սիյօձ զօգունի* «սիրած կլինեի» (անց. հրկտ.-ի շարունակական), *սիյիլ^մօ գունամ* «սիրելու կլինեմ», *սիյիլ^մօ զօգունամ* «սիրելու կլինեմ» (պայմանական եղ. ապառնի շարունակական), *սիյիլ^մօ գունի* «սիրելու կլինեի», *սիյիլ^մօ զօգունի* «սիրելու կլինեի» (պայմանական եղ. անցյալի ապառնի, շարունակական): Նկատենք, որ բարբառային այս միավորում շարունակականը կազմվում է *զօ* մասնիկի օգնությամբ: Ըղձական եղանակ – *սիյօձ նամ* «սիրած լինեմ», *սիյօձ նալ^մօ նամ* «սիրած լինելու լինեմ», *սիյօձ նի* «սիրած լինեի», *սիյօձ նալլ նի* «սիրած լինելու լինեի», *սիյիլ^մօ նամ* «սիրելու լինեմ», *սիյիլ^մօ նի* «սիրելու լինեի», *սիյօձ էղօձ նամ* «սիրած եղած լինեմ», *սիյօձ էղօձ նի* «սիրած եղած լինեի»³: Ի դեպ, հարկ ենք համարել եղանակներն ընդունված տերմիններով կոչել, այնինչ Հ. Աճառյանն այլ կերպ է դրանք անվանում:

Զեյթունի խոսվածքի բայի բաղադրյալ խոնարհման մեջ հեղինակն առանձնացնում է նաև գործածված դերբայական ձևերը. *սիյօձ նալ* «սիրած լինել», *սիյիլ^մօ նալ* «սիրելու լինել»⁴: Այսինքն՝ հարակատար դերբայն ունի *-օձ* վերջավորությունը, իսկ ապառնին՝ *-ն*: Այս դերբայներով են կազմվում երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը:

Ընդունված է բայի երկրորդական վերլուծական ժամանակներ համարել այն կառույցները, որոնցում գլխավոր (կամ հիմնական) բայի որոշ դերբայական ձևերին ավելանում է որպես օժանդակ բայ ծառայող խոնարհված բաղադրիչը, ավելի հաճախ՝ *լինել* (տվյալ բարբառային միավորում՝ *նալ*) բայը: Երբեմն էլ այդ կառույցներում վերը բերված օրինակների նման խոնարհված օժանդակ բային զուգահեռ հանդես են գալիս նաև նույն բայի դերբայական ձևերը, ինչպես՝ *սիյօձ նալլ նի* «սիրած լինելու լինեի», *սիյօձ էղօձ նամ* «սիրած եղած լինեմ», *սիյօձ էղօձ նի* «սիրած եղած լինեի» և այլն:

Երկրորդական բաղադրյալ ժամանակների հրամայականը, որը բարբառներում, հատկապես՝ արևելյան խմբակցության, հաճախ հանդիպող երեվոյթ չէ, Զեյթունում բավականին կենսունակ գործառություն ունի: «Կիլիկիայի բարբառը» աշխատությունում Հ. Աճառյանը *սիրել* բայը խոնարհել է նաև այս եղանակով, ընդ որում, Զեյթունի խոսվածքում հեղինակը բայական այնպիսի վերլուծական կառույցներ է ներկայացնում որպես հրամայական, որոնք սովորաբար լեզվաբաններն այլ եղանակային ձևեր են համարում: Այսպես՝ *սիյօձ լայ* «սիրած եղի՛ր», *սիյօձ թու(ղ) նամ* «սիրած թող լինեմ», *սիյօձ թու(ղ) նի* «սիրած թող լինեի», *սիյօձ լա՛յ* «սիրելու եղի՛ր»⁵:

Բերված օրինակներից կարող ենք եզրակացնել, որ Զեյթունի խոսվածքը հարուստ է եղել երկրորդական բաղադրյալ ժամանակներով: Եվ պարզ, և՛ բարդ բայական ժամանակաձևերը բարբառային այս միավորում «... ունեն իրենց *թեական եղանակը*, որ կազմվում է բայի վերջում ավելացնելով *նր*

³ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 256-258:

⁴ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 258:

⁵ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 256-259:

(Պոլսում *նէ*) մասնիկը»: Օրինակ՝ *խաղօս նը* «եթե խաղամ», *գիյօձ էղօձ նամ նը* «եթե կերած եղած լինեմ» և այլն⁶:

Բարբառագիտական աշխատություններում մեծ լեզվաբանը բայի երկրորդական ժամանակաձևերը, ինչպես նշեցինք, ներկայացնում է «Բաղադրյալ ժամանակներ» վերտառությամբ ընդհանուր բաժնում: Ձեյթունի խոսվածքի բայի խոնարհման համակարգի վերաբերյալ Հ. Աճառյանն այսպիսի դիտարկում ունի. «Պատմողականը կազմվում է բոլոր նախորդ ձևերից (թեականն էլ միասին)՝ ավելացնելով բայի վրա *էղիյ է*, որ ճիշտ համապատասխանում է Նոր Նախիջևանի *էղիյ է* «եղել է» ձևին և տարբերվում է պոլսահայ բարբառի *էղէր* «եղել» դերբայական ձևից՝ միայն *էական* բայի հարադրությամբ: Պատմողական եղանակը ցույց է տալիս. 1) ուրիշից լսված մի դեպք, որին շատ վստահություն ցույց չի տալիս պատմողը, 2) հեզնանք կամ ծաղր»: Օրինակ՝ *Իս լրսիցի յույ իյիք դուն փըլիյ է էղիյ* «Ես լսեցի, որ երեք տուն փուլ է եկել եղել»: Սա վերապահություն է արտահայտում: *Վ՞օն բըղիգ բօլուզը էօյր չույս հ՞օց գուղի էղիյ է* «Այն փոքրիկ երեխան օրը չորս հաց կուտե եղեր»⁷: Այս նախադասությունն էլ, ըստ Հ. Աճառյանի, հեզնանք է արտահայտում: Այսինքն ինչպես այլ բարբառային միավորներում, այստեղ ևս, նա պատմողական է անվանում երկրորդական բաղադրյալ ժամանակները: Հեղինակը, ավելորդ համարելով թվարկել պատմողական եղանակի խոնարհված ձևերի անվերջանալի շարքը, ևս մի քանի օրինակ է բերում *էղիյ* բայաձևի օժանդակությամբ⁸:

Ցավոք, մեզ հետաքրքրող նյութեր չգտանք Մարաշի խոսվածքից:

Մեր ուսումնասիրած հաջորդ բարբառային միավորը Հաջընի խոսվածքն է: Ժամանակին Հաջըն քաղաքը Լեոնային Կիլիկիայի հայաբնակ կարևորագույն կենտրոններից մեկն է եղել: Այն Ձեյթունի նման ամուր և անմատչելի էր համարվում: Ունենալով Լեոնային դիրք՝ շրջակայքի հետ կապող ճանապարհները խիստ անանցանելի էին⁹:

Հաջընի բարբառի Հաջընի խոսվածքի հիմքը, ըստ Համբարձում Գասպարյանի, կազմում է միջին հայերենը¹⁰: Խոսվածքը պատկանում է *Կը/Գը* ճյուղին: Հեղինակի պնդմամբ՝ խոսվածքում մեր խնդրո առարկա երկրորդական բաղադրյալ ժամանակները գրեթե գործածական չեն: «Կա ըղձական ձևի նման «ուզել» բայով արտահայտություն *գավզ՞էմ գայտօլ, գավզ՞էմ էյ գայտօւմ* «ուզում եմ կարդամ, ուզում եմ, որ կարդամ» ձևը նաև *բիգայտի իղի*, անցյալ ապառնիի ձևը, որ *պիտի կարդայի եղելի*-ի իմաստն է տալիս»¹¹: Հ. Գասպարյանն աշխատությունում, ինչպես ինքն է բնորոշում, բայական մի «յուրահատուկ» կառույց է ներկայացնում, որը, հեղինակի կարծիքով, արևմտահայ ոչ

⁶ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 259:

⁷ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 259:

⁸ Նույն տեղում:

⁹ Հ. Գասպարյան, *Հաջընի բարբառը*, Ե., 1966, էջ 7-8:

¹⁰ Հ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 17:

¹¹ Հ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 120:

մի ուրիշ բարբառային միավորում գործածական չէ: Այն է՝ *գավգիւն գըրըցիւմ* «կուզեմ գրուցեմ»: 2. Գասպարյանը նման կարգի հարադրությունն անվանում է ներկա ապառնի: «Այս ձևը գործածվում է միայն ներկայի իմաստով, անցյալի համար այժմ գործածական չէ...»¹²: Կարծում ենք՝ ինչպես այս ժամանակա-ձևը, այնպես էլ «կարդալ» բայի վերը բերված վերջին երկու խոնարհված ձև-վերը, հենց բայի երկրորդական վերլուծական ժամանակներ են: Արևելյան բարբառախմբում այս վերջինի տիպի բայի հարադրական կառույցներ ավելի վաղ մենք հանդիպել ենք և դրանք անվանել երկրորդական: Դրանցում խոնարհվում է նաև հիմնական բայը՝ օժանդակ բայի հետ համաձայնվելով նույն ժամանակով, թվով և դեմքով:

Քննության ենք առել Անտիոքի տարածքի Քեսաբ-Սվեդիայի բարբառը, որի մեջ մտնում են Քեսաբի, Քաբուսիեի, Յողուն-Օլուկի, Հաջի-Հաբիբլիի, Արամոյի խոսվածքները:

2. Աճառյանը վերը հիշատակված գրքում ունի նաև «Սվեդիայի բարբառ» վերտառությամբ բաժին: Նախ նա հիշյալ տարածքի 10 գյուղերը ըստ իրենց նմանության բաժանում է երեք խմբի. դրանք են՝ 1. Հաջի-Հաբիբլի, 2. Յողուն-Օլուկ, 3. Քեբուսիե: Այնուհետև գրում է. «Իմ ուղեցույցները առաջին գյուղից լինելով (իմա՝ Հաջի-Հաբիբլիից՝ Ժ.Մ.), այս աշխատությունն էլ հիմնված է նրա վրա»¹³: Հեղինակը այստեղ էլ է ներկայացնում բայի բաղադրյալ ժամանակների մի ցուցակ, որից առանձնացնելով բայի երկրորդական վերլուծական ժամանակները՝ ունենում ենք հետևյալ հարացույցը. *սիրում բըրը ընում, սիրում իդում բըր ընում, սիրում բըր ընէր է, սիրում իդում բըր ընէր է, սիրիլա իդո, սիրում ընիլա իմ, սիրում ընիլա էր է, սիրիլա բըր ընում, սիրիլա բըր ընէր է, սիրում զընում, սիրում գու ընում, սիրում զընէր է, սիրում գունէր է, սիրիլա զընում, սիրիլա գու ունում, սիրիլա զընէր է, սիրիլա գունէր է*: Թվարկված բոլոր հարադիր ժամանակաձևերը, ինչպես Ջեյթունի խոսվածքի դեպքում էր, 2. Աճառյանը ներառում է «սահմանական» անվան տակ և դրանցում որպես ժամանականիշ տերմիններ գործածում է «զերակատար, պարտավորական, պայմանական» բառերը: Իսկ այնուհետև «ստորադասական» է կոչում մի քանի այլ բաղադրյալ ժամանակներ ևս, ինչպես՝ *սիրում ընում, սիրում ընիլա ընում, սիրում ընէր է, սիրում ընիլա ընէր է, սիրիլա ընում, սիրիլա ընէր է, սիրում իդում ընում, սիրում իդում ընէր է*¹⁴: Խոնարհված *սիրէլ* բայի հարակատար դերբայն է *սիրում*-ը, իսկ *սիրիլա*-ն՝ ապառնի: Ուշագրավ է, որ *սիրում ընիլա ընում, սիրում ընիլա ընէր է, սիրում իդում ընում, սիրում իդում ընէր է* հարադիր կառույցներում օժանդակ բայը ոչ միայն խոնարհվում, այլև դերբա-

¹² 2. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 127:

¹³ 2. Աճառյան, նշվ. աշխ., էջ 351:

¹⁴ 2. Աճառյան, նշվ. աշխ., էջ 504:

յական ձևերով է հանդես գալիս: Այս երևույթը, հատկապես արևելյան բարբառներում, գրեթե չի հանդիպում:

Որպես հրամայական եղանակ Հ. Աճառյանը ներկայացնում է Հաջի-Հաբիբլիի խոսվածքի հետևյալ բաղադրյալ կառույցները. կատարյալ *սիրում իղէ՛*, հարակատար դերբայով - *սիրում դ՛րդ ընում*, գերակատար *սիրում դ՛րդ ընէր է*, ապառնի դերբայով *սիրիլա իղէ՛*: Ըստ հեղինակի՝ հարակատար դերբայն է *սիրում ընիլ*, «ապառնի անորոշը»՝ *սիրիլա ընիլ*¹⁵: Պատմողական եղանակին է նա վերագրում *իղիր է իս գ՛ացիր իս*, *իղիր է իս գ՛ացած իս*, *իղիր է բըր ուղինք* բայական կառույցները: Այս վեջինը հեղինակը թարգմանում է՝ «պիտի ուտենք եղեր»¹⁶:

«Սվեդիայի բարբառը» աշխատության հեղինակ Տ. Անդրեասյանը ներածության մեջ գրում է, որ ինքը, լինելով Յոդուն-Օլուկի գավակ, ուսումնասիրությունը կատարել է այդ խոսվածքի հիման վրա: Մեզ հետաքրքրող՝ ոչ ծավալուն նյութ ենք գտնում «Բայերու բաղադրյալ ժամանակները» բաժնում: Այսպես, «պատմական հարակատար» է անվանում հետևյալ հարադիր կազմությունները, եզ.-*կըրում իղէրըմ*, *կըրում իղէրըս*, *կըրում իղէր*, *հոգն. կըրում իղէրընք*, *կըրում իղէրըք*, *կըրում իղէրըն*: Այստեղ *կըրում*-ը «գրել» բայի հարակատար դերբայն է, որի հետ խոնարհված է «լինել» օժանդակ բայը: Պատմական «անորոշ» հարակատար եզ.- *կըրէրըմ իղէր*, *կըրէրըս իղէր*, *կըրէր իղէր*, *հոգն. -կըրէրընք իղէր*, *կըրէրըք իղէր*, *կըրէրըն իղէր*: Բառացի թարգմանությունը՝ «գրել եմ եղել, գրել ես եղել, գրել է եղել»:

Սվեդիայի բարբառային միավորին նվիրված մեկ այլ աշխատանքի հեղինակն է Գաղթուհի Հանանյանը: Նրա բանախոսները եղել են Խտրբեկ (հատկապես), Յոդուն-Օլուկ, ՎագրՖ, Քաբուսիե գյուղերի նախկին բնակիչներ: Աշխատությունն ունի «Երկրորդական բաղադրյալ ժամանակներ» բաժինը: Գ. Հանանյանը, ի տարբերություն վերը նշված աշխատությունների հեղինակների, երկրորդական վերլուծական ժամանակաձևերը առանձնացնում է մյուս բաղադրյալ ժամանակներից՝ տալով դրանց խոնարհված հարացույցները: Ըստ Գ. Հանանյանի՝ «Երկրորդական բաղադրյալ ժամանակները արտահայտում են առարկաների կամ երևույթների՝ տվյալ բայիմաստով նշված վիճակները՝ որոշակիացնելով դրանք ժամանակային զանազան հարաբերությունների մեջ»¹⁷: Խնդրո առարկա ժամանակաձևերը բարբառային սույն միավորում կազմվում են ոչ միայն խոնարհվող բայի հարակատար -*ուծ/ձ*, ապառնի -*ա* կամ -*օ*, այլև ենթակայական -*ուղ* վերջավորություններ ունեցող դերբայներով և *լինել* բայի խոնարհված ձևերով: Բերենք նյութից մի քանի օրինակ. սահմ. հրկտ. դերբայով՝ ներկա- *կըրում գէ՛նում*, ստորադաս. ապառնի -*կըրում ընում*, պայմանական ապառնի- *կըրում գընում*՝ և այլն, ապառնի դերբայով՝ կա-

¹⁵ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 505;

¹⁶ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 506:

¹⁷ Գ. Հանանյան, *Սվեդիայի բարբառը*, Ե., 1995, էջ 138:

տարելի -սահմ. ներկա-կրրիլա գե^mնում, ստորադաս. ապառնի-կրրիլա ը-նում, անց.-կրրիլա գրնօր, պայմանական ապառնի կրրիլա գրնում և այլն: Ենթակայական դերբայով՝ ներկա- կրրուղ գե^mնում, ստորադաս. ապառնի կր-րուղ ընում և այլն: Նույն հետևողականությամբ հեղինակը գրել և կարդալ բա-յերը խոնարհել է պայմանական, պատմողական, հարկադրական, հրամայա-կան եղանակներով: Ներկայացնենք նաև գրել բայի հրամայականի երկրոր-դական բաղադրյալ ձևերը. բուն հրամայական՝ կրրուձ (կրրիլա, կրրուղ) իղէ՛, պատվիրական- կրրուձ (կրրիլա, կրրուղ) թըղ ընու (եղանակաժամանակային տերմինները հեղինակին են):

Երկրորդական վերլուծական ժամանակներին վերաբերող բաժնում Գ. Հանանյանն այսպիսի եզրահանգում ունի. «Երկրորդական բաղադրյալ ժամա-նակաձևերում առկա են կերպային երեք հակադրություններ, որոնք արտա-հայտվում են հարակատար, ենթակայական և ապառնի դերբայներով»¹⁸:

Քեսաբ-Սվեդիայի բարբառի Քեսաբի խոսվածքը Հակոբ Չոլաքյանի մայ-րենին է: Հեղինակը նույնպես բայի խոնարհման հարացույցից առանձնացնում է երկրորդական բաղադրյալ ժամանակները: Քեսաբում օժանդակ բայը ընիլ «լինել»-ն է, որի հիմքից կազմվում են ապառնի և «պարագայական» դերբայ-ները՝ ընիլս, ընիլէք, ընիլ՝օտը, ընիլնիքսն: Դարձյալ հարկ ենք համարել պահպանել տվյալ հեղինակի գործածած եղանակաժամանակային անվա-նումները: Այսպես. ապառնի երկրորդական ժամանակներն են. սահմանա-կան եղանակ (միայն առաջին դեմք) ներկա և անկ.- գրրիլս հս/էնում, գրրիլս հս/էնէրէս, ապառ. բցրձ. և անկ. -գրրիլս պըր ընում, գրրիլս պըր ընէրէս, բցրձ. ապռ. ներկ. և անկատ -. գրրիլս ընիլս էիս, գրրիլս ընիլս էրէս, հրկտ.-ի ներկա և անկ. գրրիլս -ըղ^mօծիս, գրրիլս ըղ^mօծէրէս, վաղ. ներկա - գրրիլս ըղիրիս, անց. կատար.- գրրիլս ըղու, պատմող. անց. - գրրիլս ըղու իէէր: Ստո-րադասական եղանակ ներկ. և անկ. -գրրիլս ընէրէս, պայմանական եղ. ներկ. և անկ. - գրրիլս կընում, գրրիլս կընէրէս, ըղձ. ներկ. և անկ.-գրրիլս թըղ ը-նում, հարկադրական ներկա և անկ.- գրրիլս պիտս ընում, գրրիլս պիտս ը-նէրէս, հրամայ. - գրրիլս ըղէ՛, գրրիլս ըղէ՛¹⁹: Այնուհետև նույն հաջորդակա-նությամբ ու նույն հետևողականությամբ հեղինակը խոնարհում է գրել բայը հարակատար երկրորդական ժամանակներով, այսինքն՝ տվյալ դեպքում նա վերցրել է նշված խոնարհվող բայի հարակատար դերբայը՝ գրր^mօծ: Օժանդակ ընիլ բայի վաղակատար դերբայը՝ ըղիր «... կրնայ ազատօրէն գործածուիլ պարզ, բաղադրեալ և երկրորդական բաղադրեալ ժխտական և հաստատա-

¹⁸ Գ. Հանանյան, նշվ. աշխ., էջ 140:

¹⁹ Յ. Չոլաքեան, Քեսապի բարբառը, Ե., 2009, էջ 158:

կան բայերու հետ յետադաս կերպով»: Շարունակելով իր միտքը՝ Հ. Չոլաքյանն ասում է, որ դերբայի այդօրինակ գործածությունը խոսքը դարձնում է թեական: Այս դեպքում գործառում է նաև *հա* մասնիկը: Օրինակ՝ *հա պատկէմ ըղիք*, որը թարգմանվում է «իբր թե պատկում եմ», կամ էլ վաղակատար ներկայով. *հա պատկէմ ըղիքի*²⁰:

Անտիոքի մյուս՝ Բեյլանի բարբառին նվիրված միայն մեկ աշխատանք գտանք, այն է՝ Հ. Քյուփեյանի «Բեյլանի բարբառը» ատենախոսությունը: Ցավոք, դրանում մեզ հետաքրքրող նյութից ոչինչ չկար վկայված:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ վստահորեն կարող ենք արձանագրել, որ թե՛ Կիլիկիայի, թե՛ Անտիոքի բարբառային միավորներում բավականին կենսունակ են գործառել բայի վերլուծական երկրորդական ժամանակները՝ ի տարբերություն արևմտյան խմբակցության մի շարք այլ բարբառների: Սակայն խնդրո առարկա ժամանակաձևերի օրինակներ գրեթե չեն հանդիպում հեղինակների բերած բարբառային տեքստերում: Պատճառը, թերևս, այն է, որ կա'մ բարբառախոսները, կա'մ նյութերը գրի առնողները խոսքը հասկանալի դարձնելու համար բայական երկրորդական ժամանակներ չեն գործածել:

Zhanna Mikaelyan - Descriptive Secondary Tenses in Cilician and Antioch Dialects.- For research of secondary tense in these dialects, materials from the book of R. Acharyan "Research Cilician dialect" were generally used. Also, materials from works of the different authors devoted to antioch dialects are used.

The auxiliary verb լինել, which is conjugated and agrees with the subject in number and person, is represented with the participle of the main verb.

Secondary compound verb forms in general are functioning in almost all inclinations, even imperative, which is rare in these structures.

Микаелян Жанна - Дескриптивные второстепенные времена глагола в киликийских и антиокских говорах.- Для исследования второстепенных времен глаголов в данных говорах в основном, использовались материалы из книги Р. Ачаряна "Исследование киликийского диалекта". Также использованы материалы из работ разных авторов, посвященных антиокским говорам.

С деепричастием основного глагола представлен вспомогательный глагол *լինել*, который спрягается и согласуется с подлежащим в числе и в лице.

Второстепенные составные формы глагола вообще функционируют почти во всех наклонениях, даже в повелительном, которое редко встречается в данных конструкциях.

²⁰ Յ. Չոլաքեան, նշվ. աշխ., էջ 159:

**ԿՑՈՒՐ, ԿԱՑՈՒՐ ԵՎ ԿՈՆՆԱԿ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԱՐՎԵՍՏՈՒՄ**

Հայ միջնադարյան երաժշտարվեստի պատմության մեջ գոյություն ունեցող հիմնահարցերից մեկը հոգևոր երգերի անվանումների տարբերակումն է: Որոշ երգեր երբեմն շփոթում են միմյանց հետ, և դրանցից շատերը տարբեր աղբյուրներում կարող են հիշատակվել տարբեր անուններով: Չնայած գոյություն ունեցող ուսումնասիրություններին²¹՝ հստակեցված չէ հոգևոր երգերի տերմինային անվանումների ցանկը, նույնիսկ ժանրերի սահմանման համար չկա որոշակի չափորոշիչների մշակված համակարգ: Այսինքն՝ այդ երգերը բովանդակային առումով տարբերակված չեն, ուստի հաճախ դժվար է լինում ընտրել հասկացության հիմնական հատկանիշը և նկատի ունենալ գործածության ժամանակ: Նման խնդրի լուծումը ներառում է երգերի, դրանց անվանումների ծագումնաբանական, բովանդակային, տիպաբանական, ինչպես նաև միջնադարյան մշակույթի համար կարևոր ծիսական բնույթի, դավանաբանական, կրոնափոխության գործոնների ամբողջություն:

Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում **կցուրդ, կացուրդ** և **կոնդակ** հոգևոր երգերը, որոնք նախապես կիրառվել են բյուզանդական երգարվեստում: Հայ միջնադարյան և բյուզանդական մշակութային առնչությունները պայմանավորված են ընդհանուր քրիստոնեական հիմքով: Հայկական հոգևոր երգարվեստը տարանջատված չի եղել բյուզանդականից: Բացի նշված անվանումներից կան նաև փոխառյալ այլ տերմիններ՝ **գուրդա, ստողոզի, մեսեդի**, որոնք բյուրեղացել են բյուզանդական մշակույթում: Այդ ամենը, սակայն, չի ստվերում հայ հոգևոր երգերի ազգային ինքնատիպությունը: Պատահական չէ, որ բյուզանդական եկեղեցական երաժշտության գիտակ Էզոն Վելլեսը բարձր է գնահատում հայ հոգևոր երգը՝ գրելով, որ «հայկական երաժշտությունը համեմատելի է միայն բյուզանդականին, եթե նրանից գերադաս չէ»: Այնուհետև հավելում է. «Մենք երբեք չենք կարող լիովին հասկանալ արևելյան քրիստոնեական եկեղեցու երաժշտության զարգացումը, մինչև ավելին չիմանանք հայ երաժշտության ու նրա դերի մասին արևելյան երգի զարգացման մեջ»²²:

Քրիստոնեության ընդունումից և գրերի գյուտից հետո առաջին ինքնուրույն հոգևոր երգերը **կցուրդներն** էին կամ **կցորդները**: «...Մեր հոգևոր

²¹ **Ա. Արգարյան**, *Հիմներգության ժանրերը, Հայ միջնադարյան գրականության ժանրեր*, Ե., 1984: **А. Абгарян Дрост**, *Жанровая терминология армянской гимнографии в контексте терминологических систем литератур средневековья. Армянская и русская средневековые литературы*, Ереван, 1986. **Ա. Արևշատյան**, Շարականների ժանրի տիպաբանությունը արևելաքրիստոնեական հիմներգության համակարգում.- *Էջմիածին*, 1998, N 10-11:

²² **E. Wellesz**, *The New Oxford History of Musik*, v. II, London, 1961, p. 52.

գրականության հետ սկիզբ է առել նաև մեր հոգևոր երգը,- գրում է Մ. Աբեղյանը:- Նոր երգերը այդպես կցուրդ կամ կցորդ են կոչվել այն պարզ պատճառով, որ դրանք սկզբում եղել են փոքրիկ երգեր և իբրև հավելված ասվել, կցվել են Ս. Գրքի սաղմոսներից կամ օրհնություններից հետո»²³: Երեքից չորս տներից բաղկացած այդ երգերում որոշակիորեն ձևավորվել են հայ շարականերգությանը բնորոշ հիմնական տարրերը և Աստվածաշնչային նյութի մշակման հնարները: Երեք և չորս թվերը խորհրդանշում են Ս. Երրորդությունը և չորս ավետարանիչներին²⁴:

«Նոր Բառզիրքը» տալիս է երկու ձևերն էլ՝ **կցուրդ, կցորդ**՝ բացատրելով. «Կցում է երգոց կամ սաղմոսաց... Յաւելում է երգոց. երգաբանութիւն.. զի եւ Կցել՝ է նաեւ երգել»²⁵: **Կցորդ** ձևով բերված է երկու վկայություն. մեկը՝ Ոսկեբերանից. «Յօրինեալ բարբառովք՝ ազգի ազգի կցորդիք», մյուսը՝ Փարպեցուց. «...ընթանային խնդալիցք...ի տունս, մեծամեծք եւ տղայք սաղմոսելով եւ կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս»²⁶: Այսինքն՝ **սաղմոսել**-ը և **կցորդ ասել**-ը տարբեր երգեր են, քանի որ պատմիչը դրանք հիշատակում է կողք կողքի: Նման վկայություն կա նաև Հ. Օձնեցու Մատենագրության մեջ. «...ի վաղնջուց հետէ նախահաւեալ, եւ մինչեւ առ մեզ հասեալ...նուագելով յաւուրդ յայդմիկ սաղմոս, կցուրդ ասելով «Ձայն տեառն՝ ի վերայ ջուրց»»²⁷:

Հետագայում **կցորդ** են կոչվել նաև սաղմոսներից կազմված առանձին հատվածները, որոնք դարձյալ իբրև հավելված ասվել են ի խորհուրդ աւուրն. «...իւրաքանչիւր աւուր զկցորդսն զոր առեալ է ի սաղմոսացն»²⁸:

Օձնեցու մատենագրության մեջ կան վկայություններ, որտեղ միննույն «Լոյս զուարթ սուրբ» երգը հեղինակն անվանում է մի դեպքում **օրհնություն**, այլ դեպքում՝ **կցորդ**: Օրինակ՝ Կանոններում գրում է. «Արժան է շաբաթն օր երեկունն մարտիրոսաց պաշտել եւ զճրագացն օրհնութիւն ասել՝ Լոյս զուարթ սուրբ», իսկ «Յաղագս երեկորին պաշտամանն» գլխում նշում է, որ սաղմոսներից հետո .«զճրագացն նուագ են զկցորդ»²⁹: Ավելի ուշ Գ. Տաթևվացին կիրառում է **սաղմոս կցորդ** անվանումը. «Եւ բոլոր սաղմոսն՝ այն մին տան համաձայնք եւ վկայք. վասն այն ասի սաղմոս կցորդ»³⁰: Ձեռագիր աղբյուրներում արձանգրված են **կցուրդ** բառից կազմված անվանումներ՝ **կցորդասաց**. «որ ասէ զկցուրդս երգոց եւ սաղմոսաց»³¹, **Կցորդարան**, որ ամփոփում է

²³ Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, հ. Ա, Ե., 1966, էջ 477, 481:

²⁴ Կոմիտաս, *Հայոց եկեղեցական եղանակները, Հողվածներ և ուսումնասիրություններ*, Ե., 1941, էջ 109:

²⁵ Գ. Աւետիքեան, Խ. Միրմելեան, Մ. Աւգերեան, *Նոր Բառզիրք Հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836, հ. 1, էջ 1140:

²⁶ ՆՀԲ, նույն տեղում:

²⁷ Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցույ *Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1833, էջ 12:

²⁸ Նշվ. Աշխ., էջ 28:

²⁹ Նշվ. աշխ., ԺԵ, էջ 27, ԺԵ, էջ 22:

³⁰ Գ. Տաթևացի, «Գիրք հարցմանց»/ *համարարբառ*, կազմ՝ Ս. Գրիգորյան, գիրք Գ, Ե., 2012, էջ 182:

³¹ ՆՀԲ, նույն տեղում:

Շարակնոցի հնագույն շերտը կազմող կցուրդները³²: Նմանատիպ երգեր կան նաև ասորական և հունական հոգևոր երգարվեստում: Բյուզանդական օրհներգերում **կցուրդներին** համապատասխանում է **տրոպարիոն** (τροπάριον) տեսակը, իսկ ասորական հոգևոր երգերի մեջ **կցուրդները** նույնացվել են **մադրաշային** (mādrāšā)՝ հիմք ունենալով Եփրեմ Ասորու՝ V դարում թարգմանած բարոյախրատական բովանդակության երգվող ներբողները³³: Թեև mādrāšā-ն բառացի նշանակում է «կցուրդ» և ասորական ժամասացության մեջ ևս կցվել է իրեն նախորդող երգասացություններին, սակայն ըստ էության տարբերվում է հայկական **կցուրդներից**, որոնց ծավալը չի անցնում երեքից չորս տնից: Դրա ապացույցն են Ն. Ակինյանի կողմից հրատարակած Եփրեմ Ասորու 51 մադրաշաները³⁴:

Հնչյունական նմանության պատճառով **կցուրդ**-ի հետ երբեմն շփոթության տեղիք է տալիս **կացուրդ**-ը: ՆՀԲ-ը մեկնում է. «Կացումն հանդիսական (որ գրի եւ Կացորդ, եւ Կացարդ). Հանդէս տեսարանաց եւ տօնից. համախըմբութիւն. ժողով. տօն ամենաժողով. տօնախմբութիւն», բառը զուգադրում է հունարեն *πανήγυρις, πόμπη* տերմինների հետ, այնուհետև բերում է «Կացուրդն ասի եւ երգն ՚ի կացուրդս. այսինքն նուագ երգոց ՚ի տօնս. որպէս եւ ժամամուտ եղանակաւոր, եւ հարցնափառ, եւ տաղ. որք կոչին եւ կարգ. որպէս եւ շարական աւուրն Կանոն ասի...»³⁵: Հստակ է, որ **կացուրդ**-ը տոնական կամ որևէ տոնի առիթով ստեղծված երգ է: Այդ տեսակետին են հարում նաև Մ. Աբեղյանը³⁶ և Հ. Աճառյանը³⁷:

Քննելով հայ-բյուզանդական երաժշտական առնչությունները՝ երաժըշտագետ Ն. Թահմիզյանը նույնացնում է **կացուրդն ու կոնդակը** և **կացուրդ-կոնդակ** է անվանում Կոմիտաս Աղցեցու «Անձինքը»³⁸: Հետո էլ ավելի է տարակարծության տեղիք տալիս՝ գրելով. «...բացի նախորդ դարերում բյուրեղացած «կցուրդ» երգերից, հորինվում են նաև «կացուրդ» կամ, ինչպես հետագայում անվանեցին՝ «կանդակ» կոչված նոր տիպի ստեղծագործություններ՝ կառուցված հենց «Անձինքի» նման՝ ակրոստիքոսի սկզբունքով»³⁹: Այնուհետև մեկ այլ աշխատանքում սուկ ակնարկի ձևով ասում է, որ «Հայաստանում ուշադիր հետևում էին «կացուրդի» կամ «կոնդակի» բյուրեղացմանը բյուզանդական արվեստի մեջ՝ մոտիկից ծանոթանալով Ռոմանոս Երգեցողի ստեղծա-

³² **Ս. Արևշատյան**, Շարականների ժանրի տիպաբանությունը արևելաքրիստոնեական հիմներգության համակարգում, *Էջմիածին*.- 1998, N 10-11, էջ 85:

³³ **А. Абгарян Дрост**, *Жанровая терминология армянской гимнографии в контексте терминологических систем литературы средневековья. Армянская и русская средневековые литературы*, Ереван, 1986, стр. 239.

³⁴ *Կցուրդք ւ. Եփրեմի խորին Ասորու*, Ն. Ակինեան, Վիեննա, 1957:

³⁵ **ՆՀԲ**, հ. 1, էջ 1078:

³⁶ **Մ.Աբեղյան**, *Երկեր*. հ. Գ, Ե., 1968, էջ 405:

³⁷ **Հ.Աճառյան**, *Հայերեն արվատական բառարան*, հ. II, Ե., 1973, էջ 503-504:

³⁸ **Ն. Թահմիզյան**, Գրիգոր Գոզիկը և հայ-բյուզանդական երաժշտական կապերը.- *Բանբեր Երևանի համալսարանի*, N 3, Ե., 1968, էջ 203:

³⁹ Նույն տեղում:

գործությամբ»⁴⁰: Կարծում ենք՝ այնքան էլ ճիշտ չէ **կացուրդ, կոնդակ** անվանումների միջև հավասարության նշան դնելը: Հնարավոր է Թահմիզյանը նման երգրակացության է հանգել՝ հիմք ունենալով Տեր Իսրայելի Հայսմավուրքում հիշատակված Ռոմանոս Երզնցոյի մասին վարքագրական տեղեկությունները, որտեղ վերջինս ներկայացվում է որպես կացուրդների հեղինակ՝ կցրդասաց, և հայտնի կոնդակասաց⁴¹: Անշուշտ **կացուրդ**-ը կարող է գործածվել առավել ընդհանուր՝ առհասարակ «հոգևոր երգ» իմաստով, և չի բացառվում, որ Ռոմանոս Երզնցոյի Ծննդյան և Տերունական տոների **կոնդակները** հիշատակվեն որպես «կացուրդ»: Եվ ինչպես հայ հոգևոր երգերից շատերը կարող են կոչվել **կացուրդ** ընդհանուր տերմինով, այնպես էլ բյուզանդական **կոնդակը**: Ասվածն ամեննին չի նշանակում, թե կացուրդը կոնդակի համարժեքն է: Առաջնայինն այն է, որ այդ անվանումը տրվում է տոնի առիթով ստեղծված կամ տոնական հոգևոր երգերին՝ անկախ ժանրային պատկանելությունից (ժամամուտ եղանակաւոր, հարցնափառ, տաղ և այլն)⁴²: Հնարավոր է նաև **կացուրդ**-ի կիրառությունը որպես «ինքնուրույն հոգևոր երգ» նշանակող տերմին: Կոմիտաս Աղցեցու «Անձինք»-ը հայ հոգևոր երգերի համակարգում անվանվում է **կացուրդ**, մինչդեռ Տոնացույցներում և ձեռագիր տարբեր ժողովածուներում կան բազմաթիվ օրինակներ, որտեղ «Անձինք»-ը նշվում է և գործածվում իբրև առանձին անվանում, օրինակ՝ «Անձինք ս. Գրիգորին ասա», «Անձինք...ս. Աստուածածնին», «Անձինք Ղեւոնդեանց»⁴³: Այսինքն՝ նրա հիմնական իմաստին այս դեպքում ավելանում է նոր՝ տերմինային նշանակություն՝ նշելով **այբբենական ծայրակապային կառուցվածք ունեցող հոգևոր երգերը**:

Ինչ վերաբերում է **կոնդակ**-ին, ապա ՆՀԲ-ը նշում է, որ «Ի միջին դարս վարի որպես համառօտերգ, յորդորակ», գործածվում է «գօնտագ», «գունտագ» տարբերակներով, նշանակում է «խանձարուր», «փաթոյթ»⁴⁴: **Կոդակ**-ը՝ որպես հոգևոր երգ, մեր պատմիչները չեն հիշատակում: Հետաքրքիր է Տաթևացու մեկնությունը. «Եւ այն զի փաթոյթակ է՝ ըստ հրէական օրինին է. զի կոնդակ եւ գալարելով էր նոցա գիրն. իբր թէ ծածուկ է ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն եւ թաքուն»⁴⁵:

Կոնտակիոն-ը (κοντάκιον) կամ **կոնդակ**-ը բյուզանդական հոգևոր երգերից է, և գրականագետների կողմից արժևորվում է որպես «չափ ունեցող (վերսիֆիկացված) քարոզ: Միջնադարյան տեսական միտքն այս ժանրատեսակն

⁴⁰ Ն. Թահմիզյան, *Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում*, Ե., 1985, էջ 24:

⁴¹ Ն. Թահմիզյան, *Գրիգոր Գռգիկը և հայ-բյուզանդական երաժշտական կապերը. Բանբեր Երևանի համալսարանի*, N 3, Ե., 1968, էջ 203:

⁴² ՆՀԲ, հ. 1, էջ 1078:

⁴³ Ա. Արգարյան, *Հիմներգության ժանրը, Հայ միջնադարյան գրականության ժանրեր*, էջ 25:

⁴⁴ ՆՀԲ, հ. 1, էջ 1115:

⁴⁵ Գ. Տաթևացի, նշվ. աշխ., էջ 146:

իր անվամբ չի արձանագրում, որովհետև այն դիտում է որպես քարոզին հարող գրական-արարողական միավոր, քարոզի տարատեսակ»⁴⁶:

Քննելով բյուզանդական երաժշտության պատմությունը և հոգևոր երգերը՝ Է. Վելլեսը մանրամասն անդրադառնում է **կոնդակի** կառուցվածքին, տարբեր մասերի անվանումներին ու կատարման եղանակներին: Նշվում է նույնիսկ, որ **կոնդակի** առանձին բաղադրիչները կարող են կիրառվել և ընկալվել որպես ինքնուրույն ժանրային միավորներ⁴⁷: Այսպիսով, թե՛ կառուցվածքով, թե՛ անվանումներով ու կատարման եղանակներով և թե՛ ժանրային առումով **կացուրդ**-ը և **կոնդակ**-ը տարբեր հասկացություններ են: **Կացուրդը** օրհներգ է, տոնական երգ, «ներբող-փառաբանություն»⁴⁸, մինչդեռ **կոնդակը** որոշակի մասերից բաղկացած ընդարձակ քարոզ է (homily), որը չի մտնում նաև կանոնի մեջ:

Gayane Mkhitaryan–Terms *Ktsurd*, *Katsurd* and *Kondak* in Medieval Armenian Sacred Music.- One of the problems in history of Medieval Armenian music is differentiation of sacred song terms. In spite of existing studies, the list of sacred song terms isn't clear. From this point of view, the terms **Ktsurd**, **Katsurd** and **Kondak** present particular interest. They had been previously used in Byzantine sacred songs. After adopting Christianity and scripts invention, the first sacred songs were **Ktsurds**. It is assumed that it's not true to identify **Katsurd** and **Kondak**. **Katsurd** is an anthem, cheerful song, glorification, and **Kondak** is a homily, preachment which consists of some parts.

Мхитарян Гаяне-Термины *кцурд*, *кацурд* и *кондак* в средневековом армянском духовном певческом искусстве.- К существующим проблемам средневековой армянской музыкальной истории относится дифференциация имен духовных песен. Несмотря на существующие исследования, до сих пор не определен список терминов духовных песен. С этой точки зрения представляют особый интерес термины **кцурд**, **кацурд** и **кондак**, которые изначально были использованы в византийском певческом искусстве. Первые духовные песни, после принятия Христианства и изобретения письменности, были **кцурды**. Считается ошибочным идентифицировать **кацурд** и **кондак**, так как **кацурд** –это гимн, праздничная песня, восхваление, а **кондак** – это проповедь, которая состоит из определенных частей.

⁴⁶ **Ս. Արզարյան**, նշվ. աշխ., էջ 125:

⁴⁷ **E. Wellesz**, *A History of Byzantine Music and Hymnography*, Oxford at the Clarendon Press, second edition, 1971, p. 31.

⁴⁸ **Գ. Հակոբյան**, *Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.)*, Ե., 1980, էջ 122:

ՕՏԱՐԱԳԱՌ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
(XVI- XVIII ԴԱՐԵՐ)

Հարադրավոր բայերը բառակազմական վերլուծական տիպի անկախ բառամիավորներ են (Լ. Հովսեփյան), որոնք կազմվում են որևէ հարադիրից և բայից և կարող են արտահայտել իրենց բաղադրիչներից տարբերվող մի նոր նշանակություն (Ալ. Մարգարյան): Հարադրավոր բայերի նշված սահմանումը հայտնի է և հայերենագիտության մեջ մանրամասն ներկայացված, մանավանդ՝ արդի հայերենի համար:

Մենք դիտարկել ենք XVI- XVIII դդ. հայերեն բազմաժանր աղբյուրները, որոնցում առաջին իսկ հայացքից աչքի է զարնում բայական այնպիսի հարադրությունների առատությունը, որոնց հարադիրը օտար փոխառյալ բառ է: Գիտական գրականության մեջ նման կառույցների քննության մեր որոնումները սպասված արդյունքը չտվեցին, թերևս՝ այս հարադրությունների վրա քննություններում շեշտադրում արված չլինելու պատճառով: Եվ մենք փորձել ենք մի փոքր մանրամասն ներկայացնել վաղ աշխարհաբարյան բայական հարադրությունները:

Գևորգ Ջահուկյանն «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» գրքում օտար բաղադրիչները ներկայացնում է բառածանցման կաղապարները քննելիս (հայտնի է՝ հեղինակի այս աշխատությունը նվիրված է հատկապես արդի հայերենի լեզվավիճակին): Առանց սահմանումը տալու՝ Գ.Ջահուկյանը խոսում է «օտարազգի նախածանցավոր կազմությունների», «օտարազգի ածանցների» մասին: Վերջինի մասին ասվում է «Օտարազգի ածանցները հայերեն հիմքերի հետ խիստ հազվադեպ են գործածվում»⁴⁹: Օտարազգի նախածանցներ են, օրինակ՝ *անտի-* (անտիցիկլոն), *ուլտրա-* (ուլտրամանուշակագույն) և այլն: Գործածում է նաև «օտարազգի» վերջածանցներ՝ *-ստոր* (կատալիզատոր), *-իզմ* (օրգանիզմ), *-իկա* (գրաֆիկա) և այլն, «օտարազգի հիմքեր»՝ *բյուջետային*, *անալիտիկ* և այլն:

Գ.Ջահուկյանի ներկայացրած «օտարազգի» տերմինով, փաստորեն, նրշվում են միջազգային տերմինաբանական համակարգի մաս կազմող բառերն ու մասնիկները, որոնց քննությունը տողատակի ծանոթագրությամբ Գ. Ջահուկյանը համարում է «օտարազգի բառերի բառարանի և միջազգային տերմինաբանության տարրերի հավաքածուի խնդիր»⁵⁰:

Ա.Մուրվալյանը հայերենի դարձվածքները լեզվի պատմության դիրքերից քննելիս առանձնացնում է՝ ա) նոր խոսակցական լեզվին (աշխարհաբարին ու բարբառներին) և բ) հին գրական լեզվին (գրաբարին) հատուկ դարձվածային միավորները: Աշխարհաբարյան է համարում «այն դարձվածքները, որոնց

⁴⁹ Գ.Ջահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 208:

⁵⁰ Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 241:

բաղադրամասերից մեկն ու մեկը, մեծ մասամբ առանցքային բառը բարբառային է կամ տարածված է սովորաբար խոսակցական լեզվում, աշխարհաբարում»⁵¹: Մա հարադրությունների՝ տարժամանակյա դասակարգման մեզ ծանոթ առաջին փորձն է: Ա.Մուրվալյանի բերած կառույցների մեջ կան հարադրություններ, որոնք ծագել կամ առնվազն առաջին անգամ հանդիպում են վաղաշխարհաբարյան աղբյուրներում, ինչպես՝ *հախ տալ, հանաք անել* և այլն: Սակայն այստեղ ևս օտար բաղադրիչների կամ իր տերմինով՝ «առանցքային բառերի» մեջ օտար ծագում ունեցող շերտի մասին ոչ մի խոսք չի ասվում: Ի դեպ, Ա.Մուրվալյանի աշխատության մեջ որպես հոմանիշ տերմիններ են գործածված «բայական արտահայտություններ կամ բայակապակցություններ» (առաջ վազել, ներս գնալ) և «հարադրյալ բայեր», որոնք որպես կազմություններ իրարից հստակ չեն սահմանազատված:

Փոխառյալ հարադիր պարունակող կառույցների մասին ուսումնասիրողները խոսում են հատկապես ուշ միջնադարի այս կամ այն հեղինակի լեզվի և բարբառային քննություններում: «Ուշագրավ են այն բայերը,-գրում է Ն.Հովհաննիսյանը՝ Նաղաշ Հովնաթանի լեզուն քննելիս,-որոնց հարադիրը փոխառյալ բառ է՝ արաբերենից, թուրքական լեզուներից, պարսկերենից, ինչպես՝ *աման, դարդ, եանուղ, էֆերիմ, դայիմ, մուրվաթ* և այլն»⁵²: Հեղինակը մատնանշում է փոխառյալ բառերով այնպիսի հարադրավոր բայեր, որոնք կազմված են փոխատու լեզուների նմանությամբ՝ բայական նույնիմաստ բաղադրիչով, օրինակ՝ *թայիմ առնել*- թրք. talim etmek «սովորեցնել», *փայ անել* - թրք. pay etmek «բաժանել» և այլն:

Մեր մատնանշած՝ փոխառյալ հարադիրով կազմված բայական կառույցները բնութագրելիս հեղինակները գործածել են բառակապակցական-նկարագրական տերմիններ: Օտար-փոխառյալ հարադիր պարունակող բայական հարադրությունը մենք նպատակահարմար ենք գտնում անվանել պարզապես **օտարաբառ հարադրություններ**, որն առավել հստակ է բնորոշում այս կառույցը («օտարաբառ – օտար լեզվի բառերով արտահայտված ասված»⁵³):

Հարադրություններով, այդ թվում՝ բայական հարադրություններով խիստ հարուստ է գրաբարը: Հարադրավոր բայերի կազմությանը մասնակցող միայն համադրական բայերի թիվը գրաբարում, Գուրգեն Խաչատրյանի հաշվումներով, անցնում է մեկուկես հարյուրից⁵⁴: *Սծել, առնել, մնալ, հարկանել, մտանել* և տարածված այլ բայերի կողքին որպես հարադրության բայական բաղադրիչ կարելի է հանդիպել (սակավ գործածությամբ)՝ *բարբառել, կուտել, պաշարել, պարուրել, սորել* և այլն: Գրաբարի հարադրավոր բայերի կազմությունը, հատկապես նրանց սեռով պայմանավորված բայական

⁵¹ Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն*, Ե., 1959, էջ 55:

⁵² Ն. Հովհաննիսյան, Բայական հարադրությունները Նաղաշ Հովնաթանի տաղերում.- *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1984, 9, էջ 38:

⁵³ Էդ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976:

⁵⁴ Գ. Խաչատրյան, *Գրաբարի վերլուծական բայերի արժույթը*, Ե., 2000, էջ 55:

արժույթի դրսևորումները քննելիս Գ. Խաչատրյանը շրջանցում է հարադրության՝ օտար ծագման բաղադրիչները, պարզ է՝ այն դուրս է հեղինակի քննության տեսադաշտից:

Նորակազմ հարադրավոր բայերը «չափազանց շատ են հատկապես միջին հայերենում», գրում է Ռ.Ղազարյանը, որոնց մեջ աչքի են ընկնում այն կազմությունները, որոնց «հարադիրները օտար բառեր են»՝ *ազար առնել, դալատ անել, ջալունջ այնել, փոշիման դառնալ* և այլն: Դրանցից շատերը զուգահեռաբար ունեն (կամ հետագայում ձեռք են բերում-Ն.Պ.) համապատասխան համադրական ձևեր, ինչպես՝ *ալափ առնել-ալափել, ձարձատ անել-ձարձատել, տամահ անել-տամահել* և այլն⁵⁵:

Միջին հայերենում այս կառույցի սովորաբար գտնվում է իր շարունակությունն ու զարգացումը գտավ ավելի ուշ՝ XVI- XVIII դդ. հայերենում: Վաղ աշխարհաբարի գրեթե բոլոր ժանրերի երկերն աչքի են ընկնում նման բայերի թե՛ բազմազանությամբ, թե՛ բազմաքանակությամբ: Այս երևույթը նկատել է նաև Մ. Խաչատրյանը «Արաբական փոխառություններով կազմված բայերի ձևախմաստային արտահայտությունները հայրեններում և կաֆաներում» հոդվածում, ուր բերում և քննում է բայական բազմաթիվ կառույցներ, ինչպես՝ *մաղպուն լինել* (զրկվել), *աճապ գալ* (զարմանալ), *սատաղայ գնալ* (մատաղ լինել), *մուտեհ կենալ* (հիանալ) և այլն⁵⁶: Հեղինակը դրանք անվանում է «խառը ճանապարհով ձևավորված վերլուծական բայեր»:

Մեր քաղած կառույցների դիտարկումը ցույց է տալիս, որ օտարաբառ հարադիրով արտահայտվում է տվյալ բայական հիմնական հասկացությունը, օրինակ՝

Բասմով հանել (թուրք. *basma* «տպուած») – տպագրել. «Ոսկան վարդապետն այժմուս գնացել էր վասն գրքեր *բասմայ տալու*, որ այս Ժ ամ է Ֆոնգստան է: Աստուածաշունչն այս Ոսկան վարդապետս *հանեց բասմով*, շատ շատ գրգէր հանեց»⁵⁷:

Իղրար անել (պարսկ. *eqrār* «խոստովանութիւն, գիտակցութիւն») – խոստովանել. «Այլքն իւրեանց բերանով իղրար արին ինձ մաւտ, թէ մեր յօժար կամօք ծախեցինք»⁵⁸:

Ղու գրվել (թուրք. *kul* «ստրուկ, ծառայ») – ծառայության մտնել, հպատակություն հայտնել. «Մեծ իմփռադրիցին *ղուլ ենք գրվել*»⁵⁹:

Շաֆ անել (արաբ. *shāfa* «բժշկական մոմեր») – մոմ դնել. «Զամէնն աղա և մաղէ, մրտի ջրով շաղուէ, *շաֆ արա* դերձնով և ի բան տուր՝ օգուէ»⁶⁰:

⁵⁵ Ռ. Ղազարյան, *Միջին գրական հայերենի բառապաշարը*, Ե., 2001, էջ 160-166:

⁵⁶ Տե՛ս Մհեր Խաչատրյան, Արաբական փոխառություններով կազմված բայերի ձևախմաստային արտահայտությունները հայրեններում և կաֆաներում.- *Պատմաբանասիրական հանդես*, 2011, 1, էջ 176-186:

⁵⁷ Զարարիա Ազուլեցու *Օրագրութիւնը*, Ե., 1938, էջ 108:

⁵⁸ *Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէթուկը)*, աշխատ. Պարոյր Սուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 96:

⁵⁹ Զոօբ Գ. Ա., *Сношения Петра Великого с армянским народом (документы)*, С. Петербург, 1898, էջ 437:

Տաղմայ զարնել (>պրսկ. damğa «կնիք, կնքված գիր») - այստեղ դրամը դաջել՝ կնքել. «Սա հրամայեաց պլիկ կտրել պղնձե և սահմանեաց գրքամն տաղմայ զարնել»⁶¹:

Նման օրինակներ կարելի է անվերջ բերել: Նկատենք, որ ներկայացված կառույցները կարող են դիտվել որպես բարբառային միավորներ, սակայն մյուս կողմից՝ վաղ աշխարհաբարի համար դժվար է սահման դնել բարբառի-աշխարհաբարի-խոսակցական լեզվի միջև, դրանք գրաբարից տարբերվող և գրաբարում չհանդիպող միավորներ են, որոնք առատորեն մուծվել են գրավոր աղբյուրների մեջ, և ուրեմն լայն քաղաքացիություն են ստացած եղել իր ժամանակին, այս դեպքում՝ վաղ աշխարհաբարում: Հետագա գործածությամբ հարադրավոր բայը կարող է վերածվել համադրության, որ տվյալ փոխառյալ բառի յուրացման նոր աստիճանն է ներկայացնում, ինչպես՝ *էմր առնել-էմրել, թահր տալ-թահրել* (զժտվել), *հսայն տեսնուլ-հսայել* (հաշիվ տեսնել) և այլն, ճիշտ այնպես, ինչպես որ փոխառության յուրացման նոր աստիճան է տվյալ արմատով նոր բաղադրություն կազմելը՝ *տամահություն, քիրատագործ, դիրքանապահ, դովլագիր, մահլացի* և այլն:

Աղբյուրների քննության ընթացքում, իրոք, ընդհանուր տպավորություն է ստեղծվում, որ օտարաբառ հարադիրը հայերենին է անցել նախ հարադրավոր բայ կերտելու՝ ինչ-ինչ հասկացություն արտահայտելու համար, հետագա գործածությամբ այդ հարադիրները «մերվել են» լեզվին, ստացել ընդհանուր գործածություն և կազմել նոր բաղադրություններ: Կարծում ենք՝ օտար բառերի յուրացման այս ընթացքը կարող է բնորոշ լինել բառապաշարի մյուս շերտերի և լեզվի փուլերի համար նույնպես:

Իսկ հարադրավոր բայերից առաջացած մենաբառ բայերի մի փոքր մասն է միայն քաղաքացիություն ստացել և մտել նոր հայերենի բառաֆոնդի մեջ, ինչպես՝ *չոք անել, զավթել, թարկ տալ* և այլն: Օտարաբառ այս հարադրությունները գերակշռող մեծամասնությամբ մնացել են իր ժամանակի աղբյուրներում և լեզվի հետագա փուլերում տարածում չեն գտել:

Օտարաբառ հարադրություններում որպես բայական բաղադրիչ գործածվում են խիստ բազմազան միավորներ՝ *անել, առնել, լինել, բանալ, գալ, բերել, էլնել, մնալ, տես(ա)նել, տալ, կտրել, քա(ր)շել, զարնել* և այլն:

Ահա նման հարադրությունների մի փունջ (մեր բառացանկում դրանք հարյուրավորներ են). *աջիզ լինել, բիշար լինել, բհալ գալ, դադաթ բերել, դալիչի դուրս գալ, երիշ առնել/լինել, զայ լինել, թախմին առնել, թահր տալ, թանպէհ անել, թապի լինել, ժարայ տալ, դաբուլ անել, դաթյամ անել, դայրէթ քաշել, մագուլ լինել, մախթու առնել, մատայ բանալ, մհալ գտանել, նաչատ մնալ, ջառիմայ տալ, ջիլտու տալ, սուլֆ անել, վախմ անել/տալ, տաղմայ զարնել, քումակ անել, օհտայ անել* և այլն:

⁶⁰ **Բունիաթ Սեբաստացի**, *Գիրք բժշկութեան (ԺԷ դար)*, աշխատ. Դ. Մ. Կարապետյանի, Ե., 1987, էջ 98:

⁶¹ *Դիւան Հայոց պատմութեան*, գիրք Ժ. Մանր մատենագիրք, ԺԵ-ԺԹ դարեր, հրատարակեց Գիւտ Ադանեանց, Թիֆլիս, 1912, էջ 108:

Դասակարգման փորձ անելիս նպատակահարմար է այս միավորները ներկայացնել ըստ օտարաբառ հարադիրի ծագման՝ արաբերեն, պարսկերեն և այլն, որոնցից բերում ենք մեկ-երկու օրինակ:

Ա) Պարսկերեն հարադիրներ: *Մհալ գտնել* (պարսկ. mohale «հնարք, հմտություն») - հնար գտնել, ճարը տեսնել. «Ղազախքն շահիսեւան դարձան, մհալ գտան, որ Արդութեցոնցէ եղբարց ի վերայ միմեանց կոտորեցին»⁶²:

Բ) Արաբերեն հարադիրներ: *Բատ(թ)ալ անել/լինել* (արաբ. badal «համարժեք, փոխանորդ») – փոխարենը տալ՝ վճարել. «Իմ տներս բիթաւ իւր Դ հատերովն (սահմաններով) սորայ բատալ լինի»: «Թէ որ գիր դուս գայ, էս գիրս էն գրին բաթալ անէ»⁶³:

Գ) Թուրքերեն հարադիրներ: *Չօք անել* (թուրք. çökmek «իջնել, քանդվել, ծնկի գալ») – ծնրադնել՝ աղօթել (հավանաբար ակնարկվում է հին ժամանակներում երաշտ տարիներին անձրև տեղալու նպատակով արվող ծնրադիր աղոթքը). «Վասն երաշտութեան համար չօք արաք ԻԱ քահանայեայ, Բ-ըն մուսաֆիր էր՝ Ա-ըն կեզլովցի, մէկն բաբերոցի, մէկմ ալ հաբեղայ»⁶⁴:

Դ) Եվրոպական լեզուներով հարադիրներ: *Սինուռ կտրել* (հուն. synoros «սահման, սահմանագիծ») - սահման կտրել՝ հաստատել. «Տեսաք առաջին թագաւորացն և հայրապետացն հաստատեալ կոնդակսն, սիկէլն և արձանն, որ սինուռն էին կտրել»⁶⁵:

16-18-րդ դարերի բազմաթիվ աղբյուրներ ընթերցելիս իրապես համոզվում ենք, որ հայերենն այս շրջանում (գուցե առավել՝ քան մյուս փուլերն են) հարուստ է օտարաբառ բայական հարադրություններով: Դա մեր լեզվի յուրատեսակ արձագանքն է ժամանակաշրջանի մշակութային-քաղաքական փոփոխություններին ու զարգացումներին: Այդպիսով կարելի է վստահաբար ասել՝ օտարաբառ հարադրավոր բայերի առատությունը 16-18-րդ դդ. հայերենի՝ վաղ աշխարհաբարի մի յուրատեսակ առանձնահատկությունն է:

Norayr Poghosyan- Analytical Compound Verbs with a Foreign Component in Armenian (XVI -XVIII centuries).- The Armenian language is rich in phrasal verbs. There are a lot of phrasal verbs also in Old Armenian, Middle Armenian and Ashkharhabar (Modern Armenian). While analysing the Armenian sources of XVI -XVIII centuries, it becomes obvious that in early Ashkharhabar there are a lot of phrasal verbs having a loan word as one of their components. We call these formations “analytical compounds consisting of a foreign component”.

The article gives numerous formations comprising a foreign component, taken from the original works of XVI -XVIII centuries and classifies them according to languages- Arabic, Persian and so on.

⁶² *Յիշատակարան Սանահնոյ վանից...*, էջ 84:

⁶³ *Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր*, պրակ I, կազմեց Հար. Աբրահամյան, Ե., 1941, էջ 62, 131:

⁶⁴ *Մանր ժամանակագրություններ* (XIII-XVIII դ.), հ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Ե., 1951, էջ 219:

⁶⁵ *Յիշատակարան Սանահնոյ վանից...*, էջ 86:

Погосян Норайр – Составные глаголы с компонентом иностранных слов в армянском языке (XVI -XVIII вв.).- Армянский язык богат составными глаголами. Множество таких структур существуют и в габаре, и в средне- и новоармянском языке. Из просмотра армянских источников XIII-XVIII веков становится очевидным, что в армянском языке отмеченного периода (ранний период новоармянского языка-ранний ашхарабар) весьма распространены составные глаголы, частью которых являются иностранные заимствованные слова. Именно такие единицы мы называем “составными глаголами с компонентом иностранных слов”.

В данной работе приведено множество составных глаголов с иноязычными компонентами, которые выписаны из источников XVI -XVIII веков. Эти единицы классифицируются в соответствии с языками - арабский, персидский и т.д.

ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԶԱՎԵՇՏԻ ՀԵՆՔ ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ-ԶՎԱՐՃԱԽՈ-
ՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ⁶⁶

Հայ ժողովրդական զվարճապատում-զվարճախոսություններում զավեշտի հենք կարող է դառնալ գրական, բարբառային կամ օտար բառերի, դարձվածքների և արտահայտությունների ոչ տեղին կիրառությունը: Այն հիմնականում դրսևորվում է դրանց իմաստը չիմանալ-չընկալելու հետևանքով:

Գրական հայերենի որոշ բառերին մարդկանց անձանոթ լինելը կամ դրանց իմաստը սխալ իմանալը բազմաթիվ զավեշտալի իրավիճակների առաջացման պատճառ է դառնում: Ավագ սերնդի մի մասը, կրողը լինելով որևէ բարբառի կամ խոսվածքի, գրեթե անհաղորդ է գրական հայերենին: Երիտասարդների հետ հաղորդակցվելիս նրանք երբեմն խոսքի մեջ գրական մի շարք բառեր և արտահայտություններ տեղին չեն կիրառում՝ առաջացնելով շրջապատի մարդկանց ծիծաղը: Հենց դրանք էլ, հետագայում բերնեբերան պատմվելով-փոխանցվելով, հիմք են հանդիսանում մի շարք երգիծապատում - զվարճախոսությունների ստեղծման: Ահա դրանցից մի քանիսը.

– *Ախչի՛, Թամա՛ր, էն օր ո՛ւմ հետ ման գուքայիր:*

– *Մանա՛մ մամ, **ամուսինս** էր:*

– *Քա օդո՛ւլ, արի ինձի ականջ էրա՛՝ էրիկմ առ, տունը նստի... Բ՞նչ գործ ունիս էդ ամուսիններու հետ: Ինձի որ հարցնես՝ մէ էրիկը տասը ամուսնուց լավ է՞⁶⁷:*

Կամ՝ *Արուս տատը թոշակի ընկնելու համար թղթերը հանձնում է սոցապ բաժին: Բաժնի վարիչ Անիկն ասում է.*

– *Տատի՛, **օրիորդական** ազգանունդ ինչպե՞ս է: /Ճիշտ ձևը՝ **ի՞նչ է** – ԱՍ/ Արուս տատը կարծում է, թե «օրիորդ» անվանի, հարուստ կանանց են ասում, քթի տակ ինդանդալով պատասխանում է.*

– *Էրվեմ ես, միթո՞ւմ օրիորդ ե՞րբ եմ եղել որ...⁶⁸*

Զավեշտներ են ստեղծվում որոշ մարդկանց համար անձանոթ գուտ մասնագիտական հայերեն եզրույթների /ասենք՝ դատա-իրավական/ կամ գիտատեխնիկական նվաճումներին առնչվող օտար բառերի գործածության ժամանակ.

Դատարանում վկա կանչված պառավին դատավորը հարցնում է.

⁶⁶ Երգիծական մանրապատում կամ զվարճապատում և զվարճախոսություն եզրերը տարանջատել ենք՝ առաջինի համար հիմք ընդունելով նրա սյուժետային՝ պատումային հատկանիշը, երկրորդի համար՝ անսյուժե՝ անպատում, նաև երկխոսական բնույթը:

⁶⁷ *Ժողովրդական հումորի քարտեզի առջև. Ջավախք.* - Գարուն ամսագիր, 1972, հ. 5, էջ 92:

⁶⁸ **Ն. Հովսեփյան**, *Միամիտ և հնարամիտ սևաքարցիները*, Ե., 2003, էջ 90:

– Մայրի՛կ, ճանաչու՛մ եք **ամբաստանյալին**:
– Վու՛յ, քոռանամ ես, ինե՛ղճ ժոռա, անունն էլ են փոխել⁶⁹:

Կամ՝ *Դատավորը հարցնում է տուժածին..*

– *Քաղաքացի՛ Պետրոսյան, պատմեք, թե ի՞նչ **հանգամանքներում** է ամբաստանյալը բռնաբարել ձեզ:*

– *Հանգամանք, էն էլ ի՞նչ հանգամանք, ընկե՛ր դատավոր, էտ անաբուռը հանգամանքն առել, ընգել էր յեղեվիցըս... էլ ես ի՞նչ կարայի անեն⁷⁰:*

Այս զվարճախոսության տարբերակներից մեկում էլ հանգամանքը՝ ներգոյական հոլովով, ընկալվում է որպես տեղավայր, և հետևում է տուժածի՝ զավեշտ առաջացնող պատասխանը.

– *Հանգամանքներում չի բռնաբարել, է՛, ընկե՛ր դատավոր, գարածումն ա բռնաբարել, գարա՛ծումը.../ԱՄՇՀ/*

Ի տարբերություն երիտասարդության կամ նույնիսկ երեխաների՝ նորաստեղծ տեխնիկայի օտարալեզու եզրույթները մեծահասակները կա՛մ չեն կարողանում արտաբերել, կա՛մ էլ արտաբերելիս դրանք այնպես են աղավաղում, որ պատճառ են դառնում իրականության հենքի վրա բազում զվարճապատում-զվարճախոսությունների ստեղծման.

– *Էդ ո՛ր ես վռագում, Վարդուշ մորքուր, – հարցնում է հարևանուհին:*

– *Ախջի, հարսըս կայֆի մեչ ա, գնամ տենամ՝ ի՞նչ ա ասում /խոսքը սկայայի մասին է/: /ԱՄՇՀ/*

Անսպասելի ծիծաղ է առաջանում, երբ զվարճախոսություններում ժողովրդական ասույթաբանական կառույցն է խոսքի մեջ անընդհատ անհարկի մեջբերվում⁷¹ կամ էլ տպավորություն թողնելու համար անիմաստ ու ոչ տեղին բառագործածությունը.

Նոր նշանված փեսան աներանց ա գնում ու որոշում կիրթ ու գրագետ երևալ՝ Աներ – Փեսա՛, նե՛րս արի: // Փեսա – Տանեմ նամանավանդ ձիս կապեմ գամ: /ԱՄՇՀ/

Այս երևույթը առկա է հատկապես բաժակաճառային զվարճախոսություններում՝ խնջույքները կամ տխրության սեղանները ղեկավարողի, կամ մեկ այլ բաժակաճառ ասողի՝ վերամբարձ ոճով, անհեթեթ բառերով ու բառակապակցություններով շաղախված անկապ խոսքում: Նման դեպքերում բաժակաճառ ասողները, մանավանդ գյուղաբնակները, նպատակադրվում են մարդկանց վրա տպավորություն թողնելու համար ընդգծել իրենց «գրագիտությունն ու խորիմացությունը», գրական հայերենին անկաշկանդ տիրապետելը:

Իբրև վերը ասվածի ապացույց՝ ահա հարսանիքի թամադայի արտաբերած մի բաժակաճառ՝ գրանցված Լոռու Զիգդամալ /Արևաշող/ գյուղում.

⁶⁹ **Չ. Հարությունյան**, *Հայոց լեզուն հազարազանձ*, Ե., 1989թ., էջ 132:

⁷⁰ **Ա. Մարգարյանի** անձնական հավաքածու: Այսուհետև մեր հավաքածուից մեջբերումների մոտ կնշվի՝ /ԱՄՇՀ/:

⁷¹ *Անեկդոտներ*, 2-րդ հատոր, աշխատ.՝ **Յ. Նազարեանց**, Տփլիս, 1877, էջ 13-14:

Աչակողմյան և ձախակողմյան բարեգամներ ջան, այսուհետև և ընդհանրապես ես խմում եմ ձեր նկատմամբ: Մեր նորապսակներին էլ ցանկանում եմ, որ մի ձերի⁷² բըցրանան: /իմա՝ մի բարձի ձերանան/ /ԱՄՇՀ/

Զվարճապատում-զվարճախոսություններում անսպասելի ծիծաղ առաջացնելու պատճառ են դառնում նաև պատկերավորման բառապաշարային և շարահյուսական ու արտահայտչական տարատեսակ միջոցները՝ համեմատություն, փոխաբերույթ-փոխաբերություն, զեղչում /հիմնականում ժողովրդական խոսքում կիրառվող/, բառախաղ, հանգախաղ, հնչերանգ և այլն: Մեջբերվող օրինակներով անդրադառնանք դրանցից մի քանիսին.

ա/ Համեմատությամբ՝ «Աղեն հէլէր ա բօստան»⁷³ զվարճապատումում աղան, իր մարմնի հիվանդ մասերը բանջարեղենի տարբեր տեսակների հետ պատկերավոր ներկայացնելով, ծառային խնդրում է այդ նույնը փոխանցել հեքիմին.

– *Տէնում էս, էլի, հէք'իմին ասա՝ աղի մանները ուռէր ա խիյարի պէս, թեվէրը ուռէր ա յէմիշի պէս, գ'ըլօխը ուռէր ա դ'թումի պէս...*

Մտամուրթ ծառան, անկարող լինելով բոլոր թվարկած ցավող տեղերը համեմատություններով հիշել, այդ ամենը «միատեղում» և «տեղավորում է» բոստանում, ինչն էլ պատճառ է դառնում զավեշտի առաջացման.

– *Աղա՛, էտդար բ'անը իմ մրտին չի մնա, կ'էրթամ հէք'իմին կասէմ՝ աղէն հէլէր ա բօստան: Բօստնի մէշը հըմմէն ինչ էլ կա՝ խիյար էլ, յէմիշ էլ, ձ'մէրուկ էլ, դ'թում էլ...*

Հայերենի բարբառներում և խոսվածքներում շատ հաճախ **զեղչման** տարատեսակ միջոցներով ասված համառոտ խոսքն է անսպասելի ծիծաղ հարուցում, ինչն էլ զվարճապատում-զվարճախոսություններում դառնում է զավեշտի ստեղծման հենքը:

Այսպես, օրինակ, ժողովրդախոսակցական լեզվում բայական անդամի զեղչումը կարող է այլոց կողմից վիրավորական իմաստով ընկալվել.

– *Վըչխարի տղէքը մնան /նկատի ունենալով ոչխարներ պահող տղաներին/, մնացածնին ա՛ զադ են⁷⁴:*

Երբեմն էլ ժողովրդական խոսքում բառազեղչումը (եթե զեղչվող բառը բայ է) ասելիքի երկիմաստ ընկալելու պատճառ է դառնում՝ կենդանու գործողությունը ականայից մարդուն վերագրվելով.

Որովհետև ամուսինը գիշերով շատ ուշ էր տուն գնում, ուստի մեկ անգամ կինն ասաց.

– *Քա՛, յո՛րի էսա խտուր ուշացար. աչքերս ճոռթավ քու ճամբախերիշկելով, քյանի շուն խաչեց, ես գիցա՝ Կարոս ի... քանի շուն խաչեց, ես գիցա՝ Կարոս ի...*⁷⁵(բացակայում է գալիս-եկավ-ը՝ ԱՄ):

⁷² Լոռիում «մի ձերի» նշանակում է նաև *անընդհատ*՝ Ինձ հերթ չէր տալի, մի ձերի խոսքն էր:

⁷³ Ռ. Մարկոսյան, *Արարատյան բարբառը*, Ե., «Լույս», 1989թ., էջ 292:

⁷⁴ Լ. Սահակյան, *Արախոսություններ և անեկրոտներ*, Գորիս, «Մուշ», 1994, էջ 18:

⁷⁵ *Անեկրոտներ*, 1-ին հատոր, աշխատ.՝ **Յ. Նազարեանց**, էջ 46:

Իսկ մեկ այլ զվարճախոսությունում *հոգս*-ի զեղչումը ժողովրդական խոբային կառույցում խոսակցի մոտ անմեղ կիրառությունը «վերափոխում է» ասելիքի այլ՝ բամբասակ իմաստով արտահայտության.

Շնողնեցի հարսը բողոքում է ամուսնու ազգականին.

– *Կեսուրս երկու կովը վի կալավ/վերցրեց/ ու սարը գնաց:*

– *Ախչի՛, բա ռեխանցը տարել չի՞:*

– *Տարել ա, համա բախչեն՝ վրես, քեռին՝ վրես, էշը՝ վրես*⁷⁶:

Ժողովրդախոսակցական լեզվում զեղչմամբ ստեղծված նման երկիմաստ երկխոսական կիրառություններով զավեշտալի միջադեպեր շատ-շատ են հանդիպում: Դրանք, բերնեբերան փոխանցվելով, դառնում են յուրատեսակ խումբ կազմող զվարճապատում-զվարճախոսություններ: Ստորև բերված օրինակում զեղչմամբ ասված անմեղ ու անկեղծ խոսքը երկխոսական կառույցում հանգեցնում է այնպիսի զավեշտի, որ արտաբերողներն անգամ հանկարծակիի են գալիս.

Մեկը կողովով խաղող է տանում շուկա՝ ծախելու: Երեսը ծածկած կողովը սա դնում է ծախող տղամարդկանցից մեկի խաղողի մոտ, կանգնում ու ձեռքերը ծալած սպասում է:

– *Քո՛ւր ջան, ինչի՞ չես բացում, չես տեսնու՞մ՝ իմը /իմա՝ իմ խաղողի բերանը/ բացել եմ, – ասում է տղամարդը:*

– *Ես որ իմը /իմա՝ իմ խաղողի բերանը/ բացեմ, քունը /իմա՝ քո առևտուրը/ կկանգնի, – համեստաբար պատասխանում է կինը: /ԱՍՇՀ/*

Շայ ժողովրդական երգիծապատում-զվարճախոսությունների համար զավեշտի հենք է դառնում նաև **բառամասնատումը**: Մեր գրառումներում բառամասնատմամբ զավեշտի դրսևորումների լավագույն օրինակներից երկուսն առնչվում են քաղաքական թեմաներին, մեկը՝ խորհրդային տարիներին ստեղծված, մյուսը՝ Ղարաբաղյան շարժմանը հաջորդած տարիներին:

Չվարճապատումներից առաջինում զավեշտը ստեղծվում է գրական հայերենի *շահագրգռվածություն* բառի մասնատմամբ.

Մի ախպար, կշտացած ամեն ինչից, որոշում ա գնա Ամերիկա: Մրան կանչքմ են Կենտկոմ՝ համոզելու, որ չգնա.

– *Ա՛յ հայրիկ, երկհարկանի տունն ունես, յուղը վրեն ընտիր ավտոն ունես, բանկըմ էլ էսքան փող ունես /դե ԿԳԲ-ին ամեն ինչ հայտնել էր/, Ամերիկա ի՞նչ կա, որ գնրմ ես:*

Ասմա՛

– *Հոն շահաքրքրովացություն կա:*

Էս կենտկոմի աշխատողը վիրավորված ասրմ ա.

– *Ինչի՞, հայրի՛կ, էստեղ շահագրգռվածություն չկա՞:*

Ախպարն ասմա.

– *Թղա՛ս, հոս ալ քա, փայց հոս շահը քմնա ցեզի, քրքրվացությունը՝ մեզի: /ԱՍՇՀ/*

⁷⁶ Ա. Բաբայան, *Էջեր Լոռվա բանահյուսությունից*, Ե., 2007, էջ 65:

Ղարաբաղյան շարժմանն առնչվող զվարճախոսությունում *Արցախ* տեղանվան մասնատումն է հարանունությամբ դառնում զավեշտի աղբյուրը.

Շատ իզուր էլ ժողովրդը մեր էս ծանր վիճակի համար մեղադրում ա Լևոն Տեր-Պետրոսյանին: Էդ խեղճ մարդը քանի~քանի~ անգամ միտինգների ժամանակ ամբիոնից կոկորդը պատռելով գոռում, զգուշացնում էր.

– *Ա'ն ցախ, ա'ն ցախ, ա'ն ցախ.../ցախ-մանր վառելափայտ-ԱՄ/:*

Որ ժողովրդը նրա ասածներին բանի տեղ չդրեց, չլսեց. ցախ չառավ, ո՞վ ա մեղավորը...ԱՄՇՀ/:

Բառամասնատմամբ զավեշտի ստեղծման յուրատեսակ նմուշի ենք հանդիպում Հովհ. Նազարյանցի անեկդոտների հատորներից մեկում: Այստեղ արդեն, ի հակադրություն մեռնել բառի, Թիֆլիսի Բարբառի *ծնվել, մեծանալ, ապրել, հարստանալ* բառերի անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքի վերջավորության միջոցով առանձնացվում և ընդգծվում է ցավ բառը.

Տփխիսեցի վաճառական Պառավ Եովանեն ասում էր.

– *Աշխարհքումս մարդու ծնուիլն էլ, ապրիլն էլ, հարստանալն էլ ցավ է, մենակ մեռնիլն է հանգիստ: Ասում ինք՝ «փլան մարդը ծնուեցավ, մինձացավ, ապրեցավ, հարստացավ»>. մենակ մեռնիլն է անցավ. ասում ինք՝ «մեռավ»: Միր Միրզոյեվն էլ ծնուեցավ-ցավ, մինձացավ-ցավ, հարստացավ-ցավ, ապրեցավ-ցավ, մեռավ –հանգավ⁷⁷:*

Զվարճապատում-զվարճախոսություններում զավեշտի ստեղծման հիմք է դառնում տարբեր բառերի կամ բառ-հնչյունների **միացմամբ** նոր բառերի ստեղծումը: Մի դեպքում դրան նպաստում են գրաբարի հոլովման օրինաչափությունները.

– Զարմանալի լեզու ա էս գրաբարը. ուղղականում տղա եմ՝ Աբել, իսկ հայցականում՝ աղջիկ՝ Զաբել.../ԱՄՇՀ/

Մեկ այլ դեպքում հայերենի այբուբենի տառով ներկայացված դարը նշող թիվը, բառին միացվելով, ժողովրդախոսակցականում կիրառվող օտարահունչ բառի իմաստ է արտահայտում.

Ուսուցիչ. – Ի՞նչ է նշանակում Երկունք Թ դարու:

Աշակերտ. – Թըդարեք տենալ /իմա՝ պատրաստություն՝ ԱՄ/: /ԱՄՇՀ/

Երեխաներին արագիլն է բերում արտահայտությամբ են մեր պապիկ-տատիկները բավարարել փոքրերի հետաքրքրասիրությունը: Սրա հենքի վրա էլ մեր գրառումներում երկու մանրապատում ունենք, որոնցից մեկը նոր ժամանակների մտածողության ֆոնին հեզնում է ժողովրդական մեկնաբանությունը և դասվում է վարդանիկյան անեկդոտների շարքին.

– *Տատի՛, մենք ո՞նց ենք ծնվել...*

– *Դե՛ Վարդանիկ ջան, քեզ արագիլն ա բերել, Աշոտիկին էլ՝ գետը:*

Վարդանի՛կ, տատին չասե՞նք՝ ոնց ենք ծնվել, – հարցնում է Աշոտիկը:

– *Չէէ՛, տատը թող էդպես միամիտ էլ մեռնի, – ասում է Վարդանիկը:*

/ԱՄՇՀ/

⁷⁷ *Անեկդոտներ*, աշխատ.՝ **Յ. Նազարեանց**, հ. 3, Թիֆլիս, 1883, էջ 53:

Մյուս երգիծապատումն առնչվում է քաղաքական թեմային՝ Հայաստանում տիրող մենաշնորհային քաղաքականությանը՝ ներկրումը մեկի կամ մի քանիսի մենաշնորհը դարձնելու ամենաթողությանը.

Մամվել Ալեքսանյանը գնում ա Մերժ Սարգսյանի մոտ, ասում ա՝

– *Ճիշտ ա՞, որ էրեխանց արագիլն ա բերում:*

Ասում ա՝

– *Հա, ճիշտ ա:*

– *Իսկ չի լինի՞, էտ էլ ես բերեմ: /ԱՍՇՀ/*

Որոշ զվարճախոսություններում էլ արտահայտչության միջոցներից **բառախաղն** է նպաստում զավեշտ ստեղծելուն.

Անդրն ասում է.

– *Կն'ի, էն օրը հո ինչ մընացիր սկուպոյ Արշակի տանը:*

– *Ստի'պված:*

– *Վերջը՞, հո ինչ ընթունեց...*

– *Ստի'պված⁷⁸:*

Կամ էլ՝ **բառախաղ-հանգախաղը՝**

– *Լսի՛ր, ծխելը ո՞նց թողիր:*

– *Շատ տվի-առա, տեսա՝ անձիս վնասս ա, գանձիս վնասս ա, տանձիս վնասս ա, անմիջապես թողեցի: /ԱՍՇՀ/*

Զավեշտի հենք հանդիսացող գոյական խոսքի մասը՝ անձնանվան ստեղծման պատմությամբ, զվարճապատումներից մեկում կառուցված է քաղաքի և ազգակցական ու կրոնական առաջնորդի պաշտոնի անհեթեթ համադրությամբ.

– *Էս մի թոռան անունն էլ իմ ուզածով դրեք – ասում է հայրը տղային:*

– *Ասա՛, հերա՛ ջան, ի՞նչ ես ուզում դնենք, ասա՛՝ թող քու սրտովը լինի, – ասում է տղան:*

– *Ուզում եմ թոռանս անունը Հոռոմ դնեք:*

– *Ա՛յ հեր, բա Հոռոմ ըրեխի անուն կըլինի՞:*

– *Որ դնեք, կըլինի, դուք դրեք, որ փողոցով անցնելիս ըլեմ, հարցնեն՝ էն ո՞վ ա գալի, ասեն՝ Հոռոմի պապը: /ԱՍՇՀ/*

Լեզվաբանական եզրույթներն ու երևույթները ևս զավեշտ ստեղծելու հիմք են հանդիսանում:

Այսպես, զվարճապատումի հենք է դառնում՝

ա/ **կրկնավոր բարդության** այն տեսակը, որի բարդության մի մասը հնչյունափոխման կամ հնչյունահավելման միջոցով անորոշություն, անիմաստություն է արտահայտում.

Մարդ ու կնիկ բաժանվում են, դատարանում դատավորն ասմա՝

– *Ինչ ունեք-չունեք, հավասար պիտի բաժանվի, հիմա ասեք, թե ձեր տանն ինչ ունեք:*

⁷⁸ Կատակում է Գորիսը /Գորիս քաղաքի և շրջանի ժողովրդական սրախոսություններ և անեկդոտներ/, Հավաքեց, մշակեց ու կազմեց **Լ. Սահակյանը**, Գորիս, 1994, էջ 7:

Կնիկն սկսում է ունեցվածքը թվարկել.

– Տուն-մուն, էջ – մեջ, տեղաշոր-մեղաշոր, աման-չաման

– Դե ուրեմն՝ մարդիդ կտանք տունը, քեզ կտանք մունը, մարդիդ կտանք էջը, իսկ քեզ՝ մեջը, մարդիդ կտանք ամանը, քեզ էլ կտանք չամանը.../ԱՄՇՀ/

բ/ քերականական կարգը՝ եզակի-հոգնակին.

Ուսուցիչ. – Շալվարը եզակի՞ է, թե՛՝ հոգնակի:

Սշակերտ. – Ներքի կուռը հոգնակի ա, վերի կուռը՝ եզակի: /ԱՄՇ/

Եզակի-հոգնակիի կիրառությանն առնչվող զվարճապատումներից մեկը իրականության հենքի վրա է ստեղծված, որն արդեն շուրջ ութ տասնամյակ է շրջանառվում է ժողովրդի մեջ.

Հայաստանի երկրորդ դեմքը դառնալուց հետո մասնագետներ են կցում Մացակ Պապյանին ու նրա կնոջը, որ գրագետ ու քաղաքակիրթ դարձնեն, վարվելակերպ սովորեցնեն, որ դիմացինի հետ խոսելիս քաղաքավարության համար հոգնակի թվով խոսեն...:

Մի օր էլ հեռախոսը զանգում է: Մացակ Պապյանի կինը վերցնում է լսափողը և ասում.

– Այո, Մացակ Պապյանի կանայք են ձեզ հանգստացնում.../ԱՄՇՀ/

/տարբերակ՝ – Մացակ Պապյանի կնանիքն են խոսում.../ԱՄՇՀ/

գ/ կապ խոսքի մասը՝

Ուսուցիչ. – Կապերի ի՞նչ տեսակներ գիտես:

Սշակերտ. – Գրկապ, քարկապ, ֆորթակապ.../ԱՄՇՀ/

Զվարճախոսություններից մեկն էլ ինքնատիպ ձևով է մեկնաբանում *վանկաբառային Երիացառը* /իմա՝ Երևանի հացի առևտուր/ հապավումը: 1940-ականների վերջին հայրենադարձների կողմից այդ հապավման յուրովի «վերծանությունը»՝ *Երանի հաց առնողներին*⁷⁹ անսպասելի ծիծաղ է առաջացնում՝ «պայծառ տխրությամբ» արտացոլելով ներգաղթը կազմակերպողների փքուն խոստումները և ետպատերազմյան տարիների սոցիալական ծանր վիճակը:

դ/ վերամբարձ ոճը, որը շատ անգամ վերածվում է զավեշտի, եթե դրանց ստեղծման պատճառները տպավորություն թողնելու հետ են կապված, և այն կիրառողը չի տիրապետում արտաբերման լեզվական նրբություններին և անհրաժեշտ միջավայրում այն բնական հնչեցնելու վարպետությամբ:

1960-ական թթ. հայ գրականության դասագրքերում գրողների կենսագրականները շաբլոն նախադասություններով էին սկսվում՝ Էսինչ գրողը Երևան եկավ Թիֆլիսում...: Նմանատիպ ճոռոմ ու վերամբարձ ոճը հետևյալ զվարճախոսությունը ստեղծելու պատճառ է դարձել.

– Էս ի՞նչ բան ա, չեմ հասկանում, ինչքան հայ գրող կա, առաջ Երևան են էկել, նոր՝ Թիֆլիս: /ԱՄՇՀ/

⁷⁹ Հայ ժողովրդական մշակույթ, 12 ՀԱԻ /Հանրապետական գիտաժողովի նյութեր/, 2004, էջ 149:

ե/ Չավեշտ է ստեղծվում բառերի *և բառակապակցությունների* դասավորությունը ակամա, երբեմն էլ դիտավորյալ խախտելու կամ աղավաղելու միջոցով /ԱՄՇՀ/, բառերի տեղերի ակամա տեղափոխությանը մտացածին *բառախաղային* տեղափոխությամբ հակադարձելով⁸⁰, արտաբերման կերպը՝ կետադրական նշանների խառնիխուռն կիրառությամբ, մանավանդ երգը՝ սովորական արձակ խոսքի շաղախում արտաբերելիս /ԱՄՇՀ/, *ձայնի հնչե-րանգը*՝ իզված, *ցածր ձայնով խոսքն արտաբերելը* /ԱՄՇՀ/ և այլն:

Այսպիսով, հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունների համատեքստում լեզվական տարատեսակ իրողություններով անսպասելի ծիծաղ առաջացնող նմուշները բավականին մեծ քանակ են կազմում: Դրանք զուտ հայկական դրսևորումներ են և այնքան են հազեցած հայերենի պատկերավորման բառապաշարային և շարահյուսական ու արտահայտչական համով-հոտով նրբերանգներով, որ նմանատիպ երգիծական ստեղծագործությունները այլ ժողովուրդների համար անհասանելի են, հետևաբար նաև՝ անթարգմանելի:

Armen Sargsyan- Linguistic Forms in the Armenian Folk Humoresques and Nursery Rhymes as the Basis for Absurd.- In the Armenian folk humoresques and nursery rhymes miscellaneous lexical and syntactic expression means such as comparison, allegory, curtailment (used prevailingly in the folk speech), division of words, word-play, intonation etc. become causes for bursting of unexpected laugh as well as terms and features of linguistics: complex, liaison, abbreviation, syntactic sequence (singular/multiple, gerund etc.).

Samples containing various linguistic elements, raising unexpected laugh, are purely Armenian phenomena. They are as much idiomatic and full of lexical, syntactic and imaginative means characteristic for Armenian, with plenty of piquant peculiarities, that reveal as inaccessible for jocular pieces of other folks and consequently – are untranslatable.

Саргсян Армен - Языковые явления в армянских народных юмористических миниатюрах-прибаутках как основа абсурда.- В армянских народных юмористических миниатюрах и прибаутках причиной неожиданного смеха становятся как разнообразные лексические и синтаксические выразительные приемы – сравнение, иносказание, сокращение (применяется в основном в народной речи), слово-разделение, игра слов, интонация и т. д., так и термины и явления филологии: комплекс, связь, аббревиатура, синтаксическая последовательность (единственное/множественное число, причастный оборот и т. д.).

Образцы, содержащие различные языковые явления, вызывающие неожиданный смех – проявления исконно армянские. Они настолько богаты лексическими, синтаксическими и образными средствами армянского языка с характерными пикантными тонкостями, что недоступны для подобных юмористических произведений других народов, следовательно – неперевоимы на другие языки.

⁸⁰ Ա. Սահակյան, 500 կատակ, Հալեպ, 2000թ, էջ 8:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՌՈՒՄԵՐԵՆ
ՏԵՐՄԻՆՆԵՐ Գ. ՋԱԽՈՒԿՅԱՆԻ «ԼԵԶՎԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

«Լեզվի համընդհանուր տեսություն» գրքի ստեղծման ուղղությամբ Գ. Ջախուկյանն աշխատել է գրեթե իր ողջ գիտական գործունեության ընթացքում: Մենագրության հիմքում ընկած առանձին գաղափարներ որոշ չափով ներկայացվել են հեղինակի նախորդ աշխատություններում ու հոդվածներում՝ սկսած 70-ական թվականներից: Սակայն տեսական նշանակություն և կարևորություն ունեցող շատ խնդիրներ ու հարցեր սպառիչ ձևակերպում են ստացել այս աշխատության մեջ: Հեղինակը հանդես է եկել մի շարք նորամուծություններով ոչ միայն լեզվաբանական տեսության մշակման, այլև այս բնագավառում նոր տերմիններ ստեղծելու առումով:

Սույն հոդվածում անդրադառնում ենք անվանի լեզվաբանի վերոնշյալ աշխատության մեջ տեղ գտած որոշ նորաստեղծ տերմինների:

Լեզվաբանական տերմիններն ու լեզվաբանական հասկացություններ արտահայտող տերմինային կապակցությունները նախապես քարտազրել ենք Գ. Ջախուկյանի աշխատությունից, համեմատել էլեկտրոնային լեզվաբանական բառարանների¹ բառամթերքի հետ, առանձնացրել Գ. Ջախուկյանի ստեղծած տերմինները՝ հարկ եղած դեպքում համեմատելով տերմինային նույն իմաստն արտահայտող հայերեն տերմինների հետ: Գ. Ջախուկյանի ստեղծած ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն տերմիններն առաջարկում ենք դասակարգել՝ ըստ բնագավառների, ըստ ձևի (կազմության) և բովանդակության հարաբերակցության²:

Ըստ բնագավառների՝ կարելի է առանձնացնել **բուն ընդհանուր-լեզվաբանական** և **լեզվի տեսությանը վերաբերող** (լայն իմաստով քերականագիտական) տերմիններ:

Առաջին՝ բուն ընդհանուր-լեզվաբանական տերմինների խմբում ընդգրկվում են լեզվաբանության կառուցվածքին (գիտակարգերին ու բաժիններին), լեզվական մակարդակների և ենթամակարդակների դասակարգմանը, լեզվական միավորների ու դրանց տարբերակիչ հատկանիշների առանձնահատկություններին, լեզվաբանական կաղապարների տի-

¹ <http://dic.academic.ru/>, «Термины и понятия лингвистики: Лексика. Лексикология. Фразеология. Лексикография», «Словарь лингвистических терминов», «Пятиязычный словарь лингвистических терминов», «Словарь лингвистических терминов (Т.В. Жеребило)».

² Այս դասակարգումը կիրառվել է նաև հայերեն տերմինների դեպքում. տե՛ս **Մ. Սարգսյան**, Լեզվաբանական նորաստեղծ տերմինների գործածությունը Գ. Ջախուկյանի աշխատություններում.- *Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ*, Ե., 2013, էջ 118-124:

պերին վերաբերող տերմինները: Այս խմբում է ընդգրկված նաև համընդհանուր լեզվաբանական կադապարի տերմինաբանությունը՝ սկզբունքների, կարգերի և եզրերի համապատասխան տերմիններով, սակայն նկատի ունենալով դրանց առատությունը՝ սույն հոդվածի շրջանակներում դրանց մանրամասն չենք անդրադառնա:

Ջահուկյանը առանձնացնում է *լեզու* տերմինի երեք հիմնական գործածություն՝ *ընդհանուր*, *առանձին* և *անհատական*, և ըստ այդմ՝ դրանք ուսումնասիրող գիտությունները՝ *панлингвистика*, *монолингвистика*, *идиолингвистика*: Այս երեք գիտակարգերի համար, ըստ բնույթի և նպատակի, առանձնացնում է *инвариантная* (անփոփոխակալին) և *вариативная* (փոփոխակալին) տարատեսակները՝ արդյունքում ստանալով վեց լեզվաբանական գիտակարգեր՝ նոր տերմինաբանությամբ՝ *инвариантная панлингвистика*, *вариативная панлингвистика*, *инвариантная монолингвистика*, *вариативная монолингвистика*, *вариативная идиолингвистика*, *инвариантная идиолингвистика*: *Панлингвистика*-ն կոչում է նաև *универсальная теория языка* (լեզվի համընդհանուր տեսություն) կամ *универсальная лингвистика* (համընդհանուր լեզվաբանություն):

Անդրադառնալով լեզվական մակարդակներին և մակարդակային միավորներին՝ Գ. Ջահուկյանն առաջարկում է նոր բաշխում՝ համապատասխան տերմինաբանությամբ, ընդ որում՝ թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն տերմինների դեպքում մակարդակային բաժինների և ենթաբաժինների կազմության միասնական սկզբունք է կիրառվում՝ ռուսերենի դեպքում *-ЛОГИЯ* և *-(а)ТИКА* բաղադրիչների կիրառմամբ:

Օրինակ՝ բառ միավորի համար առանձնացնում է *лексический уровень* և *лексикология* բաժին: Նույն համաբանությամբ էլ կազմում է մյուս մակարդակների և դրանց համապատասխան բաժինների անվանումները՝ *таксема* (*շար*) - *таксематический* (*շարային*) - *таксология* (*շարագիտություն*), *текстема* (*պարբերություն/հինույթ*) - *тексематический* (*պարբերային / հինույթային*) - *тексематика* (*պարբերաբանություն / հինույթաբանություն*), *синтекстема* (*լիահինույթ*) - *синтексематический* (*լիահինույթային*) - *синтексематика* (*լիահինույթաբանություն*), *протасематический* (*սույթային*) - *протасематика* (*սույթաբանություն*), *сентенция* (*լրասույթ*) - *симпротасематический* (*լրասույթային*) - *симпротасематика* (*լրասույթաբանություն*) ևն: Ընդ որում՝ այս դեպքում Ջահուկյանը կարևորում է, որ մակարդակների և ենթամակարդակների ներառման հարաբերությունն արտահայտվի նաև տերմինակազմության մեջ, ինչպես օրինակ՝ *ризематика*- *сирризематика*, *тексематика*- *синтексематика* ևն:

Երկրորդ՝ լեզվի տեսությանը վերաբերող (լայն իմաստով քերականագիտական) **տերմինների** խմբում ընդգրկվում են տերմիններ՝ սկսած հնչյունաբանությունից մինչև տեքստաբանություն:

Կադապարի բաղադրիչների ներքին փոփոխության համար առաջարկում է **транспозиция** տերմինը, իսկ նույն մակարդակի երկու կադա-

պարների մասնակի կամ ամբողջական միավորումը մեկ կադապարի մեջ կոչում է **унификация** տերմինով, որոնցից էլ համապատասխանաբար առանձնացնում է կադապարների երկու տիպ՝ նոր տերմիններով՝ **транспонированная модель, унифицированная модель**:

Բայական շարույթից բացի՝ մյուս տիպի շարույթների լրացումները երկու խմբի է բաժանում և կոչում հետևյալ նոր տերմիններով՝ **наприлагательный вид синтагмы** և **начислительный вид синтагмы**:

Соуровневое словосложение տերմինով կոչում է *բառակազմությունը՝ նույն մակարդակի միավորների հիման վրա, իսկ վերին մակարդակի միավորների հիման վրա՝ межуровневое словосложение*:

Լիահինույթի (синтекстема) ներքին կառուցվածքի համար առաջարկում է **контекстема** տերմինը:

Суст կազմության՝ Գ. Ջահուկյանի առաջարկած ուսերեն նոր տերմինները հիմնականում կերտված են նախածանցման և վերջածանցման շնորհիվ:

Նախածանցավոր տերմինների կազմությանը մասնակցել են **гипер-, гипо-, идио, ин-, кон-, моно-, пан-, про-, сим-+про-, син-, социо-** և այլ նախածանցներ և մասնիկներ, որոնք հիմնականում հունալատինական ծագում ունեն, բուն ուսերեն մասնիկները (**меж-, со-**) հազվադեպ են:

Օրինակ՝ *инвариантная монолингвистика, идиоллингвистика, панлингвистика, межуровневая модель, соуровневая (одноуровневая) модель, межуровневое словосложение, соуровневое словосложение, протасематика (шипуршаршնություն), симпротасематика (լրաշիւրշարշնություն), синтекстематический подуровень (լիահինույթային ենթամակարդակ)*:

Сема տերմինից կազմում է **пансема, идиосема, социосема** տերմինները, ընդ որում՝ **пансема**-ն համընդհանուր լեզվաբանական կադապարի կարգերի ցանկացած միավորն է կամ եզրը:

Ենթամակարդակային բազմատարր միավորները կոչում է **гиперлексема, гиперсинтагма, гиперсимпротасема, гипертекстема** տերմիններով, իսկ ենթամակարդակային միատարր միավորները՝ **гипотекстема, гиполексема, гипосинтагма, гипосимпротасема**:

Վինետիկ նվազագույն միավորների համար առաջարկում է **идиокин, панкин, социокин** տերմինները՝ հնչունական երևույթների համապատասխան տերմինների համաբանությամբ կազմած, ինչպես **панфон, социофон**:

Վերջածանցավոր տերմինների կազմությանը մասնակցում են **-ат, -атор, -ация, -ема, -иция, -логия, -тика, -ят, -ятор** և այլ վերջածանցներ ու մասնիկներ:

Օրինակ՝ **лексема** (*բառույթ*), **протасематика** (*շիւրշարշնություն*), **протасеология** (*նախադասարարություն*), **таксология** (*շարադրություն*), **тагматика** (*դաշիւրշարշնություն*), **маркация, маркат, релятор, релят, унификация, транспозиция, сигнификатор**:

Չահուկյանի աշխատության մեջ տեղ են գտել նաև բաղադրյալ նորաստեղծ տերմիններ: Վերջինները, սակայն, ի տարբերություն ածանցավորների, սակավաթիվ են: Ըստ բաղադրիչների քանակի՝ տերմինների այս տիպի մեջ կարելի է առանձնացնել երկանդամ և եռանդամ կառույցներ: Օրինակ՝ *инвариантная лингвистика, вариативная лингвистика, универсальная теория языка, субстанционно-комбинаторная модель (կոմբինատորաբանական), идиолингвистическая модель, универсальная лингвистическая модель, идиолингвистическое понятие, монологвальное понятие, маркационное изменение термов, реляционное изменение термов, унифицированная модель* ևն:

Ըստ ձևի և բովանդակության հարաբերակցության՝ ռուսերեն նորաստեղծ տերմինների համար առաջարկում ենք հետևյալ դասակարգումը.

1. **նորաստեղծ տերմին (նոր ձև, նոր բովանդակություն),**

Նկատի ունենալով *հարաբերություն* և *հատկանիշ* տերմինների կարևորությունը լեզվաբանության մեջ՝ Չահուկյանը տերմինաբանական ճրգրտումներ է կատարում. *հարաբերությունը* կոչում է **релятор** (ռելյատոր), *հարաբերակցվող օբյեկտները՝ релят* (ռելյատներ), իսկ *ռելյատորը* և *ռելյատները* միասին՝ **реляция** (ռելյացիա): Նույն ձևով *հատկանիշը* կոչում է **марк** (մարկ), *հատկանիշով բնորոշվող միավորը՝ маркат* (մարկատ), իսկ *մարկն* ու *մարկատը* միասին՝ **маркация** (մարկացիա): Այսպիսով՝ ռելյացիան ու մարկացիան տարբերվում են քանակով. ռելյացիան ենթադրում է նվազագույնը երեք բաղադրիչ՝ երկու ռելյատ և մեկ ռելյատոր, մարկացիան՝ մի բաղադրիչով պակաս՝ նվազագույնը մեկ մարկատ և մեկ մարկ: Նկատի ունենալով, որ կարելի է որոշակի հարաբերություն հաստատել նաև ռելյատորների միջև, իսկ մարկը կարող է սեփական հատկանիշ ունենալ, Չահուկյանը *ռելյատորների ռելյատորը* կոչում է **субрелятор** (սուբռելյատոր), *մարկի մարկը՝ субмарк* (սուբմարկ): Կարգերի եզրերի երկու տիպի փոփոխություններն էլ ներկայացնում է համապատասխան տերմիններով՝ *маркационное изменение термов, реляционное изменение термов*:

Առաջարկում է **тагма** –ն (*դիսուլթ*), որ շարույթաբանական նվազագույն միավորն է, այսինքն՝ լիմաստ բառը՝ բառույթը՝ իր բոլոր օժանդակ միջոցներով, որոնց շնորհիվ այն շարակարգային հարաբերության մեջ է մտնում նույն կարգի միավորների հետ:

Չահուկյանը կարծում է, որ *абзац* (պարբերություն) տերմինն անհաջող է հենքային մակարդակի ենթամակարդակի միավորի համար, քանի որ նկատի է առնվում միայն գրավոր ձևը, չեն համապատասխանում նաև *тема* և *рема* տերմինները, ուստի նոր տերմին է առաջարկում՝ կազմելով այն *тагма-синтагма, протасема-синпротасема* տերմինների կազմության համաբանությամբ՝ **текстема** (պարբերույթ/հինույթ):

Բառակազմական ձևույթները կոչում է *дериватор* տերմինով, առանձնացնում է այդ ձևույթների երկու տիպ, որոնք էլ համապատասխանաբար կոչում է *сигнификатор* (հիմքին նոր իմաստ է տալիս՝ առանց փոխելու խոսքիմասային պատկանելությունը) և *транспозитор* (փոխում են խոսքիմասային պատկանելությունը):

2. *տերմինի վերաիմաստավորում (նոր բովանդակություն),*

Օր.՝ *категория* (կարգ) հասկացությունը շատ ոլորտների է բնորոշ, հաճախ կիրառվում է դաս տերմինի փոխարեն, Ջահուկյանի բնորոշմամբ՝ այն հասկացական դաս է, որ ունի բովանդակության և արտահայտության պլան՝ իրենց փոխհարաբերության առանձնահատկություններով, և որը բաղկացած է երկու հակադիր միավորներից՝ եզրերից (терм): Այն համընդհանուր լեզվաբանական կաղապարի առավել ընդհանուր հասկացությունների ամբողջությունն է:

Терм (եզր) տերմինը ևս կիրառվում է այլ կերպ, քան ընդունված է ժամանակակից գիտության մեջ, որտեղ կիրառվում է *արտահայտություն, բնորոշում* իմաստներով: Ջահուկյանի բնորոշմամբ՝ այն համընդհանուր լեզվաբանական կաղապարի առավել սահմանափակ հասկացությունների ամբողջությունն է, որ կարգերի՝ առավել ընդհանուր հասկացությունների հետ հնարավորություն է տալիս տարբերակել օբյեկտներն իրարից և որոշել դրանց փոխհարաբերության տիպը:

Текстология (հենքագիտություն) տերմինը նույնպես նոր իմաստով է կիրառվում: *Лигвистика текста* և *грамматика текста* տերմինների փոխարեն Ջահուկյանը նախընտրում է այս տերմինը, թեև վերջինս պատմաբանասիրական գիտակարգի տերմին է և ենթադրում է բանասիրական տեքստերի ուսումնասիրում և վերծանում, սակայն Ջահուկյանը այն կիրառում է նոր իմաստով՝ որպես լեզվական բարձրագույն մակարդակի միավորն ուսումնասիրող գիտություն:

Սովորաբար Գ. Ջահուկյանի բոլոր աշխատություններում նորաստեղծ տերմինները կամ նոր իմաստավորում ստացած տերմինները սահմանվում են, հաճախ համապատասխան օրինակներ են բերվում: Այս աշխատությունն էլ բացառություն չէ, ավելին՝ այս աշխատությունն ունի ծանոթագրությունների հարուստ բաժին, որտեղ և հիմնականում ներկայացվում են հեղինակի՝ այս կամ այն տերմինին նախընտրություն տալու հիմնավորումները:

Ամփոփելով պետք է նշել, որ

1. Բազմազան ու բազմաբնույթ են Գ. Ջահուկյանի կերտած լեզվաբանական տերմինները, դրանց մեծ մասը, սակայն, լեզվաբանական գրականության մեջ լայն կիրառություն չի գտել, դրանց կիրառման ոլորտը սահմանափակվում է Գ. Ջահուկյանի աշխատություններով:

2. Թեև Գ. Ջահուկյանը նշել է, որ տերմիններ ստեղծելիս պետք է հաշվի առնել տերմինի դյուրահնչունությունը, կարճությունը, այնուամենայնիվ իր ստեղծած տերմինները, հատկապես ռուսերեն տերմինները,

շատ խրթին են և բարդ: Չնայած դրան՝ բառաբարդմամբ և ածանցմամբ այլ տերմիններ ու տերմինային կապակցություններ կազմելու հնարավորություն ունեն:

3. Լեզվաբանական այս տերմինների ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի հեղինակի ընդհանուր լեզվաբանական հայացքների համակողմանի ներկայացման տեսակետից:

Meri Sargsyan - Newly Created General Linguistic Russian Terms in the Work “The Universal Theory of Language” of G. Jahukyan. - In “The Universal Theory of Language” G. Jahukyan has made a number of innovations not only in the development of the linguistic theory, but also in creation of new terms in this field. The newly created linguistic Russian terms are touched upon in this article.

The linguistic terms and term combinations expressing linguistic concepts were written on cards, were compared with the stock of words of the electronic linguistic dictionaries, were classified according to the domain, according to the form (the structure) and contents.

Саргсян Мери - Новосозданные общие лингвистические русские термины в работе “Универсальная теория языка” Г. Джаукяна. - В “Универсальной теории языка” Г. Джаукян сделал ряд нововведений не только в развитии лингвистической теории, но также и в создании новых терминов в этой области. В этой статье рассматриваются новосозданные лингвистические русские термины.

Лингвистические термины и терминологические комбинации, выражающие лингвистические понятия, были нанесены на карты, сравнены со словарным запасом электронных лингвистических словарей, классифицированы согласно области, форме (структуре) и содержанию.

**ԳՐԱԲԱՐԻ «ԶԳԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ»
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԻ ԲԱՅԵՐԸ**

Լեզուների բառային կազմի դասակարգումները կատարվում են տարբեր նպատակներով և տարբեր սկզբունքներով: Հայերենի բառապաշարի, հատկապես հ.-ե. բառաշերտի քննության ժամանակ նկատի են առնվում և՛ հայերենի՝ հ.-ե. այլ լեզուների հետ ունեցած ընդհանրությունները, և՛ այսպես կոչված էքսկյուզիվ՝ բացառիկ զուգաբանությունները: Լեզուների բառապաշարի ամենանախնական, պարզ դասակարգումը ծագումնաբանական դասակարգումն է: Հայերենի բառապաշարի այդպիսի դասակարգում է կատարել Հ. Աճառյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ՝ առանձնացնելով բնիկ՝ հ.-ե. ծագման բառերը և տարբեր լեզուներից կատարված փոխառությունները: Նա առաջինն է կատարում հայերենի հ.-ե. բառաշերտի իմաստային-թեմատիկ խմբավորում՝ առանձնացնելով 22 իմաստային խումբ՝ 1. բնություն և բնական երևույթներ, 2. կրոն, 3. մարդ և մարմնի մասեր, 4. հիվանդություն և նմաններ, 5. կենդանիներ, 6. ընտանիք, 7. երկրագործություն, 8. խաշնարածություն և գյուղատնտեսություն, 9. արհեստ և արվեստ, 10. գույներ, 11. վաճառականություն, 12. շինարարություն, 13. հագուստ և զարդ, 14. ուտելիք և ըմպելիք, 15. առտնին տնտեսություն, 16. թիվ և չափ, 17. մետաղներ, 18. ճամփա, 19. ժամանակ և տեղ, 20. երկիր և պետություն, 21. սովորական կյանքի բառեր, 22. դերանուններ, շաղկապներ և նմաններ: Նա այս խմբերը բաժանում է ենթախմբերի: 21-րդ՝ սովորական կյանքի բառեր խմբում առանց իմաստային սահմանազատման ներկայացված են և՛ զգայական ընկալումներ, և՛ զգացմունք, և՛ մարդկային գործունեության տարբեր բնագավառներին վերաբերող, բազմազան հարաբերություններ նշանակող բառեր, որոնք հետագայում բաշխվեցին իմաստային տարբեր խմբերի: Աճառյան նաև այդ խմբերում ընդգրկում է միայն հայերենի բառերը և չի բերում հ.-ե. այլ լեզուների համապատասխան արմատները¹:

Հ.-ե. լեզուների բառամթերքի իմաստային թեմատիկ դասակարգում է կատարում Կ.Դ.Բաքը իր հնդեվրոպական լեզուների հոմանիշների բառարանում, որում թեմատիկ խմբավորման են ենթարկված հնդեվրոպական լեզուների հոմանիշները՝ անկախ նրանց ծագումից: Ցավոք, այս բառարանում հայերենի նյութը շատ քիչ է ներկայացված: Բաքը այդ բառարանի կազմության համար օգտագործած աղբյուրների մեջ նշում է միայն Հ. Հյուբշմանի «Հայերենի քերականությունը» և Ե. Լիդենի «Հայկական ուսումնասիրությունները»²:

¹ Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, 1-ին մաս, Ե., 1940, էջ 108-112:

² C.D.Buck, *A Dictionary of selected Synonyms in the principal Indo-European Languages*, The University of Chicago Press, Chicago-London, 1949, p. 4.

Հայերենի բառապաշարի իմաստային-թեմատիկ դասակարգում է կատարել Գ. Ջահուկյանը իր «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ: Ջահուկյանը, ինչպես նշում է և ինքը, «... ըստ հնարավորին ճշգրտորեն հետևել է Բաքի դասակարգմանը»³: Բացի հայերեն բնիկ բառերից (հին և միջին շրջանների)՝ նա բերում է նաև աշխարհաբար և բարբառային բառեր: Բաքի 22 թեմատիկ խմբերին ավելացնում է նաև 23-րդը՝ ընդգրկելով դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ: Այս խումբը հիմնականում նույնանում է Աճառյանի առանձնացրած 22-րդ խմբին. կատարված են միայն որոշ հավելումներ:

Հայերենի գրաբարյան շրջանի բառերի իմաստային դասակարգում է կատարել և Լ. Հովհաննիսյանը «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն»⁴ աշխատության մեջ. այս ուսումնասիրությունը հետաքրքրական է նաև նրանով, որ նա թեմատիկ խմբերի մեջ ընդգրկում է ոչ միայն բնիկ և արմատական բառերը, այլև գրաբարալեզու գրականության մեջ վկայված փոխառյալ, բաղադրական կազմություն ունեցող բառերը բերելով դրանց վկայությունները, գործածության հաճախականությունը, հանգամանք, որ շատ արժեքավոր է դարձնում այս ուսումնասիրությունը:

Մեր նպատակն է քննության առնել «Զգայական ընկալումներ» իմաստային խմբի բայերը փորձելով պարզել այդ բայերի՝ հ.-ե.տարբեր լեզուներում կրած իմաստային փոփոխությունների նմանություններն ու դրանց նախադրյալները: Այժմ անդրադառնանք Կ. Բաքի և Գ. Ջահուկյանի առանձնացրած «Զգայական ընկալումներ» իմաստային խմբի բառերին: Դրանում ընդգրկված են և՛ գոյականներ, և՛ ածականներ, և՛ բայեր: Բաքն այս խմբում առանձնացրել է 53 ենթախումբ: Բանն այն է, որ Բաքի ելակետը եղել է անզլերենը. դրա համար էլ նույն արմատը ներկայացվում է և՛ իբրև գոյական, և՛ իբրև ածական, և՛ իբրև բայ անցողական և անանցողական նշումներով: Բայական արմատներ են to smell, to taste, hear, listen, to see, to look/at/, to show, to shine, to touch: Ջահուկյանի առանձնացրած այս խմբում բերվում են հոտի, համի, լսելիքի, տեսանելիքի, շոշափելիքի և մաշկազգացողության հետ կապված բառերը. նա նշում է, որ դրանք հիմնականում հ.-ե. ծագման արմատներ են. Ջահուկյանը բերում է նաև այդ բայերի հոմանիշները և բարբառային ձևերը:

Առաջին բայը **զգալ**-ն է: Անզլերենում sens բայն ունի 1. *զգալ, իմանալ* 2. *գիտակցել, հասկանալ* իմաստները: Բաքը sens (**զգալ**) բառահոդվածում բերված բայերի արտահայտած իմաստների մասին գրում է, որ դրանք չեն սահմանափակվում միայն զգայական ընկալմամբ. դրանք կարող են նշանակել և՛ զգայական ընկալում, և՛ մտավոր ընկալում:

Հ. Աճառյանը արմատական բառարանում բերում է **զգալ** բայի հետևյալ իմաստները՝ *իմանալ, հասկանալ, խելքը գլուխը գալ*, նաև *լուր առնել, տեղե-*

³ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանաշրջան*, Ե., 1987, էջ 205:

⁴ Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն*, I մաս, 2008, II մաս, 2012:

կանալ⁵: Գ. Ջահուկյանի ստուգաբանական բառարանում **զգալ** բայի համար նշվում են *ընկալել, իմանալ, հասկանալ, ուշքի գալ, զգաստանալ, տեղեկանալ, լուր ստանալ* իմաստները⁶: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում **զգամ** բայի համար նշվում են *ճանաչել, իրազեկ լինել, իմանալ, ըմբռնել, հասկանալ* իմաստները⁷: Հ. Աճառյանը որոշ կասկածով (**զ**)**գալ** արմատը կապում է հ.-ե. *wa նախաձևի հետ: Ջահուկյանը կանխադրում է հ.-ե. *uadh-mi ձևը և ստուգապես համարում է հնդեվրոպական ծագման: Բաքը բերում է հ.-ե. լեզուների հոմանիշ արմատները, որոնք հանգում են տարբեր նախաձևերի. հունարենի համար նշում է αἰσθάνομαι (ապառնի αἰσθήσομαι, առ. ἡσθόμην, վղ. ἡσθημαί), որն ունի *զգալ, ընկալել, նկատել* իմաստները, լատիներենի համար՝ sentire *զգալ, իմանալ, տեղեկանալ, մտածել, ենթադրել, համարել*: Հայերենում ճիշտ նույնպիսի իմաստներ են առկա, ինչպիսիք կան հ.-ե. այլ լեզուներում: Յ. Պոկոռնու բառարանում այս արմատների համար բերվում են համապատասխանաբար հ.-ե. *au-, *auei- և *sent- նախաձևերը: Հին վերին գերմաներենում այս վերջին *sent- նախաձևից են sind *ճանապարհ*, sinnan *ճանապարհորդել*⁸: Հ. Աճառյանը **գալ /զ-գալ** բայարմատից ծագած բառերի մեջ նշում է **գալ-ուստ**, նաև «գայիլ բայաձևը, որ թէև առանձին գործածական չէ, բայց գտնվում է շատ բառերի ծայրը, ինչ. շրջագայիլ, յառաջագայիլ, բացագայիլ, պարագայիլ ևն»⁹ (հմտ. գերմաներենի վերը նշված ձևերի հետ):

Այսպիսով, հնդեվրոպական լեզուների *զգալ* իմաստով բառերը, անկախ նրանց ծագումից, երևան են հանում իմաստային ընդհանրություններ և իմաստային համանման փոփոխություններ:

Մյուս բայը, որին կանդրադառնանք ստորև, **հոտել, հոտոտել**-ն է: Անգլերենում smell –ը և՛ հոտն է, և՛ հոտ քաշելն ու հոտ առնելը: Բաքը գրում է, որ smell-ը գործածվում է՝ առանց տարբերակելու լավ և վատ հոտը. լավ հոտ՝ smell good, վատ հոտ՝ smell bad, լավ հոտ արձակել՝ smelling good, վատ հոտ արձակել՝ smelling bad, to smell-ը՝ և՛ լավ, և՛ վատ հոտ արձակելը: Անգլերենում *բուրել* իմաստը արտահայտվում է կամ այլ արմատով՝ fragrant, կամ հարադրությամբ՝ smell sweet: Բաքը նշում է, որ հ.-ե. լեզուների մեծ մասում *լավ / հոտ, բույր* նշանակությամբ բառերի համար գործածվում է smell բառը well, sweet բառերի հետ: Կան լեզուներ, որոնցում լավ և վատ հոտի համար գործածվում են տարբեր բառեր. հայերենում, օրինակ, կան **հոտ** և **բույր** բառերը. **հոտ**-ը կարծեք ավելի չեզոք գործածություն ունի: Հունարենում **ὄσθω**, դոր. էոլ. **ὄζω** հոտ արձակել (**ὄζειν**. ἐδόκει τοῦ ἄρτου κάκιστον(Լիսիոս). Նրան թվում էր, որ հացից վատ հոտ է գալիս)¹⁰: Հունարենում **εῖ** մասնիկը, բառերից առաջ

⁵ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, Ե., 1973, էջ 86-87 (այսուհետև՝ ՆԱԲ):

⁶ Գ.Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 235 (այսուհետև՝ ՆԱԲ):

⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1987, հ. 1, էջ 724 (այսուհետև՝ ՆԲՀ):

⁸ J.Pokorny, *Indogermanisches Etymologisches Wörterbuch*, I band, Franke Verlag Bern and München, 1959, p. 908. այստեղ հարկ ենք համարում նշել, որ այս նույն արմատից է հայ. *ընթանալ* բայը, որը, սակայն, հայերենում չունի *շրջել, ճանփորդել* նշանակությունը:

⁹ ՆԱԲ, հ.1, էջ 500:

¹⁰ И.Х.Дворецкий, *Древнегреческо-русский словарь*, М., II т., 1958, стр.1153.

դրվելով, բառերին տալիս է լավ իմաստը. **εὐ-ωδία, εὐωδία** նշանակում է *բույր, բուրավետ*: Նմանատիպ երևույթ է առկա և սանսկրիտում. *gandha* նշանակում է *վատ հոտ*, իսկ *լավ հոտ* նշանակությամբ գործածվում է *su-gandhi* ձևը¹¹/su-ի համար Կոչերգինայի բառարանում նշվում է, որ բառերին հաղորդում է *լավ, հիանալի* իմաստները¹²: Լատիներենում նույնպես *odor, odoris* բառի համար որպես առաջին իմաստ նշվում է 1. *Հոտ* (չեզոք նշանակությամբ), 2. *վատ հոտ, գարշահոտություն*, հետո միայն՝ իբրև երրորդ իմաստ՝ *բույր*: *Հոտ քաշել* իմաստն արտահայտվում է *odoror, odorari* բայով: Եվ պատահական չէ, որ լատիներենում կա *fragro, fragrare* բայը՝ *բուրել* իմաստով: Ֆրանսերենում *odeur* բառը նշանակում է 1. *հոտ, բույր*, 2. *վատ հոտ*.¹³ հավանաբար այս երկրորդ՝ *վատ հոտ* իմաստը ավելի գործածական է եղել, եթե նկատի ունենանք, որ *լավ հոտ ունենալ* իմաստի համար գործածական է *avoir une bonne odeur*, իսկ *désodorisant, désodoriser* կազմությունները նշանակում են *վատ հոտը վերացնող, վերացնել վատ հոտը*¹⁴: Բայը՝ **հոտել**-ը, վատ հոտ արձակելը կամ վատ հոտ ունենալն է: Հ. Աճառյանը **հոտիլ**-ը բացատրում է *նեխել* և *նեխումից գարշ հոտ արձակել* և ավելացնում է, որ «հոտիլ թե գրաբարում և թե ժողովրդական զանազան բարբառներում հատուկ է միայն վատ հոտին. Պոլսի բարբառում **հոտիլ**-ը գործածվում է թե՛ լավ և թե՛ վատ հոտի համար» և բերում է օրինակ՝ «Գէշ կհոտի, և Վարդը անուշ կհոտի»¹⁵: Այստեղ, կարծում ենք, **հոտել**-ի լավ կամ վատ լինելը պայմանավորված է **գէշ** և **անուշ** բառերի առկայությամբ: ՆՀԲ-ում **հոտեմ, հոտիմ** բացատրվում են *հոտեցուցանել, նեխեցուցանել, փտեցուցանել* և *ժանտահոտիլ, բուրել հոտ չար*¹⁶: *Հոտ քաշել, հոտ առնել* իմաստի համար հայերենն ունի կրկնավոր կազմությամբ **հոտոտամ, հոտոտեմ, հոտոտիմ** (Առնուլ զհոտ, ձգել զհոտ ոնգամբբ)բայերը¹⁷: Հունարենում նույնպես **հոտոտել** բայը կազմվում է կրկնությամբ՝ *ὀδῶδειν*: Անգլերենում **հոտել** բայի համար գործածվում է *to rot, become rotten*: Հին սլավոներենում *вонь (вонѣ)* բառը ունեցել է *запах հոտ* իմաստը. ուկր. *воня* «հոտ», հին ռուս. *воня* 1. «բուրմունք», 2. «հոտ», հին սլավ. *вонѣ (ǫромѣ)* բույր, բուլղ. *воня* «вонь վատ հոտ», սերբախորվաթ. *воњ, воња* «հոտ», սլովեն. *vónja*, չեխ. *vůně* «բուրմունք, аромат, հոտ», սլովակ. *vôňa*, լեհ. *woń*, վերին լուծիերեն *wón*. նախապես նշանակել է «հոտ», հմմտ. *վատ հոտ* (*зловоние* և *благовоние*)¹⁸:

Հետաքրքրական է նաև **հոտ** բառի մի ուրիշ կիրառություն. Հ. Աճառյանը **հոտ** բառահոդվածում բառի բացատրության մեջ գրում է. «... լայնաբար կամ փոխաբերաբար՝ դոյզն նշմարանք, հետք»¹⁹, ՆՀԲ-ում էլ նշվում է *նշանակ*,

¹¹ **Кочергина В.А.**, *Санскритско-русский словарь*, М., 1978, стр. 734.

¹² Նույն տեղում, էջ 732:

¹³ **Ганшина К.А.**, *Французско-русский словарь*, М., 1962, стр. 553.

¹⁴ Նույն տեղում, էջ 246:

¹⁵ ՆԱԲ, հ. 3, էջ 118:

¹⁶ ՆՀԲ, հ. 2, էջ 125:

¹⁷ ՆՀԲ, հ. 2, էջ 135:

¹⁸ **М.Фасмер**, *Этимологический словарь русского языка*, М., I том, стр. 349.

¹⁹ ՆԱԲ, հ. 3, էջ 118:

*նշմարանք*²⁰: Իմաստային նույնպիսի զարգացումներ են առկա նաև հ.-ե. այլ լեզուներում. իռլանդերենում կա *bolad*, նոր իռլ. *boladh*, որոնք ունեն *հոտ* իմաստը, իսկ *ta boladh uaidh* նշանակում է ինչ-որ մի բանի հոտ նշմարել՝ նկատել: Հին անգլերեն *stincan*, նոր անգլերեն *stinkn* ունեն *վատ հոտ* իմաստը, իսկ գործերենի *stiggan* նշանակում է (hit, collide with) *նշան, պատահաբ*²¹: Իմաստային այս խմբում Գ. Ջահուկյանը **հոտել**, **հոտոտել** բայերից բացի նշում է նաև **մզլել** (*բորբոսնել, նեխել*) բայը, նաև **թաշկանալ** (**թոշկանալ, թոշկանալ**) *հայչել, լուծվել, քայքայվել* բայը, որին նա վերագրում է հնդեվրոպական ծագում կապելով հ.-ե. **teu-skh`ta, tau-/*teu* նախաձևի հետ²²: Հ. Աճառյանն արմատական բառարանում **թոշկանալ** բայի ծագման մասին որևէ կարծիք չի հայտնում, բերում է միայն Պետերսոնի կարծիքը, որն այդ բառը կապում է սնկր. *toç* արմատի հետ²³:

Այս խմբի հաջորդ բայը *to see* տեսնել-ն է: Հետաքրքիր է, որ **տեսնել** իմաստի համար հ.-ե. լեզուների արմատները հանգում են տարբեր նախաձևերի: Հայ. տեսանել-ի համար կանխադրվում է **de/r/k'*- արմատը, որը գուգահեռներ ունի սանսկրիտում՝ *derc*, հուն. *δέρκομαι տեսնել, նկատել*, հիռլ. *derc աչք, drech երես*, կիմր. *drem դեմք*²⁴: Հ.-ե. որոշ լեզուներում **տեսնել** բայը հանգում է **ok* «աչք» արմատին. այս արմատից է հայ. **ականնեմ** (**զ-ականնեմ**). գուգահեռներ կան հին հնդկ. *aksi*, հուն. *ὄσσε*, լատ. *oculus*, լիտ. *akis*, թոխ. *Ա ak, Բ ek* բոլորն էլ *աչք* իմաստով: **Տեսնել** իմաստի համար Յ. Պոկոնոնու բառարանում բերվում է **u(e)id*-նախաձևը՝ *տեսնել, իմանալ* իմաստներով. հ.-ե. լեզուներում առկա են հետևյալ արմատները՝ հին հնդկ. *vetti, vidmási vidánti* գիտենալ, ավ. *vaēda vīdarə*, գիտենալ, հուն. *ἴδμενοι*՝ գիտենալ, հայ. եգիտ, հինդկ. *ávidat*, հուն. *ἔφιδε* *գտաննել*:

Հ.-ե. **u(e)id*- նախաձևի այլ ձայնդարձով ձևից է սլավոնական լեզուների *ведать* *գիտենալ* բայը. նույն արմատից է *ведýн* - *կախարդ*, հին ռուս. *вѣдунъ, вѣдь* *գիտելիք, հմայություն*: Հայերենում ևս *գիտակ, գիտուն* իմաստից բացի այդ արմատն ունի նաև *կախարդ, հմայող, քաղղեայ* նշանակությունը՝ այս դեպքում իմաստային համապատասխանությունն դրսևորելով սլավոնական լեզուների հետ²⁵: Հայերենում **u(e)id*- արմատի *տեսնել* իմաստը պահպանված չէ: **Տեսաննեմ** բայի հոմանիշների մեջ Ջահուկյանը նշում է նաև բարբառային **հիսնիլ** (հեսաննել ձևից), ինչպես նաև **ցուցաննեմ** (ցոյց-ից): Հայերենի **ցոյց**-ը ծագում է հ.-ե. **skeu-sk`* ձևից²⁶: Հնդեվրոպական այլ լեզուներում *ցույց տալ* իմաստով արմատները ծագում են հ.-ե. այլ նախաձևերից: Լատիներենում կա *monstrare*, իտալ. *mostrare*, ֆր. *montrer*, որից՝ *monstrum*, որ նշանակում է *հրեշ*,

²⁰ ՆՀԲ, հ. 2, էջ 123:

²¹ Բաբ. *նշվ. աշխ.*, էջ 1023:

²² ՀՄԲ, էջ 261:

²³ ՀՄԲ, հ. 2, էջ 218:

²⁴ ՀՄԲ, հ. 4, էջ 396-397:

²⁵ Տե՛ս ՀՄԲ, հ. 1, էջ 551:

²⁶ Տե՛ս ՀԼՊ, էջ 132:

ճիվաղ, այլանդակ: Նույնպիսի իմաստ ունի հայերեն **ցուցանեմ** բայից կազմված **ցուցք** բառը, որը Ս. Մալխասյանցի բառարանում բացատրվում է *հրեշ, տգեղ, այլանդակ*²⁷: **Ցոյց, ցուցանել** բառի ցուցում՝ *ուղի ցույց տալ, մեկին խորհուրդ տալ* իմաստն է առկա շվեդերենում՝ *visa*, հին անգլերենում կա *wision* ձևը՝ *ուղի ցույց տալ, ղեկավարել* իմաստով ²⁸:

Կ. Բաքի բերած հաջորդ բայը *taste*-ն է, որն ունի ն՝ համ, և՛ համտեսել իմաստները: Հայերենի **համ** բառը Հ. Աճառյանը համարում է անստույգ ծագման. բերում է Լիդենի կարծիքը, ըստ որի՝ այն բնիկ հայերեն է, և կապում է լատ. *sapere ճաշակել, sapor համ*²⁹: Գ. Ջահուկյանը, բերելով Լիդենի կարծիքը, գրում է, որ ինքը ճշտում է կատարում՝ «...կապելով *sap-ի *sab- տարբերակի հետ»³⁰: Յ. Պոկոռնու բառարանում *sap-, sab-* արմատից են *av. višāpa (*viš-sāpa)*՝ *dessen Säfte Gift sind*՝; հայ. համ (**sāpmo-*), լատ. *sapiō, -ere (փորձել) համը, համ ունենալ, sapor համ, համեղ ուտելիք, հին իսլ. sefi qqայություն*³¹: Հայերենում **համ** բառի բայական իմաստի արտահայտության համար գործածվում են հարադրական կազմություններ՝ համ առնել, համ տալ: Համանման երևույթ է նկատվում նաև հ.-ե. մյուս լեզուներում: Բաքը գրում է, որ հ.-ե. մի քանի լեզուներում չկան բայեր *to taste* (համտեսել) իմաստի համար. այդ իմաստն արտահայտվում է համ բառի հետ զգալ, նկատել կամ նման բայեր գործածելով. օր. հունարենում *γεύσις, εως* նշանակում է *համը փորձել*, ի ղ *τῆς γεύσεως՝ համ, δοκίμαζω ստուգել, փորձել*³²: Լատիներենում *sapor, oris* նշանակում է *համ*, իսկ *saporatus՝ համեղ պատրաստված*³³: Ֆրանսերենում *saveur* նշանակում է *համ*, իսկ *savourer՝ համտեսել, վայելել, ճաշակել*: Եկեղեցասլավոներենում կա *вкусъ համ, ճաշակ* բառը, նաև գերմաներենից փոխառված *смак* բառը: Ժամանակից ռուսերենի *кушать* ուտել բայը ունեցել է այլ իմաստ: Ֆասմերի բառարանում բերվում են ռուս. *кушать*, ուկր. *кушати*, հին սլավ. *вкоушати*, սերբախորվաթ. *кушати փորձել*, սլովեն. *kúšati*, չեխ. *z-koušeti փորձել*³⁴, ռուսերեն -*кусить*, բուլղ. *куся փորձում եմ*, սլովեն. *iskúšiti փորձել, փորձության ենթարկել*, չեխ. *kusiti փորձել, համտեսել*³⁵ իմաստներով: Գ. Ջահուկյանը **համ** բառին վերաբերող բաժնում **համ առնում, համ ունիմ** բայերից բացի նշում է նաև իրանական **ճաշակ, ճաշակել** բառերը:

Այս խմբի բառերի քննությունը ցույց է տալիս, որ լեզուներում նույն հասկացույթը տարբեր լեզուներում, անկախ ծագումնաբանական գործոնից, կարող է իմաստային նման փոփոխությունների ենթարկվել:

²⁷ Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1945, հ. 4, էջ 472:

²⁸ Բաք, *նշվ. աշխ.*, էջ 1043:

²⁹ ՀԱԲ, հ. 3, էջ 16:

³⁰ ՀԼՊ, էջ 189:

³¹ Յ. Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 880:

³² И.Х.Дворецкий, *Древнегреческо-русский словарь*, М., 1958, стр. 320.

³³ И.Х.Дворецкий, *Латинско-русский словарь*, М., 1976, стр. 899.

³⁴ М. Фасмер, *Этимологический словарь русского языка*, II т. стр. 439.

³⁵ Նույն տեղում, էջ 431:

Nektar Simonyan - Verbs of the Semantic Group of “Sense perception” in Old Armenian. - The verbs expressing sense perception *qqwul*, *hnunkʻl* (*hnunnunkʻl*), *utkuṭkʻl*, *hwul* (*hwulunkʻl*) are investigated in the article, their parallels in other Indo-European languages, their synonyms and the semantic changes obtained during the historic development of languages have been represented. The investigation reveals that the verbs expressing these concepts have undergone such changes during the historic development of languages that witness about the presence of typological universalities in these languages.

Симонян Нектар - Глаголы семантической группы „Чувственное восприятие,, древнеармянского языка.- В статье рассматриваются глаголы *qqwul*, *hnunkʻl* (*hnunnunkʻl*), *utkuṭkʻl*, *hwul* (*hwulunkʻl*) древнеармянского языка, приводятся соответствующие корни и синонимы других индоевропейских языков. Выявляются как фонетические, так и семантические различия и сходства, происходившие в процессе исторического развития этих языков. В результате обнаруживается, что существуют типологически общие черты в семантических изменениях вышеупомянутых глаголов.

Վարդանյան Սերգեյ (Հայաստան,
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

**ՈՐՈՇ ԴԵՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԽՈՓԱՅԻ
ԽՈՍՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ**

XVIII դ. բռնի կրոնափոխված համշենցի հայերի մի հատվածը, որը XIX դ. հեռացել է Թուրքիայի Տրապիզոնի նահանգի Համշենի գավառից, համախումբ ապրում է Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչքայի գավառներում, Սաքարյայի նահանգի Քարասու և Քոջաալի, Դյուզլեի նահանգի Աքչաքոջա գավառներում, ինչպես նաև Ղազախստանում և Ղրղզստանում, որտեղ նրանք աքսորվել են 1944թ. Թուրքիային սահմանակից Աջարիայի գյուղերից: Ղազախստանից և Ղրղզստանից էլ վերջին 3-4 տասնամյակների ընթացքում նրանք արտագաղթում են Ռուսաստանի Կրասնոդարի երկրամաս, Ռոստովի և Վորոնեժի մարզեր: Մեր հաշվումներով, այսօր աշխարհի տարբեր երկրներում բնակվում են մայրենի բարբառով հաղորդակցվել կարողացող շուրջ 45-50 հազար մահմեդական համշենցիներ: Այսպիսի սփռվածությունն ու լեզվական տարատեսակ միջավայրերում ապրելն իր ազդեցությունն է թողել նրանց լեզվի վրա, որն իրենք անվանում են «համշենցի», թուրքերը՝ «հեմշինջե», այսինքն՝ համշեներեն: Մենք նպատակահարմար ենք համարում գիտական հոդվածներում այն կոչել Համշենի բարբառի Խոփայի խոսվածք, քանի որ կրոնափոխ համշենցիների ամենաշատ բնակավայրերը՝ 20-ից ավելի գյուղ ու գյուղակ, գտնվում են Արդվինի նահանգի Խոփայի գավառում:

Հայախոս համշենցիներից զատ «համշենցի» բազմաթիվ բառեր և տեղանուններ են օգտագործում նաև այժմ վարչականորեն Ռիզեի նահանգի մեջ մտնող Հեմշին (Համշեն), Չամլրհեմշին, Իքիզդերե, Չայելի, Ֆընդըքլը, Արդեշեն և Փազար, ինչպես նաև Տրապիզոնի նահանգի Արաքլը, Սյուրմենե և այլ գավառների թուրքախոս դարձած կրոնափոխ համշենցիները:

2009թ. փետրվարի 19-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ աշխարհի վտանգված լեզուների հրապարակած ցանկում Թուրքիայից ընդգրկված էր 18 լեզու, որոնցից արևմտահայերենը, լազերենը, Պոնտոսի հունարենը, աբխազերենը, նաև, այսպես ասած, համշեներենը, բնութագրված էին որպես «բացահայտ վտանգված»: Ուստի պետք է շտապել Խոփայի խոսվածքով հնարավորինս շատ բանահյուսական նյութեր գրառել, որոնց միջոցով ավելի բազմազան է ներկայանում կրոնափոխ համշենցիների լեզվաշխարհը, որն ունի շատ հետաքրքիր դրսևորումներ:

Ներկայացնում ենք Խոփայի խոսվածքում կիրառվող տասը բառ, որոնք այդ ձևով և տվյալ իմաստով այլ բարբառներում չեն հանդիպել:

1. Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչքայի գավառներում աճում է մի մշտադալար բույս, որը մագլցում է ծառերի, շինությունների,

ցանկապատերի վրա: Այն գրական հայերեն կոչվում է **բաղեղ**, իսկ կրոնափոխ համշենցիներն անվանում են **«սիյոյ»**¹: Խոփայի խոսվածքով **«սիյուշ»** նշանակում է **«փաթաթվել»**, **«գրկել»**, ուստի այդ բուսանունը թարգմանվում է **«փաթաթվող»**: Իսկ **սիբելուն** նրանք ասում են **«հազ էնուշ»**: **«Հազ էնուշ»** նշանակում է նաև **«հարզել, համակրել, հավանել, դուր գալ»**: Աբխազիա և Կրասնոդարի երկրամաս գաղթած քրիստոնյա համշենահայերի սերունդներն այդ բույսն անվանում են **«սիբոյ»**, թեև վերջին տասնամյակներում, ռուսախոսության հետևանքով, այս և շատ ուրիշ հին բուսանուններ մոռացվում են: Իսկ որ այն հին է, վկայում են դեռևս XIX դ. վերջին Բաբկեն վարդապետ Կյուլեսերյանի կատարած գրառումները: Երբ 1897թ. Ճանիկի (Սամսոն) նոքաստեղծ թեմի առաջնորդ դարձավ երիտասարդ հոգևորական Բաբկեն վրդ. Կյուլեսերյանը (1928-ից՝ Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս), իր պաշտոնավարման կարճ ժամանակահատվածում (մինչև 1899թ.) նա Տրապիզոնի նահանգի Սամսոնի (Ճանիկի, Ջանիքի) գավառում՝ Չարշամբայի, Ունիեի, Թերմեի և Ֆատցայի գավառակների համշենահայերից գրառեց նրանց բարբառի նմուշներ, որոնք 1899-1900թթ. հրատարակեց Կ.Պոլսի «Բիրակն» լրագրում², որի 1900թ. համարներից մեկում կարդում ենք. «Սիբոյ-Օառերուն բունը փակչելով փաթթուող մշտադալար բաղեղ մը, որ իբր թէ սիբելով փաթթուած է: - Համշենցիք Բողողը = բաղեղը թրք. սարմաշըզ կ'որոշեն սիբողէն»³: Իսկապես, քրիստոնյա համշենահայերը **սիբելուն** ասում են ն' **«սիբուշ»**, և՛ **«հազ ընուշ»**, թեև երկրորդը երբեմն օգտագործվում է նաև **«հարզել»**, **«հավանել»** իմաստով:

Համշենի բարբառը դեռևս 1910թ. ուսումնասիրել է նաև Հ. Աճառյանը: Նա, երկու շաբաթ մնալով Տրապիզոնում, քաղաքի բնակիչներից, մոտակա գյուղերի գյուղացիներից և ուսուցիչներից հավաքել է բարբառային նյութեր, որոնք հաջորդ տարի հրատարակել է «Հայ բարբառագիտութիւն»⁴ աշխատության մեջ, նաև 1913թ. Թիֆլիսում հրատարակված «Հայերէն գաւառական բառարան» գրքում: Վերջինից ներկայացնում ենք «սիբոյ» բուսանվան մասին նրա բացատրությունը. «Հմշ. տեսակ մը մշտադալար բաղեղ է, որ ծառերուն բունին փակչելով կը փաթթուի»⁵: Հ. Աճառյանը Համշենի բարբառը ուսումնասիրել է նաև 1944թ. օգոստոսին Աբխազիայում՝ Գագրայում, բայց «Քննու-

¹ **Ս.Վարդանյան**, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանասիրությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)*, Ե., 2009, էջ 317, 344:

² **Բ. Վ. Կիլեսերեան**, *Ճանիկի վիճակին մէջ գտնուող համշենցիներու գաւառաբարբառը*. - Բիրակն, Կ.Պոլիս, 1899, թիւ 31-32, 35, 38-39, 41, 44, 47-48, 49, 1900, թիւ 1, 2, 3, 4, 6, 8:

³ Նույնը, 1900, թիւ 4:

⁴ **Հ. Աճառեան**, *Հայ բարբառագիտութիւն. ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով)*. - Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա - Նոր-Նախիջեւան, 1911, էջ 178-195:

⁵ **Հ. Աճառեան**, *Հայերէն գաւառական բառարան*. - Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 966:

թյուն Համշենի բարբառի»⁶ գրքի բառարանում այս բուսանունը չի ընդգրկվել մեզ անհայտ պատճառով:

2. Խոփայի և Բորչքայի գավառների համշենցիները փայտփորիկին ասում են **«փեթաձաքլար»**: Բացատրում են, որ **«փեթաձ»** նշանակում է **«փրտած»**: Կարծում ենք՝ այս բառի ծագումը հասնում է դարերի խորքը. գրաբարում **«փայտ»** բառի հոգնակի սեռականը կլինի **«փայտից»**, հետագայում **«փայտիցը»** ժողովրդական ստուգաբանության հետևանքով շփոթվել է **«փտածի»** հետ: Նշենք, որ **«փայտ»** բառը գրաբարում ունեցել է նաև **«ծառ, տունկ»**⁷ իմաստը, օրինակ՝ **«Փայտ պտղաբեր: Փայտս ամենաբերս: Փայտ փշաբեր: Փայտ կենաց: Ի փայտեն կենաց: Յամենայն փայտէ՝ որ է՝ ի դրախտիդ, ուտելով կերիջիր, բայց ՚ի փայտեդ գիտելոյ զբարի և զչար»**⁸: Այսպիսով, **«փեթաձաքլար»** բառը ստուգաբանվում է **«ծառերի աքլոր»**: Իսկ **«փայտ»**⁹ և **«աքլոր»**¹⁰ բառերը, ըստ Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի, բնիկ հնդեվրոպական ծագման բառեր են: Հիշեցնենք, որ հայերենում նման կազմությամբ ունենք այլ թռչնանուններ ևս, օրինակ՝ ցախաքլոր, անտառաքլոր, ցախահավ, անտառահավ, ցախասարյակ¹¹: Արխագիա և Կրասնոդարի երկրամաս գաղթած համշենահայերի սերունդները, ըստ մեր դաշտային գրառումների, փայտփորիկին ասում են **«ծրկոն»**, գործածում են նաև **«փսնդփօրիզ»** բառը, որը, կարծում ենք, գրական հայերենի ազդեցության հետևանք է: Նախկինում ավելի տարածված է եղել **«ծգան»** թռչնանունը. այդ է վկայում Բաբկեն վրդ. Կյուլեսերյանի բառարանը, որում բառը ներկայացված է այսպես. **«Ծգան (փայտփոր)»**: Նա գրում է. **«Ծգանը չարագուշակ է ըստ համշենցոց»**¹²: Իսկ Հ. Աճառյանը թեև իր «Հայերեն գալարական բառարանում» նշում է, որ համշենցիները **ծառակուտկուտին (փայտփորին)** ասում են **«ծգան»**¹³, բայց հետագայում, «Քննություն Համշենի բարբառի» գրքում այդ մասին չի հիշատակում, այլ գրում է, որ **«ծքոն»** է կոչվում **«փայտփորիկ թռչունի հանած ձայնը»**¹⁴:

3. Խոփայի և Բորչքայի գավառների համշենցիները շերեփուկին ասում են **«քեղալբոջիզ» (կըղալբոջիք)**, որ նշանակում է **«գղալի նման պոչ ունեցող»**: Ըստ մեր դաշտային գրառումների՝ Արդվիհի նահանգի հարևան Ռիզեի նահանգի Փազարի գավառի թուրքախոս դարձած համշենցիների Խաչափիթ (այժմ՝ Սուբաշը) գյուղում ևս **«քըղալբոջիզ»** են ասում: Նույն նահանգի Չամլը-

⁶ Հ. Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի*, Ե., 1947:

⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Վենետիկ, 1837, էջ 930:

⁸ Նույն տեղում:

⁹ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան*, Ե., 1987, էջ 149, 259: Նույնի, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 757:

¹⁰ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1971, էջ 368, 369: Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*, էջ 131, 174, 208, 276: Նույնի, *Հայերեն ստուգաբանական բառարան*, էջ 106:

¹¹ *Ճամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. 4, Ե., 1980, էջ 543:

¹² Բ. Վ. Կիլևերեան, նշվ. աշխ., թիւ 44:

¹³ Հ. Աճառեան, *Հայերեն գալարական բառարան*, էջ 509, 510:

¹⁴ Հ. Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի*, էջ 261:

հեմշին գավառի թուրքախոս համշենցիները, տեղացի հայրենագետ Ուղուր Բիրյոլի (ծնվ. 1979թ.) կազմած բառացանկի համաձայն, նույնպես ասում են **«քեդալփոչիք» (kedalpoçik)**¹⁵: Ըստ «Հայկական հանրագիտարան հրատարակչության» տնօրեն Հովհաննես Այվազյանի բանավոր վկայության՝ Ջավախքում շերեփուկին ասում են **«գրդըլպոչ» («կըտըլպոչ»)**: Նույնը հաստատում են նաև ուրիշ ջավախքցիներ: Ջարմանալի է, որ Կարնո և Ջավախքի հայությանը նվիրված Երվանդ Լալայանի¹⁶, Ղազար-Չարըզի¹⁷, Ստեփան Մալխասյանցի¹⁸, Վարդ Բոդյանի¹⁹ գրքերում, Կարնո և Ջավախքի ժողովրդական հեքիաթներում²⁰, «Հայոց լեզվի բարբառային բառարանի» համապատասխան հատորներում²¹ ու Հ. Մկրտչյանի «Կարնո բարբառ»²² ուսումնասիրության մեջ այդ բառը չի արձանագրված:

Հետաքրքրական է, որ Խոտորջրի բարբառում **«գղլպոչ»**-ը բուսանուն է, իսկ **շերեփուկին** պարզապես ասում են **«գղալիկ»**²³: Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենահայերը **շերեփուկին** ասում են **«շերեպուգ»**:

4. Խոփայի և Բորչբայի գավառների համշենցիները **մորեխին** և **ծղրիդին** ասում են **«թուսթերչիչ» («թուսթերչիգ»)**: **«Թուսթերչուշ»** նշանակում է **ցատկել**, **«թուսթերչիչ» («թուսթերչիգ»)**՝ **«ցատկող»**: Ռիզեի նահանգի Չամլըհեմշին գավառի թուրքախոս համշենցիները **մորեխին** և **ծղրիդին** ասում են **չիփչիփան (çipçipan)**²⁴, իսկ Փազարի գավառի թուրքախոս համշենցիների Խաչափիթ (Սուբաշը) գյուղում, ըստ խաչափիթցի հայրենագետ Իբրահիմ Քարաջայի (ծնվ. 1960թ.) «Հեմշին. պատմություն, լեզու, ավանդույթներ և սովորույթներ» թուրքերեն գրքի, ասում են **«zitik»**²⁵ (**զիթիք**): Սակայն մենք Չամլըհեմշին գավառի հյուսիսում՝ Քաջքարյան լեռների լանջերին գտնվող «Քիթո» յայլայի «Քոչիրա» իջնանատանը, նրա վարձակալից՝ խաչափիթցի Սերհան Փիրփիրից (ծնվ. 1961թ.) 2011թ. գրառել ենք Խաչափիթում դեռևս օգտագործվող մի շարք հայերեն բառեր, այդ թվում՝ **«մօեխ»**, **մորեխ**, ուստի ենթադրում ենք, որ կամ երկու բառն էլ՝ **«զիթիք»** և **«մօեխ»**, գործածվում են, կամ՝ Իբրահիմ Քարաջան սխալվել է, ակնհայտորեն հայերեն **«գատիկ»** միջատի անունից ծագած **«զիթիք»**-ը վերագրելով **մորեխին**:

¹⁵ U. Biryol, *Kaçkarlar'da Bulut Olsam*, Ankara, 2011, s. 204.

¹⁶ Ե. Լալայան, *Երկեր*, հ. 1, Ե., 1983:

¹⁷ Ղազար-Չարըզ, *Յուշամատենան Բարձր Հայքի, Կարինապատում*, Պէյրուք, 1957:

¹⁸ *Սոակներ, ավանդություններ, անեկդոտներ (Ախալցխայի բարբառով)*, գրի առավ Ստ. Մալխասյանց, Ե., 1958:

¹⁹ Վ. Բոդյան, *Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանավեպեր*, Ե., 2014:

²⁰ *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 4, Ե., 1963:

²¹ *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Ա, Ե., 2001, հ. Գ, Ե., 2004:

²² Հ. Մկրտչյան, *Կարնո բարբառ*, Ե., 1952:

²³ Հ. Յ. վ. Հուլունեան և Հ. Մ. վ. Հաճեան, *Յուշամատենան Խոտորջրի*, Վիեննա, 1964, էջ 437:

²⁴ U. Biryol, *Kaçkarlar'da Bulut Olsam*, s. 198.

²⁵ I. Karaca, *Hemşin. Tarih, Dil, Gelenek ve Görenekler*, İstanbul, 2006, s. 124.

Հավելենք, որ Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենցիները մորեխին և ծղրիդին ասում են **«մօրէխ»**, նաև թուրքերեն **«çekirge»** (չեքիրգե) բառի իրենց արտասանական տարբերակները՝ **«չակուրգա»**, **«չակիրգա»**, **«չէկուրկա»**:

5. Խոփայի և Բորչքայի գավառներում կա ճնճղուկազգի մի թռչուն, որի արունների կուրծքը և փորիկը կարմիր է: Թռչնակը ռուսերեն կոչվում է **«снегирь»** (նաև՝ «красногрудый снегирь»), հայերեն՝ **խածկտիկ, եզնակն, եզնակահավ, կարմրակուրծիկ**²⁶: «Համշենցնակ» կոչվում է **«գարմեզուցք»**: Կարծում ենք՝ այն կազմված է **«կարմիր»** և **«կուրծք»** բառերից, բայց համշենցիներն այն չեն կարողանում ստուգաբանել, քանի որ **«կուրծք»** բառը չունեն, կրծքին ասում են **«ձիձ»**, իսկ կրծքավանդակին՝ **«սիրդ»** (արդալացիները՝ **«սիրդ»**): Նրանք նախկինում ունեցել են **«կուրծք»** բառը. այդ է վկայում հենց այս թռչնանունը:

6. Ինչպես նշեցինք, Խոփայի խոսվածքով կրծքին ասում են **«ձիձ»**, համապատասխանաբար **կրծկալին** ասում են **«ձիձաման»**, **«ձիձօսն»**:

7. **Ողնաշարին** ասում են **«բօջբէլօխ»**: Ըստ մեր դաշտային գրառումների՝ Ռիզեի նահանգի Հեմշին (Համշեն) գավառի թուրքախոս համշենցիները ևս ասում են **«բօջբէլօխ»**: Մական 1956թ. նույն գավառի Չամլըթեփե (նախկին Զուղա) գյուղում ծնված ստամբուլաբնակ լրագրող Ադնան Գենչի «Աշխատասեր կանանց երկիրը. Հեմշին» թուրքերեն գրքում գրված է, որ իրենք **«boçkeloh»** (**«բօջբէլօհ»**) **ողնուղեղին** են ասում²⁷: Երբ 2010թ. Ա. Գենչի հետ շրջագայում էինք Համշենի գյուղերով, նրան հարցրինք՝ իրոք իրենք «խ»-ի փոխարեն «հ» են ասում: Պարզվեց, որ նրա համագյուղացիները ևս **«բօջբէլօխ»** են ասում, բայց քանի որ թուրքերենը «խ» տառ չունի, ուստի ինքը բառը գրել է «հ»-ով, որը, հասկանալի է, սխալ է: Իսկ Ռիզեի նահանգի Չայելիի գավառի Յըլդըզելի (նախկին Ռաշոթ) գյուղի թուրքախոս համշենցիները, ինչպես 2013թ. Ստամբուլում մեզ ասաց 1976թ. այդ գյուղում ծնված, Ստամբուլի համալսարաններից մեկում թուրքերեն լեզու և գրականություն դասավանդող Այշենուր Քոլիվարը, որ նաև ճանաչված երգչուհի է և Համշենի բարբառով երգեր է երգում, իրենց գյուղում ասում են **«բօջբիլուխ»**՝ նկատի ունենալով **պոչի սկզբնամասը**:

8. Խոփայի և Բորչքայի գավառների համշենցիները թեն **գետին** ասում են **«քէդ»**, բայց **գետակին** ասում են **«փօղօց»**: Նշենք, որ Ղրղզստանի և Ղազախստանի կրոնափոխ համշենցիներից մենք գրանցել ենք **«փօղօց»** բառի իմաստային այլ տարբերակներ՝ «ճանապարհ, որն անցնում է կիրճի, խորը ձորի հատակով կամ բլուրների ստորոտների միջով»²⁸: Ըստ Հ. Աճառյանի «Հայերեն գաւառական բառարանի»՝ Խոյի բարբառով **«փողոց»** նշանակում է

²⁶ *Ռուս-հայերեն բառարան*, Ե., 1968, էջ 1133: *Հայկական սովետական հանրագիտարան*, հ. 4, Ե., 1978, էջ 707-708:

²⁷ **A. Genç**, *Çalışkan Kadınlar Ülkesi, Hemşin*, İstanbul, 2005, s. 116.

²⁸ **Ս. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 325, 372:

«աղբանոց», Վանի բարբառով՝ **«արտաքնոց»**, իսկ քաղաքային փողոցին Վանի բարբառով ասում են **«փողան»**²⁹: Համաձայն «Հայոց լեզվի բարբառային բառարանի»՝ **«փողոց»** բառը Կեսարիայի, Մուշի, Ուրմիայի և Վանի բարբառներում ունի **«աղբանոց»** իմաստը³⁰: Հայտնի է, որ հնում որպես արտաքնոցներ և աղբատարներ են օգտագործվել առուներն ու գետակները: Խոփայի գավառի գյուղերում այսօր էլ գետակները կատարում են աղբատարի դեր: Քանի որ այդ գյուղերը գտնվում են Սև ծովի ափամերձ անտառաշատ սարերում, որտեղ հաճախ են անձրևներ գալիս, այդ իսկ պատճառով այդ գյուղերում կան բազմաթիվ գետակներ, որոնց շուրջն էլ ձևավորվել են թաղամասերը: Յայլաներում, սարերում և հովիտներում հոսող գետակներին ու վտակներին նույնպես ասում են **«փողոց»**: Հ. Աճառյանը **«փողոց»** բառի արմատը համարում է **«փող»**-ը, որ նշանակում է **«նեղ անցք»**, և գրում է, որ այն **«ճոխ ածանցներով աճած մի արմատ է»**³¹: Նա թվարկում է այդ արմատով ստեղծված բազմաթիվ բառեր³², բայց դրանց թվում **«գետակ»** իմաստով բառ չկա, ուստի կրոնափոխ համալսարանի բառապաշարի այդ բառը ընդարձակում է **«փողոց»** բառի մեզ ծանոթ իմաստները:

Իսկ Չամլրհեմշինի գավառի թուրքախոս համալսարանները գետերը, գետակներն ու վտակները **«ջուր»** են անվանում, օրինակ՝ Չամլրհեմշինի հյուսիսում Քաջքարի լեռների լանջերը, իր ջրառատությամբ աչքի ընկնող յայլաներից մեկն անվանում են «Ջերովիթ» (ջուր + հովիտ), մյուսը՝ «Չեյմաքջուր» (ճերմակ + ջուր). այս անունով կա նաև լիճ, իսկ «Փաաքջուր» (բարակ + ջուր) յայլան իր անունն ստացել է նրա միջով սրբնթաց հոսող մի շատ նեղ գետակի անունից: Կա նաև «Քօթէնջուր» անունով մի յայլա: Հասկանալի է, որ յայլաները գտնվում էին գետերի, գետակների ու աղբյուրների մոտ, ուստի գետ ու գետակներին տրվող անունները հաճախ դառնում էին նաև յայլայի (սարատեղիի) անվանում:

9. Հետաքրքիր է **«ձիափ»** բառը, որը նշանակում է **«քաղաք, առևտրի կենտրոն, քաղաքային կենտրոն»**: «Գրառումներ Հեմշինի մահմեդական հայերի խոսվածքի մասին» հոդվածում ֆրանսիացի նշանավոր բանասեր Ժորժ Դյումեզիլը նշում է, որ Խոփայի գավառի համալսարանների գյուղերը լեռներում են, իսկ խանութները գտնվում են ծովափին՝ Խոփա քաղաքում, ուստի նրանք իջնում են **ծովափ**՝ **«ձիափ»**, նույնն է թե՛ **քաղաք, շուկա**³³: Հարվարդի համալսարանի աշխատակիցներ Բերթ Վոքսը, Սերջիո Լա Փորթան և Էմիլի Թաքերը «Լեզվաբանական գրառումներով ազգագրական նյութեր մահմեդա-

²⁹ Հ. Աճառյան, *Հայերեն գաղափարական բառարան*, էջ 1077: **Նույնի**, *Հայերեն արմատական բառարան*, հ.4, Ե., 1979, էջ 513:

³⁰ *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Է, Ե., 2012, էջ 22:

³¹ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ.4, էջ 512:

³² Նույնը, էջ 512-514:

³³ G. Dumézil, *Notes sur le parler d'un Arménien musulman de Hemşin*. - Mémoires de L'Académie Royale de Belgique, Classe des Lettres, tome LVII, fasc. 4, Brussel, 1964, p. 15.

կան հեմշինցիներից» հողվածում անդրադառնում են նաև այս ստուգաբանությանը, և այն, որոշ վերապահումով, ընդունելի են համարում³⁴:

Հավելենք, որ Թուրքիայի համշենցիները քաղաքը կոչում են **«շահար»**: Նրանք **«ձիափ»** բառը չեն կարողանում ստուգաբանել, քանի որ **ծովի ափին, ծովեզրին** ասում են **«ձովի ջօթ»**, իսկ **«ափ»** ասում են միայն **ձեռքի ափին**: Ծովափ գնալիս չեն ասում՝ **«Յէս ձիափ գերթամ»** կամ **«Յէս ձովնիուս գերթամ»** (Ես դեպի ծով (ծովի կողմ) եմ գնում), նրանք **«ձովնիուս»** են ասում հետևյալ դեպքում՝ **«Ձովնիուս փութ աա, գէմի գօ»** (Ծովի կողմը նայիր, նավ կա): Ծովի ափ գնալիս նրանք ասում են՝ **«Յէս ձովէ (ձով) գերթամ»** (Ես ծով եմ գնում), կամ բարձրադիր գյուղից ծովափ իջնելիս ասում են՝ **«Յէս ձովնիվա գերթամ»** (Ես ծովն ի վար եմ գնում): Ծովափին գտնվող լողափին էլ ասում են **«փլաժ»**: Այն, որ նրանք նախկինում **«ծովափ»** իմաստն արտահայտող բառ ունեցել են, հաստատում է նաև խոսվածքում գործածական **գետափ՝ «քեդափ»**³⁵ բառը, օրինակ՝ **«Քեդափանէ դադաքէ խաղա գուն»** (Գետափին երեխաները խաղում են):

Կարծում ենք՝ **«ձիափ»** բառը, ձեռք բերելով **«քաղաք», «առևտրի կենտրոն»** իմաստները, հետզհետե դուրս է մղել բառի **«ծովի ափ»** իմաստը և սկսել է կիրառվել նաև Բորչքա քաղաքի համար, որը ծովափից մի քանի տասնյակ կմ հեռու է: Ուշագրավ է, որ Խոփայի գավառի համշենցիները մոտակա ծովափնյա քաղաքներին՝ Արհավիին, Արդեշենին, Փագարին կամ Ռիզեին **«ձիափ»** չեն ասում:

10. Եվ, վերջապես, **«փերնիչ»** բառի մասին, որը նշանակում է **«ոստիկան»**, թուրքերեն՝ **«փոլիս»**: Ըստ մեր հարցումների՝ այն սկսել են օգտագործել 1970-ական թթ.: Բառը կիրառելու անհրաժեշտությունն ավելի է մեծացել 1980թ., երբ Թուրքիայում կատարված ռազմական հեղաշրջման օրերին քաղաքական ձախակողմյան հայացքներ ունենալու պատճառով տասնյակ հազարավոր մարդկանց բանտարկեցին: Քանի որ կրոնափոխ համշենցիների մեջ էլ շատ են ձախակողմյան հայացքներով մարդիկ, մարքսիստներ ու կոմունիստներ, ապա շատ համշենցիներ էլ հետապնդվեցին, ձերբակալվեցին ու բանտարկվեցին, և օտարներին հասկանալի **«փոլիս»** բառի փոխարեն հասարակական վայրերում սկսեցին ավելի հաճախ ասել **«փերնիչ»**, այսինքն՝ **«բրոնող»**: Այսօր էլ բառը լայնորեն կիրառվում է սրճարաններում ու թեյարաններում, մասնավոր գրույցների ժամանակ: Այն, ծագելով որպես ծածկաբանություն, ժամանակի ընթացքում խոսվածքի բառապաշարի մաս է դարձել: Այս առիթով մեկ դիտարկում Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Լեզվաբանական բառարանի» «Ծածկաբանություն» եզրույթի բացատրության մասին, որում կարդում ենք. «Հասարակության ապադասակարգայնացած խավերի (գողեր և այլն) ժարգոններին, ծածկալեզուներին հատուկ բառ, դարձվածք, արտահայտություն, որոնք կարող են գործածվել նաև գրա-

³⁴ B. Vaux, S. La Porta, E. Tucker, *Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes*. - Annual of Armenian Linguistics, Volume 17, Cleveland State University, 1996, pp. 40-41.

³⁵ Ս. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 232, 326, 347:

կան լեզվի մեջ ոճավորման նպատակով»³⁶: Կարծում ենք՝ ծածկաբանությունը միայն ապադասակարգայնացած խավերին և գողերին չէ անհրաժեշտ, այլև քաղաքական գործունեության համար հետապնդումների ենթարկվողներին, այլախոհներին, նաև ռազմական, պատերազմական իրավիճակներում հակառակորդի թիկունքում գործունեություն ծավալողներին և ընդհանրապես անհրաժեշտության պարագայում:

Վերջում նշենք, որ վերոնշյալ 10 բառով չի սպառվում Խոփայի խոսվածքում հանդիպող յուրօրինակ բառերի ցանկը, մենք ապագայում կանդրադառնանք այդպիսի այլ բառերի ևս:

Sergey Vardanyan - Some Observations about the Hopa Variety of the Hamshen Dialect. - The Muslim Hamshentsi, who make up the population of more than twenty villages in the Hopa and Borchka districts of the Turkish province of Ardivin, speak the Armenian language predominantly in the Hopa variety of the Hamshen dialect. The article presents 10 additional words which do not appear in other dialects in that form or with that meaning. These additional words are the following: «սիյօղ» (siyogh), «փէթաձաքլար» (petadzaqlar), «քէդալբօչիգ» (qedalbochig), «թուսթէրչիչ» (tusterchich), «գարմէգուցք» (garmegutsk), «ձիձաման» (dzidzaman), «բօչքէլօխ» (bochqelokh), «փօղօց» (poghots), «ձիափ» (dziap) and «փէրնիչ» (pernich). The author further discusses several Armenian words preserved in the lexicon of the Turkish-speaking Hamshentsi from the province of Rize.

Сергей Варданыян - Некоторые наблюдения о Хопском говоре Амшенского диалекта. - Амшенцы-мусульмане, проживающие в более чем 20-и деревнях уездов Хопы и Борчка Ардвинской провинции Турции, говорят на армянском, используя Хопский говор Амшенского диалекта. В статье представляются 10 слов: «սիյօղ» (сийох), «փէթաձաքլար» (петадзаклар), «քէդալբօչիգ» (кедалбочиг), «թուսթէրչիչ» (тустерчич), «գարմէգուցք» (гармэгуцк), «ձիձաման» (дзидзаман), «բօչքէլօխ» (бочкелох), «փօղօց» (похоц), «ձիափ» (дзиап) и «փէրնիչ» (пернич), которые не встречаются в других диалектах в этой форме и в этом значении. Автор ссылается также на некоторые армянские слова, сохраненные в языке туркоговорящих амшенцев провинции Ризе.

³⁶ Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, *Լեզվաբանական բառարան*, Ե., 1975, էջ 143-144:

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ Ն Ե Ր

Բառնասյան Ջեմմա (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՂ ԴԵՐԱՆՈՒՆԵՐԸ (իմաստագործառական քննություն)

Ուսումնասիրության առարկա դարձնելով հայերենի բարբառներում առկա դերանունները՝ տարիների ընթացքում իմաստագործառական քննության մեջ ներկայացրել ենք ընդունված հերթագայությամբ՝ անձնական, ցուցական, անորոշ, որոշյալ, ժխտական, հարցական, հարաբերական և փոխադարձ: Գիտական զեկուցումներով ու հոդվածներով մասնավորապես անդրադարձել ենք դերանվանական ինքնատիպ ձևերով աչքի ընկնող մի շարք բարբառների ու բարբառախմբերի: Այս անգամ ներկայացնում ենք Վանի բարբառում գործառող դերանունները՝ ներառելով մեր ուսումնասիրությունների ընթացքում ներկայացված համապատասխան իրողություններ և դրանց հավելելով այդ բարբառին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ ինչպես բարբառագիտական և բանահյուսական ուսումնասիրություններն ամփոփող մենագրություններից, այնպես էլ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում առկա՝ Վանի բարբառի տարբեր խոսվածքների գրանցումներից:

Ինչպես հայտնի է, Հ.Աճառյանը Վանի բարբառի ուսումնասիրությամբ զբաղվել է դեռ անցյալ դարի սկզբին, սակայն աշխատանքն ավարտին է հասցրել կես դար հետո միայն: Այդ արժեքավոր մենագրության մեջ ներառված են նաև բանահյուսական նյութեր՝ հեքիաթներ, առածներ, ասացվածքներ, գավեշտական պատմություններ ու պարերգեր, որոնցում կարելի է գտնել լեզվական հարուստ նյութ բարբառային այս կամ այն երևույթին անդրադառնալիս: Մենագրության՝ դերանուններին նվիրված հատվածում Հ.Աճառյանը Վանի բարբառի անձնական դերանունների հոլովական համակարգում առկա յուրօրինակություն է համարում եզակի առաջին դեմքի *յէս* դերանվան տրական ու հայցական հոլովաձևերը՝ *ձի-ձիկ, զի-զիկ*, իսկ բացառականում՝ *ձիյնից, ձինէ, ձրկնէ*: Օրինակ՝ *Ի՞նչ կուզես ձիյնից* (ինձնից): Այդ հոլովաձևը Աճառյանը համարում է նախավանկի անկումով *ինձի(կ)* ձևից սերող, որն էլ տալիս է այն հարցի պատասխանը, թե բառակարգի ձայնեղ բաղաձայնն ինչու օրինաչափորեն չի խլացել (*ձ>ծ*), ինչպես *ծէ* (*ձեզ*): Ասենք՝ *Արե՛վ կանե՞ք ծէ (ձեզ) քա՛վոր*: Դերանվանական ինքնատիպ ձևեր շատ կան Վան-Վասպուրական ազգագրական գոտու բանահյուսական նմուշներում: Վանեցի կանանց կոճվն արտացոլող բանահյուսական պատառիկից ներկայացնենք երկու օրինակ: Այսպես՝ *Քիչ մընաց, վոր սոյի թակ խանի ձիկ տըփի: Արե՛, արե՛՛ ձիկ կէ՛՛*¹:

¹ Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 216:

Վանի բանահյուսության մեջ առատորեն վկայված են *ձի-ձի(կ)*, *քի* տրական հոլովածները, որոնք ակնհայտորեն *ինձ+ի*, *քէզ+ի* հոլովածների կրճատ կամ մաշված ձևերն են: Արագախոսության ընթացքում կրճատված բառերն ու բառաձևերը կարող են անհասկանալի թվալ և հնչյունափոխական օրենքին չհամապատասխանելու տպավորություն թողնել: Հենց այդ պատճառով էլ Հ. Աճառյանը *ձի-ձիկ-ձիզնից* կամ *ձրկնէ* հոլովածների մասին կարծիք է հայտնում, թե «բարբառին անձանոթ մարդու համար դժվար կլինի տարբերել՝ *ձիզնից* (ինձնից) և *ձէզնից* (ձէզնից)»²: Բերենք օրինակներ, ասենք, Վանա պարերգերից՝ *Իմ յար թօ տուն կէր, ձիյ անուշ քուն կէր*³: *Արէ՛ յար, արէ, խրոսով մի՛ մընա, Աշխարն ի անցվօր, ձիկ-քէ չի մընա*⁴:

Հ.Աճառյանը բառերի ու բառաձևերի մաշվելու և կրճատվելու պատճառը հաճախադեպ գործածությունն է համարում: Վանի բանահյուսության մեջ շատ է հանդիպում նաև *զիկ* հայցական հոլովածը: Այսպես՝ *Խէրիք ի զիկ խաչ խանէս*: Բերվող օրինակում *զ* նախդրի կողքին մնացել է միայն *-իկ* մասնիկը: Կամ, ասենք, մեկ այլ օրինակում՝ *Էտա տրդէն պէ մօ զի* (ինձ մոտ)⁵:

Դերանվանական մի հետաքրքիր օրինակ էլ գտել ենք Վանի Արճակ գյուղի ազգագրությանն ու բանահյուսությանը նվիրված մենագրության մեջ՝ *հընձիկ* (ինձ համար)՝ հավանաբար, *ի* նախդրի հավելման արդյունքում առաջացած: Այսպես՝ *Տը, սիվավոր, անսիրտ մէրիկ, Խրոֆիկ խօջէն հընձիկ էրի կ*⁶: Վանի բարբառի Շատախի խոսվածքում, որը բարբառագետ Մարո Մուրադյանը դիտարկել է որպես առանձին բարբառ, առաջին դեմքի դերանվան սեռական հոլովի արժեքով առկա է հետաքրքիր մի ձև՝ *յէս*, ինչպես, օրինակ՝ *Յէս յար տուն չէր, նըստա լացի*⁷:

Հայերենի բարբառներում դերանվանական ինքնատիպ ձևերի մասին խոսելիս բարբառագետ Ա.Գրիգորյանը ուշադրության է արժանացնում այն իրողությունը, որ հայերենի որոշ բարբառներում, այդ թվում նաև Վանի բարբառում, անձնական դերանունների բացառական և գործիական հոլովածների համար սովորական է վերլուծական կազմությունը: Այսպես՝ Վանի բարբառի Մոկսի խոսվածքում առկա է տրական հոլովածնի գուգորդումը՝ *ինի* բառմասնիկի հետ, իսկ, ասենք, գործիականն արտահայտվում է օրինաչափ հընչյունափոխություն կրած *հետ* (այս բարբառում՝ *խէտ*) կապով: Ա.Գրիգորյանի գրքում անձնական դերանվան հոգնակի երկրորդ դեմքի հոլովածները ներկայանելիս Ոզմի խոսվածքի համար նշվում է *խաձի* կազմությունը՝ *ձէզնով* իմաստով: Կարծում ենք՝ դա վրիպում է: Ընդունելով Հ.Աճառյանի վերոհիշյալ տեսակետը՝ *խէձի* կամ *խաձի* (Ոզմի խոսվածքով) հոլովածները պիտի ունեն-

² Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 151:

³ Տե՛ս Հայրենի երգեր (Հայրիկ Մուրադյանի կատարումները), Ե., 2007, էջ 64:

⁴ Տե՛ս Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.8, Ե., 1978, էջ 143:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 238:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 137:

⁷ Տե՛ս Մ.Մուրադյան, Շատախի բարբառը, Ե., 1962, էջ 164:

նան **ինձնով** բառիմաստը և ոչ թե **ձեզնով**, ինչպես ներկայացնում է Ա. Գրիգորյանը⁸:

Հետաքրքիր բառակազմական պատկերով են ներկայանում անդրադարձ դերանունները, որոնք իրենց բնույթով խոսքի շղթայում ձևաբանական, շարահյուսական, ոճական խնդիրներ են լուծում՝ արտահայտելով, ինչպես նշվել է մեր աշխատանքներում, նույնություն գործողության սուբյեկտի հետ: Վանի բարբառում **ձիյձի** անդրադարձ դերանունը ակնհայտորեն վերոհիշյալ տրականաձև **ձի** դերանվան կրկնությամբ է առաջացել և ունի արդի հայերենի **ինձուինձ** բառաբաղադրության նրբիմաստը: Համարժեք ձև է նաև **զիզի** (ինքս ինձ): Իսկ երկրորդ դեմքի համար՝ **քեքե**: Անդրադարձ դերանվան արժեք ունի նաև **զինքուր** բառաձևը, ինչպես՝ **Չինքուր ըսպանեց**: Անդրադարձ այդ դերանունը նաև հոլովվում է՝ **զինքնուրմից** (բացառական հոլով), **զինքնուրմով** (գործիական հոլով), իսկ, **ուրնուր** ձևը չի հոլովվում⁹:

Մենագրության մեջ Հ.Աճառյանը մատնանշում է ժողովրդական ասացվածքում առկա դերանվանական մի հետաքրքիր ձև՝ **մէնէս** (ինձնից)՝ բերելով հետևյալ օրինակը՝ **Էլէ մէնէս, կուտա վերէս** (ինձնից է դուրս եկել, ինձ ծաղրում է): Այդ հոլովաձևի գործառույթը նա մեկնաբանում է այսպես. «Այստեղ **մէն, մէնէ** բացառականի մասնիկն է. վերջահար **ս**-ն առաջին դեմքի ստացականի հոդն է, իսկ արմատը չկա. երևի պիտի լինի **իմ** կամ **ինձ**, որ ջնջվել է»¹⁰:

Ցուցական դերանունները ներկայանում են բառակազմական ու ձևակազմական բազմազանությամբ՝ բարբառների գերակշիռ մասում, ինչպես նշվել է մեր աշխատանքներում, պահպանելով եռադիմայնությունը, որն առկա է նաև Վանի բարբառում՝ ի տարբերություն, ասենք, հարևան Մշո բարբառի: Բարբառում գործառող **էս** կամ **էսա**, **էտ** կամ **էտա**, **էն** կամ **էնա** և հոգնակին՝ **իսոնք**, **իսոնք**, **ինոնք** ցուցական դերանունները բոլորն էլ հոլովվում են, բայց կան նաև անհոլով **էսիկ**, **էտիկ**, **էնիկ** ձևերը: Բարբառում գործառող ցուցական դերանվանական հետաքրքիր ձևեր են **էս**, **էտ**, **էն** ցուցականների բացառական հոլովաձևերը՝ **ստուց** կամ **ըստուց** (սրանից), **էրատուց** (դրանից), **էնդուց** (նրանից): Ըստ Աճառյանի՝ այս վերջին՝ **էնդուց** ձևից կրճատումով առաջացած պետք է համարել **դուց** (նրանից) բացառական հոլովաձևը¹¹: Վերոհիշյալ **էտ** ցուցական դերանվան **դուց** բացառական հոլովաձևի հետ չպետք է շփոթել **որտե՞ղ** հարցական դերանվան բացառականի ձևը՝ **դու՞ց**, որը, ինչպես Աճառյանն է գտնում, **ի՞նչ տեղից** բառակապակցությունն է՝ անձանաչելիության աստիճանի մաշված: Օրինակ՝ **Դու՞ց կուկաւս**: Այդ առիթով Աճառյանը գրում է. «Չնջվել է ամբողջապես **ինչ** բառը, բայց միայն մնացել է **ն** ռնգականի ազդեցությունը **տեղ** բառի **տ**-ի վրա և վերածել **դ**-ի»¹²: Մեր կարծիքով՝ առավել տրամաբանական է **դ**-ն ոչ թե հնչյունափոխությամբ առաջա-

⁸ Տե՛ս Ա. Գրիգորյան, *Հայ բարբառագիտության դասընթաց*, Ե., 1957, էջ 132:

⁹ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 151:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 150:

¹¹ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 152:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 200:

ցած համարել, այլ պարզապես ընդունել որպես ուղղություն ցույց տվող **դէհ** կամ **դիհ** բառի բացառական հոլովածներ (դրիուց – դուց):

Բարբառների արևմտյան խմբակցության հարավ-կենտրոնական բարբառախմբում լայնորեն գործառող **հօրի** ի+n(p)+ի կազմությամբ հարցական դերանունը Վանի բարբառով գրառված երգերում հոմանշային արժեքով գործառում է նաև **ընչի**՝ ձևով ինչպես՝ **Ընչի՞ տու ձիկ չրիսավնար, Մանուկ աղին տու առար: Օրի՞ յէս ձեր տրոնէն անցա, տու խօլօտ ձիկ իրիշկացիր**¹³:

Ներկայացնենք նաև **դէօր** հարցական դերանունը: Մեր կարծիքով՝ այն առաջացել է **ընդ** նախորդի և **ո՞ր** հարցական դերանվան կցումով: Ինչպես շատ դեպքերում նկատելի է Վանի բարբառում, խոսողության գործընթացում կարող է լինել հնչյունների, մասնիկների կամ ամբողջական վանկի կորուստ կամ տնտեսում: Տվյալ դեպքում մնացել է **դէօր** բառածևը: Բերենք օրինակ Վանի բանահյուսությունից. **Ինէմ սար-քար փընդըռէմ, Խէնք** (տեսնենք) **էնօր պէսն էն դէօր ի՞**¹⁴:

Վանի բարբառում գործառող դերանվանական ինքնատիպ ձև կարելի է համարել նաև **հու՞ ստ** (որտեղի՞ց) հարցական դերանունը: Օրինակ՝ Շատախի բանահյուսությունից. **Պուտուկ սաց՝ յէմ տակ վօսկի ի, շիրէփ սաց՝ յէս հու՞ ստ կուկամ**¹⁵:

Հարցահարաբերական դերանունների մի փունջ էլ ներկայացնենք Հ. Աճառյանի՝ բարբառի ուսումնասիրությանը նվիրված գրքում զետեղված բանահյուսական նյութից՝ պանդխտության մեջ գտնվող զավակին անպատասխան հարցումներ ուղղող վանեցի հայ մամիկի նամակից. «**Վօրթի, քօ վօտաց մատաղ էլնիմ, դէօր՞ էս, չէլնի՞ խիվանդ էս: Չում յէ՞ փ աչկէնք, յէ՞ փ տի լուս պացվի վեր մէ: Ա՛խ, էս ի՞նչ սն խավար էր, վօր էկավ վեր մէ**»¹⁶:

Որոշյալ դերանուններից ընտրել ենք Վանի բարբառով գրառված բանահյուսական նյութերում կիրառական մեծ հաճախականություն ունեցող ձևեր: Մենագրության մեջ բարբառի բաղաձայնական համակարգի մասին խոսելիս Հ.Աճառյանը փաստում է, որ այս բարբառն առհասարակ խուսափում է բաղաձայնների կրկնությունից՝ նրանց միջև որևէ ձայնավոր կամ ը գաղտնավանկ դնելով: Ապա ավելացնում է՝ «Միմիայն **ամեն** բառը, որ իբրև սաստկական գրեթե ամեն տեղ դարձել է **ամմեն**, Վանի բարբառում էլ թեև ընդհանրապես մնում է մի միակ **մ**-ով,բայց սաստկության ժամանակ դառնում է **հրմմեն, զրմմեն**»¹⁷: Մեր կարծիքով՝ այդ կրկնությունը տվյալ դեպքում դարձել է ձևաբանական միջոց անձանի արժեքով գործառող **հրմմեն** որոշյալ դերանունը (հրմմեն մարթ, հրմմեն վարթ) գոյականաբար կիրառվող **հրմմեն** դերանունից տարբերակելու համար: Օրինակներ՝ Վանի պարերգերից. **Մէչ հրմմեն**

¹³ Տե՛ս Հայրենի երգեր (Հայրիկ Մուրադյանի կատարումները), էջ 64:

¹⁴ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 236:

¹⁵ Տե՛ս Մ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 121:

¹⁶ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 241:

¹⁷ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 102:

վարթին իմ յարն էր քաֆուր: Իմ յար սարէրաց ջէրան, հըմնէն թափէր էն սէրան¹⁸:

Առավելագույն արտահայտչականության ձգտելով՝ այս կամ այն հասկացության համար այլ ժողովուրդների բառամթերքից փոխառյալ բառեր են ներթափանցել հայ բարբառներ, այդ թվում՝ Վանի բարբառ: Իսկ դա ինքնին օտար բառի իմաստային և կիրառական նրբերանգներով է պայմանավորված: Շատ գործածական է **ալամ** որոշյալ դերանունը՝ *աշխարհ, երկիր, տիեզերք* (ամեն ինչ) իմաստներով: **Քյա խօրօտիկ, քյա նազէրօվ, վի՞րն էս տու, Աշխար կիտէ, ալամ կիտէ՝ իմն էս տու**¹⁹: Վանի ժողովրդական ասացվածքներից բերենք օրինակ, ուր կա **ալամ աշխար** կայուն բառակապակցությունը. **Կուզի՞ ալամ - աշխար մէյ պըռնօվ պըռնէս, Մէկ օր իլէ էս, մէկ օր էլ տի մէռնէս**²⁰:

Վանի բարբառի խոսվածքներում շատ գործածական է **բիթուն** որոշյալ դերանունը: Վերջինիս հավասարապես բնորոշ է գոյականական՝ (*բիթուն է-կան*) և ածականական կիրառությունը (աշխար բիթուն): Օրինակ՝ Վանի Արձակ գյուղի բանահյուսությունից. **Էթամ, խաոց անէմ յէս իմ աստըծուն՝ Մէնակ ձի՞ կի արէ անտուն, թէ՞ աշխար բիթուն**²¹:

Անորոշ դերանունների մասին խոսելիս կարելի է հատկանշական համարել **ոմն** անորոշ դերանվան առկայությունը Վանի բարբառում: Այդ դերանունը մեզ դեռ չի հանդիպել հայերենի այլ բարբառներում է: Հ.Աճառյանը բանահյուսական մի ինքնատիպ նմուշ է ներկայացնում, որում առկա **ոմը** դերանունը որակում է որպես «հնության մի հետաքրքրական մնացորդ».
Ոմը գանի բուլկարին, ոմը գանի քյամանչէն, Ոմը ասի խադ, ոմը՝ տադ...²² :

Հետաքրքիր իրողություն կարելի է համարել Վանա բարբառում անորոշ դերանվան արժեք ունեցող **մարթ** բառի գործածության յուրահատկությունը, որի մասին ուշագրավ մի դիտարկում ենք գտել բարբառի ուսումնասիրությանը նվիրված գրքում: Հակադրելով իրար **մարթ էկամ** (մարդը եկավ) և **մարթ էկամ** (ինչ-որ մեկը եկավ) արտահայտությունները՝ Աճառյանը նկատում է, որ վանեցին դրանց տարբերությունը զգում է շեշտից: «Որոշյալ հոդ չօգտագործելով՝ առանց շեշտի արտաբերվող **մարթ** բառը տվյալ դեպքում նշանակում է մարդը, որի մասին խոսում էին, իսկ շեշտով **մարթ էկամ**, խոսքը գնում է անձանոթ մարդու մասին»²³: Ինչ վերաբերում է մեկ (մի) անորոշ դերանվան գործածությանը, Աճառյանը գրում է. «Անորոշի գաղափարը գորացնելու համար կարելի նաև դնել **մէյ խա** (մեկ հատ), ինչպես՝ **Մէյ խա մարթ էկամ**»²⁴:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 231:

¹⁹ Տե՛ս *Հայրենի երգեր* (Հայրիկ Մուրադյանի կատարումները), էջ 62:

²⁰ Տե՛ս *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ.8, էջ 154:

²¹ Տե՛ս նույն տեղում:

²² Տե՛ս **Հ.Աճառյան**, նշվ. աշխ., էջ 150:

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 144:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 142:

Ժխտական *ոչինչ* դերանվան արժեքով Վանի բարբառում գործառող *սկի* բառաձևը՝ իբրև ոճարտահայտչական հնարք և խոսքը զեղչելու միջոց, նույնպես հետաքրքիր է: Բերենք օրինակ մենագրության մեջ առկա երկխոսությունից, ուր գրուցում են օտարության մեջ հանդիպած պանդուխտ վանեցիները.

- *Տրդա, ի՞նչ կա յերկիր, ի՞նչ չըկա:*

- *Սկի: Միվտայ սիվցեր ի՞*²⁵ :

Հայերենի բարբառներում համատարած գործառույթ դրսևորող *իրար* փոխադարձ դերանվան կողքին մի շարք բարբառներում հոմանշությամբ կիրառվում է նաև *մեկմեկու* բառաբաղադրությունը: Վանի բարբառի տարբեր խոսվածքներում գործառում է *մէմէկու, մէյմէկու*, իսկ Մոկսի խոսվածքում՝ *մամմակու* բառաձևերը՝ բոլորն էլ օրինաչափ հնչյունափոխությամբ:

Իբրև անկախ բառ գործածվող *իրար* դերանվան գործիական հոլովաձևի իմաստը հայերենի բարբառներում արտահայտվում է նաև *հետ* նախադրությամբ: Վանի, Սասունի, Մշո բարբառներով գրառված բանահյուսական նյութերում հաճախ է հանդիպում *խըտրաց* բառաբաղադրությունը՝ *իրար հետ, միասին, մեկտեղ* իմաստներով:

Վանի բարբառում առկա դերանվանական ինքնատիպ ձևերի մասին խոսելիս կարելի է նշել նաև հետևյալ իրողությունը. «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության՝ ամբողջովին դերանուն խոսքի մասին նվիրված հատորում Հ.Աճառյանը, խոսելով ստացական դերանունների մասին, իբրև ինքնատիպ արտահայտչաձև է ներկայացնում Վանի բարբառում հանդիպող այն երևույթը, երբ ստացական հոդը դառնում է խնդիր: Ինչպես, օրինակ *թարկիկըս չըտաս* (ինձ չթողնես): Հատկապես պարսկահայ խոսվածքներին հատուկ այս երևույթն առկա է նաև Վանի բարբառում²⁶:

Այսպիսով բարբառների բառապաշարում գործառող դերանվանական ձևերի ուսումնասիրությունն ի հայտ է բերում հետաքրքիր իրողություններ:

Jemma Barnasyan - The Pronouns Functioning in Van Dialect (semantic usage study). - Studying the pronouns functioning in Van dialect, necessary materials were brought together from the monographs generalized by both dialectical and folk studies, as well as from the records of different idioms of that dialect that decades ago in the result of collective works were saved up in the dialectological department of the Language Institute. We have submitted original pronoun forms and several interesting facts.

Барнасян Джемма -Местоимения. функционирующие в Ванском диалекте. (функционально-смысловое изучение). -Для изучения местоимений, функционирующих в Ванском диалекте, были взяты необходимые материалы как из исследований, обобщающих монографий диалектального фольклора, так и из записей манеры речи этого диалекта, которые десятилетия назад были накоплены в результате обобщенных работ в отделе диалектологии Института языка. Представляются своеобразные виды местоимений и некоторые интересные факты.

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 221:

²⁶ Տե՛ս Հ.Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ.2,Ե.,1954, էջ329:

**ՈՒՐՎԱԳԻԾ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉԵՐԱՆԳԱՅԻՆ
ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

Խոսողությունը միշտ իրականացվում է ձայնի այս կամ այն ելևէջավորմամբ: Անգամ միապաղաղ խոսքը ձայնային որոշ նրբերանգներ է ունենում: Կենդանի խոսքն այս կամ այն չափով արտահայտում է հաղորդողի տրամադրությունը, վերաբերմունքը՝ իրադրությամբ թելադրված իրողության նրկատմամբ: Վերաբերմունքն արտահայտելու նկարագրական միջոցներից բացի խոսողը համապատասխան վերաբերմունքն արտահայտում է նաև խոսքի արտաքին թաղանթը կազմող ձայնի ելևէջային միջոցների օգնությամբ: **Խոսքի բովանդակությամբ կամ հաղորդանյութով պայմանավորված ձայնային ելևէջների ներդաշնակ համակցությունը հնչերանգն է:** Չկա խոսք, որ միաժամանակ ելևէջավորված չլինի համապատասխան հնչերանգով, և չկա խոսողություն, որի ուղեկիցը չլինի տվյալ հնչերանգը: Ինչպես խոսքը, այնպես էլ այն արտաբերելու ընթացքում դրսևորվող հնչերանգը միշտ իրադրային բրնույթ ունի: Հնչերանգը, տարբեր լինելով լեզվից լեզու, տարբերություններ ունի նաև միևնույն լեզվի համաժամանակյա տարբեր գոյաձևերում. այն տարբեր է ոչ միայն գրական լեզվում՝ բարբառների հարաբերությամբ, այլև բարբառից բարբառ: Ի տարբերություն բարբառային հնչերանգի, որտեղ ելևէջավորման ընդհանրությունը տարբերայնորեն է կազմավորված, գրական լեզվում հնչերանգային ընդհանրությունը, ձևավորված լինելով տարբերային հիմքով, ժամանակի ընթացքում կանոնարկվում է: Հնչերանգի կանոնարկումն էլ, ահա, անմիջականորեն առնչվում է ուղղախոսությանը և դառնում վերջինիս ուսումնասիրության մի բաղադրիչը: Հնչերանգային ուղղախոսությունն այստեղ ներկայացնում ենք երեք խմբով՝ ըստ՝ ա) (հնչա)բառային շեշտի, բ) վանկարկային շեշտի և գ) հնչադասական շեշտի ուղղախոսական դրսևորումների¹:

Ա. Հնչաբառային շեշտի տիրույթ: Ունենք բառերի մի բազմություն, որոնցում շեշտը վերջին վանկին չի դրվում: Դրանք ներկայանում են հինգ խմբով՝ ա) գաղտնավանկով եզրափակվող բառեր, բ) ավանդաբար այլ շեշտադրում ունեցող բառեր, գ) գուգաձև շեշտադրությամբ բառեր, դ) կրկնաշեշտ բազմավանկ բառեր, ե) օտարաշեշտ բառեր: Բացի առաջին կետի բառերից՝ մնացածը որոշ անկայունություն և փոխանցումայնություն են ստեղծում:

Շեշտադրման գուգաձևության երևույթն անվանում ենք **գուգաշեշտություն**, իսկ գուգաշեշտություն ունեցող բառերը՝ **գուգաշեշտ բառեր**: Զուգաշեշտությունը **փոփոխակումային** (փոփոխակում = *անգլ. variation*) իրողություն է, այսինքն՝ միևնույն ժամանակաշրջանում քննության առարկա լեզվական իրողությունները հանդես են գալիս նույն ոլորտում՝ առանց իմաստա-

¹ Հնչաշարույթի շեշտի կարևորությունը բնավ չենք անտեսում: Կարծում ենք՝ այն շահեկանորեն ուսումնասիրված է հայ լեզվաբանության մեջ (տե՛ս **Ռ. Թոխմախյան, Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը**, Ե., 1983, էջք 128 – 159, (184 էջ):

յին տարբերությունն առաջացնելու: Այսպիսով, նույն հնչյունակազմով բառը շեշտ է ընդունում մերթ մեկ, մերթ այլ վանկին՝ առանց ազդելու իմաստի վրա: Նույն ոլորտի (տվյալ դեպքում՝ նույն բառի) տարբեր հատվածների վրա դրվող շեշտերը միմյանց նկատմամբ **ազատ բաշխման հարաբերություն** են ապահովում: Այսպիսով՝ **գուգաշեշտությունը միննույն ժամանակաշրջանում (իմաստով և հնչյունակազմով) նույն բառի տարավանկ շեշտարկման լեզվական հնարավորությունն է և դրա խոսքային իրացումը**: **Չուգաշեշտությունը հակահամակարգ է կայուն շեշտական համակարգով մեր լեզվում, սակայն սահմանափակ թվով բառերի համար կանոնական է. ասել է՝ այդ բառերի տարավանկ շեշտերը շարժական անկայունությամբ իսկ կանոնական են**: **Չուգաշեշտ բառերից են՝ նո՛ւյնչափ // նույնչա՛փ, ի՛նչնե՛/ինչնե՛, ե՛րբնե՛ // երբնե՛, ա՛ռհասարակ//առհասարա՛կ և այլն, ինչպես նաև -(ե)րորդ վերջածանցով դասական թվականներն ու դրանց փոխարինող հարցական դերանունները՝ հի՛նգերորդ//հինգերո՛րդ, տա՛սներորդ//տասներո՛րդ և այլն**:

Կրկնաշեշտությունը մեկ բառում երկու (երբեմն՝ երեք) տարբեր վանկերի շեշտադրումն է: Կրկնաշեշտության դեպքում սովորաբար շեշտերից մեկը առավել ուժգինը, **հիմնականն է կամ գլխավորը**, մյուսը **երկրորդական է կամ կողմնակի**: Ի տարբերություն զուգաշեշտ բառերի՝ կրկնաշեշտ բառերում երկու շեշտի ներդաշնակ համատեղություն է լինում: Կրկնաշեշտություն են ունենում բազմաբաղադրիչ բարդությունները, ածանցումները, ավելի շատ՝ **ամեն(ա)-, անդր(ա)-, ապ(ա)-, արտ(ա)-, գեր(ա)-, ենթ(ա)-, հակ(ա)-, համ(ա)-, հար(ա)-, մակ(ա)-, նախ(ա)-, ներ(ա)-, ստոր(ա)-, վեր(ա)-, տար(ա)-, տրամ(ա)-, փոխ(ա)-** նախածանցներով առնվազն քառավանկ բաղադրությունները, որոնցում երկրորդական շեշտն ընկնում է այդ նախածանցների կա՛մ առաջին վանկարարի, կա՛մ դրանց մաս կազմող **-ա-** հոդակապի վրա, օրինակ՝ ամե- [նա՛]արկածախն[դի՛ր], անդ[րա՛]մանուշակա[գո՛ւյն], գ[ե՛ր]մանրադիտակա- [յի՛ն], [ե՛ն]թաստորադասա[կա՛ն] ևն: Հետաքրքիր է արտասանական մի օրինաչափություն, որ վերաբերում է առաջին բաղադրիչում **ույ** երկբարբառ ունեցող բաղադրյալ բառերին: Եթե առաջին բաղադրիչն անհնչյունափոխ է, ապա բաղադրության մեջ ունենում ենք կրկնաշեշտություն, մինչդեռ նույն բառի հնչյունափոխ տարբերակի դեպքում ունենում ենք միաշեշտ արտասանություն. հմմտ. **ըն[կո՛ւյզ]կոտ[րի՛չ]** և **ընկուզկոտ[րի՛չ]**, **[թո՛ւյլ]անդամու[թյո՛ւն]** և **թուլանդամու- [թյո՛ւն]**: Ընդգծված բաղադրիչների (**ընկույզ- , թույլ-**) բառային տարբերակելի իմաստները գիտակցվում են, դրանով էլ պայմանավորված է համապատասխան բաղադրությունների կրկնաշեշտությունը, իսկ նույն բաղադրիչների հնչյունափոխ դրսևորմամբ ասես «անտեսվում է» դրանց գիտակցումը, որն էլ պայմանավորում է համապատասխան բաղադրությունների միաշեշտությունը: Բերված օրինակների հիման վրա դժվար չէ նկատել, որ զուգաշեշտություն հնարավոր է նաև կրկնաշեշտ և միաշեշտ բառերի զուգահեռ առկայությամբ: Հաճախ **ամեն(ա)-** բաղադրիչով բառերում գերադրականությունն է՛լ ավելի սաստկացնելու նկատառումով շեշտն ընկնում է այդ բաղադրիչի առաջին վանկի վրա: Մրանով պայմանավորված՝ ունենում ենք

արտասովոր **սաստկաշեշտություն**, որի հետևանքով տեղի է ունենում գլխավոր և երկրորդական շեշտերի փոխաստեղծում (երկրորդական շեշտը տեղափոխվում է վերջնավանկ՝ [ա՛]մենաորա[կյա՛], [ա՛]մենակատա[րյա՛] և այլն): **Սաստկաշեշտությունն առհասարակ սովյալ վանկարարի՝ սպասելի սովորական արտասանությունից առավել ուժգին արտաբերությունն է, որ կարող է տեղի ունենալ հուզագգացական, ընդգծման, հասկանալիության, հստակության, ուսուցողական հանգամանքներում:** Սաստկաշեշտության կարող է ենթարկվել կամայական վանկ: **Կրկնաշեշտ բառերում գլխավոր և երկրորդական շեշտերի փոխաստեղծումը շեշտակիր վանկարարների արտասանության ուժգնության դերերի փոխաստանձնումն է:** Պատահում է նաև, երբ շեշտակիր վանկարարները նույն ուժգնությամբ են արտաբերվում: **Մինևս այն բառի տարբեր վանկարարների արտաբերության նույնագոր ուժգնությունը կոչվում է հավասարական կրկնաշեշտություն կամ հավասարաշեշտություն** Համապատասխանաբար, տարբեր վանկարարների նույնագոր շեշտարկմամբ բառերն էլ կոչվում են **հավասարաշեշտ բառեր:** Գրական հայերենում հավասարաշեշտություն ունեն *այսու-*, *այդու-*, *այնու-*² բաղադրիչներով ձևավորված բառերը, որոնցում առաջին շեշտը դրվում է այդ բաղադրիչների *ու* ձայնավորին, երկրորդ շեշտը՝ հաջորդող բաղադրիչի վերջնավանկին, ինչպես՝ այ-[սո՛ւ]ամենայ[նի՛ վ], այս[ո՛ւ]հան[դե՛ րձ], այս[ո՛ւ]հե[տև՛] և այլն: Նկատենք, որ բերված բառերի հավասարաշեշտությունն ուղեկցվում է զուգաշեշտությամբ:

Կրկնաշեշտության համար կից վանկերը բացառված դիրք են. շեշտակիր վանկերն ընդմիջարկվում են առնվազն մեկ վանկով (տե՛ս վերի օրինակները):

Օտարաշեշտությունը հայերենում գործածվող փոխառյալ բառերի և օտար հատկանունների (և դրանց ազդեցությամբ՝ երբեմն հայերեն բառերի)՝ փոխաստու լեզուներին հատուկ շեշտադրումն է: Այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ *դինա՛միկա*, *տե՛խնիկա*, *կիրեռնե՛տիկա*, *էլեկտրո՛նիկա*, *Գերմա՛նիա*, *Ա՛նգլիա*, *Բոտա՛լիա*, *Ֆրա՛նսիա* և այլն, ակնհայտորեն չունեն հայերենին հատուկ շեշտադրություն³: Սակայն դրանց տևական գործածությունը հայախոսների մեջ ընկալողական համակերպություն է մտցրել: Հայերենում փոխառյալ բառերի տևական գործածությամբ պայմանավորված օտարաշեշտության ընկալողական համակերպությունն անվանում ենք **շեշտարկման օտարընտել հարմարակում:** Այդ հարմարակումը երբեմն հանգեցնում է նաև՝ հայերեն բառերի օտարաշեշտ արտասանության: Օրինակ՝ *Մետա՛քսյա* անվան ոչ հայաշեշտ արտասանությունը օտարաշեշտ բառերի համաբանությամբ է պայմանավորված (հմմտ. *Ա՛սյա*, *Ա՛ննա*, *Եպրա՛քսյա*, *Օֆե՛յա* ևն): Հարկ է նկատել, որ գրական լեզուն, այնուամենայնիվ, գտնում է օտարից ազդրնտելության դարձի ուղիներ: Նախ՝ բերված բոլոր բառերի թեք հոլովաձևերում շեշտ-

²Նշված բաղադրիչները գրաբարում *այս*, *այդ*, *այն* դերանունների գործիական հոլովի ձևերն են:

³Հատուկ անունների շեշտադրության մասին տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., «9-րդ հրաշալիք», 2006, էջ 195 (384 էջ):

վում է վերջնավանկը (հմմտ. *դինամիկայի՝ Անգլիայի՝ ց, Իտալիայո՝ վ* և այլն), ապա՝ նույնիսկ ուղիղ ձևերը շատերն արտասանում են հայեցի շեշտադրությամբ՝ *տեխնիկա՝ Արգենտինա՝* և այլն: Հայերենում օտար շեշտադրությամբ փոխառյալ բառերի տևական գործածության հետևանքով հայերեն բառերի համաբանությամբ դրանց հայակերպ շեշտափոխությունն անվանում ենք **շեշտարկման հայրնտել** կամ **ազգրնտել հարմարակում**: Նկատի առնելով բերված հանգամանքները՝ այս կարգի բառերը կանոնարկելիս պետք է առաջնորդվել հայաշեշտ արտասանությանը հարաբերական առավելություն տալու սկզբունքով:

Բ.Վանկարկային շեշտի տիրույթ: Վանկարկային շեշտն առավել որոշակի է իրադրականությամբ, քանի որ գործառական սահմանափակություն ունի: Գերազանցապես ուսուցման ոլորտում է գործածվում, ապա և հուզագրական իրադրություններում, որտեղ ևս որոշ ուսուցողականության միտում կա՝ վանկարկմամբ խոսքը հասկանալի դարձնելու նպատակ:

Վանկարկային շեշտի գործառության առաջնային ոլորտն առաջին դասարանն է, երբ բառապատկերին ընտելացնելու նպատակով երեխային վանկերով են կարդալ տալիս: Ուսուցողական վանկարկումը կատարվում է շեշտադրման հետևյալ եղանակով: Արտասանությունն սկզբնավանկ(եր)ում ունենում է երգեցիկ (երաժշտական) երկար շեշտ(եր), վերջնավանկն ունենում է սուր շեշտ՝ որպես բառավարտի նշան, այսինքն՝ ավարտահնչերանգ: Այսպես՝ *կա-տու, ա-քա-դադ, գը-րա-դա-րան* բառերի վանկերն արտաբերվում են ո՛չ թե [կա՝-տո՛ւ], [ա՝-քա՝-դա՛դ], [գը՝-րա՛-դա՛-րա՛ն] հավասարաշեշտ վանկատմամբ, այլ երկվանկ բառերի դեպքում՝ անհավասար, այն է՝ մեկ երկար և մեկ սուր շեշտով, եռավանկ բառերի դեպքում՝ երկհավասար երկար և դրանց անհավասար մեկ սուր շեշտով, քառավանկ բառերի դեպքում՝ եռահավասար երկար և դրանց անհավասար մեկ սուր շեշտով և այլն: Ահա՝ նշվածների իրական պատկերը. [կա՝-տո՛ւ], [ա՝-քա՝-դա՛դ], [գը՝-րա՛-դա՛-րա՛ն]:

Ըստ այսմ՝ կարող ենք տալ վանկարկային շեշտի նախնական սահմանումը: **Վանկարկային շեշտը հնչաշղթայի կամ նրա մի հատույթի շեշտարկումն է վանկ առ վանկ**: Վանկարկային շեշտ է ի հայտ գալիս նաև հուզական, հատկապես գայրալից իրավիճակներում: Այսպիսով՝ **վանկարկային շեշտը հնչաշղթայի կամ նրա տվյալ հատույթի նպատակադիր բազմաշեշտությունն է՝ ըստ վանկերի**:

Գ. Հնչադասական շեշտի տիրույթ: Խոսքի շղթան ուղղագիծ չէ, այլ կարող է ունենալ որոշակի կորություն, թուլացում, բարձրացում, դադարներ և այլն: Դադարը ծառայում է լեզվական միավորները միմյանցից սահմանազատելուն՝ դրանով իսկ ազդանշելով հնչադասության բաղադրիչների կապակցությունը: Ավարտահնչերանգն ազդանշում է ամեն մի հնչադասության ավարտը: Եթե խոսքը բաղկացած է մի քանի հնչադասությունից, հնարավոր է, որ նրանց ներսում ևս լինի ավարտահնչերանգ, սակայն, ի տարբերություն միջասութենական ավարտահնչերանգի, ներասութենական ավարտահնչերանգի դադարն ավելի կարճ է: Վերջինս անվանում ենք **կարճադադար ավար-**

տահնչերանգ կամ **կարճավարտ հնչերանգ** (գրավոր խոսքում կարճավարտ հնչերանգի իսկությունն արտահայտվում է միջակետով):

Հնչերանգային ուղղախոսության համար հստակ կանոններ հնարավոր չէ սահմանել. այս դեպքում կանոնի գոյությունն զգում կամ որսում ենք արտասանվող նյութի ընկալման մեր փորձով, երբ արտասանողը հնչադասության արտաստվող հատկավորմամբ է մատուցում հաղորդանյութը: Այսինքն՝ արտասանության ընթացքում ձևավորվում են կեղծ հնչաշարայիններ, որոնք մատնում են հաղորդողի՝ նյութին չտիրապետելու իսկությունը: Այլ կերպ ասած՝ **հնչերանգային ուղղախոսության կանոնը սահմանվում է ժխտականության սկզբունքով**, այն է՝ ինչպես չի կարելի արտասանել հնչադասությունը: Սա այն տիրույթն է, որը թերևս մեկնելի է միայն հումբոլդտյան **ներքին ձևի** սահմանմամբ⁴, ասել է՝ լեզվի ամենաարտաքին կողմը բնորոշելի է նրա ամենաներքին շերտի բեկմամբ: Պարզելու համար, թե ինչն է օգնում մեզ՝ գիտակցելու կամ գոնե կռահելու արտասանվածքի պարականոնությունը, հանդիպադրենք քերականական նախադասությունն ու հնչադասությունը:

Ա) Սրանցից յուրաքանչյուրն ունի իր **կենտրոնաձիգ ուժը** կամ, որ տվյալ դեպքում նույնն է, **առանցքը**:

Բ) Նախադասության առանցքը նրա միջուկն է՝ **գերակա** անդամը՝ բայ-ստորոգյալը, հնչադասության առանցքը՝ հնչերանգով թելադրված **առկայացվող հատույթը**:

Գ) Մովորական շարադասությամբ չեզոք կառուցվածքի նախադասության մեջ գերական (= բայ-ստորոգյալը) ենթակայի նկատմամբ հետադաս է («Վարդանը **վագում է**»), ներգործական կառուցվածքում՝ ենթակայի և ուղիղ խնդրի նկատմամբ միջադաս («Ձյունը **ծածկեց** դաշտը»), կրավորական կառուցվածքում՝ ենթակայի և ներգործող խնդրի նկատմամբ միջադաս («Դաշտը **ծածկվեց** ձյունով»), միջադաս է նաև երկարժույթ բայով արտահայտված գերական պատճառական կառուցվածքում՝ դրսևորված ենթակայի և ուղիղ խնդրի միջև («Վարդանը **վախեցրեց** Կարենին»), ինչպես նաև սրա փոխակերպի գերական չեզոք կառուցվածքում՝ դրսևորված ենթակայի և պատճառի խնդրի միջև («Կարենը **վախեցավ** Վարդանից), իսկ եռարժույթ բայով արտահայտված գերական պատճառական կառուցվածքում ենթակայի նկատմամբ երրորդ դիրքում է՝ անձնանիշ և ոչ անձնանիշ ուղիղ խնդիրների միջև (հմմտ. «Ուսուցիչն **աշակերտին կարդալ տվեց դասը**»), մնացած բոլոր դիրքերում գործ ունենք առկայացական տրոհումների հետ:

Երկանդամ հնչադասության դեպքում առկայացված հատույթը նախադաս է կամ վերջադաս, ըստ այդմ՝ ունենում ենք **սկզբնառկայացում** և **վերջնառկայացում**, ընդ որում առաջին դեպքում ունենում ենք **աջընթաց թուլաշեշտություն**, երկրորդ դեպքում՝ **աջընթաց ուժգնաշեշտություն**: Եռանդամ և ավելի հնչաբառերից բաղկացած հնչադասության դեպքում առկայացված հատույթը լինում է նախադաս, միջադաս կամ վերջադաս, այսինքն՝ սկզբնառ-

⁴ В. фон Гумбольдт, *Избранные труды по языкознанию*, Москва, 1984, с. 100 – 107 (400 с.).

կայացում, **միջնառկայացում** և վերջնառկայացում, ըստ որում առաջին դեպքում ունենում ենք աջընթաց թուլաշեշտություն, երրորդ դեպքում՝ աջընթաց ուժգնաշեշտություն, իսկ երկրորդ՝ միջադասության դեպքում՝ ա) **երկդիր կամ օղակաձև թուլաշեշտություն** և կամ բ) աջընթաց ուժգնաշեշտություն հարակից աջընթաց թուլաշեշտությամբ:

Դ) Արժութայնության տեսակետից բայական գերական կարող է լինել արժութագուրկ կամ արժութակիր, ընդ որում միադիմի բայը արժութագուրկ է, չեզոք, անդրադարձ և փոխադարձ սեռի բայերը՝ մենարժույթ, ներգործական և կրավորական սեռի բայերը՝ երկարժույթ, պատճառական սեռի բայը՝ երկարժույթ կամ եռարժույթ:

Հնչադասության դեպքում արժութայնությունը պիտի սահմանել հնչերանգային առանցքի պայմանավորվածությամբ: Մեկ հնչաբառից բաղկացած հնչադասության դեպքում գործ ունենք **ինքնառկայացման** հետ: Սա քերականական նախադասության հանդիպադրությամբ միադիմի միաբառ նախադասության հարաբերակիցն է, ուստի արժութագուրկ է: Երկու հնչաբառից բաղկացած հնչադասության դեպքում արժութակիր է սկզբնառկայացված հատույթը: Արժութակիր է նաև միջնառկայացված հատույթը, որի արժույթը աջընթաց թուլաշեշտ հատույթն է: Ասվածից հետևում է, որ մեզ համար **հնչական մակարդակում արժութայնությունը առկայացական շեշտով թելադրված սպասելիությունն է առ լրումն թուլաշեշտ հնչերանգային ավարտվածության**: Հնչական մակարդակում արժութայնությունը բացառապես հնչերանգային իրողություն է, դրա համար էլ այն անվանում ենք նաև հնչերանգային արժութայնություն: Հնչերանգային արժութայնությունը աջընթաց ուղղվածություն ունի, և արժութակիր կարող է լինել առկայացված հատույթից միայն դեպի աջ գտնվող հատույթը կամ հատութաշարը:

Ե) Նախադասության կազմում առանցքային ստորոգումից բացի ունենք բազմաթիվ **քողարկված ստորոգումներ**: Այսպես՝ «Արմենն այսօր դարձյալ ուշացավ դասից» նախադասության ստորոգական առանցքը գերական է՝ արտահայտված «ուշացավ» դիմավոր բայաձևով: Քանի որ որոշակի անդամով արտահայտված է գերական, լեզվաբանության մեջ ընդունված է ասել, որ բերված նախադասությունն ունի մեկ **մակերեսային ստորոգում**: **Մակերեսային ստորոգումը նախադասության դիմավոր բայով արտահայտվածությունն է**: Բացի մակերեսային ստորոգումից՝ բերված նախադասությունն ունի մի շարք քողարկված ստորոգումներ՝ հնարավոր դիմավոր բայաձևերով, որոնք բացահայտվում են՝ ըստ հաղորդանյութի բովանդակության: Ասել է՝ նախադասությունը մի շարք քողարկյալ նախադասությունների բազմություն է: Փորձենք վերծանում կատարել աստիճանական սկզբունքով՝ աստիճան առ աստիճան մակերես բերելով նախադասության քողարկված ասելիքը:

Արմենն այսօր դարձյալ ուշացավ դասից:

ա) Ուշացողն Արմենն է: բ) Հաճախ է ուշանում (հմմտ՝ «դարձյալ ուշացավ»):

գ) Արմենը հաճախում է դասի: դ) Արմենի ուշացումը հաճախակի է:

ե) Այս օրը հերթական օրերից մեկն է, որ ուշանում է Արմենը:

Կանխենթադրույթների⁵ այս շարքը երկար կարելի է շարունակել: Դիտարկվող նախադասության՝ որպես բազմության ենթաբազմություն-միավորները կարող ենք ներկայացնել բանաձևով՝ նախադասությունը նշանակելով գլխատառ Ն-ով, ենթաբազմություն-միավորները՝ իբրև համարակալում դրված այբբենական տառերով. քանի որ հնարավոր է շարունակելով ավելացնել բազմության անդամները, բայց դա չենք անում, բազմության միավորներից հետո կդնենք բազմակետ: Եվ այսպես՝ դիտարկվող բազմության բանաձևն է՝ **Ն = {ա, բ, գ, դ, ե,}**:

Հնչադասության դեպքում էլ առանցքային առկայացումից զատ ունենք բազմաթիվ **քողարկված առկայացումներ**, որոնք տվյալ իրադրության մեջ երկրորդական շեշտերն են կամ դրանցով քողարկելաբար առկայացված հատույթները: Այսպես՝ դիտարկվող նույն նախադասությունը՝ թե՛ իբրև շարահյուսական կառուցվածք, թե՛ իբրև հնչադասություն, ըստ նպատակադրման՝ այլ շեշտադրումներ ևս կարող է ունենալ, և դրանք բոլորը քողարկյալ ձևով առկա են այդ կառուցվածքում: Նախադասության մեջ կարող է շեշտվել «Արմեն» անձանունը՝ «Արմե՛նն այսօր դարձյալ ուշացավ դասից», որ կնշանակի, թե «Այսօր դարձյալ դասից ուշացողն Արմե՛նն էր, ո՛չ այլ մեկը», կարող է շեշտվել «դարձյալ» մակբայը՝ Արմենն այսօր դարձյալ ուշացավ դասից», որ կնշանակի, թե նախորդ անգամներն էլ ուշացել է և այլն: Ինչպես տեսնում ենք, հնչերանգային առկայացումն **իմաստագատիչ** և **իմաստակազմիչ** հավելյալ դեր ունի, հանդես է գալիս որպես **իմաստատարբերակիչ հատկանիշ**: **Հնչադասության համապատասխան հատույթի իմաստատարբերակիչ դեր կատարող իրադրային նպատակադիր շեշտն առկայացական շեշտ է, իսկ այսպիսի շեշտական առկայացումը՝ առկայացական տրոհում**: Բնորոշումից երևում է, որ առկայացումն իրադրային թելադրանք ունի, ուստի այն արտացոլում է հաղորդողի հոգեկան բնույթը կամ նույնիսկ հոգեվիճակը՝ հաղորդման պահին: Շեշտադրմամբ առկայացնելով այս կամ այն անդամը՝ դրանով իսկ կարևորում-գլխավորում ենք այն, այդ շեշտված հատույթը դարձնում **գլխավոր անդամ**: Ի տարբերություն շարահյուսական նախադասության, որի գլխավոր անդամը բայական գերական է՝ բայ-ստորոգյալը, հոգեբանական դատողության և հնչադասության գլխավոր անդամը առկայացված հատույթն է, որ ճիշտ կլինի անվանել **հոգեբանական գերակա**:

Ձ) Այն դեպքում, երբ համատեղվում են առկայացվող հատույթն ու գերական, այլ կերպ՝ հոգեբանական և շարահյուսական գերականները, տեղի է ունենում առկայացական և կառուցվածքային առանցքների հակադրության չեզոքացում:

Ձայնային նրբերանգների վերհանումը չափազանց կարևոր է հնչերանգային ուղղախոսության կանոնարկման համար: Ձայնի այս կամ այն ե-

⁵ Կանխենթադրույթների մասին (ֆրանս. *pre-supposé's*) տե՛ս **Է. Աթայան**, *Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը*, Ե., 1981, էջք 215 – 216 (392 էջ):

րանգը կարող է իմաստագատիչ դեր ունենալ տվյալ հնչադասությամբ հադորդված նյութի համար: Այս իմաստով շատ կարևոր է հարցական հնչերանգի⁶ ուսումնասիրությունը հատկապես այն դեպքերում, երբ արտահայտության ոլորտի հարցումը բովանդակության ոլորտում ժխտում է նշանակում՝ ասես «բնանշան» դառնալով որևէ երևույթի հերքման: Հիշենք մի հայտնի օրինակ Դ. Աղայանի «Արեգնազան» հեքիաթից.

Ուրեմն ես ավագա՞կ եմ,

Դո՞ւ ես ասում ինձ այդ բանը,

Այս բուպեիս դու կստանաս

Քո այդ խոսքի պատասխանը:

Ակնհայտորեն ժխտում կա այս հարցման մեջ: Հարցումը ենթադրում է, որ խոսող կերպարը **ավագակ չէ**:

Գրական լեզվի հնչերանգային առանձնահատկություններին տիրապետելը լեզվական որոշակի պատրաստվածություն է ենթադրում: Այսօր հազվադեպ է կիրթ խոսք հնչում եթերից, որը դատապարտելի է բարոյապես, արգելված է օրենքով, վնասակար է ազգային ինքնությունը հեռանկարայնորեն բեկելու նենգությամբ:

Davit Gyulzatyan- An Outline of Intonational Orthoepy of the Literary Eastern Armenian.-As a rule, there is almost no consideration of intonational expressions in the studies of orthoepy. This has subjective and objective reasons. In order to identify what can help realize the paracanonicity of an articulation, the grammatical sentence is contrasted with the utterance, each of which has its **centripetal force** or **axis** (for the sentence, it is its nucleus, in the case of an utterance, it is the **actualized segment**, as determined by the intonation). It is noted that when the actualized segment and the nucleus overlap, a neutralization of the contrast between the actualizing and structural axes occurs.

Давид Гюльзатян- Контуры интонационной орфоэпии восточноармянского литературного языка.- Как правило, при исследовании орфоэпии мы почти не обращаемся к интонационным проявлениям. Это имеет свои субъективные и объективные причины. Для выяснения того, что же сможет помочь осознать неправильность высказывания, контрастно противопоставляются грамматическое предложение и интонационная фраза, каждая из которых имеет свою центростремительную силу, или ось: в одном случае – это ядро предложения, а в другом – интонационно выделяемый актуализированный сегмент. С помощью контрастного противопоставления выявляются интересные данные по оценке реалий указанных единиц, а также с позиций валентности и порядка слов в предложении. Замечена следующая закономерность: когда совмещаются актуализированный сегмент и ядро, происходит нейтрализация оппозиций актуализированных и структурных осей.

⁶ Հարցական հնչերանգի մասին տե՛ս Ս. Ղուկասյան, Հարցական նախադասությունների հնչերանգը.- *Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում*, Ե., 1978, էջ 76 – 129 (208 էջ):

**ԱԾԱՆՑՆԵՐԻ ՈՒ ԱԾԱՆՑԱԿԵՐՊՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ԲՆԻԿ ԵՎ ՓՈԽԱՌՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ածանցումը հայերենի բառակազմության հիմնական եղանակներից է, որը ժառանգվել է հնդեվրոպական հիմնալեզվից: Հնում այն ձևաբանական արժեք ուներ, և ածանցները քննվում էին հիմքակազմության մեջ: Հետագայում հնդեվրոպական որոշ ածանցներ դառնում են անգործածական, փոխառվում և ստեղծվում են նորերը:

Յուրաքանչյուր լեզվական անկախ, ինքնուրույն գործածվող իմաստակիր միավոր կարող է ունենալ բաղադրման մեկ կամ մեկից ավելի կաղապարային բանաձևումներ: Դրանցից ամենապարզը արմատ + ածանց կառուցատիպն է, որը բնորոշ է հասարակ և հատուկ անուններին: Հատուկ անունների սերող հիմքերի և բառակազմական ձևայինների զուգորդման հնարավոր տիպերն ավելի սահմանափակ են, քան հասարակ անուններինը, այսինքն՝ յուրաքանչյուր անձնանվանահիմք տեսականորեն ունի բաղադրման սահմանափակ թվով կառուցատիպ կամ կառուցատիպեր, որոնց հիմքում ընկած են որոշ ածանցների զուտ անձնանվանակերտ դառնալու միտումը և անվանադրման՝ ավանդական դարձած սովորույթը:

Այս զեկուցման մեջ քննված ածանցավոր անձնանունները քաղել ենք Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանից», V-XVII դդ. ձեռագրերի հիշատականներում վկայված անվանացանկերից, «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուից» (Ե., 1988), իսկ նորագույն շրջանի անձնանունների համար աղբյուր են ծառայել վերջին տասը տարիների ուսանողական լսարանները:

Ըստ կազմության՝ անձնանունները լինում են պարզ և բաղադրյալ: Գ. Ջահուկյանը, անդրադառնալով բնիկ հայկական անձնանուններին, առանձնացնում է 4 տիպ. 1) պարզ, 2) ածանցավոր, 3) հոլովման կամ խոնարհման ձև ունեցող և 4) բարդ: Առաջին, երկրորդ և չորրորդ տիպերի անձնանունները կարող են լինել բարդ և ածանցավոր հասարակ անունների փոխանցմամբ առաջացած, ինչպես նաև պարզ հասարակ անուններից հատուկ անձնանվանակերտ՝ հատկապես փոքրացուցիչ-փաղաքշական ածանցներով կազմված անձնանուններ¹:

Ածանցավոր անձնանունները երկձևույթ են, այսինքն՝ բաղկացած են մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևայիններից: Լ. Հովսեփյանի մեկնությամբ «հիմնական և երկրորդական ձևայինները ստացվում են որպես բառի ձևային կառուցվածքի վերլուծության վերջնական արդյունք, երբ բառը տրոհվում է վերջնային անբաժանելի միավորների՝ ձևաիմաստային և գործա-

¹ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, *Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները*, Պատմա-բանասիրական հանդես, N4, Ե., 1984 թ., էջ 33:

ռական նվազագույն տարրերի, որոնք իրենց բնույթով ու արժեքով տարասեռ են: Այդ տարրերի մեջ սովորաբար առանձնացվում են, ինչպես նշվեց, հիմնական ձևայինները, որոնք այլ կերպ կոչվում են արմատներ (բառի բառային իմաստը կրող տարրերը), և երկրորդական ձևայինները, այսինքն՝ բառակազմական և քերականական մասնիկները՝ ածանցները, թեքայինները, հիմքակազմ տարրերը, թեմատիկ ձայնավորները, հոդակապերը և այլն»²:

Մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևայիններից կազմված հայկական անունների հիմնակաղապարների դասակարգումը, անձնանվանակերտ ածանցների ու ածանցակերպների կիրառական հաճախականության և անձնանվանահիմքերի հետ գուգորդելիության հնարավոր սահմանների բացահայտումը հնարավորություն է տալիս պարզել անձնանվանակերտ արժեք ունեցող ամենակենսունակ և արտադրողական ածանցները:

Ինչպես անձնանվանահիմքերը, այնպես էլ ածանցները ծագումով լինում են բնիկ և փոխառյալ, որոնց առաջացման կամ ծագման եղանակները տարբեր լեզուներում ունեն պատմականորեն զարգացում ապրող յուրօրինակ լեզվական նորմեր: Հայերենում, ըստ Մ. Աբեղյանի, դրանց զգալի մասն առաջացել է ինքնուրույն, անկախ գործածություն ունեցող բառարմատների և դրանց հնչյունափոխված ձևերի, քերականական թեքայինների իմաստների մթագնումից, ինչպես նաև երկու ածանցների բաղադրումից³: Նույնը վերաշարադրելով՝ Հ. Պետրոսյանը ավելացնում է ածանցների առաջացումը փոխառության միջոցով՝ որպես առանձին տիպ⁴:

Այլ լեզուներից հայերենի փոխառած անձնանվանակերտ ածանցների ու ածանցակերպների մեջ գերակշռում է իրանական շերտը: Գրեթե բոլոր գուտ անձնանվանակերտ վերջածանցները՝ *-ակ*, *-իկ*, *-ուկ*, ածանցական արժեք ունեցող բառարմատները կամ ածանցակերպները՝ *-անոյշ*, *-դուխտ*, *-ուհի*, համարվում են իրանական: Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ հնդեվրոպական ածանցների վերականգնված վաղնջահայ ձևերի հետ մեկտեղ պատմահամեմատական հայեցակետով քննում է նաև միևնույն ծագումն ունեցող հնդեվրոպական և իրանական փոքրացուցիչ-փաղաքշական արժեք ունեցող *-ak*, *-ik*, *-uk* (*-ակ*, *-իկ*, *-ուկ*) ածանցների համատիպ ձևերը: Նա գտնում է, որ իրանական հիշյալ ածանցները տարածվել են հին հայերենում՝ իրենց նախատիպը ներկայացնող հնդեվրոպական **-ko-* կամ **kho* /վաղնջահայերենում՝ *-p/* ածանցի՝ այդ շրջանում այլևս գործածական չլինելու հետևանքով. **k-*ն քմայնացել է: Ուստի ծագումնաբանորեն այս ածանցները հնդեվրոպական են՝ իրանական փոխանցումով⁵:

² Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 51:

³ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 222:

⁴ Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 18:

⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 232:

Գործառույթամբ հոմանիշ, շատ դեպքերում՝ բացարձակ նույնանիշ - *ակ, -իկ, -ուկ* երեք ածանցները փաղաքշական իմաստ ունենալուց բացի եղել և մնում են նաև բայանուն գոյականներ և ածականներ կազմող բառակազմական մասնիկներ հիմնական բոլոր նշանակություններով՝ գործողի անուն, գործիքի անուն, գործողության արդյունք և այլն: Հիմքերի և բառակազմական փաղաքիչների կապակցելիության հնարավորության առումով բազմիմաստ այս ածանցները անտարբեր են հիմքի կառուցվածքի նկատմամբ. այդտեղ որոշիչը հիմքի խոսքամասային պատկանելությունն է և ածանցի արժույթը: Այսպես, վերոնշյալ ածանցներով նոր անուններ են կազմվում հիմնականում գոյականներից՝ *Ծովակ, Մրջիւնիկ, Սարգսուկ*, մասամբ նաև ածականներից՝ *Սևակ, Թուխիկ, Ծերուկ* և այլն: Անձնանուններ կազմելիս այս ածանցները շատ հաճախ մթագնում են փաղաքշական ու նվազական իմաստները՝ դառնալով գուտ անձնանվանակերտներ: Օրինակ՝ *Այծեմնիկ, Գառնիկ, Շողիկ, Ծովակ, Սևակ* և այլն: Նյութական իմաստ ունեցող մյուս (թվական, դերանուն, բայ, դերբայ, մակբայ) խոսքի մասերը՝ որպես անձնանվանակազմիչ հիմքեր, կիրառական չեն: Երբեմն հանդիպող եզակի նմուշները դիպվածային կամ արհեստական ճանապարհով առաջացած անուններ են, ինչպես՝ *Վեցիկ, Կատարեալ, Ուզիկ*:

Անձնանվանակերտ բառակազմական այս ածանցները դրվում են նաև պաշտոնապես արդեն իսկ վավերացված հատկապես փոխառյալ անձնանունների, երբեմն՝ դրանց կրճատ ձևերի վրա, օրինակ՝ *Այծեմն > Այծեմնիկ, Հայկ > Հայկակ, Դաւիթ > Դաւթակ, Գրիգոր > Գրիգորիկ, Թէոդորոս > Թորիկ, Թէոդոս > Թողիկ, Խաչատուր > Խաչիկ, Խոսրով > Խոսրովիկ, Հոփսոսիմ > Հուռիկ, Հրաչեայ > Հրաչիկ, Մարիամ > Մարեմիկ, Նազենիկ > Նազիկ, Յովհաննէս > Յովիկ, Յովանիկ, Մմբատ > Մմբատիկ, Վահան > Վահանիկ, Վահիկ* և այլն:

Քանի որ վերոնշյալ ածանցները, տարբեր բառակազմական նշանակություն ունենալուց բացի բնութագրվում են նաև, այսպես կոչված, ածանցային հոմանշությամբ⁶, ուստի դրանք նույն սերող հիմքերից ոչ միայն հասարակ, այլև հատուկ անուններից ևս կազմում են հոմանշային տարբեր շարքեր, օրինակ՝ *ակ=իկ՝ Եզնակ-Եզնիկ, Յուսակ-Յուսիկ, ակ=ուկ՝ Դաւթակ-Դաւթուկ, իկ=ուկ՝ Գառնիկ-Գառնուկ, Խաչիկ-Խաչուկ, Ծերիկ-Ծերուկ, Ծառիկ-Ծառուկ, Պապիկ-Պապուկ*:

Դառնալով այս ածանցների կիրառության ժամանակագրական հաջորդականությանը՝ նշենք, որ *-ակ*-ով կազմված բնիկ և փոխառյալ հայկական անուններն ավելի վաղ շրջանի են, քան *-իկ*-ով կազմվածները, որն էլ ամփոփ պատկերացում է տալիս հնում գործող անձնանվանակերտ հիմնային կաղապարների, այսինքն՝ անձնանվանակերտ հիմքակազմ տարրի և անձնանվանակերտ վերջածանցների, իսկ հետագայում՝ դրանց՝ համակարգային բնույթ ստացող տեղաշարժերի ու զարգացման միտումների մասին: Բնիկ և փոխառյալ անձնանվանահիմքերով և *-ակ* վերջածանցով կազմված արական անուն-

⁶ Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 251:

ների հնագույն վկայությունները Մովսես Խորենացու ավանդած հայկազուն թագավորների ու նահապետների և նրանց արյունակիցների անուններն են՝ *Առնակ, Ամպակ, Արբակ, Փառնակ, Հաւանակ, Վաշտակ, Գոռակ, Ընձակ, Գդակ, Յուսակ, Կայպակ, Միսակ*: Այս կազմությունների մեծ մասը հետագա դարերում գործածությունից դուրս են մղվում, փոխառվում և ի հայտ են գալիս անվանադրման նոր ձևեր, որոնք արտացոլում են տվյալ ժամանակաշրջանում ապրող և զարգացող հայ հասարակության լեզվամտածողության յուրահատկությունները: Գերմանացի հայագետ Ն. Հյուբշմանի պնդմամբ բնիկ հընդեվրոպական անուններ տալու ձևը հայերենում չի պահպանվել: Հին անունները փոխարինվել են օտար անուններով, որոնցից հայկական վերջածանցների միջոցով նոր անուններ են կազմվել: Ավելի ուշ հանդիպող սակավաթիվ հայկական անուններն ի սկզբանե եղել են մականուններ կամ կեղծանուններ⁷:

Անձնանունների համակարգը փոփոխության է ենթարկվում ժամանակին համընթաց, առաջանում են բնիկ և փոխառյալ նորատիպ անուններ՝ պահպանելով միաժամանակ հինը՝ ավանդականը: Կան բնականոն և արհեստական ճանապարհով առաջացած անձնանուններ: Այս տարբերակմամբ որոշվում է անվան «տարիքն ու ճակատագիրը»⁸: Այն անունները, որոնք առաջացել են բնականոն ճանապարհով, հարակա են, կանոնակարգվում են դարերի ընթացքում և անվանացանկում ունեն իրենց անփոփոխ, կայուն տեղը՝ Աստղիկ, Այծեմնիկ, Գառնիկ, իսկ դիպվածային կամ արհեստական ճանապարհով առաջացածները՝ Գիւտիկ, Տօնիկ, Քչիկ, Թառուկ, Իգիշուկ և այլն, դառնում են տվյալ հանրության սոցիալական որոշ խավերի աշխարհիկ պատկերացումներն արտացոլող վկաները միայն:

Հայերենը՝ որպես հնդեվրոպական լեզու, ի սկզբանե ունեցել է սեռի քերականական կարգ, որի հետքերը փորձել են գտնել անվանի հայագետներն ու լեզվաբանները: Օրինակ, Մեյեի կարծիքով արական և իգական սեռի տարբերություն է նկատվում *-ի*-ով ավարտվող բառերի հոլովման մեջ: *Ի*-ով վերջացող այն բառերը, որոնք *n* պարզ հոլովման են ենթարկվում, Մեյեն, ըստ քերականական սեռի, համարում է արական՝ դրանք համեմատելով հին հունարենի արական սեռի գոյականների հետ, իսկ *n-w* խառն հոլովման պատկանող գոյականները՝ իգական՝ վերջիններս համեմատելով հին հունարենի իգական սեռի գոյականների հետ: Հր. Աճառյանը, անդրադառնալով այս կրնճոտ հարցին, հերքում է այս տեսակետը, պնդելով հետևյալը՝ հայերենը գտնվել է պարսկերենի, թուրքերենի, մասամբ վրացերենի ու քրդերենի ազդեցության տակ, որոնք քերականական սեռ չունեն: Այս երևույթը նպաստել է, որ հայերենը ևս զերծ մնա քերականական այդ կարգից⁹: Գ. Ջահուկյանը, ուսումնասիրելով հնդեվրոպական անունների և հին հայերենի անունների երեք կարգերը՝ գոյական, ածական, թվական, նշում է դրանց ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները. ըստ որի՝ «հնդեվրոպական

⁷ Տե՛ս Ն. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 2004, էջ 328:

⁸ Տե՛ս **A. B. Сунеранская**, Общая теория имени собственного, М., 1973, էջ 164:

⁹ Տե՛ս Ն. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ III, Ե, 1957, էջ 292:

անունների սեռը անունների 3 կարգի դեպքում էլ ուներ ձևաբանական արտահայտության միևնույն միջոցները, բայց այդ միջոցները բաշխելու եղանակը տարբեր էր. հնդեվրոպական ածականները կարող էին ստանալ սեռային երեք վերջավորություններն էլ, մինչդեռ գոյականն ունենում էր սեռային միայն մեկ վերջավորություն. հին հայերենում սեռի քերականական կատեգորիայի վերացման հետ կապված այս տարբերությունը վերացել էր»¹⁰:

Ասորերենից և հունարենից կատարված թարգմանությունների ժամանակ հունարեն հեղինակները հասարակ անունների իգական սեռը տարբերակելու նպատակով կիրառել են այդ լեզուներին բնորոշ իգականակերտ ձևույթները, օրինակ՝ *-իթա(յ)*՝ *հանգստարարիթայ* «բժշկուհի», *-ի*՝ աստուածի «աստուածուհի», *-իա* ընտանիա «ազգականուհի», թոռնիա «թոռնուհի», հունարեն *-է*,՝ սէ, դէ: Փորձել են առանձնացնել նաև արական և իգական անձնանուններ կերտող մասնիկները՝ որոշ դեպքերում սխալ ստուգաբանություններով: Ընդ որում՝ արական են համարել *-էն*, *-էղ*, *-իթ*, *-գէն*, *-էճ*, *-ակ*՝ *Մամէն*, *Մանուէղ*, *Մանիթ*, *Բարգէն*, *Մանէճ*, *Արտակ*, իգական՝ *-ին*, *-ոյշ*, *-ուհի*, *-ոց* մասնիկները՝ *Վարդենի*, *Մանանոյշ*, *Տրդատուհի*, *Վարդոց*¹¹:

Հայերենում իգական անուններն արականներից տարբերվում են հիմնականում իրենց արտահայտած իմաստներով, մասամբ նաև՝ ձևով: Ձևով տարբերվող իգական անունները կազմված են սեռա-դասային բնույթ ունեցող *-անոյշ*, *-դուխտ*, *-ուհի* և *-ինէ* իգականակերտ ձևույթներով՝ *Սահականոյշ*, *Մանդուխտ*, *Տիգրանուհի*, *Լուսինէ*: Վերջիններս իրենց թվաքանակով գրեթե չեն զիջում նախորդներին:

Բնիկ հայերեն արմատներից կազմված և փոխառված անուններում քերականական կամ բառահարաբերական երկրորդական ձևույթները, որպես կանոն, վերածվում են բառակազմականների: Այսպես՝ պարսկերենի *-an*¹² (*-an*-ը նաև ածանց է՝ Միհրան, Տիգրան, Տիրան¹³), և հայերենի *-էր* հոգնակերտները, *-անց*, *-աց*, *-ոց* հոլովական թեքույթները և թուրքական *-um*¹⁴ ստացական նշանակության մասնիկը, սերող անձնանվանահիմքերի հետ զուգորդվելով, կորցնում են հոգնակիության և ստացականության առաջնային կամ բուն քերականական իմաստները և դառնում են բառակազմական ձևույթներ՝ *Գուլան* «վարդեր», *Միրան* «իշխաններ», *Միրանդուխտ*, *Վարդեր*, *Շողեր*, *Ականց*, *Ծաղկանց*, *Աղբրաց*, *Գինոց*, *Թանգոց Գանջում* «գանձ», *Ջարում* «ուկիս», *Խոջում* «տերս», *Մերում կամ Միրում* «իշխանս», *Շահում* «թագավորս», *Փիրում* «ծերունիս, սուրբս»: Նշված անունների մեծ մասը գործածությունից դուրս են մղվել, իսկ որոշ իրանական անուններ պահպանվել են միայն հայկական ազգանուններում՝ Խոջումյան, Շահումյան, Փիրումյան և այլն:

¹⁰ Գ. Բ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959, էջ 81:

¹¹ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նույն տեղում, էջ 146:

¹² Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Ե., 1946, էջ 242:

¹³ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, էջ 580:

¹⁴ Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 355:

Այսպիսով, անձնանվանակերտ այն ածանցները, որոնք այժմ էլ կիրառվում են նոր անուններ կազմելիս, կոչվում են գործուն կամ կենսունակ՝ ի հակադրություն ոչ գործուն և քարացած ածանցների: Անձնանվանակերտ գործուն ածանցներով կազմված անունները գերազանցապես պարզ սերող հիմքով վերջաձանցավոր կազմություններ են: Եթե նույնիսկ կան նախաձանցավորներ, ինչպես, օրինակ՝ *Անթառաւ, Աննման*, ապա դրանք կանխավ ածանցված հասարակ անունների փոխանցումով առաջացած անձնանուններ են: Վերոնշյալ անուններում սերող հիմքի հատկանիշի ժրխտումը դրական իմաստ ունի: Այսինքն՝ նախաձանցումը, հատկապես ժրխտման իմաստով, հայկական անուններին բնորոշ քերականական երևույթ չէ՝ ի տարբերություն ժամանակակից այլ լեզուների, այդ թվում նաև՝ ռուսական ազգանուններում պահպանված ժխտական նախաձանցներով կազմությունների՝ *Немил, Безух, Безнос*:

Հայերենի պատմական զարգացման տարբեր փուլերում գործող անձնանվանակերտ *-ակ, -իկ, -ուկ, -ան, -անց, -աց, -ոց, -եր, -է, -ինէ, -անոյշ, -դուխտ, -ուհի* երկրորդական ձևույթներից կենսունակ են *-ակ, -իկ, -ուկ, -ինէ, -ուհի* ածանցներն ու *-եր, -անոյշ, -դուխտ* ածանցակերպները: Ըստ գործածության հաճախականության՝ գործառական ակտիվություն ունի հատկապես *-իկ* ածանցը: Այս բոլորից հետևում է, որ արդի հայերենում ածանցման եղանակով անձնանուններ կազմելու ընդունված կադապարատիպերի փոփոխություններ են կատարվում՝ ժամանակի պահանջով և քաղաքակրթական տարբեր ազդեցություններով: Այսպես՝ առկա է հստակ միտում՝ հրաժարվելու երկարաշունչ անձնանուններից հոգուտ դրանց կարճ ձևերի, որ հետևանքով բազմաթիվ ածանցավոր անձնանունների կողքին ինքնուրույն կիրառություն են ստանում դրանց զուտ արմատական, անաձանց ձևերը՝ *Աստղիկ>Աստղ, Տարթիկ>Տարթ, Արնիկ>Արն, Արիհինէ>Արիհի, Քնարիկ>Քնար, Վանուհի>Վան* և այլն: Հունարենից փոխառված բազմաթիվ անուններ դուրս են մղվում, բայց դրանց համաբանությամբ հայերենում ունենք նորակերտ անուններ՝ *Սերինէ, Լուսինէ, Մարինէ, -անէ-ով՝ Նռանէ, Վահանէ* և այլն:

Ստորև բերում ենք գործառական բեռնվածություն ունեցող անունների մի շարք օրինակներ:

1. Ակ - բնիկ հնդեվրոպական ածանց՝ իրանական փոխանցումով (ak), հատուկ անուններ է կերտում գոյականներից՝ *Արբակ, Առնակ, Արշակ, Արմենակ, Եզնակ, Ընձակ, Հայկակ, Յուսակ, Բայահիմքերից՝ Յուլակ, Փայլակ...* Միջին իրանական լեզուներում՝ միջին պարսկերենում և պարթևերենում, այս ածանցը կենսունակ էր և կազմում էր գոյականներ և ածականներ գոյական, ածական, թվական, բայ խոսքի մասերից: Նրանով արտահայտված փաղաքշականների օրինակները, սակայն, նշյալ լեզուներում սակավաթիվ են, և Լ. Հովհաննիսյանի մեկնաբանությամբ՝ դրանք բնորոշ են միայն ժողովրդախոսակցական բանավոր լեզվին¹⁵:

¹⁵ Տե՛ս Լ. Շ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 147:

2. ԻԿ - բնիկ հնդեվրոպական ածանց՝ իրանական փոխանցումով (ik), անձնանուններ է կերտում բնիկ և փոխառյալ հասարակ և հատուկ անուններից՝ *Այծեմնիկ, Աստղիկ, Գառնիկ, Մրջիւնիկ, Խոսրովիկ, Վահանիկ, Նազիկ, Արեւիկ, Յօղիկ, Քնարիկ, Վանիկ*, ածականներից՝ *Թուխիկ, Թանգիկ, Մունթիկ, Նորիկ, Պարզիկ, Պերճիկ, Սեւիկ, Քչիկ*, մասամբ նաև՝ բայահիմքերից՝ *Գալիկ, Ուզիկ, Բուժիկ...* «Միջին իրանական լեզուներում ik-ը հիմնականում բնութագրվում է որպես հարաբերական ածականներ կերտող ածանց՝ բայանուններից ու գոյականներից»¹⁶:

3. ՈԻԿ - բնիկ հնդեվրոպական ածանց՝ իրանական փոխանցումով (uk)՝ փաղաքականներ է կազմում թե՛ բնիկ, թե՛ փոխառյալ գոյական անուններից՝ *Այրուկ, Արջուկ, Դաւթուկ, Ծառուկ, Պաւղոսուկ, Սարգսուկ, Վարդուկ, Վասյուկ, Տիրուկ, Փաշուկ*, ածականներից՝ *Գիշուկ, Իգիշուկ* (էգ իշուկ), *Ծերուկ, Շատուկ, Նորուկ, Սեւուկ...*

4. ԵՆ - հայկական ծագման հոգնակերտ մասնիկ, գործուն անձնանվանակերտ, որով կազմված անունների մեծ մասը հանդիպում են հատկապես ԺԳ և ԺԴ դարերի ձեռագրերի հիշատակարաններում: Դարձյալ անձնանուններ են կազմում գոյականներից՝ *Ակներ, Եղներ, Թանգեր, Լուսեր, Խաչեր /Խաչերեան/, Շահեր, Շողեր, Վարդեր...*

5. ԻՆԷ - հունական ծագման իգականակերտ ածանց՝ *Ադրինե, Արսինե, Արմինե, Գոհարինե, Եւգինե, Լուսինե, Կարինե, Մարինե, Արփինե...*

6. ՈՒՀԻ - իգականակերտ ածանցը ծագում է իրանական uhi (urhi) ձևից «դուստր, աղջիկ» նշանակությամբ: Այս ածանցով կազմված անունների մի մասը իրանական փոխառություններ են՝ *Ջարուհի, Համազասպուհի, Տիգրանուհի, Համազասպուհի, Սմբատուհի*, մյուսը մասը՝ իրանականների համաբանությամբ այլ հիմքերից բաղադրված նորակազմ անուններ են՝ *Տիրուհի, Վանուհի, Երանուհի, Արմենուհի, Վարդուհի, Հայկուհի, Հրաչուհի, Իսկուհի...*

7. ԱՆՈՅՇ - պահլավական ածծ «անմահ», հետագայում՝ «քաղցր» նշանակությամբ¹⁷ բառարմատ է, որ ածանցական արժեք է ստանում հայրանուններից բաղադրված՝ *Արշանոյշ, Գեղանոյշ, Հայկանոյշ, Սահականոյշ, Վարդանոյշ*, և սրանց համաբանությամբ նաև՝ հասարակ անուններից ածանցված *Միրանոյշ, Մայրանոյշ, Վեհանոյշ* նորակազմ անուններում:

8. ԴՈՒԻՏ - իրանական duxt «աղջիկ» նշանակությամբ¹⁸ բառարմատ՝ ածանցակերպի արժեքով: Դարձյալ իգական անուններ է կազմում արական անուններից՝ *Խոսրովիդուխտ, Հայկանդուխտ, Շահանդուխտ, Ուրիզդուխտ, Սահակադուխտ, Սանդուխտ, Վարդանդուխտ...*

¹⁶ Նույն տեղում, էջ 153:

¹⁷ Հմմտ. **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ Ա, Ե., 1942, էջ 171:

¹⁸ Հմմտ. **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., հ Բ, Ե., 1944, էջ 72:

Alvard Khachatryan - The Functional Significance of Suffixes and Endings in the Native Armenian and Borrowed Anthroponyms. - Like all the lexical units and suffixes, suffixed elements are etymologically native and borrowed. In all periods of history of the Armenian language suffixes are actively involved in the formation of the Armenian anthroponyms both male and female. Armenian, Iranian, and partly Greek suffixes have functional activity because they have a common Indo-European basis. Grammatical terminations, especially plural morphemes, which formed anthroponomy, for example -եր, have lost their productivity. Suffixes -ւղ, -իղ, in common nouns are of caressing and diminishing value, while in anthroponyms they lose this value, turning into a purely anthroponymic suffixes.

Алвард Хачатрян – Функциональная значимость суффиксов и суффиксоподобных в исконных и заимствованных армянских антропонимах. – Как антропоосновы, так и суффиксы и суффиксоподобные окончания этимологически бывают исконными и заимствованными. Во всех периодах истории армянского языка суффиксы активно участвовали в образовании армянских антропонимов как мужских, так и женских. Функциональной активностью отличались и армянские, и иранские, частично греческие суффиксы, которые слились воедино, благодаря их общеиндоевропейской основе. Грамматические окончания, в особенности морфемы множественного числа, которые образовывали антропонимы, например, –եր, уже потеряли свою продуктивность. Суффиксы –ւղ, -իղ, которые в нарицательных именах имеют уменьшительно-ласкательное значение, в армянском языке, войдя в состав антропонимов, теряют свое первоначальное значение, превращаясь в чисто антропонимические суффиксы.

**ԲԱՌԱՅԻՆ ՇԵՇՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՇՎԵԴԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Բառային շեշտը բառի որևէ վանկի ուժեղացումը կամ ցայտունությունն է մյուս վանկեր համեմետությամբ: Սովորաբար այն արտահայտվում է ձայնի ուժով, որ ուղեկցում է տևողությամբ կամ տոնի փոփոխությամբ: Սակայն ըստ նրա թե ո՞րն է գերիշխում՝ ուժգնությունը, թե երաժշտական մեղեդայնությունը, տարբերակում են դինամիկ և երաժշտական շեշտ: Նշենք, որ հայերենը, ինչպես ցույց են տվել լսողական և փորձառական ուսումնասիրությունները, հայերենի շեշտը պատկանում է դինամիկ շեշտի խմբին: Սակայն նկատի ունենալով, որ այն վերջնավանկային է, ապա զուգակցվում է տևողությամբ: Իհարկե հնչյունների տևողությունը կախված է նախ և առաջ խոսքի տեմպից. որքան արագ է խոսքը, այնքան կարճ են հնչյունները: Այն կախված է նաև բառի և վանկի կազմությունից. որքան երկար են դրանք, այնքան վանկի հնչյունների տևողությունը պակասում է: Տևողությունը պայմանավորված է նաև հնչյունի որակով, սովորաբար *ա, է* ձայնավորները ավելի երկար են, քան *ի, ու*:

Հնչյունների այն փոփոխությունները, որոնք զուգակցվում են իմաստի փոփոխությամբ կոչվում են իմաստատարբերակիչ կամ հնչութային: Երբ միևնույն հնչյունը հանդես է գալիս տարբեր տևողությամբ և տարբերակում է իմաստը, ապա այդ հնչյունների քանակային տարբերությունները հնչութային են: Բերենք նման հակադրությամբ իրարից տարբերակվող մի շարք բառեր.

- tal (ta:l) «խոսք» - tall (tal:) «սոճի»
- glas (gla:s) «պաղպաղակ» - glass (glas:) «ապակի»
- bada (ba:da) «լողանալ» - badda (bad:a) «թրջել»
- bus (bu:s) «չարածճիություն» - buss (bus:) «աֆտորուս»
- dör (dö:r) «մեռնում է» - dörr (dör:) «դուռ»
- sil (si:l) «մաղ» - sill (sil:) «հարինգ-ձուկ»
- kål (ko:l) «կաղամբ» - kol:) «ստուգում»
- ful (fu:l) «տգեղ» - full(ful:) «լիքը»

Վերը բերված օրինակներում, ինչպես և բազմաթիվ այլ միավանկ բառերում գործում է շվեդերենին հատուկ օրինաչափություն. երկար ձայնավորին հաջորդում է կարճ բաղաձայն, իսկ կարճ ձայնավորին՝ երկար բաղաձայն կամ բաղաձայնական խումբ: Բոլոր միավանկ բառերը արտասանվում են ուժեղ շեշտով, այսպես կոչված Ակցենտ մեկ-ով: Արտասովոր է, որ երկար են արտասանվում նաև բաղաձայնները. gratts երկար տ -ով և կարճ ա-ով նշանակում է «շ՛նորհավոր», իսկ gratis կարճ տ-ով և երկար ա-ով՝ «ձրի»: Բնականաբար խոսվում է այդ բաղաձայնի սկզբի արտաբերական տևողության մասին: Ֆիզիկապես՝ հնչողությամբ նկատելի է, որ շվեդերենի շեշտը ավելի ուժեղ է, քան հայերենինը, կամ մի շարք այլ լեզուների շեշտը, որին

նպաստում է շվեդերենի հնչյունների քանակային՝ տևողության հատկանիշը: Եթե պատկերենք Ակցենտ մեկ-ը կորագծով, ապա այն կեսից բարձրանում և հետո կտրուկ իջնում: Բուն շեշտի ընկալումը սկսվում է երկու և ավելի վանկ ունեցող բառերի արտասանության ժամանակ: Շեշտված վանկը աչքի է ընկնում իր ուժգնությամբ և կամ ելևէջի փոփոխությամբ: Երկրորդի դեպքում գործում է երաժշտական շեշտը: Շվեդերենին հատուկ է երկու տեսակն էլ, թե՛ ուժային և թե՛ երաժշտականը, որոնք ընդունված է անվանել Ակցենտ մեկ (Accent 1) և Ակցենտ երկու (Accent 2): Այդ շեշտերի կիրառումը պայմանավորված է մի շարք հնչյունական և ձևաբանական հանգամանքներով, որոնք կարելի է ներկայացնել որոշակի կանոններով: Առաջ է գալիս նաև շեշտված վանկի տեղի հարցը: Սովորաբար բուն շվեդերեն բառերում շեշտը ընկնում է առաջին վանկի վրա: Օրինակ՝ *'tala*, *'talesman*, *'talare*, *'talsmaskin* «խոսել, խոսնակ, խոսող, խոսող ապարատ», նույնիսկ երբ այդ վանկին նախորդում է նախդիր կամ մեկ այլ բառ: Օր. *be'tala*, *för'tala*, *hög'talare* «վճարել, զրպարտել, բարձրախոս»: Երբ շեշտը ընկնում է մեկ այլ վանկի վրա, ապա այն վկայում է, որ բառը ունի կամ բարդ կազմություն, կամ որոշակի ածանցներ և կամ փոխառյալ է: Սովորաբար վերջնավանկային շեշտված բառերը ֆրանսիական ծագում ունեն: Օր. *ka'fe*, *restau'rang*, *direk'tör*, *para'ply* «կաֆե, ռեստորան, տնօրեն, հովանոց» ծնողագուրկ/ «որբ» բացիչ, ծնողական ժողով»: Ակցենտ երկու-ի կիրառումը պայմանավորված է հետևյալ կանոններով.

1. Ածանցներն ունեն իրենց հատկությունները, որոնք բնորոշվում են իրենց հատուկ ֆոնոտակտիկայով: Եթե ածանցը բաղկացած է մեկ կամ մի քանի բաղաձայններից, ապա շեշտը ընկնում է բառի հիմքի վրա: Օր. *köp-t*, *säl-d*, *vin-st* «գնած, վաճառված, շահած», իսկ եթե ածանցը բաղկացած է մի ձայնավորից և մի քանի անշեշտ բաղաձայններից, ապա այն արտասանվում է Ակցենտ երկու-ով. *glädj-ande*, *skriv-ning*, *skriv-are*, *svens-ka* «ուրախացնող, գրվածք, մեքենագրուհի, շվեդուհի»: Սակայն, եթե բառը ունի նաև նախածանց, ապա բառը արտասանվում է Ակցենտ մեկ-ով: Օր. *be/skriv-ning*, *be/rättare* «նկարագրություն, պատմիչ» կամ երբ բառը ավարտվում է *er* --- *isk*, *anska*, *-enska* ածանցներով:

Օր. *programmer-are*, *programmer-ing*, *grekisk*, *slaviskt*, *italienska*, *moldavanska*:

Սակայն, երբ ընդգծվում է իզական սեռի պատկանելիությունը, ապա օգտագործվում է Ակցենտ երկու-ը: Օր. *italienska*, *japanska* «իտալուհի, ճապոնուհի»:

2. Բառերը որոնք ունեն հետևյալ վերջածանցները արտասանվում են Ակցենտ երկու-ով *-het*, *-dom*, *-lek*, *-skap*. *lägenhet*, *fatigdom*, *kärlek*, *sällskap* «բնակարան, աղքատություն, սեր, ընկերակցություն»:

3. Երբ ածանցը կրում է հիմնական շեշտը, ապա այն սովորաբար հունական կամ հռոմեական ծագում ունի: Օր. *prins-essa*, *präst-inna*, *bibliotek-arie*, *kopi-ator*, «արքայադուստր, միանձնուհի, գրադարավար, տպիչ»:

4. Երկվանկ բառերը, որոնք ավարտվում են *a*-ով արտասանվում են Ակցենտ մեկ-ով՝ *lampa*, *matta*, *handska*, «լամպ, գորգ, ձեռնոց», սակայն

բայերը, որոնք պատկանում են առաջին խոնարհմանը և վերջանում են -a(r) ածանցով, արտասանվում են Ակցենտ երկուս-ով. օր.՝ handla «գնումներ կատարել», arbeta(r), kosta(r), mata(r), «աշխատել,արժենալ, կերակրել»:

5. Միավանկ շեշտակիր ածանցները արտասանվում են Ակցենտ մեկ-ով: Օր.՝ ձայն+ production, kapitalism, rivalitet «արտադրություն, կապիտալիզմ, մրցակցություն»: Գոյականակերտ ածանցները կարող են ունենալ թե՛ մեկ, թե՛ երկու Ակցենտը, նայած թե ինչպիսին է հիմքի վերջնավանկի հնչյունը. բաղաձայն +n, l, r խումբը չի շեշտվում և արտասանվում է Ակցենտ մեկ-ով: Օր.՝ segling, körning, lagning «նավարկում, ավտովարում, պատրաստում»: Եթե ածանցավոր բառերի ակցենտավորումը ենթարկվում է որոշակի, թեև բարդ օրինաչափության, ապա արմատական բառերի ակցենտավորումը ավելի անկայուն է և տարբերվում է ըստ տարածքի և բառի հնչյունակազմության և կամ բառիմաստի: Այստեղ նշանակություն ունի վանկի կառուցվածքը: Նշենք, որ շվեդերենի վանկը բառասկզբի վանկում կարող է ունենալ մինչև երեք բաղաձայն, իսկ բառավերջում նույնիսկ չորս բաղաձայն. օր.՝ svenskt pass «շվեդական անձնագիր», եթե նկատի ունենանք նաև ձայնորդ բաղաձայնը: Մեկ արմատից բաղկացած բառերը, որոնք ավարտվում են -a, -e, -en, -er, -el. հնչյուններով արտասանվում են Ակցենտ մեկ-ով կամ երկուս-ով, Accent 1

Accent 2

tema, samba «թեմա, սամբա»

gata, kråka «փողոց, ագռավ»

linje «գիծ»

dike, stolpe «փոս, սյուն»

vapen, botten «զենք, հատակ»

bäcken, siden «կոնք, մետաքս»

fiber, order «թելիկ, հրաման»

papper, fader «թուղթ, հայր»

cykel, segel «հեծանիվ, առագաստ»

nyckel, stempel «բանալի, կնիք»

Բազմաթիվ դեպքերում շեշտի ընտրությունը պայմանավորված է բառիմաստով և կամ ավանդույթով: Այսպես, հետևալ ածանցավոր բառերում օգտագործվում է Ակցենտ մեկ-ը և շեշտվում է վերջին վանկը:

-and/-end doktorand, dividend «դոկտորանտ, բաժանելին»

-ans/-ens leverans, konferens «մատակարարում, կոնֆերանս»

-ant/-ent debutant, konsument «սկզբնավորող, սպառող»

-(a>>)tion, -ition/-sion operation, edition, rivision «գործողություն, հրապարակում, ստուգում»

Մի քանի բազմավանկ բառեր, որոնցում շեշտվում է վերջին վանկը, արտասանվում են Ակցենտ երկուս-ով. օր.՝ lojt 'nant, alma 'naka, ar 'bete, bis 'kop. hjälpar 'bete, «լեյտենանտ, օրացույց, աշխատանք, եպիսկոպոս, օգնություն»:

Բազմավանկ բառերը շվեդերենում ունեն երկու ուժեղ շեշտ, սովորաբար Ակցենտ մեկ և Ակցենտ երկու. օր.՝ vardags`mat «ամենօրյա ուտելիք», `varm `vatten (var:m vat:en) «տաք ջուր», postadress(pos:tadres:) «փոստային հասցե»:

Ամփոփելով վերոհիշյալը՝ կարելի է ասել, որ շվեդերենի շեշտը ավելի բազմազան է ու արտահայտիչ: Այն ունի երկու տեսակի ակցենտային շեշտ, որը բնորոշ միայն շվեդերենին և նորվեգերենին և չի հանդիպում մյուս գերմանական կամ այլ եվրոպական լեզուներում: Համեմատած հայերենի շեշտի հետ՝ այն չունի բառային որոշակի տեղայնացում, այսինքն՝ ամրագրված չէ: Ակցենտ մեկ-ը ուժային բնույթի է և հանդիպում է միավանկ և բազմավանկ բառերում: Ակցենտ երկու-ը բնորոշ է երկվանկ ու բազմավանկ բառերին և պայմանավորված է բառիմաստի, կազմի և հնչյունական առանձնահատկություններով: Բարդ կազմություն ունեցող հիմնականում երկվանկ բառերը բնութագրվում են Ակցենտ երկու շեշտով: Հայերենում բարդ բառերը արտասանվում են մեկ հիմնական վերջնավանկային շեշտով, երկրորդական շեշտը թույլ է արտահայտված: Շեշտը շվեդերենի կարևոր վերհատույթային միավոր է, որը, ձուլվելով նախադասության հնչերանգին, ստեղծում է յուրահատուկ մեղեդայնություն:

Amalia Khatchatrian – Word Stress in Swedish and Armenian. – The word stress in Swedish in comparison with the Armenian has a number of peculiarities. If in Armenian the stress is fixed on the last syllable in Swedish it doesn't have fixed position. In comparison with Armenian, the word stress in Swedish is expressed more strongly. Besides in Swedish there are two word stresses – accent one and accent two. The second accent is also melodic. Another important peculiarity is that in Swedish according to word stress there are short and long consonants, which are the pauses between the words in speech, the manifestation of time while dividing into syllables.

ՀԻՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ

Կիլիկիայի լեզուաքաղաքական իրավիճակը ԺԱ-ԺԴ դդ.: Կիլիկեան Հայոց պետութիւնն իր ուրոյն տեղն ունի մեր պատմութեան մէջ: Իր աշխարհագրական դիրքով և իր վարչաքաղաքական ու լեզուական իրավիճակով նա մի կողմ է կանգնած հայոց պատմութեան ընդհանուր առանցքից: Հայեր Կիլիկիայում բնակվել են դեռևս անյիշելի ժամանակներից, բայց նրանց թիւը կտրուկ աճեց ԺԱ դ.՝ սելջուկեան արշաւանքների հետեւանքով բուն Հայաստանից տեղահան եղած ու դեպի արեւմուտք գաղթած բազմահազար հայերով: Կիլիկիա գաղթեցին վասպուրականցիներ, շիրակեցիներ, արցախեցիներ, սասունցիներ ու Հայաստանի այլ շրջանների բնակիչներ: Ներգաղթած հայերի բարբառները, որ արդէն սկսել էին իրարից զանազանվել, միախառնվեցին ու վերջին հաշուով ծնունդ տվեցին հայոց լեզուի կիլիկեան ճիւղին՝ իր գրաւոր և խօսակցական տարբերակներով:

Այդ դարերում Կիլիկիայի բնակչութեան թում, բացի հայերից, կային բազմաթիւ յոյներ, ու յունախօս նախկին փոքրասիական ցեղեր, ասորիներ, հրեաներ, իսկ հետագայում և եւրոպացիներ («ֆռանգներ»), նախ և առաջ ֆրանսիացիներ, իտալացիներ, բայց և գերմանացիներ ու անգլիացիներ: Կային նաև արաբներ (արաբները մինչ այդ մի քանի դար տիրել էին Կիլիկիայի դաշտային մասերին), գուցէ և թուրքալեզու որոշ տարրեր (սրանք սակայն հիմնականում բնակվում էին Կիլիկեան Տարոսից հիւսիս ընկած կենտրոնական Անատոլիայում և նրանց թիւը Կիլիկիայում աննշան էր):

Լեզուական տեսանկիւնից Կիլիկիան է՛լ աւելի խայտաբղետ էր: Ամեն ժողովուրդ բնականաբար նախ և առաջ իր խօսակցական լեզուն ուներ: Որոշ ազգեր ունէին նաև իրենց գրական լեզուատարբերակը՝ օրինակ յոյների գրաւոր լեզուն դեռևս լայնօրէն մնում էր հին յունարէնը (բնականաբար դարերի ընթացքում կրած մասնակի փոփոխութիւններով): Արեւմտեան լեզուներից լայնօրէն տարածված էր հին ֆրանսերէնը, որը գրաւոր և մեծ մասամբ նաև խօսակցական լեզու էր ոչ միայն Ֆրանսիայից, այլև Անգլիայից եկած բնակչութեան համար, որտեղ ԺԱ դ. տեղաւորվել էին նորմանական նուաճման հետեւանքով Ֆրանսիայից գաղթած բազմահազար ազնուականներ ու հասարակ քաղաքացիներ:

Կիլիկիայի հայ բնակչութեան շրջանում տարածված էր հայոց լեզուի երեք, նույնիսկ կարելի է ասել չորս տեսակ: Նախ՝ կիլիկեան հայերէնի ընդհանուր խօսակցական և գրական տարբերակները, այնուհետեւ՝ Ե-Ժ դդ. հին հայերէնը (որ այժմ նաև գրաբար ենք անուանում): Պէտք է ասել, որ հին հայերէնը շարունակում էր մնալ իբրեւ գրական լեզու և իր ազդեցութիւնն է ունեցել նոր ձեւաւորվող կիլիկեան գրական հայերէնի վրայ: Սրան զուամբաժ՝ տարբեր շրջանների հայերէն բարբառներ, որ իրենց հետ բերել

էին բուն Հայաստանից վերագաղթածները: Ահա լեզուական այն իրաւիճակը, որ տիրում էր Կիլիկիայի հայոց մէջ:

Կիլիկեան հայերէնի հնչիւնական առանձնայատկութիւնները: Կիլիկեան հայերէնի հնչիւնական ամենակարեւոր առանձնայատկութիւնը հին հայերէն բաղաձայնների եռակարգ համակարգի տեղաշարժն է¹: Ստորեւ բերվում է մի աղիւսակ, որ ամփոփում է այդ իրողութիւնը: Սլաքները ցոյց են տալիս, թէ դեպի ուր է տեղաշարժվել տառի դասական արտասանութիւնը:

Պարզ խուլեր	Չայնեղներ	Շնչեղ խուլեր
պ →	← բ →	փ
կ →	← գ →	ք
տ →	← դ →	թ
ճ →	← ջ →	չ
ծ →	← ձ →	ց

Ինչպէս տեսնում ենք, հին հայերէնի պարզ խուլերը ձայնեղացել են: Ինչ վերաբերում է ձայնեղներին, խնդիրն այնքան էլ միանշանակ չէ: Եթէ լեզուաբանների ընդհանուր կարծիքով, ձայնեղները դարձել էին շնչեղ խուլեր, աղբիւրներում հանդիպում են ոչ սակաւ դէպքեր, երբ օտար պարզ խուլերն արտայատուած են կիլիկեան ձայնեղներով (օրինակները՝ ներքեւում):

Փոխառութիւններում նկատում ենք նաև դէպքեր, երբ հին հայերէն հնչիւնը պահպանում է իր կարգը, օրինակ՝ «մ»-ից յետոյ ձայնեղը մնացել է ձայնեղ («chambre» → «ջամբո», «chalonge» → «ջալունջ»), «ս»-ից յետոյ խուլը՝ խուլ («maistre» → «մայստո», «chastel» → «ջաստէլ») և այլն:

Իր հնչիւնական համակարգով, ինչպէս նաև ձեւաբանական ու շարահիւսական բազմաթիւ տարրերով, կիլիկեան հայերէնը ընդհուպ մօտենում է արդի արեւմտահայերէնին: Բնականաբար անելի խորը ուսումնասիրութիւններ են պահանջվում հաստատելու այս տեսակետը, բայց այսօրուայ մեր ունեցած նիւթից կարելի է ենթադրել, որ կիլիկեան հայերէնը արեւմտահայերէնի նախահիմքը պիտի դիտվի: Յօդուածի թեմայից իհարկէ դուրս են այս դատողութիւնները: Նշենք միայն, որ միջին հայերէն հասկացութիւնը շատ լայն, գուցէ և անորոշ է այն առումով, որ իր մէջ ընդգրկում է ամբողջ Հայաստանի գաւառներում ու երբեմն օտար երկրներում հաստատված իրարից տարբեր զանազան բարբառներ ու գրական տարբերակներ: Միջին հայերէն հասկացութիւնը լոկ ժամանակագրական հասկացութիւն է և ոչ լեզուաբանական:

Հին ֆրանսերէնն ու իր տարատեսակները: Վերոյիշեալ միտքը միջին հայերէնի բազմազանութեան վերաբերեալ առաւել ճիշտ է ու վաղուց ապացուցված հին ֆրանսերէնի համար: Ֆրանսերէն լեզուի պատմութիւնը մասնագէտները բաժանում են երեք ժամանակահատուածի՝ հին ֆրանսերէն (Թ-ԺԳ դդ.), միջին ֆրանսերէն (ԺԴ-ԺԵ դդ.) և նոր ֆրանսերէն (ԺԶ դ.): Հին

¹ Տե՛ս **Josef Karst**, *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*. Strassburg, Verlag von Karl J. Trübner, 1901, ss. 29-34, 75-88. **Ս. Ղազարյան**, *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Ե., 2006, էջ 230-232:

Ֆրանսերեն հասկացութիւնն իր մէջ ընդգրկում է երեք լեզուախումբ՝ «օյլ» (Ֆրանսիայի հիւսիսը), «օկ» (հարաւը) և ֆրանկապրովանսալ կոչվող միջանկեալ լեզուն (մօտաւորապէս Լիոնի շրջանն ու ռոմանախօս Շվեյցարիան): Օյլ և օկ լեզուախմբերն իրենց հերթին բաժանվում են իրարից բաւական տարբեր բարբառների (ոմանք դրանք նոյնիսկ լեզու են անուանում)՝ թուով մի քանի տասնեակ: Այսպիսով՝ հին ֆրանսերէնը բոլորովին միատարր լեզու չէ, ինչպէս օրինակ հին դասական հայերէնը, այլ մի ընդհանուր անուանում՝ Թ-ԺԳ դդ. ֆրանսիական լեզուական իրողութիւնն արտայայտելու համար²:

Ֆրանսիական հին գրականութիւնը գրված է տարբեր բարբառներով, և ամէն գրիչ իր ձեռագիրն է թողել՝ այլ շրջաններում գրված ձեռագրերը արտագրելիս: Երբ խօսում են հին ֆրանսերէն լեզուի ու քերականութեան մասին, մեծ մասամբ նկատի են ունենում հիւսիսի լեզուախումբը, և յատկապէս Փարիզի շրջակայքի բարբառը, որն արդէն ԺԲ-ԺԳ դդ. սկսում է հեղինակութիւն վայելել պատմական Գալիայի տարածքում ու միւս գրաւոր բարբառները դանդաղօրէն դուրս մղել: Սկզբնական շրջանում Ֆրանսիա աշխարհագրական հասկացութիւնը տարածվում էր միայն Փարիզի շրջակայքի ու նրանից հիւսիս-արեւելք ընկած տարածքների վրայ, որից էլ տեղի լեզուն (բարբառը) անուանվել էր «ֆրանսերէն»: Դրա կողքին յայտնի հեղինակութիւն էին վայելում Պիկարդիայի, Բուրգունդիայի, Պրովանսի, Օքսիտանիայի, Նորմանդիայի և նոյնիսկ Անգլիայի (այսպէս կոչված անգլոնորմանդերէն) գրաւոր բարբառները: Մեր քննութեան առարկայ փոխառութիւնները, թէև հիմնականում փարիզեան (Իլ-դը-Ֆրանսի շրջանի) բարբառի գրական տարբերակից են վերցրած, անշուշտ կրում են ֆրանսիական տարբեր բարբառների ազդեցութիւնը, քանի որ խաչակիր ասպետները բնականաբար Ֆրանսիայի միայն մի շրջանից չէին:

Ստորեւ բերում ենք հին ֆրանսերէնի (փարիզեան տարբերակի) որոշ հնչիւնների արտասանութիւնը, որպէսզի ընթերցողը հեշտ կողմնորոշվի՝ փոխառութիւնների աղբիւրը ստուգելիս³: Գրութեան և արտասանութեան շեղումները աւելի քիչ էին, քան արդի ֆրանսերէնում: Հիմնականում հնչիւնը համապատասխանում էր գրութեանը: չետեւեալ տառերն արտասանվում էին.

² **Jacqueline Picoche, Christiane Marchello-Nizia**, *Histoire de la langue française*, 5^e édition revue et corrigée. Paris, Nathan, 1998, pp. 13-29.

³ *Histoire de la langue française*, *ibid.*, pp. 181-200. **Nelly Andrieux-Reix, Catherine Croizy-Naquet, France Guyot, Évelyne Oppermann**, *Petit traité de langue française médiévale*. Paris, Presses Universitaires de France, 2000, pp. 9-11, 19-21.

Տարբ	Դիրքը	Հնչումը
c	e-ից կամ i-ից առաջ	մինչև ԺԳ դարը «ց», այնուհետև «ս»
z		մինչև ԺԳ դարը «ց», այնուհետև «զ»
ch		մինչև ԺԳ դարը «չ», այնուհետև «շ»
g		մինչև ԺԳ դարը «ջ», այնուհետև «ժ»
j		մինչև ԺԳ դարը «ջ», այնուհետև «ժ» (տես ստորև *)
e		«է» կամ «ը» (նոյն գրությունը)
l	բաղաձայնից առաջ	վերածվել էր թալ «լ» (անգլերեն «w») հնչյունի
ill		փափուկ «լ» և ոչ «յ» ինչպես այսօր
h	որոշ բառերի սկզբում	արտասանվում էր գերմանական արմատներում
s	ձայնաւորների միջև	«զ» (ինչպես այսօր)
ai		սկզբնական շրջանում կարդացվում էր «այ», յետոյ՝ «է»
in	բառավերջում	կարդացվում էր «ին»
r		հնչում էր «ռ», բայց ոչ «ր» ինչպես այսօր

* «j» և փոքրատառ «v» տառերը հին ֆրանսերենում և առհասարակ լատիներեն այբուբենում գոյություն չեն ունեցել մինչև ԺԶ-ԺԷ դարերը: «j»-ի փոխարեն գրվել է «i», փոքրատառ «v»-ի փոխարեն՝ «u»:

Արդի ֆրանսերենի շեշտանշանները (é, è, ê, ë, ç) հնում գոյություն չունեին. նոր տպագրություններում լեզուաբանները դրանք աւելացնում են՝ արտասանությունը դիրացնելու նպատակով: Բառավերջին՝ բոլոր տառերն արտասանվում էին: «ou» երկբարբառի գրությունը դեռևս հաստատուն չէր, գրում էին նաև «o» կամ «u»՝ «ու» հնչումն արտայայտելու համար: Թէև այսօրուայ ֆրանսերենից աւելի պարզ էր, բայց հին ֆրանսերեն գրությունն էլ ուներ իր խայտաբղետությունները, որոնք այնքան շատ են, որ այս յօդուածում հնարաւոր չէ դրանք մէկ առ մէկ թուարկել: Միննոյն բառի գրութեան տարբերակները ձեռագրերում երբեմն երկու-երեք տասնեակի են հասնում՝ անշուշտ ոչ միայն բարբառային արտասանությունների պատճառով, այլև լատիներեն այբուբենի՝ ֆրանսերեն լեզուի համար թերի լինելու հանգամանքով: Մեր աղիւսակներում հին ֆրանսերեն բառերը բերում ենք իրենց ամենատարածուած գրելաձևերով միայն:

Գոյական և ածական անունների հոլովումը: Հին ֆրանսերենը լատիներենից ժառանգել էր հոլովական համակարգի փշրանքները միայն: Լատիներեն վեց հոլովներից մնացել էին անուանականը (նոյնն է ինչ ուղղական) և հայցականը: Արական սեռի բառերի մեծ մասն ուներ երկու հոլով. օրինակ՝ «պատ» բառը որոշիչ յօդով կը լինէր՝ եզակի անուանական՝ li murs, հայցական՝ le mur, յոգնակի անուանական՝ li mur, յոգնակի հայցական՝ les murs: Ինչ վերաբերում է իգական գոյական ու ածական անուններին, հին ֆրանսերենն արդէն կորցրել էր տարբերությունը այս երկու հոլովների միջև և իգական սեռի անունների գերակշռող մեծամասնությունը միայն մի հոլով ուներ, ինչպես «տիկին» բառը՝ եզակի՝ la dame (անուան. և հայց.), les dames (անուան.

և հայց.)⁴: Սահմանափակ գոյականներ ու ածականներ այս երկու հոլովների համար ունենին իրարից բառական տարբեր ձևեր. ինչպես՝ անուան. ber / հայց. baron «բարոն», «պարոն», անուան. cuens (կամ տարբերակային՝ cons) / հայց. conte «կոմս»⁵:

Անուանականը հիմնականում ենթակայի հոլովն էր, իսկ հայցականը ուղիղ խնդրի ու նաև նախդիրներից յետոյ կիրառվող հոլովը: ԺԴ դարում միջին ֆրանսերենը կորցնում է անուանական հոլովն ու նոր ֆրանսերենը ժառանգում է միայն հայցական հոլովը՝ բոլոր կիրառությունների համար: Այսպիսով՝ նոր ֆրանսերենի գոյական ու ածական անունները իրենց ճնշող մեծամասնությամբ որպես սկզբնաղբիր ունեն լատիներենի հայցական հոլովը:

Հին ֆրանսերենում արդեն հայցական հոլովի կիրառությունն ավելի լայն էր, քան անուանականինը: Հետաքրքրական է, որ կիլիկեան փոխառությունները համարեա բացարձակապես հայցական հոլովից են կատարված:

Լատինական այբուբենից փոխառեալ տառեր (ֆ, օ): Հին հայերենը «ֆ» հնչյուն չուներ և դրա կարիքն էլ չուներ: Յունարեն բազմաթիվ փոխառությունները «փ»-ով են տառադարձված այն պարզ պատճառով, որ հին յունարենն ինքը չուներ «ֆ» հնչյուն: Յունարեն «ֆ» տառը մինչև մօտաւորապես մեր թուարկութեան Է-Ը դարերը հնչում էր «փ» և միայն յետագայում վերածվեց «ֆ» հնչման: Այլ լեզուներից փոխառած բառերում «ֆ» հնչյունը հին հայերենում հանդես է գալիս այլ տարբերակներով, ինչպես օրինակ պահլաւերենից փոխառեալ «հրաման» կամ «հրահանգ» բառերը («ֆ»-ի դիմաց ունենք «հ»):

Կիլիկեան շրջանում, մի կողմից յունարենն իր «փ» հնչյունը փոխել էր «ֆ»-ի, միւս կողմից անմիջական էր դարձել հայերենի կապը արաբերենի հետ: Արաբերենում «ֆ» հնչյունը մեծ կիրառություն ունի, այն աստիճան, որ չկան «փ» կամ «պ» հնչյունները, և սրանք «ֆ»-ով են տառադարձվում: Օրինակ՝ «Պլատոն» անունը հնչում է «Իֆլաթուն»: Լեզուական այս իրավիճակում (երբ հայերեն էին թարգմանում բազմաթիվ արաբերեն գրքեր ու փոխ առնում արաբերեն ամենատարբեր իմաստներ), «ֆ» հնչյունի անհրաժեշտությունն ակնյայտ էր: Ի տարբերություն տարածված կարծիքի, թե «ֆ» տառը փոխառություն է արտայայտելու արեւմտաեւրոպական անունները կամ էլ թէ արտայայտելու յունարենի նոր իրավիճակը, արաբերեն բառերի առատությունը կիլիկեան հայերենում, ինչպես նաև արաբական աշխարհի հետ մերձաւոր կապերը յուշում են, որ «ֆ» հնչյունի ներմուծման պատճառը առաջին հերթին արաբերենը պետք է համարել: Նոյնիսկ թուրքական տարբեր բարբառները, որոնց հետ կիլիկեցի հայերն արդեն շփում էին ու որոնցից բառեր էին փոխառում, չեն կարող արդարացնել «ֆ» հնչյունի ներմուծման անհրաժեշտությունը, քանի որ թուրքական լեզուներում իսկ «ֆ» հնչյունը ներմուծովի է: Ակնյայտ է, որ եթէ չլինէին այս մերձաւոր առնչությունները, հայերենը գուցէ և չփոխառէր «ֆ»

⁴ Henri Bonnard, Claude Régnier, *Petite grammaire de l'ancien français*, 5^e édition revue. Paris, Éditions Magnard, 1997, p. 20.

⁵ Ibid., p. 22.

տառը: Դրա օգտին են խօսում մի կողմից այն հանգամանքը, որ բուն Հայաստանում «ֆ» տառը շատ ասելի ուշ տարածվեց, միւս կողմից՝ որ արաբական աշխարհի հետ անմիջական շփում չունեցող վրացերենը (յունարենի հետ սերտ կապերով հանդերձ) երբեք էլ լայնօրէն չկիրառեց իր «ֆ» տառը (թէն այն տեսականօրէն գոյութիւն ունի՝ «ֆ»): «Ֆ» տառի սկզբնական գրելաձեւը լատիներէն մեծատառ արագագիր «F»-ին էր նման: Մեր հին սերունդները գուցէ յիշեն, որ հայերէն «ֆ» տառն առաջ իր ներկայ ձեւի հայելային տեսքն ուներ (աջից ձախ շրջված ձեւով – ցաւօք համակարգչային ներկայ տառատեսակները թոյլ չեն տալիս այն սպազիր արտայայտել):

Ինչ վերաբերում է «օ» տառի ներմուծմանը, ապա դրա անհրաժեշտութիւնը բացատրվում է նրանով, որ հայերէն «ո» տառը կիլիկեան շրջանում ուներ շատ յաճախ երկբարբառային հնչում՝ «ւո» («wo»): Հին հայերէն «աւ» երկբարբառը պարզվել էր «օ» հնչման, որի փոխարէն էլ կիլիկեցիները ներմուծեցին լատիներէն տառը: Նշենք, որ «օ»-ն նոյնպէս երկար դարեր այնպայտ էր բուն Հայաստանում:

Հին ֆրանսերէնից փոխառեալ բառերի ու արտայայտութիւնների նկարագիրը: Հին ֆրանսերէնից՝ կիլիկեան շրջանում փոխառեալ բառերը համեմատաբար սակաւաթիւ են, եթէ դրանք համեմատենք արաբերէնից կատարուած փոխառութիւնների հետ: Ֆրանսերէն փոխառութիւններում գտնում ենք հիմնականում պետական, վարչական ու իրաւական ոլորտի իմաստներ, որոնց առկայութիւնը հայերէնում ըստ երեւոյթին պէտք է բացատրել մասնաւորապէս «Անսիգք Անտաքոյ»՝ «Անտիոքի օրէնսգիրք» ժողովածուի հայերէն թարգմանութեամբ: Յայտնի է, որ հին ֆրանսերէնը Կիլիկեան Հայաստանում լայն տարածում գտաւ և իրաւական փաստաթղթերի մի մասը գրվել է նոյնիսկ այդ լեզուով: Հին ֆրանսերէնը փաստօրէն պաշտօնական լեզուներից մէկն էր, և հայ գրագէտ մարդիկ ֆրանսերէն էին տիրապետում: Այդուհանդերձ, ֆրանսերէնի ներդրումը հայոց լեզուի մէջ բաւական համեստ է: Մեր կարծիքով դա բացատրւում է ֆրանսերէնի լայն կիրառութեամբ: Երբ մարդ ծանօթ է մի լեզուի, նա միշտ փորձում է գտնել այդ լեզուի բառերի համապատասխան մայրենի համարժեքները, քանի որ հասկանում է բառերի կառուցվածքն ու ստուգաբանութիւնը: Նման իրողութիւն էր հին հայերէնի ժամանակ, երբ մեր հայ մատենագիրներն ու լեզուաբանները ստեղծում էին բազմաթիւ նոր բառեր յունարէն համարժեքների դիմաց: Նման մի իրողութիւն էլ կարելի համարել այն հանգամանքը, որ խորհրդային տարիներին բուն ռուսերէնից չնչին քանակութեամբ բառեր ենք փոխառել (փոխարէնը ստեղծել ենք հայերէն համարժեքներ), իսկ ռուսերէնի միջնորդութեամբ արեւմտեան լեզուներից՝ հարիւրաւոր, գուցէ և հազարաւոր բառեր ենք վերցրել՝ որովհետեւ, այդ լեզուները չճանաչելու պատճառով, չենք կարողացել հասկանալ այդ բառերի ներքին կառուցուածքը:

Փոխառեալ արմատական բառերի մեծամասնութիւնը բնականաբար գոյական անուններ են: Ամենակարեւորներից ու հետաքրքրականներից նշենք (արտասանեցէք վերը նշած հնչիւնական օրէնքներով). «անսիգ»՝ օրէնք,

«բասաճ»՝ բառացի՝ «անցում», նշանակում էր «արշաւանք», մասնաւորապէս «խաչակրաց արշաւանք», որին յաճախ սպասում էին հայերը, «բրինձ»՝ իշխան («պրինց»), «ըմբրուր»՝ կայսր («իմպերատոր»), «լիճ»՝ աւատառու, վասալ, «մարաջախտ»՝ զօրավար, մարշալ, «պայլ»՝ մեծ իշխան, «պարոն»՝ կալուածատէր իշխան («բարոն»), «ջալունջ»՝ բողոք, գանգատ (այսօրուայ անգլերէն «challenge» բառը նոյն արմատից է), «ջանցլեր»՝ կանցլեր (պալատական աստիճանաւոր), «տուկ»՝ դուքս և այլն:

Յատուկ անուններն իհարկէ չի կարելի փոխառութիւն անուանել, եթէ նրանք լեզու չեն մտնում ու նոր սերունդներին որպէս անուանակոչ չեն ծառայում: Օրինակ՝ Պետրոս կամ Պօղոս յատուկ անունները իսկապէս փոխառութիւններ են, որովհետեւ հայը իր զաւակներին կարող է այդպէս անուանել: Բայց կիլիկեան Պէնէթ, Ըռուպերտ կամ Լոյս անունները միայն օտարներին են մատնանշում, հետեւաբար դրանք փոխառութիւններ չեն: Կիլիկեան շրջանից փոխառութիւն կարելի է համարել գուցէ միայն Չապէլ անունը:

Խօսքի այլ մասերից փոխառութիւն պէտք է համարենք միայն «տուպլ» ու «քիթ» ածականները և «ջաստել», «տըֆընդել», «օդրել/աւդրել» ու «ֆայլել» բայերը: Այս բայերը կազմւած են անմիջականօրէն ֆրանսերէն արմատներով և չունեն հայերէն գոյական կամ ածական համարժեքներ: Մնացած բայերը կազմված են հայոց լեզու մտած գոյականներից կամ ածականներից և իրենց աղբիւրը արդէն ֆրանսերէնը չէ: «Պարոնացնել» կամ «կալօփցնել» բայերը չունեն նոյնիսկ ֆրանսերէն միբառանի համարժեքներ:

Ուշադրութեան արժանի են «ջալունջ այնել», «սազայ այնել», «օմաճ այնել» տիպի բարդ բայերը, որոնք այնքան տիպական են հայոց լեզուին մինչեւ այսօր («այնել» նշանակում է «անել»):

Կիլիկեան հայերէնը փոխառեալ որոշ արմատներից ինքն է ստեղծել նոր բառեր: Օրինակ՝ անջալունջ (առանց գանգատի, անբողոք), անսիզվորք (իրաւատէր), բրընձութիւն (իշխանութիւն), գունդութիւն (կոմսութիւն), ընբրութիւն (կայսրութիւն), մարաջախտութիւն (մարաջախտի պաշտօն, աստիճան), պայլութիւն (պայլի պաշտօն, աստիճան), պարոնաղուստր, պարոնաց պարոն, պարոնացնել, պարոնորդի, պարոնութիւն, ջալընջել, ջալունջ այնել (բողոքարկել, գանգատ ներկայացնել), տուկութիւն (դքսութիւն), քիթելութիւն (քիթելը, շնորհելը, նուիրելը): Նման բառերն ու արտայայտութիւնները բնաւ չի կարելի ուղիղ փոխառութիւն համարել:

Պատճէն փոխառութեան օրինակ կարող է ծառայել «ձիաւոր» հասկացութիւնը: Կիլիկեան շրջանում այն ոչ միայն նշանակում էր «հեծեալ», այլև (նախ և առաջ) ազնուական դասին պատկանող, «պարոն»-ից յետոյ երկրորդ աստիճանին կանգնած անձ՝ հին Հայաստանի ասպետական դասին համարժեք: «Ձիաւոր» բառը կազմված է ֆրանսերէն «chevalier» իմաստի բառացի թարգմանութեամբ: Յիշենք, որ հին հայերէն «ասպետ»-ն էլ իրանեան փոխառութիւն է՝ «ասպ» («ձի») և «պետ» արմատներից⁶:

⁶ **Ն. Աճառյան**, *Հայերէն արմատական բառարան*, հ. Ա, Ե., 1971, էջ 274:

Ինչպես կարելի է տեսնել, միայն «պարոն» բառը կարող ենք համարել հաստատապես մտած հայոց բառապաշարի մեջ: Միւսները կամ տեղը զիջել են իրենց հայերեն համարժեքներին, կամ էլ նեղ կիրառություն ունեցող կամ օտար երեւոյթներ արտայայտող բառեր են:

Կիլիկեան շրջանում կիրառած յատուկ անուններն այսօր բոլորովին այլ տեսք ունեն` նոր ֆրանսերէնից կամ անգլերէնից փոխառած, ինչպես` Ըննադտ կամ Ռընադտի փոխարէն Ռենալդ կամ Ռենո, Ըռուճերի դիմաց` Ռոջեր կամ Ռոժէ, Ըռուպերտի դիմաց` Ռոբերտ, Ջառլի դիմաց` Շառլ կամ Չառլզ: Կիօդինը նոյն անունն է ինչ Գիլիոտինը` գլխատման յայտնի սարքի գիտարարի անունը: «Լոյս» անունը (կարդալ «լոյս» կամ «լույս») այսօր մեզ յայտնի է կամ Լուի կամ լատինական Լուդովիկոս տարբերակով (*Luzովիկոս տարբերակը ճիշտ չէ. ռուսերէնի ազդեցութիւնն է*):

Armen Michaelian - Old French Loan Words in the Cilician Armenian Language.- The article deals with some one hundred loan words and expressions from Old French in the Middle Armenian language during the existence of the Armenian Kingdom of Cilicia (Little Armenia). Close links between the Crusaders (many of them French speaking) and the Armenian aristocracy, as well as translations from French contributed to important borrowings expressing new social, political and judicial realities of the feudal hierarchy. The French words are transliterated mostly based on the Western Armenian phonetic system. Very few of these borrowings survived the fall of the kingdom.

Պետրոսյան Հասմիկ (Հայաստան,
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան)

**ՄԵՔԵՆԱԳԻՏԱԿԱՆ-ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ**

Ինչպես առհասարակ տերմինաբանության, այնպես էլ մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության համալրման ներքին աղբյուրներից հիմնականը լեզվի զարգացման տարբեր շրջանների բառաշերտերի բառերի տերմինացման, նաև եղած արմատներով, բառերով կամ տերմիններով նոր տերմինների ու տերմինային կապակցությունների կերտման իրողություններն են:

Բառի տերմինացման հիմքում հաճախ կարող է ընկած լինել լեզվի զարգացման տարբեր շրջաններում նրա ունեցած իմաստներից մեկը (ընդ որում՝ նույնիսկ ոչ հիմնական իմաստը), որն առավել մոտ է տվյալ տերմինի նշանակությանը: Քննվում են գրական լեզվի տարբեր, մասնավորապես՝ գրաբարի և միջին հայերենի շրջաններից ավանդված այն բառերի իմաստները, որոնք այսօր մեքենագիտական-մեքենաշինական տերմինների կերտման հիմք են ծառայել:

Միանգամից նկատենք, որ լեզվի զարգացման նախորդող շրջաններից ավանդված բառերից շատերն աշխարհաբարյան շրջանում արդեն իսկ լրիվ կամ մասամբ յուրացված են իրենց նախկին իմաստներով, կամ ընդլայնվել են դրանց իմաստները: Մակայն բառապաշարի պատմական զարգացման քննության տեսանկյունից կարևոր է նաև այն իրողության բացահայտումը, թե այդ բառերի հատկապես ո՞ր փուլում ունեցած իմաստներն են այսօր տերմինացման հիմք ծառայել, այսինքն՝ նոր շրջանում որքանով են կենսունակ այդ իմաստները նորանոր բառեր և հատկապես տերմիններ կերտելու առումով: Միաժամանակ, գիտության ցանկացած բնագավառի տերմինների այս տեսանկյունից դիտարկումն արդիական է, քանզի կարող է ուղենիշ լինել տվյալ տերմինաբանության՝ իբրև հարաշարժ զարգացող երևույթի հետագա համալրումը կարգավորելու համար: Հարցի վերաբերյալ թռուցիկ ակնարկ արվել է մեր աշխատանքներից մեկում¹, այստեղ այն քննվում է նորովի՝ առավել համակողմանի իրողությունների հաշվառմամբ:

Դիտարկվել են մեքենագիտական-մեքենաշինական շուրջ 1000 գլխաբառ տերմիններ (արտահայտված միայն գոյականով), որոնք իբրև բառեր, ավանդված են մեր լեզվի զարգացման գրաբարյան կամ միջինհայերենյան շրջաններից:

Տերմինները քաղված են վերոհիշյալ աշխատանքում ներկայացված տերմինների ցանկից², Մեխանիզմների և մեքենաների տեսության անգլերեն-

¹ Պետրոսյան Հ., *Հայերեն մեքենագիտական և մեքենաշինական տերմինների իմաստաբանական-կառուցվածքային և գործառական վերլուծություն*, թեկն. ատեն., Ե., 2007, 157 էջ:

² Նույն տեղում:

հայերեն-ռուսերեն տերմինարանից³, նաև Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանից⁴:

Բառապաշարի զարգացման տարբեր շրջաններից եկող այն բառերը, որոնք համապատասխանում են քննվող տերմիններին, վկայված են Նոր Հայկազյան⁵, «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր⁶» բառարաններում, ինչպես և «Միջին հայերենի բառարանում⁷»: Համեմատության կարգով դիտարկվել են նաև «Հայերեն գալուստական բառարանում⁸» տեղ գտած որոշ բառեր:

Քննության արդյունքում պարզվել են հետևյալ իրողությունները: Այսօր մեքենագիտական-մեքենաշինական տերմիններ են հանդիսանում գրաբարից, միջին հայերենից, այլև բարբառներից աշխարհաբարին ավանդված բավական թվով բառեր, որոնց տերմինացման համար հիմք են ծառայել դրանց նախկինում ունեցած իմաստները: Մյուս կողմից՝ դրանք՝ իբրև տերմիններ, ներկայացնում են նույն բառերի իմաստային զարգացումները լեզվի աշխարհաբարյան շրջանում, որը, առհասարակ, բնորոշ է բառի տերմինացմանը: Անշուշտ, թվարկված յուրաքանչյուր շերտից հիշյալ տերմինաբանության մեջ այդ բառերը հանդես են գալիս տարբեր չափաքանակներով ու իմաստային նոր զարգացումներով: Քննված 1000 տերմիններից 300-ը կերտված են գրաբարյան, շուրջ 100-ը միջինհայերենյան և ավելի քան 100-ը բարբառային բառաշերտերից եկող բառերի հիմքով: Մնացած 500-ը՝ իբրև տերմիններ, աշխարհաբարյան շրջանի նորաբանություններ են: Ընդ որում, լեզվի զարգացման տարբեր բառաշերտերից տերմինացած բառերը հիմնականում կազմում են նաև բառապաշարի ընդհանուր հայերենյան շերտը:

Այսպես. գրաբարից ավանդված բառերը՝ որպես մեքենագիտական-մեքենաշինական տերմիններ, գործածված են.

1. հնչյունական անփոփոխ կազմով. դրանց նախկինում ունեցած իմաստները համընկնում են կամ մոտ են տերմինների նշանակություններին. օրինակ՝ *առասան*, *առանցք*, *աքցան*, *բարձրություն*, *բով*, *գալար*, *գործոն*, *գունդ* և այլն,
2. հնչյունական մասնակի փոփոխություններով. սրանց իմաստները ևս մոտ են տերմինների նշանակություններին. օրինակ՝ *անկում*(ն), *բեռ*(ն), *գազաթ*(ն), *դարձում*(ն), *լարում*(ն) և այլն:

Այդ բառերը հիմք են հանդիսացել.

³ Սարգսյան Յու., Հովույան Ն., Պետրոսյան Հ., *Մեխանիզմների և մեքենաների տեսություն. անգլերեն-հայերեն-ռուսերեն տերմինարան*, Ե., 2009, 390 էջ:

⁴ Հացագործյան Զ. և ուրիշ., *Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան*, Ե., 1988, 672 էջ:

⁵ Աւետիքեան Գ., Միւրմելեան Խ., Աւգերեան Մ., *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, 2 հատորով, Վենետիկ, 1979, 1981 (1836-1837):

⁶ Հովհաննիսյան Լ., *Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010, 293 էջ:

⁷ Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, 841 էջ:

⁸ Աճառեան Հր., *Հայերեն գալուստական բառարան*, Թիֆլիս, 1913, 1178 էջ:

1. գրաբարյան կառուցվածքների համաբանությամբ նորաբանությունների ստեղծման. օրինակ՝ *առբերում, արտաձգում, ընդլայնում, ընդարձակում, հակազդում, հակակշիռ* և այլն,
2. դրանցով (կամ բառերի արմատներով) նորակազմությունների ստեղծման. օրինակ՝ *գնդառանցքակալ, գոլորշիչ, խցողակ, կանգաշարժ, կառուցվածք, կցաշուրթ, կցասեպ* և այլն,
3. բառիմաստի փոփոխության ճանապարհով տերմինների կերտման. օրինակ՝ *արբանյակ* (գրբ. իմաստը՝ *ծառա, գործակից, հետևորդ*, տերմինային իմաստը՝ *միաժամանակ իր առանցքի և այլ մարմնի շուրջը պտտվող ատամնանիվ*), *բաբախում* (գրբ. իմաստը՝ *բարախյուն, ընդհարում*, տերմինային իմաստը՝ *գարկ, տրոփյուն*), *ենթակալ* (գրբ. իմաստը՝ *ենթակա լինելը*, տերմինային իմաստը՝ *պահիչ, նեցուկ*), *թամբ* (գրբ. իմաստը՝ *գրաստի թամբ*, տերմինային իմաստը՝ *մակերևույթ, որին հպվում է փականը*), *լարք* (գրբ. իմաստը՝ *պարանոցի կամ ողնախար ջլերը*, տերմինային իմաստը՝ *գործիքի լարքը*), *պատճեն* (գրբ. իմաստը՝ *գրվածքի նույնական օրինակը*, տերմինային իմաստը՝ *գործիքի պատճենը*), *պարկուճ* (գրբ. իմաստը՝ *ընդդեմի պատիճ, պարկ*, տերմինային իմաստը՝ *գլանաձև ներդիր*) և այլն:

Միջինհայերենյան շրջանի բառերը՝ իբրև մեքենագիտական-մեքենաշինական տերմիններ, գործածված են նախկինում իրենց ունեցած իմաստներին համապատասխան.

1. հնչյունական անփոփոխ կազմով. օրինակ՝ *թափծու, թելիկ, լաթ, լայնք, հեղվություն* և այլն,
2. հնչյունական մասնակի փոփոխություններով. օրինակ՝ *գրպանդ-գրպան, թակադ-թակ(իչ), ծածկուց-ծածկոց, մամլուք-մամլակ* և այլն:

Միջինհայերենյան շրջանի բառերից (կամ արմատներից) տերմինները կերտված են որպես՝

1. նորակազմություններ. օրինակ՝ *դիմացկոտ-դիմացկուն, թափահրել-թափահարում, թույլ տալ-թույլատրություն, թույլտվածք, սարել-սարում, փաթթել-փաթթոց* և այլն,
2. նորաբանություններ՝ բառերի իմաստափոխության ճանապարհով. օրինակ՝ *գործիք* (միջ. հ.-ում՝ *գործ, արարք*, տերմինային իմաստը՝ *գործիք*), *ծոճրակ* (միջ. հ.-ում՝ *մարդու կամ կենդանու պարանոցի հետևի կողմը*, տերմինային իմաստը՝ *բազմասայր կտրող գործիքի ատամի հետին կոր մակերևույթը*), *ճաղ* (միջ. հ.-ում՝ *սայլի կողքի ճաղերը* կամ *գործելու շյուղ*, տերմինային իմաստը՝ *անվաճաղ*), *ոտիկ* (միջ. հ.-ում՝ *փոքր ոտ*, տերմինային իմաստը՝ *ատամնանվի ատամի մաս*) և այլն:

Եվ գրաբարյան, և միջինհայերենյան բառաշերտերից վերջին՝ բառերի իմաստափոխության ճանապարհով կերտված տերմինների քննությունը մի առանձին ուսումնասիրության արդյունք կարող է լինել, ուստի այստեղ կսահմանափակվենք միայն դրանց թվարկումով:

Տերմինացած բառերի մի զգալի մասը, ինչպես նշվեց, ներկայացնում է բառապաշարի ընդհանուրհայերենյան շերտը, հետևապես՝ խնդիր է նաև

տարբերակել՝ լեզվի զարգացման հատկապես որ փուլում այդ բառերը կոնկրետ ինչ նոր իմաստներ են ձեռք բերել, որոնք էլ կարող էին տերմինացման հիմք ծառայել: Գրաբարում, միջին հայերենում, այլև բարբառներում և տերմինաբանության մեջ բառերի ձեռք բերած իմաստային զարգացումները համեմատվել են ստորև ներկայացվող աղյուսակում:

N	Տերմինի նշանակությունը ⁹	Գրաբարյան իմաստը	Միջինհայերենյան իմաստը	Բարբառային իմաստը
1.	<i>ակ</i> -անցք	<i>ակն</i> -1. աչք, 2. ծակ, խոռոչ իրաց	<i>ակ</i> - 1. աչք, 2. թանկագին քար, 3. ակունք, 4. չափի միավոր	<i>ակ</i> -1. մատանու, 2. ջրի, 3. թոնրի, 4. փեթակի, 5. ջրաղացի, 6. սայլի կամ գութանի անիվը
2.	<i>բութակ</i> – միջուկ ճզմանցման	<i>բութակ</i> – սամիք, նվագարանը լարելու գործիք	<i>բութակ</i> -1. լարավոր նվագարանի բանալի, 2. քուրա, հալոցք	<i>բութակ</i> -1. լուծը արորին կամ սայլին ամրացնելու կեռը, 2. սագի մասերից մեկը
3.	<i>ղիրք</i> -դրություն, տեղադրություն, վիճակ	<i>ղիրք</i> -կամարատեսակ երկարածիգ քար <i>ղիր</i> -կերպ, ձև, կարգ, օրենք	<i>ղիրք</i> -ձիթհանքի մեկանգամյա հանույթը	<i>ղիրք</i> -1. կարգադրություն, 2. ճզմելու տախտակե գործիք, 3. փեթակների շարքը, 4. ընդդեմի տեսակ
4.	<i>դող</i> -անվի շրջանակին փչվող ռետինե թաղանթ	<i>դող</i> -1. դողալ բայի արմատը, 2. երածժտ. խազ	-	<i>դող</i> - սոնու կամ անվի երկաթե շրջանակ
5.	<i>եղան</i> -մեքենայի ժանկոր մաս	<i>եղան</i> -երկժանի կամ եռաժանի գործիք	<i>եղան</i> -հոսելի, հեծանոց	<i>եղան</i> -երկմատ հոսելի
6.	<i>գարկում</i> -տատանվող մարմնի դիրքի շեղում	<i>գարկումն</i> -գարնել, հարկանել	<i>գարկ</i> -հարված	<i>գարկել</i> -գարնել
7.	<i>լեզվակ</i> -1. մանդալ, 2. բլթակ	<i>լեզուակ</i> -փոքր լեզու	<i>լեզուակ</i> -փոքր լեզու	<i>լեզուակ</i> -լեզվաձև ստարկա
8.	<i>ծածկույթ</i> -պատվածք, ծածկ	<i>ծածկույթ</i> -ծածկումն, պատումն	-	-
9.	<i>ծիծենիկ</i> -ճկուն տարրով բեռնամբարձ մեքենա՝	<i>ծիծեն</i> (<i>ծի ծառն</i>)- թռչուն	<i>ծիծենիկ</i> -ծիծենակ թռչունը	<i>ծիծենիկ</i> -փոքր ճախարակ

⁹ *Политехнический словарь*. Глав. ред. **И. И. Аргоболевский**, М., 1976, 607 ст. **Захаров Б. В. и др.** *Толковый словарь по машиностроению. Основные термины*. М., 1987, 302 ст.

	Ճախարակ			
10.	կեռ-բեռնամբարձ մեքենայի մաս	-	կեռ-1.կոր, ճանկաձև, ծուռ, 2.կարթի կեռիկ	կեռ-1.կոր, ծուռ, 2.կարթաձև երկաթ, 3.իլիկի, արորի կեռ երկաթը
11.	կոթ-մեքենամաս, գլանաձև միջուկ	-	կոթ-մղեխ, բռնակ, բռնելատեղ	կոթ-գործիքի, բույսի, նան՝ բռունցք
12.	հաստոց-տարբեր նյութեր մշակող մեքենա, նան պահող հարմարանք	հաստոց-հաստարան, անջրպետ, պատուար	հաստոց- հե-նարան, նեցուկ	-

Աղյուսակից երևում է, թե լեզվի զարգացման տարբեր փուլերում բառերի իմաստային փոփոխակներից որոնք կարող էին հիմք լինել նշված տերմինների կերտման համար, միաժամանակ՝ որ բառերն են բոլոր շրջաններում անփոփոխ պահպանել իրենց իմաստները և/կամ իմաստային, այլև հնչունական-կառուցվածքային ինչպիսի զարգացումներ են ունեցել տերմինացման արդյունքում:

Քանի որ միջին հայերենը ժառանգել է գրաբարի ոչ ամբողջ բառապաշարը, այլ, հիմնականում, ընդհանուրհայերենյան շերտի բառերը¹⁰, ուստի մեքենագիտական-մեքենաշինական տերմինները ավելի շատ կերտված են ընդհանուրհայերենյան շերտը ներկայացնող բառերով, որոնք գալիս են դեռևս գրաբարյան շրջանից: Միաժամանակ, միջնադարում և՛ խորանում էին բարբառային տարբերությունները¹¹, և՛ զարգանում էին արհեստները¹², հետևապես՝ միջինհայերենյան և բարբառային շերտերից աշխարհաբարին անցած բառերը, որոնցից կերտվել են տերմինները, իմաստային առումով ունեն ընդհանուր եզրեր այնքանով, որքանով դրանք արտահայտում են արհեստներին առնչվող հասկացություններ:

Այսպիսով, մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության համալրման քննված աղբյուրներից առավել գործունը գրաբարյան փուլից եկող ընդհանուրհայերենյան շերտի այն բառերն են, որոնք այսօր էլ՝ աշխարհաբարյան շրջանում, կենսունակ են նորանոր բազմահազար բառեր, այդ թվում՝ նան տերմիններ ու տերմինային կապակցություններ կերտելու առումով:

Hasmik Petrosyan - Internal Sources of Completing the Machine Science and Machine Building Terminology.- The meanings of the words used as terms in the machine science and machine building terminology from the wordstock layers of different

¹⁰ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա, Ե., 1972, էջ 173 և 181:

¹¹ Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 190:

¹² Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Ե., 2003, էջ 79 և 81:

periods of the language development, in particular from the Old Armenian and Middle Armenian languages, have been considered. These meanings have served as a basis for the conversion of the word meaning into a term. It is shown that, in the sense of the machine science and machine building terminology completion, the words bequeathed from Old Armenian also constituting the layer of the Armenian general wordstock are more viable.

Петросян Асмик - Внутренние истоки пополнения машиноведческой, машиностроительной терминологии.- Обсуждается смысл слов, пополняющих машиноведческую, машиностроительную терминологию, взятых из различных периодов развития литературного языка, в частности, из габара (староармянского) и среднеармянского слоев. Показано, что сточки зрения создания машиноведческих, машиностроительных терминов наиболее активны заимствованные из габара те слова, которые по своему смыслу освоены в качестве слов общеармянского слоя.

Ցանկ
«Ձահուկյանական ընթերցումներ» ժողովածուում 2006-2015թթ. տպագրված հոդվածների և հաղորդումների¹³

- Աբրահամյան Ա. Ա.** - *Մանգաղ* գործիքանիշ հասկացության բառագուգաբանությունները հայերենի բարբառներում, 2006, 9-14
- Աբրահամյան Ա. Ա.** - *Արոք* գործիքանիշ հասկացության բառագուգաբանությունները հայերենի բարբառներում, 2008, 5-15
- Աբրահամյան Ա. Ա.** - *Բահ* հասկացության բառանվանումները հայերենի բարբառներում, 2010, 50-62
- Աղաբեկյան Մ. Ա.** - Հայ-ուրարտական հնչյունական համապատասխանություններ, 2006, 15-22
- Աղաբեկյան Մ. Ա.** - Հայերենի գլոտալացած բաղաձայնների խնդիրը, 2007, 7-13
- Աղաբեկյան Մ. Ա.** - Հայերենի և հնդեվրոպական նախալեզվի կոկորդային հնչյունների աղերսի հարցը, 2009, 5-13
- Աղաբեկյան Մ. Ա.** - Ակադեմիկոս Գևորգ Ձահուկյանը համեմատաբան, 2010, 9-23
- Աղաբեկյան Մ. Ա.** - Հ.Աճառյանի պատմահամեմատական հետազոտությունները, 2011, 6-15
- Աղաբեկյան Մ. Ա.** - *Քարսահունջ*. ստուգաբանական դիտարկումներ, 2011, 47-52
- Աղաբեկյան Մ. Ա.** - Հայոց լեզվի բարբառային ձեռագիր նյութերի համակարգչային մշակման խնդիրները, 2013, 154-158
- Ամիրխանյան Ա. Ա.** - Նոր սնկատեսակների անվանումների ձևավորումը Լոռիում, 2015, 6-13
- Առաքելյան Կ. Լ.** - Մեծարենցի պատկերավորման գինանոցից, 2006, 23-32
- Առաքելյան Կ. Լ.** - Առարկայահասկացական և գնահատողական բառաշերտը Գ. Ձահուկյանի «Բանաստեղծական գրքում», 2013, 6-13
- Ասիլբեկյան Շ. Հ.** - Լրացուցիչ տվյալներ Շամշադինի խոսվածքի մասին, 2008, 16-24
- Ասիլբեկյան Շ. Հ.** - Պարզ նախադասության շարադասական կաղապարները, 2010, 63-73
- Ասիլբեկյան Շ. Հ.** - Գոյականական շարույթի ձևային նկարագրություն UNL միջավայրում, 2011, 53-64
- Ասիլբեկյան Շ. Հ., Սարգսյան Մ. Ա.** - Հայերենի բառապաշարի ձևային նկարագրման և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծման սկզբունքներն ու խնդիրները, 2014, 6-11
- Ասոյան Թ. Ա.** - Նկատառումներ Մխիթարյանների հայերենագիտական գործունեության վերաբերյալ, 2013, 14-19
- Ավագիմյան Ա. Ռ.** - *Արժույթ և դասանշային կապակցելիություն* հասկացությունների առնչություններն ու տարբերությունները, 2014, 12-18
- Ավագյան Ա. Ա.** - Դարձույթների ոճաարտահայտչական նշանակությունը Վ.Անանյանի վիպական արձակում, 2007, 14-23
- Ավետիսյան Լ. Ն.** - Գրաբարի բայական դարձվածային միավորների տարբերակները, 2012, 6-14
- Ավետիսյան Տ. Մ.** - Տոհմանունը հայերենում, 2007, 24-28
- Ավետիսյան Տ. Մ.** - Մականուն տոհմանվանական հիմքերի իմաստաբանություն, 2009, 14-20
- Բաղդկյան Խ. Գ.** - Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատությունը, 2011, 16-27
- Բառնասյան Ջ. Ա.** - Հայոց ժամանունները, 2006, 33-37
- Բառնասյան Ջ. Ա.** - Ցուցական դերանունների ձևաբանատային դրսևորումները հայերենի բարբառներում, 2008, 25-34.
- Բառնասյան Ջ. Ա.** - Որոշյալ, ժխտական և անորոշ դերանունների ձևաբանատային դրսևորումները հայերենի բարբառներում, 2009, 21-28

¹³ Կազմեց Ա.Ա. Պողոսյանը:

- Բառնասյան Ջ. Ա.** - Փոխադարձ դերանունները հայերենի բարբառներում, 2011, 65-73
- Բառնասյան Ջ. Ա.** - Անձնական և անդրադարձ դերանունները հայերենի բարբառներում, 2012, 15-27
- Բառնասյան Ջ. Ա.** - Հայերենի բարբառների դերանվանական որոշ ձևերի շուրջ, 2013, 159-164
- Բառնասյան Ջ. Ա.** - Բառակազմական իրողություններ հայերենի բարբառներում, 2014, 19-24
- Բառնասյան Ջ. Ա.** - Վանի բարբառում գործառող դերանունները (իմաստագործառական քննություն), 2015, 183-189
- Բարխուդարյան Հ. Վ.** - *Ջբաղմունք* նշանակությամբ ազգանվանակերտ հիմքերի ծագումնաբանական քննություն, 2009, 29-36
- Բարսեղյան Ա. Գ.** - Շարահյուսական կապակցությունների սխալ դրսևորումները արդի մամուլում, 2007, 29-32
- Բարսեղյան Ա. Գ.** - Խնդրառական կապակցությունների սխալ դրսևորումները արդի մամուլում, 2008, 35-43
- Բարսեղյան Ա. Գ.** - Նախադասությունների կապակցման ոչ ճիշտ դրսևորումներ արդի մամուլում, 2009, 37-42
- Բարսեղյան Ա. Գ.** - Բայի քերականական ձևերի ոչ ճիշտ կիրառությունները արդի մամուլում, 2010, 74-80
- Բարսեղյան Ա. Գ.** - Բայի քերականական ձևերի ոչ ճիշտ կիրառություններ ՁԼՄ-ների լեզվում, 2012, 28-34
- Բարսեղյան Ա. Գ.** - Նախադասությունների կապակցման ոչ կանոնական դրսևորումները ՁԼՄ-ների լեզվում, 2014, 200-205
- Բոզդանյան Մ. Հ.** - Ձևի և բովանդակության ըմբռնումը լեզվաբանության մեջ, 2007, 33-41
- Գալստյան Ա. Ս.** - Մանկական խոսքի բառապաշարը և նրա զարգացումը, 2006, 38-43
- Գալստյան Ա. Ս., Թեյլան Լ. Գ.** - Մականունների գործածությունը ժամանակակից հայերենում, 2006, 44-47
- Գալստյան Ա. Ս.** - Հայերեն մանկական խոսքի դրսևորումների վերլուծության հարցեր, 2007, 42-48
- Գալստյան Ա. Ս.** - Մանկական խոսքի ուսումնասիրության մի քանի հարցեր, 2009, 43-49
- Գալստյան Ա. Ս.** - Լեզվաբանական տերմինների ուսումնասիրության մի քանի հարցեր, 2011, 74-80
- Գալստյան Ա. Ս.** - Տարբերակայնությունը լեզվաբանական տերմինահամակարգում, 2012, 35-47
- Գալստյան Ա. Ս.** - Լեզվաբանական տերմինների գործածության սխալների և հարակից այլ հարցերի մասին, 2013, 20-24
- Գալստյան Ա. Ս.** - Միօրինակացման միտումները հայերենի լեզվաբանական տերմինահամակարգում, 2015, 14-19
- Գալստյան Ա. Վ.** - Վ. Պետրոսյանի «Հայկական էսքիզներ» վիպակ-էսսեի լեզվաբանական հիմքերը, 2010, 81-89
- Գալստյան Ա. Վ.** - Ս. Կապուտիկյանի «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» ուղեգրության լեզվաոճական դրսևորումները, 2011, 81-90
- Գալստյան Ա. Վ.** - Լեռ Կամսարի օրագրությունների լեզվական հիմքերը, 2012, 48-57
- Գալստյան Ա. Վ.** - Գեղարվեստական վավերագրության տեսակները և դրանց լեզվաոճական կառուցվածքը, 2013, 25-34
- Գալստյան Ա. Վ.** - Գրիգոր Գուրգադյանի էսսեների լեզուն, 2014, 206-212
- Գալստյան Հ. Ս.** - Կոնվերսիայի եղանակով ածականացված գոյականների իմաստաբանական քննություն, 2006, 48-53
- Գալստյան Հ. Ս.** - Նախդիրների օգնությամբ ածականացված գոյականների իմաստաբանական քննության փորձ(ժամանակակից ֆրանսերենի նյութի հիման վրա), 2013, 225-229
- Գալստյան Ս. Ա.** - Բայական բառակազմության և դերբայական կառուցվածքները արդի հայերենում, 2007, 49-56

- Գևորգյան Գ.Գ.** - Ապառնիի իմաստային դրսևորումները հայերենի տարածական տարբերակներում, 2006, 54-60
- Գևորգյան Գ. Գ.** - Հայերենի բարբառների դիմաթվանիշ ցուցիչները, 2007, 63-71
- Գևորգյան Գ. Գ.** - Բայի անդամ ձևերի գործառական տարարժեքության վերացումը բարբառներում, 2008, 44-54
- Գևորգյան Գ. Գ.** - Զուգաձևությունները բարբառների խոնարհման համակարգում, 2009, 50-56
- Գևորգյան Գ. Գ.** - Անցյալ ժամանակի դրսևորման ձևաբանական միջոցները բարբառներում, 2010, 90-102
- Գևորգյան Գ. Գ.** - Եղանականիշ մասնիկով ժամանակաձևերի ժխտական կազմության առանձնահատկությունները բարբառներում, 2011, 91-101
- Գևորգյան Գ. Գ.** - Քերականական համանիշության դրսևորումները հայերենի բարբառների բայի անցյալ ժամանակաձևերում, 2013, 165-170
- Գևորգյան Լ. Վ.** - Բաղաձայնների հնչյունափոխությունը Շիրակի տարածքի խոսվածքներում, 2012, 68-76
- Գևորգյան Հ.Ա.** - Ցեղանունների կրոնադավանաբանական նշանակությունները հայ մատենագրության մեջ, 2015, 20-27
- Գյուլգասյան Դ.** - Ուրվագիծ գրական արևելահայերենի հնչերանգային ուղղախոսության, 2015, 190-198
- Գրիգորյան Ա.** - *Օժիտ* հասկացությունը հայերենի բարբառներում, 2008, 55-60
- Գրիգորյան Գ. Գ.** - Արդի փորձառական հնչյունաբանության վիճակը արտերկրում, 2013, 230-236
- Գրիգորյան Ս. Ա., Պարոնյան Ն.** - Եվրոպական փոխառությունները ըստ միջինհայերենյան տարբեր աղբյուրների, 2015, 28-34
- Գրիգորյան Ս. Ս.** - Նորահայտ բառեր Գրիգոր Տաթևացու Ներբողյանում, 2007, 57-62
- Գրիգորյան Ս. Ս.** - Նորաբանությունները Գ.Տաթևացու Գիրք հարցմանց-ում, 2012, 59-67
- Գրիգորյան Ս. Ս.** - Բժշկագիտական հասկացությունները Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ, 2013, 35-44
- Գրիգորյան Ս. Ս.** - Ծիսակարգային հիմնական հասկացությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում, 2014, 213-220
- Գրիգորյան Ս. Ս.** - Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի կրոնական և ծիսակարգային հասկացությունների բառակազմական կադապարները, 2015, 35-38
- Դալայան Տ. Ս.** - Հայ-օսական մի քանի զուգաբանությունների շուրջ, 2007, 72-78
- Դալայան Տ. Ս.** - «Արևելաիրանական միջնաշերտի» որոշ նմուշներ հայոց բառապաշարում, 2008, 61-69
- Դիլբարյան Ն. Հ.** - Տեղանվանակերտ կենսունակ ածանցներն արդի հայերենում, 2008, 70-79
- Դիլբարյան Ն. Հ.** - Բնիկ և փոխառյալ կազմիչները Հայաստանի տեղանվանական համակարգում, 2013, 45-54
- Դիլբարյան Ն. Հ.** - Հայկական բնականունները, 2014, 25-33
- Դիլբարյան Ն. Հ.** - Հայոց լեռնանունների ստուգաբանության վիճահարույց մի քանի խնդիր, 2015, 39-46
- Դոխտյան Ռ. Յու.** - Ասացական և մտածական բայերի իմաստային առնչությունները, 2009, 57-62
- Դոխտյան Ռ. Յու.** - Ասացական բայերի իմաստային դասակարգումը, 2010, 103-114
- Դոխտյան Ռ. Յու.** - Արդի հայերենի ասացական բայերի կատարողական (պերֆորմատիվ) գործածությունը, 2011, 102-113
- Դոխտյան Ռ. Յու.** - Արդի հայերենի փոխաբերական ասացականների դասը, 2012, 77-88
- Դոխտյան Ռ. Յու.** - Գրավոր խոսքի ասացականները արդի հայերենում, 2013, 55-62
- Դոխտյան Ռ. Յու.** - Խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի որոշ բայերի ապա-կյութականությունը արդի հայերենում, 2014, 34-42
- Դոխտյան Ռ. Յու.** - Խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի բայերի գործածությունը բարեկիրթ խոսքի կառույցներում, 2015, 47-54

- Զաքարյան Հ. Լ.** - Փոփոխակումը որպես լեզվի զարգացման նախադրյալ, 2006, 61-71
- Զաքարյան Հ. Լ.** - Բացարձակ աներևույթի և համանման կառույցների զուգաձևերը ժամանակակից հայերենում, 2007, 79-86
- Զաքարյան Հ. Լ.** - Փոխառության և նորակազմության հարաբերության խնդրի շուրջ, 2010, 115-125
- Զաքարյան Հ. Լ.** - Շարադասական դիրքերը և դրանց արժեքները հայերենում, 2011, 114-125
- Զաքարյան Հ. Լ.** - Շրջադաս ստորադասական կառույցները հայերենում, 2014, 43-50
- Զաքարյան Հ. Լ.** - «Ուտնաման» և «կաշի» նշանակող մի քանի բառերի ստուգաբանություն, 2015, 55-63
- Էմին-Տերյան Ա. Լ.** - Օշին Էլակյոզի լեզվամտածողության մի քանի առանձնահատկության մասին, 2011, 126-133
- Թաղևոսյան Հ. Մ.** - Նորակազմ ախտաբանական տերմիններ Ասար Սեբաստացու բժշկարանում, 2011, 134-141
- Թաղևոսյան Հ. Մ.** - Բարբառային բառեր և բարբառային ձևեր 17-րդ դարի բժշկարաններում (Ասար և Բունիաթ Սեբաստացիներ), 2013, 63-70
- Թաղևոսյան Հ. Մ.** - *Հիվանդություն* հասկացության բառային դրսևորումները միջնադարյան բժշկարաններում, 2015, 64-68
- Թելյան Լ. Գ.** - Բայի քերականական ձևերի կազմության և կիրառության որոշ առանձնահատկություններ արդի խոսակցական հայերենում, 2009, 63-74
- Թելյան Լ. Գ.** - Արդի հայերենի քերականության հարցերը Գևորգ Չախուրյանի աշխատություններում, 2010, 24-30
- Թերզյան Պերճ** – Արևմտահայերենը եզիպտահայ վարժարաններում, 2014, 51-54
- Թոխմախյան Ռ. Մ.** - Հայերենի դերբայները և երկրորդական բաղադրյալ ժամանակները, 2006, 72-75
- Թոխմախյան Ռ. Մ.** - *Զինվոր* բառ-հասկացության մասին, 2009, 75-79
- Թոխմախյան Ռ. Մ.** - Երկբարբառները արևմտահայերենում, 2015, 69-72
- Խալաթյան Ա.** - Դարձվածների ոճական կիրառությունները Վիգեն Խեչումյանի գեղարվեստական արձակում, 2006, 76-83
- Խաչատրյան Ա.** - Ածանցների ու ածանցակերպների գործառական արժեքը բնիկ և փոխառյալ հայկական անձնանուններում, 2015, 199-206
- Խաչատրյան Ա. Հ.** - Շվեդերենի արտասանական դժվարությունները հայերենի համեմատությամբ, 2014, 55-60
- Խաչատրյան Ա. Հ.** - Բառային շեշտի դրսևորումը շվեդերենում և հայերենում, 2015, 207-210
- Խաչատրյան Լ. Մ.** - Լեզվամշակութաբանության հարցեր, 2013, 71-78
- Խաչատրյան Լ. Մ.** - Տեքստի լեզվաբանության հարցեր, 2014, 221-227
- Խաչատրյան Հ. Ռ.** - *Շեւ* հասկացության բառանվանումների գործառական-ճագումնաբանական քննությունը հայերենի բարբառներում, 2006, 84-90
- Խաչատրյան Հ. Ռ.** - *Որմնախորշ* հասկացության զուգաբանությունները հայերենի բարբառներում, 2008, 80-89
- Խաչատրյան Հ. Ռ.** - Թոնրի *օղանցք* և *երդիկ* հասկացությունների բարբառային արտահայտությունները հայերենի բարբառներում, 2009, 80-87
- Խաչատրյան Հ. Ռ.** - *Առաստաղ* հասկացության բառազուգորդումների բարբառային բնութագիրը, 2010, 126-133
- Խաչատրյան Հ. Ռ.** - *Ջրհորդան* հասկացությունն արտահայտող բառերի բարբառային բնութագիրը, 2011, 142-153
- Խաչատրյան Հ. Ռ.** - *Որմ* և *անկյուն* հասկացություններն արտահայտող բառերի բարբառային քննություն, 2012, 89- 101
- Խաչատրյան Հ. Ռ.** - *Առու* հասկացության զուգաբանությունների բարբառային քննություն, 2013, 171-178
- Խաչատրյան Հ. Ռ.** - *Փողոց* և *արահետ* հասկացությունների բարբառային բնութագիրը և նրանց բառիմաստային զարգացումները հայերենի բարբառներում, 2014, 61-68

- Խաչատրյան Հ. Ռ.** - *Բնակարան, տուն, կահ-կարասի* իմաստային թեմատիկ խմբի բառանունները Գեղարքունիքի մարզի խոսվածքներում, 2015, 73-78
- Խաչատրյան Հ. Ռ.** - *Տուն* և *հյուղ* հասկացությունների բառանունների բարբառային բնութագիրը, 2015, 79-86
- Խաչատրյան Վ. Մ.** - Բարբառային երևույթներ 17-րդ դարի սկզբի հիշատակարաններում, 2010, 134-14
- Խաչատրյան Վ. Մ.** - Նորահայտ բառեր 13-րդ դարի ձեռագրերի բառարաններում, 2014, 69-76
- Խաչատրյան Օ. Մ.** - Վերլուծական կառուցվածքի բայերի կիրառությունը Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ, 2006, 91-99
- Խաչատրյան Օ. Մ.** - Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բառազանձը, 2007, 87-92
- Խաչատրյան Օ. Մ., Մուրադյան Ա. Ժ.** - Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատության բառապաշարի նորաբանությունները, 2012, 102- 115
- Խաչատրյան Օ. Մ., Մուրադյան Ա. Ժ.**- Վերլուծական բարդությունները Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատությունում, 2013, 237-246
- Խաչատրյան Օ. Մ.**- Վարդան պատմիչի անձի և նրա «Պատմութիւն թաթարաց»-ի մասին, 2014, 228-233
- Կատվայան Վ. Լ.** - Ընդհանուր հայերենյան լեզվական հատկանիշները բարբառներում, 2008, 90-97
- Կատվայան Վ. Լ.** - Բայազետի և Դիադինի բարբառների փոխհարաբերությունները, 2012, 116- 130
- Կատվայան Վ. Լ.** - Բայազետի բարբառի ձայնավորների ընդհանուր բնութագիրը, 2013, 179-188
- Կատվայան Վ. Լ.** - Հինհայերենյան իրողություններ Բայազետի բարբառում, 2014, 77-83
- Կատվայան Վ. Լ.** - Ռուսերեն փոխառություններ Բայազետի բարբառում, 2015, 87-94
- Կոստանդյան Դ. Մ.** - Բառավերջի բաց վանկը դասական գրաբարում, 2011, 154-163
- Հակոբյան Ա. Ա.** - Թարգմանաբանությունը որպես առանձին գիտակարգ, 2014, 234-240
- Համբարձումյան Վ. Գ.** - Նկատառումներ լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշների վերաբերյալ, 2008, 98-106
- Համբարձումյան Վ. Գ.** - Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցի» մի քանի բառի մեկնություն, 2010, 152-168
- Համբարձումյան Վ. Գ.** - Նոր դիտարկումներ Ե.Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ի մի քանի բառի վերաբերյալ, 2012, 131- 141
- Համբարձումյան Վ. Գ.** - Գ.Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանի» մասին, 2014, 257-262
- Համբարձումյան Վ. Գ.** - Ստուգաբանություն. հ.ե. *reg' > հայ. (ա)ռա(կ/ծ) , 2015, 95-100
- Հայրապետյան Ֆ. Փ.** - Գոյապահպանական բառարանի մի քանի տերմինների թարգմանության մասին, 2006, 100-102
- Հայրապետյան Ֆ. Փ.** - Նորայր Ն. Բյուզանդացու «Հայ պարտեզ» աշխատությունը, 2009, 88-92
- Հանեյան Ա. Ն.** - Բառաքննական դիտարկումներ (*բլիթ, գաւիթ, խրճիթ, կնճիթ*), 2007, 93-100
- Հանեյան Ա. Ն.** - *Գավառ* բառանվան ստուգաբանության շուրջ, 2006, 103-109
- Հանեյան Ա. Ն.**- *Անպ* հասկացության բառադրսևորումները հայերենի բարբառներում, 2010, 143-151
- Հանեյան Ա. Ն.** - *Քամի* հասկացության բառիմաստային դրսևորումները հայերենի բարբառներում, 2012, 142-148
- Հարությունյան Խ. Ա.** - 14-15-րդ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների բառապաշարի քննություն, 2013, 79-86
- Հովհաննիսյան Լ. Շ.** - *Մարդ* հասկացության լեզվական արտահայտությունները գրաբարում, 2006, 110-117
- Հովհաննիսյան Լ. Շ.** - *Երածշտություն* իմաստային խմբի բառերը գրաբարում, 2007, 101-111
- Հովհաննիսյան Լ. Շ.** - Բառաքննական դիտարկումներ, 2010, 169-180

- Հովհաննիսյան Լ. Շ.** - Իրանական փոխառությունների քննությունը Հ. Աճառյանի աշխատություններում, 2011, 28-38
- Հովհաննիսյան Լ. Շ.** - Դիտարկումներ Աստվածաշնչի որոշ հատվածների վերաբերյալ, 2014, 84-89
- Հովհաննիսյան Լ. Շ.** - «Փարաուն» բառի շուրջ, 2015, 101-104
- Հովհաննիսյան Ն. Գ.** - Հումանշային շարքի ձևաբանական և բառակազմական առանձնահատկություններ հումանիշների ձեռագիր բառարաններում, 2006, 118-122
- Հովհաննիսյան Ն. Գ.** - Ձեռագրային միջամտություններ XII-XVIII դդ. հումանիշների ձեռագիր բառարաններում, 2009, 93-101
- Հովհաննիսյան Ն. Գ.** - Բառաքնական մի քանի դիտարկում, 2010, 181-188
- Հովհաննիսյան Ն. Գ.** - Բառարաններում չվկայված մի քանի բառի քննություն, 2011, 164-170
- Հովհաննիսյան Ն. Գ.** - Բառաքնական դիտարկումներ, 2014, 90-97
- Հովհաննիսյան Ն. Գ.** - Բառիմաստային փոփոխություններ նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարաններում, 2015, 105-112
- Հովսեփյան Լ. Ս.** - Բառերի ստուգաբանական և բառակազմական վերլուծությանը հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում, 2006, 123-127
- Հովսեփյան Լ. Ս.** - Ժամանակակից հայերենի ձևային նկարագրության խնդիրներն ու սկզբունքները, 2007, 112-117
- Հովսեփյան Լ. Ս.** - Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներն ու ակունքները, 2008, 107-122
- Հովսեփյան Լ. Ս.** - Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ, 2009, 102-108
- Հովսեփյան Լ. Ս. , Խաչատրյան Օ. Մ.,** - Գրիգոր Նարեկացու տաղերի և գանձերի բառապաշարի վիճակագրական քննություն, 2009, 109-116
- Հովսեփյան Լ. Ս. , Գագինյան Ա. Ռ.** - Անորոշ դերբայի կիրառությունը Մատթեոսի ավետարանում հունարեն բնագրի համեմատությամբ, 2010, 189-200
- Հովսեփյան Լ. Ս.** - Գևորգ Ջահուկյանի համընդհանուր լեզվաբանական տեսությանը և կադապարը, 2010, 31-40
- Հովսեփյան Լ. Ս. , Խաչատրյան Օ. Մ.** - Գր. Նարեկացու տաղերի և գանձերի բառապաշարի բառակազմական վերլուծություն, 2011, 171-184
- Հովսեփյան Լ. Ս.** - Գրաբարի հոլովատիպերի կառուցվածքային դասակարգում, 2012, 149-163
- Հովսեփյան Լ. Ս.** - Ածականների բաղդատականության կարգը դասական գրաբարում, 2015, 113-120
- Ղազարյան Հ.** - Հնչերանգի և տրոհության քերականական արժեքը , 2011, 185-198
- Ղազարյան Շ. Ա.** - Համեմատությունները Հակոբ Օշականի փոքր արձակում, 2013, 87-91
- Ղամոյան Լ. Ա.** - Խոսքի իրադրային արտահայտությունները, 2011, 199 -208
- Ղամոյան Լ. Ա.** - Անկախ արմատով և կախյալ բայահիմքով համանունների բառակազմության իմաստաբանություն, 2013, 92-97
- Ղամոյան Լ. Ա.** - Ոչ գրական տարբեր Երևանի խոսակցական լեզվում, 2014, 241-245
- Ղուկասյան Ս. Վ.** - Եղանականիշ հարցումները Մատթեոսի ավետարանում, 2006, 128-13
- Ղուկասյան Ս. Վ.** - Աստվածաշնչի «Երեմիայի մարգարեություն» գրքի աշխարհաբար և գրաբար հարցումների հաղորդակցական տիպերը, 2014, 246-249
- Մանուկյան Ա. Խ.** - Ժամանակակից հայերենի գոյականի բառակազմական կադապարները, 2006, 133-140
- Մանուկյան Ա. Խ.** - Արդի հայերենի բայական նորաբանությունների հենքը և դրանից օգտվելու հնարավորությունները, 2009, 117-122
- Մանուկյան Ա. Խ.** - Արդի արևելահայերենի բայական նորաբանությունների բառակազմական կադապարները, 2010, 201-211
- Մանուկյան Ա. Խ.** - Ժամանակակից հայերենի բայի բառակազմական կադապարները, 2012, 164-172

- Մանուկյան Ա. Խ. , Ուռուտյան Ռ. Լ. -** Հայերենի այբուբենի տառերի հաճախության վերլուծություն, 2013, 247-253
- Մանուկյան Տ. -** Լեզվաբանական տերմինները ժէ դարի ձեռագիր քերականական աշխատություններում, 2015, 121-128
- Մանուչարյան Ս. -** Կապանի տարածաշրջանի խոսվածքների հնչյունական որոշ դիտարկումներ, 2014, 98-104
- Մարգարյան Ի. Ա.-** Հնաբանությունների լեզվաոճական արժեքը Ս. Խանգաղյանի արձակում, 2011, 209-215
- Մարգարյան Լ. Գ. -** Կիրառական լեզվաբանության արդի խնդիրներ, 2010, 212-217
- Մեսրոպյան Հ. Հ. -** Կրոնակեղեցական բառերը « Հայերենի բարբառագիտական ատլասի կյոթերի հավաքման ծրագրում», 2006, 141-147
- Մեսրոպյան Հ. Հ. -** *Ամանորի* բառանվանումները հայերենի բարբառներում, 2007, 118-122
- Մեսրոպյան Հ. Հ. -** *Տէր* բառով կազմությունները հայերենի բարբառներում, 2008, 130-141
- Մեսրոպյան Հ. Հ. -** *Աստվածամոր* պատվանունները հայերենի բարբառներում, 2012, 173-184
- Մեսրոպյան Հ. Հ. -** *Շաղկազարդի* բարբառային անվանումները, 2014, 105-112
- Մեսրոպյան Հ. Հ. -** *Երեցկին* հասկացության բարբառային արտահայտությունները, 2015, 129-135
- Մինասյան Շ. Մ.-** Ժամանակակից հայերենի հարանուն դարձվածները, 2010, 218-229
- Միքայելեան Ա. -** Հին ֆրանսերեն փոխառությունները Կիլիկեան հայերէնում, 2015, 211-218
- Միքայելյան Ժ. Ա. -** Գոյականի սեռական-տրականի դրսևորումները Վասպուրականի տարածքի խոսվածքներում, 2006, 148-153
- Միքայելյան Ժ. Ա. -** Գոյականի բացառական հոլովի կազմությունը հայերեն բարբառներում, 2007, 123-128
- Միքայելյան Ժ. Ա. -** Առկայացման քերականական կարգը Ղարաբաղի բարբառում, 2008, 123-129
- Միքայելյան Ժ. Ա. -** Պոլսի խոսվածքի բայական երկրորդական ժամանակները ըստ Հ. Պարոնյանի ստեղծագործությունների, 2009, 123-128
- Միքայելյան Ժ. Ա. -** Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները Արարատյան բարբառի խոսվածքներում, 2010, 230-240
- Միքայելյան Ժ. Ա. -** Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները Խոյ-Մարաղայի բարբառի խոսվածքներում, 2011, 216-225
- Միքայելյան Ժ. Ա. -** Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները Ջուղայի և Ագուլիսի բարբառներում, 2012, 185-199
- Միքայելյան Ժ. Ա. -** Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները հայերենի արևելյան խմբակցության մի քանի բարբառներում, 2013, 189-199
- Միքայելյան Ժ. Ա. -** Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները հայերենի՝ արևմտյան խմբակցության մի քանի բարբառներում, 2014, 113-119
- Միքայելյան Ժ. Ա. -** Բայի երկրորդական վերլուծական ժամանակները Կիլիկիայի և Անտիոքի բարբառային միավորներում, 2015, 136-143
- Միքայելյան Ս. Ա. -** Արաբերենի բաղաձայնների արտացոլումը Անտիոքի հայերեն բարբառներում (հնչյունաբանական քննություն), 2013, 200-207
- Մխիթարյան Գ. Մ. -** Շարական. շարաբան եղանակ երգոց, 2006, 154-158
- Մխիթարյան Գ. Մ. -** Չայն հասկացության մեկնությունները միջնադարյան հայ քերականների երկերում, 2007, 129-136
- Մխիթարյան Գ. Մ. -** *Քարոզը* և *գանձը* հայերենի երաժշտական տերմինահամակարգում, 2008, 142-147
- Մխիթարյան Գ. Մ. -** Երաժշտական անվանումները V-VII դարերի հայ պատմիչների երկերում, 2011, 226-238
- Մխիթարյան Գ. Մ. -** Հնագույն նվագարանների անվանումները Աստվածաշնչում, 2012, 200-211
- Մխիթարյան Գ. Մ. -** Ցցոց և պարուց երգերը հին հայոց մեջ, 2014, 120-124

- Մխիթարյան Գ. Մ.** - *Կցուրդ, կացուրդ* և *կոնդակ* անվանումները միջնադարյան հայ հոգևոր երգարվեստում, 2015, 143-148
- Մկրչյան Ա. Լ.** - «Բարկանալ» և «Վախենալ» նշանակությամբ կազմաբանական դարձվածքների զուգադրական քննություն (արդի հայերենի և իտալերենի նյութերի հիման վրա), 2013, 98-106
- Մկրտումյան Ա. Ա.** - Դարձվածային հոմանիշները և նրանց կառուցվածքային տեսակները ժամանակակից հայերենում, 2012, 212-225
- Մկրտումյան Ա. Ա.** - Արևելահայերեն և արևմտահայերեն դարձվածային միավորները և նրանց հոմանշությունը, 2013, 107-114
- Մկրտչյան Գ. Գ.** - Սահմանական եղանակի ժամանակաձևերի դրսևորումները Ապարանի խոսվածքներում, 2009, 129-138
- Մկրտչյան Գ. Գ.** - Բառասկզբի դիրքի պայթական ու կիսաշփական բաղաձայնների բաշխվածությունը Ապարանի խոսվածքներում, 2010, 241-251
- Մկրտչյան Գ. Գ.** - Միջին հայերենի և Մշո բարբառի անվանական հոլովումների զուգադրահամեմատական բնութագիրը, 2013, 215-224
- Մկրտչյան Գ. Գ.** - Միջին հայերենում և Մշո բարբառում գործառող հոգնակերտ մասնիկները, 2014, 125-132
- Մկրտչյան Ն. Ն.** - Բառերի իմաստների մեկնաբանումը Ֆրանցիսկոս Ռիվոլայի «Հայերեն-լատիներեն բառարանում», 2007, 137-141
- Մոհամմադի Մ. Մ.** - Միջին հայերենի իրանական բառաշերտի մասին, 2014, 133-138
- Մուրադյան Ա.** - Կապային կառույց + գոյական կաղապարով բառակապակցությունների կառուցվածքային ու գործառական առանձնահատկությունները արևելահայերենում և արևմտահայերենում, 2014, 139-146
- Ներսիսյան Վ. Ա.** - Գրական արևելահայերենի *կարող եմ* հարադրության ձևաբանական արժեքի հարցը, 2012, 226-235
- Ներսիսյան Վ. Ա.** - Պատկերավորման և արտահայտչական միջոցները հայկական ժողովրդական հանելուկներում, 2014, 147-152
- Շագոյան Գ. Կ.** - Հայկական այբուբենի հավերժականության պատումը Ա.Տերտերյանի 6-րդ սիմֆոնիայում, 2007, 142-146
- Պապիկյան Ս. Վ.** - *Ազապի* տերմինի մասին, 2006, 159-164
- Պապիկյան Ս. Վ.** - Ասորերենից փոխառյալ կրոնական մի քանի տերմինների իմաստային փոփոխությունների մասին, 2008, 148-155
- Պապիկյան Ս. Վ.** - *Բեմ* տերմինի մասին, 2007, 147-154
- Պապիկյան Ս. Վ.** - *Դժոխք* և *դրախտ* բառերի մասին, 2009, 139-145
- Պապիկյան Ս. Վ.** - Իրանական լեզուներից փոխառյալ մի քանի բառերի մասին, 2010, 252-265
- Պապիկյան Ս. Վ.** - Ակնարկ կինոտերմինների մասին, 2012, 236 - 243
- Պապիկյան Ս. Վ.** - *Հոգեհաց* հասկացության և նրա բառային դրսևորման պատմությունից, 2014, 153-158
- Պետրոսյան Հ. Ց.** - Հայերեն մեքենագիտական և մեքենաշինական տերմինների արտացոլումը նորագույն շրջանի հայ բառարանագրության մեջ, 2012, 244-252
- Պետրոսյան Հ. Ց.** - Մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության համալրման ներքին աղբյուրները, 2015, 219-224
- Պողոսյան Ն. Բ.** - 17-րդ դարի բառարանագրության հուշարձաններ, 2012, 253-265
- Պողոսյան Ն. Բ.** - Հնչյունափոխական-բառապաշարային նոր դրսևորումներ վաղ աշխարհաբարում, 2013, 115-127
- Պողոսյան Ն. Բ.** - Պատմական համանունության դրսևորումը հայերենում, 2014, 159-166
- Պողոսյան Ն. Բ.** - Օտարաբառ հարադրավոր բայերը հայերենում (16-18-րդ դարեր) , 2015, 148-153
- Ջիհանյան Վ. Գ.** - Հ.-ե. խոնարհման համակարգի ձևային քննության մի քանի հարցեր, 146-153
- Ջիհանյան Վ. Գ.** - Հին հայերենի բայերի վերադասակարգման մի փորձ, 2008, 156-163

- Սահակյան Ռ.** – Նորակագրությունները Ե. Հասան-Ջալալյանցի «Պատմություն համառոտ Ադուանից երկրի» աշխատությունում, 2014, 250-256
- Սանթրոյան Ա. Մ.** - Արդի հայերենի պակասավոր բայերի մասին, 2008, 164-167
- Սանթրոյան Ա. Մ.** - Ջրո. գոյակա՞ն, թե՞ անկանոն թվական, 2013, 128-136
- Սանթրոյան Ա. Մ., Ղուկասյան Շ.** - Գրաբարում բաղաձայնահաջորդ ն-ով վերջացող բառերի քերականական առանձնահատկությունները արդի հայերենում, 2011, 239-246
- Սանթրոյան Լ. Ս.** - Գովազդային հենքերի լեզվական առանձնահատկությունները, 2011, 247-256
- Սարգսյան Ա. Ե.- Պուրպուր** գունանվան հայերեն ծագման հարցի շուրջ, 2007, 155-159
- Սարգսյան Ա. Ե.** - Հ. Աճառյանի բարբառագիտական հայացքները, 2011, 39-46
- Սարգսյան Ա. Ե., Տիտյան Ս. Կ.** - Արդի հայերենի տերմինաբանության զարգացման միտումները, 2014, 175-178
- Սարգսյան Ա. Յու.** - Ղարաբաղի տարածքի բարբառների արդի կարգավիճակը ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման, 2009, 154-158
- Սարգսյան Ա. Յու.** - Ղարաբաղի բարբառի դարձվածների որոշ առանձնահատկություններ, 2010, 166-270
- Սարգսյան Ա. Յու.** - Ղարաբաղի բարբառի բառապաշարի արտացոլումը բարբառային բառարաններում, 2011, 257-269
- Սարգսյան Ա. Շ.** - Ժողովրդական դարձվածքը որպես զավեշտի առաջացմանը նպաստող միջոց հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում, 2014, 167-174
- Սարգսյան Ա. Շ.** - Լեզվական իրողություններն իբրև զավեշտի հենք հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսություններում, 2015, 154-161
- Սարգսյան Մ. Ա.** - Ընդհանուրլեզվաբանական նորաստեղծ ռուսերեն տերմիններ Գ. Ջահուկյանի «Լեզվի համընդհանուր տեսություն» աշխատության մեջ, 2015, 162-167
- Սարգսյան Ն. Ժ.** - Խոսքային անպատրաստության հիմնական բնութագրիչները, 2006, 165-173
- Սարգսյան Ն. Ժ.** - Պատումի ժանրը խոսակցական լեզվում, 2007, 160-164
- Սարգսյան Ն. Ժ.** - Խոսքի դրսևորման ձևերի մասին, 2009, 159-162
- Սարգսյան Ն. Ժ.** - Գործառական ակտիվությամբ բնութագրվող բառաքերականական կարգեր խոսակցական լեզվում, 2013, 137-142
- Սարգսյան Դ. Գ.-** Խնդրառության մի քանի հարցեր, 2014, 179-186
- Սաֆարյան Տ. Վ.** - Կրկնասեռության առանձնահատկությունները ժամանակակից հայերենում, 2006, 174-186
- Սաֆարյան Տ. Վ.** - Կրկնասեռ բայերը արևմտահայերենում, 2007, 165-170
- Սաֆարյան Տ. Վ.** - Գևորգ Ջահուկյանի «Բանաստեղծական գիրքը», 2010, 41-49
- Միմոնյան Ն. Մ.** - Հայերենի հնդեվրոպական ծագման հոմանիշ բայերի իմաստային-գործառական առանձնահատկությունները, 2006, 187-190
- Միմոնյան Ն. Մ.** - Բառակազմական հոմանիշությունը հին հայերենի բայական համակարգում, 2007, 171-174
- Միմոնյան Ն. Մ.** - Ստուգաբանական դիտարկումներ, 2011, 270-277
- Միմոնյան Ն. Մ.** - Գրաբարի Դ նախասանիկով բայերը, 2013, 143-147
- Միմոնյան Ն. Մ.** - Հայերենի՝ արմատական տարբերակներով կազմված կրկնավոր բայերը, 2014, 187-191
- Միմոնյան Ն. Մ.** - Գրաբարի «Ձգայական ընկալումներ» իմաստային խմբի բայերը, 2015, 168-174
- Միրունյան Տ. Ղ.** , Լեզվաընտանիքների հեռավոր ցեղակցության հարցը Գ. Մեննիշյանի «Արդի լեզվագիտությունը» աշխատության մեջ, 2011, 278-285
- Միրունյան Տ. Ղ.** - Լատինաբանությունները Միխիթար Մեքաստացու թարգմանած աստվածաբանական երկերում, 2014, 192-199
- Վայսնիսկերց Զ.** - The use of the preposition n-"in" in Classical Armenian (անգլ.), 2009, 189-196

- Վարդանյան Ս. Գ.**- Որոշ դիտարկումներ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքի մասին, 2015, 175-182
- Տեր-Գրիգորյան Լ. Ա., Մկրտումյան Ա. Մ.**- Դարձվածքների հոմանիշությունը պարսկահայ խոսվածքներում, 2011, 286-295
- Տեր-Գրիգորյան Լ. Ա.** - Դիմախաղը որպես դարձվածային իմաստի ձևավորման հիմք, 2012, 266-273
- Տեր-Գրիգորյան Լ. Ա., Մկրտումյան Ա. Մ.** - Գունանունները պարսկահայ տարածքի խոսվածքների օրինանքներում և անեծքներում, 2013, 208-214
- Տիոյան Ս. Կ.** - *Բնտերֆեյսի* հայերեն տարբերակի մասին, 2007, 175-178
- Տիոյան Ս. Կ.** - Կապերի ներկայացման մի եղանակի մասին, 2008, 168-177
- Տիոյան Ս. Կ., Մանուկյան Ա. Խ.** - Հայերենի բայերի խնդրառության ձևային նկարագրություն, 2009, 163-172
- Տիոյան Ս. Կ.** - Իրավաբանական տերմինների իմաստային և կառուցվածքային քննություն, 2010, 271-282
- Տիոյան Ս. Կ.** - Համակարգչային առկա բառապաշարը, 2011, 296-302
- Տիոյան Ս. Կ.** - *Արդարև* վերաբերականի իմաստային դրսևորումները «Արևակ»-ում, 2013, 148-153
- Ուռուտյան Ռ. Լ.** - Գիտական տառադարձության հայերեն տառաձևեր, 2006, 191-194
- Ուռուտյան Ռ. Լ.** - Լեզվի ձևային նկարագրության քննությունը հայ լեզվաբանության մեջ, 2007, 179-186
- Ուռուտյան Ռ. Լ., Սահակյան Ն. Գ.**- Գունանունների դրսևորումները լեզվում, 2007, 187-191
- Ուռուտյան Ռ. Լ.** - Հայերենի տարածքային տարբերակների շտեմարան, 2008, 178-186
- Ուռուտյան Ռ. Լ.** - Հայերենի բարբառագիտական ատլասի բառիմաստային զուգաբանությունների տեղեկատվական հենքը, 2009, 173-188
- Ուռուտյան Ռ. Լ., Խառատյան Մ. Հ., Սահակյան Ն. Գ.** - Հայերեն բարբառային նյութերը գրանցելու հնչյազրեր (մշակման և կիրառության հարցեր), 2012, 274-287

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA AFTER H.ACHARYAN
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված
միջազգային գիտաժողովի նյութեր
(Երևան, 2015 թ., հունիսի 4-5)

JAHUKYAN READINGS

Proceedings of International symposium, dedicated to
95 anniversary of academician Gevorg Jahukyan
(Yerevan, June 4-5 2015)

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

Материалы международного симпозиума,
посвященного 95-летию академика Геворга Джаукяна
(Ереван, 4-5 июня 2015 г.)